Լ. Ա. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

# ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԷՏԱՊՈՒՄ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Л. А. ХУРШУДЯН

# АРМЯНСКИЕ ЗАРУБЕЖНЫЕ ПАРТИИ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1964

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լ. Ս. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

A II/36502

# ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԷՏԱՊՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1964

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ

Մենագրության մեջ հեղինակը վերլուծում է դաշնակցության, հնչակ և ռամկավար ազատական կուսակցությունների հետպատերազմյան շրջանում վարած քաղաքականությունը և գաղափարախոսության հիմնական հարցերը։ Սույն պրոբլեմը, որի ուսումնասիրությանը առաջինը ձեռնարկել էր Ս. Մյասնիկյանը իր «Կուսակցությունները գաղութահայության մեջ» արժեքավոր աշխատությամբ, անհատի պաշտամունքի տարիներին ամենևին չի լուսաբանվել սովետահայ պատմաբանների կողմից։

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Հայ ժողովրդի մի զգալի մասը իր բազմադարյան պատմության տարբեր էտապներում, պայմանավորված արտաքին ու ներքին մի շարք գործոններով, հարկադրված է եղել հեռանալու մայր հայրենիքից և բնակություն հաստատելու օտար երկրներում։*

*Սփյուռքահայությունը մեկուսացված կյանք չի վարում։ Նա ունենալով իր զարգացման յուրահատկությունները, պատմական դրությունից բխող հատուկ խնդիրները, միաժամանակ ակտիվորեն մասնակցում է միջազգային զարգացման արդի փուլի կենսական խնդիրների լուծման համար մղվող պայքարին։ Հայ ժողովրդի գաղութահայ հատվածը ունի իր քաղաքական կուսակցությունները, ազգային, մշակութային և այլ տիպի բազմաթիվ կազմակերպությունները։*

*Սփյուռքահայության, նրա քաղաքական կուսակցությունների, մշակութային, մարզային և այլ միությունների պատմության ուսումնասիրությունը ունի հրատապ նշանակություն և հանդիսանում է սովետահայ պատմաբանների առաջնահերթ խնդիրներից մեկը։ Հատկապես կարևոր է սփյուռքահայ կուսակցությունների գաղափարախոսության և քաղաքականության ուսումնասիրությունը, կուսակցություններ, որոնցից յուրաքանչյուրը ջանք է թափում արտասահմանում գտնվող շուրջ մեկ և կես միլիոն հայության դրոշակակիրը դառնալու։ Կտրված Հայաստանից, ցրված տարբեր երկրներում, ուր նրանց վրա ազդում են բազմապիսի քաղաքական և տնտեսական գործոններ, այդ կուսակցությունները չփոխելով իրենց դասակարգային էությունը, գաղափարախո-*

ությունը, իհարկե, չեն կարող այժմ էլ նույնությամբ վարել այն քաղաքականությունը, որը վարում էին 60—70 տարի առաջ: Սփյուռքահայության և մասնավորապես հայ քաղաքական կուսակցությունների պատմության ուսումնասիրությունը գտնվել է անմխիթար վիճակում: Սովետահայ պատմաբանները միայն վերջին տարիներս են ձեռնամուխ եղել այդ կարևոր խնդրի լուծմանը: Այժմ Սովետական Հայաստանի տարբեր գիտական հիմնարկներում զգալի թվով գիտնականներ ուսումնասիրում են սփյուռքահայության պատմության առանձին հարցեր: Հրատարակության պրոցեսում են գտնվում սփյուռքի պատմությանը նվիրված մի քանի աշխատություններ: Լույս է տեսել Ս. Գասպարյանի «Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր» խորագրով աշխատությունը, որի մեջ արժեքավոր տվյալներ են հավաքված արդի սփյուռքահայ գաղթօջախների կյանքի բոլոր բնագավառների մասին[1]: «Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում» թեմային է նվիրված Կ. Դալլաքյանի գրքույկը, որի մեջ հեղինակը համառոտակի անդրադառնում է սփյուռքի առաջադիմական կազմակերպությունների գործունեությանը[2]:

Դաշնակցության հետպատերազմյան շրջանի գործունեության քննադատությունը փաստորեն սահմանափակվել է թերթերում հրատարակված առանձին հոդվածներով: Բացառություն է կազմում Ջ. Կիրակոսյանի և Հ. Հակոբյանի «Դաշնակները իմպերիալիզմի գործակալներն են Մերձավոր Արևելքի երկրներում» խորագրով գրքույկը, որի մեջ հեղինակներին հաջողվել է վերլուծել դաշնակների Մերձավոր արևելքում վարած քաղաքականությունը և բացահայտել նրանց ազգադավ, հակահեղափոխական գործունեությունը[3]:

---

1 Ս. Գասպարյան, *Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր*, Երևան, 1962:

2 Կ. Դալլաքյան, *Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում*, Երևան, 1962:

3 Ջ. Կիրակոսյան, Հ. Հակոբյան, *Դաշնակները իմպերիալիզմի գործակալներն են Մերձավոր Արևելքի երկրներում*, Երևան, 1960:

*Բուրժուական պատմաբանների կողմից սովետական իշխանության տարիներին հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումները ծուռ հայելու մեջ ցույց տալուն համառոտակի անդրադարձել է Գ. Գալոյանը «Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ» աշխատության մեջ*[4]*:*

*Սփյուռքահայ բուրժուական փիլիսոփայության ուսումնասիրության գործում զգալի աշխատանք է կատարել Հ. Գաբրիելյանը*[5]*: «Ժամանակակից սփյուռքահայ բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությունը» աշխատության մեջ նա մանրամասն վերլուծում է սփյուռքահայ բուրժուական ռեակցիոն փիլիսոփայության հիմնական հարցերը: Սակայն, մեզ թվում է, հեղինակը ավելի ճիշտ վարված կլիներ, եթե սփյուռքահայ կուսակցություններին զատեր իրարից և նրանց փիլիսոփայական հայացքները առանձին-առանձին վերլուծեր: Հ. Գաբրիելյանի աշխատության ոչ ճիշտ կառուցվածքը ընթերցողի մոտ ստեղծում է այն տպավորությունը, թե իբր հեղինակի կողմից քննադատվող ռեակցիոն տեսությունները հավասարապես բաժանվում են բոլոր կուսակցությունների կողմից: Մինչդեռ դա այդպես չէ: Բերենք մեկ օրինակ: Վերոհիշյալ աշխատության 6-րդ գլուխը վերնագրված է. «Թե ինչպես են «հերքում» սոցիալիզմի գիտություն լինելը»: Հայտնի է, որ սոցիալիզմի ուսմունքի նկատմամբ սփյուռքահայ կուսակցությունների կարծիքները չեն համընկնում: Սակայն Հ. Գաբրիելյանը մեջբերումներ կատարելով դաշնակցական երկու գործիչների՝ Ա. Գասպարյանի և Ռ. Դարբինյանի աշխատություններից և հանգելով որոշակի եզրակացությունների՝ դրանք վերագրում է սփյուռքահայ բոլոր կուսակցություններին:*

4 Գ. Գալոյան, *Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Երևան, 1961:*

5 Հ. Գաբրիելյան, *Ժամանակակից սփյուռքահայ բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությունը, Երևան, 1960:*

*Հանդեսներում հրապարակված հոդվածներից ուշադրավ են Ս. Գասպարյանի «Սփյուռքը հայրենիքի կողքին»[6] և Գ. Խրլոպյանի «Սփյուռքի մի քանի հիմնական խնդիրների մասին»[7] ուսումնասիրությունները, որոնց մեջ հեղինակները հնարավորության սահմաններում վեր են հանում սփյուռքահայության պատմության առանձին հարցերը, ցույց տալիս առաջադիմական ուժերի աշխատանքի դժվարությունները, խոսում դասակարգային շերտավորման, մշակութային առաջադիմության, Սովետական Հայաստանի հետ ունեցած կապերի և այլ բազմաթիվ խնդիրների մասին։*

*Ինչպես տեսնում ենք, սփյուռքահայության պատմության ուսումնասիրության բնագավառում սովետահայ պատմաբանները դեռևս լուրջ ներդրում չունեն։ Հրապարակի վրա եղած գրականությունը, որը հիմնականում բաղկացած է բրոշյուրներից և հոդվածներից, մեծ պահանջներ ներկայացնել չի կարելի։ Դրանք սովետահայ պատմաբանների առջև կանգնած կարևոր խնդրի լուծման բնագավառում կատարված առաջին քայլերն են։*

*Եթե ամբողջ սփյուռքահայության կամ առանձին գաղթօջախների պատմության ուսումնասիրության ուղղությամբ, այնուամենայնիվ, որոշ աշխատանք կատարվում է, ապա ցավոք սրտի, սփյուռքահայ կուսակցությունների քաղաքականության և գաղափարախոսության հարցերը դեռևս դուրս են մնում սովետահայ պատմաբանների ուշադրության շրջանակներից։*

*Մինչդեռ այդ հարցը միշտ էլ ունեցել է քաղաքական և գիտական մեծ նշանակություն։ Դեռևս 1924 թ. լույս տեսավ Ս. Մյասնիկյանի «Կուսակցությունները գաղութահայության*

---

6 Ս. Գասպարյան, *Սփյուռքը հայրենիքի կողքին, «Լենինյան ուղիով», № 5, 1963։*

7 Գ. Խրլոպյան, *Սփյուռքի մի քանի հիմնական խնդիրների մասին, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), № 8, 1963։*

միջ[8]» խորագրով արժեքավոր աշխատությունը։ Ա. Մյասնիկյանը այդ ուսումնասիրության մեջ, իրեն հատուկ խորությամբ և քաղաքական նպատակասլացությամբ, վերլուծում է սփյուռքում գործող հայկական կուսակցությունների գործունեությունը, ցույց տալիս նրանց նպատակները։ Նա բացահայտելով դաշնակցության, ռամկավարների և հնչակյանների քաղաքականությունը, տալով այդ կուսակցությունների դասակարգային էության գնահատականը, միաժամանակ ցույց է տալիս, թե ո՛վ է սփյուռքահայ աշխատավորության շահերի արտահայտիչը և ո՛ւմ հետ պետք է նա դաշնակցի իր լավագույն ապագայի համար մղվող պայքարում։ «Եթե նա (սփյուռքահայությունը—Լ. Խ.) չզրկախառնվի օտար ազգի աշխատավորներին և դուրս չգա իմպերիալիզմի դեմ, նա չի ստանա իր ազատագրությունը»[9],—գրում էր Ա. Մյասնիկյանը։ Միաժամանակ նա հակահարված տալով սփյուռքահայ բուրժուազիայի կողմից տարածվող այն հերյուրանքներին, թե իբր Սովետական Հայաստանը արտասահմանից նյութական օգնություն ստանալու համար է շահագրգռվածություն հանդես բերում սփյուռքի հարցերում, պատասխանում է. Սովետական Հայաստանը արտասահմանից նյութական սպասելիքներ չունի. «Նրա սպասելիքն այն քաղաքական ու հասարակական համակրանքն է, որը հավատացած ենք. թե ունի և պիտի ունենա այսուհետև գաղութահայ աշխատավորության մեծագույն մասը, ողջ աշխատավորությունը՝ դեպի պրոլետարիատի կոմունիստական հեղափոխությունն ու խորհրդային կարգերը։ Այստեղ է թաղված, եթե կուզեք, մեր շահագրգռության աղբյուրը, մեր և գաղութահայության միջև եղած կապի հանգույցը»[10]։

1925 թ. «Գաղութահայ խնդիրներ» աշխատությամբ հանդես է գալիս Աշոտ Հովհաննիսյանը, որը վերլուծում է

8 Ալ. Մարտունի, *Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924*։

9 *Նույն տեղում, էջ 137*։

10 *Նույն տեղում, էջ 7*։

սփյուռքահայության նկատմամբ կիրառվող քաղաքականությունը։ Քննադատելով այդ բնագավառում գոյություն ունեցող որոշ թերություններ, Աշոտ Հովհաննիսյանը մանրամասն խոսում է սփյուռքահայ կուսակցությունների քաղաքականության և նրանց նկատմամբ ունենալիք վերաբերմունքի մասին։ Նա գրում էր. «Գաղութահայ մասսաների հասարակական կարծիքի վրա ազդելու համար արտասահմանում մեր քաղաքականությունը չի ունեցել անմիջական ուղիներ։ Մեր կապը գաղութների հետ եղել է միակողմանի, մենք գործ ենք ունեցել անմիջապես միայն գաղութահայ բուրժուազիայի հետ[11]»։ Ելնելով այդպիսի հարաբերություններից, ինչպես նշում է Ա. Հովհաննիսյանը, գաղութահայ բուրժուազիան մասսաներին ներշնչում է այն կարծիքը, թե ինքը վայելում է Սովետական Հայաստանի վստահության քվեն[12]։ Նման քաղաքականությունը գաղութահայ մասսաներին առիթ էր տալիս ենթադրելու, թե հիրավի կոմունիստական կուսակցությունը ընդհանուր հակացողության է եկել իր դասակարգային հակառակորդների հետ[13]։ Զիջելով հարաբերությունները սփյուռքահայ բուրժուազիայից, մեր քաղաքականությունը պետք է դիմադարձ լինի դեպի գաղութահայ մասսաները։ Նա քննադատում է սփյուռքահայ կուսակցությունների քաղաքականությունը և եզրակացնում, որ գաղութահայությունը պետք է ինքնակազմակերպվի միջազգային կոմունիստական հեղափոխության դրոշակի տակ։

Վերջին երկու աշխատությունները ժամանակին շատ մեծ դեր կատարեցին սփյուռքահայությանը կոմունիստական կուսակցության դրոշի ներքո համախմբելու և Սովետական Հայաստանի հետ կապելու գործում։

Այդ ուսումնասիրությունների հրատարակումից անցել է մոտ 40 տարի։ Միջազգային իրադրության մեջ տեղի են ունե-

---

11 Աշոտ Հովհաննիսյան, Գաղութահայ խնդիրներ, Երևան, 1925, էջ 7։
12 Նույն տեղում, էջ 4։
13 Նույն տեղում, էջ 5։

ցել արմատական փոփոխություններ։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո քաղաքական ուժերի նոր վերադասավորում է կատարվել։ Ստեղծվել է սոցիալիզմի համաշխարհային սիստեմը։ Ջերմամիջուկային զենքերի գոյության պայմաններում խաղաղության պահպանման հարցը դարձել է ժողովուրդների առջև կանգնած ամենահրատապ, կենսական խնդիրը։ Այսպիսի պայմաններում սփյուռքահայ քաղաքական կազմակերպությունների գործունեության մեջ ևս տեղի ունեցան որոշակի փոփոխություններ։

Ահա այդ հանգամանքը նկատի ունենալով, ՀԿԿ XXII համագումարը ողջունեց սփյուռքահայ առաջադիմական կուսակցությունների աշխատանքը խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում, ռեակցիայի, իմպերիալիզմի և պատերազմի դեմ, բոլոր առաջադիմական ուժերի միասնական ճակատ ստեղծելու համար։ Համագումարը միաժամանակ մատնանշեց, որ համագործակցելով այդ ուժերի հետ, նրանից ոչ մի գաղափարական զիջում չպետք է արվի։

Սակայն հարցն այն է, որ սփյուռքահայ կուսակցությունների նկատմամբ կենսագործվող, արդի պայմաններից բխող, քաղաքականությունը կարող է ոմանց մոտ այնպիսի տպավորություն ստեղծել, թե կոմունիստական և սփյուռքահայ առաջադիմական կուսակցությունների միջև այլևս գաղափարական պայքար չպետք է մղվի։ Դրան հատկապես նպաստում է այն, որ սովետահայ քաղաքական գրականության մեջ, եթե երբեմն գրվում է առաջադիմական կազմակերպությունների՝ խաղաղության և դեմոկրատիայի պայքարին մասնակցելու, Սովետական Հայաստանի նկատմամբ ունեցած դրական վերաբերմունքի մասին, ապա միշտ չէ, որ գրվում են գաղափարական պայքարի հարցերը։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության քաղաքականությունը պարզ է ու որոշակի։ Խաղաղության ու դեմոկրատիայի համար մղվող պայքարում համագործակցելով բոլոր առաջադիմական ուժերի հետ, նա միաժամանակ չի

դադարեցնում իր հարձակողական, գաղափարական պայքարը:

Ահա այդ առումով է, որ մենք մոտենում ենք սփյուռքահայ կուսակցությունների գործունեության գնահատությանը և ջանում ցույց տալ, թե զարգացման ի՛նչ տենդենցներ են ունեցել նրանք, ի՛նչպիսի քաղաքականություն են վարում և ինչո՛վ են պայմանավորված այդ քաղաքականության հիմնական սկզբունքները։

Աշխատության մեջ մանրամասն վերլուծվում է դաշնակցության, հնչակ և ռամկավար ազատական կուսակցությունների հետպատերազմյան ժամանակաշրջանի քաղաքականությունը, համառոտակի խոսվում նաև այդ կուսակցությունների պատմական անցյալի և գաղափարախոսությունների մասին։

Ելնելով կոմունիստական ու բանվորական կուսակցությունների 1957 և 1960 թթ. Մոսկովյան խորհրդակցությունների, ՍՄԿԿ XX և ՀԿԿ XXII համագումարների որոշումներից, աշխատության հեղինակը խնդիր է դնում բազմակողմանիորեն վերլուծել հնչակ և ռամկավար ազատական կուսակցությունների առաջադիմական գործունեությունը, ցույց տալ նրանց վերաբերմունքը մեր էպոխայի հրատապ, կենսական խնդիրների նկատմամբ։ Աշխատության մեջ միաժամանակ քննության են առնվում այդ կուսակցությունների քաղաքականության բնագավառում տեղ գտած մեզ համար անընդունելի երևույթները։

Ուսումնասիրության մեջ զգալի տեղ է գրավում դաշնակցության քաղաքականության մերկացումը։ Այդ կուսակցության հետադիմական, հակահեղափոխական գործունեությունը վերլուծելիս հեղինակը անհրաժեշտ է համարել օգտագործել հնչակ և ռամկավար կուսակցությունների՝ դաշնակցության դեմ ուղղված նյութերը ևս, նպատակ ունենալով զուգահեռաբար ցույց տալ նաև այդ երեք կուսակցությունների հարաբերությունների ճշմարիտ պատկերը։

Հայ քաղաքական կուսակցությունների միջև մղվող պայ-

քարը միայն Սովետական Հայաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքով չի բնորոշվում։ Սփյուռքահայ գաղթօջախներում ծավալվող կուսակցական պայքարի շարժառիթները բացահայտելու գործում մեծ նշանակություն ունի դրանց դասակարգային էության, ծրագրային դրույթների և հեռավոր ու մոտավոր նպատակների մանրամասն վերլուծությունը։ Կարևոր նշանակություն ունի նաև այդ կուսակցությունների անցած պատմական ուղու, զարգացման տենդենցների ու յուրահատկությունների ուսումնասիրության հարցը։ Ամեն մի կուսակցություն իր դասակարգի հարազատ զավակն է։ Բնական է, որ տարբեր դասակարգերի շահերն արտահայտող կուսակցությունների միջև, քողարկված կամ բացահայտ ձևերով, նայած երկրի հասարակական հարաբերությունների զարգացման մակարդակին, մշտապես կուսակցական պայքար է մղվում։ Բայց, կուսակցական պայքարը տեղի է ունենում ոչ միայն տարբեր դասակարգերի, այլև նույն դասակարգի տարբեր թևերի ու խավերի շահերն արտահայտող կուսակցությունների միջև։

Սակայն բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունները շատ հաճախ, հատկապես ժողովրդի պատմության շրջադարձային փուլերում, հանդես են գալիս «ազգը փրկողի» դերում և հագնում են ապադասակարգային դիմակ։ Այդ հանգամանքը զգալիորեն դժվարացնում է նրանց դեմ մղվող պայքարը։

Դասակարգերի և կուսակցությունների պայքարի հիմնական նպատակն իշխանության գրավումն է։ Սակայն հայ քաղաքական կուսակցությունների գործունեության առանձնահատկությունն այն է, որ նրանք գործում են արտասահմանյան երկրներում, ուր իշխանության գրավման հարցը նրանց առաջ անմիջականորեն չի դրվում։

Ելնելով դրանից, մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում այն գործոնների բացահայտման վրա, որոնք հնչակ և ռամկավար ազատական կուսակցություններին կապում են Սովետական Հայաստանի և միջազգային զարգացման արդի

*փուլի հիմնական խնդիրների իրականացման համար մղվող պայքարի հետ։ Աշխատության մեջ միաժամանակ վերլուծվում է վերահիշյալ կուսակցությունների դասակարգային էությունը և նրանց ժամանակակից գործունեության առանձնահատկությունները, ցույց է տրվում նրանց տեղը և դերը ժամանակակից սփյուռքահայ հասարակական հարաբերություններում։*

*Աշխատությունը գրելիս հեղինակը լայնորեն օգտագործել է սփյուռքահայ գրականությունը և մամուլը։ Հայ գաղթօջախների պատմության տարբեր հարցերին նվիրված զգալի գրականություն է հրատարակվել արտասահմանում։ Սակայն սփյուռքահայ կուսակցությունների հետպատերազմյան շրջանի քաղաքականությունը լուսաբանող գործեր չկան։ Հրապարակի վրա գոյություն ունեն սփյուռքահայ կուսակցությունների գործունեության առանձին հարցերին նվիրված մի քանի գրքեր[14], որոնցում մեծ մասամբ խոսվում է դաշնակցության և իմպերիալիզմի կապերի, կամ հնչակ ու ռամկավար ազատական կուսակցությունների՝ Սովետական Հայաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին։ Կուսակցությունների մասին համառոտակի խոսվում է նաև սփյուռքի պատմության այլ հարցերին նվիրված աշխատություններում։ Նման աշխատությունների հեղինակները մեծ մասամբ խոսում են նույն հարցերի մասին և շատ հաճախ կրկնում իրար։ Ամեն մի հեղինակ ձգտում է հիմնավորել իր կուսակցության քաղաքականությունը և քննադատել մյուսներինը։ Մենք հարկ չենք համարում առանձին-առանձին անդրադառնալ նման բնույթի աշխատություններին, քանի որ նրանցում արտահայտված տեսակետները մանրամասն վերլուծվում են աշխատության մեջ։ Լույս տեսած աշխատություններում առանձնահատուկ*

---

14 *Տե՛ս «Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության», Ա հատոր, Բեյրութ, 1963, Բ հատոր, Բեյրութ, 1963։* Խոսրով Թութունջյան, *Բյուրոյական սնանկությունը և իրավ դաշնակցության ուղին, Բեյրութ, 1959։* Անդրանիկ Անդրիասյան, *Սփյուռքը և Հայրենիքը, Բեյրութ, 1962։* Վահան Նավասարդյան, *Բոլշևիզմը և դաշնակցությունը, Գահիրե, 1949։*

տեղ է գրավում հնչակյան կուսակցության եռահատոր պատմությունը, սակայն մեզ հետաքրքրող շրջանը ընդգրկող երրորդ հատորը դեռևս չի հրապարակվել:

Բացի առանձին գրքերից, արտասահմանում հրապարակվում է նաև շուրջ 130 թերթ ու հանդես: Այդ թերթերում և հանդեսներում, որոնք ունեն տարբեր ուղղություններ, հիմնականում արտացոլվում է սփյուռքահայ գաղթօջախների քաղաքական կյանքը: Արտասահմանի հայկական քաղաքական կուսակցությունների արդի քաղաքականությունը լայնորեն լուսաբանվում է սփյուռքահայ մամուլի էջերում:

Մեզ թվում է, ընդհանրապես սփյուռքահայության պատմության և մասնավորապես կուսակցությունների գործունեության ուսումնասիրության հիմնական աղբյուրը, գոնե սովետական պատմաբանների համար, եղել է ու մնում է մամուլը: Միայն մամուլի բարեխիղճ ուսումնասիրության դեպքում հնարավոր կդառնա ի մի բերել գոյություն ունեցող հարուստ նյութը և ստեղծել ժամանակակից սփյուռքի և նրա հասարակական-քաղաքական կազմակերպությունների պատմությունը: Այդ հարցում, իհարկե, գոյություն ունեն զգալի դժվարություններ: Մամուլի նյութերը շատ հաճախ իրարամերժ են: Բուրժուական կուսակցություններին պատկանող թերթերում լույս տեսնող հոդվածները սուբյեկտիվ են: Շատ հարցեր այդ թերթերում շրջանցվում են: Օրինակ, սփյուռքահայ կուսակցությունների շարքերում, ինչպես ցույց են տալիս որոշ փաստեր, տեղի են ունենում խմորումներ, առաջանում են խմբավորումներ: Սակայն այդ հետաքրքիր պրոցեսը, որը բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների էվոլյուցիայի բնականոն երևույթներից մեկն է, գրականության մեջ կամ մամուլում չի լուսաբանվում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս: Հայ բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունները, գործելով տարբեր երկրներում՝ հարկադրված են հաշվի առնել այդ երկրներում ստեղծված քաղաքական իրադրությունը: Այդ պատճառով էլ հետազոտողը պետք է տարբերի,

*թե արժանահիշատակ այս կամ այն փաստաթուղթը ե՞րբ է հրապարակվել և ո՞ր երկրում։ Լինում են դեպքեր, երբ այս ու այն աշխատությունում կամ հոդվածում արտահայտված կարծիքները չեն համապատասխանում կամ ոչ լիովին են համապատասխանում այն կուսակցության ընդհանուր տեսակետին, որին պատկանում է տվյալ հեղինակը։*

*Սույն աշխատության մեջ մենք նպատակ ենք դրել տալու սփյուռքահայ կուսակցությունների հետպատերազմյան շրջանում վարած քաղաքականության և պրոպագանդվող գաղափարախոսության բնորոշ, ընդհանուր գծերը, կանգ չառնելով նրա առանձին կողմերի վրա։*

*Սփյուռքահայ կուսակցությունների գործունեության քննական ուսումնասիրությունը դժվարանում է նաև նրանով, որ նրանք, ելնելով տակտիկական նկատառումներից, իրենց գործունեությունը լուսաբանող ոչ բոլոր նյութերն են հրապարակում։ Դեռ ավելին. բյուրոյականները խստորեն արգելում են դաշնակցության քաղաքականության մասին որևէ քննադատական փաստաթուղթ հրապարակել։ Օրինակ, 1948 թ. «Հայրենիք» ամսագրում լույս էր տեսնում Ռ. Դարբինյանի «Փոթորկի օրերին» հոդվածաշարքը։ Սակայն դաշնակցության ղեկավարությունը դադարեցրեց դրա հրատարակումը։ Ահա թե ինչպես է հիմնավորում իր այդ որոշումը դաշնակցության ղեկավարությունը. «Կ. Կոմիտեն անժամանակ կը գտնե մեր մոտիկ անցյալին նկատմամբ քննադատական վերաբերում մը, որ կրնա ծանր թյուրիմացություններ ստեղծել, մանավանդ այնպիսի պահու մը..., երբ մենք պետք ունինք առավելապես դրական ու ոգևորիչ դեպքերու ստեղծման։ Կ. Կոմիտեն կորոշե ավելի ուշադրությամբ հետևիլ հուշագրության, որքան կարելի է խուսափիլ... բացասական երևույթներու շուրջ եղած գրություններե»[15]։ Այս բոլորից հետևում է, որ դաշնակցությունը կեղծում է իր քաղաքականության անցյալ ու ներկա պատմությունը։*

---

15 Ա. Հովակիմյան, *Հայաստանը դաշնակներու օրով վկայությամբ Ռ. Դարբինյանի, «Վրայեր», 18 նոյեմբերի, 1952։*

*Այդ զգալի դժվարություններով հանդերձ սփյուռքահայ մամուլը մնում է որպես արտասահմանի հայ գաղթօջախների պատմության ուսումնասիրության հիմնական աղբյուր։ Առանց մամուլի անհնարին է նաև սփյուռքահայ կուսակցությունների գործունեության և գաղափարախոսության վերլուծությունը։ Ահա այդ է պատճառը, որ մենք մեծ ուշադրություն ենք դարձրել սփյուռքահայ մամուլի վրա, այն դիտելով, որպես մեր կողմից ուսումնասիրվող թեմայի հիմնական աղբյուր։ Սույն աշխատությունը գրելու համար հեղինակը մանրամասն ուսումնասիրել է սփյուռքի կոմունիստական, հնչակյան, ռամկավար ազատական և դաշնակցական ուղղություններին պատկանող բոլոր հիմնական թերթերը, թեև այդ գործում ևս գոյություն ունեն խոշոր դժվարություններ։ Սովետական Հայաստանում սփյուռքահայ ոչ բոլոր թերթերն են ստացվում, իսկ ստացվողներն էլ լրիվ չեն և ցրված են Երևանի ամենատարբեր գրադարաններում։ Անշուշտ, սփյուռքից գրականության և մամուլի ստացման հարցի լուծումը շատ կհեշտացներ այն գիտական աշխատողների գործը, որոնք զբաղվում են սփյուռքահայության պատմության ուսումնասիրությամբ։ Այդ հարցում մեծ դեր կարող են խաղալ սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները։*

*Ուսումնասիրության մեջ օգտագործվել են նաև Հայկական ՍՍՀ ՀՌՍՏ Պետական կենտրոնական և Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի կուսակցական արխիվներում գտնվող նյութերը։ Այդ արխիվներում կան մեծ քանակությամբ նյութեր, որոնք վերաբերվում են հետպատերազմյան շրջանում ներգաղթի կազմակերպմանը և նույն ժամանակամիջոցում սփյուռքահայ կազմակերպությունների գործունեությանը։*

*Աշխատության նյութերի հավաքումը ավարտվել է 1960 թ., իսկ շարադրանքը՝ 1961 թ.։ Հետագա տարիների նյութերը հեղինակի կողմից մանրամասնորեն ուսումնասիրվել են։ Բայց որովհետև այդ նյութերը նոր բան չեն ավելացնում հեղինակի*

*եզրակացությունների և հիմնականում կրկնում են ուսումնասիրած շրջանի նյութերը, այդ պատճառով էլ դրանք մենագրության մեջ օգտագործվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքում։*

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՍԻՍՏԵՄՆԵՐԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՃԱԿԱՏԸ

*Աշխարհի պետությունների մեծ մասում գոյություն ունեն հայկական գաղթօջախներ։ Վիճակագրական ճշգրիտ տվյալներ չկան, ուստի հնարավոր չէ ստուգապես որոշել դաղութահայության ընդհանուր թիվը և նրա տեղաբաշխումը ըստ առանձին գաղթօջախների*։ Սփյուռքահայության քանակի մա-*

** Սփյուռքահայ մամուլի տվյալների համաձայն հայերի տարածումը արտասահմանում ունի հետևյալ պատկերը.*

**Ամերիկա**

| | |
|---|---|
| ԱՄՆ | 250.000 |
| Կանադա, Մեքսիկա, Կուբա | 16.000 |
| Արգենտինա | 60.000 |
| Բրազիլիա | 15.000 |
| Ամերիկայի այլ երկրներ | 12.000 |
| Ընդամենը | 353.000 |

**Ասիա**

| | |
|---|---|
| Լիբանան | 135.000 |
| Սիրիա | 150.000 |
| Իրան | 135.000 |
| Թուրքիա | 200.000 |
| Իրաք | 25.250 |
| Իսրայել | 3.000 |
| Հորդանան | 8.000 |
| Կիպրոս | 3.500 |
| Հնդկաստան | 1.500 |
| Ասիայի այլ երկրներ, Ավստրալիա | 10.000 |
| Ընդամենը | 671.250 |

**Եվրոպա**

| | |
|---|---|
| Ֆրանսիա | 125.000 |
| Բուլղարիա | 25.000 |
| Ռումինիա | 12.000 |
| Հունաստան | 9.000 |
| Անգլիա | 3.000 |
| Բելգիա, Հոլանդիա, Սկանդինավյան երկրներ, Շվեյցարիա, Գերմանիա, Իտալիա, Հարավսլավիա, Չեխոսլովակիա, Լեհաստան, Ավստրիա | 25.000 |
| Ընդամենը | 199.000 |

**Աֆրիկա**

| | |
|---|---|
| Եգիպտոս | 40.000 |
| Սուդան | 1.200 |
| Եթովպիա | 1.000 |
| Աֆրիկայի այլ երկրներ | 2.000 |
| Ընդամենը | 44.200 |
| Արտասահմանի բոլոր երկրներում ամբողջությամբ վերցրած | 1.267.450 |

*սին հիշատակված թվերը մոտավոր են, շատ հաճախ իրարամերժ, սակայն, այնուամենայնիվ, նրանք մոտ են իրականությանը և ցույց են տալիս, որ հայերի քանակը տատանվում է 1.200 հազարի և մեկ և կես միլիոնի միջև[1]:*

*Ինչ վերաբերում է սփյուռքահայության սոցիալ-տնտեսական վիճակի գնահատությանը, ապա պետք է խոստովանել, որ այն համարյա թե անհնարին է: Ոչ մի աղբյուր ամբողջական, բավարար տեղեկություն չի տալիս սփյուռքահայության դասակարգային կազմի, զբաղմունքի, կրթական մակարդակի և այլ բազմաթիվ հարցերի մասին, որոնք մեզ հնարավորություն կտային վերլուծելու արտասահմանի հայության ներկա վիճակը և տալու հայ գաղութների սոցիալ-տնտեսական դրության իսկական պատկերը:*

*Միաժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն բանի վրա, որ, ընդհանուր առմամբ, արտասահմանի հայության սոցիալ-տնտեսական վիճակը, որպես զուտ հայկական, գոյություն չունի: Օրինակ, Լիբանանի կամ Իրանի հայերի սոցիալ-տնտեսական վիճակը հիմնականում համընկնում է այդ երկրների ժողովուրդների սոցիալ-տնտեսական վիճակին: Տարբերիչ առանձնահատկությունն այն է, որ բոլոր այդ երկրներում հայերը, որպես ազգային փոքրամասնություն, տեղական բուրժուազիայի կողմից ենթարկվում են նաև ազգային ճնշման:*

*Հայ ժողովրդի սփյուռքահայ հատվածը վարում է ակտիվ հասարակական կյանք, նա ունի իր կուսակցությունները, քաղաքական, ազգային, մշակութային և մարզական կազմակերպությունները, հրատարակում է բազմաթիվ թերթեր, հանդեսներ, գեղարվեստական և այլ տիպի գրականություն: Հայ մամուլ և գրականություն է լույս տեսնում նաև օտար լեզուներով:*

*Սփյուռքահայ գաղթօջախները սերտորեն կապված են այն երկրների ժողովուրդների քաղաքական-հասարակական*

---

[1] *«Լրաբեր», 6 մարտի, 1962: «Զարթոնք», Բացառիկ, 1962, Բեյրութ:*

կյանքին, որտեղ գտնվում են։ Արտասահմանի հայ աշխատավորը մի կողմից հանդես է գալիս իր բնակված երկրի աշխատավորների քաղաքական պայքարում՝ իր հույզերով ու ձգտումներով կապվելով առաջադիմական ուժերի հետ, մյուս կողմից, պատմական դառն իրադարձությունների հետևանքով ցրված օտար ափերում՝ նա ուշադրությամբ ու համակրությամբ հետևում է իր Հայրենիքում կատարվող երևույթներին։ Սփյուռքահայ քաղաքական-հասարակական կյանքի մանրամասն ու բազմակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջազգային զարգացման արդի էտապում կապիտալի աշխարհում գտնվող բոլոր քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների և նրանց հետևող մասսաների նման արտասահմանի հայկական քաղաքական կազմակերպությունները և նրանց հարող ուժերը նույնպես բաժանված են երկու իրարամերժ ճակատի։

Բնականաբար հարց է առաջանում, թե ի՞նչպիսի վերաբերմունք պետք է ցուցաբերել սփյուռքահայ ուժերի նկատմամբ, միջազգային դեպքերի զարգացման արդի փուլի հրատապ հարցերի տեսանկյունից ելնելով՝ ի՞նչպես պետք է գնահատել նրանց ժամանակակից գործունեությունը։

Անհատի պաշտամունքի տարիներին, հակառակ մարքսիզմ-լենինիզմի ստեղծագործական ոգուն, սփյուռքահայ ուժերի գնահատության հարցերում հանդես էր բերվում դոգմատիզմ։ Չտեսնելով կամ չհասկանալով հասարակական երևույթների զարգացման դիալեկտիկան, սփյուռքահայ գրեթե բոլոր ուժերը համատարեն նույն կաթսայի մեջ էին նետվում։ Իսկ ընդհանուր առմամբ, սփյուռքահայությունը աչքաթող էր արվում, նրա պատմությունը չէր ուսումնասիրվում։

Սփյուռքահայության նկատմամբ կիրառվող նմանօրինակ քաղաքականությունը ճիշտ չէր։

Պետք է խիստ կերպով տարբերել արտասահմանի քաղաքական վտարանդիական ուժերին սփյուռքահայերից և սփյուռքահայ քաղաքական ուժերից։ Վտարանդիական ուժերը նրանք են, որոնք չհաշտվելով տիրապետող կարգերի հետ,

հեռանում են տվյալ երկրից և արտասահմանում միանում այլ հասարակարգի թշնամիներին։

Իսկ մի՞թե կարելի է նույնացնել սփյուռքահայությունը քաղաքական վտարանդիական ուժերի հետ։

Սփյուռքահայերը ոչ թե վտարանդիներ են՝ հեռացած հայրենիքից, վերջինիս հասարակարգի հետ հաշտ չլինելու պատճառով, այլ պատմական անարդարությունից տուժած հայ ժողովրդի դժբախտ զավակներն են, որոնք թուրքական յաթաղանից փրկված, հայրենիքից զրկված սփռվել են աշխարհով մեկ։ Վտարանդիները միշտ էլ իրենց ժողովրդի չնչին մասն են կազմել, սակայն սփյուռքահայերը չնչին մասնիկ չեն, այլ հայ ժողովրդի շուրջ մեկ երրորդը։ Արտասահմանի հայերը չնչին բացառությամբ ոչ թե պայքարում են սոցիալիզմի դեմ, այլ իրենց կյանքի ամենանվիրական ցանկությունը համարում են ներգաղթը Սովետական Հայաստան։ Սփյուռքահայությունը համարյա թե ամբողջությամբ, բացառությամբ դաշնակցականների, մասնակցում է խաղաղության, դեմոկրատիայի և առաջադիմության համար մղվող պայքարին։ Սակայն, իհարկե, սփյուռքահայ գործիչների մեջ էլ կան նաև քաղաքական վտարանդիներ։

Միջազգային լարվածության արդի փուլում սփյուռքահայ առաջադիմական ուժերի անտեսումը կոպիտ քաղաքական սխալ է՝ խորթ լենինիզմի ոգուն։

Մյուս կողմից, մի՞թե պարզ չէ, որ սովետահայ պատմաբանների բոլոր փորձերը՝ հայ ժողովրդի ամբողջական պատմություն ստեղծելու ուղղությամբ մշտապես կմնան անկատար, քանի դեռ անտեսվում է մեր ժողովրդի սփյուռքահայ հատվածի պատմությունը։

Այժմ ընդհանուր գծերով նշենք, թե որո՞նք են սփյուռքահայության քաղաքական ուժերը, ի՞նչ կուսակցություններ, հասարակական, մշակութային և ազգային կազմակերպություններ են գործում սփյուռքահայ գաղթօջախներում։

Սփյուռքահայության մեջ գործում են հայ կոմունիստները, հնչակ, ռամկավար ազատական և դաշնակցություն կու-

սակցությունները։ Բացի այդ կուսակցություններից, արտասահմանում գոյություն ունեն մեծ թվով մշակութային, կրթական, հայրենակցական, մարզական և երիտասարդական միություններ։ Սփյուռքահայ կյանքում զգալի ազդեցություն ունեն նաև եկեղեցին և Հայ բարեգործական ընդհանուր միությունը։

Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ բոլոր միությունները և ընկերությունները, որպես քաղաքական ուժ, մեծ մասամբ գտնվում են վերոհիշյալ կուսակցությունների ազդեցության տակ և իրենց առանձին դիրքավորումով հանդես չեն գալիս։

1906 թ. հիմնված Հայ բարեգործական ընդհանուր միությունը բուրժուական ֆիլանտրոպիկ կազմակերպություն է, որը գլխավորապես գտնվում է ռամկավար ազատական կուսակցության ազդեցության ոլորտում։ Հայ ժողովրդի պատմական անբարենպաստ զարգացման յուրահատուկ պայմաններում, երբ ազգի մի զգալի մասը գտնվում է արտասահմանում, այդ կազմակերպությունը մշակութային, կրթական, մարզական և այլ բազմաթիվ բնագավառներում կատարած իր ազգօգուտ գործունեությամբ օբյեկտիվորեն դրական դեր է խաղում։

«Տարիներու ընթացքին,— գրում է առաջադիմական «Լրաբեր» թերթը,— Բարեգործականը հայ գաղթաշխարհի մեջ նպաստահավաք և նպաստաբաշխ գլխավոր կազմակերպությունը հանդիսացավ, և նկատելի, օգտակար և նույնիսկ անհրաժեշտ բաժին ունեցավ, թե պատուհասյալ ու կարոտ հայերու նյութական օժանդակություն տալուն մեջ, և թե ազգապահպանման կենսական հարցի կապակցությամբ»[2]։

Սփյուռքահայ գաղթօջախներում այժմ գոյություն ունեն հարյուրից ավելի հայրենակցական միություններ, որոնք իրենց մեջ ընդգրկում են Արևմտյան Հայաստանի համանուն շրջանից կամ քաղաքից գաղթած բնակիչներին։ Այդ կազմակերպությունները, որոնք ունեն ծրագիր ու կանոնադրու-

2 «Բարեգործականի հիսնամյա հոբելյանը», «Լրաբեր», 1 մարտի, 1956։

թյուն, իրենց գործունեությամբ նման են մշակութային և բարեգործական ընկերություններին։ Հայրենակցական միությունները ունեն դրամական միջոցներ, որոնք գոյանում են անդամավճարներից, հանգանակություններից և նվիրատվություններից։ Նրանք զբաղվում են զանազան տոնակատարությունների կազմակերպումով, կարիքավորներին նյութական օգնություն ցույց տալով, կրթական գործով և այլն։ 1947 թ. ԱՄՆ-ի հայրենակցական և վերաշինական միությունները ստեղծեցին ամերիկահայ Միջհայրենակցական միությունը, որը թեև 1953 թ. փաստորեն դադարեցրեց իր գործունեությունը, բայց 1960 թ. փետրվարին նորից վերսկսեց այն։ Միջհայրենակցականը իր հիմնական խնդիրն էր համարում. «Նեցուկ կանգնել Ամերիկահայ Ազգային Խորհրդին, օժանդակել դեպի Սովետ Հայաստան ներգաղթին և հավաքաբար օգնել Սովետ Հայաստանի մեջ կառուցված նոր ավաններու ճարտարվեստական զարգացման և ընդհանուր հայրենաշեն գործին»[3]։

Սփյուռքահայության կյանքում զգալի դեր է կատարում նաև եկեղեցին։ Չշրջանցելով կրոնի բացասական դերը և գտնելով, որ պայքարը նրա դեմ բոլոր վայրերում ու պայմաններում պետք է շարունակել, այնուամենայնիվ, հարկ է ընդգծել հայ եկեղեցու դրական դերը սփյուռքահայության գոյատևման համար մղվող պայքարում։ Հայ եկեղեցին քարոզում է հայրենասիրություն և մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ սերտ կապերի անհրաժեշտություն։ Ազգապահպանման ազդակներից մեկը սփյուռքում հայ եկեղեցին է։ Դաշնակցությունը պառակտել է հայ եկեղեցին, ձգտելով այն օգտագործել իր նպատակների համար։ Առաջադիմական ուժերը, ընդհակառակը, ելնելով եկեղեցու գործունեության դրական կողմերից, բոլոր ջանքերը գործ են դնում նրա միասնությունը վերականգնելու համար։ «Լրաբերը» գրում էր. «Գաղութահայ պատմության մեջ ազգապահպանման օգտին կարևոր դեր է կատարած Հայաստանյայց եկեղեցին։ Այս դերը

3 Հայկական ՍՍՀ ՀՈՍՏ ՊԿԱ., ֆ. 362, ցուց. 2, գ. 28, թ. 58—59։

*ան կը շարունակե կատարել և պետք է կատարե. իսկ այդ դերը արդյունավետ կերպով կատարելու համար անհրաժեշտ է, որ ան մնա միասնական...»*[1]:

*Քանի որ սփյուռքահայ ընկերություններն ու միությունները ինքնուրույն քաղաքականություն չեն վարում և մեծ մասամբ գտնվում են այս կամ այն կուսակցության ազդեցության տակ, ապա այդ պատճառով էլ մենք նրանց գործունեությունը առանձին չենք քննարկում:*

*Ինչ վերաբերում է քաղաքական կուսակցություններին, ապա ելնելով ստեղծագործական մարքսիզմի դիրքերից, այդ հարցը անհրաժեշտ է խորը և բազմակողմանի քննարկման ենթարկել, հաշվի առնելով միջազգային զարգացման մեջ արդի փուլում տեղի ունեցած խոշորագույն փոփոխությունները:*

Վ. Ի. Լենինը և հայ լենինյանների ավագ սերունդը իր ժամանակին տվել են հայ քաղաքական կուսակցությունների դասակարգային էության փայլուն գնահատականը: Մարքսիստների ժամանակակից սերունդը ոչ մի հիմք չի տեսնում Լենինի և հայ լենինյանների կողմից հայ քաղաքական կուսակցություններին տված գնահատականները վերանայելու և անվերապահորեն ընդունում է դրանք:

*Սակայն, ընդունելով հայ քաղաքական կուսակցությունների մասին տված գնահատականները, անհրաժեշտ է նկատի առնել նաև այն, որ այդ կուսակցություններից ոմանք պատմության զարգացմանը և հասարակական երևույթների փոփոխմանը զուգընթաց, չփոխելով իրենց դասակարգային էությունը, ժամանակակից պայմաններում վարում են այնպիսի քաղաքականություն, որը դարաշրջանի հրատապ հարցերի տեսանկյունից ելնելով, այժմ լիովին իրավունք ունի կոչվելու* առաջադիմական:

[1] *«Զեկույց «Լրաբեր»-ի բովանդակության մասին», «Լրաբեր», 25 սեպտեմբերի, 1954:*

*Սփյուռքահայ կուսակցություններից դաշնակցությունը հանդիսացել է և հանդիսանում է սովետական իշխանության կատաղի թշնամին: Նա այժմ ամուր կերպով լծված է հակադեմոկրատական, իմպերիալիստական լագերի ռազմակառքին: Տեռորիստներին և գործակալներին վաղուց սնանկացած դաշնակցությունը վերածվել է բախտախնդիրների մի փոքր խմբի, որը զինվորագրվել է իմպերիալիստական պետությունների գաղտնի գործակալություններին և նրանցից միջոցներ է ստանում սոցիալիզմի համաշխարհային սիստեմի դեմ պայքարելու համար: Դաշնակցության լիդերները կորցրած մինիստրական աթոռները ետ ստանալու միակ հույսը կապում են միջազգային իմպերիալիզմի և հատկապես նրա միջնաբերդ ԱՄՆ-ի հետ: Ահա թե ինչու, դաշնակցությունն անվերապահորեն հավանություն է տալիս իմպերիալիզմի քաղաքականությանը:*

*Սանձելով իր առաջվա կատաղությունը և մտնելով վտարանդիներից կազմված հակասովետական «Փարիզյան բլոկ»-ի մեջ, դաշնակցությունը դրվատում է իմպերիալիզմի կողմից ստեղծված բոլոր բլոկներն ու զինակցությունները:*

*Զինվորագրվելով իմպերիալիզմին, դաշնակցությունը, բնականաբար, պետք է հանդես գար և հանդես է գալիս ազգային-ազատագրական պայքարի դեմ: Ազգային-ազատագրական պայքարը ապրում է իր զարթոնքը: Գաղութակալությունը գտնվում է իր հոգեվարքի շրջանում:*

*Իմպերիալիզմը մեր ժամանակներում այլևս ի վիճակի չէ ճնշելու գաղութային երկրների ժողովուրդներին: Նա շատ կցանկանար անել այդ, սակայն ժամանակները փոխվել են, առաջ է եկել սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, աննախընթացորեն ամրապնդվել է միջազգային կոմունիստական ու բանվորական շարժումը, որը ի վիճակի է պաշտպանելու գաղութային ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը:*

*Հիմա անգամ գաղութատիրական պետությունները չեն համարձակվում բացարձակորեն հանդես գալ գաղութային*

ժխտելի պաշտպանության դիրքերում։ Դաշնակցությունը ևս արտաքնապես այնպիսի կերպարանք է ընդունում, թե իբր ինքը պաշտպանում է ազգային-ազատագրական պայքարը, բայց իրականում նա հանդես է գալիս գաղութակալության պաշտպանման կառուցի պաշտպանների շարքերում։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ նա ծառայում է իմպերիալիզմի լագերում։

Դաշնակցությունը դեմ է նաև խաղաղ գոյակցությանը և հանդես է գալիս պատերազմի հրձիգների հետ միասին։ Նա ձգտում է պառակտել սփյուռքահայությանը և նրան օգտագործել պատերազմի հրձիգների պլաններում։ Այդ նպատակի իրագործման համար դաշնակցությունը, խոշոր միջոցներ ստանալով իմպերիալիստական պետություններից, հրատարակում է թերթեր, հանդեսներ, մեկը մյուսի ետևից թխում «գիտական» աշխատություններ, որոնցում կեղծում է հայ ժողովրդի պատմությունը, XIX դարի վերջի և XX դարի սկզբի ազատագրական շարժումը։

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության կեղծարարությունը հակասովետական պրոպագանդայի միայն սկիզբն է. դաշնակցությունը կանգ չի առնում դրա վրա, նա ավելի առաջ է գնում՝ փորձելով ապացուցել, թե իբր բոլշևիկները վերցնելով իշխանությունը, ավելի են վատթարացրել ժողովրդի վիճակը, իսկ ինչ վերաբերում է նոր կառուցված գործարաններին, ապա դրանք կապ չունեն հայ ժողովրդի հետ և չեն ծառայում նրա նյութական դրության բարելավմանը։

Դաշնակցությունը պառակտում է եկեղեցին, բարեգործական ընկերությունը, հայրենակցական և այլ տիպի միությունները։ Սփյուռքահայ կյանքում այժմ նկատելի դրական դեր կատարող եկեղեցին դաշնակցության ազգադավ քաղաքականության պատճառով այսօր պառակտված է երկու մասի։

Դաշնակցությունը պառակտելով սփյուռքահայ կազմակերպությունները օբյեկտիվորեն արագացնում է արտասահմանի հայության ձուլման պրոցեսը։

Սփյուռքահայության ապագան Սովետական Հայաստանն է։ Ի վերջո սփյուռքահայ բոլոր գաղթօջախները դատապարտված են վերացման. ներգաղթը արտասահմանի հայության փրկության միակ ուղին է։

Ահա թե ինչու սփյուռքահայ բոլոր խավերը անվերապահորեն պաշտպանում են ներգաղթը և աշխատում ինչքան կարելի է արագացնել այն։ Եվ զարմանալի չէ, որ դաշնակցությունը դեմ է դուրս գալիս ներգաղթին։ Ներգաղթը դաշնակցության մահն է։

Սակայն, դաշնակցության պառակտողական, հակաժողովրդական գործունեությունը հանդիպում է սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնական դիմադրությանը։ Սփյուռքահայ առաջադիմական ուժերը ղեկավարվում են հայ կոմունիստների, հնչակյանների և ռամկավար ազատականների կողմից։

Այս երեք քաղաքական ուժերից հայ կոմունիստների գործունեության վրա մենք հարկ չենք համարում կանգ առնել, ելնելով այն հանգամանքից, որ հայ կոմունիստները, հանդիսանալով տեղական կոմունիստական կուսակցությունների անդամներ, վարում են ամբողջ աշխարհին հայտնի քաղաքականություն՝ ուղղված միջազգային իմպերիալիզմի և նրա բոլոր գործակալների դեմ։

Հայ կոմունիստները գործելով տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունների շարքերում, միաժամանակ ակտիվորեն մասնակցում են այլ երկրներում գտնվող հայ գաղութների առաջադիմական ուժերի պայքարին։ Օրինակ, 1944 թ. Իրանի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Ցարաջալա Հլուն խոսելով առաջադիմական ուժերի պայքարին հայերի և մասնավորապես հայ կոմունիստների մասնակցության մասին, ասաց. «Այո, հայերը իրենք ալ սատարեցին Իրանի արժանապատվության, սահմանադրության և անկախության համար մղված պայքարին։ Հայ կոմունիստները աշխատեցան ամրապնդել հայ-արաբական համերաշխությունը և հայը արաբին հետ միասնաբար

*բերել ազգային նույն ճակատին մեջ։ Այս գործին մեջ անոնց ուժ տվին նաև բոլոր գիտակից հայ հայրենասերները՝ կուսակցական թե չեզոք շրջանակները»[5]։ Այդպիսին է հայ կոմունիստների գործունեությունը բոլոր այն երկրներում, ուր գոյություն ունեն հայ գաղթօջախներ։*

*Եթե հայ կոմունիստների գործունեությունը առանձին պարզաբանումների կարիք չի զգում, ապա այդ նույնը չի կարելի ասել հնչակ և ռամկավար ազատական կուսակցությունների գործունեության գնահատության մասին, կուսակցություններ, որոնք նույնպես ունեն իրենց մամուլի օրգանները, հրատարակում են գրականություն, զգալի գործունեություն են ծավալել սփյուռքահայ գաղթօջախներում։*

*Հարց է առաջանում. ի՞նչ բնույթի գործունեություն են ծավալել նրանք, ի՞նչ խնդիրներ են գտնվում նրանց ուշադրության կենտրոնում, միջազգային երկու լագերների գոյության պայմաններում ո՞ր շարքերում են գտնվում կամ ո՞րին են համակրում։*

*Հնչակյան և ռամկավար ազատական կուսակցությունների պրակտիկ և տեսական գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ կուսակցությունները գտնվում են խաղաղության, դեմոկրատիայի և առաջադիմության համար մղվող պայքարի մարտիկների շարքերում, հակաիմպերիալիստական լագերում։*

*Մեր օրերում այդ կուսակցություններն իրենց քաղաքականության հիմնական ուղեգիծը դարձրել են պայքարը ազգապահպանման համար և դաշնակցություն կուսակցության ավանտյուրիստական քաղաքականության դեմ։ Նրանք քննադատում են իմպերիալիզմի գաղութատիրական քաղաքականությունը, պաշտպանում գաղութային և կախյալ երկրների ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը։ Այդ կուսակցությունները մեծ ուշադրություն են դարձնում խաղա-*

---

5 *«Ցարաժալլա Հըլսի ճառը 1944-ին Սահակյան Հայկական միթինկին մեջ», «Մեր նպատակն է հառաջ», 11 դեկտեմբերի, 1960։*

դության ու դեմոկրատիայի հարցերին՝ քննադատելով իմպերիալիստական պետությունների քաղաքականությունը, եռանդուն կերպով պաշտպանելով խաղաղության և դեմոկրատիայի գաղափարները:

Ինչպես հնչակյանները, այնպես էլ ռամկավար ազատականները սիստեմատիկորեն և մեծ սիրով պրոպագանդում են Սովետական Միության և մասնավորապես Սովետական Հայաստանի ձեռք բերած աննախընթաց հաջողությունները արդյունաբերության, գյուղատնտեսության, մտավոր կյանքի և մշակույթի բնագավառներում և շատ հաճախ մերկացնում դաշնակցության զրպարտությունները՝ այդ հարցերի լուսաբանման կապակցությամբ:

Այդ կուսակցությունները համագործակցում են հայ կոմունիստների և տեղական դեմոկրատական ուժերի հետ խաղաղության և առաջադիմության համար մղվող պայքարում:

Սիրիայի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Խալեդ Բաղդաշը Մերձավոր արևելքում ստեղծված հայկական առաջադիմական ուժերի միասնական ճակատի մասին գրում է. «Հայերուն մեջ կազմված է ազգային ճակատ մը, որուն առաջադրանքն է արաբ և հայ ժողովուրդներուն բարեկամությունը, պայքար դաշնակ ավազակախմբին դեմ և պաշտպանություն հայերու Մայր Հայրենիքի Հայաստանի: Այս ճակատը իր մեջ կը համախմբե բոլոր հայ կուսակցությունններն ու կազմակերպությունները, որոնց գլխավորներն են՝ հնչակները, ռամկավարները, Վերածնունդ միությունը և հայ կոմունիստները: Դաշնակները այսօր հայ ժողովուրդի ծոցեն դուրս շպրտված, մեկուսացված ավազակախումբ մըն են»[6]:

Դաշնակցությունը չի ժխտում այն փաստը, որ այսօր սփյուռքահայությունը բաժանված է երկու հակամարտ բանակների. «այս բաժանումը տեղի ունեցած է, սովետական

6 «Ժողովուրդ», 12 Հունիսի, 1947:

կամ հակասովետական գծով, որ կարող է նկատվել նաև ռուսական կամ հակառուսական գիծ»[7]։

Պայքարը սփյուռքահայ կյանքում գնալով ավելի ու ավելի է սրվում։ Դաշնակցությունը ցանկանում է պառակտել սփյուռքահայ գաղթօջախները, իր կողմը քաշել սփյուռքահայությանը և նրան օգտագործել դեմոկրատիայի և սոցիալիզմի ուժերի դեմ։ Սակայն սփյուռքահայության հոծ զանգվածները չեն գնում դաշնակցության ետևից։ Նրանք, ընդհակառակը, ճնշող մեծամասնությամբ, համախմբված են առաջադիմական ուժերի շուրջը։

Սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնական ճակատը սկսել է կազմավորվել 1943 թվականից։ 1944 թ. մարտի 19-ին ամերիկահայ առաջադիմական ուժերի միջև կայացավ համաձայնություն Ամերիկահայ ազգային խորհուրդ ստեղծելու մասին։ Այդ առթիվ 1945 թ. մարտին ԱՄՆ-ի հայկական թերթերում հրապարակվեց մի փաստաթուղթ, որի մեջ ասվում էր... «Ամերիկահայ գաղութին մեջ համերաշխություն և համագործակցություն ստեղծելու և մեր ուժերը հայ ժողովուրդի շահերուն ի նպաստ հավաքաբար տրամադրելու համար Ռամկավար Ազատական կուսակցության, Ամերիկահայ Առաջադիմական Միության և Ս. Դ. Հնչակյան կուսակցության միջև մարտ 19, 1944-ին համաձայնություն կայացավ և կազմվեցավ Ամերիկահայ Ազգային Խորհուրդը հետևյալ նպատակներու շուրջը.

1. Օգնել պատերազմական ջանքերուն։

2. Կազմակերպել ձեռնարկներ և օգնել ձեռնարկներու ի նպաստ Սովետ Միության և Սովետ Հայաստանի։

3. Պաշտպանել տարագիր հայերու իրավունքները հարկ եղած բոլոր միջոցներով և աշխատել ի խնդիր անոնց հայկական հողին վրայ վերաբնակեցման։

Ամերիկահայ Ազգային Խորհուրդը հայկական իրավունք-

---

[7] Ս. Դարբինյան, Հայ ժողովրդի քաղաքական ուղղության մասին, «Հայրենիք», 3 հունիսի, 1954։

ներու տեղը կը ճանչնա Սովետ Հայաստանի կառավարութիւնը»[8]:

Դեռ նոր էին լռել հրանօթների համազարկերը երկրորդ համաշխարհային պատերազմի ռազմաճակատներում, երբ առեղծուեց նաեւ Սփիւռքի եւ Լիբանանի Ազգային Խորհուրդը: Այդ մասին սփիւռքահայ առաջադիմական մամուլը հրապարակեց հետեւյալ փաստաթուղթը*.

«Սովիէթ Հայաստանի ազգութիւնը ընդունող գանազան հոսանքներու ներկայացուցիչները, եւ խորհրդակցութիւն, որոշեցինք կազմել Սուրիոյ եւ Լիբանանի հայութեան Ազգային Խորհուրդ մը, գործունէութեան եւ ազգութեան հիմք ունենալով հետեւյալ կէտերը.

Ա. Աշխատել հայ ժողովրդի քաղաքական իրաւունքներու պաշտպանութեան համար, պաշտպանել Թուրքիայի կողմից բռնագրաւուած հայկական հողերի Սովետական Հայաստանին կցմանը, արտասահմանի հայութիւնը թոյլ տալ վերադառնալ եւ լծուել խաղաղ աշխատանքի:

Բ. Նկատի ունենալով, որ Հայկական ՍՍՌ կառավարութիւնը հանդիսանում է արտասահմանի հայութեան ազգային բոլոր ցանկութիւնների լաւագոյն թարգմանը, իրագործողը՝ Ազգային Խորհուրդը նրա նկատմամբ արտահայտում է լիակատար վստահութիւն եւ իր բոլոր միջոցներով պէտք է օժանդակի նրա բոլոր ձեռնարկումներին՝ ներգաղթի եւ բռնագրաւուած հողերը Հայաստանին միացնելու կապակցութեամբ:

Գ. Սովետական Հայաստանի հզօր զինակիցն ու պաշտպանը դա ռուս մեծ ժողովուրդն է, որը երկու անգամ փրկել է հայերին ֆիզիկական բնաջնջման վտանգից եւ նա նորից կօգնի:

Դ. Ազգային Խորհրդի պարտականութիւնն է, նյութական

8 «Ամերիկահայ ազգային խորհուրդ», «Լրաբեր», 3 մարտի, 1945:

* Նկատի ունենալով սփիւռքահայ առաջադիմական ուժերի բնութագրման գործում ներքոհիշյալ մի քանի փաստաթղթերի կարեւոր նշանակութիւնը, մենք դրանք մեջ ենք բերում առանց կրճատումների:

և բարոյական բոլոր միջոցներով օգնել Մայր Հայրենիքին, և պայքարել բոլոր նրանց դեմ, ովքեր մամուլի միջոցով կամ այլ արարքներով կջանան նսեմացնել Սովետական Հայաստանի վարկն ու հեղինակությունը:

Ե. Ազգային խորհուրդը պետք է աշխատի Սիրիայի և Լիբանանի ազգային ներքին կյանքի մեջ ստեղծել ներդաշնակություն և միասնականություն:

Զ. Ազգային խորհուրդը պիտի աջակցի Սիրիայի և Լիբանանի ազգային դեմոկրատական շարժմանը և հայ իրականության մեջ արգելի որևէ տարր, որը կարող է վնասել Սիրիայի և Լիբանանի հայության վարկին և հայ-արաբ խաղաղ հարաբերությանը:

Է. Ազգային խորհուրդին կրնան հարել բոլոր այն քաղաքական կազմակերպությունները, միությունները, առանձին անձինք, որոնք կընդունին սույն հայտարարությունը առանց դավանական և գաղափարական խտրության»[9]:

Սիրիայի և Լիբանանի հայ Ազգային խորհրդի կենտրոնական վարչությունը 1945 թ. սեպտեմբերին հանդես է գալիս մի հայտարարությամբ այն մասին, որ իր կողմից ստացված են հայ կոմունիստների, հնչակյան և ռամկավար ազատական կուսակցությունների դիմումները, որոնցում հայտնվում է, որ վերոհիշյալ կուսակցությունները ընդունում են վարչության 1945 թ. օգոստոսի 31-ի թվակիր պաշտոնական հայտարարության ամբողջականությունը և հարում այդ շարժմանը[10]:

Հայ կոմունիստները Ազգային խորհրդի կենտրոնական վարչությանը ուղղված դիմումի մեջ գրում էին. «Սույն պաշտոնագրով կընդունինք ձեր 31 օգոստոսի 1945 թվակիր պաշտոնական հայտարարության ամբողջությունը և կը հարինք ձեր շարժումին: Պատրաստ ենք ամեն տեսակի օժանդակություն ընծայել և նեցուկ հանդիսանալ ձեզի: Կը մաղթենք կա-

---

9 «Երիտասարդ Հայաստան», 23 հոկտեմբերի, 1945:

10 «Հայտարարություն Սուրիո և Լիբանանի Հայ ազգային խորհրդին», «Ժողովուրդի ձայն», 8 սեպտեմբերի, 1945:

տարյալ յաջողություն, ձեր նպատակի իրագործման համար»[11]:

Նույն գիրքերում էր նաև Հնչակյան կուսակցության ղեկավարության, որի դիմումում ասվում էր.

«Ս. Դ. Հնչակյան կուսակցության Սուրիոյ և Լիբանանի վարիչ Մարմինները կյուրացնենք Հայ Ազգային Խորհրդի Սուրիոյ և Լիբանանի Կենտրոնական վարչության 31 օգոստոս 1945 թվակիր պաշտոնական հայտարարությունը իր ամբողջության մեջ: Կը խոստանանք մեր նյութական և բարոյական աջակցությամբ զորավիգ կանգնել ձեր շարժումին և հասնիլ անոր: Հաջողության սրտաբուխ մաղթանքներ»[12]:.

Ռամկավար ազատական կուսակցության Սիրիայի և Լիբանանի շրջանային վարչությունը հայտնում էր. «Հաճույքով կարդացինք Հայ Ազգային Խորհրդի Սուրիոյ և Լիբանանի Կենտրոնական վարչության 31 օգոստոս 1945 թվակիր պաշտոնական հայտարարությունը: Պաշտոնապես կը հայտնենք, թե կընդունինք անոր ամբողջությունը և կը հարինք ձեր շարժումին: Կը գնահատենք ձեր նախաձեռնության ոգին և հաջողություն կը մաղթենք, խոստանալով ամեն տեսակի աջակցություն»[13]:

Այս պաշտոնական փաստաթղթերը ցույց են տալիս, թե հայկական կուսակցությունները ինչպիսի ուժերի հետ էին համագործակցում, ի՛նչ հույսեր ու սպասումներ ունեին և վերջապես ի՛նչ խնդիրներ էին դնում իրենց առաջ պատերազմը ավարտելու և քաղաքական ուժերի վերախմբավորման առաջին շրջանում:

Նույնանման ազգային խորհուրդներ կամ ազգային ճակատներ ստեղծվեցին համարյա այն բոլոր երկրներում, ուր գոյություն ունեին հայկական գաղթօջախներ: Այսպես, պաղեստինահայ նորաստեղծ Ազգային խորհուրդը 1946 թ. մարտի 22-ին հայտարարում էր, որ հետևելով Ամերիկայի, Ֆրան-

---

11 Նույն տեղում:

12 Նույն տեղում:

13 Նույն տեղում:

սիայի, Անգլիայի, Բալկանների, Իրանի, Եգիպտոսի և Սիրիայի ու Լիբանանի հայ գաղութների օրինակին, «Պաղեստինի մեջ ևս Ռ. Ա. Կուսակցության, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցության, Համայնավար կուսակցության և Հայ երիտասարդաց միության կենտրոնական վարչության ներկայացուցիչներով կազմեցինք Պաղեստինահայ Ազգային Խորհուրդը»[14]: Այդ Ազգային խորհուրդը ևս, որը ստեղծվել էր 1945 թ. նոյեմբերին, իր առջև նպատակ էր դնում օժանդակել Սովետական Հայաստանի առաջադիմության և ներգաղթի կենսագործմանը։

Սփյուռքահայ բոլոր ազգային խորհուրդները և ազգային ճակատները ունեին առաջադիմական բնույթ: Դաշնակները լավ գիտեին, որ ազգային խորհուրդներում համախմբվել են միայն հայրենասիրական ուժերը: Այդ պատճառով էլ նըրանք չմասնակցեցին ազգային խորհուրդների աշխատանքներին: Վ. Նավասարդյանը, անդրադառնալով ազգային խորհուրդների կազմի և բնույթի հարցերին, գրում էր. «Այդ խորհուրդներուն կանդամակցեին «Սովետ. Հայաստանի ուղղությունը ընդգրկող հոսանքներու ներկայացուցիչները» միայն. այսինքն՝ համայնավարները, հնչակյանները և ռամկավարները: Դաշնակցությունը այդ խորհուրդներուն մեջ չկար»[15]:

Սփյուռքահայ առաջադիմական ուժերի համախմբման գործում կարևոր նշանակություն ունեցավ նաև 1947 թ. ապրիլի 30-ին ԱՄՆ-ում հրավիրված Համաշխարհային հայկական կոնգրեսը: Համաշխարհային հայկական կոնգրեսի հրավիրման կապակցությամբ հրապարակված պաշտոնական կոչում ասվում էր. «Վերածնող Մայր Հայրենիքի վերելքին լայնագույն չափով օգնելու և արտասահմանի հայոց բարօրության, ներգաղթի և հողային արդար իրավունքների վերատացումին օգտին կատարված աշխատանքները ներդաշնակելու և համա-

14 Հայկական ՍՍՀ ՀՍՍՏ ՊԿԱ, ֆ. 362, ցուց. 2, գ. 16, թ. 18:

15 Վ. Նավասարդյան: Բոլշևիզմը և դաշնակցությունը, 1949, Գահիրե, էջ 649—650:

դրելու համար Ամերիկահայ Ազգային խորհուրդը նախաձեռնած է Համաշխարհային Հայկական Քոնկրես մը գումարել»[16]։

Կոնգրեսի առաջ կանգնած էին հետևյալ երեք հիմնական խնդիրները.

1. Միություն և համագործակցություն ստեղծել բոլոր հայ գաղութների մեջ ներգաղթի և վերաշինության շուրջը։

2. Մշակութային և հոգևոր կապերը զորացնել գաղութների և մայր հայրենիքի միջև։

3. Հասարակական նպաստավոր կարծիք ստեղծել հայ հողային իրավունքների նկատմամբ և նրանց արդար լուծումը հետապնդել Միավորված ազգերի կազմակերպության միջոցով[17]։

Կոնգրեսը շնորհավորական հեռագրեր ստացավ Հայկական ՍՍՌ Գերագույն սովետից, Արտաքին գործերի կոմիսարիատից, Արտասահմանի հետ կուլտուրական կապի հայկական ընկերության վարչությունից և Հայկական ՍՍՌ ԳԱ նախագահությունից։

Սովետական Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության անունից Համաշխարհային հայկական կոնգրեսին ջերմորեն ողջունեց ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։ Նա գրում էր. «Կոնգրեսը կը հանդիսանա մի նոր քայլ բովանդակ աշխարհի հայկական գաղութների հայությանը համախմբելու մեր մայր Սովետական Հայաստանի շուրջը, որ տարիների ընթացքում, սովետական բազմազգ ժողովուրդների ընտանիքում, հասել է խոշոր նվաճումների ազգային կուլտուրայի և գիտության զարգացման բնագավառներում։ Ցանկանում եմ բեղմնավոր արդյունքներ Կոնգրեսի աշխատանքներին»[18]։

---

16 «Պաշտոնական կոչ Համաշխարհային հայկական կոնգրեսի», «Նոր օր», 28 փետրվարի, 1947։

17 Նույն տեղում։

18 «Համաշխարհային հայկական կոնգրեսին», «Նոր օր», 9 մայիսի, 1947։

Կոնգրեսին մասնակցում էին եկեղեցու, ազգային խորհուրդների, Հայոց բարեգործական ընդհանուր միության, 46 հայրենակցական միությունների և աշխարհի համարյա բոլոր հայ գաղթօջախների 705 ներկայացուցիչներ։

Սփյուռքահայությունն իր առաջին համաժողովում ցույց տվեց, որ նա միշտ էլ եղել է Սովետական Հայաստանի ջերմ պաշտպանների թվում և սրտատրոփ սպասել է հայրենիք վերադառնալու հնարավորության ստեղծման բախտորոշ ժամին։ Հայրենիքից զրկված հայրենակարոտ հայության համաժողովը միահամուռ հավանություն տվեց ներգաղթը սկսելու մասին Սովետական կառավարության որոշմանը։ Կոնգրեսը որոշեց ի նպաստ ներգաղթի հաջող կազմակերպման 5 միլիոն դոլարի հանգանակություն կատարել։ Սփյուռքահայության այդ հեղինակավոր համաժողովի կողմից ընդունված կարևոր խնդիրների թվին են պատկանում նաև մայր հայրենիքի հետ մշակութային սերտ կապերի հաստատման և հայկական հողային պահանջների մասին որոշումները[19]։

Համաշխարհային հայկական կոնգրեսի հրավիրումը և նրա ընդունած որոշումները մեկ անգամ ևս ակնառու դարձրին այն փաստը, որ սփյուռքահայությունը ջերմորեն կապված է մայր հայրենիքի հետ և երբեք չի կարող գործիք լինել միջազգային իմպերիալիզմի ձեռքում՝ սոցիալիզմի լագերի դեմ մղվող պայքարում։

Այդ է պատճառը, որ դաշնակցությունը զրպարտելով հայ առաջադիմական ուժերին, զրպարտում էր նաև Համաշխարհային հայկական կոնգրեսը։ «Հայրենասեր հայության ինքնածին զգացումներեն և գիտակցութենեն բխող համաշխարհային Քոնկրեն,— գրում են հնչակյանները,— դաշնակցության օրգանի կողմեն կորակվի համայնավարներեն զրդված ժողով մը և որով փորձ կըլլայ յաչս օտարներուն զայն համարել կասկածելի և վնասել հայության միահամուռ կեցվածքով

---

19 «Նոր օր», 16 մայիսի, 1917։

Հայկական Հարցի լուծման պահանջին Սովետ Միութե-նէն»[20]:

Ինչպես տեսնում ենք, հետպատերազմյան շրջանում տեղի ունեցող պրոցեսը ընդգրկեց նաև սփյուռքահայությանը, նրան էլ բաժանելով երկու ճամբարի: Ինչպես աշխարհի բոլոր մասե-րում, այնպես էլ սփյուռքահայ գաղթօջախներում ծավալվեց սուր պայքար: Դաշնակցությունը, վայելելով միջազգային իմ-պերիալիզմի աջակցությունը, դրամական զավերի և մասնու-թյունների միջոցով ցանկանում էր պառակտել արտասահմանի հայ առաջադիմական ուժերը և իր ձեռքը վերցնել սփյուռքա-հայ գաղթօջախների ղեկավարությունը:

Լավ հասկանալով, որ հայ կոմունիստների, հնչակյաննե-րի և ռամկավար ազատականների միջև, չնայած նրանց մի ճակատում գտնվելուն, գոյություն ունեն լուրջ գաղափարա-կան և այլ բնույթի տարաձայնություններ, դաշնակցության լի-դերները մեծ աշխատանք են տանում օգտագործելու այդ տա-րաձայնությունները և պառակտելու նրանց:

Հաճախ դաշնակցությունը հանդես է գալիս «միասնա-կան ճակատ» ստեղծելու առաջարկով և «զղջողություն» է հայտնում հայ քաղաքական ուժերի պառակտվածության առ-թիվ: Այդ բոլորը արվում է սփյուռքահայ աշխատավորական մասսաներին մոլորեցնելու և նրանց համակրությունը շահելու համար, ինչպես նաև նրանց խորամանկաբար համոզելու, որ հայ գաղութը պառակտել է ոչ թե դաշնակցությունը, այլ կո-մունիստների, հնչակյանների և ռամկավար ազատականների բլոկը: Այդ նույն նպատակով դաշնակցությունը առանձին-առանձին դիմում է վերջին երկու կուսակցություններից յու-րաքանչյուրին, առաջարկելով վերացնել սփյուռքահայ գաղթ-օջախների պառակտվածությունը և ստեղծել մեկ միասնական ճակատ:

Սփյուռքահայ առաջադիմական ուժերը գտնում են, որ շատ ցանկալի միասնական ճակատի գաղափարը անիրակա-

20 «Ինքնակորույս կուսակցությունը», «Արարատ», 18 նոյեմբերի, 1947:

նանալի է, որովհետև այն նպատակները և պայմանները, որոնք հիմք են հանդիսանում մեկ միասնական ճակատում հայ առաջադիմական ուժերի համախմբման համար, չեն ընդունվում դաշնակցության կողմից:

Ելնելով այս ամենից Հնչակյան «Արարատ» թերթը «Միացյալ ճակատ կարելի՞ է կազմել» վերնագրով հոդվածում, վերլուծելով սփյուռքահայ բոլոր քաղաքական ուժերից միացյալ ճակատ ստեղծելու հնարավորության հարցը, գրում է. «Հնչակյանները համակիր են հայ պետության, էջմիածնի և Կիլիկիո կաթողիկոսության և հայ մշակույթի հարատևման և զարկ տալու գաղափարին: Այս գետնի վրա Հնչակյան և ռամկավար կուսակցությունները միջև որևէ տարակարծություն չկա»[21]: Եվ ապա խոսելով այն մասին, թե ինչու Հնչակյանները և ռամկավարները չեն կարող դաշնակցության հետ մեկ միասնական ճակատում լինել, թերթը շարունակում է.

«Սփյուռքահայության միասնական ճակատի արգելքը կուգա դաշնակցության կողմէ, որ ամեն ճիգ կթափե որ Հնչակյանը և ռամկավարը բաժնե իրարմե և հեռացնե այդ երկուքը Սովետ Հայաստանեն: Դաշնակցությունն ալ միասնականության, միացյալ ճակատ կուզե բայց... Հայաստանի դեմ»[22]: Իսկ ով դեմ է Սովետական Հայաստանին, նա չի կարող լինել միասնական ճակատում: Միասնական ճակատ կազմելու առաջին և հիմնական պայմանը, ըստ հնչակների, այն է, որ ամբողջ աշխարհի հայերը պետք է ընդունեն և նույնիսկ համակրեն Հայաստանի պետականության գաղափարը[23]:

Լավ հասկանալով դաշնակցության հետին մտքերը հայ առաջադեմ ուժերի միասնական ճակատը քայքայելու և հնչակին ու ռամկավարը իր կողմը քաշելու համար, Հնչակը գրում է. «Անկարելի է որ Հնչակյան և ռամկավար կուսակցություն-

---

[21] «Միացյալ ճակատ կարելի՞ է կազմել», «Արարատ», 1 հուլիսի, 1955:
[22] Նույն տեղում:
[23] Նույն տեղում:

*ները ընդառաջեն դաշնակ դավադիր ծրագրին և կազմեն ոչ թե* միասնական, այլ պառակտողական *ճակատ մը»*[24]:

*Հնչակյան պարտիայի դիրքորոշումը լիովին պաշտպանում են ռամկավար ազատականները: «...Արտասահմանի հայոց բոլոր վեճերը,— գրում են նրանք,— կռիվներն ու պառակտումները կը բխին միակ ակե մը, կը դառնան միակ առանցքի մը շուրջը,—Ներկա Հայաստանի և հայկական պետության հանդեպ որդեգրված երկու անհաշտ հակադիր վերաբերմունքներե»*[25]:

*Կարելի՞ է, արդյոք հաշտվել և միասնական ճակատ կազմել դաշնակների հետ: Ռամկավար ազատական կուսակցությունը ևս բացասական պատասխան է տալիս այդ հարցին, շեշտելով, որ «... անկարելի է հաշտություն և համագործակցություն առաջացնել Սովետ Հայաստանը և Ս. Էջմիածինը սիրողներուն ու պաշտպանողներուն և անոնց դեմ դավ անողներուն դեմ»*[26]:

*Տվյալ հարցում խիստ ու կտրուկ դիրք գրավեցին նաև առաջադիմականները: Միասնական ճակատ կազմելու մասին դաշնակցության կողմից արված առաջարկներին նրանք տվեցին բացասական պատասխան: «Առաջադիմականները,— գրում էին նրանք,— խորապես համոզված են, որ դաշնակցությունը իր գոյության համարյա ամբողջ ընթացքին պատուհաս մը եղած է հայ ժողովրդի գլխին, և թե անոր արած գրեթե ամեն մեկ քայլը և ձեռնարկած ամեն մեկ շարժումը միայն աղետ պատճառած է մեր ազգին: Իսկ այս պատերազմի ընթացքին ան դարձավ ուղղակի հայրենադավ կազմակերպություն մը և խնդիրը դրավ հայ ժողովրդի մահացու թշնամի նացի Գերմանիա նվաստ ստրկության մեջ:*

*Հետևաբար, դաշնակցության հետ իբրև կազմակերպության գործակցիլը կամ «հաշտեցողության գալը» բոլորովին անընդունելի առաջարկ մըն է: Մենք մեր ժողովրդին և մեր*

[24] *Նույն տեղում:*

25 *«Պայքարին բուն պատճառը», «Նոր օր», 9 օգոստոսի, 1955:*

26 *«Ձեռքը», «Նոր օր», 16 մայիսի, 1958:*

Հայրենիքին դավաճանած մի խմբի ըլլալնուն, Վրացյանի և Դարբինյանի հետ աշխատակցելով»[27]:

Դաշնակցությունը չի հաշտվում ստեղծված վիճակի հետ, նա դիմում է սադրանքների, սպանությունների և մատնությունների, որպեսզի դրանով իսկ կարողանա պառակտել ու ցրել առաջադիմական ուժերի միասնական ճակատը: Հատկապես օգտագործվում է այն հանգամանքը, որ սփյուռքահայ շատ գաղթօջախներ գտնվում են իմպերիալիստական, կամ նրանց ազդեցության տակ գտնվող երկրներում: Դաշնակցությունը հանդես է գալիս մատնիչի դերում, հայկական առաջադիմական ուժերին համարելով Սովետական պետության հինգերորդ զորասյուն՝ իմպերիալիզմի հետախուզական օրգանների ուշադրությունը հրավիրելով նրանց վրա: Դաշնակցությունը հայ գաղթօջախներում իր մենատիրությունը հաստատելու համար շատ հաճախ դիմում է սպանությունների և ահաբեկումների: Առաջադիմական ուժերին պատկանող մեծ թիվով հայեր դարձել են դաշնակցության զոհը: Ժամանակ առ ժամանակ դաշնակցության մեղքով նրա և առաջադիմական ուժերի պայքարը այնքան է սրվում, որ խանգարում է հայ գաղթօջախների անդորրը և իր վրա հրավիրում տեղական կառավարությունների ուշադրությունը:

Այսպես, 1958 թ. Լիբանանում դաշնակցության մեղքով տեղի հայ գաղթօջախը ապրում էր տագնապալից օրեր: Ընդհարումների արձագանքները այնքան մեծ էին, որ Լիբանանի կառավարությունը ստիպված եղավ զբաղվելու այդ հարցով:

Լիբանանի ներքին գործերի մինիստր Ռ. Էտտեն 1958 թ. դեկտեմբերին իր մոտ հրավիրեց հայ երեք կուսակցությունների՝ Հնչակի, ռամկավարների և դաշնակների ներկայացուցիչներին, նրանց հետ հայ գաղթօջախում խաղաղությունը վերականգնելու հարցի շուրջը խորհրդակցելու համար: Հայկական կուսակցությունների ներկայացուցիչները խոստացան ձեռք առնել բոլոր միջոցները՝ խուսափելու հետագա բախում-

27 «Հառաջադիմականի գիրքը», «Լրաբեր», 19 հուլիսի, 1945:

ներից և սպանություններից։ Այնուհետև մամուլում հրապարակվեց Ռ. Էսաճի հաղորդագրությունը, որի մեջ ասվում էր. «Ներքին նախարարը ուրախ է հայտնելու, որ հետևյալ հայ կուսակցությունները հնչակ, ռամկավար և դաշնակ, որոշեցին վերջ դնել արյունալի միջադեպերու, որ տեղի կունենային իրենց համակիրներու և կողմնակիցներու միջև, և ձեռք առնել գործնական միջոցներ, որոնք կերաշխավորեն վերջավորությունը դրդիչ արարքներու և բռնության, վերահաստատելու համար ապահովություն ու խաղաղություն թաղերու և շրջաններու մեջ, որոնք սարսափի մատնված էին վերջին դեպքերու պատճառով»[23]։

Սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնական ճակատի հակառակորդները սրտի խորքում այն միտքն էին փայփայում, որ վերոհիշյալ համաձայնագրով հնչակն ու ռամկավարը միանում են դաշնակցությանը։ Սակայն, սփյուռքահայ երեք կուսակցությունների միջև կայացած համաձայնությունը վերաբերում էր միայն և միայն լիբանանահայ գաղթօջախում խաղաղությունը պահպանելու հարցերին։

Հնչակ և ռամկավար կուսակցությունները հարկադրված էին մամուլի էջերում բացատրելու, որ համաձայնությունը վերաբերում է միայն սպանություններին վերջ տալուն և գաղթօջախի անդորրը վերականգնելուն։ «Կը մնա շեշտել,— գրում էին ռամկավարները,— թե գոյացած խորհրդակցությունը կը վերաբերի միայն հայ համայնքի խաղաղության, խռովությանց վերջ տալուն։ Բնական է, կան ու կը մնան հայ ժողովրդի մեծամասնության ազգային-եկեղեցական տարակարծությունները դաշնակցության և Անթիլիասի հերձածին հետ։ Կան ու կը մնան կուսակցությանց իրարու հետ ունեցած քաղաքական ու գաղափարական լուրջ տարակարծությունները։ Եվ յուրաքանչյուրին իրավունքն է պաշտ-

23 «Ներքին գործոց նախարար Ռեյմոն Էսաճի հաղորդագրությունը», «Արարատ», 12 դեկտեմբերի, 1958։

շահերին արտահայտվել իր ռեզոլյուցիաներում և համաժողովների մասին»[29]։

Հնչակյան կուսակցության ղեկավարությունը ևս մամուլի էջերում նշում էր, որ չնայած Ռ. Էսաեի մոտ կայացած համաձայնությանը, իրենք շարունակում են դատապարտել դաշնակցության քաղաքական ուղեգիծը, նրա կապվածությունը գաղութատիրական պետությունների հետ, Կիլիկիայի կաթողիկոսության անջատումը, հայ գաղթօջախներում իր մենատիրությունը հաստատելու ձգտումը, ազգային հաստատությունները օտար շահերին ի նպաստ գործածելու փորձերը և այլն[30]։

Թվում էր, թե պայքարը հայ քաղաքական կուսակցությունների միջև այսուհետև պետք է ընթանա միայն գաղափարախոսության բնագավառում, որ վերջնականապես վերջ է տրվում սպանություններին և ահաբեկումներին։ Սակայն այդպես չստացվեց։ Դաշնակցությունը՝ հարազատ իր տրադիցիաներին, նորից շարունակեց սպանություններով ու ահաբեկումներով առատ իր արյունոտ գործունեությունը։

Ավելորդ անգամ բացահայտվեց այն տարրական ճշմարտությունը, որ կապված միջազգային իմպերիալիզմի հետ՝ դաշնակցությունը չի կարող չպայքարել խաղաղության և դեմոկրատիայի ուժերի դեմ։ Բյուրոյականները շարունակում են պայքարել առաջադիմական ուժերի դեմ՝ ի նպաստ միջազգային իմպերիալիզմի, առանց քաշվելու հայտարարելով, որ պայքարել դաշնակցության դեմ, այդ նշանակում է հանդես գալ միջազգային իմպերիալիզմի դեմ։

Դաշնակցության «Հայրենիք» օրաթերթը իր խմբագրականում ուղղակի այդ ոճով էլ սպառնում է. «Դաշնակցության դեմ ճակատ հայտարարել, օրվան այս ժամուն, երբ ամեհի մրցակցություն մըն է որ կը կատարվի Արևմուտքի և

29 «Խաղաղության Լիբանանահայ գաղութին ներս», «Զարթօնք», 1[illegible] դեկտեմբերի, 1958։

30 «Հաստատումներ» (խմբագրական), «Արարատ», 11 դեկտեմբերի, 1958։

Արևելքի մեջ, ուրիշ բան չի նշանակեր եթե ոչ ճակատ հայտարարել Արևմտյան ազատ ժողովրդավարության դեմ»[31]։

Բայց դաշնակցությունը այսքանով չի բավարարվում, նա իր մեղադրանքներում շատ ավելի առաջ է գնում։ Դաշնակցական «Ասպարեզը» իր խմբագրականում, որը վերնագրված է «Միացյալ Նահանգներու դեմ դավադրողները», ոտնակոխ անելով բարոյական բոլոր նորմաները, ստելով ու կեղծելով, այն միտքն է ցանկանում անցկացնել, թե իբր «Լրաբերը», «Երիտասարդ Հայաստանը», «Պայքարն» ու «Նոր օրը» իրենց սովետական դիրքավորումով ձգտում են ԱՄՆ-ում տիրող կարգերը խորտակել և այն «պրոլետարիատի դիկտատուրայով» փոխարինել[32]։

Այս զրպարտչական հոդվածը միայն զայրույթ կարող է առաջացնել։ Ում հայտնի չէ, որ ռամկավար ազատականները մնալով միասնական ճակատի մեջ, չեն ընդունում սովետական հասարակարգը և պրոլետարիատի դիկտատուրան։ Իրենք՝ դաշնակցականները ևս լավ գիտեն այդ, սակայն հայ առաջադիմական ուժերին Սովետական Միության հինգերորդ զորասյան դերում հանդես բերելու մարմաջը այնքան ուժեղ է, որ նրանք կանգ չեն առնում փաստերի խեղաթյուրման առաջ։

Դաշնակցությունը չի բավարարվում միայն միասնական ճակատում համախմբված ուժերի դեմ գործելով, նա պայքարում է նաև «անկուսակցականների» և «չեզոքների» դեմ, պահանջելով, որ վերջիններս չգնան առաջադիմականների, ռամկավարների և հնչակների բանակի ետևից։ «Կամ համայնավարներուն հետ և կամ Ազատ և դեմոկրատիկ ազգերու. միջին ճամբայ և «չեզոքության խաղաղ» չկա»,— գրում է «Ազդակը» իր 1955 թ. հունվարյան համարներից մեկում։

Սակայն ո՛չ դաշնակցության սպառնալիքները և ո՛չ էլ իմպերիալիստական պետությունների հալածանքները չեն

---

31 «Հայրենիք», 10 փետրվարի, 1960։

32 «Ասպարեզ», 14 սեպտեմբերի, 1955։

ստանում սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնական ճակատը, որը ոչ միայն չի պառակտվում, այլ, ընդհակառակը, ավելի է ամրապնդվում։ «Անեղծանելի ճշմարտություն կը մնա,— գրում է ռամկավարների «Նոր օր» թերթը,— որ բովանդակ գաղութահայությունը բաժնված է երկու հակադիր ճակատներու։ Մեկ կողմին վրա կա ջախջախիչ մեծամասնությունը՝ զուտ ազգային ձգտումներով ու մտահոգություններով, որ կընդգրկեն Ռամկավար Ազատական և Հնչակյան կուսակցությունները, Հայ Առաքելական և Ավետարանական եկեղեցիները, Հայ բարեգործական, հայրենակցական ու մշակութային միությունները։ Մյուս կողմը կը կազմե դաշնակցությունը իր արբանյակ մարմիններով, կրթնած օտար պետության նյութական ու ռազմական նպաստին»[33]։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է կանգ առնել մի հանգամանքի վրա ևս։ Սփյուռքահայ շատ կազմակերպություններ երբեմն պաշտոնապես չմտնելով միասնական ճակատի մեջ, այնուամենայնիվ, վարում են առաջադիմական քաղաքականություն։ Օրինակ, ռամկավար ազատականները 1950 թ. մակարթիզմի ստեղծած մատնության հալածանքների ծանր պայմաններում դուրս եկան ԱՄՆ-ի Հայկական Ազգային խորհրդի կազմից։ Սակայն ռամկավար ազատականները Ազգային խորհրդից դուրս ես շարունակում են մասնակցել խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարին։

Արտասահմանում հայ առաջադիմական ուժերի գործունեության պայմանները չափազանց դժվար են։ Սփյուռքահայ ուժերը ռեակցիայի պայմաններում չեն կարողանում անել այն բոլորը, ինչ ցանկանում են։ Շատ դեպքերում ստիպված են լինում գրել զսպված, հույզերն ու մտքերը արտահայտել կիսով չափ։ Նույնիսկ այնպիսի մի զգացմունք, ինչպիսին է սերը Հայրենիքի նկատմամբ, ոչ միշտ է հնարավոր

33 «Նոր օր», 9 օգոստոսի, 1955։

լինում արտահայտել: Ահա թե ինչու, ռամկավարները ա-ռանց երկիմաստության գրում են, որ Արևմուտքի և Արևելքի իրար մոտեցման և փոխըմբռնողության գծում «Մենք կա-րող պիտի ըլլանք ավելի համարձակությամբ խոսիլ մեր հայրենիքի մասին առանց ենթարկվելու. Հայ մտավորականների (խոսքը դաշնակցության մասին է — Լ. Խ.) մատնանշումներուն և կասկածներին նկատվելու»[34]:

Այնպես որ, ընթերցելով սփյուռքահայ մամուլը և գրա-կանությունը մշտապես պետք է հաշվի առնել այն հանգա-մանքը, թե ինչպիսի դժվարին պայմաններում են աշխատում արտասահմանի հայ կուսակցությունները և միշտ չէ, որ հնարավորություն են ունենում արտահայտել իրենց հույ-զերն ու ցավերը:

Արձագանքելով մարդկային հասարակության պատմու-թյան զարգացման կանչին, սփյուռքահայ առաջադիմական ուժերը, հաղթահարելով բոլոր դժվարությունները, քայլում են խաղաղության և դեմոկրատիայի համար պայքարողների հետ միասին, լավ գիտակցելով, որ «Պետք է անվթար ու միշտ ավելի հզոր պահել ազգային բոլոր ուժերուն համախմ-բումը՝ վերջնական հաղթանակի նախօրյակին»[35]:

Այդ բոլորից հետո առաջանում է այն ճիշտ հարցադրու-մը, որ մի՞թե թույլատրելի է անուշադրության մատնել կամ դաշնակցության հետ նույնացնել վերահիշյալ քաղաքական կուսակցություններին, ընկերություններին ու միություննե-րին: Բնականաբար ոչ:

Իսկ ի՞նչ է արվել մեզանում սփյուռքահայ առաջադի-մական այդ կուսակցությունների հետ կապերն ուժեղացնելու ուղղությամբ: Այդ բնագավառում մինչև վերջին տարիները, սակայն, գրեթե ոչինչ չէր արվել: Անհատի պաշտամունքի շրջանում այս հարցի կապակցությամբ թույլ էր տրվում կո-

[34] Հ. Դաղամյան, Չորս մեծերու ժողովին հետոյ, «Նոր օր», 5 օգոստո-սի, 1955:

[35] «Զորացնենք մեր ազգային ճակատը», «Արարատ», 11 դեկտեմբերի, 1958:

դիտ սխալ և իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում այլ կուսակցությունների հետ դաշինքներ կնքելու լենինյան տեսության խեղաթյուրում։

Միջազգային կոմունիստական և բանվորական շարժման ժամանակակից էտապում, ղեկավարվելով ՍՄԿԿ XX և XXII համագումարների որոշումներով Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը համագործակցության առաջարկ է անում սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ղեկավարներին, այն կուսակցությունների, որոնց ղեկավարների ռեֆորմիստական, դավաճանական քաղաքականության հետևանքով բանվոր դասակարգը շատ տառապանքներ է տեսել և շատ դառնություններ ճաշակել, որոնք այժմ էլ ոչ միայն գործով, այլև խոսքով դեմ են սովետական իշխանությանը և մարքսիզմ-լենինիզմին։

Արդի պայմանների զարգացման տրամաբանությունը թելադրում է կապեր հաստատել սփյուռքահայ կուսակցությունների և կազմակերպությունների հետ, լսել նրանց կարծիքը և համագործակցել նրանց հետ խաղաղության, դեմոկրատիայի և առաջադիմության համար մղվող պայքարում։

Հակաիմպերիալիստական դեմոկրատական լագերի մեջ մտնող ուժերը բազմազան են։ Նրա մեջ մտնում են սոցիալիզմի և կոմունիզմի հաղթանակի համար պայքարող կոմունիստներից մինչև խաղաղության համար պայքարող հոգևորականները և իմպերիալիզմի լուծը թոթափող ազգերի ազգային-ազատագրական պայքարը ղեկավարող բուրժուական կուսակցությունները։ Մի խոսքով, այդ լագերի մեջ մտնող ուժերն ունեն տարբեր գաղափարախոսություններ և այդ առումով նրանք հակառակորդներ են։ Սակայն այդ ուժերին գաղափարախոսությունների նույնությունը չէ, որ միավորել է, այլ միջազգային զարգացման ժամանակակից էտապի բանականության կանչը։

Ունենալով տարբեր գաղափարախոսություններ, սուր տարաձայնություններ, այդ բնագավառում իրար ոչ մի զիջում չանելով, բոլոր առաջադիմական ուժերը պետք է համա-

*խմբվեն մեկ լագերում և միասնաբար հանդես գան խա-ղաղության, դեմոկրատիայի և ազգային-ազատագրական պայքարի հաղթանակի համար մղվող մարտերում, քանի որ դրանից է կախված մարդկության համաշխարհային պատ-մության ապագա ամբողջ ընթացքը։*

*Այսպիսի պայմաններում, միանգամայն բնական է, երբ խաղաղության ու առաջադիմության համար մղվող մարտիկ-ներից շատերն իրենց գործունեության ընթացքում թույլ են տալիս սխալներ, երբեմն տատանվում են, սկզբունքայնու-թյուն չեն հանդես բերում և այլն։ Այլ կերպ չէր էլ կարող լի-նել։ Խաղաղության և առաջադիմության համար մղվող պայ-քարում համախմբվել են այնպիսի դասակարգեր և հասա-րակական խավեր, որոնք իրենց դասակարգային էությամբ պայմանավորված՝ չեն կարող վարել պրոլետարական կու-սակցությանը հատուկ հստակ քաղաքականություն։*

*Նույն երևույթը հատուկ է նաև սփյուռքահայ առաջադի-մական ուժերի գործունեությանը։ Անհրաժեշտ է չմոռանալ, որ այդ կուսակցությունները կոմունիստական չեն և նրանց գործունեության մեջ նկատվող մեզ համար անընդունելի երևույթները բնական են ու անխուսափելի։*

*Սակայն սփյուռքահայ առաջադիմական ուժերը, անկախ իրենց գաղափարախոսությունից և պրակտիկ գործունեու-թյան ընթացքում նկատվող տատանումներից, գտնվում են դեմոկրատական, հակաիմպերիալիստական լագերում։ Սովետական Հայաստանը համագործակցում է այդ ուժե-րի հետ։*

*Նման դիրքավորումը բխում է ՍՄԿԿ XX համագումարի և միջազգային կոմունիստական ու բանվորական կուսակցու-թյունների 1957 և 1960 թթ. Մոսկովյան խորհրդակցություն-ների ընդունած որոշումներից։*

*Դեռևս 1957 թ. նոյեմբերին Մոսկվայում տեղի ունեցած կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ներ-կայացուցիչների խորհրդակցության դեկլարացիայում պարզ և հստակ ասվում է այն մասին, որ կոմունիստական ու բան-*

վորական կուսակցությունների առաջ դրված համաշխարհային պատմական խնդիրների կատարման համար պետք է համախմբվեն ոչ միայն կոմունիստական կուսակցությունները, այլև ամբողջ աշխատավորությունը, ամբողջ առաջադեմ մարդկությունը, ամբողջ աշխարհի բոլոր ազատասեր և խաղաղասեր ուժերը։

«Ներկայումս ամբողջ աշխարհում կարևորագույն խնդիրը,— կարդում ենք Դեկլարացիայում,— խաղաղության պաշտպանության համար պայքարն է։ Բոլոր երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունները ձգտում են ամենալայն մասշտաբների համատեղ գործողություններ հաստատել խաղաղասեր և պատերազմ չցանկացող բոլոր ուժերի հետ։ Խորհրդակցության մասնակիցները հայտարարում են, որ պաշտպանում են բոլոր այն պետությունների, կուսակցությունների, կազմակերպությունների, շարժումների և առանձին անձանց ջանքերը, որոնք հանդես են գալիս խաղաղության օգտին, պատերազմի դեմ, խաղաղ գոյակցության, Եվրոպայում և Ասիայում կոլեկտիվ անվտանգության ստեղծման, սպառազինությունների կրճատման, միջուկային զենքի կիրառումն ու փորձարկումները արգելելու օգտին»[36]։

Կոմունիստական և բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների 1960 թ. Մոսկվայում կայացած խորհրդակցության հայտարարության մեջ կոմունիստական կուսակցությունները խաղաղության համար մղվող պայքարը համարելով իրենց առաջնակարգ խնդիրը, բանվոր դասակարգին, արհմիություններին, կոոպերատիվ, կանանց, երիտասարդական միություններին և կազմակերպություններին, բոլոր աշխատավորներին, անկախ քաղաքական և կրոնական համոզմունքներից, կոչ էին անում մասսայական պայքարի միջոցով վճռական հակահարված տալ իմպերիալիստների ամեն տեսակ ագրեսիվ գործողություններին[37]։

---

36 «Սովետական Հայաստան», 26 նոյեմբերի, 1957։

37 «Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության հայտարարությունը», Հայպետհրատ, 1960, էջ 36։

*Ամբողջ աշխարհի ժողովուրդներին ուղղված դիմումում կոմունիստական և բանվորական կուսակցությունները գրում էին. «Մենք՝ կոմունիստներս, պայքարելով բանվոր դասակարգի ու ժողովուրդների գործի համար ձեռք ենք մեկնում խաղաղության օգտին հանդես եկող սոցիալ-դեմոկրատներին, մյուս պարտիաների ու կազմակերպությունների անդամներին, արհեստակցական միությունների բոլոր անդամներին, բոլոր հայրենասերներին՝ մեզ հետ միասին գործելու ի պաշտպանություն խաղաղության, հանուն զինաթափման։ Հանուն համաձայնեցված գործողությունների։ Ստեղծենք պայքարի ընդհանուր ճակատ ընդդեմ իմպերիալիստների կողմից նոր պատերազմի նախապատրաստման»[58]։*

*Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները իրենց գործունեության ընթացքում մշտապես հանդես են եկել այն հրատապ խնդիրների պաշտպանությամբ, որոնք նշված են Դեկլարացիայում, Հայտարարությունում և Դիմումում։ Կոմունիստական և բանվորական կուսակցությունների Մոսկվայի խորհրդակցությունների որոշումները, անկասկած, վերաբերվում են նաև սփյուռքահայ առաջադիմական կազմակերպություններին։*

*1961 թ. մայիսին, Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի 40-րդ տարեդարձի կապակցությամբ, Երևան հրավիրվեց սփյուռքահայ առաջադիմական գործիչների մի մեծ խումբ։*

*Երևանում գտնված ժամանակ սփյուռքահայ առաջադիմական գործիչները չերմ, բարեկամական հանդիպումներ ունեցան Հայաստանի կոմունիստական կուսակցության, կառավարության ղեկավարների և ինտելիգենցիայի ներկայացուցիչների հետ։*

*Սփյուռքահայ առաջադիմական գործիչները այդ հանդիպումների ժամանակ լիովին համոզվեցին, որ իրենց ձգտում-*

*58 «Դիմում ամբողջ աշխարհի ժողովուրդներին», Հայպետհրատ, 1960, էջ 10—11։*

*ներն ու իղձերը պաշտպանություն են գտնում Սովետական Հայաստանի թե կոմունիստական կուսակցության ու կառավարության և թե ընդհանրապես ամբողջ ժողովրդի կողմից:*

*Հայաստանի կոմունիստական կուսակցության XXII համագումարը մեծ ուշադրություն դարձրեց սփյուռքահայության հետ ունեցած կապերի, ներգաղթի կազմակերպման և առաջադիմական կազմակերպությունների ժամանակակից էտապի գործունեության գնահատության հարցերին:*

*Համագումարը, մտահոգված բախտի դառն հարվածների տակ մեր մոլորակի տարբեր վայրերում ապաստանած հայ ժողովրդի զգալի զանգվածների ապագայի հարցով, խնդիր դրեց օգնել նրանց՝ վերադառնալու իրենց միակ հայրենիքը՝ Սովետական Հայաստան և լծվելու խաղաղ ստեղծագործական աշխատանքի:*

*Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը և Մինիստրների սովետը մշակեցին մի շարք միջոցառումներ՝ հայրենադարձությունը ավելի լայն թափով, ավելի կազմակերպված ձևով շարունակելու և զարգացնելու համար:*

*Համագումարը միանգամայն ճիշտ դիրքավորումով խնդիր դրեց ընդլայնել և բարելավել կապերը արտասահմանյան հայերի ու նրանց առաջադիմական կազմակերպությունների հետ: Սակայն համագումարը չբավարարվեց միայն այդքանով: ՀԿԿ XXII համագումարը անհրաժեշտ գտավ պարզ ու որոշակի ցույց տալ իր վերաբերմունքը հնչակ և ռամկավար ազատական կուսակցությունների նկատմամբ, որոնք գնահատվեցին որպես առաջադիմական ուժեր: Համագումարին տված հաշվետու զեկուցման մեջ ընդգծվեց, որ ՀԿԿ քաղաքականությունը բխում է Սովետական Միության կոմունիստական կուսակցության քաղաքականությունից, որի նպատակն է ամրապնդել կապերն այն բոլոր առաջադիմական կազմակերպությունների հետ, որոնք պայքարում են խաղաղության համար, ռեակցիայի, իմպերիալիզմի և պատերազմի դեմ, բոլոր առաջադիմական ուժերի միասնական ճա-*

կատ ստեղծելու համար։ Համագումարը հատկապես ուշադրությունը դարձրեց այն հանգամանքի վրա, որ հնչակյան կուսակցությունը վարում է Սովետական Հայաստանին աջակցելու գիծ, պրոպագանդում է մեր հանրապետության նվաճումները, պայքարում է դաշնակցության, իմպերիալիզմի դեմ, հանուն խաղաղության։ Ինչպես նշվեց համագումարում, մոտավորապես նույնպիսի դիրքերում է կանգնած նաև ռամկավարների կուսակցությունը։

«Այդ պարտիաների նկատմամբ,— ասվում է XXII համագումարին արված հաշվետու զեկուցման մեջ,— մեր դիրքերը միանգամայն պարզ են։ Մենք մտադիր չենք նրանց գաղափարական որևէ զիջում անել, բայց մենք ողջունում ենք նրանց հայրենասիրական գործունեությունը կապիտալիստական երկրների հայկական գաղութների պայմաններում։ Արտասահմանյան հայ առաջադիմական կազմակերպությունների գործունեությունը միշտ կարժանանա մեր աջակցությանն ու օգնությանը։ Խնդիրն այն է, որպեսզի համախմբել արտասահմանյան հայկական առաջադիմական կազմակերպությունների բոլոր ուժերը, ակտիվորեն գործակցել տվյալ երկրի առաջադիմական բոլոր ուժերի հետ և այսուհետև էլ անհաշտ պայքար մղել հայ ժողովրդի ոխերիմ թշնամի հակառևոլյուցիոն, բուրժուա-նացիոնալիստական դաշնակցություն պարտիայի դեմ՝ հանուն խաղաղության, ազատության և ժողովուրդների երջանկության»[39]։

Խոսելով սփյուռքահայ աշխատավորության և բուրժուական կուսակցությունների ու կազմակերպությունների դեպի Սովետական Հայաստանն ունեցած վերաբերմունքի մասին, մենք դրանք չենք նույնացնում, քանի որ աշխատավորական զանգվածների և բուրժուական ու մանրբուրժուական հայրենասիրության միջև արմատական, որակական տարբերու-

39 «Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXII համագումարին», Հայպետհրատ, 1961, էջ 123։

*թյուն կա։ Այս հանգամանքն ունի ոչ միայն տեսական, այլև խիստ կարևոր պրակտիկ նշանակություն։ Հայրենասիրության մասին լենինյան տեսության մոռացության տալը անպայմանորեն կհանգեցնի կոպիտ սխալների և անհաջողությունների։*

*Կատարելով ՀԿԿ XXII համագումարի ցուցումները, Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը համագումարից հետո ընկած շրջանում մեծ ուշադրություն նվիրեց սփյուռքահայության հետ կապերի ամրապնդմանը։ Հետհամագումարյան շրջանում զգալիորեն ուժեղացավ էկոնոմիկայի, գիտության ու կուլտուրայի բնագավառում Սովետական Հայաստանի նվաճումների պրոպագանդան սփյուռքահայության մեջ։*

*Հայաստանի կոմունիստական կուսակցության XXIII համագումարին (1964 թ. հունվար) տված հաշվետու զեկուցման մեջ հատկապես մատնանշվեց այն կարևոր հանգամանքը, որ «Այդ աշխատանքը՝ զուգորդվելով արտասահմանյան առաջադիմական կազմակերպությունների նկատմամբ Հայաստանի կոմպարտիայի անցյալ համագումարի սահմանած մեր վերաբերմունքի հետ, մեծ դեր խաղաց, ուժեղացնելով մեր եղբայրների և քույրերի համակրանքը դեպի իրենց սոցիալիստական հայրենիքը, ամրապնդելով սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների դիրքերը և համախմբելով նրանց ուժերը խաղաղության և իրենց ժողովրդի երջանկության համար, դաշնակների ռեակցիոն, բուրժուա-նացիոնալիստական պարտիայի դեմ մղվող պայքարում»*[40]։

*«Մեր խնդիրն է,— ասվում է ՀԿԿ XXIII համագումարին տված զեկուցման մեջ,—* այսուհետև էլ ընդլայնել և ամրապնդել կապերը արտասահմանյան առաջադիմական կազմակերպությունների հետ, *թշնամական պրոպագանդայով*

---

40 *«Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXIII համագումարին», Հայպետհրատ, 1964, էջ 108։*

*մոլորեցված արտասահմանյան հայրենակիցներին օգնել* իմանալու ճշմարտությունը սովետական իրականության մասին»[41]:

*Կասկածից վեր է, որ Հայաստանի կոմունիստական կուսակցության XXII և XXIII համագումարների որոշումներից հետո սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները ավելի կհամախմբվեն և նոր եռանդով կպայքարեն խաղաղության և առաջադիմության հաղթանակի համար:*

41 *Նույն տեղում:*

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԼԱԳԵՐՈՒՄ ԸՆԴԴԵՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ

«Իմպերիալիզմի գաղափարական-քաղաքական գլխավոր զենքը, հակակոմունիզմն է, որի հիմնական բովանդակությունն է, սոցիալիստական կարգերը զրպարտելը, կոմունիստական պարտիաների քաղաքականությունն ու նպատակները, մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը կեղծելը»։

*(ՍՄԿԿ Ծրագրից)*

## 1. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԼԱԳԵՐՈՒՄ

*1920 թ. հայ ժողովուրդը տապալեց դաշնակների տիրապետությունը և ստեղծեց սովետական իշխանություն։ Դաշնակցություն կուսակցության ղեկավարները փախան արտասահման, երկիրը թողնելով անօրինակ քայքայված վիճակում, արյան և արցունքի մեջ։*

*Դաշնակցության ղեկավարությունը անհրաժեշտ եզրակացություններ չանելով պատմության դասերից, գործելով բոլոր միջոցներով, միշտ էլ ձգտել է նա վերադարձնել 1920 թ. կորցրած իր տիրապետությունը։ Եվ քանի որ դեպի այն տանող ճանապարհը փակում են հայ ժողովուրդն ու ամբողջ Սովետական Միությունը, ապա դաշնակցությունը, բնականաբար, պետք է գնար և, իրոք, գնաց դեպի միջազգային իմպերիալիզմը, հույս ունենալով նրա սվինների օգնությամբ մուտք գործել Հայաստան և գրավել կորցրած դիրքերը։*

*Ահա թե ինչու, դաշնակցությունը սփյուռքում զինվորագրվում է միջազգային իմպերիալիզմին և մինչև այժմ էլ նվիրվածորեն ծառայում նրան։ Մշտապես լինելով իմպերիա-*

*շիզմի լագերում և ծառայելով նրան, դաշնակցությունը ափյուռքում տարբեր ժամանակներում կապված է եղել տարբեր երկրների հետ, նայած թե ո՛ր շրջանում, ո՛ր պետությունն է ղեկավար դիրք գրավել միջազգային քաղաքականության մեջ։*

*Դաշնակցության ղեկավարները, որոնց խորթ են բանավեճերի սովորական ձևերը և դրանք մշտապես փոխարինում են հայհոյանքներով, մեզ թվում է, այս տարրական ճշմարտությունը չեն աշխատի հերքել։ Վերոհիշյալի մեջ նրանք ջանում են մտցնել մի փոքր լրացում այն մասին, թե իբր 1941—1947 թթ., շուրջ յոթ տարի, դաշնակցությունը դադարեցրել է իր պայքարը սովետական իշխանության դեմ[1]։ Սակայն դա կեղծիք է, պատմական փաստերի խեղաթյուրում։*

*Դաշնակցության կողմից վիճարկվող ժամանակաշրջանի մասին փաստերը պատմում են հետևյալը։ 1942 թ. դեկտեմբերի 15-ին Բեռլինում ստեղծվեց Հայկական ազգային խորհուրդ, որի հիմնական նպատակը Գերմանիայի կողմից գրավված երկրներում հայերի համախմբումն էր Կարմիր բանակի դեմ կռվելու համար։ Այդ Ազգային խորհուրդը, համաձայն նրա հրատարակած ծրագրի, վտարանդի կառավարություն էր։ Ծրագիրը նախ և առաջ ցույց է տալիս, որ Ազգային խորհուրդը ստեղծվել էր Գերմանիայի «Արևելյան գրավյալ շրջանների նախարարության հովանավորությամբ, Բեռլինի մեջ»։*

*Ինչպես տեսնում ենք, այն ժամանակ, երբ խաղաղության և դեմոկրատիայի կողմնակիցները համախմբված պայքարում էին աշխարհի ժողովուրդներին ֆաշիզմի տիրապետությունից ազատագրելու համար, երբ բոլոր ազնիվ ու առաջադեմ մարդիկ թողել էին Գերմանիայի սահմանները կամ անցել ընդհատակ, դաշնակցությունը մնացել էր ֆաշիզմի որջում և գործակցում էր նրա հետ։*

---

1 Տե՛ս Գ. Լազյան, *Հայաստանը և հայ դատը հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ*, Գահիրե, 1957, էջ 346։ «Հուսաբեր», 19 հուլիսի, 1957։

*Դաշնակցություն կուսակցությունը լավ գիտեր, թե ինչ դեր է խաղացել գերմանական իմպերիալիզմը հայ ժողովրդի բնաջնջման գործում։ Սակայն դա չխանգարեց իրեն «հայ ազգի շահերի միակ պաշտպան» համարող այդ կուսակցության ղեկավարներին դաշինքի մեջ մտնել բոլոր նրանց հետ, ովքեր երեկ բնաջնջում էին հայ ժողովրդին։ Ապա ո՞ւր մընաց թղթից և ճառից այն կողմ չանցնող ազգային ոգին։ Այդ ոգին չկա։ Դաշնակցությունը ամեն ինչ մոռացել է։ Նա ապրում և գործում է իր առջև ունենալով միայն մեկ խնդիր. պայքարը սոցիալիզմի դեմ։ Եվ անկախ նրանից, թե ով է սոցիալիզմի թշնամին, դաշնակցությունն առանց երկընտրանքի միանում է նրան։*

*Ի՞նչ էր ուզում դաշնակցությունը գերմանական ֆաշիզմից. «Հայաստանի ազատագրումը բոլշևիկյան լուծեն...»։ Լավ իմանալով, որ հայ ժողովուրդը այլևս չի հանդուրժի դաշնակցության լուծը, Ազգային խորհուրդը իր ծրագրում «Գերմանական Ռայխի քաղաքական պաշտպանությունը Հայաստանի վրա, ամենաապահով երաշխավորությունը կը նկատե»։ Ավելի պարզ, Հայաստանը պետք է վերածվեր գերմանական գաղութի։ Այս միտքը ավելի հստակորեն արտահայտված է ծրագրի Տ-րդ կետում, ուր ասվում է. «Հայ Ազգային Խորհուրդը ամեն բան պիտի ընե, դյուրացնելու համար պաշտպան պետության (Գերմանիայի—Լ. Խ.) աշխատանքը, որ պիտի ընդգրկե երկրի բնական հարստությունները...»։*

*Ինչպես տեսնում ենք, երկրի բնական հարստությունները, ժողովրդական տնտեսությունը անցնում էր ֆաշիստական Գերմանիայի տնօրինության տակ։ Եվ որովհետև հիտլերյան Գերմանիան պահանջում էր համաձայնել և Հայաստանը որպես գաղութ ընդունել, այդ պատճառով էլ դաշնակցությունը պարտավորվում էր, որ «Հայաստանը իր ուժերու չափով պիտի ձգտի Մերձավոր Արևելքի մեջ գերմանական ազդեցությունն ամրապնդելու»։*

Գերմանական ֆաշիզմի համար Բեռլինի Հայոց Ազգային խորհրդի հետ վարվող բանակցությունների հիմնական արդյունքը պետք է լիներ հայերի կազմակերպված պայքարը սովետական իշխանության և Կարմիր բանակի դեմ։ Ուստի և պատահական չէ այն, որ ծրագրի նախավերջին 11-րդ կետում նշվում է, որ իբր թե ելնելով պատմական, քաղաքական, տնտեսական և մշակութային սերտ կապերից, Ազգային խորհուրդը իր բարձր պարտականությունն է համարում հիշյալ կապերի զորացումը և անբեկանելի դարձնելը։ Բայց մնում է անհասկանալի, թե այդ բոլորը ինչ կապ ունեն Սովետական Միության դեմ զինված պայքարի հետ, որի մասին, վերահիշյալ մասից հետո, ավելացվում է. «Այս նպատակին կոչված են ասկե վերջ ալ, այժմ արդեն Գերմանիո կողքին վերջնական հաղթանակին և ազատության համար պայքարող և գործող հայկական օգնական ուժերը»[2]։ Իսկ այդ «օգնական ուժերը» խմբապետ Դրոյի բաշիբոզուկներն էին, որոնք գերմանական բանակի կազմում շարժվում էին դեպի Հայաստան։ Դրոյի հրոսակները ելույթներ էին ունենում օկուպացված հայաբնակ շրջաններում, ամենուրեք հայտարարելով, թե սովետական իշխանության օրերը հաշված են, կոչ անելով միանալ իրենց՝ Կարմիր բանակի դեմ կռվելու համար։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին գերմանական լրտեսական ցանցում ընդգրկված էին նաև դաշնակցականներ։ 1941 թ. գերմանական հետախուզությունը հինգ դաշնակ լրտես ուղարկեց Սիրիա։ Դրանցից երկուսը իտալահպատակ էին, մնացածները՝ հունահպատակ։ 1942 թ. Հալեպում այդ լրտեսները կախաղան բարձրացվեցին[3]։

Դաշնակցության ղեկավարները տարբեր պատճառաբանություններով փորձում են արդարացնել իրենց և նույնիսկ

---

2 «Հայոց ազգային խորհրդի ծրագրի մասին», «Լրաբեր», 28 հունիսի, 1945։

3 «Գաղութարարական դավադիր խմբեր», «Արարատ», 20 մարտի, 1959։

Դրոյին։ Բայց այդ պատճառաբանությունները լուրջ չեն, որպեսզի անհրաժեշտ լիներ դրանք վիճարկել և հերքել։ Բեռլինում ստեղծված Հայոց ազգային խորհրդի ղեկավարները դաշնակցություն կուսակցության շարքային անդամներ չէին, այլ նրա ճանաչված ղեկավարները և նույնիսկ «հերոսները»։ Ազգային խորհրդի նախագահն էր՝ Արտաշես Աբեղյանը, փոխ նախագահը՝ Աբրահամ Գյուլխանդանյանը, անդամները՝ Գարեգին Նժդեհը, Դրո Կանայանը և ուրիշներ։

Ամեն մի կուսակցություն ունի իր քաղաքական գիծը, գաղափարախոսությունն ու կարգապահությունը։ Ով դեմ է գնում կուսակցության քաղաքականությանը, որոշակի պատիժ է ստանում, իսկ իր սխալների վրա պնդելու դեպքում հեռացվում է նրա շարքերից։ Եթե, իրոք, 1941—1947 թթ. դաշնակցության քաղաքական գիծը Սովետական Միության պաշտպանությունն էր կամ նույնիսկ նրա նկատմամբ ունեցած չեզոք դիրքը, ապա ինչո՞ւ Բեռլինի Հայոց ազգային խորհրդի ղեկավարները ոչ միայն դուրս չմնացին կուսակցությունից, այլ, ընդհակառակը, ֆաշիզմի տապալումից հետո էլ հանդիսանում էին նրա ղեկավարները։

Փորձենք վերլուծել 1941—1947 թթ. դաշնակցության վարած քաղաքականության էությունը։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին աշխարհը բաժանվել էր երկու ճակատի՝ մի կողմում ֆաշիստական պետությունների բլոկը, մյուսում՝ դաշնակիցները։ Կռվող երկու կողմերն էլ ունեին իրենց ներքին տարաձայնությունները, բայց պատերազմով կյանքի կոչված խնդիրների առկայության պայմաններում դրանք սուր չէին արտահայտվում։

Դաշնակցությունը, չկարողանալով կանխատեսել, թե ում է պատկանելու վերջնական հաղթանակը, միաժամանակ զինվորագրվում է թե՛ ամերիկյան (այսինքն դաշնակիցներին, առանց Սովետական Միության) և թե՛ գերմանական իմպերիալիզմին։ Դաշնակցություն կուսակցության որոշ անդամներ դաշնակիցների բանակների կազմում մասնակցել են ֆաշիզմի դեմ մղվող մարտերին։

*Սակայն իրականում դաշնակցությունը համակրում էր գերմանական ֆաշիզմին և ամեն կերպ օգնում նրան։ Այդ բանի մասին է խոսում Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին Կահիրեում գումարված դաշնակցության համագումարը, որի որոշումների մեջ ասվում է. «Մոտեցող համաշխարհային նոր պատերազմի ընթացքին կանգնել հիթլերական Գերմանիո կողքին»[4]։ Բեռլինի հայոց Ազգային խորհրդի գործունեությունը ամբողջությամբ ելնում էր դաշնակցության համագումարի որոշումներից։*

*Մինչև Մոսկվայի տակ գերմանական զորքերի ջախջախումը, դաշնակցությունը հույս ուներ, որ եթե անգամ վերջնական հաղթանակը պատկանի դաշնակիցներին, այնուամենայնիվ, մինչ այդ, Գերմանիան կհասցնի ծնկի բերել Սովետական Միությանը։ Պատերազմի առաջին ամիսներին «Հայրենիքը» համոզվածորեն գրում էր. «Բարեբախտաբար խորհրդային կառավարությունը ոչ այնքան զորավոր է, որ կարենա ջախջախել Գերմանիան, ոչ ալ այնքան ներքնապես զորավոր, որ երկարորեն դիմանա Գերմանիայի հարվածներուն»[5]։*

*Այսպիսով, դաշնակցության անհեռատես ղեկավարների կարծիքով իրենք լիովին ապահովագրված էին, որ կողմն էլ հաղթանակեր, դաշնակցությունն իր բաժինը կստանար։ Թուրքական կառավարության պաշտոնական «չեզոքությունը» չէր կարող թյուրիմացության մեջ գցել դաշնակցության ղեկավարությանը, որը շատ լավ գիտեր գերմանա-թուրքական բարեկամական հարաբերությունները։*

*Իրոք որ ավելի «իմաստուն» ու մարգարեական որոշման չէր կարելի հանգել։*

*Հետպատերազմյան շրջանում լույս տեսած դաշնակցական մամուլի և գրականության ուսումնասիրությունը ցույց*

---

4 Հ. Ազատյան, *Դաշնակ ղեկավարները երեկ և այսօր, միջազգային իմպերիալիզմի ծառայության մեջ, «Մեր նշանաբանն է հառաջ», 6 ապրիլի, 1958։*

5 *«Հայրենիք», 18 հուլիսի, 1941։*

է, տալիս, որ այդ կուսակցությունը Սովետական Միության դեմ մղվող պայքարը երբեք չի դադարեցրել։ Դաշնակցության ղեկավարները սուր կերպով քննադատում են Հայրենական մեծ պատերազմի տարիներին արևմտյան պետությունների վարած քաղաքականությունը, երբ նրանք Սովետական Միության հետ միասին մարտնչում էին ֆաշիստական ուժերի դեմ։ Դաշնակցության կողմից սուր է քաշվում այն միտքը, թե երբ Արևմուտքը կուրորեն օգնեց և կործանումից փըրկեց Սովետական Միությանը։ Այդ համարվում է Արևմտյան պետությունների ղեկավարների անհեռատես քաղաքականության հետևանք։

Մենք սկզբից ևեթ վերապահություն էինք ցույց տալիս ՍՍՌՄ-ի հետ զինակցության հարցին, աղաղակում է «Հուսաբեր», ապացուցելու համար, որ եթե Արևմտյան աշխարհը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին չօգներ Սովետական Միությանը, ապա այժմ միջազգային իմպերիալիզմը միայնակ կտնօրիներ աշխարհի գործերը[6]։

Պարզ է, իհարկե, չի խոսվում այն մասին, որ արևմտյան պետությունները ազնվորեն չէին դաշնակցել ֆաշիզմի դեմ կռվելու համար և ամբողջ պատերազմի ընթացքում վարում էին մի քաղաքականություն, որի հետևանքով, ըստ իրենց, Սովետական երկիրը պետք է պատերազմից դուրս գար քայքայված, հյուծված և թուլացած։ Իսկ դա տրամաբանորեն պետք է հանգեցներ այն բանին, որ հետպատերազմյան շրջանում Սովետական Միությունը ի վիճակի չէր լինի միջազգային քաղաքականության մեջ լուրջ դեր խաղալու։ Երկրորդ համաշխարհային պատերազմի և երկրորդ ճակատի պատմությունը այդ են ապացուցում։ Այնպես որ դաշնակցությունը հիմք չունի արևմտյան պետությունների քաղաքականությունը քննադատելու։

Ինչ վերաբերում է դաշնակցությանը, ապա նա, ինչպես «Հայրենիք» թերթում գրում է այդ կուսակցության ղեկա-

6 Ռ. Դարբինյան. Մտքի անցյալ ներկայի լույսի տակ, «Հուսաբեր», 21 մարտի, 1958։

*վարներից մեկը, Ֆաշիստական Գերմանիայի ախտադրած հարձակման առաջին ամիսներին հույս ուներ, որ «... պիտի խորտակվեր կամ գեթ բաժանվեր» Սովետական Միությունը[7]: Սա է եղել դաշնակցության իսկական վերաբերմունքը Սովետական Միության նկատմամբ։*

*Սակայն, չնայած դաշնակցության բացարձակ հակասովետական գործունեությանը, այդ կուսակցության որոշ ղեկավար գործիչներ փորձում են ապացուցել, թե իբր իրենք 1941—1947 թթ. Սովետական Միության դեմ չեն գործել, իսկ Ս. Վրացյանը իր կոլեգաներից ավելի առաջ անցնելով՝ գրում է. «Դաշնակցությունը երբեք չէ ձգտած բանի ուժով տապալել Խորհրդային իշխանությունը, ոչ երբեք չէ մտած հակախորհրդային հեղափոխական որևէ պլանի մեջ, երբեք չէ ծրագրած Հայաստանի մեջ ներքին դժվարություններ առաջ բերել իշխանության համար»[8]:*

*Դեռ ավելին. պարզվում է, որ դաշնակցությունը միշտ էլ հեռու է եղել դավադրական նպատակներից և ոչ միայն հեռու, այլև մշտապես ձգտել է անկարելի դարձնել արտասահմանում սովետական իշխանությունը տապալելու յուրաքանչյուր փորձ։ Ս. Վրացյանը, սակայն, չի բավարարվում այսքանով. առանց քաշվելու նա գրում է, թե դաշնակցությունը գերագույն ճիգեր է թափել, որ Հայաստանում քաղաքացիական բախումներ տեղի չունենան և «հայության բոլոր խավերը խանդով նվիրվեն հայրենիքի շինարարության գործին»[9]:*

*Քաղաքականության մեջ կեղծիքներ շատ են պատահում, բայց այսպիսի բացահայտ կեղծիք հազվադեպ է լինում։ Դաշնակցության կուսակցությունը, որը մշտապես պայքարել է Սովետական Միության և, մասնավորապես, Սովետական Հայաստանի դեմ, այժմ Ս. Վրացյանի գրչի թեթև հարվա-*

---

7 *Նույն տեղում, 8 մարտի, 1958։*

8 *«Միացյալ Հայաստան (դաշնակցությունը երեկ և այսօր)», Հալեպ, 1945, էջ 30։*

9 *Նույն տեղում, էջ 31։*

*ծով, հանդես է գալիս նրա պաշտպանի դերում։ Զգալով, որ իր պատճառաբանությունները համոզիչ չեն, Ս. Վրացյանը հարկադրված որոշ զիջումներ է անում, գրելով, որ դաշնակցությունը, իհարկե, միշտ էլ գաղափարական պայքար է մղել Սովետական Միության դեմ։ Բայց քանի որ Ս. Վրացյանը ձգտել է դաշնակցությունը ներկայացնել Սովետական Հայաստանի պաշտպանի դերում, ապա նա այլևս ոչ մի բանի առջև կանգ չի առնում։ Պատերազմը փոխեց իրադրությունը, գրում է նա, «դաշնակցությունը չէր կարող անտարբեր մնալ հայրենիքի պաշտպանության հարցին հանդեպ և առաջին օրից իսկ վճռեց ու հայտարարեց, որ կը դադարեցնե պայքարը խորհրդային իշխանության դեմ և իր բոլոր ուժերը կը տրամադրե հայրենիքի պաշտպանության գործին»[10]։*

*Այս գեղեցիկ խոսքերը (եթե նրանք ճշմարիտ լինեին) գրվել են 1945 թ.։ Բայց ոչ միայն 1945 թ., ավելի առաջ ևս, դաշնակցական մամուլը սկսել էր կուրծք ծեծել՝ փորձելով ապացուցել իր հավատարմությունը Սովետական Միության նկատմամբ։ 1943 թ. դեկտեմբերի 22-ին «Ազդակը» գրում էր. «Հայաստանի բախտը անքակտելիօրեն կապված է Խորհրդային Ռուսիո և անոր վիճակվելիք ճակատագիրը, ճակատագիրն է նաև մերինը։*

Քանի տարի դեմ եղանք խորհրդային վարչակարգին, 3—4 տարին ի վեր համակիրներն ենք այդ միևնույն վարչակարգին:

*... Բովանդակ հայության հույսը այսօր կեդրոնացած է մեր պզտիկ երկրին և անոր մեծ պաշտպանին վրա. կը բավե Խորհրդային Հայաստանը տեր կանգնի Սփյուռքի հայության, կը բավե որ չուրանա մեզ, դուրսի հայությունն ալ նկատե իր հարազատ զավակները և իր պատկանած մեծ ընտանիքին ուժովն ու հմայքովը, երկրին մեջ նյութական և աշխարհագրական կարելիություններ ստեղծե այս Թափառական բազմությունները ալ ընդունելու համար իր ծոցը—դաշնակցու-*

10 Նույն տեղում։

*թյունը օժանդակողն ու ծառայողն է այդ իշխանության, բոլոր ուժով և բոլոր հոգով»:*

*Ինչպես տեսնում ենք, դաշնակցությունը իրեն հայտարարում է «սովետական հասարակարգի համակիր»: Սփյուռքահայության հայրենադարձության մասին գրելիս դաշնակցությունը, անշուշտ, շատ լավ գիտեր, որ պատերազմի հիմնական ծանրությունը իր վրա վերցրած երկիրը ի վիճակի չէր անթերի ներգաղթ կազմակերպելու: Սակայն մինչև 1946 թ. վերջերը դաշնակցությունը ներգաղթի կազմակերպման դժվարությունների մասին դեռևս չէր խոսում:*

*«Հուսաբերը» ներգաղթի մասին գրում էր. «Խորհրդային Միությունը իր ներկա քաղաքական շահերուն համապատասխան գտավ քաջալերելու հայերու ներգաղթը: Մենք ազգովին պետք է գիտնանք օգտվիլ այդ պատեհությունեն, որ միշտ չի ներկայանար: Զորավոր հայրենիք ունենալը ամենեն առաջ թելլի խնդիր է»[11]: Այս տողերը ցույց են տալիս, որ դաշնակցությունը մինչև 1946 թ. վերջը, պաշտոնապես տակտիկական նկատառումներով, դեռևս «պաշտպանում» էր ներգաղթը, չցանկանալով դիմակազերծ լինել և բացահայտել իր հակասովետական էությունը: Չնայած, իրականում դեմ էր ներգաղթին, և ջանք չէր խնայում այն խանգարելու:*

*Դաշնակցությունը պաշտոնապես մասնակցում էր սփյուռքում կազմակերպվող նոյեմբերի 29-ի տոնակատարություններին և բոլոր հայերի հետ միասին գոչում. «Կեցցե Խորհրդային Հայաստանը»[12]:*

*Դաշնակցությունը, ինչպես միշտ, այնպես էլ պատերազմի տարիներին չհասկացավ, որ հայ և ռուս ժողովուրդների ճակատագրերը կապվել են ոչ թե պատահական գործոններով կամ բախտի կամայականությամբ, այլ երկու ժողովուրդների պատմական զարգացման օրինաչափությունների հետևանքով: Այդ պատճառով էլ դաշնակցությունը գրում էր. «Բախտը ուզեց, որ մեր ճակատագիրը կապվի անոր (Ռուս-*

11 *«Հուսաբեր», 31 դեկտեմբերի, 1946:*

12 *«Ազդակ», 22 դեկտեմբերի, 1943:*

սատանային— Լ. Խ.)։ Չըմբռնելով նախախնամության մեջի հանած բաժինը յաճախ ուզեցինք դեմ երթալ։ Սակայն, ճակատագրին դեմ միջոցները անզոր են։

Հայոց դատը հետապնդել, ուրանալով Հյուսիսի հսկային ներկայությունը, տգիտություն կը նշանակե, և այդ ճամբով կատարված գործերը պարապ վախտի խաղալիք, որոնք կրնան վտանգավոր ըլլալ տարաբախտ գաղութահայության համար»[13]։

Այս տողերը ընթերցողի մոտ ակամայից հարց են առաջացնում, թե ո՞րն է դաշնակցության հերթական «մետամորֆոզի» պատճառը, և այդպիսի դիրքորոշում ընդունելով, ինչ նպատակ էին հետապնդում բյուրոյականները։

Վերոհիշյալ հարցերի շուրջը խորհելու շատ բան կա։ Բյուրոյականները, փաստորեն, ցանկանում են այն միտքը անցկացնել, թե իբր դաշնակցությունը 1920 թ. հետո միայն գաղափարական պայքար է մղել Սովետական Միության դեմ, իսկ 1941 թվականից անգամ գաղափարական պայքարը դադարեցրել է, դառնալով սովետական հասարակարգի համակիր։ Հետաքրքիր է, որ նմանօրինակ կարծիքները դաշնակցական մամուլում տեղ են գտնում միայն 1943—1945 թվականներին։ Բնականաբար, հարց է առաջանում, թե ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ դաշնակցությունը իրեն 1941 թվականից համարելով սովետական վարչաձևի համակիր, այդ մասին գրել է 1943 թ. վերջերին, և ոչ թե Հայրենական մեծ պատերազմի ծագման առաջին օրերին կամ ամիսներին։

Դաշնակցության գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բյուրոյականները, ինչպես միշտ, այնպես էլ 1941—1947 թթ. եղել են սովետական իշխանության կատաղի թշնամին։ Դաշնակցության ղեկավարությունը խորապես համոզված էր, որ սովետական իշխանությունը չի դիմանա գերմանական զորքերի հարվածներին և կուլ կգնա

---

[13] «Ազդարար», 4 օգոստոսի, 1945։

*Երկրորդ համաշխարհային պատերազմի հորձանուտներում Գերմանիայի հաղթանակը դաշնակցության իղձերի իղձն էր։*

*Սակայն, երբ Մոսկվայի տակ գերմանական զորքերի պարտությունը մի փոքր սթափեցրեց, ապա Ստալինգրադյան ճակատամարտում սովետական զինված ուժերի տարած փառավոր հաղթանակը միանգամայն զգաստացրեց դաշնակցությանը։ Իսկ պատահական չէ, որ 1941 թվականից իրենց համարելով սովետական հասարակարգի «համակիր», բյուրոյականները այդ մասին գրում են միայն 1943 թ., այսինքն Ստալինգրադյան հերոսական ճակատամարտից հետո։*

*Սփյուռքահայ առաջավոր գործիչ Ս. Իզմիրլյանը խոսելով պատերազմի ժամանակ դաշնակցության վարած քաղաքականության մասին, գրում է, որ բյուրոյականները միայն «Սթալինկրատի ռուսական հաղթանակէն ետք փոխեցին իրենց քաղաքականությունը, մանավանդ Թեհրանի ռուսական ներկայացուցչին, որ պատահաբար հայ մը եղած է, ըսելով թե դաշնակցությունը կուզե իր պայքարը դադարեցնել Ռուսիո դեմ, և կը փափաքի պատգամավորություն մը ղրկել Ռուսիա։ Մոսկվա կը գրվի և նպաստավոր պատասխան կը ստացվի։ Իրանի կառավարությունը սակայն կը մերժե անցքի համար վիզա տալ»*[14]*։*

*Իսկ այն ժամանակ, երբ Սովետական բանակը հետապնդելով ջախջախված թշնամուն, մտել էր Արևմտյան Եվրոպա՝ ազատագրելու ֆաշիզմի կրնկի տակ հեծող ժողովուրդներին, դաշնակցությունը զգաց, որ այսուհետև իմպերիալիզմը ի վիճակի չի լինելու կամայականորեն տնօրինելու ժողովուրդների բախտը։ «Աշխարհի պատմության մեջ,— գրում էին դաշնակները,— նոր ազդակ մը երևան եկած է, Խորհրդային Միությունը»*[15]*։*

*Ստալինգրադի ճակատամարտից հետո դաշնակցությանը այլևս ուրիշ բան չէր մնում անել, քան դառնալ սովետա-*

---

14 Սարգիս Իզմիրլյան, *Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխության մասին, Պեյրութ, 1962, էջ 59—60։*

15 *«Ազդարար», 4 օգոստոսի, 1945։*

կան վարչաձևի համակիր։ Սովետական զորքերը հետապնդելով նահանջող թշնամուն, հաղթականորեն շարժվում էին դեպի Բեռլին։ Դաշնակցության համար այսպիսի ծանր պայմաններում բուրժուականները միակ ճիշտ քաղաքականությունը համարեցին «սովետական օրիենտացիա» ընդունելը։

Բայց հետագայում, երբ թվում էր, որ մարդկությունը պետք է վայելի իր արյունով ձեռք բերված խաղաղությունը, ջախջախված Գերմանիայի տեղը գրավեց ամերիկյան իմպերիալիզմը՝ հիմք դնելով իմպերիալիստական, հակադեմոկրատական նոր լագերին։ Ամերիկյան իմպերիալիզմը, որի հակասովետական քաղաքականությունը երևան եկավ նույնիսկ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, հատկապես երկրորդ ճակատի բացման հարցում, պատերազմի ավարտից հետո, ստանձնելով միջազգային իմպերիալիզմի ղեկավարի դերը, սուր պայքար սկսեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմի դեմ, որի առաջին բացարձակ կիրառական ակտը հանդիսացավ 1947 թ. մարտին ընդունված Տրումենի դոկտրինան։

Այդ դոկտրինայի ընդունումից հետո այլևս ոչ ոքի մոտ կասկած չէր կարող հարուցել այն, որ ամերիկյան իմպերիալիզմը դառնալով միջազգային իմպերիալիզմի ղեկավար ուժը, դնում է իմպերիալիստական, հակադեմոկրատական նոր լագերի հիմքը։

Եվ պատահական չէ, որ դաշնակցության սովետական «օրիենտացիան» էլ վերջանում է 1947 թ. սկզբներին։ Կարևոր է նաև այն հանգամանքը, որ դաշնակցական մամուլում, պատերազմի ավարտից հետո՝ 1946 թ., Սովետական Միության մասին արդեն չի կարելի հանդիպել այնպիսի հաճոյախոսությունների, որոնք գրվում էին այդ կուսակցության մտավորականների կողմից 1943—1945 թթ.։ Դա բացատրվում է հետևյալով. պատերազմի ավարտից հետո, 1946 թ., բուրժուականները համոզվելով, որ պարտված ֆաշիստական Գերմանիայի տեղը գրավում է իմպերիալիստական ԱՄՆ-ը, սկսում են աստիճանաբար փոխել մամուլում Սովե-

տական Միության նկատմամբ արտահայտվող կարծիքները, սպասելով ավելի որոշակի մոմենտի՝ հրապարակայնորեն իմպերիալիզմի ուժերի հետ միանալու համար:

Դաշնակցությունը 1947 թ. հանելով դիմակը, նորից ընդունում է իր նախկին բացարձակ հակասովետական դիրքավորումը, իսկ որոշ ժամանակ անց՝ մտնում «Փարիզյան բլոկի» մեջ: Ֆրանսիական «Լա Բաստայ» շաբաթաթերթը ֆրանսահայ գաղութին նվիրված իր հոդվածում, նկատի ունենալով քաղաքական պայքարը, գրել է. «Մութ պայքարը նոր ուժ ստացավ Թրումենի ճառեն վերջ: Հայ ազգային ճակատը ցասումով կը պաշտպանե և դաշնակցությունը կը ծափահարե»[16]: Ամերիկահայ կոմունիստ Պ. Սեկյանը 1947 թ. դեկտեմբերի 15-ին Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահին գրած իր նամակում մատնանշում էր, որ դաշնակցությունը ընդունելով Տրումենի դոկտրինան, հրաժարվել է անգամ հայկական հողերի և ամբողջ Հայաստանի պահանջներից և ամենուրեք պաշտոնապես հայտարարում է, որ Թուրքիայի ամբողջականությունը ՍՍՌՄ-ի դեմ մղվող պայքարում, որպես բարիեր օգտագործելու համար, էական անհրաժեշտություն է[17]:

Դաշնակցությունը սփյուռքում միշտ սերտ կապված է եղել միջազգային իմպերիալիզմի հետ, հույս ունենալով նրա միջոցով լուծելու իր առջև դրված խնդիրները: Նրա ղեկավարները 1945 թ. գրում էին, թե հայ ժողովրդի բախտի հետ կապված հարցերում ապավինել Ռուսաստանի ներկայությանը «ավիտություն կը նշանակե», իսկ հիմա նրանք նորից ընթանում են այդ, իրենց իսկ խոսքերով արտահայտված, ավիտության ճանապարհով: Ահա այս հետևության են հանգեցնում փաստերը:

Սփյուռքահայ առաջադիմական ուժերը անողոքաբար քննադատում էին դաշնակցությունը ֆաշիստական Գերմա-

16 «Հայրենիք», 23 հուլիսի, 1947:

17 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ցուց. 38, գ. 64, թ. 112:

նիայի հետ ունեցած կապերի համար։ Առաջադիմականների. հնչակյանների և ռամկավարների թերթերում լույս էին տեսնում մեկը մյուսից ավելի խիստ հոդվածներ՝ ուղղված դաշնակցության դավաճանական քաղաքականության դեմ։ Իսկ պատերազմի ավարտից հետո, երբ հայտնի դարձավ Բեռլինի Հայոց ազգային խորհրդի ծրագիրը և այն հրապարակվեց ամերիկահայ առաջադիմական մամուլում, նրան նվիրվեցին մեծ թվով մարտական հոդվածներ։ Հնչակյանները գրում էին. «Նացիացած Դրոն, իր ղոչաղ տղերքով, երգ ու խաղով մուտք է գործում Հյուսիսային Կովկաս, Հայաստան հասնելը օրերի խնդիր համարելով։ Ուրբաթը շաբաթից շուտ եկավ սակայն։ Նացիները խայտառակ պարտություններ ունեցան, և վերջապես փշրվեցին նացի ֆաշիստ զենքերը ու դաշնակիցների ճակատները հաղթությամբ պսակվեց։ Հիտլերյան բռնավորների փլուզման զուգընթաց կատարվեց նաև մի բուռ հայ արկածախնդիրների հույսերն ու երազները»[18]։

Սակայն, թե՛ Հայրենական մեծ պատերազմում Սովետական Միության տարած հաղթանակից և թե՛ առաջադիմական ուժերի քննադատությունից դաշնակցությունը անհրաժեշտ եզրակացություններ չարեց։ Նա հետևելով իր ավանդական վարքագծին, հետպատերազմյան շրջանում ևս շարունակեց իր հակասովետական քաղաքականությունը, մի տարբերությամբ միայն, որ այժմ դաշնակցությունը, չնայած սովետական երկրի մասին արած իր բազմաթիվ հերյուրանքներին, թե իբր այն գտնվում է կործանման եզրին, այնուամենայնիվ, խորապես համոզված է մեր երկրի բարոյա-քաղաքական ու ռազմական հզորության հարցում։ «Սովետական իշխանության տապալումը,— գրում են դաշնակները,— գրեթե անկարելի է ակնկալել միայն ներքին միջոցներով, առանց դրսի օգնության... Միայն դրսի օգնությամբ կարելի է լրջորեն յուսալ, որ պիտի խորտակվի» Սովետական Միությունը[19]։

18 «Երիտասարդ Հայաստան», 10 հուլիսի, 1956։

19 Ռ. Դարբինյան, Խոհեր հրատապ խնդիրների մասին. «Հայրենիք» (ամսագիր), № 4, 1949, էջ 73—74։

Ինչպես տեսնում ենք, դաշնակցության լիդերները իրենց հույսերը դրել են միջազգային իմպերիալիզմի ուժերի վրա։ Իսկ թե ինչպիսի բախտի են արժանանում իմպերիալիզմի ուժերի օգնությամբ իշխանության ձգտող վտարանդիական ուժերը, այդ մասին պատմությունը տվել է իր փորձերով հարուստ պատասխանը։

Ժամանակակից պայմաններում, միջազգային իմպերիալիզմի և արտասահմանում իրենց խղճուկ գոյությունը քարշ տվող քաղաքական վտարանդիական ուժերի շահերը համընկնում են։ Ամերիկյան իմպերիալիզմը համախմբում է վտարանդիական ուժերին, նրանց սոցիալիզմի համաշխարհային սիստեմի դեմ մղվող պայքարում օգտագործելու համար։

Սովետական Միությունից փախած քաղաքական վտարանդիներին համախմբելու և օգտագործելու նպատակով ԱՄՆ-ում կյանքի կոչվեց մի կազմակերպություն, որը երեք անգամ անունը փոխելուց հետո, այժմ կոչվում է «Բոլշևիզմից ազատագրվելու Ամերիկյան կոմիտե»։ Այդ կազմակերպությունը Մյունխենում գործի է դրել «Ազատագրություն» հակակոմունիստական ռադիո-կայանը, որը Սովետական Միության ժողովուրդների լեզուներով ամեն օր հակասովետական հաղորդումներ է տալիս։ 1951 թ. կազմակերպվեցին նաև «Ամերիկայի ձայնի» հայկական բաժնի հաղորդումները։ Ստեղծվել են բազմաթիվ «գիտական» ինստիտուտներ, ուր վտարանդիական ծախու գրչակների ակտիվ մասնակցությամբ ուսումնասիրություններ են գրվում՝ ծուռ հայելու մեջ ներկայացնելով սոցիալիստական երկրների ներքին և արտաքին քաղաքականությունը։

Սակայն, չնայած «Ամերիկյան կոմիտեի» հարուստ միջոցներին և թափած ջանքերին, այնուամենայնիվ, նրան ոչ մի կերպ չհաջողվեց համախմբել վտարանդիական ուժերը։ Ցարական Ռուսաստանը մասնատող նախկին խոր հակասությունները այժմ նույնպիսի սրությամբ իրենց զգացնել են տալիս արտասահմանի վտարանդիական շրջաններում։ Հիմնական տարաձայնությունը այն է, որ շովինիստական, սպի-

տակգվարդիական կազմակերպությունները ձգտում են վերականգնել իրենց իշխանությունը՝ ցարական Ռուսաստանի սահմաններում, որի մեջ, կարևոր չէ, թե ինչ իրավունքներով, բայց պետք է ամփոփվեն նախկինում Ռուսաստանի կազմի մեջ մտնող բոլոր ազգային փոքրամասնությունները։ Մինչդեռ փոքր ազգերի ազգայնական կուսակցությունների ներկայացուցիչները չեն համաձայնում դրան, նրանք ազգային փոքրամասնությունների համար պահանջում են անկախություն։

Ավելի կոմիկական դրություն, քան վտարանդիական ուժերի քաշքշուկն է, չի կարելի պատկերացնել։ Այն ժամանակ, երբ Սովետական հզոր պետությունն իր ուժերի աննախընթաց ծաղկման շրջանում, գլխավորելով սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, մտել է կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանը, երբ ՍՄԿԿ XXII համագումարում կոմունիզմի կառուցման հոյակապ ծրագիրն է ընդունվել, երբ սովետական տիեզերանավերը սլանում են դեպի Վեներա, Մարս ու Լուսին, երբ ատոմային գերհզոր նավերն ու սուզանավերն են կտրում օվկիանոսները, երբ կապիտալիզմը փակուղու մեջ ընկած իրեն դես ու դեն է գցում, ելք չգտնելով դրությունից՝ մի քանի խղճուկ վտարանդիական կազմակերպություններ, քաղցած գայլի պես, կոկորդ են պատռում վիճելով, թե ո՞վ, ի՞նչ բաժին պետք է ստանա Սովետական Միության պարտությունից հետո։

1952 թ. հոկտեմբերին Ա. Կերենսկու ղեկավարությամբ ԱՄՆ-ում ստեղծվեց «Հակաբոլշևիկյան պայքարի համակարգող կենտրոնը», որին մասնակցում էին Վրացական ժողովրդական միությունը, Վրացական ազգային խորհուրդը, Ադրբեջանական ազգային միավորման կոմիտեն, Հյուսիսային Կովկասյան ազգային միավորումը, Ուկրաինական դաշնակցային-ժողովրդական շարժումը, Ռուսաստանի ազատության պայքարի միությունը, Թաթարա-բաշկիրական կոմիտեն, Կալմիկական կոմիտեն և Թուրքեստանի ազատության պայքարի համաժողովը։ Հայ վտարանդիների կողմից այդ

կազմակերպությանը մասնակցում էր Հայկական ազատամարտիկների միությունը, որը Տուապսեում հրատարակում էր իր պաշտոնական օրգանը՝ «Հայաստան» քաղաքական շաբաթաթերթը:

Դաշնակցությունը և մի քանի այլ ազգերի ազգայնական կուսակցություններ և ազգային խորհուրդներ չմիացան այդ կազմակերպությանը, որովհետև վերջինս պաշտպանում էր «մեկ և անբաժան Ռուսաստանի» իդեան՝ ֆեդերատիվ հիմունքներով:

Սակայն, չնայած դրան, նրանք օժանդակում էին այդ կազմակերպությանը, որովհետև նրա նպատակը սովետական իշխանության տապալումն էր: Դաշնակցությունը, եթե առաջ հովանավորում էր Հայ ազատամարտիկների միությունը, ապա վերջինիս «Հակաբոլշևիկյան պայքարի համակարգող կենտրոնին» միանալուց հետո, սկսեց աղմուկ բարձրացնել, որ իբր այդ կազմակերպությունը կյանքի է կոչվել ռուսական վրանգելական ուժերի կողմից Ամերիկյան կոմիտեին մոլորեցնելու ու այնպիսի տպավորություն ստեղծելու համար, թե ռուսական կայսրության բոլոր ազգային փոքրամասնությունները համախմբված են իրենց շուրջը:

Հետաքրքիրն այն է, որ դաշնակցությունը կտրված լինելով սփյուռքահայ լայն ժողովրդական մասսաներից, միշտ էլ խոսում է նրանց անունից: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Դաշնակցությունը իրեն շատ ակտիվ է պահում. չէ՞ որ հակառուսական պայքարում ԱՄՆ-ը միայն ակտիվներին է վճարում: Զրկվել ԱՄՆ-ի վստահությունից՝ այդ նշանակում է զրկվել բոլոր հույսերի իրականացումից: Իսկ դաշնակցությունը չի ցանկանում զրկվել իր երազներից, չէ՞ որ նա էլ, Ռուսաստանից վտարված մյուս կուսակցությունների նման, մինչև այժմ սրտի տրոփյունով սպասում է այն բախտորոշ ժամին, երբ հնարավորություն կստանա իմպերիալիզմի բանակների հետ մտնել Հայաստան և ստանձնել երկրի ղեկավարությունը: Ահա այդ է պատճառը, որ դաշնակցությունը

ավելի ու ավելի մեծ ջանքեր է թափում հակակոմունիստական պայքարում աչքի ընկնելու համար:

«Հակաբոլշևիկյան պայքարի համակարգող կենտրոնի» ստեղծումից մեկ տարի էլ չանցած, նրա կազմի մեջ մտնող վրացական ազգային խորհուրդը և Ադրբեջանական ազգային միավորման կոմիտեն միացան հայկական, ուկրաինական, բելոռուսական և այլ տարագիր կազմակերպություններին՝ կազմելով «Փարիզյան բլոկը», որի նպատակն էր. արագացնել Սովետական Միության տարալուծումը և այն անդամահատելով ստեղծել անկախ պետություններ՝ ԱՄՆ-ի հովանավորության տակ: «Հակաբոլշևիկյան պայքարի համակարգող կենտրոնը» տեսնելով որ իր երկու անդամները պաշտոնապես միացել են «Փարիզյան բլոկին», հրավիրեց մի ժողով՝ նվիրված այդ հարցի քննարկմանը: Ի վերջո այդ ամբողջ աղմուկը վերջացավ նրանով, որ վերոհիշյալ երկու կազմակերպությունների հետ միասին «Կենտրոնից» դուրս եկան երեք կազմակերպություններ ևս[20]:

Այս փաստը մի ավելորդ անգամ ապացուցում է այն, որ դաշնակցությունը՝ միացած հակասովետական, հակահեղափոխական, իրենց ժողովուրդների կողմից մերժված ամեն տեսակ թափթփուկների հետ, ծառայում է միջազգային իմպերիալիզմին՝ կատարելով նրա հակասովետական առաջադրանքները: Դրա օգտին է խոսում այն, որ 1953 թ. մարտի 31-ին «Փարիզյան բլոկը», Փարիզում ունեցած նիստում, ընդունեց մի հուշագիր՝ ուղղված ԱՄՆ-ի բոլշևիզմի դեմ պայքարող կոմիտեին, որում լիովին բացահայտվում է այդ կազմակերպության ազգայնական, հակակոմունիստական և հակադեմոկրատական ամբողջ էությունը:

Փաստերն այնքան ակնառու են, որ դաշնակցությունը չի համարձակվում ժխտել իր մասնակցությունը «Փարիզյան բլոկին»: Նրա տեսաբաններից Ս. Ադամյանը իր «Հայկական համայնքը» գրքում գրում է. «Ներկայիս դաշնակցության

20 Տե՛ս Եղիա Նաճարյան. Դաշնակ ղեկավարությունը օտարի ծառայության մեջ, Հալեպ, 1958, էջ 129—132:

միակ միջազգային հանձնարարությունները Փարիզի պլոքին ներս են.— միությունը հայ (դաշնակ), ուկրաինացի, բելո-ռուս, վրացի, ադրբեջանցի, թուրքեստանցի, հյուսիսային կովկասցի, իդել-ուրալցի հակահամայնավար ուժերու, որոնք դեմ են իրենց հայրենի հողերու տիրապետության Սովետնե-րու կողմէ»[21]: ԱՄՆ-ում լույս տեսնող դաշնակցական «Հայրե-նիք» թերթը 1954 թ. մարտի 11-ին իր էջերում տեղ տվեց «Փարիզյան բլոկի» մեծ ատնակատարությունը» վերնագրով մի հոդվածի, որում, որպես այդ բլոկի անդամ, հիշատակվում է նաև դաշնակցություն կուսակցությունը: Եվ, վերջապես, պատահական չէ այն, որ 1956 թ. ապրիլի 14-ին, Մյունխե-նում, Դրո Կանայանի մահվան կապակցությամբ, «Փարիզյան բլոկի» նախաձեռնությամբ կազմակերպվեց սգահանդես, որ-տեղ այդ կազմակերպության մեջ մտնող վտարանդիական ու-ժերը և «Ամերիկյան կոմիտեի» ներկայացուցիչները հանդես եկան ցավակցական խոսքերով՝ մինչև երկինք բարձրացնե-լով Դրոյի կատարած «ծառայությունները»[22]:

Այնպես որ, դաշնակցության՝ «Փարիզյան բլոկի» ան-դամ լինելու հարցը կասկածի ենթակա չէ: Առավել հետա-քրքիրն այն է, որ վտարանդիական ուժերի մեջ իմպերիա-լիզմի կողմից ամենավստահելին համարվում է դաշնակցու-թյունը: Դաշնակցության այժմյան ակտիվ գործիչներից Բ. Նավասարդյանը (դաշնակցության վետերան Վ. Նավասարդ-յանի որդին) գրում է. «Ամերիկացիները համոզված են, որ ամենալուրջ և վստահելի տարրը մենք ենք» «Փարիզյան բլո-կի» անդամների մեջ[23]: Նույն Բ. Նավասարդյանը, 1956 թ. Կահիրեում տեղի ունեցած դաշնակցության պատգամավո-րական ժողովում ասաց. «Դաշնակցությունը միակ կուսակ-ցությունն է, որ կը վայելէ Ամերիկայի Արտաքին նախարա-

---

21 Նույն տեղում, էջ 132:

22 «Արարատ», 7 հունիսի, 1956:

23 «Լրաբեր», 29 մայիսի, 1958:

րին վստահությունը»[24]: Թե «Փարիզյան բլոկի» անդամների մեջ դաշնակցությունը ինչպիսի դիրքեր ունի ցույց է տալիս Բ. Նավասարդյանի հետևյալ նամակը. «Մեր աշխատանքը անցյալին,—ասվում է այդ նամակում,— ձգտեցավ միշտ մեկ հիմնական նպատակի: Գործը ապահովել ու կազմակերպել այնպես, որ անմիջականորեն դաշնակցության վերին ղեկավարությամբ ու հսկողությամբ, և Հայրենիք հաստատության մեջ, լույս տեսնեն Փարիզյան պլոքի օրկանը»[25]:

Ամերիկյան իմպերիալիզմի վստահությունը, բնականաբար, դաշնակցությունը ձեռք է բերել իր հավատարիմ ծառայության շնորհիվ:

«Ամերիկյան կոմիտեն», չնայած առատորեն վարձատրում է այս պառակտված ուժերին, այնուամենայնիվ, խիստ դժգոհ է առեղծված վիճակից: Նա բազմաթիվ անգամ փորձ կատարեց միավորելու այդ ուժերը, սակայն դրանք վերջացան անհաջողությամբ: «Ամերիկյան կոմիտեն» այդ ուժերի համախմբման և սոցիալիզմի դեմ պայքարելու մասին մի համաձայնագիր կազմեց՝ ուղարկելով պառակտված երկու կողմերին: Սակայն այդ էլ չօգնեց: Չօգնեց նույնիսկ այն սպառնալիքը, որ այդ կազմակերպությունները կզրկվեն ֆինանսավորումից, եթե շարունակեն իրենց պառակտողական քաղաքականությունը: Ամերիկյան իմպերիալիզմը մինչև այժմ էլ անօգուտ փորձեր է կատարում վտարանդիական ուժերին համախմբելու համար: Սակայն, իհարկե, վտարանդիական ուժերի պառակտվածությունը այնքան էլ չի խանգարում ընդհանուր գործին: Չէ՞ որ այդ բոլոր կազմակերպությունները էլ առանձին-առանձին կամ փոքր բլոկներով, կապված են իմպերիալիզմին և ծառայում են նրան:

Այն հանգամանքը, որ աշխարհը բաժանված է երկու լագերի և որ դաշնակցությունը ընթանում է իմպերիալիզմի

---

24 «Անկրադարձներու խմբակ մը մեր հայ եղբայրներուն անունը կը շահագործե ու կը վտանգե անոնց գոյությունը, անձնական շահերե տարված», «Արարատ», 31 մայիսի, 1957:

25 «Բեղլար Նավասարդյանի նամակը», «Լրաբեր», 29 մայիսի, 1958:

հետ, ոչ միայն չի հերքվում վերջինիս կողմից, այլ ընդհակառակը, փորձ է արվում հիմնավորել որպես պատմության օրենքներով թելադրված օբյեկտիվ անհրաժեշտություն: Ինչ որ մի ժամանակ սոցիալիզմի դիմակով շղարշվող և նույնիսկ իրեն բանվոր դասակարգի շահերի արտահայտիչ համարող դաշնակցությունն այսօր առանց վարանելու գովաբանում է իմպերիալիզմը, որպես լավագույն հասարակարգ, և քննադատում սոցիալիզմը:

Դաշնակցության լիդերներն իրենց պրակտիկ գործունեության ընթացքում միշտ էլ ելել են երկու լագերների գոյության փաստից: «Եվ այսօր պարզ է ու աներկբայելի է, որ ոչ թե մեկ այլ երկու հիմնապես տարբեր աշխարհներ գոյություն ունին երկրագնդի վրա»[26],— գրում է դաշնակցության լիդերներից՝ Ռ. Դարբինյանը: Ինչ որ կապված է իմպերիալիզմի անվան ու գործունեության հետ, սրբության աստիճանի հասնող օրենք է դաշնակցության համար: Այդ կուսակցության մամուլի օրգաններում և լիդերների ճառերում գովաբանվում է իմպերիալիզմի կողմից ստեղծված ռազմական բլոկների և պլանների ամբողջ սիստեմը՝ Մարշալի պլանը, Հյուսիս-Ատլանտյան պակտը, Բաղդադի պակտը, Տրումենի դոկտրինան, ՍԵՆՏՕ-ն, ՍԵԱՏՕ-ն և այլն, և այլն: Նույնիսկ Կորեայի ու Վիետնամի պատերազմի, անգամ հունգարական դեպքերի ստեղծման հարցերում դաշնակցությունը մշտապես մեղադրում է Սովետական Միությանը:

Իսկ իմպերիալի՞զմը: Արդյոք որևէ մեղք ու՞նի նա: Ոչ, նա մեղք չունի,— պատասխանում է դաշնակցությունը: Իմպերիալիզմը, ըստ նրա, միայն պաշտպանվում է և պաշտպանում «ազատ» ժողովուրդներին կոմունիստական վտանգից:

Թերևս դրանով է բացատրվում այն, որ դաշնակցությունը գովաբանում է ոչ միայն իմպերիալիզմի ականավոր պետական գործիչներին, այլև, ընդհանրապես, հակակոմունիզմի

---

26 «Միջազգային կացությունը (ընդհանուր ակնարկ մը, Ս. Զ.)», «Հայրենիք», № 1, 1948, էջ 101:

*բոլոր չատագովներին: Դաշնակցության մամուլը դրվատական հոդվածներ է նվիրում ոչ միայն Չերչիլին, Դալեսին, Էյզենհաուերին և շատ ուրիշ հայտնի գործիչների, այլև Միլովան Ջիլասին ու նրա նմաններին: Գովաբանելով իմպերիալիզմի պետական գործիչների քաղաքականությունը և մինչև երկինք բարձրացնելով այն, դաշնակցական մամուլը միաժամանակ պրոպագանդում է Ջիլասի հակակոմունիստական աշխատությունները: Դաշնակցական մամուլում լույս են տեսնում երկարաշունչ հոդվածներ՝ նվիրված Ջիլասի աշխատություններին, որոնց մեծ մասի հեղինակը ոչ այլ ոք է, եթե ոչ դաշնակցության «մեծն տեսաբան» պարոն Դարբինյանը: Այդ դեռ քիչ է. դաշնակցականները արտատպում են Ջիլասի հոդվածները և տարածում աշխատությունները: 1957 թ. հոկտեմբերի 11-ին Բեգլար Նավասարդյանը գրում էր իր բարեկամներին. «Դարձյալ առանձին ծրարով և տակավին քանի մը օրեն, քանի որ անգտանելի դարձած է գիրքը, կը ղրկենք երկու օրինակ Ջիլասի «Նոր դասակարգը» հատորեն»[27]:*

*Այս քաղաքականությունը ոչ նոր է, ոչ էլ ինքնատիպ: Դաշնակցական լիդերները տարիներ շարունակ դրվատել են հակակոմունիզմի բոլոր ուժերին և պրոպագանդել նրանց «տեսությունները»: Մի՞թե կարելի է մտքի այդպիսի քարացածությամբ տարիներ շարունակ կրկնել իմպերիալիզմի տեսաբանների վաղուց արդեն հայտնի և շատ հնացած երգերը:* Ուշագրավ է այն, որ դաշնակցության ղեկավարները աշակերտի նման սերտելով և ամեն հնարավոր դեպքում կրկնելով իմպերիալիզմի տեսաբանների կյանքի կողմից վաղուց հերքված տեսությունները, ամենափոքր ակնարկ անգամ չեն անում. որ իրենք ոչ թե իրենց սեփական, այլ ուրիշի մտքերն են պրոպագանդում:

*Այդ տեսակետից հատկապես աչքի են ընկնում Ռ. Դարբինյանի փքուն հոդվածները՝ միջազգային զարգացման ար-*

---

27 «Հրաբուխ», 25 մայիսի, 1958:

*դի փուլի հրատապ խնդիրների մասին, հոդվածներ, որոնց մեջ ոչ մի սեփական միտք չկա։*

*Դաշնակցությունը, սկսած իր ծագման օրից, միշտ էլ թույլ է եղել տեսական հարցերում։ Նրա ծրագրերը էկլեկտիցիզմի և տեսական անանկության փայլուն նմուշներ են։ Իր ամբողջ պատմության ընթացքում դաշնակցությունը երբեք ոչ մի ամբողջական և տեսականորեն հիմնավորված ծրագիր չի ունեցել։ Զարմանալի չէ, որ ժամանակակից դաշնակցությունը տառապում է նույն ցավով, ինչ տասնամյակներ առաջ, միայն ավելի խրոնիկ և խիստ ձևով։*

*Սակայն դաշնակցության լիդերները շատ էլ չեն մտահոգված կուռ և ամբողջական աշխարհայացք ստեղծելու խնդրով։ Այժմ Սփյուռքում գնահատվում են միայն այն հետադիմական կուսակցությունները, որոնք անվերապահորեն ընդունում են իմպերիալիզմը և ծառայում նրան։*

*Իսկ ի՞նչ աշխարհայացք կամ կուռ ու ամբողջական ծրագիր կարող է ստեղծել այն կուսակցությունը, որը մի կողմ թողած իր ազգի առաջ կանգնած հիմնական խնդիրները՝ իր գոյության նպատակը դարձրել է պայքարը սովետական իշխանության դեմ և իմպերիալիզմի գովերգումը։*

*Դուրս շպրտվելով Հայաստանից, դաշնակցության լիդերներն իրենց կորցրած դիրքերի վերադարձման համար սերտորեն կապվել են միջազգային իմպերիալիզմի հետ։ Սփյուռքի հայ և օտարազգի առաջադիմական մամուլը, առանց կասկածի տեղ թողնելու, փաստական նյութերի հիման վրա ցույց է տվել, որ դաշնակցությունը 1920 թ. ի վեր կապված է միջազգային իմպերիալիզմի լրտեսական գործակալությունների հետ։*

*Դամասկոսի «Էլ-Սարխա» և «Էլ-Թիրպիե» արաբական թերթերը 1957 թ. մայիս ամսին լույս ընծայեցին հոդվածներ, որոնք անողոքաբար մերկացնում էին դաշնակցության քաղաքականությունը, վեր հանում նրա լրտեսական գործունեությունը, որպեսզի ոչ միայն հայերը, այլև արաբները,*

զգույշ լինեն դաշնակներից և միացյալ ուժերով պայքարեն նրանց դեմ։

Այդ հոդվածներում նշվում է, որ դաշնակցությունը վտարվելով Հայաստանից, սփյուռքում սկզբնական շրջանում կապված է եղել անգլիական և ֆրանսիական հետախուզություններին, իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ գերմանական գաղտնի գործակալություններին։ Պատերազմի ավարտից հետո, երբ միջազգային արենայում համաշխարհային ժանդարմի դերը ստանձնեց ամերիկյան իմպերիալիզմը, դաշնակցությունը շտապեց անմիջապես իրեն նետելու նրա գիրկը, միայն և միայն դրա մեջ տեսնելով իր նվիրական իղձերի կատարման գրավականը։ «Իսկ 1947 են, սկսյալ,— գրում են վերոհիշյալ արաբական թերթերը,— դաշնակները նոր դեր մը ստանձնեցին, այդ ամերիկյան լրտեսական գործակալությունն էր։ Դաշնակ-ամերիկյան գործակցության հիմնաքարը դրվեցավ 10 տարիներ առաջ, Եգիպտոսի մեջ կայացած դաշնակ պատգամավորական ժողովին ընթացքին, որ ցարդ կայացած ամենավտանգավոր գործակցությունն է և որ կը վտանգե Միջին ու Մերձավոր Արևելքներու ժողովուրդներու խաղաղությունն ու ապահովությունը։ Այս գործակալության միջնորդը դաշնակ շեֆերեն Դրո Կանայանն էր...»[28]։ Այնուհետև այդ գործակցությանը ակտիվ մասնակցեցին Վ. Նավասարդյանը, Մ. Տեր-Գալուստյանը, Գ. Լաղյանը և շատ ուրիշներ։

Ամերիկացիները ստանձնեցին դաշնակցականների, ինչպես իրենց հետախույզների, դաստիարակության գործը, որին լծվեց Բեյրութում ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակից Ենովք Լաշինյանը, իսկ ահաբեկչական աշխատանքները կազմակերպում էր նույն դեսպանատան մի այլ աշխատակից՝ Բուդվելը (ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտի բարեկամներից)[29]։

---

[28] Արաբական թերթերում հրապարակված հոդվածները արտատպված են «Արարատի» 1957 թ. մայիսի 31-ի համարում, որը և մենք օգտագործում ենք։

[29] Նույն տեղում։

*Բայց Մերձավոր արևելքում կատարվող աշխատանքները չէին բավարարում ո՛չ ամերիկացիներին և ո՛չ էլ դաշնակցականներին։ Դաշնակցության կողմից մեծ թվով երիտասարդներ, տարբեր պատրվակներով, խիստ գաղտնի, ուղարկվում էին ԱՄՆ՝ հետախուզական դասընթացներում սովորելու։ Դրանցից էին՝ Լ. Պերպերյանը, Ք. Բաղրատունին, Պ. Չերքեզյանը, Տեր Պողոսյանը և ուրիշներ[30]։ Սույն փաստը ապացուցվում է նաև դաշնակ Խ. Թութունճյանի կողմից[31]։ ԱՄՆ-ի լրտեսական ցանցի Մերձավոր արևելքում կազմակերպած հավաքույթներին սիստեմատիկաբար մասնակցում էին Մ. Տեր-Գալուստյանը, Կարապետյանը, Տեր-Մելքոնյանը և ուրիշներ։*

*Սիրիայում լրտեսական ցանցի հայտնաբերումը, որի մեջ ընդգրկված էին 37 դաշնակներ, կուսակցության ղեկավարներից Մ. Տեր-Գալուստյանի գլխավորությամբ, լիովին ապացուցեց, որ դաշնակցություն կուսակցությունը վերածվել է լրտեսական կազմակերպության։*

*Սովետական Միության հարավային սահմաններում հետախուզական աշխատանքներ ծավալելու գործում ԱՄՆ-ի հետախուզական օրգանները մեծ հույսեր են դնում դաշնակցության և վրացական մենշևիկների վրա։ Այդ է հավաստում վրացական մենշևիկ վտարանդի Շ. Մագլակելիձեի խոստովանությունը։ Շ. Մագլակելիձեն Վրաստանում մենշևիկների տիրապետության շրջանում գլխավոր նահանգապետ էր Թբիլիսիում ու Աբխազիայում։ Արտասահմանում նա ղեկավարում էր վրացական վտարանդիների ֆաշիստական կազմակերպությունները։ Պատերազմի ժամանակ գործակցելով հիտլերյան հրամանատարության հետ, նա պարգևատրվում է, բարձրագույն շքանշաններով և ստանում գեներալի զինվորական կոչում։ Ծերության տարիներին զղջալով իր արածները, Շ. Մագլակելիձեն թույլտվություն է ստանում վերա-*

30 *Նույն տեղում։*

31 Խոսրով Թութունճյան, *Բյուրոյական սնանկությունը և իրավ Դաշնակցության ուղին, էջ 76—77։*

դառնալ հայրենիք, ուր նա հարկ համարեց հանդես գալ մի նամակով, որում մերկացվում էր վրաց և հայ վտարանդիների հակաազգային գործունեությունը։

Նա գրում է, որ 1949 թ. հուլիսին Իտալիայում ԱՄՆ-ի զինվորական կցորդի աշխատակիցներ՝ գնդապետ Բանշեն և մայոր Ցարրիսը հորդորում են իրեն մտնել հետախուզական ցանցի մեջ, ասելով. «Զինված ներխուժումը, առանց հետախուզական նախապատրաստության, դրոշ չարժե։ Մենք ուզում ենք կազմակերպել խոշոր հետախուզական ծառայություն ամբողջ սովետա-թուրքական և սովետա-իրանական սահմանի երկարությամբ։ Այդ խնդիրն իրականացնելու համար մեզ հարկավոր են, գլխավորապես, վրացիներ և հայեր։ Մեզ անհրաժեշտ է հավաքել հետախուզական լիակատար ինֆորմացիա Անդրկովկասի մասին և այնտեղ կազմակերպել սաբոտաժ ու դիվերսիաներ...»[32]։

Վրացական մենշևիկները և դաշնակցությունը սիրով հանձն առան կատարելու ԱՄՆ-ի հետախուզական օրգանների առաջադրանքները։ Շ. Մադլակելիձեն պատմում է այն մասին, որ արդեն 1952 թ. նոյեմբերին Մյունխենի «Ռեգինա» հյուրանոցում Վ. Նավասարդյանի և Դ. Կանայանի հետ ունեցած մտերմական զրույցների ժամանակ նրանք չէին ծածկում, որ «իրենք ամերիկյան հետախուզությունից խոշոր գումարներ են ստանում Իրանում, Թուրքիայում և Մերձավոր ու Միջին արևելքի մյուս երկրներում լրտեսական ու տեռորիստական խմբեր կազմակերպելու համար, նրանց Սովետական Միություն ուղարկելու նպատակով»[33]։ Երբ Շ. Մադլակելիձեն կասկած է հայտնում, որ վերոհիշյալ պետությունները կարող են թույլ չտալ իրենց տերիտորիաներում հետախուզական, տեռորիստական խմբեր կազմակերպել, Դրոն պատասխանում է. «Ամերիկացիները այդպիսի գործերի համար փող չեն խնայում, իսկ փողով կարելի է գնել ամեն

32 «Սովետական Հայաստան», 11 դեկտեմբերի, 1954։
33 Նույն տեղում։

ինչ, այդ թվում նաև կառավարությունը»[34]: Դրան հիմքեր ունեին այդպիսի հայտարարություններ անելու, որովհետև, ինչպես պատմում է վաճառականների շրջանում ոչ անհայտ Մազմանը, դեռևս «Փարիզի բլոկի» ստեղծումից առաջ, ամերիկացիների առաջադրանքով նա Բեյրութում կազմակերպել էր դաշնակների համար հետախուզական կենտրոն, որի ղեկավարությունը հանձնարարվել էր Լիբանանում ԱՄՆ-ի դիվանագիտական աշխատող Արչիբալդ Ռուզվելտին[35]:

Ահա թե ուր է հասել դաշնակցությունը, մի կուսակցություն, որը փաստորեն հայ ժողովրդի շահերը վաճառում է օտար պետություններին: Դաշնակցությունը այժմ վերածվել է միջազգային իմպերիալիզմի գործակալության, նրա շարքերում թագավորում են դավն ու խաբեությունը, կաշառքն ու սպանությունը: Դաշնակցությունը մատնում է հայ առաջադիմական ուժերին, դավանում Մակարտիին և մակարտիզմը, չծածկելով, որ ինքը վարում է մակարտիական քաղաքականություն[36]:

Թե ի՞նչպիսի բարքեր են տիրում դաշնակցության ղեկավար շրջաններում և ո՞վքեր են այդ կուսակցության լիդերները, հստակորեն երևում է Ս. Վրացյանի և Վ. Ահարոնյանի՝ 1951 թ. ամառը Դրոյին գրված նամակներից:

ԱՄՆ-ի դաշնակցության մասնաճյուղի ղեկավարները ավելի մոտ դառնալով ամերիկյան իմպերիալիզմին և վայելելով վերջինիս վստահությունն ու նյութական աջակցությունը, Ռ. Դարբինյանի նախաձեռնությամբ և գլխավորությամբ, պայքար են սկսել կուսակցության ղեկավարությունը իրենց ձեռքը վերցնելու համար:

Քողազերծ անելով ԱՄՆ-ի դաշնակ ղեկավարների բարքերը, Վ. Ահարոնյանը (վիպասանի որդին) գրում է, որ կեղծիքը, դավը, կաշառքը, գողությունը և սպառնալիքը նրանց

---

34 Նույն տեղում:

35 Նույն տեղում:

36 Տե՛ս Ռ. Դարբինյան, *Մաքքարթի և մաքքարթիզմի շուրջը*, «Հայրենիք», 7 ապրիլի, 1954:

հիմնական գործելակերպն է[37]։ ԱՄՆ-ի դաշնակցության մի շարք ղեկավարներին նա տալիս է հետևյալ բնութագիրը.

«Այսօրվա Կ. Կ.-ի քարտուղարը, Տիրան Փաշալյան անունով ողորմելի մի սմսեղուկ...» է[38]։

Ժ. Միսաքյանը նշանավոր դիվանագետ է «եթե որևէ կայսրության հետ անսահման հիմարությունն էլ դիվանագետների ամենաէական հատկություններից մեկը եղած լիներ, այն ժամանակ դուք ավելի լավ ընտրություն չէիք կարող անել, քան Ժ. Միսաքյանը»։

«Սրանց դրոշակակիրը և «անմեղ նահատակն» էր մինչև կոկորդը բարոյական տիղմի մեջ խրված, կուսակցական գանձի հաշիվները տալուց խուսափած Գ. Մխիթարյանը («Հայրենիք»-ի խմբագիրը—Լ. Խ.), որի շահատակությունների մասին արդեն Բոկաշիոյի մի նոր հատոր կազմելու չափ նյութ էր հավաքված Ամերիկայի Կ. Կ.-ի պատգամավորականների արձանագրությունների մեջ»[39]։

Այս խմբի մեջ են մտնում նաև Կոպեռնիկ Թանդրճյանը (ամերիկահայ դաշնակցական ղեկավար, դաշնակցության բյուրոյի անդամ), Հովհաննես Հովհաննիսյանը (ամերիկահայ դաշնակցական ղեկավար) և ուրիշներ։

Սակայն, Ռ. Դարբինյանը համախոհներ ուներ ոչ միայն ԱՄՆ-ում։ Վ. Ահարոնյանը գրում է. «Ֆրանսիայում այստեղի շարժումի հետ կապված են թվում Շ. Մ. և նախկին զինվորական նախարարը։ Լիբանանում Կ. Ս. և Արամ Սահակյանը, որ այս վերջին տարին և, մանավանդ, մեր Պատգամավորականի նախօրյակին և Պատգամավորականի ընթացքում ցույց տվեց իր զարշելի դեմքը, իր ամբողջ այլանդակությամբ։ Մենք այստեղ բաժանվեցինք այդ չարչի, ստախոս ու նենգամիտ գործիչից մերժելով ներկա լինել իր նմանների կողմից իրեն ի պատիվ տրված ճաշկերույթին և ձեռք չմեկնելով

37 Վերոհիշյալ նամակները տե՛ս «Լրաբեր», 24 մայիսի, 1958 և «Զարթոնք», 18 փետրվարի, 1960։

38 Նույն տեղում։

39 Նույն տեղում։

իրեն մեկնումի ժամանակ. Նենգ ու դավադիր թշվառականն մեկն է նա»[40]։

Դաշնակցության համագումարի պատգամավորների և Կ. Կ.-ի անդամների ընտրությունները կատարվում էին կաշառքների և խարդախությունների միջոցով։ Այդ մասին Վ. Ահարոնյանը գրում է. կաշառքների և այլ ծախսերի համար դրամ վճարողն էր Կալիֆորնիայի մի բիրդան աղա, իսկ «մտավոր» և «բարոյական» ուժի արտահայտիչներն էին «հացկատակ» Մ. Համբարյանը, «որի խելքին շուկայում երկու սենթ տվող չի լինի» և «քամելիոն» Կ. Թանտրճյանը, որոնք դրամով գնված մասերի և ոչ թե խելքի, խղճի ու մեր կանոնագրի վրա կազմեցին ու պաշտպանեցին դատավճիռներ ու բանաձևեր, որոնց նմանը չի եղել երբեք[41]։

Այդ խմբի ղեկավարն է, սովետական իշխանության կատաղի թշնամի Ռ. Դարբինյանը (Ա. Չիլինգարյան), որի մասին ամփոփելով իր բնութագիրը, Վ. Ահարոնյանը գրում է. «Ի՞նչ է փնտրում մի ողբերգական թյուրիմացությամբ Հ. Յ. Դաշնակցության շարքերը մտած Ռ. Դարբինյանը, որ հոգեկան ոչ մի կապ ունի ոչ Հ. Յ. Դ-ի և ոչ էլ հայ ժողովրդի հետ»[42]։

Համաձայն Ս. Վրացյանի նամակի, այդ խմբի նպատակն է «օգտագործելով խարդախության, զրպարտության և կաշառքի բոլոր միջոցները», իր ձեռքը գցել սկզբից Ա.Մ.Ն-ի, իսկ հետագայում ամբողջ դաշնակցության ղեկավարությունը։ Իսկ Ռ. Դարբինյանի անձնական շահադիտական նպատակն է՝ թեթև աշխատանքով իր վաստակը ապահովել և մինչև մահ «Հայրենիքների» գլխին բազմել[43]։

Ուշագրավ է նաև այն, որ նույնիսկ գողությունը դաշնակցության ղեկավար շրջաններում արտասովոր երևույթ չէ։ Օրինակ, դաշնակցության ոչ անհայտ գործիչ Գրիգոր Մխի-

40 Նույն տեղում։

41 Նույն տեղում։

42 Նույն տեղում։

43 Նույն տեղում։

*թարյանը գողացել է ԱՄՆ-ից դաշնակցության Իրանի մասնաճյուղի պետքերի համար ուղարկված 7500 դոլարը։ Քալանթարյան Լևոնը «Ալիք»-ի խմբագիր եղած ժամանակ յուրացրել է 25000 թուման[44]։ Կարելի է այսպիսի բազմաթիվ փաստեր բերել։*

*Ս. Վրացյանը խիստ անհանգստացած է իրերի նման վիճակով։ Անհանգստացած են և նրա կողմնակիցները։ Չէ՞ որ լուրջ վտանգ կա զրկվելու կուսակցության ղեկավարությունից և, հետևաբար, դրամական միջոցներից։ Ինչ վերաբերվում է դաշնակցության քաղաքականության խնդրին, ինքը՝ Ս. Վրացյանը իր կողմնակիցներով հանդերձ, շատ լավ գիտե, որ այդ հարցում Ռ. Դարբինյանի և իրենց միջև էական տարաձայնություններ չկան։ Ամբողջ պայքարը գնում է կուսակցության ղեկավարությունը ձեռք գցելու և նրա դրամական միջոցները տնօրինելու իրավունքը ստանալու համար։ Դա այնքան պարզ է ու անվիճելի, որ անգամ Վ. Ահարոնյանը չի ծածկում և աներկիմաստորեն գրում է այդ մասին։*

*Ահա թե ինչու Ս. Վրացյանը խիստ մտահոգված դիմում էր Դրոյին և Վ. Նավասարդյանին՝ խորհուրդ տալով չհեռանալ կուսակցության ղեկավարությունից, քանի որ կամավոր կամ ստիպողական հեռացումը կնշանակի խաչ քաշել կուսակցության վրա։ «Աստուած չընե,— գրում է նա,— ղեկավարությունը անցնի այնպիսի սրիկաներու ձեռքը, ինչպիսիք են Սարաշեանը, Գուրգենը, Կոպեանիկը և նման սրիկաներ, այդ կը նշանակե վերջ ամեն բանի»[45]։*

*Այսօր կատարվել է այն, ինչից այնքան վախենում էր Ս. Վրացյանը։ 1956 թ. Վ. Նավասարդյանի և Դ. Կանայանի մահից հետո, աստիճանաբար ուժեղացնելով դիրքերը, Ռ. Դարբինյանի կամ ինչպես Վրացյանն է անվանում սրի-*

---

*44 «Հայրենասեր դաշնակցական մը կմերկացնե բյուրոյական վարձկան գործակալներու կողմե գործված ոճիրներն ու դավադրությունները», «Երիտասարդ Հայաստան», 24 օգոստոսի, 1956։*

*45 Ս. Վրացյանի նամակը Դրոյին, «Զարթոնք», 18 փետրվարի, 1960։*

*կաների խումբը փաստորեն իր ձեռքն է վերցրել դաշնակցության ԱՄՆ-ի մասնաճյուղի ղեկավարությունը։*

*Վ. Ահարոնյանը հայհոյելով Ռ. Դարբինյանի խմբին, ինքը դաշնակցության մեջ ստեղծեց գաղտնի խումբ, որի գոյությունը հետագայում հայտնի դարձավ բյուրոյականներին։ Ստեղծվեց կուսակցական դատարան՝ Վ. Ահարոնյանի գաղտնի խմբի հարցը քննելու և համապատասխան պատիժ տալու համար։ Սակայն Վ. Ահարոնյանը չներկայացավ կուսակցական դատարանին։ Այնուամենայնիվ, Վ. Ահարոնյանի բացակայության պայմաններում կուսակցական դատարանը դատապարտեց վերջինիս վարքագիծը։*

*Բ. Նավասարդյանը այդ կապակցությամբ գրում է. «Դատավճիռը կը շեշտէ, որ Վ. Ա.-ի պարագան ծանր բնույթ ստացավ ոչ միայն այս գաղտնի կազմակերպության, դատարանի չներկայանալու պատճառներով, այլև այն պատճառով, որ նկարագրի գրեթե անօրակելի անբարոյականություն մը երևան եկավ, որուն մանրամասները, հասկանալի պատճառներով չէինք կրնար անկրճատ կերպով ամեն տեղ թուղթին հանձնել»[46]։*

*Ինչպես տեսնում ենք, դաշնակցության լիդերները իրենց բարոյական նկարագրով մեկը մյուսին չեն զիջում։*

*Առաջադիմական մամուլը հրապարակելով այդ նամակները մեկ անգամ ևս ցույց տվեց սփյուռքահայ մասսաներին, թե բարոյական անկման ինչ աստիճանի վրա է գտնվում դաշնակցության կուսակցությունը։ «... Դաշնակցության ներքին կյանքը անդարմանելիորեն նեխած է, ապականացած և անբարոյականացած»[47],— գրում է «Լրաբեր»-ը, արտահայտելով սփյուռքահայ առաջադիմական ուժերի կարծիքը։*

*Այսքանից հետո, մի՞թե կարող է զարմանք հարուցել այն, որ դաշնակցությունը դարձել է միջազգային իմպերիալիզմի գործակալ։*

---

46 «Լրաբեր», 29 մայիսի, 1958։

47 Նույն տեղում։

## 2. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՂԻ ԹՇՆԱՄԻՆ

Դաշնակցությունը, չունենալով կուռ ու ամբողջական աշխարհայացք, իր գոյության ամբողջ ժամանակաշրջանում, հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքների ճնշման տակ, հարկադրված է եղել մի ծայրահեղությունից մյուսն ընկնել, իր ծրագրերի մեջ մտցնել կյանքի զարգացմանը հակասող որոշ ձևակերպումներ ու մտքեր (իհարկե, երբեք չհետևելով դրանց), որպեսզի կարողանա իր ետևից տանել ժողովրդական լայն մասսաներին։

Ահա թե ինչու, չարաչար սխալված կլինեն բոլոր նրանք, ովքեր կփորձեն դաշնակցություն կուսակցությանը գնահատել՝ ելնելով նրա ծրագրերից։ Այդ կուսակցության ծրագրերը ինքնուրույն ոչինչ չեն պարունակում։ Նրանց հիմքում ընկած է նարոդնիկական ծրագիրը՝ լրացված տարբեր կուսակցությունների ծրագրերից պարզապես գողացված մտքերով։

Իր հիմնադրումից մինչև 1905 թվականը, այսինքն՝ ռուսական առաջին հեղափոխության սկիզբը, 15 տարի շարունակ, դաշնակցությունը հանդես էր գալիս որպես «ազգային» կուսակցություն, մերժելով դասակարգային պայքարի գաղափարը՝ իր գոյության նպատակը համարելով «հայոց դատի» լուծումը։

Սակայն, երբ 1905 թվականին ռուսական հեղափոխության մարտիկների շարքերում ակտիվորեն հանդես եկավ նաև հայ ժողովուրդը և ամենից առաջ հայ պրոլետարիատը, դաշնակցությունը զգաց, որ հին ձևով այլևս չի կարելի գոյություն պահպանել, որ օրակարգում դրված է իր լինելու և չլինելու հարցը՝ որպես հայ իրականության ազդեցիկ կուսակցության։ Եվ դաշնակցությունը «... իրեն հայտարարեց սոցիալիստական կուսակցություն։ Այս դեպքում ևս,— գրում էր Ստ. Շահումյանը,— նա իրեն ձևացնում էր, թե իր հետ ոչ մի առանձին բան չի պատահել։ Նա աշխատում էր հավատացնել հասարակությանը, թե ինքը երբեք ազգային պարտիա չի եղել,

թե, ընդհակառակը, միշտ էլ եղել է դասակարգային և սոցիալիստական պարտիա»[1]:

Որպես ապացույց մեջտեղ էր բերվում դաշնակցության կուսակցության անդրանիկ ծրագիրը, «մի թղթի կտոր, որը ոչ մի առնչություն չուներ այն շարժման հետ, որ ղեկավարում էր պարտիան, այն նպատակների հետ, որ հետապնդում էր նա»[2]:

Ինչ վերաբերում է դաշնակցության առաջին ծրագրում պարունակվող մարքսիզմին, որի մասին խոսում են դաշնակները, ապա դա ոչ թե մարքսիզմ է, այլ մի քանի դեմագոգիական ֆրազներ՝ դասակարգային պայքարի, աշխատավոր մասսաների և այլևայլ բաների մասին, որ, ինչպես նկատել է Ստ. Շահումյանը, «ձևի համար արտագրված էր նարոդովոլական ծրագրից պարտիայի հիմնադիր երկու-երեք «պրոգրես» մարդկանց կողմից»[3]:

Որ իրոք, դաշնակցության առաջին համագումարում ընդունված ծրագիրը քաղաքական տհասության ամենափայլուն նմուշներից է, վկայում է նաև այդ կուսակցության հիմնադիրներից Մ. Վարանդյանը, գրելով, որ տեսական հարցերը վերոհիշյալ համագումարում քննվել են «ի միջի այլոց», մակերեսային, թռուցիկ ձևով[4]:

Կուսակցության մեջ մտնող ուսումնականները «ժամանակ և սիրտ չունեին լրջորեն ու բազմակողմանի կերպով քննելու ծրագրի ու աշխարհայացքի խնդիրները և անոնց այդ կարգի մարզանքներուն մեջ կա երևան կուգան անորոշություն, հակասություններ և վարանումներ»,—շարունակում է Մ. Վարանդյանը:

Միամիտ բացատրությո՜ւն: Դաշնակցության «տեսաբանները» կուսակցության գոյության ամբողջ ընթացքում

1 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 289:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

4 Միքայել Վարանդյան, Հ. Յ. Դաշնակցության պատմություն, առաջին հատոր, Փարիզ, 1932, էջ 144—145:

*այնպես էլ ի վիճակի չեղան առեղծելու տեսականորեն հիմնավորված մի ամբողջական ծրագիր։ Գո՞ւցե հիմա էլ ժամանակ չունեն։ Բայց ոչ, ինչպես գիտենք, 1920 թ. հետո դաշնակցության «տեսաբանները» իրենց տրամադրության տակ ունեին անսահմանափակ ժամանակ՝ զբաղվելու ծրագրի հարցերով։*

*Խնդիրը նրանումն է, որ դաշնակցությունը ի վիճակի չէ առեղծելու գիտականորեն հիմնավորված ծրագիր, քանի որ նա, չըմբռնելով հասարակության զարգացման օրենքները, շատ հաճախ ընթացել է նրանց հակադիր ուղղությամբ՝ դրանով իսկ մեծամեծ վնասներ հասցնելով հայ ժողովրդին։*

*Իմպերիալիզմի ջատագովներն այժմ շատ հաճախ են խոսում այն մասին, թե կապիտալիստական աշխարհի դըժբախտությունը այն է, որ նա չունի իր սեփական Մարքսը և Կոմունիստական մանիֆեստը։ Իմպերիալիզմի տեսաբանները շատ ջանքեր են թափում այդ ուղղությամբ, սակայն, ավա՜ղ, ոչինչ չի ստացվում, որովհետև իմպերիալիզմը որպես հասարակարգ՝ կյանքի զարգացման անողոք օրենքների կողմից ստացել է իր մահվան դատավճիռը, և ոչ մի տեսաբան, ինչքան էլ որ նա հանճարեղ լինի, ի վիճակի չէ դառնալու Մարքս և գրելու կապիտալիստական մանիֆեստ։*

*Դաշնակցության լիդերները, մի կողմ թողնելով օբյեկտիվ պատճառները, իրենց տեսական սնանկությունը ցանկանում են քողարկել սուբյեկտիվ պատճառներով։*

*Մ. Վարանդյանի նման Վ. Նավասարդյանը ևս չի ժխտում իրենց ծրագրի էկլեկտիցիզմը և այդ մասին գրում է. «Մեր անդրանիկ ծրագրի մեջ կան* հետքեր ընկերային տարբեր դպրոցների, *օրինակ ծրագրի ներածական բաժնում բացորոշապես իշխում է մարքսիզմը...»*[5]։

*Սակայն այն, այսինքն մարքսիստական ֆրազեոլոգիան, ինչ պատահաբար էր ընկել դաշնակցության առաջին ծրագրի մեջ, գիտակցորեն ընդունվեց այդ կուսակցության Վիեն-*

5 Վահան Նավասարդյան, *Գաղափարների ոգին, Գահիրե, 1951, էջ 59, (ընդգծումը մերն է — Լ. Խ.)։*

նայում կայացած 1907 թ. համագումարում: 1907 թ. ծրագրում դաշնակցությունը իրեն հայտարարեց «ռևոլյուցիոն և սոցիալիստական»:

Դաշնակցության IV համագումարի կողմից ընդունված ծրագրում ասվում էր. «Կապիտալիզմի սնանկությունը ակներև է, կուլտուրական առաջադիմության դրոշակը իրոք անցել է արդեն աշխատավոր դասակարգերի ձեռքը, որոնք հակադրում են կապիտալիզմին սոցիալիզմը:

Սոցիալիզմի վարդապետությամբ առաջնորդվելով աշխատավոր դասակարգերը ձգտում են վերացնել կապիտալիստական մասնավոր սեփականությունը և նրա հետ կապված անարխիական արդյունագործական սիստեմը...»[6]:

Դաշնակցության IV համագումարը համառ էր ներշնչում, որ սոցիալիզմը իր դրոշի տակ հավաքելով տառապող մարդկությունը, անտարակուսելի հաղթանակ պիտի տանի, թե՛ բնության կույր ուժերի և թե՛ հասարակության մեջ դարերով թագավորող ստրկության ու անարդարության դեմ:

Ինչպիսի գեղեցիկ խոսքեր ու մտքեր, բայց ավա՜ղ, որ նրանք ծրագրում գրանցված էին մասսաների աչքերին թոզ փչելու, սոցիալիզմի դեմ հաջող պայքար մղելու համար:

«Սոցիալիստական դիմակ հագնելով՝ նա (դաշնակցությունը— Լ. Խ.) ամենավճռական պայքարն է մղում սոցիալիզմի դեմ, բանվորական շարժման դեմ Կովկասում: Նա մինչև այժմ անվանվում էր «հեղափոխական» պարտիա, որպեսզի 15 տարի շարունակ մարտնչի ռևոլյուցիայի դեմ: Նա այժմ իրեն անվանում է «հեղափոխական» և «սոցիալիստական» պարտիա, որպեսզի կռվի ռևոլյուցիայի և սոցիալիզմի դեմ»[7],— գրում է Ստ. Շահումյանը, վեր հանելով այն պատճառները, որոնք հիմք հանդիսացան դաշնակցություն կուսակցության դիվանագիտական խաղերին և նոր հերթական մետամորֆոզներին:

6 Ծրագիր Հ. Յ. Դաշնակցության, Թիֆլիս, 1917, էջ 12:
7 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 290:

*Այն, որ դաշնակցությունը «սոցիալիստական» է դարձել ռուսական հեղափոխության ճնշման տակ, ինչպես ոչ մի կապ չունենալով մարքսիզմի ռևոլյուցիոն ուսմունքի հետ, այնքան ակնհայտ է, որ անգամ նրա տեսաբանները հարկադրված խոստովանում են այդ։ Դաշնակցությունը «... զուտ ընկերվարական կուսակցություն մը չէր և նա չդարձավ այդպիսին անգամ 1907 թվականին, երբ* համառուսական շարժումներու հետևանքով, ընդունվեցավ ընկերվարական ծրագիրը *Վիեննայի ընդհանուր ժողովին մեջ*[8]*»,—գրում է Մ. Վարանդյանը, իրենից անկախ հաստատելով Ստ. Շահումյանի խոսքերը՝ դաշնակցության «սոցիալիստական» դառնալու պատճառների մասին։*

*Ձևացած համառուսական հեղափոխական շարժման հզոր ալիքները հարկադրեցին դաշնակցությանը նոր դիմակ հագնելու, սակայն, անկախ դրանից նա «կը շարունակե մնալ խորապես ազգային կուսակցություն»*[9]*։*

*1907 թ. դաշնակցությունը, ավելի ևս ընդգծել տալու համար իր դատակարգային և սոցիալիստական բնույթը, ընդունվեց II Ինտերնացիոնալի մեջ։ Սակայն դրանք խաղեր էին, որոնք ոչ մեկին խաբել չէին կարող։ Գաղտնիք չէր այլևս, որ դաշնակցությունը պրոլետարիատի պայքարի և սոցիալիզմի գաղափարների հետ ոչ մի առնչություն չուներ։*

*«Ազգային-ընկերվարական կուսակցություն մնաց Հ. Յ. դաշնակցությունը և նույն ինքը Ինտերնացիոնալը,— գրում է Մ. Վարանդյանը,— ամբիոն մըն էր մեզի համար, քաղաքակիրթ աշխարհի բարձր ու հմայքոտ ամբիոններեն մեկը, ուսկից կարծարծեինք մեր ազգային դատը, ձգտելով շահագրգռել մեծ երկրներու ընկերվարական պարագլուխները հայ ժողովրդի ճակատագրով»*[10]*։*

*II Ինտերնացիոնալի մեջ մտնելու մասին Մ. Վարանդ-*

---

8 Միքայել Վարանդյան, *Հ. Յ. Դաշնակցության պատմություն, Հատ. առաջին, էջ 120։*

9 *Նույն տեղում, էջ 494։*

10 *Նույն տեղում, էջ 498։*

ցանը իր ավելի վաղ հրատարակված մի աշխատության մեջ ևս հայտնում է բառացիորեն նույն կարծիքը, գրելով. «Նպատակը նույնն էր. ծառայեցնել Ինտերնացիոնալը որպես ամբիոն Հայոց ազատության դատը արևմտյան լայն զանգվածներին քարոզելու համար»[11]:

Ինչպես տեսնում ենք, դաշնակցությունը, II Ինտերնացիոնալի մեջ էր մտել վերջինիս ամբիոնը օգտագործելու նպատակով: Ինչ վերաբերում է դաշնակցության «ընկերվարական» անվանելուն, ապա կարելի է հաստատորեն պնդել, որ դաշնակցությունը իր գոյատևման ամբողջ ընթացքում երբեք չի հասկացել և չի ընդունել ոչ կոմունիստական կուսակցությունների և ոչ էլ սոցիալ-դեմոկրատների տեսությունները:

Այժմ քննենք այն հարցը, թե սոցիալիզմի տեսության նկատմամբ միջազգային զարգացման ժամանակակից փուլում ի՞նչ վերաբերմունք ունի դաշնակցությունը: Չէ՞ որ 1907 թվականից հետո, այսինքն դաշնակցության «սոցիալիստական» դառնալուց հետո, աշխարհում շատ բան է փոխվել, շատ ջուր է հոսել:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դաշնակցության էվոլյուցիայի հիմնական օրինաչափությունը եղել է այդ կուսակցության ընթացքը բարոյալքման ու այլասերման ուղիով, նրա՝ դեպի իմպերիալիզմի գործակալի, հակակոմունիզմի պրոպագանդիստի ներկայիս դերը:

Դեպքերի զարգացման, միջազգային երկու սիստեմների գոյացման ու նրանց միջև պայքարի սրմանը զուգընթաց, դաշնակցությունը աստիճանաբար հրաժարվում է իր սոցիալիստական դիմակից: Այստեղ նկատի ունենանք նաև այն, որ ինքը՝ սոցիալ-դեմոկրատիան, այս տարիների ընթացքում հաստատակամորեն գնում է դեպի իմպերիալիզմի դիրքերի լիակատար պաշտպանությունը և հրաժարումը մարքսիզմից: Հարցի նրբությունը կայանում է նաև նրանում, որ դաշնակցությունը, լինելով իմպերիալիզմի վարձկանը, միևնույն

11 Միքայել Վարանդյան, *Համայնավարություն և համաշխարհային հեղափոխություն*, Գահիրե, 1926, էջ 15:

ժամանակ հաստատում է դեռ նաև իր սոցիալիստական դիմակը, նկատի ունենալով սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների որոշ հաջողությունները: Որքան հեղինակազրկվում են սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, դաշնակցությունն այնքան ավելի ուժեղ է քննադատում նրանց գաղափարախոսությունը և քաղաքականությունը:

1957 թ. Սոցիալիստական Ինտերնացիոնալի հինգերորդ կոնգրեսի գումարման կապակցությամբ «Հայրենիք» օրաթերթում հրապարակված հոդվածում Ինտերնացիոնալի մեջ մտնող կուսակցությունների քանակը նշելուց հետո ավելացվում է, որ բացի դրանցից, Ինտերնացիոնալը ճանաչում է նաև տարագրության մեջ գտնվող «սոցիալիստական» այնպիսի կուսակցությունների գործակցությունը, ինչպիսիք են դաշնակցությունը և վրացական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը[12]:

Բայց դա, իհարկե, արդեն չէր հանդիսանում, որպեսզի դաշնակցությունը հանդես գա սոցիալ-դեմոկրատիայի քննադատի դերում:

Միջազգային սոցիալիստական (ընկերվարական) շարժումը շարունակում է պահպանել իր գոյությունը «թեև չունի այլևս անկե հիսուն տարի առաջվան գաղափարին հիմքը: Չունի, որովհետև չկա այլևս առաջվան անխախտ հավատքը ընկերվարության նախկին դավանանքներուն հանդեպ և որովհետև այսօր ընկերվարության ամենեն հիմնական գաղափարներուն, նույնիսկ վերջնական նպատակներուն շուրջ լուրջ տարակարծություններ և կասկածներ կան»[13],— գրում է «Հայրենիք»-ը, պարզորեն հասկացնել տալով, որ կասկածի տակ է առնվում ոչ միայն սոցիալ-դեմոկրատիայի գործելակերպը, այլև նրա վերջնական նպատակը:

Հոդվածագիր Ռ. Դարբինյանին առանձնապես դուր չի

---

12 «Սոցիալիստական Ինտերնացիոնալի հինգերորդ համագումարը», «Հայրենիք», 4 օգոստոսի, 1957:

13 Ռ. Դարբինյան, Ընկերվարությունը անցյալին մեջ և ներկայիս, «Հայրենիք», 28 մարտի, 1957:

գալիս այն, որ սոցիալ-դեմոկրատիայի որոշ խմբերի կողմից պահանջ է առաջադրվում կոմունիստների հետ համագործակցելու մասին, սակայն, միաժամանակ, նրան մեծ ուրախություն է պատճառում սոցիալ-դեմոկրատիայի դասակարգային դիրքերից հրաժարվելը և ազգային կուսակցություններ դառնալը:

Ոտնակոխ անելով հասարակության զարգացման բոլոր օրենքները, դաշնակցության տեսաբանը սկսում է մեկը մյուսից ավելի «փայլուն հայտնագործություններ» անել: Նախ, նա պնդում է, թե իբր սոցիալիստների պահանջները բարոյական են և բխում են քրիստոնեության սկզբունքներից: Նա նկատի ունի ընկերային հավասարության և անհատական արդարության գաղափարները: Այսպես ուրեմն, սոցիալիզմի սկզբունքները մեր «տեսաբանը», իհարկե, նորից ուրիշներից վերցված մտքերով, տեսնում է քրիստոնեության մեջ:

Այնուհետև, շարունակելով այսպիսի գոհարներով, նա ավելի է խորանում իր «տեսական ընդհանրացումների» մեջ, գրելով. «Կարելի է այժմ համարձակորեն պնդել, թե ամերիկյան դրամատիրությունն ալ կը զարգանա ճիշդ այդ ուղղությամբ»[14]: Ռ. Դարբինյանի համար ոչ մի տրամաբանություն, փաստ կամ հասարակության զարգացման օրենք գոյություն չունի: Միաժամանակ նա առանց քաշվելու, քաղաքակրթության նախնական աստիճանների վրա կանգնած մարդու նման, կրկնում է, թե որևէ աշխարհայեցողությամբ կամ գաղափարաբանությամբ չի կարելի նախատեսել կյանքի ապագա ընթացքը[15]: Ռ. Դարբինյանը այս թոթովանքը մեջտեղ է բերում Մարքսին հերքելու համար, ցույց տալու, թե իբր մարքսիզմը, որպես ուսմունք հասարակության զարգացման օրինաչափությունների մասին, ճիշտ չէ, որովհետև երբեք չի կարելի կանխատեսել, թե ինչ ուղղությամբ կընթանա հասարակության զարգացումը: Դարբինյանը դասը լավ սերտած

14 Նույն հոդվածի շարունակությունը, «Հայրենիք», 2 ապրիլի, 1957:

15 Ռ. Դարբինյան, Ընկերվարությունը և արդի «կապիտալիզմը», «Հայրենիք», 28 նոյեմբերի, 1959:

աշակերտի նման կրկնում է բուրժուական սոցիոլոգիայի՝ աշխարհի զարգացման մասին այն հիմնական թեզը, որ «Մենք չգիտենք, թե ուր ենք գնում, բայց մենք գտնվում ենք ճանապարհին» [16]։

Սակայն ծիծաղելին այն է, որ մեր «տեսաբանը» մոռանալով, որ ինքն արդեն մերժել է կյանքի առաջ ընթացքի կանխատեսման հնարավորությունը, իր «սոցիոլոգիական մարզանքներում» փորձում է նախատեսել ամերիկյան իմպերիալիզմի զարգացման հեռանկարները։

Մի կողմ նետելով արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների հակասությունը, որը իմպերիալիզմը տանում է դեպի անխուսափելի կործանում, աչքաթող անելով և շրջանցելով գործադուլների միլիոնավոր բանակները, հարստության կուտակումը մի բուռ շահագործողների ձեռքում, տնտեսական և քաղաքական տեռորի փառաբանված բուրժուական դեմոկրատիան և այլ բազմաթիվ անբուժելի խոցեր, Դարբինյանը փորձում է իր ընթերցողներին հավատացնել, թե իբր ամերիկյան իմպերիալիզմը ընթանում է դեպի ընկերային հավասարություն և տնտեսական արդարություն։ «Դրամատիրական Մ. Նահանգներու մեջ աշխատավորը ազատ է, իր հոժար կամքով լծված իր նախընտրած գործին։ Հոն աշխատանքը հաճույք է և վերածված է նվիրական պարտականության մը, որ գիտակցորեն կը կատարվի, առանց վախի կամ ստիպողության»,—գրում է «Հայրենիքը»[17]։ Ժողովրդի մեծամասնությունը ԱՄՆ-ում իշխանի պես է ապրում,— կրկնում է «Ազդակը»[18]։ Հրեշավոր տրամաբանություն։ Մի՞թե անկողմնակալ մտքի տեր անձնավորությունը լրջորեն կարող է տնտեսական արդարություն փնտրել ԱՄՆ-ում կամ մի որևէ այլ իմպերիալիստական երկրում, որտեղ, որպես այդ հասարակության զարգացման օ-

16 Г. Беккер и А. Босков, Современная социологическая теория, Москва, 1961, стр. 7.

17 «Հայրենիքը», 3 սեպտեմբերի, 1961։

18 «Ազդակ», 18 մարտի, 1963։

րենք, ամբողջ հարստությունը կուտակվում է մի խումբ մարդկանց ձեռքում։

Հետպատերազմյան շրջանում Արևմուտքի տեսաբանների կողմից մեկ անգամ չէ հայտարարվել այն մասին, թե իբր իմպերիալիզմը փոխել է իր բնույթը, այն դարձել է «ժողովրդական»։

Սակայն այդ «ժողովրդական» կապիտալիզմը չպատարեց ժողովրդի շահագործման հասարակարգ լինելուց, միլիոնավոր գործազուրկները աշխատանք չստացան, միլիոնատերերի շահույթները չպակասեցին և ոչ միայն չպակասեցին, այլև ընդհակառակը, ավելացան։ Գուցե տարեցտարի աճող միլիոնավոր բանվորների գործադուլային շարժումը ևս խոսում է «սոցիալական ներդաշնակության» և «համընդհանուր բարօրության» պետության մասին։

«Բուրժուական հասարակարգի պաշտպանները,— ասվում է ՍՄԿԿ Ծրագրում,— ձգտելով մասսաներին պահել հոգևոր գերության մեջ, հնարում են բուրժուական իրավակարգի շահագործական բնույթը քողարկող, կապիտալիզմը գունազարդող նորանոր «տեսություններ»։ Նրանք հավաստիացնում են, թե իբր արդի կապիտալիզմը փոխել է իր էությունը, դարձել է «ժողովրդական կապիտալիզմ», որտեղ տեղի է ունենում սեփականության «ցրում» և կապիտալի «դեմոկրատացում», չքանում են դասակարգերը և դասակարգային հակասությունները, «հավասարվում են եկամուտները» և վերանում են տնտեսական ճգնաժամերը։ Իրականում արդի կապիտալիզմի զարգացումը հաստատում է կապիտալիստական հասարակարգի հակասությունների և հակամարտությունների աճման, այնտեղ դասակարգային պայքարի սրման մարքս-լենինյան ուսմունքի ճշտությունը»[19]։

Ռ. Դարբինյանը միայն մեկ ձգտում ունի. արդարացնել այն ամենը, ինչ հակակոմունիստական է։ Իսկ տվյալ դեպքում հակակոմունիստական է թե՛ իմպերիալիզմը և թե՛ սո-

---

19 ՍՄԿՊ Ծրագիր, էջ 61—62, Երևան, 1961։

ցիալ-դեմոկրատիան։ Եվ եթե օբյեկտիվորեն քննենք դեպքերի զարգացման ընթացքը, ապա կտեսնենք, որ, իրոք, իմպերիալիզմի և ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայի գաղափարախոսությունները աստիճանաբար մոտենում են իրար։ Դաշնակցության «տեսաբանը» տեսնելով այդ մերձեցումը, գրում է. «Դժվար չէ գուշակել, որ օր մըն ալ անոնք պիտի ձուլվին իրարու մեջ...»[20]։ Այո՛, կձուլվեն, պարոն Դարբինյան, բայց ոչ թե երկուսը կձուլվեն իրար մեջ՝ ստեղծելով մի նոր ամբողջություն, այլ սոցիալ-դեմոկրատիան լիովին կձուլվի իմպերիալիզմի մեջ, ոչ մի հետք չթողնելով իրենից։ Չէ՞ որ իմպերիալիզմը չի գնում դեպի սոցիալ-դեմոկրատիան, այլ վերջինս է շարժվում դեպի իմպերիալիզմը, և այսօր փաստորեն, սոցիալ-դեմոկրատիայի աջ թևի և իմպերիալիզմի ամենակատաղի պաշտպանների միջև ոչ մի տարբերություն չկա։ Եթե այս պրոցեսը շարունակվի, ապա, բնականաբար, ամբողջ սոցիալ-դեմոկրատիան կձուլվի իմպերիալիզմի մեջ։ Ցավոք սրտի, չնայած ՍՄԿԿ XX համագումարի և կոմունիստական ու բանվորական կուսակցությունների Մոսկովյան խորհրդակցությունների որոշումներին՝ բանվոր դասակարգի շահերի համար իմպերիալիզմի դեմ միավոր պայքարում համատեղ հանդես գալու մասին, ընդհանուր առմամբ, սոցիալ-դեմոկրատիան դեռևս շարունակում է իր նախկին, կործանարար քաղաքականությունը, ավելի ու ավելի գլորվելով դեպի աջ, դեպի իմպերիալիզմը։

Վերջին տարիներին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները մեկը մյուսի հետևից նոր ծրագրեր են ընդունում։ Այդ կուսակցությունների նոր ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սոցիալ-դեմոկրատիան, եթե նախկինում գոնե թղթի վրա ընդունում էր դասակարգային պայքարը, արտադրության միջոցների ազգայնացումը և մի

---

20 Ռ. Դարբինյան, *Ընկերվարությունը անցյալին մեջ և ներկային*, «Հայրենիք», 2 ապրիլ, 1957։

*շարք այլ մարքսիստական տեսակետներ, ապա այժմ հրաժարվում է անգամ դրանցից։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների նոր ծրագրերում սոցիալիզմի տեսությունից, անգամ նրա ռեֆորմիստական իմաստով, ոչ մի բան չի մնացել։ Ահա այդ առիթով էլ «Վաշինգտոն պոստ էնդ Թայմս հերալդ» ամերիկյան բուրժուական թերթը «Մարքսիզմի թաղումը» վերնագրով հոդվածում նշում է. «Գերմանական սոցիալ-դեմոկրատիան Գոթայի պատմական համագումարում իր ստեղծումից 84 տարի հետո, Բադ-Գոդեսբերգի համագումարում, հրաժարվեց մարքսիստական գաղափարախոսությունից և փաստորեն դադարեց սոցիալիստական լինելուց, այդ բառի իսկական իմաստով»։*

*Եվ իրոք, գերմանական սոցիալ-դեմոկրատիան, որը փաստորեն համաշխարհային սոցիալ-դեմոկրատիայի տեսական դրոշակակիրն է, իր վերջին՝ Բադ-Գոդեսբերգի համագումարում խաչ քաշեց Մարքսի ուսմունքի վրա և, բառիս լրիվ իմաստով, վերջնականապես հրաժարվեց նրանից։ Ահա թե ուր է գնում միջազգային սոցիալ-դեմոկրատիան։ Մարքսի ուսմունքը համարում է հնացած և չհամապատասխանող ժամանակակից պայմաններին։*

*ՍՄԿԿ նոր Ծրագիրը վերլուծելով սոցիալ-դեմոկրատիայի անցած ուղին, ասում է. «Աջ սոցիալիստները սկսեցին սոցիալիստական ռևոլյուցիային սոցիալական ռեֆորմները հակադրելուց, իսկ հանգեցին պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի պաշտպանությանը։ Անցյալներում նրանք պրոլետարիատին ներշնչում էին, թե ռևոլյուցիոն մարքսիզմի հետ իրենց ունեցած տարաձայնությունները վերաբերում են ոչ այնքան բանվորական շարժման վերջնական նպատակին, որքան այդ նպատակի իրականացման միջոցներին։ Այժմ նրանք բացահայտ կերպով հրաժարվում են սոցիալիզմից։ Առաջներում աջ սոցիալիստները հրաժարվում էին դասակարգային պայքարի ընդունումը մինչև պրոլետարիատի դիկտատուրան հասցնելուց։ Այսօր նրանք ժխտում են ոչ միայն դասակարգային պայքարը, այլև հենց հակամարտ*

շահագործողների գոյությունը բուրժուական հասարակության մեջ[21]։

Դաշնակցության գաղափարախոսները մեծ հրճվանքով նշում են այն փաստը, որ գերմանական սոցիալ-դեմոկրատիան «հիմնապես կը հրաժարի մարքսյան վարդապետութենեն և կը դառնա ոչ հեղափոխական և սոսկ վերանորոգչական կուսակցություն մը, որ շատ ալ չի տարբերիր «բուրժուական» կուսակցություններեն», օրինակ Ադենաուերի կուսակցությունից[22]։

Բայց դաշնակցությունը ոչ լիովին է գոհ։ Ըստ բյուրոյականների, սոցիալ-դեմոկրատիան հետևողականորեն չի գործում. հրաժարվելով մարքսիզմից՝ նա պետք է հրաժարվեր նաև իր «սոցիալիստական» անունից[23]։ Մի՞թե այսքանից հետո կարող է կասկած հարուցել այն հարցը, թե իրը դաշնակցությունը, գոնե խոսքի վրա, պահպանում է իր սոցիալիստական դիմակը։ Պարզ է, որ չի կարող լինել։ Դաշնակցությանն այդ դիմակը այլևս պետք չէ. նա ինքն է առանց քաշվելու խորհուրդ տալիս սոցիալ-դեմոկրատական կուսակցություններին, որպեսզի նրանք ևս հրաժարվեն դրանից։ Քանի սոցիալ-դեմոկրատիան վերջնականապես չի հեղինակազրկվել, դաշնակցությունը դեռևս անժամանակ է համարում սոցիալիստական խաբեբայությունից հեռանալը։ Ա. Վրացյանը 1963 թ. հայտարարեց. «Ինչպես անցյալին, այսօր ալ մեր կուսակցությունը մաս կը կազմե Երկրորդ Միջազգայնականին»[24]։

Ի դեպ, ուշագրավ է այն, որ բյուրոյականները այն միտքըն են անցկացնում, թե երբ դաշնակցությունը իր պատմության ընթացքում երբեք իրեն մարքսիստական չի համարել։ «Իրականին մեջ, սակայն, Հ. Յ. Դաշնակցությունը ոչ միայն

---

21 ՍՄԿԿ Ծրագիր, էջ 65—66։

22 Ռ. Դարբինյան, Ընկերվարությունը և արդի «կապիտալիզմը», «Հայրենիք», 29 նոյեմբերի, 1959։

23 Նույն տեղում։

24 «Հուսաբեր», 10 հոկտեմբերի, 1963։

*Երբեք չէ ընդունած մարքսիզմը, այլև, ընդհակառակը, միշտ ալ անհաշտ պայքար մղած է բոլոր այն կազմակերպություն-ների դեմ, որոնք հետևած են Մարքսի վարդապետության»,— գրում է Ռ. Դարբինյանը*[25]։

*Վատ է, շատ վատ պարոն Դարբինյանի հիշողությունը։ Նա «մոռացել» է իր կուսակցության անցած ուղին և այն տարրական ճշմարտությունը, որ դաշնակցության ծրագրում հեղափոխական իրագործումներին հարմարվելու միտումով ձևականորեն ընդունված «սոցիալիզմ» տերմինի տակ այդ կուսակցության ղեկավարությունը հասկանում էր «մարքսիզմը», մի ուսմունք, որի հետ դաշնակցությունը, ըստ էության, առնչություն չուներ։ Բայց վերահիշյալ տարրական ճշմարտությունը պարզելու համար շատ հեռու չպետք է գնալ, շատ աշխատանք չպետք է թափել։ Դաշնակցություն կուսակցության հին սերնդի որ տեսաբանի աշխատությունն էլ թերթենք, նրանում անպայման փաստեր կգտնենք այն մասին, թե այդ կուսակցությունը իրեն համարում էր «սոցիալիստական» և «մարքսիստական»։*

*Ի վերջո, չէ՞ որ II Ինտերնացիոնալի դավանած սոցիալիզմը, թեկուզ և ռեֆորմիստական, բայց պաշտոնապես մարքսիստական էր համարվում։ Իսկ դաշնակցությունը այդ Ինտերնացիոնալի անդամներից էր։*

*Սակայն ինչո՞ւ հեռու գնալ։ Ռ. Դարբինյանին հիշեցնենք իր իսկ գրածները, որոնց մեջ նա երեսպաշտորեն փորձել է մարքսիստական զգեստ հագնել։ «Կար ժամանակ,— գրում է նա,— գրեթե մի դար առաջ, երբ մարդկության լավագույն զավակներն անգամ այն միամիտ հավատն ունեին, թե ամենայն հեշտությամբ կարելի է իրագործել սոցիալիզմը, համո-զելու ճանապարհով (Օուեն, Սեն-Սիմոն) կամ բռնի միջոցներով (Բաբեֆ, Բլանկի)։ Բայց եկավ գիտական սոցիալիզմը* հանձին Մարքս-Էնգելսի ստեղծած հոյակապ սիստեմի *և անվիճելի կերպով ապացուցեց, որ սոցիալիզմի իրականաց-*

25 Ռ. Դարբինյան, *Սուտերը և փաստերը, «Հայրենիք», 8 ապրիլ, 1960։*

ման համար ամենից առաջ պետք են առարկայական (օբյեկտիվ) նախապայմաններ»[26]։

Հիրավի, պետք է ասել, որ դաշնակցությունն իր գույնը շատ արագորեն է փոխում և այդ հարցում, անկասկած, նա դժվար թե մրցակից ունենա։

Այս բոլորը, իհարկե, արդյունք է դաշնակցության գաղափարական սնանկության, որը շատ ճիշտ կերպով նկատել են նրա բոլոր հակառակորդները։

Ռամկավար ազատական կուսակցության «Զարթոնք» թերթը, անդրադառնալով այդ հարցին, իր խմբագրականում գրում է. «Հ. Յ. Դաշնակցության այս բոլոր կերպարանափոխությունները ախտանիշներն են այդ կազմակերպության գաղափարական սնանկության, որովհետև եթե ան իրապես ունեցած ըլլար որոշ և կայուն գաղափարաբանություն մը՝ պիտի չկրնար ենթարկվիլ այսքան աչք ծակող դիմափոխությանց»[27]։ Ճշմարիտ բացատրություն, որի հետ չի կարելի չհամաձայնել։

Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ծրագրերը փոխելու գլխավոր դրդապատճառներից մեկը, ըստ դաշնակցության, այն է, որ այդ կուսակցությունները կորցրել են իրենց նախկին հրապույրը ժողովրդական զանգվածների մեջ։ Զարմանալիորեն ճիշտ է նկատված։ Հիրավի, սոցիալ-դեմոկրատիան զրկվել է նախկինում համաշխարհային բանվորական շարժման վրա ունեցած իր ազդեցությունից։ Աշխատավոր լայն զանգվածները այլևս հավատ չեն ընծայում սոցիալիստներին և չեն գնում նրանց հետևից։ Սրանք անհերքելի փաստեր են։

Սակայն ինչո՞ւ է կորցնում իր դիրքերը համաշխարհային սոցիալ-դեմոկրատիան։ Համաշխարհային սոցիալ-դեմոկրատական շարժման պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա անհաջողությունների պատճառը՝ հրա-

26 Ռ. Դարբինյան, Բոլշևիզմը և Հայաստանը, Բոստոն, 1922, էջ 10։

27 «Հ. Յ. Դաշնակցության գաղափարական սնանկությունը», «Զարթոնք», 6 ապրիլի, 1956։

ժարումն է բանվոր դասակարգի շահերի պաշտպանությունից, պայքարը կոմունիստական շարժման դեմ և այդ պայքարում դաշինքը իմպերիալիզմի հետ։ Ինչպես նշեցինք վերը, միջազգային սոցիալ-դեմոկրատիան գլորվում է դեպի իմպերիալիզմը, և ահա այդ պրոցեսին զուգընթաց, աշխատավոր մասսաները հեռանում են սոցիալիստներից։

Բայց, կարո՞ղ են արդյոք խոստովանել այդ ճշմարտությունը դաշնակցության ղեկավարները։ Ո՛չ, չեն կարող։ Նրանք, ընդհակառակը, պնդում են, որ քանի սոցիալ-դեմոկրատիան կառչած է մնում դասակարգային պայքարից, արտադրության միջոցների և հողի ազգայնացման սկզբունքներից և ունի հակակրոնական գիրք՝ ոչ մի հաջողության հասնել չի կարող[28]։

«Հանճարեղ» ընդհանրացումնե՜ր... Սակայն այդ դեպքում ինչո՞վ բացատրել այն երևույթը, որ միջազգային կոմունիստական շարժումը իր ծրագրում ունենալով և դասակարգային պայքարի, և արտադրության միջոցների հանրայնացման սկզբունքներ, արագ կերպով զարգանում է, ձեռք բերելով համաշխարհային պատմական հաջողություններ։

Եթե 1919 թ. կոմունիստական ինտերնացիոնալի I կոնգրեսին ներկա էին 30 երկրների կոմունիստական կուսակցությունների ու խմբերի պատվիրակություններ, ապա այժմ Եվրոպայում, Ասիայում, Ամերիկայում և Ավստրալիայում չկա մի երկիր, որտեղ կոմունիստական կուսակցություն գոյություն չունենա։ Մեկը մյուսի ետևից կոմունիստական կուսակցություններ են ստեղծվում գաղութային լծից թոթափվող աֆրիկյան երկրներում։ Այժմ կոմունիստական և բանվորական կուսակցություններ կան աշխարհի մոտ 90 երկրներում, որոնք իրենց շարքերում համախմբում են ավելի քան 42 միլիոն մարդ։

Բանվորական և կոմունիստական կուսակցությունների Մոսկովյան 1957 և 1960 թթ. խորհրդակցությունները ընդու-

28 «Հայրենիք», 28 նոյեմբերի, 1959։

նեցին ծրագրային փաստաթղթեր, որոնք դարձան միջազգային բանվորական և կոմունիստական շարժման հեղափոխական զրահը: Միջազգային զարգացման հետագա ընթացքը գալիս է միայն հաստատելու այդ փաստաթղթերում պարունակվող դրույթների ճշմարտացիությունը:

Հակակոմունիզմի զառածները, որոնց թվում և դաշնակցությունը, Դոն-Քիշոտի նման նիզակ են ճոճում միջազգային կոմունիստական շարժման և Մոսկովյան խորհրդակցությունների որոշումների դեմ: Սակայն, սոցիալ-դեմոկրատիայի և իմպերիալիզմի տեսաբանների բոլոր փորձերը՝ այդ փաստաթղթերը հերքելու և դրանց իրենց «մանիֆեստը» հակադրելու, վերջացան անհաջողությամբ:

Մի՞թե այսպիսի պայմաններում բնական չպետք է համարել այն երևույթը, որ աշխատավոր մասսաների սոցիալ-դեմոկրատիայից հիասթափվելուն և աստիճանաբար հեռանալուն զուգընթաց, վերջինիս անդամների քանակը, որոնք գործում են 40 երկրներում, նվազելով հասել է մոտ 10 միլիոնի:

Այդքանից հետո մեզ մնում է միայն ասել. պարոն դաշնակցականներ, ձեռք քաշեցեք տեսական ընդհանրացումներից, դա ձեզ պարզապես չի հաջողվում, որովհետև դրա համար անհրաժեշտ է հասարակության զարգացման օրենքների իմացություն, որից դուք միանգամայն զուրկ եք:

Դաշնակցությունը արդի իմպերիալիզմի բնույթի և նրա գործունեության մեջ ոչ մի բացասական երևույթ չի տեսնում: Ըստ դաշնակցության ժամանակակից գաղափարախոսության, ամերիկյան իմպերիալիզմը հանդիսանում է լավագույն հասարակարգը: Ինքնատիպ և նոր ոչինչ չկա դաշնակցության այս պրոպագանդայում: Դաշնակցության մամուլը, որպես ինքնուրույն տեսություններ, փաստորեն տալիս է միջազգային իմպերիալիզմի տեսաբանների արդեն հնացած, հակագիտական տեսությունների պրիմիտիվ շարադրանքը:

«Ապացուցված» համարելով անապացուցելին, այսինքն՝

այն, որ երբ իմպերիալիզմը կորցրել է իր նախկին բնույթը և վերածվել «ժողովրդական պետության», դաշնակցությունը այնուհետև անցնում է իմպերիալիզմի քաղաքականության արդարացմանը: Իմպերիալիզմի ներքին և արտաքին քաղաքականությունը, առանց որևէ առարկության, դրական գնահատական է արվում: Ինչ վերաբերում է իմպերիալիստական պետությունների պատերազմից հետո ստեղծած, ագրեսիվ նպատակներ հետապնդող բազմաթիվ բլոկներին և պլաններին, ապա դաշնակցությունը այս հարցում ևս բերում է այն պատճառաբանությունները, որոնք թելադրում է միջազգային իմպերիալիզմը:

Արդարացնելով իմպերիալիզմի արյունոտ քաղաքականությունը՝ դաշնակցությունը սկսում է իր մաղձը թափել համաշխարհային սոցիալիստական սիստեմի, կոմունիստական կուսակցությունների և, հատկապես, Սովետական Միության վրա, մեր մոլորակում տեղի ունեցող բոլոր «անկարգությունների» պատճառը համարելով նրանց:

Երբ կարդում ենք դաշնակցական մամուլի խառնիխուռն ու հեղհեղուկ հոդվածները, բնականաբար, հարց է առաջանում, թե ո՞րն է դաշնակցության իդեալը, ի՞նչի է ձգտում այդ կուսակցությունը, որը իր գոյության սկզբնական տարիներին հավակնություն ուներ ազգային-ազատագրական պայքարի դրոշակակիր լինելու, իսկ ավելի ուշ՝ նույնիսկ «սոցիալիստական» համարվելու: Եվ ահա, առանց վարանելու, քանի որ դաշնակցության ամբողջ քաղաքականությունը տրամաբանորեն բերում է այդ եզրակացությանը, «Հայրենիք» թերթում կարդում ենք. «Այդ ընդհանուր իդեալը ուրիշ բան չէ, և չի կրնար ըլլալ, բայց եթե արևմտյան կամ ամերիկյան իմաստով ազատ ժողովրդապետական կարգերու կամ դեմոկրասիի հաստատումը երկրագնդի բոլոր երկիրներուն մեջ»[29]: Ուրեմն, այլևս կասկածի ենթակա համարվել չի կա-

---

29 Ռ. Դարբինյան, Դեպի ակն ընդ ակնի քաղաքականությունը, «Հայրենիք», 9 հունվարի, 1952:

բող այն, որ դաշնակցությունը պայքարում է ամբողջ աշխարհում իմպերիալիզմի հաղթանակի համար։

Դաշնակցության բնութագիրը ավելի պարզ դարձնելու համար նշենք նաև այն, որ երբ սոցիալ-դեմոկրատիան դեռ բավականին ուժեղ էր, նա, պինդ պահելով իր «սոցիալիստական» դիմակը, գրում էր. «Ընկերվարական կուսակցությունները համոզվեցին, որ «դրամական» Արևմուտքը... կարող է խաղաղ բարենորոգումների միջոցով իրագործել ընկերվարական ծրագիրը...»[30]։

Միայն գաղափարական սնանկ կուսակցությունն է ի վիճակի այսպիսի թռիչքներ կատարելու սոցիալ-դեմոկրատիայից դեպի իմպերիալիզմի դիրքերը և ընդհակառակը։

Առաջին դեպքում՝ դաշնակցությունը, ինչպես երևում է, սոցիալ-դեմոկրատիայի իդեալների պաշտպանի դերում է հանդես գալիս, թեկուզ և այդ իդեաները, ըստ նրա՝ պետք է կենսագործվեն... իմպերիալիզմի կողմից։

Երկրորդ դեպքում՝ հայտարարվում է, որ իմպերիալիզմը և սոցիալ-դեմոկրատիան միանում են։

Եվ վերջապես՝ երրորդ դեպքում դաշնակցությունը իր իդեալը, աշխարհի ապագան տեսնում է ԱՄՆ-ի իմպերիալիզմի մեջ, գրելով. «Ապագան, անկասկած, կը պատկանի ամերիկյան նոր տեսակի ազատ դրամատիրության...»[31]։

Մեր եզրակացությունները լրիվին հաստատվում են 1963 թ. աշնանը «Հայրենիք» թերթում հրապարակված և «Հուսաբեր»-ում արտատպված «Ոչ Արևմտյան ժողովրդապետություն, ոչ ալ համայնավարություն, այլ՝ ընկերվարություն» հոդվածով, որի հեղինակը գրում է. «Բնականորեն մեր համակրությունները Արևմտյան ժողովրդական ճակատին կերթային, առանց գործնապես տարբերություն մը դնելու այդ ճակատը կազմող ընկերվարական և դրամատիրա-

30 «Խոհեր հրատապ խնդիրների մասին», «Հայրենիք», № 8, 1949, էջ 90։

31 Ռ. Դարբինյան, Համայնավարությունը և դրամատիրությունը, «Հայրենիք», 13 մարտի, 1957։

կան կողմերու միջև: Տրամադրություններու ըմբռնելի այս ճիգումը իր հետ բերավ նաև տեսակետներու շփոթություն: Չկրցանք համայնավարություն և ընկերվարություն, և մյուս կողմե՝ ընկերվարություն և Արմատական ընկերվարություն գաղափարներու հիմնական տարբերությունները ճշտել և որոշել մեր տեղը»[32]:

Ինչպես տեսնում ենք, գաղափարախոսության բնագավառում տիրում է անհավոր խառնաշփոթություն: Դաշնակցությունը չունենալով ամբողջական գաղափարախոսություն, խճճվել է տարբեր ուսմունքների բեկորներից կազմված գործարին լաբիրինթոսում: «Մտածեցինք և գտինք,— շարունակում է հոդվածագիրը,— որ ընկերվարությունը ժամանակավրեպ բան մը դարձած է: Թե նախկին դասակարգային պայքարը անցք տված է կողմերու գործակցության: Թե՝ Ամերիկյան ժողովրդապետությունը հետզհետե կիրագործե ընկերվարության հետապնդած նպատակները»[33]: Նա հեգնում է, այդ տեսակետների կողմնակիցների բերած փաստարկները և եզրակացնում, որ «Փաստորեն այսօր մեզ համար (դաշնակցության —Լ. Խ.) գոյություն ունին միայն երկու ճակատներ, Արևմտյան ժողովրդապետական և համայնավարական: Մերժելով համայնավարությունը, մենք չկրցանք ճշտել ընկերվարության և արմատական ընկերվարության միջև գոյություն ունեցող հիմնական տարբերությունը և չմիացանք Արևմտյան ժողովրդապետական ճակատին»[34]:

Թերևս դաշնակցությունը կործանման անմիջական վտանգից փրկվեր նրանով, եթե կարեր իր կապերը միջազգային իմպերիալիզմից և գործնականում միանար խաղաղության համար պայքարող սոցիալ-դեմոկրատիայի ձախ տարրերին: Բայց ինչպես երևում է, դաշնակցությունը այդ ուղին բացառում է: Վերահիշյալ հոդվածի հրատարակումից հետո

32 Գ. Եսայան, Ոչ արևմտյան ժողովրդապետություն ոչ ալ համայնավարություն. այլ՝ ընկերվարություն, «Հայրենիք», 2 նոյեմբերի, 1963:

33 Նույն տեղում:

34 Նույն տեղում:

մամուլում նույն հարցի կապակցությամբ հանդես եկավ Ռ. Դարբինյանը՝ պաշտպանելով իր նախկին դրույթները։ Նա գրում էր. «Մինչ մեկ կողմե, ընկերվարականները հիմնական փոփոխության կենթարկեն իրենց դավանանքները և կը յուրացնեն շարք մը «ազատական» գաղափարներ, մյուս կողմեն ալ՝ ոչ ընկերվարականները և հակաընկերվարականները կը հրաժարին իրենց շարք մը «ազատական» դավանանքներեն և կյուրացնեն մեկե ավելի ընկերվարական գաղափարներ»[35]։

Դաշնակցությունը «փրկելով» իմպերիալիզմը, «փոխելով» նրա բնույթը, միաժամանակ, լավ իմանալով, թե, իր նվաճողական, ավազակային քաղաքականությամբ իմպերիալիզմը ինչքան է վարկաբեկված, ջանում է մի գնդակով երկու նապաստակ սպանել։ Նա իմպերիալիզմին համարելով ժողովրդական[36], սոցիալիզմն էլ համարում է... իմպերիալիստական։ «Ուրիշ խոսքով՝ Արևմուտքի իմպերիալիստները զգալի չափով մը դարձած են և հետզհետե բոլորովին կը դադրին իմպերիալիստ ըլլալե»[37],— գրում է Ռ. Դարբինյանը, ինքն էլ հույս չունենալով, թե որևէ մեկը կարող է հավատալ իրեն։

Եվ այնուհետև, տրամաբանորեն զարգացնելով այդ կեղծ դրույթը, դաշնակցությունը իմպերիալիզմի քաղաքականության հատուկ բոլոր երևույթները վերագրում է սոցիալիզմին։ Դաշնակցության ղեկավարները ձայն ձայնի տված կրկնում են իմպերիալիզմի տեսաբանների՝ պատմության կողմից վաղուց հերքված առասպելները «սովետական իմպերիալիզմի», «երկաթե վարագույրի», «սովետական գաղութակալության» և այլ նման զրպարտությունների մասին։

Որպեսզի քայքայեն միջազգային կոմունիստական ու

35 Ռ. Դարբինյան, Ընկերվարականները և անոնց դավանանքները, «Հայրենիք», 14 դեկտեմբերի. 1963։

36 Ռ. Դարբինյան, Ընկերվարությունը և արդի «կապիտալիզմը», «Հայրենիք», 1 դեկտեմբերի, 1959։

37 «Հայրենիք», 5 հոկտեմբերի. 1950։

բանվորական շարժումը, գաղութային, կիսագաղութային կամ իմպերիալիզմի լծից նոր ազատագրված երկրները հակադրեն սոցիալիստական երկրներին, հակակոմունիզմի ավետարանները և դաշնակ սպարապետները իրենց բազմաթիվ աշխատություններում կոկորդիլոսի արցունք են թափում՝ ողբալով Սովետական Միության ազգային հանրապետությունների «սև բախտը»: Սովետական պետությունը անվանվում է «գաղութային երկիր», իսկ ազգային հանրապետությունները՝ «գաղութներ»:

Դաշնակցականները, ինչպես գրում է Հնչակյան մամուլը, իրենց տիրապետության տապալումից հետո, արտասահմանում զազրախոսական պայքար ծավալելով Սովետական Միության դեմ, «ողբում» էին հայ ժողովրդի իբր թե «կորցրած անկախությունը», երկրի տնտեսական «քայքայումը» և ազգային մշակույթի «ոչնչացումը»: Սակայն, պատմության աննախընթաց զարգացումը միանգամայն հերքեց դաշնակցության հերյուրանքները[38]:

Ամերիկյան իմպերիալիզմը բոլոր միջոցներով ցանկանում է ապացուցել, որ Սովետական Միության մեջ մտնող ազգային հանրապետություններում սովետական կարգեր են հաստատվել ոչ թե հեղափոխության, այլ ռուսական զորքերի ուժով: ԱՄՆ-ի կառավարությունը ստեղծել է Կոնգրեսի «Բոլշևիկյան գրավումների քննիչ հանձնաժողով», որի նպատակն է հիմնավորել Սովետական Միության ազգային հանրապետությունների գաղութացման՝ իմպերիալիստների կողմից կյանքի կոչված վերսիան:

ԱՄՆ-ի Կոնգրեսի վերոհիշյալ հանձնաժողովի նիստը, նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի պայմանների «ուսումնասիրությանը», տեղի ունեցավ 1954 թ. հոկտեմբերի 13-ին, Նյու-Յորքի պետական դատարանում: Հանձնաժողովին վկայություններ տալու համար

38 «Թրքական օրիենտացիայի ջատագովները», «Սովետական Հայաստան», 11 հունվարի, 1955:

*հրավիրվել էին՝ Դրոն, Ռ. Դարբինյանը, Բ. Նավասարդյանը և Վ. Ահարոնյանը։*

*Հայտնի է, որ ԱՄՆ-ում ապրում է 250 հազար հայ՝ իր բազմաթիվ հասարակական, քաղաքական միություններով։ Ահա այդ կապակցությամբ էլ հարց է առաջանում, որ եթե իրոք ամերիկյան իմպերիալիզմը ցանկանում է օբյեկտիվորեն ուսումնասիրել Սովետական Միության ազգային հանրապետությունների սովետականացման պայմանները, ապա ինչո՞ւ է միայն դաշնակցականներին հրավիրել քննության, շրջանցելով 250 հազարանոց ամերիկահայ գաղութի բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպությունները և կուսակցությունները։*

*Սփյուռքահայ առաջադիմական ուժերը խորապես վրդովված էին։ «Հրապարակավ կուզեինք գիտնալ թե ով իրավունք տված է այս չորս հիմարներուն հայ ազգին անունով հայ հայրենիքին դեմ խոսելու, իրենց իժի թունավոր մաղձը սրսկելու Միացյալ Նահանգների պողոտաներուն վրա»[39],— գրում էին հնչակյանները։*

*Բայց «Բոլշևիկյան գրավումների հանձնաժողովը» ամերիկյան իմպերիալիզմի հակակոմունիստական գործունեության ամբողջ շղթայի միայն մեկ օղակն է։ ԱՄՆ-ում անց է կացվում նաև «Ճնշված ազգերի» շաբաթ, որի ժամանակ Սովետական Միության ազգային փոքրամասնությունների և ժողովրդական դեմոկրատիայի երկրների ժողովուրդների վտարանդիական կուսակցությունները հրավիրվում են, որ ամերիկյան բեմից խոսեն Սովետների դեմ[40]։ Հրավիրվում է նաև դաշնակցությունը։*

*«Ի՞նչ իրավունքով,— հարց է տալիս «Արարատ»-ը,— գայլ-Ամերիկան գառնուկի մորթով կը մոտենա ձագերու բույնին և կառաջարկե բանալ դռները իր առջև։*

---

[39] *«Ամերիկյան Քոնկրեսի քննիչ հանձնախումբը և Սովետ Հայաստանը», «Արարատ», 29 դեկտեմբերի, 1954։*

[40] *«Հրավիրված էր նաև հայ հեղափոխական դաշնակցությունը», «Արարատ», 5 օգոստոսի, 1959։*

Ի՞նչ սպասել ռուս և ֆրանսիացի կապիտալիստներու լուծեն ազատագրված Ղափանի, Ալավերդիի պղնձահանքերում աշխատավորները կրկին՝ իրենց վզին պիտի անցնեին օտար դրամատերերի ծանր լուծը:

Հայաստանի ազատագրության պաշտպանության մեջ անկարող գտնված, պարտված և դուրս վտարված Հ. Յ. Դաշնակցությունը ինչո՞ւ էր հրավիրել դոլլ-Ամերիկայի ժողովին՝ խոսելու «գերված» հայ ազգի հաշվույն: Ո՞վ է գերին, ո՞վ է գերել ավազը»[41]: Ամերիկյան իմպերիալիզմը, — գրում էին հնչակյանները,— եթե իրոք, անկեղծորեն ցանկանում է ազատագրել «հայ գերիներին», ապա դրա համար լայն հնարավորություններ կան հանձինս Արևմտյան Հայաստանի[42]:

Գաղտնիք չէ, որ իմպերիալիզմի լծից ազատագրված տնտեսապես թույլ զարգացած երկրներում սոցիալիստական պետությունները վայելում են մեծ հեղինակություն: Դարավոր ստրկությունից ազատագրված գաղութային և կիսագաղութային երկրների ժողովուրդները դեն նետած գերության շղթաները, մերժում են զարգացման կապիտալիստական ուղին և փնտրում երջանիկ կյանքի նոր ուղիներ: Բնական է, որ նրանց ուշադրությունը գրավում է նոր, երջանիկ հասարակարգի ստեղծման փորձը, ազգային հարցի լուծման եղանակը Սովետական Միությունում:

Ահա թե ինչու, իմպերիալիզմի գործակալները ճգնում են, կանգ չառնելով ոչ մի միջոցի առջև, վարկաբեկել սովետական հասարակարգը, նրա տապալումը համարել անխուսափելի, որպեսզի իմպերիալիզմի լծից ազատված ժողովուրդները չգնան սովետական ժողովուրդների ուղիով և ոչ միայն չգնան, այլև հրաժարվեն սոցիալիստական երկրների անկեղծ, եղբայրական օգնությունից, կտրեն բոլոր կապերը նրանց հետ և դրանով իսկ պայմաններ ստեղծեն իմպերիալիզմի կողմից նախկին գաղութային երկրների շահագործման նոր ձևերի կիրառման համար:

41 Նույն տեղում:

42 Նույն տեղում:

Դաշնակցությունը մերժվելով հայ ժողովրդի կողմից, քառասուն տարուց ավելի է թույն ու մաղձ է սփռում իր շուրջը՝ սովետական իշխանության տապալումը համարելով օրվա հարց: Երկար ժամանակ դաշնակցությունը իրեն սփոփում էր այն հույսով, թե սովետական իշխանության օրերը հաշված են: Իսկ հիմա՞... Իսկ հիմա, ավա՜ղ, այդ հույսերը հօդս են ցնդել: Այժմ հակակոմունիզմի ամենակատաղի ներկայացուցիչներն անգամ ընդունում են, որ սոցիալիզմի համաշխարհային սիստեմը դարձել է միջազգային զարգացման հիմնական գործոնը:

Հնչակյան կուսակցությունը ճիշտ է նկատել, որ դաշնակցականները, վտարվելով արտասահման, միջազգային ռեակցիայի հետ գործակցած՝ սովետական իշխանության մասին տարբեր շրջաններում տարբեր երգեր են երգել:

Առաջին շրջան. դաշնակները, ատամները սեղմած, այն միտքն էին անցկացնում, թե բոլշևիկներին թեև հաջողվեց գրավել իշխանությունը, սակայն նրանք այն երկար չեն կարող պահել իրենց ձեռքում: Հիմնական հույսը, իհարկե, դրվում էր ինտերվենցիայի վրա: Սակայն այդ հույսն ի դերև ելավ:

Երկրորդ շրջան. սկսվեց նոր երգ, թե իբր «... բոլշևիկները ոչ միայն չեն կարող Հայաստանի քայքայված տնտեսությունը վերականգնել, այլ ավելի կքայքայեն այն՝ սովամահության դատապարտելով ժողովրդին»[43]:

Երրորդ շրջան. երբ արդեն ժողովրդական տնտեսության վերականգնումը իրականացվել էր, դաշնակները առաջ քաշեցին այլ վերսիա, թե բոլշևիկները, ճիշտ է, կարողացան վերականգնել տնտեսությունը, բայց չեն կարող զարգացնել այն, նորը ստեղծել: Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանները լիովին հերքեցին այդ հերյուրանքները[44]:

---

43 «Թրքական օրիենտացիայի ջատագովները», «Սովետական Հայաստան», 18 հունվարի, 1955:

44 Նույն տեղում:

Եվ, իրոք, կոմունիստական կուսակցությունը ձեռնարկելով երկրի ինդուստրացումը, այդ բնագավառում հասավ մեծագույն հաջողությունների։ Իմպերիալիզմի տեսաբանները և դաշնակ պարագլուխները տեսնելով սովետական ժողովրդի ձեռք բերած խոշոր հաջողությունները, սկսեցին փնտրել նոր պատճառաբանություններ իրենց հակասովետական ագիտացիայի համար։

Շուտով հակակոմունիզմի տեսաբանների ջանքերով հրապարակ եկավ մի «տեսություն» ևս, որի նպատակն էր վարկաբեկել ինդուստրացման լենինյան քաղաքականությունը։ Բուրժուական սոցիոլոգներն իրենց բազմաթիվ աշխատություններում կաշվից դուրս են գալիս ապացուցելու, թե իբր երկրի ինդուստրացման սովետական մեթոդը վտանգում է ժողովրդի բարեկեցությունը և նրան տանում զրկանքների և կարիքի ծանր ուղիով։ Դա դեռ բավական չէ. ակնարկ է արվում նաև այն մասին, թե իբր ինդուստրացումը վտանգ է հանդիսանում ժողովրդի կուլտուրական ժառանգության, տրադիցիաների, սովորույթների և ազգին խիստ անհրաժեշտ այլ գործոնների համար։

Այս բոլորը արվում է այն նպատակով, որպեսզի գաղութային լծից ազատված ժողովուրդները վախենան ինդուստրացման լենինյան քաղաքականությունից և ընդմիշտ մնան իմպերիալիստական երկրներին հումք մատակարարողի դերում՝ փաստորեն հրաժարվելով ձեռք բերած անկախությունից։

Ով քիչ թե շատ ծանոթ է քաղաքատնտեսությանը, գրում է դաշնակցության օրգան «Հայրենիք» հանդեսը, նա գիտե, թե ինչ պայմաններում և ինչ միջոցներով է կատարվում ինդուստրացումը։ Դրամատիրական պետությունների ինդուստրացման պատմությունը ցույց է տալիս, որ այն կատարվում էր գաղութային ժողովուրդների շահագործման միջոցով ստացված գումարներից։ Սովետական Միությունը որտեղից է վերցնում այդ գումարները. «Ասոր միայն մեկ պատասխան կա՝ իր ժողովուրդն (բանվոր, գյուղացի, պետական պաշտոնյա)։

*Որպեսզի «90 տոկոսով» երկրագործական Ռուսաստան մը դառնա արդյունաբերական երկիր, «Հասնի ու գերազանցի Ամերիկան» և այն ալ քանի մը հնգամյակների ընթացքին, պետք է որ խորհրդային աշխատավորը շատ աշխատի և քիչ ուտի, ճիշտ այնպես, ինչպես կնեին իր այն նախորդները, որոնց քրտինքով ինդուստրացման ենթարկվեցին դրամատիրական երկրները»*[45]:

*Սովետական Միությունը առաջին երկիրն է, որի ժողովուրդներին բախտ վիճակվեց խորտակիչ հարված հասցնել իմպերիալիզմին և բռնել սոցիալիստական հասարակության կառուցման բարդ ու դժվարին ուղին: Սոցիալիստական հեղափոխությունը հաղթանակեց մի երկրում, որի առանց այն էլ հետամնաց ժողովրդական տնտեսությունը լրիվ քայքայված էր Առաջին համաշխարհային պատերազմի և քաղաքացիական կռիվների ժամանակաշրջանում: Աշխարհում միակ սոցիալիստական պետությունը շրջապատված էր կապիտալիստական երկրներով, որոնք քաղաքացիական կռիվները վերջանալուց հետո ևս, պարզ էր, որ երբեք առիթը բաց չէին թողնի արյան մեջ խեղդելու բանվորների և գյուղացիների, պատմության մեջ առաջին տերությունը: Ընտրություն չկար. սովետական ժողովուրդը կամ պետք է մեծ զոհողությունների, զրկանքների գնով ստեղծեր ծանր արդյունաբերություն, որպեսզի կարողանար պաշտպանել իր անկախությունը կամ պետք է հանձնվեր իմպերիալիզմի ողորմածությանը: Ինչպես և պետք էր սպասել, սովետական ժողովուրդը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, առանց տատանվելու ընտրեց երկրի ինդուստրացման ուղին՝ իր պատմական միսիան կատարելով գերազանցորեն:*

*Մարդկային հասարակության ապագա սերունդները դարեր և հազարամյակներ հետո մեծ երախտագիտությամբ կհիշեն սոցիալիզմ կառուցող սովետական մարդկանց առաջին*

---

45 *«Խոհեր հրատապ խնդիրների մասին», «Հայրենիք», № 9, 1949:*

սերունդներին, որոնք դժվարին պայմաններում շատ բան զոհեցին մարդկության հետագա երջանիկ կյանքի համար:

Իսկ այսօր, երբ մեր ժողովուրդը, հսկայական հաջողություններ ձեռք բերելով, մտել է կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանը, իմպերիալիզմի բանակից ինչ-որ պաճաճներ, փորձում են կասկածի տակ առնել քրտինքով ու աշխատանքային անձնազոհությամբ ձեռք բերված պատմական արդյունքների իրականացման համար մղված պայքարի ճշտությունը:

Թեկուզ և զոհողությունների գնով, բայց մեր ժողովուրդը այդ տարիներին դրեց ապագա սերունդների երջանիկ կյանքի հիմքը:

Կապիտալիստական երկրները ինդուստրացումը կատարել են գաղութային երկրների ժողովուրդների անօրինակ շահագործումից ստացված գումարներով: Սակայն այժմ մենք ապրում ենք XX դարի երկրորդ կեսում, երբ գաղութակալության լուծն են թոթափում վերջին գաղութները: Հարց է առաջանում, ապա ի՞նչ ուղղությամբ պետք է զարգանան նախկին գաղութները:

Եթե հետևենք դաշնակցության տրամաբանությանը, այդ երկրները պետք է հրաժարվեն ինդուստրացումից, քանի որ դրա համար միջոցներ չունեն: Սրանից բխում է նաև այն, որ տնտեսապես թույլ զարգացած երկրները քաղաքական անկախություն ստանալով, տնտեսապես կմնան իմպերիալիզմի տիրապետության տակ՝ նախկինի նման հանդիսանալով նրա շահույթի ստացման աղբյուրներից մեկը:

Ահա թե ինչի են ձգտում միջազգային իմպերիալիզմի տեսաբանները և դաշնակ լիդերները՝ վախեցնելով տնտեսապես թույլ զարգացած երկրներին ինդուստրացման քաղաքականությամբ:

Սակայն այսօր արդեն դժվար է խաբել և թյուրիմացության մեջ գցել տնտեսապես թույլ զարգացած երկրների ժողովուրդներին: Նրանց համար պարզ է, որ ազգային անկա-

խությունը պահպանելու ամենահիմնական գրավականը ծանր արդյունաբերության առկայությունն է երկրում:

Բայց դաշնակցությունը միայն մի ուղղությամբ չի գործում. նա խեղաթյուրելով ինդուստրացման լենինյան քաղաքականության իմաստը, միաժամանակ ողբում է «գաղութային» Հայաստանի «չար» բախտը, փորձելով դրանով վախեցնել իմպերիալիզմի լծից նոր ազատագրված երկրների ժողովուրդներին և նրանց թշնամաբար տրամադրել սոցիալիստական համակարգի նկատմամբ:

Բարեբախտաբար ժամանակները փոխվել են: Իմպերիալիզմի լծից ազատագրված ժողովուրդները դուրս գալով խավարից՝ հնարավորություն են ստացել գրականության կամ անձնական այցելությունների միջոցով համոզվելու, որ շնորհիվ սովետական իշխանության հաղթանակի, Սովետական Միության ազգային փոքրամասնությունները ձեռք են բերել պատմական խոշորագույն հաջողություններ:

Հայ ժողովրդի սովետական շրջանի պատմության թռուցիկ ուսումնասիրությունն անգամ հերքում է դաշնակ «տեսաբանների» հերյուրանքները*: Հայ ժողովուրդը, որը 1920 թ. կանգնած էր ֆիզիկական բնաջնջման վտանգի առջև, սովետական իշխանության տարիներին, իր կյանքի բոլոր բնագավառներում հասել է այնպիսի հաջողությունների, որոնց մասին շատ և շատ երկրներ միայն կարող են երազել:

Հայաստանի արդյունաբերական արտադրանքի ծավալը 1960 թ. մոտավորապես 70 անգամ գերազանցեց 1913 թ. արդյունաբերական արտադրության մակարդակը: Սովետական իշխանության տարիներին կառուցվեցին մոտ 500 գործարան, ֆաբրիկա և այլ արդյունաբերական ձեռնարկություններ:

Այժմ Հայաստանն ունի բազմաճյուղ արդյունաբերություն, որի մեջ առաջատար տեղ են գրավում լեռնահանքային արդյունաբերությունը և գունավոր մետալուրգիան, հաստո-

* Շարադրվում են սովետական իշխանության 40-ամյակի ամփոփիչ տվյալները:

ցաշինությունն ու սարքաշինությունը, էլեկտրատեխնիկական խոշոր գործարանները, թեթև և սննդի արդյունաբերական ձեռնարկությունները:

Հայաստանի արդյունաբերությունը թողարկում է՝ հաստոցներ, կոմպրեսորներ, գեներատորներ, ուժային տրանսֆորմատորներ, շարժական էլեկտրակայաններ, էլեկտրաշարժիչներ, ռելե, պղնձի և ալյումինի գլանվածք, մոլիբդենի, ցինկի կոնցենտրատներ, սինթետիկ կաուչուկ, ավտոդողեր, էլեկտրալամպեր, շինանյութեր, տրիկոտաժ, գինի, կոնյակ և արդյունաբերական արտադրանքի բազմաթիվ այլ տեսակներ: Հայաստանում արտադրվող մեքենաներն ու սարքավորումներն արտահանվում են Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի 57 երկրներ:

Մեծ նվաճումներ է ձեռք բերել նաև գյուղատնտեսությունը, որի համար հանրապետությունը պարգևատրվել Լենինի շքանշանով:

Հանրապետության ժողովրդական տնտեսությունը, պարզ է, չէր կարող զարգանալ առանց էլեկտրաէներգիայի: Այդ բնագավառում ևս ձեռք են բերվել լուրջ նվաճումներ: Հանրապետությունում 40 տարվա ընթացքում կառուցվել են ավելի քան 30 խոշոր ու միջին էլեկտրակայաններ, որոնք տալիս են տարեկան ավելի քան 2,7 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա: Դա 1,4 անգամ ավելի է, քան 1913 թ. արտադրվում էր ամբողջ՝ ցարական Ռուսաստանում: Սովետական Հայաստանը բնակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ հետ է թողել կապիտալիստական այնպիսի զարգացած երկրների, ինչպիսիք են Ֆրանսիան, Ճապոնիան և Իտալիան:

Պատկերը ավելի վառ է դառնում, երբ հայ ժողովրդի ձեռք բերած հաջողությունները փորձում ենք համեմատել նրա հարևան երկրների արդի վիճակի հետ: Հայաստանում բնակչության մեկ շնչին բաժին է ընկնում 15 անգամ շատ էլեկտրաէներգիա, քան Թուրքիայում, 41 անգամ շատ, քան Իրանում: Իսկ չէ՞ որ այդ երկրները գտնվում են դաշնակցության

գովաբանած «ազատ աշխարհում», որը հանդիսանում է նրա «իդեալը»:

Սակայն դրանով չեն սպառվում սովետական իշխանության տարիներին հայ ժողովրդի ձեռք բերած հաջողությունները: Երբեմնի հետամնաց, արյուն-արցունքով ողողված հայոց աշխարհը այսօր լիովին փոխել է իր դեմքը: Դարերի խորքից եկած, դարերի փորձով իմաստնացած տաղանդավոր հայ ժողովուրդը, փրկված թուրքական յաթաղանից, այս քառասուն տարիների ընթացքում, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ստեղծագործում է ի փառս սոցիալիզմի ու կոմունիզմի նորանոր հաղթանակների:

Հայաստանում սովետական իշխանության տարիներին տեղի է ունեցել կուլտուրական հեղափոխություն: Հանրապետությունը պատվել է դպրոցների, տեխնիկումների, բուհերի և գիտահետազոտական հիմնարկների խիտ ցանցով:

Այժմ հանրապետության 1219 դպրոցներում սովորում է մոտ 320 հազար երեխա, այն ժամանակ, երբ մինչև հեղափոխությունը դպրոց էր հաճախում ընդամենը 35 հազար երեխա: Եթե մինչև հեղափոխությունը Հայաստանում ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն չկար, ապա ներկայումս գործում են 11 բուհեր և 38 տեխնիկումներ, որոնցում սովորում են 37 հազար ուսանողներ: Դպրոցներում, տեխնիկումներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումն անվճար է: Դեռ ավելին. տեխնիկումներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողները թոշակ են ստանում:

Սփյուռքահայությունը հիանալի գիտե, թե ինչ դժվարությունների հետ է կապված երեխաների ուսման հարցը: Շատերի համար առանձնապես անհասանելի է բարձրագույն կրթությունը, որովհետև այն կապված է լուրջ նյութական դժվարությունների հետ: Ինչ վերաբերում է այդ հարցը լուծելու ուղղությամբ, Հայոց ընդհանուր բարեգործական միության և այլ կազմակերպությունների ջանքերին, ապա դրանք

կաթիլներ են, որոնցով չի հագենա ուսման ծարավի հայ երիտասարդության ամենափոքր մասն անգամ:

Այդ մասին են խոսում սփյուռքահայ երիտասարդներից ստացված բազմաթիվ նամակները: Օրինակ, 1915 թ. հունիսի 18-ին Միքայել Փափազյանը, Հարություն Տեր-Պողոսյանը և Հակոբ Նարաշխարհյանը Հալեպից Սովետական Հայաստան ուղարկած նամակում արցունքն աչքերին խնդրում էին թույլ տալ իրենց ներգաղթել և սովորել Երևանի պետական համալսարանում: «Եվ մենք կը պահանջենք,— ասվում է նամակում,— հանուն որդիական իրավունքներու, հանուն հայրենասիրած զավակներու իդեալներու զոհացման արդար հատուցումի՝ Հայրենի պետությունեն մեր երազին իրականացումը: Կը պահանջենք, անշուշտ, այնպես, ինչպես զավակը իր հորմեն... Այսպես. մենք՝ մահվան հետին հարվածը ստացած կըլլանք արդեն: Կը մեռնինք Հայրենիքի և ուսումի կարոտը մեր բաց աչքերուն: Այսպես մենք կը դառնանք փուշի, մենք կը դառնանք անիմաստ»[46]:

1946 թ. մարտին, 21 տարեկան իրանահայ Հրանտ Համբարձումյանը հայրենիք վերադառնալու և կրթություն ստանալու մասին գրում էր. «Ծնողներիս նյութական աննպաստ պայմանների և ահավոր «հացի խնդրի» հարկադրանքի տակ թողնում եմ դպրոցը, արտասվալից աչքերով, ինքնակրթությամբ լրացնելու համար պակասը: 6 տարի է թափառում եմ արհեստից արհեստ, գործից գործ, միայն մեր օրվա ծախսերը հոգալու համար, 12 ժամվա տաժանակիր աշխատանքից հետո աշխատում եմ ինքնակրթությամբ. նավթի ճրագի աղոտ լույսի տակ նվաղում է աչքերիս լույսը, դարձնելով ինձ կարճատես, խնայած կոպեկներս (որ այնքան անհրաժեշտ են մեր ընտանիքի բազմազան ծախսերի համար) չեն բավարարում գրքերի գնման, զբաղվում եմ վարձու թարգմանությամբ, նույնպես չի բավարարում, ուստի, դառնացած կյանքից, թողնում եմ գիրն ու գիրքը»[47]: Բերված երկու նամակները ցույց են

46 Հայկական ՍՍՀ ՀՈՍՇ ՊԿԱ., ֆ. 362, ցուց. 2, գ. 3, թ. 70։
47 Նույն տեղում, գ. 17, թ. 15—16։

տալիս այն թշվառ վիճակը, որի մեջ գտնվում է ուսման ծարավի թյուրքահայ երիտասարդությունը:

Սովետական գիտությունը այսօր դարձել է ամենաառաջավորն աշխարհում, ձեռք բերելով հսկայական հաջողություններ: Հայ առաջավոր գիտնականները, որոնց անունները վաղուց դուրս են եկել Սովետական Միության սահմաններից, նույնպես մասն ունեն մեր գիտության ձեռք բերած պատմական նվաճումներում:

Հայաստանում այժմ գործում են 79 գիտահետազոտական հիմնարկներ, որոնցում աշխատում են 4300 գիտական աշխատողներ, գիտությունների 166 դոկտորներ և 1502 թեկնածուներ:

Այդ գիտական հիմնարկներում բազմաթիվ հայ գիտնականներ ուսումնասիրում են հայ ժողովրդի և նրա մշակույթի բազմադարյան պատմությունը՝ սկսած նրա ծագումից մինչև մեր օրերը: Մեր գիտնականները մեծ հաջողություններ են ձեռք բերել նաև միջուկային ֆիզիկայի, աստրոֆիզիկայի, աստղագիտության, մաթեմատիկայի, հաշվողական տեխնիկայի, կիբեռնետիկայի, քիմիայի և համաշխարհային գիտական միտքը զբաղեցնող բազմաթիվ կարևոր այլ պրոբլեմների ուսումնասիրման բնագավառում:

Հայ ժողովրդի ձեռք բերած հաջողություններին զուգընթաց, զարգացել են մամուլը և գրահրատարակչական գործը, հանրապետությունը պատվել է գրադարանների լայն ցանցով: Ռադիո-ընդունիչը դարձել է ամեն մի ընտանիքի հոգևոր կյանքի անբաժանելի մասը: Ռադիոյի կողքին իր տեղն է գրավել նաև հեռուստացույցը:

Եթե 1913 թ. Հայաստանում կար 13 գրադարան 9000 կտոր գրքով, ապա 1960 թ. միայն մասսայական գրադարանների թիվը անցել է 1140-ից, որոնց ֆոնդը կազմում է 7 միլիոն հատոր:

Հայ մշակույթն իր բազմադարյան պատմության ընթացքում երբեք զարգացման այսպիսի աստիճանի վրա չի եղել:

Այս բոլոր հաջողությունները ապահովեցին մեր ժողովրդի

նյութական բարեկեցության վերելքը: Զգալիորեն բարելավվել է աշխատավորների բնակարանային-կենցաղային դրությունը:

Նախահեղափոխական, գավառային փոքրիկ Երևանը իր 30 հազար բնակիչներով, դարձել է անճանաչելի: Այն իրոք աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից մեկն է, որի բնակչությունն արդեն անցել է 600 հազարից: Նույնպիսի տեմպերով աճել ու զարգացել են հանրապետության մյուս քաղաքները: Հանրապետության տարբեր վայրերում, ժողովրդական տնտեսության զարգացման զուգընթաց, ստեղծվել են մեծ թվով նոր, գեղեցիկ սոցիալիստական քաղաքներ ու ավաններ:

Արմատապես փոխվել է առողջապահության վիճակը: Եթե 1913 թ. Հայաստանում կար 6 հիվանդանոց՝ 73 բժշկով, ապա այժմ հանրապետությունում աշխատում է 4500 բժիշկ կամ յուրաքանչյուր 10 հազար բնակչին ընկնում է 2 անգամ ավելի շատ բժիշկ, քան ԱՄՆ-ում, 2 անգամ շատ, քան Անգլիայում, մոտավորապես 9 անգամ շատ, քան Թուրքիայում և 14 անգամ շատ, քան Իրանում: Այդ կապակցությամբ պետք է ավելացնել նաև այն, որ բուժումը Սովետական Միությունում ձրի է: Առողջապահության բնագավառում գոյություն ունեցող այդ նվաճումը ձեռք է բերված միայն սոցիալիստական կարգերի շնորհիվ:

Փոխվել է կյանքը, խիստ կրճատվել է մահացությունը: Քառասուն տարում Հայաստանի բնակչությունը աճել է մոտ 2,5 անգամ, և 1962 թ. հասել 2 միլիոնի[48]:

48 Սովետական իշխանության տարիներին հայ ժողովրդի պատմական նվաճումների մասին տվյալները շարադրելիս օգտվել ենք հետևյալ աղբյուրներից.

ա) Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի և Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հանդիսավոր նիստը

Նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման և Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորման քառասնամյակին: (6 մայիսի, 1961 թ.), սղագրական հաշվետվություն, Երևան, 1961:

բ) Վ. Համբարձումյան, Գիտությունը Հայաստանում քառասուն տարում, Երևան, 1960:

*Սովետական իշխանության տարիներին հայ ժողովրդի ձեռք բերած հաջողությունները, ինչպես տեսնում ենք, չափազանց մեծ են։*

*Սակայն կապիտալիստական աշխարհում ո՞վ է հաշվի նստում փաստերի հետ, որ դաշնակցականները նստեն։ Համոզված, որ, իրոք, արդի պայմաններում անմիտ բան կլինի Հայաստանի բարգավաճման փաստի հերքումը, դաշնակցականներն իրենց հակասովետական պրոպագանդայի առանցքը դարձնում են այն, թե իբր հանրապետությունում կառուցված հարյուրավոր գործարանները ոչ մի առնչություն չունեն հայ ժողովրդի հետ, ուստի չեն բարելավում նրա դրությունը։*

*Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանը՝ այն կա, իհարկե, հեգնանքով գրում է «Հայրենիք» հանդեսը, սակայն պարզ չէ, թե ո՞ւր է գնում նրա արտադրանքը։ Մինչև այժմ նա մեկ զույգ կրկնակոշիկ չի տվել անգամ «ոտաբոբիկ հայի ոտքերը ծածկելու համար»[49]։ Երկիմաստորեն չի ասվում, դաշնակցականների հիմնական նպատակն է ապացուցել, թե իբր Հայաստանում թագավորում է սովն ու աղքատությունը։*

*Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը միշտ էլ համարձակորեն խոսել են բոլոր այն դժվարությունների և թերությունների մասին, որոնք գոյություն են ունեցել և ունեն մեր երկրում։*

*Մենք չենք թաքցնում, իրոք, եղել է ժամանակ, երբ հայ գյուղացին ցնցոտիների մեջ էր և ոտաբոբիկ, այո կային ժամանակներ, երբ դժվար էր մի կտոր հաց ճարել, դա սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո էր։ Բայց ո՞վ էր մեղավորը։ Չէ՞ որ իրենց սխալ քաղաքականու-*

---

*գ)* «Культурное строительство Армянской ССР (статистический сборник)», Ереван, 1962.

*դ)* «Итоги всесоюзной переписи населения 1959 года, Армянская ССР», Москва, 1963.

*ե) Սովետական Հայաստանը 40 տարում, վիճակագրական ժողովածու, Երևան, 1960։*

*զ) «Հայկական ՍՍՌ ատլաս», Երևան—Մոսկվա, 1961։*

49 Ս. Հայ, *Հայությունը խորհրդային իշխանության տակ, «Հայրենիք», №. 9, 1949։*

*թյամբ Հայաստանը լիովին քայքայեցին, իսկ հայ ժողովրդին սովամահության գիրկը նետեցին նույն այսօրվա դաշնակ տե-սաբանները։*

*Եվ հիմա, սովետական իշխանության հաստատումից ա-վելի քան 43 տարի հետո, դաշնակցության լիդերները հայ գյուղացուն ձգտում են ներկայացնել այն թշվառ վիճակում, որի մեջ նրան թողել են իրենք։ Որպեսզի կեղծիքը ավելի «հիմնավորված» լինի, դաշնակցությունը դիմում է մի ավելի աղաղակող ստի, թե իբր սփյուռքահայ տուրիստներին մայր հայրենիքում թույլ չի տրվում լինել իրենց ցանկացած վայրե-րում։*

*Բոլորովին անիմաստ կլիներ դաշնակներին հերքելու հա-մար նման հարցերի կապակցությամբ ավելորդ թվերով ու փաստերով ծանրաբեռնել աշխատությունը։*

*Սակայն շարունակենք։ Հայրենիքը բոլոր հնարավորու-թյունները ընձեռում է սփյուռքահայ տուրիստների համար՝ այցելելու Հայաստան և ազատորեն ծանոթանալու հայ ժողո-վրդի նվաճումներին։ Մինչդեռ երբ Հայաստանից վերադար-ձած սփյուռքահայ տուրիստները գովաբանական խոսք են ա-սում մեր ժողովրդի ձեռք բերած հաջողությունների մասին, իսկույն ևեթ ենթարկվում են դաշնակ «տեսաբանների» պար-սավանքներին, որոնցով լեցուն է այդ կուսակցության մամուլը։*

*Հայաստան այցելելուց հետո արտասահմանում մեր հանրապետության մասին դրական տպավորություններով հանդես գալու պատճառով դաշնակցության հալածանքներից չազատվեցին ո՛չ Անդրանիկ Ծառուկյանը, ո՛չ Վահան Նաթա-լին և ո՛չ էլ այդ կուսակցության կողմից մինչև երկինք բարձ-րացված գրող Կոստան Զարյանը։*

*Խոսելով դաշնակցության ղեկավարների հակասովետա-կան պրոպագանդայի մասին, չպետք է անուշադիր թողնել նաև այն, որ այդ կուսակցության շատ ու շատ ղեկավար գործիչ-ներ իրենց սրտի խորքում վաղուց ընդունում են Սովետական Հայաստանի ձեռք բերած պատմական հաջողությունները, ժողովրդական տնտեսության և մշակույթի բնագավառում։*

Այդ մասին շատ բան է պատմում դաշնակցության ղեկավար գործիչներից Սահակ Տեր-Թովմասյանի նամակը իր եղբորը. այնտեղ ասվում է. «Ես հպարտ կը զգամ իմ ժողովրդով, ծաղկող և երջանիկ հայրենիքով: Ուրախ կը զգամ, որ դուն անմիջապես կը մասնակցիս նոր կյանքի ստեղծման գործին մեջ:

Քեզի իմ եղբորը, կրնամ այս ըսել, բայց այդ չեմ կրնար ըսել հոս»[50]:

Իր հակասովետական հերյուրանքներում դաշնակցությունը «հարվածի» տակ է առնում կուլտուրական շինարարությունը, սովետական մարդը, ընտանիքը:

Չկարողանալով հերքել կուլտուրական շինարարության բնագավառում ձեռք բերված հաջողությունները, դաշնակցականները չարախոսում են այն մասին, թե իբր սովետական մարդիկ կարող են պարծենալ լոկ դպրոցների քանակով, իսկ ինչ վերաբերում է որակին, ապա այդ հարցում այն «ետ է մնացած» և «ունի շատ տխրավոր կողմեր»[51]:

Ինչպես հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, այնպես էլ դպրոցական շինարարության մեջ հնարավոր են և գոյություն ունեն թերություններ, սակայն խոսել դպրոցների ետ մնալու մասին մի երկրում, որը գիտության, տեխնիկայի և, ընդհանրապես, կուլտուրական շինարարության զարգացման բոլոր բնագավառներում ընթանում է առջի էշելոնի ավանգարդում, բացարձակ անմտություն է: Մեր երկրում են ապրում և գործում բազմաթիվ աշխարհահռչակ գիտնականներ, մշակույթի ամենատարբեր բնագավառների խոշորագույն գործիչներ, որոնք սովետական դպրոցի սաներն են եղել:

Մի՞թե մի երկիր, որը հետամնաց դպրոցներ ունի, կարող է համարվել առաջավոր և, այդ դեռ բավական չէ, տալ բազմաթիվ համաշխարհային մեծություններ: Բնական է, որ ոչ:

---

50 «Սահակ Տեր-Թովմասյանի նամակը», «Լրաբեր», 13 սեպտեմբերի, 1958:

51 Հովակիմ Առշակունի, Խորհրդային դպրոցը և խորհրդային ուսուցիչը, «Հայրենիք», № 11, 1950, էջ 41:

Նման չարախոսություններ անելով Սովետական Միության և, մասնավորապես, Հայաստանի մշակութային կյանքի տարբեր բնագավառների մասին, դաշնակցությունը, իր կրակը ուղղում է նաև սովետական մարդու բարոյական նորմաների և ընտանիքի դեմ[52]: Մարդը կործանվում է, ընտանիքը քայքայվում, ողբում են դաշնակցականները:

Փորձենք համեմատություն անցկացնել ՍՍՌՄ-ի և կապիտալիստական առաջավոր երկրների միջև ամուսնությունների և ամուսնալուծությունների գծով: 1959 թ. տվյալներով 1000 հոգուն ՍՍՌՄ-ում ընկնում է 12,2, ԳՖՌ-ում՝ 9, 1, ԱՄՆ-ում՝ 8,5, Անգլիայում՝ 7, 5, Ֆրանսիայում՝ 7, 1 ամուսնություն: Ահա թե ինչպիսի արագությամբ է ընթանում ընտանիքի կազմավորման պրոցեսը Սովետական Միությունում: Նույն 1959 թ. տվյալներով, տասը հազար հոգուն ընկնող ամուսնալուծությունների քանակը ՍՍՌՄ-ում հասնում է 11-ի, իսկ իմպերիալիզմի միջնաբերդ ԱՄՆ-ում՝ 22-ի[53]:

Տարբեր երկրներում հրատարակված պաշտոնական տվյալների հիման վրա կատարվող այս համեմատությունը ցույց է տալիս, թե որտեղ է ընտանիքը ամուր՝ մեզ մոտ, թե՞ կապիտալիստական աշխարհում:

Դաշնակցության նմանօրինակ վարքագծի նպատակը պարզ է՝ սովետահայ իրականությունը նկարագրել սև գույներով, որպեսզի սփյուռքահայությունը հիասթափվի, հեռու կանգնի իր մայր Հայրենիքից:

Չէ՞ որ Հայաստանում ձեռք բերված պատմական նվաճումներին զուգընթաց, սփյուռքահայությունն ավելի ու ավելի մեծ սիրով է կապվում մայր Հայրենիքին, մի բան, որը նշանակում է դաշնակցության վերջնական կրախ: Հարցի այս կողմը ճիշտ են նկատել ռամկավարները, որոնք գրում են. «Ամեն մի մուրճի հարվածը, որը Հայաստանում մի շենք, մի գործարան է կառուցում, մի մեխ է խփում դաշնակցության գաղութային դագաղին: Եվ այդ է պատճառը, որ Հայաստանի

---

52 «Հայրենիք», № 1, 1958:

53 П. Г. Подъячих, Население СССР, Москва, 1961, стр. 25—26.

ամեն մի շինարարությունը ջղայնացնում է ձեր խաբված ղեկավարներին»[54]:

Ավելին. իր սովորության համաձայն, գնալով կեղծիքի ուղիով և պետության ստեղծման ֆեդերատիվ սկզբունքների հարցում հանդես բերելով տգիտություն, դաշնակցությունը փորձում է ապացուցել Հայաստանի «գաղութային» վիճակը նրանով, որ վերջինս արտաքին աշխարհի հետ դիվանագիտական, առևտրական, մշակութային կապեր չունի և զրկված է Սովետական Միության կազմից դուրս գալու իրավունքից:

Սովետական Միությունը հավասար իրավունքներ ունեցող, ազգային սկզբունքներով ստեղծված, միութենական սուվերեն հանրապետությունների կամավոր միություն է: Ամեն մի ազգային հանրապետություն իրավունք ունի դուրս գալու ՍՍՌՄ-ի կազմից: Անհավատները կարող են այդ մասին համապատասխան տեղեկություններ քաղել ՍՍՌՄ և Միութենական հանրապետությունների սահմանադրություններից:

XX դարի երկրորդ կեսում շատ քչերը կարող են գտնվել, որոնք չիմանան, թե ֆեդերացիայի պայմաններում ստեղծվում է կենտրոնական կառավարություն, որի իրավասությանն է անցնում, իհարկե կամավոր, ազգային հանրապետությունների իրավունքների մի մասը:

Պարզվում է, որ դաշնակ «քաղաքագետ» Խաթանասյանը, գաղափար չունենալով այդ տարրական ճշմարտության մասին, ամենայն լրջությամբ բողոքում է և բամբասում, որ Հայաստանը արտաքին աշխարհի հետ դիվանագիտական, առևտրական և մշակութային առանձին կապեր չունի[55]:

Իսկ այդ ո՞ր ֆեդերատիվ պետության մեջ միավորվող ազգերն են արտաքին աշխարհի հետ այդպիսի կապեր ունեցել: Այդպիսի կապեր գոյություն չեն ունեցել և չեն էլ կարող գոյություն ունենալ: Ամբողջ ֆեդերատիվ պետության համար կարևորագույն նշանակություն ունեցող հարցերը լուծվում են

---

54 Ա. Զրշյան, Դաշնակցությունը ապազգայնացած է. իր ձուկը բռնում է Պարիզում, «Զարթոնք», 19 ապրիլի, 1957:

55 «Հայրենիք», 18 սեպտեմբերի, 1958:

*կենտրոնական կառավարության կողմից, ինչպես, ֆեդերացիայի մեջ մտնող ազգային հանրապետությունների համաձայնությամբ:*

*Սովետական Միությունը, և ոչ միայն Սովետական Միությունը, այլև բոլոր ֆեդերատիվ սկզբունքներով առաջնորդված պետությունները, արտաքին աշխարհի հետ կապ են պահպանում մեկ դեսպանի և դեսպանատան միջոցով, և ոչ թե այն քանակով, որքան ազգային հանրապետություններ կան տվյալ պետության կազմում:*

*Սակայն այն, որ Հայաստանը արտասահմանյան երկրներում իր դեսպանատները կամ դեսպանները չունի, դեռևս ոչինչ չի նշանակում: Բարեխիղճ լինելու դեպքում դաշնակ ղեկավարները, հավանական է, կնկատեին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունում և բազմաթիվ դեսպանատներում աշխատող մեծաքանակ հայ դիվանագետների, որոնք իրականացնում են մեր երկրի ազգերի շահերից բխող լենինյան արտաքին քաղաքականությունը:*

*Ինչ վերաբերում է մշակութային կապերին, ապա դաշնակցականները այդ մասին ևս հարկ են համարում չարախոսել: Սովետական Հայաստանը մշակութային սերտ կապեր ունի արտասահմանի հետ, որի իրականացման համար էլ կյանքի է կոչված Արտասահմանյան երկրների հետ բարեկամության կուլտուրական կապի հայկական ընկերությունը: Վերջերս հիմնադրվեց նաև Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե:*

*Մի՞թե գաղտնիք է, որ աշխարհի շատ ժողովուրդներ են բավականություն զգացել լսելով հայ երգն ու երաժշտությունը: Տարի չի լինում, որ Արամ Խաչատրյանը, Պավել Լիսիցյանը, Զարուհի Դոլուխանյանը, Գոհար Գասպարյանը և շատ ուրիշներ չլինեն արտասահմանի բազմաթիվ երկրներում՝ հայ երգի ու երաժշտության հիասքանչ մեղեդին հնչեցնելով աշխարհով մեկ: Իսկ Հայաստանի երգի-պարի, պարի պետական անսամբլների, Էստրադային նվագախմբի, Կոմիտասի անվան*

կվարտետի և այլ բազմաթիվ ստեղծագործական կոլեկտիվների արտասահմանյան հանդիպումները...

Մոռացե՞լ են արդյոք դաշնակցականները Հայաստանի երգի-պարի անսամբլի համերգները Մերձավոր արևելքի երկրներում, որոնք գերեցին ու ցնցեցին տեղի երաժշտասեր հասարակությանը:

Բացի այս բոլորից, արտասահմանում հաճախակի են լինում հայ գիտնականները, գրողները և արվեստագետները: Եթե դաշնակցականները բարեխղճություն ունենային հետևելու աշխարհում տեղի ունեցող ամենաբազմազան գիտական հավաքույթների մասնակիցների ազգային կազմին, ապա կտեսնեին, թե ինչպիսի ակտիվ մասնակցություն են ցույց տալիս հայ գիտնականները համաշխարհային գիտության զարգացմանը:

Աչքառու է այն, որ դաշնակցությունը մի կողմից քննադատում է, թե Հայաստանը մշակութային կապեր չունի արտասահմանյան երկրների հետ, մյուս կողմից՝ օբյեկտիվորեն դեմ է դուրս գալիս դրանց ծավալմանը, պնդելով թե դրանք ավելի օգուտ են Արևելքին, քան Արևմուտքին: Համաձայն դաշնակցության «հայտնագործության», ՍՍՌՄ-ից որպես տուրիստներ արտասահման մեկնող մշակույթի գործիչները քաղաքական նպատակներ ունեն, իսկ Արևմուտքինը՝ ոչ:

Նրանք ուղղակի այսպես էլ գրում են, թե իբր Արևմուտքից Արևելք գնացողներն իսկական տուրիստներ են, իսկ Արևելքից Արևմուտք՝ ոչ թե իրենց հաճույքով ու գործերով են գնում, այլ կառավարության դրամով ու հրահանգներով՝ գաղտնի նպատակներ հետապնդելու: Չբավարարվելով դրանով, դաշնակցականները շարունակում են, թե իբր սովետական երկրում տուրիստները իրավունք չունեն շփվելու բնակչության հետ, իսկ Արևմուտքում՝ լիովին ազատ են իրենց շրջագայության պլանները որոշելիս[56]:

Այս հերյուրանքը դաշնակցությունը փոխ է առել միջազ-

[56] «Արևմուտքի և Արևելքի մշակութային ներկա փոխանակությանց արժեքը», «Հուսաբեր», 22 ապրիլի, 1959:

դային բուրժուազիայի պրոպագանդիստական զինանոցից, որը կյանքի է կոչված Սովետական Միությունում «երկաթե վարագույրի» առասպելը հաստատելու համար:

Ամեն մի հասարակարգ, ինչպես էլ որ այն կատարյալ լինի, անկասկած կունենա բացեր ու թերություններ, որոնք դառնում են նրա հակառակորդների քննադատության թիրախը: Սակայն, դաշնակցությունը դրանց մասին չէ որ խոսում է, այլ այնպիսի երևույթների, որոնք մեր հասարակարգում երբեք չեն կարող տեղ գտնել:

Ամեն տարի տուրիստական ուղեգրերով Սովետական Հայաստան են ժամանում բազմաթիվ սփյուռքահայեր՝ մայր Հայրենիքը և բարեկամներին տեսնելու: Սփյուռքահայ մեր այցելուներին թույլ է տրվում ոչ միայն ազատորեն շրջագայելու ամբողջ Հայաստանում, այլև, ընդհանրապես, իրենց ամբողջ ժամանակը անցկացնելու բարեկամների և ծանոթների շրջանում: Տողերիս հեղինակը անձնապես ծանոթ է մեծ թվով սփյուռքահայ տուրիստների հետ, որոնք իրենց ամբողջ ժամանակը անց էին կացնում բարեկամների մոտ:

Այնպես որ, «երկաթե վարագույրի» մասին, բուրժուական պրոպագանդայի ստեղծած առասպելը դժվար թե որևէ մեկին կարողանա թյուրիմացության մեջ գցել: Հետպատերազմյան շրջանում տուրիստների մասսայական այցը Սովետական Միություն և Հայաստան լիովին հերքեց «երկաթե վարագույրի» առասպելը և ապացուցեց, որ այն հատուկ է ոչ թե սոցիալիստական, այլ կապիտալիստական սիստեմին:

Սփյուռքահայ առաջադիմական ուժերի ներկայացուցիչները, այցելելով Հայաստան, համոզվեցին, որ իրոք, «երկաթե վարագույրը» առասպել է՝ կյանքի կոչված բուրժուական պրոպագանդայի կողմից աշխատավոր մասսաներին թյուրիմացության մեջ գցելու համար: «Երկաթե վարագույրը,— գրում է «Արարատը»,—կրնա ըլլալ հոն, ուր՝ մութի ու խորհրդավորության մեջ, ոճիրներ և դավեր կը հղացվին: Երկաթե վարագույր քաշված կրնա ըլլալ այն թատերաբեմերուն առջև, ուր՝ մարդկությունը երրորդ պատերազմի մը սարսափով համակելու

պլանը կործանվի։ Երկաթե վարագույրի պետք ունեին անոնք, որոնք կեղծիքի իշխաններ, պատերազմի մունետիկներ, ատելության սերմանումներով ժողովուրդները իրարու դեմ հրահրող գործակալներ են պարզապես։ Մինչ տարիներով հանկերգված «երկաթե վարագույր»-ին անդին, ամեն ինչ հստակ է ու պայծառ, անկեղծ և հասկանալի ուղեղներուն համար»[57]։

Սովետական Միության ժամանած տուրիստների մեջ երբեմն պատահում են «հետաքրքրասերներ», որոնք փոխանակ տեսարժան վայրերը դիտելու, «պատահաբար» ռազմական օբյեկտների կամ գործարանների շուրջն են պտտվում։ Վերջին տարիներս սովետական ժողովրդական դատարանները դատեցին մի քանի «տուրիստների», որոնք մեր երկրին էին եկել ռազմական գաղտնիքներ հավաքելու և նմանօրինակ այլ հանձնարարություններով։

Դաշնակցականները այդ մասին չեն խոսում. չէ՞ որ այդ ձեռնտու չէ Արևմուտքին։ Բայց միաժամանակ նրանք անօգուտ ջանքեր են թափում ապացուցելու, թե իբր արտասահման մեկնող սովետական արվեստի կամ գիտության աշխատողները տուրիստներ չեն։ Իսկ փաստե՞ր, ավա՜ղ, փաստերը բացակայում են։

Դաշնակցությունը արտասահմանում վարկաբեկում է սփյուռքահայ առաջադիմական, դեմոկրատական ուժերին, նրանց անվանում «հինգերորդ զորասյուն». ուստի և բոլորովին էլ զարմանալի չէ, որ նման քաղաքականություն նա վարում է նաև ՍՍՌՄ-ից ժամանած տուրիստների նկատմամբ։ Եվ դա հասկանալի է, չէ՞ որ սովետական արվեստի և գիտության աշխատողները, ժամանելով արտասահման, ցույց են տալիս այն մեծագույն հաջողությունները, որոնք ձեռք են բերել ցարական Ռուսաստանի ժողովուրդները սովետական իշխանության տարիներին։ Ոգևորված աշխատավոր մասսաներին հիասթափեցնեն, վախեցնեն, հեռու պահեն սովետական մարդկանցից, դաշնակցականները, ձայնակցելով իմպերիա-

[57] «Երկաթե վարագույրի թափանցկությունը», «Արարատ», 5 օգոստոսի, 1955։

լիզմի պրոպագանդիստական մեքենային, նրանց անվանում են «ազգային նպատակներ հետապնդողներ»:

Սակայն ոչինչ չի օգնում. չնայած պաշտոնակցության ճիգերին, «հատուկ նպատակ հետապնդող» Հայաստանի երգի-պարի անսամբլը դյութում ու հմայում ոչ միայն Մերձավոր արևելքի հայությանը, այլև արաբներին: Սփյուռքահայությունը մեծ սիրով է ընդունում մայր Հայրենիքից ժամանած ոչ միայն արվեստի և գիտության գործիչներին, այլև բոլոր տուրիստներին: Ի վերջո ավելորդ չի լինի Ն. Խաթանասյանին հիշեցնել և այն, որ հայ ժողովուրդը տվել է նաև հիանալի զորավարներ, գիտության ու մշակույթի, կուսակցական ու պետական բազմաթիվ ականավոր գործիչներ, որոնք ակտիվորեն մասնակցում են Սովետական Միության քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի ղեկավարմանը:

Ազգային փոխհարաբերությունների բոլոր հարցերը, որոնք ծառանում են կոմունիստական շինարարության ընթացքում, կուսակցությունը լուծում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից, լենինյան ազգային քաղաքականության անշեղ կիրառման հիման վրա:

Հայ ժողովրդի ձեռք բերած պատմական նվաճումները ապացույց են այն բանի, որ «Սոցիալիզմի պայմաններում տեղի է ունենում ազգերի ծաղկում, ամրապնդվում է նրանց սուվերենությունը: Ազգերի զարգացումը կատարվում է ոչ թե ազգային երկպառակության, ազգային սահմանափակության ու էգոիզմի ուժեղացման ուղիներով, ինչպես դա տեղի է ունենում կապիտալիզմի օրոք, այլ նրանց մերձեցման, եղբայրական փոխօգնության ու բարեկամության ուղիներով»[58]:

Մենք, կոմունիզմ կառուցող սովետական քաղաքացիները, ուրախանում ենք դրանով, չէ՞ որ դա լենինյան ազգային քաղաքականության մեծագույն նվաճումներից է:

Մեր երկիրը մեծ է, հզոր ու անպարտելի: Իր անծայրածիր տերիտորիայով այն մի միասնական օրգանիզմ է, համաչափ, գիտականորեն տեղաբաշխված արդյունաբերական ձեռնար-

58 ՍՄԿԿ Ծրագիր, էջ 135:

կալվածներում: Կապված սոցիալիզմի երկրում արտադրողական ուժերի տեղաբաշխման պլանային սկզբունքների իրականացման հետ՝ երբեմն որոշ հանրապետություններում պետության և արդյունաբերության որոշ ճյուղեր, համեմատած մյուսների հետ, ավելի արագ են զարգանում:

Արտադրողական ուժերի տեղաբաշխման կապակցությամբ հաճախ մեր երկրի մի շրջանի արտադրության, գիտության կամ մշակույթի գործիչներ մեկնում են մի ուրիշ շրջան՝ իրենց մասնագիտությամբ աշխատելու կամ դրա մեջ խորանալու համար: Ոչ ոքի մոտ զարմանք չի հարուցում այն, որ մեր երկրի ամենատարբեր մասերից Հայաստան են գալիս բազմաթիվ մասնագետներ և իր հերթին մեր հանրապետությունը ևս մասնագետներ է ուղարկում այլ վայրեր:

Ս. Վրացյանը վայնասուն է բարձրացրել, գրելով, թե հայ մտավորականության երիտասարդության գնալի մասը, թողած Հայաստանը, մեկնում է Մոսկվա, ուր դատապարտված է ասիմիլյացիայի: Ինչպես բոլոր, այնպես էլ այս հարցում, Ս. Վրացյանի մոտ խոսում է ոչ թե բանականությունը, այլ հակասովետական կիրքը: Նա ցանկանում է կամֆիկական թափչքների ուժով ազգերը կտրել իրարից, նրանց առանձնացնել չինական պարսպով, պարփակել նեղ «ազգային» պատյանում: Նա չի ուզում ընդունել, որ նույնիսկ բնածին հանճարները դատապարտված են անհայտության մեջ մնալու, եթե նրանք հաղորդակից չլինեն համաշխարհային մշակույթի նվաճումներին:

Ս. Վրացյանին լավ է պատասխանում սփյուռքահայ առաջավոր գործիչ Սարգիս Բզմիրլյանը, գրելով. «Պրն. Վրացյան գո՞հ պիտի մնար եթե Միկոյան, Սանահինի իր գյուղական դպրոցի ուսումով բավականանար, Բաղրամյան մը և կամ Ալիխանյաններ, և անոնց շարքով համաշխարհային համբավ ունեցող անձնավորություններ տեղական պաշարով սնանիլ նախընտրեին»[59]:

---

59 Սարգիս Բզմիրլյան, Տասնամյակներ մեր հայրենական հեղափոխության մասին. Պեյրութ. 1962, էջ 67:

*Եվ ոչ միայն այս: Սովետական Միությունը, կոմունիզմի կառուցման ճանապարհին, գնալով նոր հասարակարգը տանող չուսումնասիրված ուղիներով, իրականացնում է այնպիսի խոշորագույն միջոցառումներ, որոնք պահանջում են ամբողջ երկրի բոլոր ուժերի համախմբում: Առանց ամբողջ սովետական ժողովրդի անձնազոհ, հերոսական աշխատանքի, բնական է, կոմունիզմը հավետ դատապարտված կլինի մնալ միայն տեսության ոլորտում:*

*Կույբիշևի, Վոլգոգրադի, Բրատսկի հզոր հիդրոկայանների, Վոլգա-Դոն ջրանցքի կառուցումը, խամ ու խոպան հողերի յուրացումը և բազմաթիվ այլ ձեռնարկումներ, կասկածից վեր է, որ այդքան կարճ ժամանակամիջոցում, առանց սովետական բոլոր ժողովուրդների ձեռք բերած հաջողությունների ներդրման, հնարավոր չէր լինի իրականացնել:*

*Սակայն դաշնակցականներին այդ բոլորը չեն հետաքրքրում: Նրանք մեղադրում են ՍՄԿԿ-ի ղեկավարությանը՝ հակակոմունիստական պրոպագանդան լավ չկազմակերպելու համար: Եվ այն, ինչ չեն կարողանում անել ամերիկյան իմպերիալիստները, ցանկանում են լրացնել դաշնակցական դոն-կիխոտները:*

*Սովետական երկրում ոչ մի լավ բան չկա, ամեն ինչ պետք է քննադատել, ահա այս է դաշնակցության նշանաբանը: Նրանք քաջ գիտեն, որ այդպիսի «քննադատությունը» դատապարտվում ու մերժվում է սփյուռքի առաջադիմական, դեմոկրատական ուժերի կողմից, բայց դրա հետ մեկտեղ նրանք նաև գիտեն, որ մինչև հիմա էլ արտասահմանում դեռ կան քաղաքականության մեջ չկողմնորոշված, շատ դեպքերում չեզոք մասսաներ, որոնց վրա նմանօրինակ պրոպագանդան կարող է որոշ ազդեցություն գործել:*

*Այսօր, խամ ու խոպան հողերի յուրացումից տարիներ հետո, երբ այն դարձել է պատմական մեծ իրողություն, մենք կարող ենք հաստատապես ասել, որ առանց սովետական ժողովուրդների բազմակողմանի օժանդակության այդ անծայրածիր տարածությունները կմնային առանց օգտագործման:*

*Մեծ ոգևորությամբ համակված՝ սովետական բազմազգ երիտասարդությունը, կուսակցության և կառավարության կոչով, մեկնում էր դեպի խամ ու խոպան հողերը՝ կոմունիզմի կառուցման տարիներում նոր սխրանքի էջեր գրելու համար։*

*Բայց դաշնակցությունը նորից զզված է։ Նա դառնորեն ողբում է հայ երիտասարդների «սև բախտը», իսկ խամ ու խոպան հողերը համեմատում է «Դանթեի դժոխքի» հետ[60]։ Հայ երիտասարդների՝ խոպան հողերը մեկնելը համարվում է «բռնագաղթ» և այն էլ ոչ ավելի, ոչ պակաս, քան՝ Հայաստանը հայերից ազատելու ցարական քաղաքականության կենսագործում։*

*Դաշնակցականները անշուշտ չեն ուզում հասկանալ սովետական մարդու, սովետական երիտասարդի հոգեբանությունը, նոր մարդու հոգեբանությունը և հարց են տալիս, թե ի՞նչու հայ երիտասարդը պետք է թողնի գեղեցիկ Հայաստանը և մեկնի հեռավոր Սիբիր, հանուն ինչի՞[61]։ Ու դաշնակ ղեկավարներին թվում է, թե այսպիսի չոր «փաստարկումից» հետո լիովին կարելի է ապացուցված համարել հայ երիտասարդների «բռնագաղթը»։*

*Եվ հիրավի, ատելությունը սոցիալիզմի նկատմամբ և ազգայնական աշխարհայացքը, որը ազգային գոմից ու մարագից այն կողմ չի տեսնում, լիովին կուրացնում են մարդկանց և անհնարին դարձնում մեր դարաշրջանի մեծագույն իրադարձությունների իմաստի ըմբռնումը։*

*Արդի պայմաններում գրեթե բոլոր ազգայնական կուսակցությունները փոխվել են. իրենց էությամբ մնալով նույնը, նրանք վարում են նոր տակտիկա, դարձել են ավելի լայնախոհ, ազգային հարցերը կապում են մարդկության զարգացման համաշխարհային ընթացքի հետ։ XIX դարի՝ իր քթից այն կողմը ոչինչ չտեսնող նացիոնալիզմը, այլևս գրեթե գոյություն չունի։ Ու չնայած աշխարհում տեղի ունեցած արմատական փո-*

---

60 «Բռնագաղթ», «Հուսաբեր», 24 հոկտեմբերի, 1957։

61 «Դեպի Սիբիր, դեպի Հյուսիս ու հեռավոր արևելք», «Հայրենիք», № 7, 1956, էջ 105։

*փոփոխություններին, համարյա թե անփոփոխ է մնացել դաշնակցության նեղմիտ նացիոնալիզմը։*

*Հայը անպայման պետք է հագնի Երևանի կաշվի գործարանի կաշվից արտադրված կոշիկներ, իր տանը ունենա Երևանի ժամացույցի գործարանի արտադրանքը, խմի հայկական կոնյակն ու գինին,— ահա այս է ժամանակակից դաշնակցության լիդերների պրիմիտիվ տրամաբանության արդյունքը: Դաշնակցության պահանջը օբյեկտիվորեն հանգեցնում է նրան, որ հայը պետք է ապրի ֆեոդալական հասարակարգին հատուկ փակ բնատնտեսության պայմաններում, իր կարիքների համար օգտագործելով միայն և միայն հայկա*կան *արտադրանք:*

*Դաշնակցությունը չափազանց դժգոհ է, որ Հայաստանը զարգանում է ոչ իր ցանկացած ուղղությամբ: Հայաստանում, իհարկե, արդյունաբերական գործարաններ կան, սակայն դրանք Հայաստանինը չեն, քանի որ հայ ժողովուրդը չի օգտվում այդ գործարանների արտադրանքից,— ասում են դաշնակները։*

*Չնչավոր պատրվակներ՝ զուրկ որևէ հիմքից և ստեղծված միայն և միայն սովետական երկիրը վարկաբեկելու համար:*

*Նախ՝ թող հայտնի լինի Սովետական Միության բոլոր թշնամիներին և դաշնակ ղեկավարներին, որ հայ ժողովուրդը իր կարիքների մի մասը բավարարում է հանրապետության գործարանների արտադրանքով: Այդ ապացուցելու համար ո՛չ թվեր են հարկավոր և ո՛չ էլ պատճառաբանություններ. այդ բանում համոզվելու համար պետք է մտնել Հայաստանի խանութները, որոնցում առատորեն վաճառվում է հանրապետության գործարանների արտադրանքը։*

*Երկրորդ՝ մի՞թե XX դարի երկրորդ կեսում իրեն քիչ թե շատ գրագետ համարող մարդը կարող է պահանջել, որպեսզի մեկ միասնական տնտեսական օրգանիզմ հանդիսացող, ֆեդերատիվ պետության մեջ մտնող հանրապետություններում հավասարապես զարգանան ժամանակակից գիտության ու*

տեխնիկայի բոլոր ճյուղերը, արտադրվեին արդյունաբերական բոլոր ապրանքները:

Ամեն մի հանրապետություն պետք է ունենա իր սեփական ավտոգործարանը, ռադիոընդունիչների, ժամացույցների և այլ տեսակի գործարանները— ահա սա է դաշնակցության պահանջը: Երբ Հայաստանի արդյունաբերության ապրանքների մի մասը արտածվում է Սովետական Միության տարբեր շրջանները, դա համարվում է «թալան», իսկ երբ մյուս հանրապետությունների ապրանքներն է ստացվում Հայաստան, դաշնակները դրա մասին լռություն են պահպանում:

Այսպես, երբ թերթերը սկսեցին գրել այն մասին, թե ինչպիսի մեծ օգնություն է ցույց տալիս Հայաստանի ժողովրդական տնտեսությունը Կույբիշևի, Վոլգոգրադի և երկրի խոշորագույն այլ կառույցներին, դաշնակցությունը իսկույն աղմուկ գցեց, թե Հայաստանը թալանվում է:

Իսկ հետագայում, երբ որոշում ընդունվեց ՍՍՌՄ-ում ստեղծել մեկ միասնական էներգասիստեմ, որի հիման վրա Անդրկովկասի երեք հանրապետությունների էներգասիստեմները պիտի միացվեին՝ մեծ օգուտ տալով Հայաստանին, դաշնակցությունը այդ մասին գերադասեց լռություն պահպանել: Չէ՞ որ դա ձեռնտու չէ իրեն:

Սովետական իշխանության տարիներին ազգերի բարեկամությունը աննախընթացորեն ամրապնդվել է: Ազգայնական կուսակցությունների կողմից հրահրված ջարդերի և ազգային անվստահության մթնոլորտը պատկանում է անցյալին: Որպես նոր հասարակարգի, նոր ազգային հարաբերությունների արդյունք՝ կառուցվեց Ղարադաղ—Թբիլիսի—Երևան գազամուղը, որը ժողովուրդը անվանեց «Բարեկամության գազամուղ»: Այդ գազամուղը հետագայում միացվեց Ստավրոպոլի գազամուղին:

Թվում է, որ անգամ դաշնակցությունը չի կարող անտեսել, թե վառելիքի աղբյուրներից զուրկ Հայաստանի համար ինչպիսի անգնահատելի նշանակություն ունի այդ գազամուղի կառուցումը: Եթե մենք հետևենք դաշնակ պարագլուխների

*պրոպագանդիստական անազնիվ միջոցներին, այժմ պետք է գրենք, որ Հայաստանն ու Վրաստանն են «թալանում» Ադրբեջանին։*

*Ահա այսպիսին է դաշնակցությունը։ Կտրված Մայր Հայրենիքից, արդի փոթորկահույզ քաղաքական աշխարհում իր բախտը սերտորեն կապած միջազգային իմպերիալիզմի հետ, հակակոմունիզմի ուժերին միացած՝ նա պայքարում է սոցիալիստական երկրների դեմ, զրպարտում ու կեղծում սովետական իրականությունը՝ դրա մեջ տեսնելով իր փրկության միակ հույսը։*

## 3. ԸՆԴԴԵՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ

«Արդիականության հիմնական հարցը,— *ասված է ՍՄԿԿ Ծրագրում,*— պատերազմի և խաղաղության *հարցն է։ Պատերազմական վտանգի միակ աղբյուրը իմպերիալիզմն է։ Իմպերիալիստական լագերը նախապատրաստում է մարդկության դեմ ամենասարսափելի ոճրագործությունը՝ համաշխարհային ջերմամիջուկային պատերազմը, որը կարող է չտեսնըված ավերումներ պատճառել ամբողջ երկրների, բնաջնջել ամբողջ ժողովուրդներ։ Խաղաղության և պատերազմի պրոբլեմը դարձել է հարյուր միլիոնավոր մարդկանց կենաց ու մահու պրոբլեմ»*[1]։

*Հանրահայտ է, որ այսօր մարդկային հասարակության զարգացման օրենքներն աշխարհը հասցրել են մի այնպիսի վիճակի, երբ իմպերիալիզմը անկարող է իր կամքը թելադրել համայն մարդկությանը և անպատիժ կերպով սանձազերծել նորանոր պատերազմներ։*

*Սոցիալիստական երկրների հզոր լագերի ուժեղացումը և ամրապնդումը, մեծ թվով խաղաղասեր պետությունների աս-*

1 *ՍՄԿԿ Ծրագիր, էջ 63։*

կայություններ, որոնք չեն մտնում ոչ մի բլոկի մեջ, և, վերջապես, ամբողջ աշխարհի, ինչպես և իմպերիալիզմի լագերի երկրներում խաղաղության ակտիվ պաշտպանների՝ առաջադիմական դեմոկրատական մեծաթիվ կազմակերպությունների ու կուսակցությունների, միջազգային բանվոր դասակարգի գործունեությունը հիմք են տալիս ասելու, որ համաշխարհային պատերազմը կարելի է կանխել:

Համաշխարհային սոցիալիստական սիստեմը օրավուր հզորանալով, ավելի ու ավելի մեծ չափերով է ներգործում մարդկային հասարակության զարգացման ընթացքի վրա։

Մարդը՝ բնության ստեղծագործած հրաշքների հրաշքը, մտքի զորությամբ կյանքի է կոչել այնպիսի ուժեր, որոնք ի չարը գործադրելու դեպքում կարող են ամբողջ մարդկության և նրա ստեղծած մշակութային արժեքների հետագա գոյությունը վտանգի տակ դնել:

Ահա թե ինչու սոցիալիզմի լագերը, աշխարհի բոլոր խաղաղասեր ուժերը, վճռականորեն հանդես են գալիս ջերմամիջուկային զենքի փորձարկումներն անմիջապես դադարեցնելու օգտին, պահանջելով հասնել ընդհանուր և լրիվ զինաթափման՝ միջազգային խիստ վերահսկողության ներքո։

Մարդկային հասարակության զարգացումը ներկայումս գտնվում է մի այնպիսի շրջանում, երբ աշխարհը բաժանված է երկու համաշխարհային սիստեմների։ Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը գտնում է, որ այսպիսի պայմաններում «պատերազմը չի կարող և չպետք է միջազգային վեճերը լուծելու միջոց ծառայի: Խաղաղ գոյակցություն կամ կատաստրոֆիկ պատերազմ—միայն այսպես է դրել հարցը պատմությունը»[2]։

Երկու սիստեմների բաժանված ժամանակակից աշխարհի՝ պատերազմից խուսափելու միակ ելքը դա ՍՄԿԿ-ի կողմից առաջարկված խաղաղ գոյակցության լենինյան ուսմունքն է։ Միայն մտքով կույրերը կարող են չհասկանալ, որ

---

[2] ՍՄԿԿ Ծրագիր, էջ 70։

պատմության օրյեկտիվ զարգացումը հարցը դրել է շատ պարզ և կտրուկ՝ կա՛մ պատերազմ, կա՛մ խաղաղ գոյակցություն։ Ներկա վիճակից դուրս գալու երրորդ ուղին բացառվում է։

Խաղաղ գոյակցության լենինյան տեսությունը միակ ուղեցույցն է, որ մարդկությանը կարող է զարգացման դժվարին ուղիներով անվտանգ տանել դեպի քաղաքակրթության նոր բարձունքներ։

«Խաղաղ գոյակցությունը, — ասված է ՍՄԿԿ Ծրագրում, — ենթադրում է՝ հրաժարվել պատերազմից, որպես պետությունների միջև վիճելի հարցերը լուծելու միջոցից. այդ հարցերը լուծել բանակցությունների միջոցով. իրավահավասարություն, փոխըմբռնում և վստահություն պետությունների միջև, հաշվի առնել միմյանց շահերը, չմիջամտել ներքին գործերին, ընդունել, որ յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի ինքնուրույն կերպով լուծելու իր երկրի բոլոր հարցերը. խստորեն հարգել բոլոր երկրների սուվերենությունը և տերիտորիալ ամբողջականությունը. զարգացնել տնտեսական և կուլտուրական համագործակցությունը լիակատար հավասարության և փոխադարձ շահավետության հիման վրա»[3]։

Իմպերիալիզմի տեսաբաններն իրենց աշխատություններում ճիգեր են գործադրում հերքելու խաղաղ գոյակցության տեսության իրականացման հնարավորությունը։ Նրանցից ոմանք անկեղծորեն գրում են, որ խաղաղ գոյակցության մասին խոսք չի կարող լինել, քանի որ իմպերիալիզմի հիմնական նպատակը սոցիալիստական սիստեմի ոչնչացումն է։ Այդ տեսակետից էլ պատահական չէ Կոնրադ Ադենաուերի այն միտքը, թե «ժողովուրդների խաղաղ գոյակցությունը իլյուզիա է»։

Սակայն իմպերիալիզմի ոչ բոլոր պաշտպաններն են ուղղակիորեն հանդես գալիս խաղաղ գոյակցության տեսության դեմ։ Նրանց մի հիմնական մասը առաջ է քաշում այն պատ-

3 ՍՄԿԿ Ծրագիր, էջ 70—71։

ճառաբանությունը, թե խաղաղ գոյակցությունն ու հեղափոխությունն իրարամերժ հասկացություններ են:

Մարդկության զարգացման հետագա ընթացքի համար հեղափոխությունները արդեն օբյեկտիվ անհրաժեշտություն չեն, պնդում են իմպերիալիզմի տեսաբանները և աջ սոցիալիստները: Այս տեսական մարզանքները արվում են հանգեցնելու այն եզրակացությանը, որ եթե հեղափոխությունները օբյեկտիվ անհրաժեշտություն չեն, ապա կոմունիստները՝ հանուն խաղաղ գոյակցության տեսության իրականացման պետք է հրաժարվեն հեղափոխական, դասակարգային պայքարից, իսկ եթե նրանք այդ չեն անում, ուրեմն, խաղաղ գոյակցության տեսությունը առաջ են քաշել տակտիկական նկատառումներով:

Մարդկային հասարակության պատմությունն, ընդհանրապես, և XX դարի պատմությունը, մասնավորապես, հանդիսանում են անհերքելի ապացույցն այն բանի, որ հեղափոխությունները հասարակության զարգացման օբյեկտիվ օրինաչափությունն են:

Խաղաղ գոյակցության տեսությունը Սովետական Միության կողմից առաջ է քաշվում որպես արդյունք միջազգային ասպարեզում սոցիալիստական և կապիտալիստական երկրների ուժերի նոր հարաբերակցության: Կապիտալիստական երկրներում մղվում է ուժեղ դասակարգային, իսկ գաղութային երկրներում՝ ազգային-ազատագրական պայքար. խաղաղ գոյակցության տեսությունը չի վերաբերվում այդ երկրների ներքին, քաղաքական պրոցեսներին: Խաղաղ գոյակցությունը դասակարգային պայքարի յուրահատուկ ձևն է, որը նախատեսում է երկու սիստեմների միջև պայքար՝ քաղաքականության, էկոնոմիկայի և գաղափարախոսության բնագավառներում:

Իր ամբողջ էությամբ կապված լինելով միջազգային իմպերիալիզմի պլանների հետ, դաշնակցությունը հանդես է գալիս ընդդեմ խաղաղության, դեմոկրատիայի և ազգային-ազատագրական պայքարի:

Ճիշտ է, այսօր, ինչպես աշխարհի բոլոր հակահեղափո-

*խական ուժերը, այնպես էլ դաշնակցությունն արդեն չեն համարձակվում բացարձակորեն հանդես գալ խաղաղության, դեմոկրատիայի և ազգային-ազատագրական պայքարի գաղափարների դեմ: Խոսքերով՝ դաշնակցությունը դեմ է պատերազմին, դեմ է գաղութակալության պահպանմանը, սակայն գործնականում՝ նա միշտ էլ հանդես է գալիս խաղաղության դեմ, ազգային-ազատագրական պայքարի դեմ:*

*Ինչպես բազմաթիվ այլ, նույնպես և սույն հարցերում, դաշնակցությունը չունի իր սեփական տեսությունը, նա այն փոխ է առնում իմպերիալիզմի տեսական զինանոցից: Բայց դաշնակցության ղեկավարների ինքնասիրությունը թույլ չի տալիս ասելու, որ գաղափարախոսության բնագավառում գործադրվող իրենց զենքերը շատ հին են, այն էլ վերցված իմպերիալիստներից:*

*Դաշնակցությունը հատկապես լուրջ մտահոգություն է պատճառում Սովետական Միության կոմունիստական կուսակցության արտաքին քաղաքականության անկյունաքարը հանդիսացող խաղաղ գոյակցության տեսությունը, որի դեմ պայքարելիս զինաթափ են դառնում բոլոր հակակոմունիստական ուժերը: Բանականությունը թելադրում է, որ մարդկային հասարակության զարգացման ներկա էտապում համաշխարհային մեծագույն կատաստրոֆաներից խուսափելու և անվտանգ ապագայի միակ երաշխիքը խաղաղ գոյակցության քաղաքականության ընդունումն է բոլոր պետությունների ու ժողովուրդների կողմից:*

*Այդ հանրահայտ ճշմարտությունն այսօր արդեն հասկանում են նույնիսկ սոցիալիզմի և կոմունիզմի հակառակորդները: Սակայն մի բան է հասկանալը, ուրիշ բան՝ ընդունելը: Խաղաղ գոյակցությունը դա մրցություն է երկու սիստեմների միջև, բայց խաղաղ միջոցներով: Ի վերջո, որպես խաղաղ մրցության արդյունք՝ ակնհայտ կդառնա, թե ո՛ր սիստեմն է ավելի կենսունակ և կյանքի կողմից կոչված հաղթանակելու:*

*Համոզված լինելով, որ ապագան սոցիալիզմինն է, իմպերիալիզմը կատաղորեն հոգեվարքային ճիգեր է գործա-*

դրում՝ երկարացնելու իր կյանքը, բռնանալու հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքների վրա, փոխելու հասարակության զարգացման ընթացքը։ Բայց մի՞թե կարելի է ատոմային կամ ջերմամիջուկային զենքերով կասեցնել, կանխել մարդկային հասարակության բնականոն զարգացումը։ Իհարկե՝ ոչ։ Հարցի էությունն այն է, որ խաղաղ գոյակցության պայմաններում, այսինքն՝ խաղաղ մրցության պայմաններում կապիտալիստական երկրների ժողովուրդները, համոզվելով սոցիալիստական սիստեմի առավելության մեջ, իրենք կտապալեն իմպերիալիզմի լուծը և կբռնեն սոցիալիստական հասարակարգի կառուցման ճանապարհը։

Ահա թե ինչու հակակոմունիստական բոլոր ուժերը, չտեսնված կրքոտությամբ, հանդես են գալիս խաղաղ գոյակցության քաղաքականության կենսագործման դեմ։

Իմպերիալիզմի տեսաբանները մեկը մյուսի հետևից լույս աշխարհ են հանում ավելի ու ավելի ակադեմիկ աշխատություններ, որոնցում փորձում են խեղաթյուրել խաղաղ գոյակցության լենինյան տեսությունը և այն բացատրել... «Սովետական պետության թուլությամբ» և, նույնիսկ, սոցիալիզմի լագերի ներքին քաղաքական և տնտեսական անկայուն վիճակով։ Դաշնակցությունն էլ, իր հերթին, հայ ընթերցողին է մատուցում իմպերիալիզմի տեսաբանների այդ աշխատություններում առաջ քաշված «փաստարկումները», հայերեն թարգմանությամբ, շատ հաճախ, Ռ. Դարբինյանի կամ որևէ այլ դաշնակցական գործչի հեղինակային ստորագրությամբ։

Ի վերջո, այս ամբողջ աղմուկը հանգեցվում է այն եզրակացությանը, թե «խաղաղ կենակցությունը անկարելի և անիրագործելի պիտի ըլլա երկրագունդի վրա այսուհետև», քանի որ գոյություն ունեն երկու սիստեմներ[4]։

Ժամանակակից իմպերիալիզմի և նրա դաշնակ գործակալների հիմնական նպատակներից մեկն է ցույց տալ, որ խաղաղ գոյակցությունը երկու սիստեմների գոյության պայմաններում «անկարելի բան մըն է ներկայիս, և այդ ուղղու-

[4] «Խաղաղ կենակցության մասին», «Հայրենիք», 14 դեկտեմբերի, 1954։

*թյամբ թափված բոլոր ջանքերը չեն կարող որևէ դրական արդյունք տալ»*[5]։

*Դաշնակցությունը, ԱՄՆ-ի պրոպագանդայի ազդեցության տակ, պատերազմի և խաղաղ գոյակցության նկատմամբ դեպի Սովետական Միությունն ունեցած վերաբերմունքի հարցում միասնական կարծիք չունի։ Եթե դաշնակցության կուսակցության գործիչների մի մասը տեսնելով, որ հնարավոր չէ Սովետական Միության խաղաղասիրական քաղաքականությունը հերքել, սկսում է այն «բացատրել» իբր թե մեր երկրի թուլությամբ և ԱՄՆ-ի հզորությամբ, ապա մյուսները, ընդհակառակը, գտնում են, որ ՍՍՌՄ-ը վարում է ագրեսիվ քաղաքականություն՝ ձգտելով համաշխարհային տիրապետության*[6]։

*Ժողովուրդներին պահել ջերմամիջուկային պատերազմի սպառնալիքի դժոխային լարված պայմաններում և լայն, ոչնչով չսահմանափակված հնարավորություններ ստեղծել ռազմական արդյունաբերության զարգացման ու իմպերիալիստական մոնոպոլիաների՝ աշխատավորներից քամվող միլիարդավոր շահույթների ստացման համար — ահա սա է նմանօրինակ պրոպագանդայի հիմնական նպատակը։*

*Իսկ ինչու՞ հնարավոր չէ խաղաղ գոյակցությունը երկու սիստեմների գոյության պայմաններում։ Այդ լուրջ հարցին տրվում է աղայամիտ բացատրություն, թե իբր միայն այն պատճառով, որ Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը խաղաղ գոյակցության պայմաններում չի հրաժարվում գաղափարական պայքարից, այդ բնագավառում ոչ մի զիջում չի անում։*

*Այստեղ արդեն ամեն ինչ հասկանալի է դառնում։ Իմպերիալիստները ցանկանում են, որպեսզի կոմունիստները հրաժարվեն գաղափարական պայքարից, այսինքն՝ մարքսիզմ-լենինիզմի գաղափարների պրոպագանդայից։ Սա պատահա-*

5 *Նույն տեղում, 18 դեկտեմբերի, 1954։*

6 *Տե՛ս «Հուսաբեր», 29 հոկտեմբերի, 1957։ Նույն տեղում՝ 8 ապրիլի, 1959։ «Մասիս», 25 հուլիսի, 1957։ «Հուսաբեր», 30 հոկտեմբերի, 1963։*

կան բան չէ և բխում է նրանից, որ իմպերիալիստները մարքսիզմ-լենինիզմին ոչինչ չունեն հակադրելու։

Ժխտելով խաղաղ գոյակցության հնարավորությունը, դաշնակցական մամուլը, համարյա թե միշտ այն միտքն է անցկացնում (և ինչպես միշտ, այս անգամ էլ ուրիշներից վերցրած), թե այդ գոյակցությունը հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ երկու սիստեմներից մեկը, այսինքն՝ սովետականը կվերանա։ Բայց այստեղ շրջանցվում է պատմության փորձը։ Կապիտալիզմի զարգացման ամբողջ ընթացքը գալիս է հաստատելու, որ այդ հասարակարգը և պատերազմը անբաժան ուղեկիցներ են։ Դա պատմական անվիճելի ճշմարտություն է։

Դեմ լինելով խաղաղ գոյակցությանը, դաշնակցությունը դեմ է գնում նաև խաղաղության համար մղվող պայքարին։

Վերլուծելով խաղաղության համար մղվող պայքարի կապակցությամբ սփյուռքահայ կյանքում տեղի ունեցող իրադարձությունները, հնչակյան կուսակցությունը միանգամայն ճիշտ գրում է. «Գաղտնիք չէ այլևս՝ որ հայ կյանքն էլ իր մեջ ունի խաղաղության թշնամիներու համրանք մը։ Առաջին հերթին դաշնակցությունն է ատիկա։ Որակով չափազանց ճղճիմ ու արհամարհելի, բայց՝ իր աղմկարարությամբ ու բացասական կողմերով՝ նշմարելի։ Ճանճը արժեք մը չէ ինքնին, բայց իր տաղտկալի բզզիներով կփորձե զգալի դարձնել իր գոյությունը։ Դաշնակցությունը իբրև ճանճ թառած է մեր գլխուն, մերթ իր աղտոտ ճանկերը խրելով հոս-հոն»[7]։

Սովետական պետության և ժողովրդի խաղաղության համար մղվող մեծ պայքարը դաշնակցությունը անվանում է «անխաղաղ խաղաղասերների» կամպանիա՝ ցանկանալով ամեն կերպ սևացնել ժողովրդական զանգվածների պայքարը և նրա տակ տեսնել միայն և միայն վատը[8]։

---

7 «Մեր նշանաբանը», «Երիտասարդ Հայաստան», 13 սեպտեմբերի, 1955։

8 «Հայրենիք» № 2, 1952։ «Հայրենիք», 6 նոյեմբերի, 1963։ «Հայրենիք», 17 հունիսի, 1950։

*Եվ ինչպես բոլոր, այս հարցում ևս դաշնակցությունն իմպերիալիզմի քաղաքականության մեջ ոչ մի սև բիծ չի տեսնում, այն անվերապահորեն ընդունվում է և պաշտպանության տակ առնվում:*

*ՍՄԿԿ XX համագումարի բոլոր պատմական որոշումները դաշնակցության կողմից կա՛մ «հերքվում» են, կա՛մ էլ կեղծվում: Խաղաղ միջոցներով կապիտալիզմից սոցիալիզմին անցման տեսությունը խեղաթյուրվում է, զինաթափման պրոբլեմի լուծման ամերիկյան առաջարկները՝ համարվում բացարձակ ճշմարտություն: Տարրական ազնվությունը պահանջում է հակառակորդին քննադատելու համար լավ իմանալ նրա գաղափարախոսությունը: Սակայն դաշնակցությունը իր վրա վերցնելով մարքսիզմ-լենինիզմի տեսության դեմ մղվող պայքարի խնդիրը, անհրաժեշտ չի համարել ուսումնասիրել այդ ուսմունքի գոնե այբուբենը: Գուցե և գիտե՞, բայց խեղաթյուրում է գիտակցորեն: Վերջինն առավել հավանական է:*

*Հակառակ դեպքում ինչով բացատրել այն (կարելի է նման բազմաթիվ օրինակներ բերել), որ Ռ. Դարբինյանը «հայտնագործություններ» անելով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի մեջ, գրում է, թե դասակարգային պայքարը, ըստ Լենինի, տևական ներքին քաղաքացիական պատերազմ է բոլոր ազգերի միջև[9]:*

*Հայտնի չէ, տարիներ շարունակ հոգում կուտակված հակասովետական թո՞ւյնը, թե՞ ամերիկյան դոլարն է հանդիսանում պատճառը այն բանի, որ ծերուկ Դարբինյանը չի խորշում մարքսիզմի տեսությունը ամենաանենգ ձևով կեղծելուց:*

*Դաշնակցությունը ղեկավարում են մարդիկ, որոնք լիովին կորցրել են իրենց բարոյական կերպարը և համակերպվել իմպերիալիզմի վարձկանների ստոր դերի հետ: Պատահական չէ այն հրճվանքը, որ դաշնակցությունը ի հայտ բերեց ԱՄՆ-ի*

---

9 *«Հայրենիք», 14 նոյեմբերի, 1959*։

*կոնգրեսի որոշումից հետո՝ սոցիալիզմի լագերում լրտեսական աշխատանքներ տանելու համար 100 միլիոն դոլար բաց թողնելու մասին։ Դաշնակցության ղեկավարներին այդ որոշման մեջ ամենից առաջ հրապուրում էր այն, որ այդ 100 միլիոն դոլարից իրենք էլ պետք է բաժին ստանային։ Առանց ծածկելու իրենց ուրախությունը, դաշնակցության պարագլուխները գրում էին. «Ինչ որ, սակայն, ամենեն կարևորն է այդ պայքարին համար, Արևմուտքը, մանավանդ Ամերիկան սկսած է բարոյապես և նյութապես քաջալերել այդ տարրը,* նաև Սովետներեն շատ ավելի առաջ փախածները, որպեսզի անոնք կազմակերպվին...»[10]։

*Երկիմաստորեն չի ասված. բյուրոյականների համար բացվում են դրամական եկամուտների նոր, ավելի հորդառատ աղբյուրներ։ Ինչպե՞ս կարելի է չուրախանալ։ Նաև սրանով է բացատրվում այն հանգամանքը, թե ինչու դաշնակցությունը մշտապես դեմ է դուրս գալիս խաղաղ գոյակցությանը և խաղաղության համար մղվող պայքարին։*

*Հնչակյան կուսակցությունը, միանգամայն ճշտորեն, բացահայտելով խաղաղության համար մղվող պայքարում դաշնակցության քաղաքականության էությունը, գրում է, որ խաղաղության հաղթանակից «դժգոհ են անոնք, որոնք շահու և եկամուտի միակ աղբյուր դարձուցած են միջազգային փոխհարաբերությանց լարվածությունը, որոնք՝ իրենց գոյության խարիսխն ու գործունեության քաղաքականությունը հիմնավորած են այլևս նոր պատերազմի մը սարսափի գոյավիճակին վրա, որոնք՝ իրենց ցնորամիտ երազի մը իրագործման հավանականությունը (ծիծաղելի հավանականություն) հակադիր ճակատներուն մեջ միայն կորոնեն»*[11]։

*Եթե խաղաղությունը հաղթանակի, դաշնակցությունը կզրկվի դրամական միջոցներից։ Սակայն, առայժմ դաշնակցությունը, օգտվելով միջազգային դրության լարվածությու-*

10 *«Հայրենիք», 5 հունվարի, 1952 (ընդգծումը մերն է—Լ. Խ.)։*
11 *«Արարատ», 3 օգոստոսի, 1955։*

*նից, շարունակում է առատորեն վարձատրվել ամերիկյան իմպերիալիզմի կողմից:*

*Արդարացի լինելու համար պետք է ասել, որ դաշնակցությունը աներախտապարտ չէ. ընդհակառակը, ավելի քան երախտապարտ է: Նա տեղն ու տեղը, ժամանակ չկորցնելով, իսկույն հայտարարում է, որ Արևմուտքը Սովետական Միությանը պետք է հակադրի իր հինգերորդ զորասյունը[12]:*

*Ամերիկայի Միացյալ Նահանգները հինգերորդ զորասյուն շատ վաղուց ունեին, այստեղ խոսքը գնում է միայն այն մասին, որ այդ զորասյան մեջ համախմբվեին նոր ուժեր: Բնականաբար, հինգերորդ զորասյունը պետք է համալրվեր այն ուժերով, որոնց վրա ծախսվելու էր 100 միլիոն դոլարը:*

*Այդ բոլորը կատարվում էր 1952 թվականին: Հետագա տարիներին տեղի ունեցան որոշ փոփոխություններ իմպերիալիզմի և նրա դրչակների փոխհարաբերությունների միջև: Ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ մյուս երկրների իմպերիալիստական պետությունները միլիարդավոր գումարներ են հատկացնում ռազմական ծախսերին, երբեմն այդ գումարները հասնում են աստղաբաշխական թվերի՝ աննախընթացորեն ավելացնելով իմպերիալիստների հասույթները: Ռազմական հատկացումների ավելացումը իմպերիալիստական պետություններին հարկադրեց ավելացնել ժողովրդից գանձվող հարկերը, բարձրացնել ապրանքների գները և վերջապես՝ կրճատել լուսավորության, առողջապահության, սոցիալական ապահովության և նման այլ բնագավառներին հատկացված ծախսերը:*

*Իմպերիալիստական պրոպագանդային տրվող գումարները ոչ միայն չեն կրճատվում, այլև անընդհատ ավելացվում են: Սակայն, իհարկե, պրոպագանդային տրվում է շատ ավելի քիչ, քան ռազմական արդյունաբերությանը: Ահա թե ինչու իմպերիալիզմի «իդեական պաշտպանները» իրենց բողոքի ձայնն են բարձրացնում ապացուցելու, որ սառը պատերազմի*

---

12 «Դեպի ակն ընդ ական քաղաքականությունը», «Հայրենիք», 5 հունվարի, 1952:

պայմաններում պրոպագանդային ավելի շատ միջոցներ պետք է հատկացվեն: Մեծ իմաստություն պետք չէ հասկանալու համար, որ այստեղ խոսում է իմպերիալիզմի դրշակների շահագիտական տենչը. նրանք պահանջում են մեծ գումարներ հատկացնել պրոպագանդային, որպեսզի համեմատաբար ավելացնեն նաև իրենց շահույթները:

Այս տեսակետից էլ, միանգամայն բնական է թվում Ռ. Դարբինյանի «Արևմուտքի ապիկարությունը» վերնագրով հոդվածը, որում նա գրում է, թե պրոպագանդան սառը պատերազմի ամենահզոր զենքերից մեկն է, սակայն, չնայած դրան Արևմուտքը այդ նպատակի համար հատկացնում է չընչին գումարներ: Դրանով էլ պայմանավորված է այն, որ սառը պատերազմում Արևմուտքի ամենաթույլ կողմը պրոպագանդան է: Անհավանական չէ, ավելի ազդեցիկ լինելու համար, գրում է Ռ. Դարբինյանը, կրկնելով արևմտյան տեսաբաններին, որ եթե Արևմուտքը պարտվի սառը պատերազմում, ապա Սովետական Միությունը, առանց տաք պատերազմի էլ, կտիրանա Արևմուտքին[13]:

Եվ այս բոլորը կատարվում է այն դեպքում, երբ ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ աշխարհի բոլոր իմպերիալիստական պետությունները՝ խաղաղության, դեմոկրատիայի, ազգային-ազատագրական պայքարի և սոցիալիզմի դեմ մղվող պայքարում ոչ մի միջոց չեն խնայում պրոպագանդիստական մեքենա կոչվող անհագ հրեշի որկորը լցնելու համար:

* * *

Դաշնակցություն կուսակցության հետադիմական, հակահեղափոխական քաղաքականությունը լրիվ պատկերացնելու համար անհրաժեշտ է նաև մանրամասն ուսումնասիրել նրա վերաբերմունքը ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ:

Միջազգային զարգացման արդի փուլում, իմպերիալիզմի

---

[13] «Արևմուտքի ապիկարությունը», «Հայրենիք», 17 դեկտեմբերի, 1960:

լծի տակ գտնվող բոլոր ժողովուրդները դուրս են եկել ազգային-ազատագրական պայքարի։ Գաղութային և կիսագաղութային պայմաններում տառապող շատ ու շատ ազգեր ձեռք են բերել ազգային անկախություն և բռնել ինքնուրույն զարգացման ուղին։ Իմպերիալիզմի տիրապետության տակ գտնվող դեռևս չազատագրված ժողովուրդները ծավալել են ազգային-ազատագրական լայն պայքար, որը առաջիկա տարիներին նույնպես անպայման կպսակվի հաջողությամբ։

Սոցիալիզմի լագերը բոլոր միջոցներով օժանդակում է գաղութային և կիսագաղութային ժողովուրդների ազատագրության մեծ գործին։

Գաղութակալությունն ապրում է իր վերջին օրերը։ Ճարճատյունով տապալվում են գաղութակալության վերջին հենարանները։ Մարդկային հասարակության զարգացումը հասել է այնպիսի աստիճանի, երբ իմպերիալիզմը այլևս չի կարող շարունակել հետամնաց ժողովուրդների շահագործման իր բարբարոսական քաղաքականությունը։ Եվ նա, թեկուզ մեծ դժկամությամբ, երբեմն արյունահեղ մարտերով, երբեմն «կամավոր» տեղի է տալիս՝ միաժամանակ փնտրելով գաղութային շահագործման նոր, ավելի «քաղաքակիրթ» ձևեր։

Մի բան պարզ է, որ մեր ժամանակներում գաղութատիրությունն այնքան է վարկաբեկվել, որ ոչ մի քաղաքական ուժ ի վիճակի չէ այն իր պաշտպանության տակ առնելու։

Դաշնակցությունը լինելով իմպերիալիզմի բանակում, բնականաբար, հանդես է գալիս ընդդեմ խաղաղության, դեմոկրատիայի և ազգային-ազատագրական պայքարի։ Դաշնակցական հայտնի գործիչ Խ. Թութունճյանը, քննադատելով բյուրոյականների քաղաքականությունը, գրում է. «Արևմուտքի հետ, ընդդեմ համայնավար Արևելյան պլոքին իր բանաձևը, շատ բնական է, որ դեմ երթալու կոչված էր արաբ ազգայնական՝ Արևմուտքի տիրապետութենեն ազատագրվելու շարժումին, անհնուրեք»[14]։

14 Խ. Թութունճյան, *Բյուրոյական սնանկությունը և իրավ դաշնակցության ուղին*, էջ 93։

Սակայն դաշնակցության լիդերներին չպետք է միամիտ մարդկանց տեղ դնել: Նրանք բացարձակորեն հանդես չեն գալիս գաղութատիրության պաշտպանությամբ, ընդհակառակը, թանաք և թուղթ չեն խնայում՝ իրենց ներկայացնելու որպես ազգային-ազատագրական պայքարի պաշտպաններ: Այդ դեռ բավական չէ. դաշնակցությունը ջանք չի խնայում ապացուցելու, թե իբր իմպերիալիզմը ևս ընդառաջ է գնում գաղութային երկրների ազատագրության գործին:

Դաշնակ լիդերները տարիներ շարունակ ամենատարբեր առիթներով կրկնում են, որ հայկական բոլոր գաղութներում իրենք վարում են չեզոք քաղաքականություն, իբրև կարգապահ քաղաքացիներ: Դաշնակցության սկզբունքն է «...երբեք միջամուխ չլլալ հյուրընկալ երկիրներու ներքին վեճերուն և մնալ հավատարիմ՝ օրինավոր իշխանության»[15],— գրում է հայտնի դաշնակցական գործիչ Հրանտ Սամվելը:

Այսպիսի դիրքորոշումը չափազանց տարօրինակ է իրեն քաղաքական համարող յուրաքանչյուր կուսակցության համար: Հայտնի է, որ դաշնակցությունը հայ գաղութներում իր գործունեությունը սկսել է այն ժամանակ, երբ գաղութային սիստեմը դեռևս անսասան էր: Հետևաբար, դաշնակցությունը գաղութային և կիսագաղութային կամ թույլ զարգացած երկրների այն ժամանակվա «կառավարությունները» համարում էր օրինավոր: Իմպերիալիզմի գաղութային սիստեմը ևս, համաձայն դաշնակցության տրամաբանության, պետք է համարվեր, և իրոք համարվում է օրինավոր: Իսկ դաշնակցությունը, համաձայն իր իսկ տեսության, հավատարիմ էր այդ օրինավոր իշխանություններին:

Կար ժամանակ, գրում են հնչակները, երբ դաշնակցությունն առաջ էր քաշում և պաշտպանում «հավատարիմ մնալ բնակված երկրների ազգային շահերին և քաղաքականությանը» լոզունգը. «Կար ժամանակ մը... այսպես կը թելադրեր բյուրոն այն շրջանին, երբ խնդրո առարկա երկիրներու ներ-

[15] Հրանտ Սամուել, *Սփյուռքը 1958-ին*, «Հայրենիք», 27 հունվարի, 1959:

քին ու արտաքին քաղաքականությունը ճշտորոշողը Արևմուտքըն էր։ Տակավին երեկ այսպես թելադրող դաշնակ Բյուրոն այսօր դավեր կը նյութե նույն այդ երկիրներուն դեմ, որովհետև Արևմուտքը դարձած է միահեծան տեր ըլլալե անոնց վրա։ Որովհետև այդ երկիրները կը մերժեն հետևիլ Արևմուտքի պարտադրած քաղաքականությանը»[16]։

Իմպերիալիզմի գաղութային սիստեմը, հակահեղափոխական, հետադիմական իշխանությունները, ըստ դաշնակցության, համարվում էին օրինավոր:

Այդ տեսակետից էլ պատահական չէ, որ երբ Աֆրիկայում, Մերձավոր արևելքում և աշխարհի ամենատարբեր մասերում գաղութային, կիսագաղութային կամ հետադիմական իշխանությունների լծի տակ հեծող ժողովուրդները ցեն նետելով շղթաները դուրս եկան ազգային-ազատագրական պայքարի, դաշնակցությունը հանդես եկավ այդ մեծ շարժման դեմ՝ պաշտպանելով «օրինավոր իշխանությունները», մեղադրելով կոմունիստներին, հնչակյաններին և ռամկավարներին, որոնք իբր թե, ցանկանալով պղտոր ջրի մեջ ձուկ որսալ, «միացան օրինավոր կառավարության դեմ զենք բարձրացնող ըմբոստներուն...»[17]։

Դաշնակցության կուսակցությունը դաշինքի մեջ լինելով միջազգային իմպերիալիզմի հետ, գտնվելով հակասոցիալիստական ճամբարում, իր բոլոր ջանքերը ի սպաս է դնում առաջադիմական ուժերի դեմ կազմակերպվող պայքարին: Դաշնակցության քաղաքականությունը միանգամայն ճիշտ են հասկացել հնչակյան մտավորականները, որոնք գրում են. «Դաշնակցությունը, որ երկրին մեջ ալ գտնված ըլլա, շարժած ու գործած է գաղութարարներու շահերուն համապատասխան, աշխատած է անոնց ցուցմունքով և թելադրանքով։

Բարեբախտաբար՝ այս իրողությունը փաստի չի կարոտի։ Դաշնակցությունը կրկնած է անցյալին ու կշարունակե

16 «Դաշնակ բյուրոյի քաղաքականության սնանկության վերահաստատումը» (խմբագրական), «Արարատ», 5 օգոստոսի, 1959։

17 «Հայրենիք», 27 հունվարի, 1959։

*կրկնել այսօր, թե ինքը կը հարի Արևմտյան «օրիանթացիային»։*

*Միջին ու Մերձավոր արևելքի մեջ հատկապես, դաշնակցությունը եղած է ու կշարունակի մնալ իմպերիալիզմի բազմաթիվ հենարաններեն մին։ Այդ հենարանները օգտագործված են տեղական ժողովուրդներուն ազգային զարթոնքին զարգացումը արգելելու և գաղութարարության տնտեսական, քաղաքական ու զինվորական շահերու պաշտպանության օգտին։*

*Գաղութարարներու ցուցմունքներուն հետևելով է, որ արաբական երկիրներու մեջ, դաշնակցությունը զորավիգ կանգնած է այն իշխանությանց ու քաղաքական համախմբումներուն, որոնք գաղութարար պետությանց «վստահությունը կը վայելեն»։ Այսինքն՝ այլասերված այն տարրերուն, որոնք կդավեն իրենց ժողովրդի ազգային ձգտումներուն և անոնց փոխան կը ծառայեն գաղութարարներու շահերին»*[18]։

*Դաշնակցության հետադիմական, հակահեղափոխական բնույթը շատ ավելի լավ է բացահայտվում, երբ մանրամասն ուսումնասիրում ենք Մերձավոր արևելքում և Եգիպտոսում տեղի ունեցած առաջադիմական շարժումների նկատմամբ այդ կուսակցության վերաբերմունքի հարցը։*

*Անգլիայի, Ֆրանսիայի և Իսրայելի ագրեսիան Եգիպտոսի դեմ լիովին ձախողվեց։ ԱՄՆ-ը այդ դեպքերի ժամանակ չպաշտպանեց իր դաշնակիցներին, և ոչ միայն չպաշտպանեց, այլև, ընդհակառակը, ՄԱԿ-ում միացավ այն պետություններին, որոնք առաջարկում էին դադարեցնել ռազմական գործողությունները և զորքերը դուրս հանել Եգիպտոսից։ Բնորոշ է այն, որ ԱՄՆ-ը օգնություն ցույց չտվեց նաև Եգիպտոսին։*

*ԱՄՆ-ը ուներ իր հեռու գնացող նպատակները, որոնք հետագայում ի հայտ եկան «էյզենհաուերի դոկտրինա» անվան տակ, որն ուժի մեջ մտավ 1957 թ. մարտի 5-ին։ Էյզենհաուերի դոկտրինան՝ Մերձավոր արևելքի երկրների՝ նոր ձևերով*

18 *«Դաշնակ ազգային քաղաքականության ձախողությունը», «Երիտասարդ Հայաստան», 3 մարտի, 1959։*

*գաղութացման ամերիկյան քաղաքականության իրականացման սկիզբն էր։*

*Սակայն ԱՄՆ-ի կառավարության արտաքին քաղաքականության այդ նոր կուրսը ուժեղ դիմադրության հանդիպեց արաբական երկրների և, հատկապես, Եգիպտոսի ու Սիրիայի կողմից։ Իսկ մի շարք արաբական պետություններ, որոնք ընդունեցին Էյզենհաուերի դոկտրինան, փաստորեն դեմ գնացին իրենց ժողովուրդների շահերին։ Հատկապես մեծ դժգոհություններ սկսվեցին Լիբանանում, որի պրեզիդենտ Շամունը, լինելով իմպերիալիզմի գործակալը և դեմ գնալով սեփական ժողովրդի շահերին, ընդունեց Էյզենհաուերի դոկտրինան։*

*Դժգոհ պրեզիդենտ Շամունի, պրեմիեր-մինիստր Սամի Սոլհի և արտաքին գործոց մինիստր Մալիկի պրոիմպերիալիստական քաղաքականությունից՝ աշխատավորական լայն մասսաները և ազգային բուրժուազիայի մի զգալի մասը հանդես եկան կառավարության դեմ։*

*ԱՄՆ-ի կառավարությունը հայտարարեց, որ ապստամբությունը ճնշելու համար ամերիկյան զորքերը պետք է մանեն Լիբանան։ Այդ քաղաքական լարված մթնոլորտում, 1958 թ. հուլիսի 14-ին, հեղաշրջում տեղի ունեցավ Իրաքում, որը տապալեց Ֆեյսալ թագավորի և պրեմիեր-մինիստր Նուրի Սաիդի հակաժողովրդական ռեժիմը։*

*Իմպերիալիզմի հենարանները արագորեն կործանվում էին։ Բայց իմպերիալիզմը հեշտությամբ չի հանձնվում։*

*1958 թ. հուլիսի 15-ին ամերիկյան զորքերը մտան Լիբանան։ Այդ ոչնչով չքողարկված ինտերվենցիան ԱՄՆ-ը ձգտում էր արդարացնել նրանով, որ իբր Հուսեյն թագավորը և պրեզիդենտ Շամունը «օգնություն են խնդրել»։ ԱՄՆ-ի ինտերվենցիայի հետ միաժամանակ Անգլիան իր զորքերը մտցրեց Հորդանան։*

*ԱՄՆ-ը նպատակ ուներ մինչև ՄԱԿ-ում Լիբանանի հարցի վերջնական քննարկումը և որոշում ընդունելը, ամրապնդել Շամունի դիրքերը երկրի ներսում։ Սակայն այդ նրան չհաջող-*

վեց։ 1958 թ. հուլիսի 31-ին Լիբանանի պառլամենտը Շամունի փոխարեն ընտրեց Ֆուադ Շեհաբին։ Պրեմիեր-մինիստր նշանակվեց ապստամբության առաջնորդներից մեկը՝ Ռաշիդ Քարամեն։

Ի վերջո, ամերիկյան զորքերը 1958 թ. հոկտեմբերի 8-ին թողեցին երկրի սահմանները։ Անհաջողությամբ վերջացավ նաև անգլիական ինտերվենցիան Հորդանանում։

Այժմ տեսնենք, թե այդ դեպքերի նկատմամբ ինչպիսի վերաբերմունքը ցույց տվեց դաշնակցությունը։

Ճշտորեն վերլուծելով դաշնակցության հակահեղափոխական դերը ազգային-ազատագրական պայքարի գործում, հընչակյանները գրում են. «Դաշնակցությունը արաբական երկըրներում ճանաչված է ու վարկաբեկված որպես արևմտասեր և արևմուտքի կայսերապաշտ երկրների հաշվույն գործող քաղաքական կազմակերպություն մը...

Օրինակ՝ Լիբանանի մեջ անոնք պայքարեցան Շամունի կողքին, Սուրիոյ մեջ՝ Ջայիմի ու Չիշեքլիի կողքին, Իրաքի մեջ՝ Ֆեյսալի ու Նուրի Սայիդի կողքին, Եգիպտոսի մեջ՝ Ֆարուքի ու «Վաֆտի» կողքին, ինչպես որ այսօր թիկունք կկանգնին Հորդանանի Հուսեյն թագավորին ու Իրանի շահին՝ հավատարմության ու անվերապահ ծառայության իրենց հավատիքները անոնց ոտքերուն առջև դնելով...»[19]։

Հնչակյան թերթի արտահայտած այս միանգամայն ճիշտ կարծիքը բաժանում են սփյուռքահայ բոլոր առաջադիմական ուժերը։

Պատմական դեպքերի լայն կապակցությունների մեջ վերլուծելով դաշնակցության քաղաքականությունը, հատկապես նկատի ունենալով նրա՝ իմպերիալիզմի լագերում գըտնվելը, մեզ համար պարզ է դառնում, թե ինչու հիմքից զուրկ պետք է համարել այդ կուսակցության լիդերների պնդումները՝ իրենց կողմից ազգային-ազատագրական պայքարի պաշտպանության մասին։

19 Նույն տեղում, 6 մարտի, 1959։

*Այո՛, դաշնակցական մամուլում երբեմն հանդիպում են գեղեցիկ ֆրազներ գաղութային և կիսագաղութային ժողովուրդների ազատագրության անհրաժեշտության մասին, բայց դա, իհարկե չի կապվում իմպերիալիզմի գաղութային քաղաքականության մերկացման հետ, ընդհակառակը, պարզվում է, որ իմպերիալիզմն ինքն է «կամավոր կերպով» ազատագրում իր գաղութները և դրանով իսկ դադարում... իմպերիալիստական լինելուց*[20]*։*

*Բոլորովին էլ պատահական չէ, որ դաշնակցությունը ողջունում է Էյզենհաուերի դոկտրինան և հրճվանքով շարադրում այն «օգուտները», որ արաբական երկրները կարող էին ստանալ նրանից*[21]*։*

*Երբ արաբական երկրների մեծամասնությունը հրաժարվեց ընդունել Էյզենհաուերի դոկտրինան, այն դիտելով որպես միջամտություն իրենց ներքին գործերին, դաշնակցության գրչակները խիստ զայրացած մեղադրում էին այդ երկրների ղեկավարներին, գտնելով, որ նրանք բոլորն էլ պետք է ողջունեին այդ դոկտրինան՝ իբրև իրենց երկրների անկախության պահպանման լավագույն գրավականներից մեկը*[22]*։*

*Իմպերիալիզմի պրոպագանդայի վաղուց կիրառվող և ամենապրիմիտիվ ձևերից մեկն է՝ ըմբոստացող երկրին վախեցնել «օտար գործակալների» միջամտությամբ տվյալ երկրի ներքին գործերին և ապա դրանով իսկ հող ստեղծել այդ երկրի գաղութացման համար։*

*Տվյալ դեպքում Լիբանանը բացառություն չկազմեց։ Դաշնակցությունը՝ հարազատ իր ավանդական գործունեությանը, երկրի ներսում կառավարության պրոիմպերիալիստական քաղաքականության դեմ ծավալվող շարժման մեջ տեսնում էր «օտար գործակալներու» դրդումը։ Լիբանանի քաղաքական կյանքի լարված օրերին դաշնակցությունը գրում էր. «Ամբո-*

---

20 *«Հայրենիք», 5 հոկտեմբերի, 1950։*

21 *«Պատնեշը վտանգին դեմ» (խմբագրական), «Հայրենիք», 2 փետրվարի, 1957։*

22 *«Միջին Արևելքի տագնապը», «Հայրենիք», 17 հոկտեմբերի, 1957։*

խը, օտար գործակալներու դրդումով», կը փորձէ զինյալ ապստամբություն մը պայթեցնել Քամիլ Շամունի Արևմտամետ կառավարության դեմ»[23]:

Դաշնակցությունը, այսպիսով, առանց երկընտրանքի, պաշտպանում էր Շամունի պրոիմպերիալիստական կառավարությունը, իսկ երկրի ներսում ծավալված համաժողովրդական շարժումը համարում օտար գործակալների գործ: Եվ դա հասկանալի է, չէ՞ որ Շամունի կառավարությունն, ըստ դաշնակցության, համարվում էր «օրինավոր կառավարություն», իսկ վերջինիս արևմտամետությունը ցույց է տալիս, որ նրանք երկուսն էլ գտնվում են մի լագերում և հարազատորեն ծառայում միջազգային իմպերիալիզմին: Մի՞թե նրանք կարող էին չպաշտպանել իրար:

Վերոհիշյալ հանգամանքը լիովին հասկանալի է դառնում Բեյրութի արաբերեն լեզվով հրատարակվող «Ալ-Ախպար» օրաթերթի 1958 թ. հոկտեմբերի 26-ի համարում տպագրված հոդվածը, որում ասվում է. «Իր իշխանության ամբողջ տևողության ընթացքին, Շամուն հովանավորեց դաշնակ ավազակախումբը: Շամուն նպատակ ուներ այս ձևով տիրանալ հայ ժողովրդին և զայն գործածել իր ոճրային նպատակների համար: Այդ իսկ պատճառով ան քաջալերեց և պաշտպանեց այս ավազակախումբը և օգնեց անոր: Ան նույնիսկ փորձեց հայերու կողմէ անիծված այս տարրին ավազակախումբը հանրության ներկայացնել որպես հայ պանդխտածներուն մոտ մեծ վարկ ու ժողովրդականություն վայելող կուսակցություն մը...»[24]:

Դաշնակների գործունեությանը նույն գնահատականն են տալիս նաև Դամասկոսի՝ «Էլ-Սարխա» և Հալեպի «Էլ-Թիբաթի»

23 «Անխաղաղ կացություն Լիբանանի մեջ», «Հայրենիք», 14 մայիսի, 1958:

24 «Դաշնակները ոչ մեկ կապ ունին հայ ժողովրդի պանդխտածներուն հետ» (այս վերնագրի տակ արտատպված է Բեյրութի «Ալ-Ախպար» օրաթերթի 1958 թ. հոկտեմբերի 26-ի հոդվածը), «Երիտասարդ Հայաստան», 16 դեկտեմբերի, 1958:

*թերթերը, որոնցում հրապարակված հոդվածները արտատպեց հայ առաջադիմական մամուլը: Նշված հոդվածներում վերլուծվում էր դաշնակցության հակաժողովրդական, պրոիմպերիալիստական քաղաքականությունը, բերվում բազմաթիվ փաստեր այդ կուսակցության լրտեսական, հակաարաբական գործունեության մասին։ «Այլևս եկած է ժամանակը,— գրում էին արաբական թերթերը,— երբ անկեղծ ու հայրենասեր հայերն ու արաբները բանան իրենց խոսքը և դեմ կենան դաշնակ այս ահաբեկչության. իրենց շարքերը մաքրեն ոճրագործներու այս խմբակին ու անոր հետևորդներին, իմպերիալիզմի այս պոչերն ու հինգերորդ զորասյունին»[25]:*

*Հայ-արաբական առաջադիմական ուժերի համար դաշնակցության հակահեղափոխական դերը ազգային-ազատագրական շարժման մեջ միանգամայն պարզ էր։ Նրանք եղբայրական ժողովուրդների աշխատավորական զանգվածներին միշտ էլ զգուշացնում էին դաշնակների գործունեությունից բխող վտանգներից:*

*Հայկական առաջադիմական ուժերը նաանդ չէին խնայում աշխատավորական զանգվածների առաջ մերկացնելու դաշնակցության հակահեղափոխական, հակաժողովրդական էությունը։ Հնչակյան «Արարատ» թերթը Լիբանանի դեպքերի լարված օրերին մարտականորեն քողազերծում էր դաշնակցության եղեռնագործությունները: «Եվ այսօր,— ասվում է «Արարատ»-ում,— երբ ծածանվում է արաբների ազատագրության դրոշը, պայքար է մղվում նահանջող իմպերիալիզմի դեմ, դաշնակցությունը պաշտպանում է իմպերիալիզմին, լավ հասկանալով, որ վերջինիս կործանումով կործանվում է*

25 *«Ոճրագործներու խմբակ մը մեր հայ եղբայրներուն անոնք կը շահագործեն ու կը վտանգեն անոնց գոյությունը, անձնական շահերէ տարված» (այս վերնագրի տակ շարադրված է Դամասկոսի «Էլ-Սարխա» և Հալեպի «Էլ-Թերաքիե» թերթերում հրապարակված, դաշնակցության քաղաքականությունը մերկացնող հոդվածների բովանդակությունը), «Արարատ», 31 մայիսի, 1957։*

նաև իր արկածախնդրական քաղաքականությունը, նա տեսնում է իր մահը»[26]։

Դաշնակցությունն այդ բանը շատ լավ է հասկացել։ Դաշնակցության բախտը անխզելիորեն կապված է միջազգային իմպերիալիզմի, և առաջին հերթին, ԱՄՆ-ի իմպերիալիզմի հետ։ Սեփական ժողովրդից մերժված և իմպերիալիզմի վարձկաններ դարձած կուսակցության լիդերները գիտակցում են, որ իմպերիալիզմի կործանումը իրենց իսկ կործանումն է։ Այդ պատճառով էլ բոլորովին զարմանք չի հարուցում այն, որ դաշնակցությունը ոչինչ չի խնայում՝ արդարացնելու իմպերիալիզմի քաղաքականությունը։

Երբ ԱՄՆ-ը զորք իջեցրեց Լիբանան, իսկ Անգլիան՝ Հորդանան, դաշնակցական գրչակները ճիգեր էին թափում արդարացնելու այդ ինտերվենցիան, նորից կրկնելով իմպերիալիզմի այն պատճառաբանությունը, թե իբր Լիբանանի և Հորդանանի կառավարությունները իրենք են օգնություն խնդրել բարեկամ երկրներից[27]։ «Բարեկամ երկրները» օգնության են եկել «պաշտպանելու համար իրենց համակիր երկիրները, անոնց օրինավոր կառավարությունները և անկախությունը և վերջապես, պաշտպանելու համար իրենց քաղաքացիները», ինչպես միշտ, առանց ամոթի կեղծելով բոլոր փաստերը, գրում է «Հայրենիք» օրաթերթը իր խմբագրականում[28]։

Նույն խմբագրականում չի հաջողվում ընթերցողից թաքցնել այն, որ այդ բոլորը արվում է ազգային-ազատագրական շարժման առաջն առնելու մտադրությամբ։ «Նախազգուշական այս քայլերը,— գրում է «Հայրենիքը», փորձելով արդարացնել ԱՄՆ-ի և Անգլիայի ինտերվենցիան,— առնվեցան, որովհետև Իրաք, Պաղտատի ուխտին կարևորագույն անդամներեն մեկը, ներքին ու անակնկալ հեղափոխությամբ մը տապալեց

26 «Դաշնակցության ճգնաժամը» (խմբագրական), «Արարատ», 6 մարտի, 1958։

27 «Պատերազմի վտանգը» (խմբագրական), «Հայրենիք», 20 հուլիսի, 1958։

28 Նույն տեղում։

օրինավոր իշխանությունը, ձեռք առավ զայն, սպառնալով արաբական մյուս երկրներուն ալ, Հորդանանի և Լիբանանի, որոնք կրնային զոհ երթալ հանուն համաարաբական շարժման մը սկսած գործին»[29]։

Դաշնակցական թերթերից վերը բերված մեջբերումները անառարկելիորեն վկայում են, որ դաշնակցությունը պաշտպանելով «օրինավոր իշխանությունները», հանդես է գալիս ազգային-ազատագրական շարժման և հեղափոխության դեմ՝ հօգուտ միջազգային իմպերիալիզմի շահերի։

Դաշնակ «տեսաբանները» պաշտպանության տակ են առնում ԱՄՆ-ի և Անգլիայի ինտերվենցիան արաբական երկրներում, այն արդարացնելով նրանով, որ այդ իմպերիալիստական երկրները պետք է փակեն Իրաքի հեղափոխության ճանապարհը, որը կարող էր տարածվել Լիբանան, Հորդանան և այլ երկրներ։

Եթե դաշնակցությունն անգամ, իբր, «չեզոք» քաղաքականություն վարեր՝ (զենքը ձեռքին հակահեղափոխական ուժերին չօժանդակեր) այն երկրների հասարակական երևույթների նկատմամբ, ուր գտնվում են հայկական գաղութները, ապա միևնույն է մամուլում տարվող նմանօրինակ պրոպագանդան, ոչ մի դեպքում չի կարող որակվել որպես չեզոքության քաղաքականություն։ Երկրի ներսում լարված իրադրության պայմաններում «օրինավոր իշխանությանը» հավատարիմ լինելու պրոպագանդան դա մի կոչ էր տեղական ժողովուրդներին, հանդես գալու այդ իշխանության պաշտպանությամբ։ Իմաստուն չպետք է լինել հասկանալու համար, որ քաղաքականության մեջ չկողմնորոշվող կամ թույլ կողմնորոշվող աշխատավորը, կարդալով դաշնակցական մամուլը, կարող էր կարծել, թե պետք է կանգնել «օրինավոր իշխանության» կողմնակիցների շարքերում և ոչ թե ազգային-ազատագրական պայքարի մարտիկների։

Ահա թե ինչպիսի չեզոքություն է վարում դաշնակցու-

---

29 Նույն տեղում։

թյունը։ Դաշնակցությունը, սակայն, միայն պրոպագանդայով չի բավարարվում, ընդհակառակը, նա ակտիվ կերպով մասնակցում է արաբական արևելքի երկրների ներքին իրադարձություններին և ջանում բոլոր ուժերով պայքարել ազգային-ազատագրական շարժման դեմ։

Էյզենհաուերի դոկտրինան ընդունելուց հետո, Շամունի դեմ կազմակերպվող համաժողովրդական շարժումներին արաբների հետ միասին մասնակցեց ամբողջ հայ գաղութը՝ իր բոլոր կազմակերպություններով, բացառությամբ դաշնակցության։

Սակայն դաշնակցությունը չբավարարվեց իր իսկ հայտարարած «չեզոքության» քաղաքականությամբ, և Շամունի կողմնակիցների հետ միասին մասնակցեց 1957 թ. մայիսին հայ-արաբական առաջադիմական ուժերի կողմից կազմակերպված խաղաղ ցույցի գնդակոծմանը[30]։

Դաշնակցական մաուզերիստները սպանեցին և վիրավորեցին առաջադիմական ուժերին պատկանող բազմաթիվ հայ գործիչների։ «Պեյրութ 13—հայ մը սպաննուեցաւ և ուրիշ մը վիրաւորուեցաւ կռուի մը ընթացքին, որ տեղի ունեցաւ Շամունի համակիր հայկական դաշնակցական կուսակցութեան և անոր հակառակորդ ուրիշ հայերու միջև»[31],— գրում է «Հուսաբերը», չծածկելով, որ դաշնակցությունը համակրում է Շամունին՝ ակտիվորեն մասնակցելով նրա հակառակորդների դեմ մղվող պայքարին։

Այնուհետև, դեպքերի զարգացմանը զուգընթաց, դաշնակցությունն ավելի ու ավելի ուժեղացրեց իր մասնակցությունը հակահեղափոխական շարժմանը։ 1958 թ. ամենալարված օրերին դաշնակցությունը կամավորներ տրամադրեց Շամունին, որոնք օգոստոսի 29-ին հարձակվեցին Բեյրութի խա-

30 Ա. Կիտուր, *Լիբանանն դեպի Ս. Հայաստան*, «Արարատ», 9 դեկտեմբերի, 1958։

31 «Հայ կուսակցությունների միջև միջադեպեր կը բազմանան Պեյրութի մեջ», «Հուսաբեր», 14 սեպտեմբերի, 1957։

լիլ Պատեի թաղի վրա և գնդակոծեցին բնակչությանը, բայց արժանի հակահարված ստացան:

Ֆուատ Շեհաբի իշխանության գլուխ անցնելուց հետո, դաշնակցությունը խորամանկելով փորձեց ձեռք մեկնել վերջինիս, սակայն, երբ պարզվեց Շամունի խաղաղությունը, դաշնակցությունը հավատարիմ իմպերիալիզմին, նորից անցավ վերջինիս պաշտպանությանը[32]:

Դաշնակցության՝ իմպերիալիզմի և գաղութային սիստեմի պաշտպանության քաղաքականությունը լիովին բացահայտելու համար հետաքրքիր է նաև այն, որ Նուրի Սաիդի վարչապետությունն առանձին հեռագրով շնորհավորել է Անթիլիասի կաթողիկոսին: Շամունը Նասերի դեմ իր ճառը հեռարձակեց Անթիլիասի հայ կաթողիկոսարանից[33]:

Այսպիսի պայմաններում ինչքան էլ դաշնակ լիդերները աղաղակեն իրենց «չեզոք» քաղաքականության մասին, միևնույն է, ոչ մեկը չի հավատա դրան, որովհետև փաստերը հակառակն են ասում:

Արաբական ժողովուրդները երկար ժամանակ է, ինչ հայերի հետ համատեղ պայքար են մղում աշխատավորության թշնամիների դեմ և, բարեբախտաբար, շատ լավ գիտեն, որ դաշնակների ու հայ առաջադիմական ուժերի, հայ աշխատավորության միջև ոչ մի կապ չկա: Դաշնակցությունը կապված է իմպերիալիզմի, իսկ հայ առաջադիմական ճակատը՝ ազգային-ազատագրական պայքարի հետ:

«Հայ հայրենասերները,— գրում է Բեյրութի «Ալ-Ախպար» օրաթերթը,— կոմունիստներ, հնչակյաններ, ռամկավարներ և անկուսակցականներու հոծ զանգվածներ, վճռականորեն կը կանգնեին իրենց արաբ եղբայրներու կողքին, որոնք կպայքարեին հանուն իրենց անկախության և ազատագրու-

32 «Հնչակյան կուսակցությունը Լիբանանի ազգային հեղափոխության օրերուն» (խմբագրական), «Արարատ», 15, 17, 19, 20, 22, 25, 27, 29 մարտի, 1959։

33 Ս. Շահեն, Արար երկիրներու գաղութահայերը և արաբական ազգայնականությունը, «Սովետական Հայաստան», 31 հոկտեմբերի, 1958։

թյան։ Սրով կբացատրվի այն իրողությունը, որ Խալիլ Պեահլի, Հաճընի, Զարչարուքի, Մալախի, Ցուֆի և այլ շրջաններու մեջ, անոնք մեծ զանգվածներով միացան ժողովրդային դիմադրության ուժերուն՝ լիբանանյան հեղափոխության ընթացքին։ Ասիկա կպատահեր այն պահուն, երբ դաշնակները կջանային ու կշարունակեին հայ ժողովուրդը տանիլ իմպերիալիստներու և անոնց գործակալներու ետևեն և որպես պահեստի ուժ տրամադրել անոնց։ Դաշնակներու այս կեցվածքին մասին կվկայեն ազգային շարժումին դեմ անոնց կատարած դավադրությունները ու լրտեսությունները և այդ շարժումին մասնակից հայ և արաբ քաղաքացիներու անխտիր սպանությունները...»[34]։

Իզուր են բյուրոյականները նիզակ ճոճում նրանց դեմ, ովքեր դաշնակցությունը Շամունի կողմնակիցներ են անվանում։ Ինքը՝ «Հայրենիքը», Լիբանանի լարված օրերին, մեջբերում է կատարում ԱՄՆ-ում հրատարակվող մի թերթից, որում ասվում է. «Դաշնակները Քամիլ Շամունի կառավարության դատը կպաշտպանեն, իսկ անոնց հակառակորդները... կանգնած են Լիբանանի ապստամբական շարժումը վարողներու թիկունքին»[35]։ Բերելով այս տողերը, դաշնակցական թերթը իր խմբագրականում փորձում է հերքել այն, սակայն, այդ նրան չի հաջողվում, անկախ նրանից, որ խմբագրականը վերնագրված է՝ «Միշտ հավատարիմ և օրինապահ»։ Վերջապես, կուսակցության գնահատականը տրվում է ոչ թե նրա պրոպագանդայի, այլ միայն ու միայն գործնական աշխատանքի հիման վրա։

Դաշնակցությունը ոչ միշտ է հաջողվում խորամանկել և ցույց չտալ իր սեփական դեմքը։ Դաշնակցական մամուլում լույս է տեսել Ս. Վրացյանի՝ Լիբանանի դեպքերին նվիրված հոդվածը, որում նա խնդիր է դնում տալ այդ դեպքերի պատճառները և ընթացքը։ Չթաքցնելով իր, հետևաբար և դաշնակ-

34 Նույն տեղում, 16 դեկտեմբերի, 1958։

35 «Միշտ հավատարիմ ու օրինապահ» (խմբագրական), «Հայրենիք», 6 սեպտեմբերի, 1958։

ցության կուսակցության համակրանքը Շամունի նկատմամբ, նա գրում է. «Եվ զարմանալի է, որ Քամիլ Շամունի նման արթուն նախագահ մը ժամանակին չէր նախատեսած և միջոցներ ձեռք չէր առած անոր դեմ»[36]:

Ս. Վրացյանն ավելի խորանալով Լիբանանի դեպքերի լուսաբանման մեջ, փաստերի ճնշման տակ, դրանք բացատրում է հետևյալ կերպ. Շամունը արևմտյան քաղաքականության էր հետևում, որի պատճառով Լիբանանը ընդունեց Էյզենհաուերի դոկտրինան: Շամունի հակառակորդները դեմ էին այդ օրենտացիային և, Լիբանանը, նկատելով արաբական աշխարհի անբաժան մասը, ցանկանում էին, որ այն կտրվի Արևմուտքից[37]:

Պետք է աչքաթողության տալ, որ Ս. Վրացյանի արտահայտած կարծիքը լիովին չի համընկնում վերը մեր կողմից շարադրված դաշնակցության տեսակետի հետ: Եզրափակելով իր միտքը, Վրացյանը գրում է. «Մենք օրինական իշխանության հետ ենք և մասնակից չենք քաղաքացիական կռիվներին», միայն կոմունիստները, հնչակները և ռամկավարները մասնակցեցին Շամունի դեմ մղված պայքարին[38]:

XX դարի երկրորդ կեսում, երբ գաղութային սիստեմը ապրում է իր վերջին օրերը և ազգային-ազատագրական պայքարը համարվում է դարիս քաղաքական կյանքի հիմնական հարցերից մեկը, «չեզոքությունը» մարդկության զարգացման արդի փուլի խիստ կենսական այդ հարցի նկատմամբ համազոր է դավաճանության և հակահեղափոխության:

Բայց, ինչպես ցույց են տալիս փաստերը, դաշնակցությունը ոչ միայն չեզոք չէ, այլև, ելնելով միջազգային իմպերիալիզմի շահերից, ակտիվորեն պաշտպանում է «օրինավոր կառավարություններին»: Եվ ոչ միայն այդ, նա դրվատում է միջազգային իմպերիալիզմի կողմից սոցիալիզմի լագերի դեմ

36 Ս. Վրացյան, Լիբանանի հեղափոխությունը, «Հայրենիք», 4 նոյեմբերի. 1958:

37 Նույն տեղում:

38 Նույն տեղում:

կռվելու և Թույլ երկրների շահագործման համար կյանքի կոչված տարբեր տեսակի բլոկները։ Իմպերիալիզմի գործերի պաշտպանությունը կատարվում է բացահայտորեն։ Այդ կուսակցության կողմից գովաբանվում է բլոկների ստեղծման և սառը պատերազմ վարելու քաղաքականությունը։ Զգալով, որ խաղաղ տնտեսական մրցության մեջ պարտվողը հանդիսանալու է իմպերիալիզմը, դաշնակցությունը գոչում է, թե կոմունիստների դեմ կռվելու համար անհրաժեշտ են նաև քաղաքական ու «մանավանդ զինական ու զինվորական միջոցներ»[39]։ Նման դիրքավորումը հիմք է ստեղծում ռազմական բլոկների և տարբեր տեսակի դոկտրինաների արդարացման համար։ Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ դաշնակ «տեսաբանները» կաշվից դուրս գալով գովաբանում էին Մարշալի պլանը[40], իսկ հետագայում՝ Հյուսիս-Ատլանտյան ագրեսիվ պակտը[41], այն անվանելով իմպերիալիզմի զրահ։ ՍԵՆՏՕ-ի, ՍԵԱՏՕ-ի, Բաղդադի պակտի և մյուս բոլոր զինակցությունների ստեղծումը գտնում էր դաշնակցության ջերմ համակրանքը։

Դաշնակցության կարճամիտ ղեկավարները կարծում են, թե բլոկները ի վիճակի են փրկելու իմպերիալիզմը անխուսափելի կործանումից։ Նրանք չեն հասկանում, որ իմպերիալիզմը կործանող հիմնական ուժը գտնվում է ոչ թե Մոսկվայում, այլ հենց իրենց մոտ՝ Արևմուտքում։

Չհասկանալով պատմության զարգացման օբյեկտիվ օրենքները և կարծելով, թե հասարակության զարգացումը կարելի է արգելակել բլոկներով, բազաներով ու զինակցություններով, դաշնակցությունը 1955 թ. հոխորտալով գրում էր. «Հիմա որ զինակցություններու ցանցը կազմված է,—Հյու-

39 «Հայ դատը և աշխարհի հակամարտ ուժերը», «Հայրենիք», № 4, 1948, էջ 106։

40 Նույն տեղում, № 4, 1948, էջ 103, № 8, 1949, էջ 90։

41 Նույն տեղում, № 4, 1948, էջ 98։ «Հուսաբեր», 16 մայիսի, 1957։

սիս-Ատլանտյան, Եվրոպայի Միության և Մանիլայի զինակցություն— կարելի է խոսել այլևս Մոսկվայի հետ»[42]:

Իմպերիալիզմի ագրեսիվ այս քաղաքականությունը պաշտպանության տակ է առնվում այն կեղծ պատճառաբանությամբ, որ իբր թե ՍՍՌՄ-ը և սոցիալիզմի լագերի մյուս պետությունները ագրեսիվ են, որոնք ցանկանում են ամբողջ աշխարհը գցել իրենց տիրապետության տակ: Սա է իմպերիալիզմի պրչակների և նրանց կրկնող դաշնակ լրագրողների երգի հիմնական լեյտմոտիվը:

Այն գաղութային երկրները, որոնց իմպերիալիզմն ի վիճակի չլինելով դիմագրավել «զիջում է», կամ ինչպես դաշնակցությունն է գրում, «անկախություն է տալիս», հետագայում դրոշ են դառնում բուրժուազիայի «տեսաբանների» ձեռքում՝ ապացուցելու, թե իմպերիալիզմը փոխում է իր բնույթը, թե նա կամավոր ազատություն է տալիս գաղութային երկրներին: Դաշնակցությունը նույնպես կրկնում է այդ կեղծիքը՝ ամենատարբեր ձևերով:

Բայց չէ՞ որ կան երկրներ, որոնց իմպերիալիզմը ոչ մի գնով չի ցանկանում թողնել իր ճիրաններից: Թվում է, թե այստեղ արդեն դաշնակցությունն այլևս ասելու բան չունի, ամեն ինչ պարզ է ու հասկանալի: Կուբայի, Կոնգոյի, Ալժիրի և մի շարք այլ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի պատմությունը վառ ապացույցն է այն բանի, թե իմպերիալիզմը ինչպիսի վերաբերմունք ունի դեպի ազգային-ազատագրական պայքարը:

Դաշնակցությունը չի դրվատում վերահիշյալ երկրների ժողովուրդների ազատագրական պայքարը և քննադատում Արևմուտքին, ընդհակառակը, նա թուր ու մուր է թափում, մեղադրելով... Սովետական Միությանը: Դաշնակցությունը բոլոր երկրներում հանդես է գալիս ազգային-ազատագրական պայքարի դեմ՝ ի պաշտպանություն իմպերիալիզմի շահերի: Միշտ հետադիմական ուժերի հետ, միշտ ռեակցիայի հետ—

---

[42] «Ֆրանսիայի պատմական քայլը» (խմբագրական), «Հայրենիք», 30 մարտի, 1955:

ահա սա է դաշնակցության քաղաքականության անկյունաքարը։

Քանի որ դաշնակցությունը գտնվում է իմպերիալիզմի լագերում, ապա, բնականաբար, նա անում է ամեն ինչ, որպեսզի հաղթանակողը լինի իմպերիալիզմը։ Այսպիսի պայմաններում մի՞թե զարմանալի է, որ նախկինում իրեն շահերի և սուլթանների թշնամի համարող, և նույնիսկ «սոցիալիստական» պիտակը կրող կուսակցությունը, այժմ հանդես է գալիս դրանց պաշտպանությամբ։ «Իրանը ունի լուսավոր և ժողովրդական վեհապետ մը, որուն անունը ապահովաբար պետք է անցնի իր երկրին պատմության մեջ, իբրև մեկը ամենեն ժողովրդասեր արքաներեն»[43],— գրում են դաշնակցականները։

Այն ժամանակ, երբ Իրանում իշխանության գլուխ անցավ Մոսադիկը, որը համարձակորեն պայքար սկսելով իմպերիալիզմի դեմ, ձեռնարկեց նավթային արդյունաբերության ազգայնացման գործը, դաշնակցությունը նիզակը ձեռքին հանդես եկավ նրա դեմ։ Ի՞նչու, չէ՞ որ Մոսադիկի քաղաքականության հետևանքով Իրանը կդառնար տնտեսապես անկախ, իսկ նավթից ստացվող հսկայական շահույթները կհարստացնեին ոչ թե միջազգային իմպերիալիզմին, այլ քայքայված վիճակում գտնվող երկրի բյուջեին։

Մոսադիկի ձերբակալումից հետո դաշնակցությունը մեծ գոհունակությամբ գրում էր. «Վերահաստատված է կարգը և վերաշինության, տնտեսական վերականգնումի ծրագիր մը կը հետապնդվի, դարմանելու համար Մոսադեղի չարիքները»[44]։ Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Իրանը պետք է ձեռք բերեր տնտեսական անկախություն, իսկ իմպերիալիստները զրկվեին իրենց շահույթներից. մի՞թե սա չարիք չէր դաշնակցության համար։

43 «Շահնշահը կը բաղձայ բարելավել հայության վիճակը», «Հայրենիք», № 9, 1955, էջ 111։

44 «Նոր կացությունը Իրանի մեջ» (խմբագրական), «Հայրենիք» 28 օգոստոսի, 1953։

Սուեզի դեպքերի կապակցությամբ դաշնակցական թերթերը Անգլիային և Ֆրանսիային չէին քննադատում, այդ մասին երկարաշունչ խմբագրականներ չէին գրում, սակայն Հունգարիայի և Լեհաստանի դեպքերը առիթ դարձան հակասովետական գրպարտությունների մի ամբողջ հեղեղ սանձելու համար:

Դաշնակցությունը Սիրիայում ավելի ակտիվ գործունեություն էր ծավալել: Սիրիայի դաշնակները ամեհագին զինվում էին հատկապես «Եգիպտոսի դեմ անգլո-ֆրանս- իսրայելական նախահարձակման նախօրյակին...»[45],— գրում է Լիբանանի կոմունիստական կուսակցության հայտնի գործիչներից Հարություն Մաղեյանը: Դաշնակցությունը, ինչպես ցույց են տալիս փաստերը, արագորեն զինվում էր առաջադիմական ուժերի դեմ՝ իմպերիալիզմի մղած պայքարին մասնակցելու համար: Բյուրոյականների հակազատագրական գործունեությունը Սիրիայում այն աստիճանի էր հասել, որ Հալեպի արաբական «էլ-Թեդադիե» թերթը տակավին 1955 թ. դեկտեմբերի 23-ին հանդես եկավ դաշնակցության դեմ, կառավարությունից պահանջելով մեջտեղից վերացնել այն «ախտությունը, զոր սանձված են դաշնակները Սուրիո մեջ, բռնաբարելով երկրին օրենքները ու կանոնները, ինչպես նաև վտանգելով անդորրությունը»: Փոխանակ դադարեցնելու իրենց հակազատագրական գործունեությունը, դաշնակցության օրգանը, ընդհակառակը, ներքին պառակտումը ուժեղացնելու համար, հանդես է գալիս «Արաբները կթունավորեն» գրպարտչական խմբագրականով[46]:

Դաշնակցությունը սփյուռքում իր ամբողջ գործունեության ընթացքում մշտապես հանդես է եկել իմպերիալիզմի դիրքերի պաշտպանությամբ: «Մեր նշանաբանն է հառաջ»

---

45 Հար. Մաղեյան, Կարևոր ակնարկներ՝ Դամասկոսի մեջ շարունակվող դաշնակներու դատավարության վերաբերյալ, և պատմական ճշմարտություններ՝ փաստերու լույսին տակ, «Մեր նշանաբանն է հառաջ», 4 մարտի, 1962:

46 «Արաբները կթունավորեն» (խմբագրական), «Հուսաբեր», 2 փետրվարի, 1956:

առաջադիմական թերթը, վերլուծելով դաշնակցության քաղաքականությունը, գրում է. «Ո՞ւր էր դաշնակցությունը բանիվ և գործով, Լիբանանի ժողովուրդի Ազգային Հեղափոխության օրերուն— գաղտնապես Շամունի կողքին, իմպերիալիզմի վարձկան գործակալներու շարքերուն մեջ, արաբական ազգայնականության թշնամիներուն հետ:

Ո՞ւր էր դաշնակցությունը բանիվ և գործով, Իրաքյան Մեծ Հեղափոխության նախօրյակին—գաղտնապես Նուրի-Սաիդի կողքին, Իրաքի ժողովրդի թշնամիներու շարքերուն մեջ, իմպերիալիզմի վարձկան գործակալներուն հետ:

Ո՞ւր էր երեկ, ո՞ւր էր այսօր դաշնակցությունը, բանիվ և գործով, արաբական Հորդանանի մեջ—մանկլավիկ Հուսեյնի կողքին, Հորդանանի ժողովրդի ազատագրական պայքարին դեմ իմպերիալիզմի վարձկան գործակալներու շարքերուն մեջ:

Այսպես էր երեկ և այսպես է այսօր—ինչ դիմակ ալ կրե, ինչ կարգախոսով ալ ներկայանա, դաշնակցությունը է և չի կրնար չըլլալ արաբական ազգային-ազատագրական շարժման թշնամիներուն հետ, որովհետև ան վարձկան գործակալն է արևմտյան գաղութարարներուն, հլու կամակատարը անոնց, որոնք են ու կը մնան գլխավոր թշնամին արաբական ազգայնական շարժումին»[47]:

Ամերիկյան իմպերիալիզմը գոյարները վճարում է ոչ թե դաշնակցության ղեկավարների գեղեցիկ աչքերի, այլ պրակտիկ պրոիմպերիալիստական գործունեության համար: Ահա թե ինչու զարմանք չհարուցեց Սիրիայի անվտանգության օրգանների 1961 թ. օգոստոսի 2-ին Դամասկոսի թերթերում հրապարակված հաղորդագրությունը՝ իմպերիալիստական պետությունների օգտին գործող լրտեսական կազմակերպության հայտնաբերման մասին, կազմակերպություն, որի մեջ ընդգրկված էին դաշնակցության կուսակցության 37 անդամներ՝ կուսակցության բյուրոյի անդամ, լիբանանյան պառլա-

[47] «1958 թ. հաղթանակների տարի էր», «Մեր նշանաբանն է հառաջ», 4 հունվարի, 1959։

մենափ գնդապետ Մովսէս Տէր-Գալուստեանի գլխաւորութեամբ։

Դաշնակցութեանը ներկայացված մեղադրականում, որը փաստական տուեալներով անառարկելիօրէն հիմնաւորված էր, ընդհանուր դատախազը այդ կուսակցութեանը միանգամայն ճշմարիտ կերպով գնահատեց «Միջազգային «կուսակցութիւն» մը, որ հակահամայնավար պայքարի դիմակին տակ, արևմտեան պետութիւններու կողմէ կը քաջալերուի ու կը ֆինանսաւորուի, այս ձևով ծառայելու համար անոնց շահերուն և ուղեգիծին։ «Կուսակցութեան» կարգ մը անդամներ տեղեկութիւններ կը քաղեին բանակին և անոր շարժումներուն, ինչպէս նաև զէնքերու տեսակին շուրջ, և այդ տեղեկութիւնները կը ներկայացնէին իրենց պետերուն»[48]։

Դաշնակցութիւնը, որ տարիներ շարունակ խորամանկելով կեղծում էր և ազգային-ազատագրական պայքարի կողմնակից ու, նոյնիսկ դրօշակակիր կոչում իրեն, լիովին մերկացվեց։

Հայ-արաբական առաջադիմական մամուլը, դաշնակցութեան լրտեսական կազմակերպութեան հայտնաբերման կապակցութեամբ հանդես եկաւ դաշնակներին նշավակող բազմաթիվ հոդվածներով՝ նորից ու նորից ապացուցելով, որ այդ կուսակցութիւնը հանդիսանում է իմպերիալիզմի վարձկանը և ազգային-ազատագրական պայքարի թշնամին։ «Դամասկոսի իշխանութիւնները,— գրում է Բեյրութի «Ալ-Նիդա» թերթը,— դիմակազերծեցին դաշնակ կուսակցութիւնը որպես լրտեսական կուսակցութիւն մը, որ կը գործե կրօնական, մարդկային, բարեգործական և ֆութբոլի դիմակին տակ։ Արաբականութեան դեմ դաշնակ կուսակցութեան կատարած լրտեսական և դավաճանական արարքները հաստատված են և լիբանանյան արաբ պետութեան պարտականութիւնն է աչքը չգոցել ոճրագործներու և լրտեսներու գործունեութեան վրա և անընդհատ հարվածել ու հալածել զանոնք»։

---

[48] «Լրաբեր», 22 մարտի, 1962։

«Դաշնակցութիւնը,— ավելացնում է «Ալ-Հուրիա» թերթը,— ծանօթ է իբրև ֆաշիստական կուսակցութիւն մը, որ կկռթնի բոլոր վարչակարգերու և ի մասնավորի հետադիմական վարչակարգերուն վրա: *Հիմա որ հաստատուած է, թէ դաշնակցութիւնը իր բոլոր մարմինները գործի լծած է տեղեկութիւններ հավաքելու համար՝ ի ծառայութիւն բոլոր օտար պետութիւններու և Իսրայելի ու իր անդամները հետևած են զինավարժութեանց՝ ահաբեկչական արարքներ կատարելու համար, անհրաժեշտ է, որ պետութիւնը խիստ միջոցներու դիմէ անոնց նկատմամբ»:*

*Նույն միտքն է արտահայտում նաև «Ալ-Ախպար» թերթը, որը գրում է. «Գաղտնիք մը չէ այլևս թէ դաշնակցութիւնը սերտօրէն կապուած է իմպերիալիստական պետութիւններու լրտեսական սպասարկութեանց հետ: Ան սակայն չէ վարանած ծառայութիւններ մատուցանելու և օգնելու անոնց՝ հարվածելու և դավեր նյութելու համար* արաբական ազատագրական դաշտերուն, ինչպես նաև առաջադեմ և դեմոկրատական ուժերուն դեմ, արաբական յուրաքանչյուր երկրի և հատկապես *Սուրիո և Լիբանանի դեմ»*[49]:

*Դաշնակների դեմ իրենց արդար զայրույթն են արտահայտում նաև աշխարհի ամենատարբեր մասերում լույս տեսնող բազմաթիվ առաջադիմական հայկական թերթերը՝ մինչև վերջ մերկացնելով այդ կուսակցության հակահեղափոխական, լրտեսական գործունեությունը:*

*«Արարատ» թերթը վրդովված գրում է. «Պյուրոյական վերջին դավը եկավ միանգամայն հաստատելու, որ այս կազմակերպությունը դարձած է հայ ժողովուրդին հիմնական շահերին թելադրված քաղաքականություն մը վարելու: Հայրենասիրություն և ազգասիրություն քողեր են պարզապես, որոնք կը ծառայեն վարագուրելու Պյուրոյին ենթակայությունը օտար (ԱՄՆ) գաղտնի սպասարկության»*[50]:

---

49 *Ցիտատները վերցված են ռումինական «Նոր կյանք» հայերեն թերթից, 15 սեպտեմբերի, 1961 (ընդգծումները մերն են—Լ. Խ.):*

50 *«Արարատ», 5 օգոստոսի, 1961:*

Կոմունիստ Հարություն Մաղեյանը արտահայտելով սփյուռքահայ բոլոր առաջադիմական ուժերի կարծիքը, գրում է. «Մոլենս Տեր-Գալուստյանի և Տոքթ. Ե. Խաթանասյանի գլխավորած բյուրոյական դաշնակցությունը իմպերիալիստներուն, հատկապես ամերիկյան իմպերիալիզմին, լրտեսներ, մարդասպաններ և խափանարարներ հայթայթող դավադրական սպասարկություն մըն է միայն, որ կը դավադրե խաղաղության դեմ ամենուրեք և կը դավաճանե և հայ ժողովրդի, և արաբ ժողովուրդներու, և սուրիական ու արաբական բոլոր հայրենիքներուն, և հայ ժողովրդի Մայր հայրենիք Սովետական Հայաստանի ազգային վերածնունդի շահերուն»[51]:

Արաբական առաջադիմական ուժերը լավ են ճանաչում դաշնակցությանը և համոզված են, որ նա չի արտահայտում հայ ժողովրդի շահերը: «Պիտի ուզեինք այստեղ նշել,— գրում է արաբական «Ալ-Կումհուրիե» թերթը, թե դաշնակներու մասին խոսված ժամանակ չշփոթենք զանոնք հայ հավաքականության հետ: Դաշնակները կը ներկայացնեն քաղաքական շարժում մը որ ուրիշ ժողովուրդներու դավաճանելե առաջ, դավաճանած է իր ժողովրդին դեմ: Եվ մեր մեջ ապրող հայերը, ըլլա Հալեպի, Դամասկոսի կամ Գահիրեի մեջ, պարկեշտ քաղաքացիներ են, և արաբական հողին կապված են հավատարմությամբ և սիրով»[52]:

Նույն գնահատականն է տալիս նաև արաբական «Էլ-Շաաբ» թերթը, որը գրել է. «... Բոլոր հայերը դաշնակցական չեն. անոնք փոքր մեկ մասը կը կազմեն ազնիվ և պատվավոր հայկական համայնքին, որուն ներկայությունը պատիվ կը բերե հյուրընկալ երկրին...»[53]:

Ինչպես տեսնում ենք, իրոք, դաշնակցությունը, հանդիսանալով իմպերիալիզմի սպասարկուն, գործում է ազգային-ազատագրական պայքարի դեմ: Իմպերիալիզմի շահերի

51 «Մեր նշանաբանն է, հառաջ», 4 մարտի, 1962:

52 «Դաշնակցության մերկացումը» (խմբագրական), «Արարատ», 3 օգոստոսի, 1961:

53 Նույն տեղում, 5 օգոստոսի, 1961:

պաշտպանությունից ավելի բարձր նպատակ դաշնակցությունը, գոնե ժամանակակից էտապում, չունի: Ահա հենց դրանից էլ ելնելով, միանգամայն ճիշտ պետք է համարել հնչակի կարծիքն այն մասին, որ «դաշնակցությունը որպես քաղաքական համախմբում կորսնցուցած է իր գոյության իրավունքը օտարական երկիրներուն մեջ: Ան միայն կասկած ու կեղծիք կը ներշնչէ արաբ ժողովուրդներուն և կառավարությանց: Եվ այնքան ատեն, որ դաշնակցությունը իր ճակատագիրը կապած կը զանե գաղութարարներու ճակատագրին, արաբ ժողովուրդները ատելությամբ պիտի լցվեն անոր հանդեպ և պիտի չեզոքացնեն զայն՝ անկասկած»[54]:

Այն ժամանակ, երբ դաշնակցությունը ջանք չի խնայում իր հավատարմությունը ապացուցելու միջազգային իմպերիալիզմին, այդ կուսակցության որոշ «տեսաբաններ» այն կարծիքն են պաշտպանում, որ պետք է զգույշ լինել և հանդես գալ «չեզոքության» դրոշի ներքո: «Դաշնակցությունը քաղաքական անկախ գործունեություն չունի այն երկիրներուն մեջ՝ ուր կապրինք: Մեզի համար Արևելյան և Արևմտյան ճակատներ չկան»[55],— գրում է այդ կուսակցության «տեսաբաններից» Մինաս Թեոլոլյանը:

Վերը դաշնակցության քաղաքականության հիմնական ուղեգծին ծանոթանալուց հետո, կարելի է կարծել, թե դա մտքի սայթաքում է: Բայց ոչ: Այդ տողերը գրելուց մեկ տարի հետո նույն հեղինակը կրկնում է, որ դաշնակցությունը «կը մերժե նաև արևմտյան աշխարհակալությունը»[56]: Այս միտքը հանդիպում է դաշնակցական մի շարք այլ գործիչների մոտ ևս:

Սակայն, վերոհիշյալ մտքերը ոչ մի կերպ չի կարելի համատեղել Ռ. Դարբինյանի կարծիքի հետ, որը գրում էր. ոմանք կարծում են, թե հայությունը, և, ընդհանրապես, փոքր

54 Նույն տեղում, 12 փետրվարի, 1959:

55 Մ. Թէօլէօլեան, Ինչ բան կը բաժնէ մեզ մեր հակառակորդներէն, «Հուսաբեր», 4 սեպտեմբերի, 1957:

56 «Ազդակ», 28 դեկտեմբերի, 1957:

*ազգերի համար ամենաճիշտ քաղաքականությունը չեզոքությունն է: Դա սխալ է. «...Աշխարհի ներկա վիճակի մեջ ոչ միայն փոքր, այլև մեծ ազգերը չեն կրնար չեզոք մնալ»[57]:*

*Դաշնակցության ղեկավարների այս խրատամերժ կարծիքները մեզ հիմք չեն տալիս ենթադրելու, որ այդ կուսակցության ներսում կան խորը հակասություններ՝ քաղաքականության այդքան լուրջ հարցերի շուրջը: Դաշնակցության գործիչների մոտ նկատվող այդ «տարակարծությունները» բացատրվում են այդ կուսակցության ամբողջական գաղափարախոսության բացակայությամբ և հեղհեղուկ քաղաքականությամբ: Դաշնակցության ղեկավարների հիմնական մասը գտնում է, որ լիաձայն պետք է պրոպագանդել իմպերիալիզմի քաղաքականությունը և պայքարել սոցիալիզմի լագերի դեմ: Այս քաղաքականությունը թելադրվում է նրանով, որ դաշնակցությունը ինչքան ամուր կապված լինի իմպերիալիզմին, այնքան առատ կվարձատրվի նրա կողմից:*

*Սակայն քաղաքական այս գիծը հանդիպում է նրան, որ սփյուռքահայ լայն մասսաները երես են թեքում այդ կուսակցությունից՝ նրան համարելով իմպերիալիզմի վարձկան և հայ ժողովրդի թշնամի: Դա է պատճառը, որ դաշնակցության որոշ «տեսաբաններ», ցանկանալով խորամանկել, չբացահայտել իրենց պրոիմպերիալիստական քաղաքականությունը, որպեսզի իրենց հետևից գնացող փոքրաթիվ անհատները երես չթեքեն կուսակցությունից, առաջ են քաշում «չեզոքության» քաղաքականությունը՝ դրանով իսկ պաշտպանելով այն միտքը, թե դաշնակցությունը միայն մեկ խնդիր ունի՝ հայ ժողովրդի շահերի պաշտպանությունը:*

*Ինչպես տեսնում ենք, «վեճը» ոչ թե կուսակցության քաղաքականության փոփոխության հարցի շուրջն է ընթանում, այլ սփյուռքահայ մասսաներին խաբելու, մոլորության մեջ գցելու, պրոպագանդիստական նոր ձևեր ու մեթոդներ գտնելու շուրջը:*

---

[57] *«Հայրենիք», № 4, 1948, էջ 81:*

*Միայն մի հարցում բուրժուականները չեն վիճում, դա այն է, որ անկախ նրանից, թե դաշնակցությունը իր պրոպագանդիստական մեքենայի դրոշի վրա ինչ կգրի՝ իմպերիալիզմի՞ հետ, թե՞ չեզոք, այդ դրոշի մյուս կողմում անպայման պետք է գրվի՝ «դաշնակցությունը հայոց դատի դրոշակակիր»:*

*Հայության բոլոր քաղաքական ուժերն ու կազմակերպությունները հրաժարվել են հայոց դատից, միայն դաշնակցությունն է հանդես գալիս այդ պատմական դատի անշահախնդիր պաշտպանի դերում,— աղմկում են բուրժուականները, միտելով մոլորության մեջ գցել սփյուռքահայությանը:*

*Հայոց դատը՝ հայ ժողովրդի պատմական ողբերգությունն է՝ իր հրեշավոր դրվագներով: Ամայացած և ավերակ դարձած Արևմտյան Հայաստանը տխուր վկան է այնտեղ կատարված սարսափելի եղեռնագործությունների:*

*Եվ այսօր, Արևմտյան Հայաստանի ամայացումից շատ տարիներ հետո, դաշնակցությունը ցանկանում է խաղալ հայ ժողովրդի արյունապատ, զգայուն լարերի հետ, հանդես գալ հայոց դատի դրոշակակրի դերում, որպեսզի սփյուռքահայ մասսաները գնան իր հետևից: Այդ բոլորը էժանագին խաղեր են, որոնք ի վիճակի չեն մոլորության մեջ գցելու սփյուռքահայությանը:*

*Ո՞ւր է գնում դաշնակցությունը և որո՞նք են նրա նպատակները հայկական հարցում:*

*Սկզբից ևեթ պետք է ասել, որ դաշնակցությունը, միջազգային զարգացման արդի փուլում, հանդես գալով իմպերիալիզմի լագերում, լիովին հրաժարվել է հայոց դատից:*

*Եվ ահա թե ինչու:*

*Դեռևս 1955 թ. մայիս-հունիս ամիսներին Կահիրեում տեղի ունեցած դաշնակցության XVI համագումարի որոշման մեջ ասվում էր. «Հակահամայնավար ճակատը գլխավորող թե Արևմտյան աշխարհի և թե մասնավորաբար Ամերիկայի, Անգլիո և Ֆրանսիայի մեջ հայ դատին բարեկամ ուժ մը տեսնելով, սերտացնել մեր կապերը այս ճակատին և անոր վարիչ-*

ներուն հետ, ապահովելու համար այս ուժերուն պաշտպանությունը հայ դատին»[58]։

Իրենց դաշինքը միջազգային իմպերիալիզմի հետ բյուրոյականները դաշնակցության XVI համագումարում ջանք էին թափում հիմնավորել հայոց դատի պաշտպանության անհրաժեշտությամբ։ Սակայն, բարեբախտաբար, ժամանակակից սփյուռքահայությունը բավականին փորձառու է՝ հասկանալու համար այն տարրական ճշմարտությունը, որ դաշնակցությունը փոխել է «Հայոց դատ» հասկացությունը, նրա տեղը դնելով՝ Սովետական Հայաստանում դաշնակցական կարգերի վերականգնման հասկացությունը։ Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավումը գնում է հակասովետական պայքարի հողի վրա և ոչ թե Արևմտյան Հայաստանի հարցի լուծման ուղիով, որի մասին թուրքական կառավարությունը լսել անգամ չի ուզում։

Վերոհիշյալ տողերը ցույց են տալիս, որ դաշնակցությունը այսօր կրկին փորձում է հայ դատը լուծել իմպերիալիստական պետությունների միջոցով, թեև քաջ հայտնի է, որ դրանցից մի քանիսի մասնակցությամբ և մյուսների թողտվությամբ կատարվեց պատմական հրեշավոր չարագործությունը՝ արևմտահայերի մասսայական կոտորածը։

Մի՞թե դաշնակ լիդերները կարծում են, թե իմպերիալիստական պետությունների այն խումբը, որի քաղաքականության զոհը դարձավ արևմտահայությունը, այսօր պետք է հանդես գա հայոց դատի պաշտպանությամբ։ Բյուրոյականները, իհարկե, այդքան էլ միամիտ չեն։

Եվ իրոք, նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դաշնակցությունը «հայ դատ» արտահայտության իմաստը փոխել է լրիվին։ Ըստ դաշնակցության, հայոց դատի լուծում նշանակում է դաշնակների իշխանության վերականգնում Սովետական Հայաստանում։ «Միջազգային ծանոթ իրադարձությանց հետևանքով,— գրում է Դարբինյանը,— Հայկական

58 «Հ. Յ. Դ. Պյուրոյի հայրենադավ ծրագիրները մերկացված» (խմբագրական), «Արարատ», 4 հունիսի, 1957։

հարցը այլևս առաջին ներքին հողային հարց չէ... Այսօր Հայկական հարցը որևէ բանի ավելի և առաջ հայկական ազատության հարց է»[59]:

Այսպես ուրեմն, դաշնակցությունը գտնվելով իմպերիալիզմի լագերում, հրաժարվել է հայոց դատից և «հայկական ազատության» անվան տակ քարոզում է պատերազմ Սովետական իշխանությունը տապալելու և Հայաստանում դաշնակցական կարգերը վերականգնելու համար: Ահա թե «հայոց դատ» հասկացության տակ ինչպիսի իմաստ են դնում դաշնակ պարագլուխները:

Գտնվելով իմպերիալիզմի լագերում, որի մեջ մտնող բոլոր պետությունների նպատակը սոցիալիզմի տապալումն է, բնականաբար, դաշնակցությունը պետք է մերձեցման եզրեր փնտրեր նաև Թուրքիայի հետ: Եվ պատահական չէ, որ դաշնակցության 1955 թ. Կահիրեի համագումարի ընդունած որոշման «Մեր դիրքը Թուրքիայի հանդեպ» բաժնում մենք հանդիպում ենք այսպիսի տողերի. «... Թուրքիա իր դատով ու պայքարով միացած է Արևմտյան Աշխարհին: Որ նույն Աշխարհին դատով ու ժողովրդավար դավանանքով միացած է նաև հայ ժողովուրդը (իմա՝ դաշնակցությունը—Լ. Խ.)»[60]:

Ահա այսպես է կատարվում դաշնակցության մերձեցումը Թուրքիային: Սոցիալիզմի դեմ մղվող պայքարը միացնում է, հակակոմունիզմի բոլոր ուժերին, նրանց մեջ եղած հակասությունները փոխադրելով երկրորդ պլանի վրա:

Բայց դաշնակցությունը խիստ կերպով վախենում է սփյուռքահայ մասսաներից. չէ՞ որ նրանք երբեք չեն համաձայնվի դաշնակցել թուրքական իմպերիալիստների հետ: Նկատի ունենալով սփյուռքահայության թշնամական վերաբերմունքը թուրքական իմպերիալիստների նկատմամբ, դաշնակցությունը որոշում է իր «թուրքական օրիենտացիան» պրոպագանդել ամենայն զգուշությամբ: «Հետզհետե պետք է պատրաստել հանրային կարծիքը՝ մոռանալու Թուրքիո հանդեպ

59 «Հայրենիք», 18 հոկտեմբերի, 1950:
60 «Արարատ», 7 հունիսի, 1957:

*մեր ունեցած արգահատանքը՝ այս մեր օրհասներում միջոցով, բայց տակտով ու զգուշությամբ»[61],— գրում է դաշնակ շեֆերից մեկը:*

*Դաշնակցության ոչ բոլոր ղեկավարներն են, սակայն, աչքի ընկնում ճկունությամբ և «տակտով»: Մ. Թևեկոլյանը, օրինակ, ուղղակի բացում է խաղաքարտերը՝ իր ճառերից մեկում հայտարարելով. «Մենք այլևս թշնամանք չունենք Թուրքին հետ: Մեր ամենեն մեծ թշնամին ռուս բոլշևիկն է, որուն իշխանությունը տապալելու համար մենք պետք է միանանք ամերիկացիներուն՝ որոնց միջոցով ուզենք թե չուզենք պետք է գործակցենք Թուրքերուն հետ, Ռուսիո վրա արշավելու համար»[62]:*

*Տեսական ինչպիսի՜ «հմտություն». նա մոռացել է, որ ոչ այլ ոք, եթե ոչ ինքը՝ Մ. Թևեկոլյանն էր միաժամանակ «դիվանագիտորեն» հայտարարում, թե դաշնակցությունը չեզոք է, և իրենց համար Արևելյան ու Արևմտյան ճակատներ չկան:*

*Ո՛չ հայոց դատ, ո՛չ ներգաղթ և ոչ էլ առհասարակ հայ ժողովրդի որևէ շահ գոյություն չունի. դաշնակցության համար եղել է և կա մի մոլուցք՝ ետ ստանալ կորցրած մինիստրական աթոռները, թեկուզ Հայաստանի տուֆաշեն շենքերի ավերակների վրա և ողողված հայոց արյունով:*

*Թուրքիայի հետ մերձենալու դիրքորոշումը որոշ առումով անհանգստացնում է դաշնակցությանը: Չէ՞ որ այլ բան է պրոպագանդան, իսկ այլ է իրականությունը: Կարելի է անվերջ գրել, ասել, թե սփյուռքահայ մասսաները գնում են դաշնակցության հետևից, համակրում են իմպերիալիստական երկրներին, բայց մի՞թե դրանից փոխվում է իրականությունը: Անշուշտ ոչ: Սփյուռքահայ մասսաները Սովետական Միության անկեղծ բարեկամներն են և իմպերիալիզմի անհաշտ թշնամին: Ոչ մի ուժ ի վիճակի չէ մոլորեցնելու սփյուռքահայ աշխատավորներին, որոնց իղձերն ու երազները կապված են Սովետական Հայաստանի հետ:*

---

61 «Արարատ», 6 հունիսի, 1957:

62 «Սրիտասարդ Հայաստան», 13 մայիսի, 1955:

*Այդ փաստը իրենք՝ դաշնակցականներն էլ, լավ գիտեն, որի պատճառով անընդհատ սպառնում են սփյուռքահայ մասսաներին, մատնում նրանց, համարում Սովետական Միության հինգերորդ զորասյուն։ Ով մեզ հետ չէ, մեր թշնամին է, աղաղակում են դաշնակցության ղեկավարները, և քանի որ այդ կուսակցությունը և միջազգային իմպերիալիզմը նույն լագերում են, հետևաբար, ով դաշնակցության հետ չէ, իմպերիալիզմի թշնամին է։*

*Եվ որովհետև սփյուռքահայ քաղաքական, հասարակական, մշակութային կազմակերպությունների և աշխատավորների ճնշող մեծամասնությունը պաշտպանում է Սովետական Հայաստանը, ապա դաշնակցությունը այդ դարձրել է մի առիթ՝ իմպերիալիստական կառավարությունների առաջ հայ առաջադիմական ուժերին ներկայացնելու որպես սովետական երկրի հինգերորդ զորասյուն։*

*Հնչակները և ռամկավարները* արդի պայմաններում *դաշնակցության հետ չեն լինի, այս բանում բյուրոյականները լիովին համոզված են, սակայն նրանց հետաքրքրում են այժմ ոչ այնքան այդ կուսակցությունները, որքան դրանց հետևից գնացող «չեզոքները» և վերջիններիս դրամական միջոցները։*

*«Մենք զարմացած կլինենք,— գրում են դաշնակները,— Լրաբերը, Երիտասարդ Հայաստանը, Պայքարն ու Նոր օրը, որ իրենց «Սովետական դիրքավորումով» կձգտեն այս ազատ ու բարգավաճ երկրին կարգերը խորտակել և զանոնք պրոլետարիական դիկտատուրայով փոխարինել, անոնք չեն մեր մտահոգության առարկան։*

*Մենք կմտահոգվենք լրջորեն և կցավենք սրտանց այն «չեզոք» հայերուն համար, որ տարիներ շարունակ քաշած են կարմիր մունետիկներու հետևեն, աջակցած են անոնց ձեռնարկներուն, դրամ տված են և այսպիսով, մասնակից են անոնց դավադիր աշխատանքներուն»*[63]*։*

*Դաշնակցությունը ոչ մի միջոց չի խնայում սփյուռքահայությանը իմպերիալիզմի լագերը քաշելու համար։*

63 *«Ասպարեզ», 14 սեպտեմբերի, 1954։*

*Սփյուռքահայ աշխատավոր մասսաների և քաղաքական կազմակերպությունների Սովետական Հայաստանի հանդեպ ունեցած դրական վերաբերմունքը հատկապես լավ դրսևորվեց հետպատերազմյան առաջին տարիներին՝ առաջին խոշոր ներգաղթի կազմակերպման շրջանից սկսած։ «Սովետական Հայաստանի ընդարձակման պահանջը և ներգաղթի շարժումը վերջին երեք տարիներու ընթացքին ոչ-խորհրդային աշխարհի մեջ ձգեցին այն տպավորությունը, որ հայերը ընդհանուր առմամբ Սովետներու բարեկամն են և, ուրեմն բարեկամ չեն կրնար ըլլալ Սովետներու թշնամիներուն»[64],— գրում է Ռ. Դարբինյանը, պահանջելով, որպեսզի սփյուռքահայությունը «մինչև իրական պատերազմի բռնկումը» ճշտի իր դիրքերը, այսինքն՝ անցնի իմպերիալիզմի կողմը։*

*Պատերազմի մեջ տեսնելով իր փրկությունը և պրոպագանդելով պատերազմ, դաշնակցությունը ցանկանում է իր կործանարար ուղիով տանել նաև սփյուռքահայությանը։ Եվ քանի որ վերջինս իր ճնշող մեծամասնությամբ չի գնում նրա հետևից, ապա դաշնակցությունը դիմում է սպառնալիքի, մատնության և սպանությունների։*

*Սփյուռքահայությունը պետք է ցույց տա, որ ինքը բարեկամ չէ կոմունիստներին և սովետական երկրին, սպառնում է Դարբինյանը. «Ասիկա առավելապես անհրաժեշտ է այն պատճառով, որ բացի Հ. Յ. Դաշնակցութենեն հայկական մյուս խմբակցությունները՝ Ռամկավար Ազատականները, Հնչակյանները և նույնիսկ Բարեգործականը և հայերականներու մեկ կարևոր մասը երկար տարիներ սերտորեն գործակցած են ու մինչև այժմ ալ կգործակցին «յառաջդիմական» կոչեցյալ համայնավարներուն հետ և իրենց այդ գործակցությամբ ստվեր ձգած են ու դեռ կձգեն հայության վրա ընդհանրապես»[65]։*

*Գրկախառնվելով իմպերիալիստական պետությունների և նրանց լագերում գտնվող Թուրքիայի հետ, իր հիմնական*

64 «Հայրենիք», № 4, 1948, էջ 81։
65 Նույն տեղում, էջ 82—83։

նպատակը համարելով սոցիալիզմի լագերի կործանումը, դաշնակցությունն ամեն կերպ ձգտում է պատերազմի։ Վերջերս համարելով առաջիկա օրերի կամ ամիսների խնդիր, դաշնակցության ղեկավարներն իրենց XVI համագումարի որոշման մեջ գրում էին. «Աշխատիլ, որպեսզի պատերազմի պարագային, կարելիության սահմաններուն մեջ, դեպի Հայաստան արշավող ուժերու մեջ արեւմտյան մեծ պետության բանակներին միավորներ գտնվին։

Աշխատիլ, որ այդ միավորներուն մեջ խմբվին նաև հայ մասնագետներ, սպաներ»[66]։

Ավելի հրեշավոր որոշում չէր կարող լինել։ Պատերազմի դաշնակ հրձիգները ցանկանում են հանուն իրենց իշխանության վերականգնման ավերակ դարձնել և նորից արյունով պատել պատմական Հայաստանի այն չնչին մասը, որը սովետական իշխանության հոգատարության շնորհիվ ապրում է իր մեծ վերածնունդը։

Բարեբախտաբար, ո՛չ իմպերիալիզմը և ո՛չ էլ նրա վարձկան դաշնակցությունը ի վիճակի չեն ետ շուռ տալու պատմության անիվը։ Սոցիալիզմի լագերը, որը վայելում է աշխարհի բոլոր առաջադիմական ուժերի ջերմ համակրությունն ու աջակցությունը, այսօր մի այնպիսի գործոն է դարձել, որով պայմանավորված է մարդկության զարգացման ամբողջ ընթացքը։

Վերջնական հաղթանակը կոմունիզմինն է, իսկ հայ ժողովուրդը իր ամբողջ էությամբ, իր բախտով և պատմական խնդիրների կատարմամբ կապված է նրա գաղափարների հաղթանակի հետ։

Այդ հասկանում են սփյուռքահայ բոլոր առաջադիմական ուժերը։ Ահա թե ինչ է գրում հնչակյան կուսակցությունը, արտահայտելով այդ ուժերի կարծիքը. «Հայ ժողովուրդին դատը հզոր ու արդար ձեռքերու մեջ է։ Ան որ մեզ փրկեց ֆիզիկական բնաջնջումեն ու մեզի տվավ տնտեսապես ու մշակութապես զարգանալու ամեն հնարավորություն, ան մեզի չի կըր-

66 «Արարատ», 4 հունիսի, 1957։

նար զավթածանել երբեք։ Նա մեր հայրն է, մեր բարեկամը, մեր առաջնորդը։ Մեր բաղձանքներուն ու ձգտումներուն լավագույն արտահայտիչն ու պաշտպանողը։ Բյուրոյականի զավեշտը մաղձաշատի անգամ չեն կրնար փոխել հայ ժողովրդին անկեղծ ու երախտագիտական զգացումները դեպի Սովետական մեծ Միությունը»[67]։

## 4. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ Է ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ինչպես տեսանք, դաշնակցությունը մասնակցելով սոցիալիզմի ճամբարի դեմ մղվող պայքարին, սփյուռքահայ իրականության մեջ իր հիմնական թշնամին համարում է հայ կոմունիստներին և նրանց հետ ընթացող առաջադիմական ուժերին։

Համոզվելով, որ սփյուռքահայ բոլոր քաղաքական կուսակցությունները և բազմաթիվ մշակութային ու կրթական կազմակերպությունները, եկեղեցին ու բարեգործականը դեմ են դաշնակցության քաղաքականությանը, բյուրոյականները ձեռնամուխ եղան հայ գաղութի քաղաքական, մշակութային և այլ կազմակերպությունների զրպարտությանը և պառակտմանը։

Դաշնակցության լիդերները ջանք չեն խնայում ցույց տալու, թե իբր ռամկավարն ու հնչակը, եկեղեցին ու բարեգործականը և, ընդհանրապես, դաշնակցության դեմ գնացող բոլոր ուժերը հանդիսանում են Սովետական Միության գործակալներ, և, ըստ էության, դիմակավորված կոմունիստներ են։ Այսպես, 1955 թ. Եգիպտոսում տեղի ունեցած թեմական ընտրությունների կապակցությամբ լույս տեսավ դաշնակցության կոչը, որը ռամկավարներին, հնչակներին և նրանց համակիրներին մեղադրում էր նրանում, որ սրանք ամեն տարի շռնդալից հանդիսավորությամբ նոյեմբերի 29-ը նշելով, ամենուր

67 Նույն տեղում, 4 հունիսի, 1957։

լիաբուռն ձեռքով «Նոյեմբերյան սերմ» են ցանում[1]: Իր այդ պայքարում դաշնակցությունը մեծ ուշադրություն է դարձնում ռամկավարներին, մշտապես տարածելով այն հերյուրանքը, թե իբր այդ կուսակցության թերթերը կոմունիստական են: Այս մանկամիտ կեղծիքը դաշնակցությունը փորձում է ապացուցել նրանով, թե ռամկավարները մասնակցում են սփյուռքահայ ազգային ճակատին, որին մասնակցում են նաև կոմունիստները, ունեն սովետական ուղղություն, «թեկուզ դա լինի «հայաստանասիրության» դիմակի տակ»:

1954 թ., երբ ԱՄՆ-ի կոնգրեսի հատուկ հանձնաժողովը քննում էր Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի հարցը, ռամկավարները ձգտեցին նսեմացնել այդ հանձնաժողովի հեղինակությունը՝ նրա ղեկավարին անվանելով մակարթիստ, իսկ այնուհետև սևացրեցին նրա հավաքած նյութերը, կասկածի տակ առնելով դրանց օբյեկտիվությունը[2]:

Նման «փաստերն» օգտագործելով, դաշնակցությունը ցանկանում է ապացուցել, թե իբր ռամկավարները Սովետական Միության հինգերորդ զորասյունն են, քողածածկ կոմունիստներ: «Տարիներու ընթացքին,— գրում են դաշնակները,— հետևելով ռամկավար մամուլին, մենք գտած ենք, որ ռամկավար Հայաստանասիրությունը քող մըն է միայն, միջուկը խորհրդայնասիրությունն է»[3]:

Ռամկավար ազատականների շարքերում տեղի են ունենում սուր խմորումներ, առաջանում են աջ և ձախ թևեր: Եթե աջ, հիմնական թևը, ամուր կերպով մնում է իր ծրագրային դիրքերի վրա, ապա ձախ թևը, որը փոքրաթիվ է և հանդիսանում է ռամկավարների՝ սփյուռքի պայմաններում հարստահարված մասը, աստիճանաբար հայաստանասիրությունից

---

1 «Հուսաբեր», 10 փետրվարի, 1955։

2 Ս. Դարբինյան, Ռամկավարները հանրային դատաստանին առջև, «Հայրենիք», 11, 12 օգոստոսի, 1955։

3 «Ռամկավարներու հայաստանասիրությունը» (խմբագրական), «Հայրենիք» 7 հունիսի, 1950։

*ցնում է դեպի խորհրդայնասիրություն, գրելով, որ «ներկա արևաշող Սովետական Հայաստանով արդեն իրագործված է ռամկավար ազատական կուսակցության իղձերը»[4]։ Դաշնակցությունը ռամկավար ազատականների ձախ թևի այս երբեմն հանդիպող տրամադրություններն օգտագործում է որպես հիմնական զենք։ Ուշադրավ է այն, որ ռամկավարների աջ թևի մոտ էլ երբեմն պատահում են խիստ հակասովետական տրամադրություններ, սակայն դաշնակցությունը, հասկանալի պատճառներով, «չի նկատում» դրանք, աչքաթող է անում, շրջանցում և ամուր կառչում է միայն վերոհիշյալ իր պրոպագանդային օգուտ բերող տրամադրություններից։*

*Ապացուցված համարելով, որ ռամկավարներին Սովետական Հայաստանի հետ կապում է ոչ թե «հայրենասիրությունը», այլ «խորհրդայնասիրությունը», Ռ. Դարբինյանը փորձում է նաև «պարզել», թե երբվանից է այդ կուսակցությունը «սովետական օրիենտացիա» ընդունել։ Ռամկավարները «ավելի քան երեսուն տարին ի վեր,— գրում է նա,— ազատ աշխարհի բոլոր հայ գաղութների մեջ* տարբեր բան բրած չեն, *բայց եթե այն...», ինչ որ Սովետական Միությունը պիտի ցանկանար որ անեին*[5]*։*

*Այս տեսակետը միայն Դարբինյանը չէ, որ պաշտպանում է։ Դաշնակցության պրոպագանդան իր բոլոր միջոցներով ցանկանում է ապացուցել, որ ռամկավարները, իբր, «խորհրդայնասիրությամբ» են կապված Սովետական Հայաստանի հետ։ Տարակարծությունը երբեմն հանդես է գալիս միայն այն հարցում, թե ե՞րբվանից է ռամկավար ազատական կուսակցությունը դարձել «խորհրդայնասեր»։*

*Եթե Դարբինյանը ռամկավարներին «խորհրդայնասեր» է համարում սովետական իշխանության հաղթանակից ի վեր, ապա Գ. Լազյանը մի փոքր այլ տեսակետ է հայտնում։ «1936-ին մինչև 1945,— գրում է նա,— մոտավորապես տասը տարի*

4 «Եփրատ», 11 հուլիսի, 1946։

5 «Պայքարը Հայաստանյաց եկեղեցիին շուրջը», «Հուսաբեր», 12 սեպտեմբերի, 1956։

ռամկավար կուսակցությունը կը պահէր իր անկախությունը և ժամանակ առ ժամանակ ելույթներ կունենար համայնավարներու սփյուռքի մեջ ունեցած գործունեության դեմ», 1945 թ. էջմիածնական ընտրություններից հետո ռամկավարները լրիվ համաձայն են Սովետական Միության ներքին և արտաքին քաղաքականության հետ[6]։

Բյուրոյականները շատ լավ իմանալով, որ ռամկավարները ելնելով իրենց դասակարգային էությունից, չեն ընդունում սովետական վարչաձևը, այնուամենայնիվ, ցանկանում են բանն այնպես ներկայացնել, թե նրանք կոմունիստների գործակալներն են։ Դաշնակցությունը, ռամկավարների դեմ մղվող պայքարի բոլոր բնագավառներում անհաջողության մատնվելով՝ այժմ միակ միջոցը գտնում է զրպարտության մեջ, ձգտելով հավատացնել հայ գաղթականներին հյուրընկալող պետություններին, որ ռամկավարները Սովետական Միության «հինգերորդ զորասյունն են», և դրանով իսկ միտում է հասնել այդ կուսակցության վերացմանը։

Այդ է պատճառը, որ դաշնակցականները մշտապես գրում են, թե «Սփյուռքի բոլոր անկյուններուն մեջ Ռամկավար Ազատական կուսակցությունը կը շարունակե հավատարիմ ուղեկցի իր դերը՝ ի սպաս բոլշևիզմին, բանիվ և գործով»[7]։

Դաշնակցությունը չի «խնայում» նաև հնչակին, նրան նույնպես համարելով կոմունիստների գործակալ և, նույնիսկ, կոմունիստական կուսակցություն։ Դաշնակցության մամուլը բազմիցս անդրադարձել է հնչակյան կուսակցության քաղաքականության հարցերին, գրելով, թե նրա և կոմունիստների միջև ոչ մի տարբերություն չկա։ Հնչակը նույնպես համարվում է Սովետական Միության հինգերորդ զորասյուն։ «Ինչպե՞ս կարելի է հաշտվել այն ընդվզեցուցիչ երևույթի հետ,— գրում են դաշնակները,— որ օտար հորիզոնների տակ

6 Գ. Լազյան, *Հայաստանը և հայ դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ*, Գահիրե, 1957, էջ 373։
7 «Արևելք», 18 փետրվարի, 1949։

*ապրող հնչակյանները մի կողմ նետելով իրենց անցյալի ըմբռնումները, ռամկավարների հետ միասին կուրորեն դարձել են բոլշևիզմի հողաթափները լիզողները»*[8]:

*Սփյուռքահայ ազգային ճակատում առաջադիմական ուժերի համախմբումը զրպարտաբար դիտվում է որպես հայ կոմունիստների կողմից մյուս ուժերին օգտագործելու փորձ:*

*Միտելով իմպերիալիստական պետությունների աչքում հայ առաջադիմական ուժերին կոմունիստների գործակալներ ներկայացնել, դաշնակցությունը շարունակ պնդում է, թե ռամկավարները, հնչակները, չեզոքները, բարեգործականը և մարզական, մշակութային ընկերությունները լիովին պաշտպանում են բոլշևիկներին և օգտագործվում նրանց կողմից*[9]*: «Դաշնակ ղեկավարները,— գրում են ռամկավարները,— այս անցնող քանի մը տարիներուն տևապես և ամեն միջոցով աշխատեցան զրպարտել շարք մը կազմակերպություններ, որոնց կարգին նաև Ռամկավար Ազատական կուսակցությունը: Անոնք ջանացին ցույց տալ օտարներուն իբրև համայնավար կամ «Մոսկվայի գործակալ» ճանաչել ռամկավարները,— ինչպես բազմաթիվ ուրիշ ոչ-համայնավար կազմակերպություններ, միություններ և անհատներ: Մեզի լավապես ծանոթ է, օրինակ, այն իրողությունը, թե Պեյրութի դաշնակ ղեկավարությունը տարիներե ի վեր, շաբաթը երկու անգամ «Զարթոնքի» մասին կանոնավորաբար տեղեկագիր կուտա օտար դեսպանատան մը, ինքզինք կը պատվե փաստելու համար այն սուտը թե մեր թերթը «համայնավարական» է»*[10]:

*Ինչ վերաբերում է սփյուռքահայ այն կազմակերպություններին, որոնք ունենալով հայաստանասեր դիրքավորում, զբաղվում են բարեգործական, կրթական, մշակութային, մարզային և այլ աշխատանքներով և գերազանցում են միջազ-*

8 Ս. Նայիրի, *Մեր գաղափարական խնդիրներից, «Հայրենիք» № 8, 1954, էջ 82:*

9 *«Պայքարը՝ դաշնակցության դեմ», «Հուսաբեր», 16 փետրվարի, 1957:*

10 *«Զարթոնք», 2 հուլիսի, 1955:*

ռային ներկա պայմաններում վարել չեզոք, ազգաշեն քաղաքականություն ու չխառնվել կուսակցական պայքարին, ապա Դաշնակցությունը դրանց ևս համարում է կոմունիստների գործակալներ, քանի որ նրանք չեն գործակցում իր հետ։

«Գաղտնիք չէ,— գրում են դաշնակները,— որ քաղաքականապես իբր թե չեզոք հայ եկեղեցիներու և հայրենակցականներու մեկ կարևոր մասը, բարեգործականը և Վարդանանց ասպետներու կազմակերպությունը տարիներե ի վեր գործակցեցան և այժմ ալ դեռ կը շարունակեն գործակցել բացահայտ կամ ծպտյալ համայնավարներուն հետ, բայց խուսափեցան գործակցել և մինչև այժմ ալ տակավին չեն գործակցիր Հ. Յ. Դաշնակցության և անոր քույր կազմակերպությանց հետ, թեև շատ ավելի բնական ու տրամաբանական պիտի ըլլար իրենց համար ատոր ճիշտ հակառակն ընել»[11]:

Ռամկավարները և հնչակները քննադատվում են ոչ միայն կոմունիստների հետ գործակցելու, այլև նրա համար, թե իբր դրանով իսկ նրանք հնարավորություն են տալիս կոմունիստներին՝ օգտագործելու ազգային կազմակերպությունները ի խնդիր իրենց նպատակների։ ԱՄՆ-ում,— գրում են դաշնակները,— կոմունիստները «կը գործակցին միայն մեր ռամկավարներու և հնչակյաններու նման խմբակցությանց հետ, որովհետև, մեկ կողմեն՝ անոնք դյուրությամբ կը հետևվին իրենց կամ իրենց գործիք կը դառնան, և մյուս կողմեն ալ այն պատեհություն կուտան իրենց շահագործելու նույնիսկ հայ եկեղեցին իրենց մութ նպատակներուն համար»[12]:

Հայ առաջադիմական ուժերին անվանելով «հակադաշնակցական խառնիճաղանճ», դաշնակցականները ազգային հայրենասիրական այդ ճակատին մեղադրում են նրանում, որ նա պայքարում է ոչ միայն ներքին՝ ազգային ճակատի, այլև արտաքին՝ միջազգային ճակատի դեմ։ Եվ այդ բոլորը նրա հա-

---

11 «Մեր չեզոքները», «Հուսաբեր», 18 հունվարի, 1955։

12 «Համայնավարներու ընթացքը» (խմբագրական), «Հայրենիք», 17 նոյեմբերի, 1944։

*մար, որպեսզի «ապացուցի», թե իբր սփյուռքի առաջադիմական ուժերը գնում են «համայնավարներուն ճանապարհով»*[13]։

*Դաշնակցությունը ձգտում է այնպիսի տպավորություն ստեղծել, թե ամենուրեք գործում են կոմունիստները՝ վտանգ ստեղծելով կապիտալիստական պետությունների գոյության համար։ Որոշ իմաստով, դաշնակցությունը նույնիսկ «ուրախ է» սփյուռքում կոմունիստների գործունեության ակտիվությամբ։ «Մի զարմանաք եթե ըսեմ,— գրում է Արսեն Կիտուրը,— դաշնակցությունը շահագրգռված է բոլշևիզմի քարոզչությամբ։ Անոր գործին կուգա եթե բոլշևիկյան փրոփականդան աշխուժանա, անոնք փողոցային ցույցերու ելլեն և գաղտնի ու հայտնի գրականություն մեջտեղ նետեն։* Հոդկէ կսկսին իրենց աշխուժացումը, նախաձեռնակումը, ժուռնալները և որ գլխավորն է դրդումը հակաբոլշևիկ կառավարություններուն, որ դրամ թափեն մեջտեղ՝ պայքարելու համար համայնավարության դեմ»[14]։

*Դաշնակցությունը բոլոր կազմակերպություններին «համայնավար» անվանելով, երկու նպատակ է հետապնդում՝ առաջին, կապիտալիստական պետությունների աչքում նրանց կասկածելիների շարքը դասել և մշտական հալածանքների ենթարկել, և երկրորդ՝ այդ ուժերի դեմ մղվող պայքարի համար իմպերիալիստներից ինչքան կարելի է ավելի դրամ պոկել։*

*Դաշնակցությունը հատկապես հետապնդում է Հայոց բարեգործական ընդհանուր միությունը։ Երկար տարիներ բյուրոյականները պայքարեցին այդ կազմակերպությունը իրենց ենթարկելու համար։ Սակայն իզուր. այդ բանը նրանց չհաջողվեց։ Բարեգործականի ձեռքում կուտակված են հսկայական գումարներ։ Դաշնակցության հիմնական նպատակը այդ միջոցներին տիրանալն է։*

13 *«Հայրենիք», 4 հուլիսի, 1957։*

14 Ա. Կիտուր, *Միջկուսակցական հարցեր, «Արարատ», 6 օգոստոսի, 1954 (ընդգծումը մերն է—Լ. Խ.)։*

*Չկարողանալով տիրանալ ՀԲԸՄ-ի միջոցներին, դաշնակցությունը միաժամանակ պրոպագանդիստական բոլոր միջոցներով ճգնում է սփյուռքահայությանը կտրել այդ կազմակերպությունից, որպեսզի դեպի այն գնացող միջոցները արվեն իրեն։ Հայոց բարեգործական ընդհանուր միությունը չեզոք կազմակերպություն չէ և «նորություն մը չէր մեզ համար, հաստատել,— գրում են դաշնակները,— թե Հ.Բ.Ը. Միության պատասխանատուները,— մինչև հասարակ գումարպահ,— նախապատրաստված են առանձին ուժը մը դառնալ ևս, դաշնակցության կողմե կամ դաշնակցության համակիր ու բարեկամ ազգային իշխանություններու կողմե ղեկավարվող հայահոծ շրջաններու մեջ, իրենց բոլոր կարելիություններով պայքարել՝ ռամկավար-հառաջադիմական տարրերու ի նպաստ, անոնց հետ սիրտ սրտի ու կուշտ կուշտի...»[15]։*

*Այսպիսին է դաշնակցությունը. բոլոր նրանք, ովքեր իրեն հետ չեն, ուրեմն իր թշնամիներն են։ Նրա համար բնության մեջ բազմերանգություն գոյություն չունի՝ կան միայն սև և սպիտակ գույներ, կան միայն բարեկամներ և թշնամիներ։*

*Սփյուռքահայ կյանքում, հատկապես հայության հարատևման գործում, զգալի նշանակություն է ստացել նաև եկեղեցին։ Դաշնակցության ղեկավարությունը ջանում է քանդել ու քայքայել էջմիածնական կենտրոնը, եկեղեցական այն թեմերը, որոնք հրաժարվում են ենթարկվել դաշնակ մենատիրությանը և գործիք դառնալ նրա ձեռքում։*

*Ինչպես սփյուռքահայ մյուս կազմակերպություններին և կուսակցություններին, այնպես էլ եկեղեցուն, որը չի համաձայնում ազգադավ գործ կատարել, դաշնակցությունը համարում է Սովետական Միության հետախուզության օրգան։ Սփյուռքի հոգևորականների մեծ մասը Սովետական Միության գործակալներն են, աղաղակում են դաշնակները[16]։*

*Ձգտելով պառակտել սփյուռքահայ կազմակերպությունները, դաշնակցությունը պառակտում է նաև եկեղեցին՝ այն*

---

15 *«Հուսաբեր», 28 դեկտեմբերի, 1956։*

16 *«Հայրենիք», 13 նոյեմբերի, 1953։ «Հայրենիք», № 8, 1949, էջ 92։*

օգտագործելով իր նպատակների համար։ «Դաշնակ ընկավարությունը,— գրում էին ռամկավարները,— կը մտադրե քանդել հայ եկեղեցվո միասնականությունը, Կիլիկիո Աթոռին վրա նստեցնել իրեն կամակատար ըլլալու պատրաստ եղող մեկը, հայ եկեղեցին վերածել քաղաքական կամայական գործիքի մը, սփյուռքի մեջ հաստատել դաշնակ մենատիրությունը, և արտասահմանի հայությունը հակադրել Հայաստանի հայությանը»[17]։

Երբ սփյուռքահայ առաջադիմական ուժերը մեղադրում են դաշնակցությանը՝ եկեղեցին պառակտելու և այն իր քաղաքական նպատակներին ի սպաս դնելու գործում, վերջինս դրա մեջ ոչ մի արտառոց բան չի տեսնում։ «Սակայն պահ մը ենթադրենք,— գրում են դաշնակները,— թե դաշնակցականները կուզեն եկեղեցին գրավել իրենց քաղաքական նպատակներուն համար։ Ի՞նչ կա արտառոց այդպիսի քայլի մը մեջ»[18]։ Այդ նպատակին հասնելու համար դաշնակցությունը, առատորեն վարձատրվելով միջազգային իմպերիալիզմի կողմից, ազգային-եկեղեցական ընտրությունների ժամանակ կաշառում է ընտրողներին և զանազան դավերով ու մեքենայություններով ամեն ջանք գործադրում իր թեկնածուներին ընտրել տալու համար։ 1955 թ. Ֆրանսիայի շրջանի ազգային-եկեղեցական ընտրությունների կապակցությամբ դաշնակցության բյուրոն կոմիտեական ընկերներին ուղղված շրջաբերական նամակում գրում էր. «Ամսուն 19-ին կատարվելիք եկեղեցական ընտրություններու մասին պետք եղած վիճաբանությունները ըրաք, հասանք հետևյալ կարգադրության.— Ընկ. Օսերենց հարսանեւ հարաբերության մեջ պիտի գտնվի ծանոթ Անձին հետ և օրը օրին պիտի հետևի կացության բարեշրջումին ու եթե որևէ աննպաստ հեղաշրջում գուշակե պիտի նկրտի առաջն առնել, հոռեգույնս հետաձգել քննարկությու-

17 «Ազգային իշխանությունը լիբանանահայ ժողովուրդին դեմ» (խմբագրական), «Զարթոնք», 17 հունվարի, 1954։

18 Ճ. Սանտալյան, Դաշնակցականները և եկեղեցին, «Հուսաբեր», 11 ապրիլի, 1958։

նը ունէ պատճառաբանութեամբ։ 2000 հոգի արդէն վարձա-տրուած են լայնօրէն և խոստացած քուէարկել ի նպաստ մեր թեկնածուներուն»[19]։

*Չնայած դաշնակցության ծախսած գումարներին և կազ-մակերպած ջանքերին, ազգային-եկեղեցական ընտրություն-ներում նրանք պարտվեցին։ Սակայն, պարտություն կրելով մի տեղում, դաշնակցությունը կրակ է բացում այլ վայրում։*

*Հայ եկեղեցու պառակտման համար մղվող պայքարը ղե-կավարվում և ֆինանսավորվում է իմպերիալիզմի կողմից։ Սփյուռքահայ գաղութներում հատկապես սուր պայքար ծա-վալվեց Կիլիկիայի կաթողիկոսական ընտրությունների կա-պակցությամբ։*

*Ահա թե ինչ է ասվում բյուրոյի՝ վերը հիշատակված շըր-ջաբերական նամակում, Կիլիկիայի կաթողիկոսության ընտ-րությունների մասին. «Կիլիկիո կաթողիկոսության ընտ-րության մէջ ընտրապայքարի ձերայնոց առաջարկած այս-ձևն ընդունված է, ինչպես մեզ տեղեկացուց ընկ. Սամուել*։ Համագումարի ընթացքին կարգադրված կաթողիկոսության թեկնածության խնդիրը Խորէն և Զարեհ եպիսկոպոսներու նը-կատմամբ, պէտք է լուծել հետևյալ կերպով։ Առաջ քաշել Խորէն եպիսկոպոսը, տրված ըլլալով որ երկրորդը երկար տարիներէ ի վեր ճանչցված է որպես նվիրված դաշնակցա-կան, մինչ առաջինը ավելի նվազ ակնբախ հարաբերություն-ներու մէջ է մեզ հետ։ Երբ ընտրապայքարը ստանա ավելի սուր հանգամանք մը, անմիջապես այդ գումարը պիտի դրվի Միջագետքի** տրամադրության տակ»[20]։*

19 *«Դավաճանները հանրային դատաստանին առջև» (խմբագրական, «Արարատ», հոկտեմբերի 12), «Երիտասարդ Հայաստան», 25 հոկտեմ-բերի, 1955։*

* *Սամուել—օտար գաղտնի ոստիկանության ներկայացուցիչ, որը վե-տոյի իրավունքով հսկում էր տարազիր կոմիտեների համագումարնե-րի որոշումները։*

** *Միջագետք—Սիրիայի և Լիբանանի շրջանները հսկող գրասենյակը։*

20 *«Դավաճանները հանրային դատաստանին առջև» (խմբագրական, «Արարատ», հոկտեմբերի 12). «Երիտասարդ Հայաստան», 25 հոկտեմբերի, 1955։*

Ինչպես ցույց է տալիս փաստաթուղթը, Կիլիկիայի կաթողիկոսության ընտրությունների հարցը քննարկման առարկա է դարձել տարագիրների համագումարում և այնուհետև դաշնակցությունը գործել է այդ համագումարի ընդունած որոշումների համաձայն, ԱՄՆ-ի հետախուզական օրգանների բաց թողած գումարներով։

Նման միջոցներով դաշնակցությունը կարողացավ էջմիածնից անջատել մի շարք եկեղեցական թեմեր։ Դաշնակցությունը եկեղեցին պառակտելու, այն հակասովետական պայքարում օգտագործելու համար ոչ մի միջոցի առջև կանգ չի առնում։ Զրպարտվում և վարկաբեկվում են բոլոր նրանք, ովքեր այս կամ այն կերպ դիմադրում են դաշնակցությանը։ Առաջադիմական ուժերի դեմ մղվող պայքարում դաշնակցությունը հաճախ է գործադրում իր սիրած զենքը, այսինքն՝ բոլոր հակառակորդներին համարում համայնավարներ և կոմունիզմի գործակալներ։ Այն եկեղեցական թեմերը, որոնք չեն ընդունում դաշնակցության մենատիրությունը և ձգտում են վարել անկախ ազգային քաղաքականություն, այդ կուսակցության կողմից որակվում են իբրև կոմունիստների գործակալներ։

Սերտորեն կապված միջազգային իմպերիալիզմի հետախուզական օրգանների հետ, դաշնակցությունը նրանց օգնությամբ աստիճանաբար պառակտում է սփյուռքահայ գաղթավայրերը։ Սփյուռքահայ բոլոր տիպի կազմակերպություններին են ուղարկվում դաշնակցական գործիչներ, որպեսզի ներսից քայքայեն դրանք։ Դաշնակցության բյուրոն շրջանային կոմիտեներին ուղղված շրջաբերական նամակում գրում է. «Օրըստօրե կը մտնենք վճռական պահը ու ընդհանրապես դեռ որևէ արդյունք չէ նվաճված փաղանգներու կազմակերպումին* նկատմամբ. սկաուտական կազմակերպություններէ ներս, շարքերէ ներս, շարքերուն մեջ, առհասարակ մարմնա-

* Փաղանգների կազմակերպում—ըստ գոյություն ունեցող ծրագրի, դաշնակցությունը պարտավոր է սահմանային արկածախնդրությունների համար պատրաստել երիտասարդական ջոկատներ։

մարզական, ակումբների ներս պետք է ուղարկել հատուկ խմբավարներ**...»[21]: Քայքայելով և պառակտելով սփյուռքահայ կազմակերպությունները, դաշնակցությունն իր խմբակցությունները ի սպաս է դնում միջազգային իմպերիալիզմի շահերին: Սիրիայում հայտնաբերված լրտեսական խմբի աղգագով գործունեությունը այդ փաստի անհերքելի ապացույցն է:

Դաշնակցությունը, պառակտելով սփյուռքահայ գաղթօջախների հասարակական-քաղաքական կազմակերպությունները, ձգտում է ստեղծել «անհայրենիք պետություն», իհարկե, իր ղեկավարությամբ: Կիլիկիայի կաթողիկոսության գրավումը դաշնակները համարում են «անհայրենիք պետության» ծրագրի մասնակի իրագործում: «Անհայրենիք պետության» պլանը նոր չէ. դեռևս 1924 թ. հունվարի 22-ին «Հուսաբերը» այդ մասին գրում էր. «Անհրաժեշտ է, որ արտասահմանի հայությունը, բոլոր գաղութները ստեղծեն բարձրագույն կազմակերպություն մը՝ համապատասխան ճյուղավորումներով, կազմելն գավառային, շրջանային մարմիններ, որոնք միացած ըլլան կենտրոնական խորհրդի և հատուկ սահմանադրությամբ մը: Տեսակ մը բարոյական պետություն, անհայրենիք պետություն, պետական սարքավորումներով, ազգային և միջազգային իրավական կարգերով: Այդ մարմինը գերագույն մարմինն է արտասահմանի հայության, իր շուրջը պիտի համախմբե բոլոր ցրված գաղութներու հայությունը, անոնց ազգային, մշակութային, տնտեսական գործունեությունները, պետության և քաղաքացիության փոխհարաբերությամբ: Այսս կազմե ամեն մի գաղութ իր ապրած շրջանակին մեջ պիտի մեկուսանա, չպիտի ըլլա քաղաքացի իր ապրած երկրին, այս անջատումով միանալու համար իր ազգային, իր պետության համապատասխան կազմակերպության, որ պետք է ճա-

---

** Խմբավարներ—սպորտային մարզիչներ:

[21] «Դավաճանները հանրային դատաստանի առջև» (խմբագրական. «Արարատ», 12 հոկտեմբերի), «Սովետական Հայաստան», 25 հոկտեմբերի, 1955:

նաչվի նաև Ազգերու դաշնակցության կողմէ»։ Տուրջ քառասուն տարի դաշնակցությունը պայքարում է «անհայրենիք պետության» գաղափարի իրականացման համար։ Սակայն կյանքը, սփյուռքահայության զարգացման օրինաչափությունները խստորեն հերքում են դաշնակցության ծրագրերը։

Արտասահմանի հայության ճնշող մեծամասնությունն ընդունում է Սովետական Հայաստանը, այն համարում իր մայր Հայրենիքը։ «Այսօր,— գրում են հնչակյանները,— արտասահմանի հայության ջախջախիչ մեծամասնությունը՝ իր բոլոր դասակարգերով, զանազան խավերով և տարբեր ըմբռնումներ ունեցողներով կընդունի Սովետական Հայաստանը իր Մայր Հայրենիքը։ Ասոր դեմ սակայն կայ փոքրամասնություն մը՝ համախմբված դաշնակցության շուրջը, որ կը մերժե Հայաստանի պայծառ իրականությունը և կը շարունակե սուտ պահել իր կորուսյալ «Հանրապետության» համար»[22]։ Սփյուռքահայությունը իր մայր Հայրենիքից կտրելու նպատակով էլ դաշնակցությունը առաջ քաշեց «հողեղեն հայրենիքի» գաղափարը։ Դաշնակցության այդ ազգադավ ծրագիրը սփյուռքահայության կողմից արմատապես մերժվեց։ Նույնիսկ դաշնակցության կուսակցության շարքերում ոչ բոլորն են ընդունում «հողեղեն հայրենիք»-ի հակազգային գաղափարը։ Փարիզում հրատարակվող «Հայաստան» շաբաթաթերթը (օրգան Հ. Յ. դաշնակցության նոր սերունդի) 1963 թ. հունիսի 27-ին, «Հողեր Հայրենիք» խորագիրը կրող առաջնորդողում, հանդես եկավ «հոգեկան հայրենիք»-ի գաղափարի դեմ։ Երիտասարդ դաշնակցականները պահանջում էին փոխել վերաբերմունքը Սովետական Հայաստանի նկատմամբ։ «Այսօր խորհրդային է Հայաստանը. ու դարձյալ կը սիրենք զայն՝ իր տառապանքով ու թախիծներով» գրում էին նրանք։ Թվում է, թե դաշնակցության ղեկավարությունը պետք է համապատասխան եզրակացություններ հաներ կուսակցության

22 «Պատրանքի մը փլուզումը», «Երիտասարդ Հայաստան», 6 օգոստոսի, 1963։

*երիտասարդ անդամների շարքերում նկատվող նման երևույթներից: Սակայն դաշնակցությունը համառորեն շարունակում է իր նախկին ազգակործան քաղաքականությունը:*

*Դաշնակցության պառակտողական քաղաքականությունը, անկախ այդ կուսակցության իրական ցանկություններից, օբյեկտիվորեն տանում է դեպի սփյուռքահայ գաղթավայրերի քայքայման արագացումը և ոչնչացումը: Հայ գաղթավայրերը արտասահմանյան երկրներում մեծ դժվարությամբ պայքարում են իրենց գոյատևումը ապահովելու համար: Հայապահպանման դժվարին պայքարում խոշոր դեր են կատարում սփյուռքահայ քաղաքական կուսակցությունները, եկեղեցին, ՀԲԸՄ-ը և մյուս բազմաթիվ հայրենակցական, մշակութային, մարզային ու այլ առաջադիմական միությունները: Սփյուռքի հայ զանգվածը դատապարտված է կործանման և միայն Սովետական Հայաստանի և հայ գաղութների բոլոր ուժերի գործադրումն է, որ առայժմ ապահովում է նրա գոյատևումը մինչև ներգաղթի ավարտը:*

Դաշնակցությունը պառակտելով սփյուռքահայ գաղթավայրերը, անհամեմատ թուլացնում է ազգապահպանման ազդակները և արագացնում սփյուռքահայության ձուլման պրոցեսը:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

## 1. ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

*Այսօր, երբ ժամանակի փոշին ծածկել է հայ ազատագրական և սոցիալական պայքարի ժամանակաշրջանի նյութերը, երբ անհատի պաշտամունքը արդեն չի ճնշում մարդկանց մտքերը, անհրաժեշտ է նորից մանրամասնորեն ուսումնասիրել անցյալ դարաշրջանի կնճռոտ հարցերը, չշրջանցելով վիճելի խնդիրների դրական և բացասական կողմերը։*

*XIX դարի վերջին քառորդի պատմության ուշադրության արժանի պրոբլեմներից մեկը Հնչակյան կուսակցության գաղափարախոսության և գործունեության գնահատության հարցն է։*

*Հնչակյան կուսակցությունը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ծնունդն է։ Նա հիմնադրվել է 1887 թ. Եվրոպայում, ուր այն ժամանակ լայնորեն տարածված էր մարքսիզմը։ Բնականաբար, մարքսիզմը չէր կարող իր կնիքը չթողնել Հնչակի գաղափարախոսության վրա։*

*Ըստ Ա. Կիտուրի վկայության, Հնչակի գաղափարախոսության ակունքները սկիզբ են առնում նարոդնիկներից, Պլեխանովից և Գերցենից*[1]*։ Կարո՞ղ է արդյոք այսպիսի բաղկացուցիչ մասերից կազմված գաղափարախոսությունը համարվել մարքսիստական։ Թերևս պատասխանն ավելորդ է։*

---

1 **Արսեն Կիտուր**, *Հայ ազատագրության ճանապարհին, Պեյրութ, 1949, էջ 39—40։*

*Հայտնի է, որ մարքսիզմը առաջ է եկել որպես փիլիսոփայության, քաղաքատնտեսության ու սոցիալիզմի խոշորագույն ներկայացուցիչների ուսմունքի ուղիղ և անմիջական շարունակություն:*

*«Այդ ուսմունքն,— գրում է Վ. Ի. Լենինը,— օրինական հաջորդն է այն լավագույնի, ինչ որ մարդկությունը ստեղծել է XIX դարում հանձինս գերմանական փիլիսոփայության, անգլիական քաղաքատնտեսության, ֆրանսիական սոցիալիզմի»*[2]*:*

*Մարքսիզմի գաղափարախոսության երեք աղբյուրների և երեք բաղկացուցիչ մասերի նույնիսկ թռուցիկ համեմատությունը հնչակի գաղափարախոսության ակունքների հետ, ցույց է տալիս, որ վերջինս շատ հեռու է մարքսիստական լինելուց: Իր դասակարգային էությամբ, գաղափարախոսությամբ հնչակը տիպիկ մանրբուրժուական, ազգայնական կուսակցություն է:*

*Հնչակյան կուսակցությունը մանրբուրժուական դեմոկրատիայի այլատեսակություններից է: «Առաջավոր երկրների պատմությունից հայտնի է,— գրում է Վ. Ի. Լենինը,— թե ինչպես հաճախ այդ հոսանքը, իր երիտասարդ ժամանակ, ներկվում է «սոցիալիստական գույնով»*[3]*:*

*Լենինը մշտապես այն կարծիքին է հայտնել, որ միանգամայն սխալ է մանրբուրժուական դեմոկրատիայի տարբեր հոսանքների դեմ մղվող պայքարը դիտել որպես պայքար սոցիալիզմի* ներսում, *այսինքն՝ որպես սոցիալիզմի պատակտում Ռուսաստանում*[4]*:*

*Խոսելով մանրբուրժուական դեմոկրատիայի ռուսական այլատեսակությունների՝ մենշևիկների և էսէռների մասին, Լենինը գրում էր, որ նրանց սոցիալիստներ համարելը սխալ է: Նրանք սոցիալիստներ են եղել թերևս միայն ըստ ֆրազա-*

---

2 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 19, էջ 4:*

3 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 28, էջ 227:*

4 *Նույն տեղում, էջ 250:*

*քանության և ըստ հուշերի: Իրականում դա ռուսական մանր բուրժուազիան է*[5]*:*

*Հնչակյան գործիչները մշտապես ընդգծում են իրենց սոցիալիստական բարի դիտավորությունները: Սակայն մանրբուրժուազիայի զարգացման պրոցեսում այդ երևույթը նորություն չէ: Կուսակցության գաղափարախոսությունը որոշվում է ոչ թե ղեկավարների բարի ցանկությամբ, այլ նրա դասակարգային էությամբ և գործունեությամբ:*

*Վ. Ի. Լենինը այդ առնչությամբ հայտնել է այն կարծիքը, որ սոցիալիստ լինելու բարի դիտավորությունները չեն բացառում կուսակցության բուրժուա-դեմոկրատական էությունը*[6]*:*

*Եվ միանգամայն ճիշտ էր Ստ. Շահումյանը, երբ դեռևս 1905 թ. գրում էր, որ հնչակը «Չնայած իր հնուց սոցիալիստական «պիտակին» և իր գրական առաջնորդների բարի կամքին, եղել է և մնում է մինչև այժմ ընդհանուր առմամբ նացիոնալիստական պարտիա»*[7]*:*

*Սակայն հնչակյան գործիչները, համաձայն չլինելով Վ. Ի. Լենինի և հայ լենինյանների գնահատականի հետ, մշտապես պրոպագանդում են այն տեսակետը, թե իբր հայ իրականության մեջ առաջին պրոլետարական, մարքսիստական կուսակցությունը եղել է հնչակը:*

*Սակայն այլ է պատմական իրողությունը: Քանի որ հնչակը կյանքի էր կոչված ազգային-ազատագրական պայքարի կողմից, բնականաբար, նրա ծրագրում առաջին տեղը պետք է հատկացվեր այդ խնդրի լուծման անհրաժեշտությանը: Բայց որովհետև այդ կուսակցությունը, հանդիսանալով հայկական մանրբուրժուական դեմոկրատիայի այլատեսակություններից մեկը, նույնպես ներկվել էր «սոցիալիստական գույնով» և իրեն համարում էր մարքսիստական, հետևաբար, նրա ծրագրում պետք է տեղ գտներ նաև սոցիալիզմը:*

---

5 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 28, էջ 252:*
6 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 8, էջ 89:*
7 Ստ. Շահումյան, *Ընտիր երկեր, հատ. 3 էջ 429:*

Այսպես ծնունդ առավ Հնչակյան առաջին ծրագիրը, որի մասին այդ կուսակցության մտավորականները գրում էին. «Հնչակյան կուսակցությունը հրապարակ եկավ Հայ ժողովրդի տառապանքները դարմանելու, անոր ազատության և բարօրության ճանապարհը բանալու որոշ պահանջներու և պայմաններու տակ։ Ան ունեցավ իր ծրագիրը, իր ուղղությունն ու նպատակը։ Անոր ծրագիրն ուներ երկու գլխավոր խնդիր, մոտավոր և հեռավոր նպատակ[8]»։ Մոտավոր նպատակը Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական պայքարի հաղթանակն էր, հեռավորը՝ սոցիալիզմը։

Ժնևում իրեն կուսակցություն հռչակած հեղափոխականների փոքր խումբը հետագայում, իրոք, կապվեց արևմտահայ իրականության հետ և վերածվեց ազդեցիկ կուսակցության։ Արևմտահայ իրականությունը, որտեղ բացակայում էր արդյունաբերական պրոլետարիատը, դասակարգային իմաստով իրենից ներկայացնում էր մանրբուրժուական տարրերի մի ամբողջ օվկիանոս, որի հզոր ալիքները հեղեղեցին Հնչակյան կուսակցության շարքերը, թափանցելով մինչև նրա ուղն ու ծուծը։

Հնչակյան գործիչները, որպեսզի սոցիալիզմը հասկանալի դարձնեն մասսաներին, թարգմանում և տարածում էին մարքսիստական գրականություն։ Հայ իրականության մեջ հայերեն լեզվով մարքսիստական գրականությունը առաջին անգամ սկսել է տարածել Հնչակյան կուսակցությունը։

Թվում էր, թե Հնչակյան կուսակցությունը, եթե իրոք նա պրոլետարական էր, մարքսիստական, պետք է ընդուներ հեղափոխական շարժման անհրաժեշտությունը կովկասահայ իրականության մեջ, ուր կային պրոլետարիատ, բուրժուազիա և հետևաբար, հարմար պայմաններ սոցիալիստական պրոպագանդայի ու հեղափոխական գործունեության համար։

Սակայն Հնչակյան կուսակցությունը, ելնելով իր դասակարգային էությունից, իրեն լիովին նվիրեց արևմտահայու-

8 «Միշտ պայքարի գիծին վրայ» (խմբագրական), «Արարատ», 3 հուլիսի, 1949։

թյան ազատագրության գործին՝ այն համարելով ամբողջ հայ ժողովրդի առաջին ու կենսական խնդիրը[9]։

Հայ ժողովուրդը իր ողբերգական պատմության հետևանքով բաժանված էր երկու հատվածների՝ արևելահայության և արևմտահայության։ Արևելահայությունը, պատմական դեպքերի բերումով, գտնվում էր Ռուսաստանի կազմում և իր բախտը կապած այդ երկրի բազմազգ ժողովուրդների հետ՝ պայքարում էր լավագույն ապագայի համար։ Այն ժամանակ, երբ արևելահայությունը պայքարում էր սոցիալական ռևոլյուցիայի հաղթանակի համար, արևմտահայությունը, ելնելով իր օրյեկտիվ դրությունից, իր առջև դնում էր միանգամայն այլ խնդիր՝ փրկվել ֆիզիկական ոչնչացման վտանգից, լուծել հայկական հարցը։

Հնչակը ոչ միայն չէր մասնակցում արևելահայության պայքարին, այլև գտնում էր, որ նա չպետք է խառնվի Ռուսաստանի հեղափոխական շարժումներին և իր բոլոր ուժերը պետք է ի սպաս դնի արևմտահայության ազատագրության գործին։

Իրեն համարելով մարքսիստական, պրոլետարական կուսակցություն, Հնչակը, տարօրինակ կերպով, առաջ էր քաշում այն միանգամայն սխալ տեսակետը, թե «...մարդկության ներկա պայմանների մեջ գոյություն ունեն միմիայն ազգային կազմակերպություններ»[10]։ Այս մտքերը արտահայտվել են 1901 թ., երբ ամբողջ աշխարհում ուժգնորեն ծավալվում էր դասակարգային պայքարը և ամենուրեք կյանքի էին կոչվում դասակարգային կազմակերպություններ։

Ելնելով իր սխալ դիրքավորումից, Հնչակյան կուսակցությունը դեմ էր դուրս գալիս արևելահայության հեղափոխական պայքարին, գտնելով, որ այն խանգարում է արևմտահայության ազատագրության գործին։

---

9 «Հայություն և հայկական խնդիր», «Հնչակ», 30 հուլիսի, № 5, 1900։

10 «Ժամանակ է» (խմբագրական), «Հնչակ», 5 նոյեմբերի, № 6, 1901։

*Արդեն XX դարի սկզբին, երբ հայ ժողովուրդը, ավելի ճիշտ հայ պրոլետարիատը, ակտիվորեն մասնակցում էր համառուսական հեղափոխական շարժումներին, հնչակը խստորեն քննադատում էր կովկասահայությանը՝ պահանջելով, որ նա չմասնակցի հեղափոխական շարժումներին։ «Կատարված վերջին իրողությունները (խոսքը հեղափոխական շարժումների մասին է—Լ. Խ.) ցույց են տալիս, որ հետզհետե ավելանում է այն հայ ինտելիգենտների և բանվորների թիվը, որոնք չկարողանալով դիմադրել ուժեղ հոսանքին՝ գնում են նրա հետ, մոռացման տալով այն ծանր, այն ահագին, այն պատասխանատու պարտականությունը, որ ընկնում է այս րոպեիս ամեն մի հայի վրա...»—գրում է «Հնչակը», ձգտելով կովկասահայությանը հեռու պահել հեղափոխական շարժումներից*[11]*։*

*Հնչակը իր մանրբուրժուական էության պատճառով չէր հասկանում տեղի ունեցող հասարակական երևույթների ճըշմարիտ իմաստը և զարմանում ու զայրանում էր, որ հայ պրոլետարիատը մասնակցում է համառուսական շարժմանը։ «Մեզ միանգամայն անհասկանալի է,— գրում էր «Հնչակը»,— թե ինչպես այն հայ ինտելիգենտ և բանվոր տարրերը, որոնք այնքան գեղեցիկ և օրինակելի անձնվիրությամբ երևան եկան վերջին ցույցերի մեջ, չեն կարողանում տեսնել, որ ինքնուրույն, սեփական Հայրենիքը, նրան օտարի բռնապետական լծից ազատելը կազմում է բանվորական իղձերի առաջին և սկզբնական հիմնաքարը»*[12]*։*

*Հնչակյան կուսակցությունը չէր ըմբռնում, որ պատմության օբյեկտիվ զարգացումը ինչպես Ռուսաստանի բոլոր ժողովուրդների, այնպես էլ արևելահայ աշխատավորության առջև դրել էր մի ընդհանուր խնդիր՝ ցարիզմի տապալման և, այնուհետև, սոցիալիստական հեղափոխության հաղթանակի խնդիրը։ Աշխարհում ոչ մի ուժ ի վիճակի չէր արգելակելու պատմության օբյեկտիվ օրենքներով պայմանավորված Ռու-*

---

11 *«Մայիսյան ցույցը Բաթումում», «Հնչակ», 1 հունիսի, № 3, 1902։*
12 *Նույն տեղում։*

*Ռուսաստանի ժողովուրդների այդ խոր հերոսական պայքարը: Իսկ Հնչակը անօգուտ փորձեր էր կատարում՝ արևելահայությանը համառուսական շարժումներից հեռու պահելու համար: Հնչակը պախարակում էր այն հայերին, որոնք մասնակցում էին հեղափոխական շարժումներին և հատկապես նշում, որ «...ռուս սոցիալ-դեմոկրատիան մի վնասակար գործ է որ կատարում է, հեռացնելով հայերին յանուն դասակարգային շահերի, այն միակ շարժումից՝ որին պետք է որ նվիրե իրեն հայը առանց դասակարգային կամ ուրիշ որևէ կարգի նկատման...»[13]:*

*Նման քաղաքականությունը ոչ մի ընդհանուր բան չուներ մարքսիզմի ուսմունքի հետ:*

*Սակայն հետագայում, երբ Հնչակյան կուսակցությունը Արևմտյան Հայաստանում խոշոր անհաջողությունների հանդիպելուն և իր վաղեմի հեղինակությունը կորցնելուն զուգահեռ նկատեց, որ արևելահայությունը և Արևելահայաստանը ևս «ձեռքից գնում են», այսինքն՝ ընդունելով Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարությունը, մտնում են ռուսական հեղափոխական շարժումների հորձանուտների մեջ, փոխեց քաղաքականությունը և ընդունեց նաև արևելահայ խնդիրը:*

*Հնչակի քաղաքականության մեջ այդ արմատական բեկումը կատարվեց 1903 թվականի վերջերին:*

*Հնչակը, որը ժամանակին հրաժարվում էր արևելահայ խնդիրը ընդունելուց և ձգտում ամեն կերպ խափանել հեղափոխական շարժումներին արևելահայության մասնակցության գործը, այժմ ի լուր ամենքի հայտարարեց, որ «Այսօր կա Երկու գործ, մեկը մյուսից տարբեր իրանց իմաստով, պատմական դրություններով, ուրեմն և պահանջներով»[14]:*

*Վերոհիշյալ «երկու գործերից» մեկը արևմտահայ խնդիրն էր, մյուսը՝ կովկասահայը:*

*«Վերջին տասը տարիների պատմությունը ամենահամո-*

---

13 *«Մայիսյան ցույցը Բաքվում», «Հնչակ», 1 հունիսի, № 3, 1902:*

14 *«XVII տարի» (խմբագրական), «Հնչակ», № 1, հունվարի, 1905:*

վերցուցիչ փաստերով մեզ սովորեցրեց, —գրում էին հնչակյանները,— որ Հայկական խնդրի լուծման ամենազորավոր արգելքը, ինքը Ռուս պետությունն է, որ մեր անմիջական թշնամին Տաճիկ կառավարությունը չէ, այլ և Ռուս, որ վերջինս Տաճկահայաստանը իր ապագայ սեփականությունը համարելով, հայկական խնդիրը իր ներքին խնդիրներից մեկն է համարում: Ուրեմն քանի դեռ իշխում է ռուսական ներկա քաղաքականությունը, հայկական հեղափոխության բոլոր ճիգերը, որքան և գերագանց լինեն նրանք, անկարող են կորզելու Տաճկահայաստանում թեկուզ մի թիզ գետին հայկական ինքնավարության համար, Թուրքիայի և Ռուսիայի պես հզոր պետությունների ճիրաններից»[15]:

Քանի որ ռուսահայ ժողովուրդը այնպես է կաշկանդված, որ ոչ մի գրական դեր չի կարող խաղալ ի նպաստ հայկական հարցի լուծման, ուրեմն ավելի լավ և ավելի նպատակահարմար է, որ ռուսահայը միանա իր վիճակակից մյուս ազգերին և 120 միլիոն խայթոցներով թունավորի այն զաղանին, որը իր ճիրանների մեջ ճզմում, արնաքամ է անում և՛ հայերին և նրանց բախտակից մյուս ազգերի[16]: «Հնչակը վեր բարձրացնելով իր հիմնական սոցիալ-դեմոկրատական սկզբունքները, որ դեռ տասնևյոթ տարի առաջ արձանագրվել են իր ծրագրում, անցնում է և արդեն անցել է այդ սկզբունքների զուտ տեսական քարոզից դեպի գործնական ասպարեզը»[17],— գրում էր հնչակյան կուսակցության կենտրոնական օրգան «Հնչակը» 1905 թ. հունվարին: Եթե հնչակյան կուսակցությունը իրոք պրոլետարական, մարքսիստական կազմակերպություն էր, նա անշուշտ պետք է ձուլվեր Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ և հայ կոմունիստների շարքերում պայքարեր սոցիալիզմի հաղթանակի համար:

Սակայն հնչակը այդպես չվարվեց: Ո՞րն էր հիմնական պատճառը:

---

15 «Վերածնություն», № 24, 1903:

16 Նույն տեղում:

17 «Հնչակ», հունվար, № 1, 1905:

*Նախ և առաջ այն, որ Հնչակը իրեն համարելով մարքսիստական, պրոլետարական, իրականում հանդիսանում էր ազգային կուսակցություն, գործում էր միայն ազգային շըրջանակներում, հայ իրականության մեջ, իսկ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը տերիտորիալ սկզբունքներով կառուցված ինտերնացիոնալիստական, պրոլետարական կուսակցություն էր։*

*Իրեն մարքսիստական, պրոլետարական համարող Հնչակյան կուսակցությունը ազգային քաղաքականությամբ, ազգային սահմանափակությամբ պառակտում էր հեղափոխական շարժումը և թուլացնում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղվող պայքարը։*

*Ճիշտ է, երբեմն Հնչակյան կուսակցությունը ցույցերի և գործադուլների ժամանակ հանդես էր գալիս բոլշևիկների հետ միասին, բայց այդ մասնակցությունը տևական բնույթ չուներ, այն, ավելի ճիշտ , հեղափոխական շարժման էպիզոդիկ երևույթներից էր միայն։*

*Եվ, եթե սկզբնական շրջանում Հնչակը իրոք կարողացավ իր շարքերում համախմբել մանրբուրժուական և մասամբ աշխատավորական, պրոլետարական խավերին, ապա հետագայում սոցիալ-դեմոկրատիայի արագ զարգացմամբ այդ կուսակցության ազդեցության տակ մնացին, հիմնականում, միայն մանրբուրժուական խավերը։ Ընդսմին, Հնչակի ետևից Կովկասում գնում էր մանրբուրժուազիայի մի աննշան մասը. որովհետև վերջինիս հիմնական զանգվածը գտնվում էր Դաշնակցության ազդեցության տակ։*

*Արևմտյան Հայաստանում իր վաղեմի դիրքերից զրկված Հնչակյան կուսակցությունը Կովկասում երբեք չկարողացավ լայն ժողովրդական մասսաներին իր ետևից տանել և հայ իրականության ազդեցիկ կուսակցությունների շարքն անցնել։*

*Հարցն այն է, որ դասակարգային պայքարի զարգացման մակարդակը կովկասահայ իրականության մեջ Հնչակի գործունեության համար նպաստավոր պայմաններ չէր ստեղծում։ Կովկասահայ այն խավերն ու դասակարգերը, որոնք հասկա-*

նում ու ընդունում էին սոցիալիզմը, անվերապահորեն գնում էին սոցիալ-դեմոկրատիայի հետևից։ Իսկ նրանք, ովքեր չէին հավանում սոցիալիզմը ու տարված էին ազգայնական գաղափարներով, հիմնականում ընթանում էին դաշնակցության հետևից։

Բնական է, որ այսպիսի պայմաններում Հնչակը, որի ծրագրում գրանցված էր և սոցիալիզմը, և ազգայնականությունը, մեծ թվով հետևորդներ չէր կարող ունենալ։ Այդ դեռ բավական չէ. հասարակական այն խավերը, որոնք դեռևս չէին շերտավորվել, դասակարգային գիտակցության չէին եկել, ժամանակի ընթացքում հեղափոխական շարժման ազդեցությամբ հեռանում էին այդ կուսակցության շարքերից։ Այդ երևույթը մասսայական բնույթ էր ընդունել։ Բերենք բազմաթիվ փաստերից մեկը։ Հնչակյանները գրում են. «Միւս Քաղաքներու օրինակին հետևելով Երևանի Հնչակյան շարքերէն 1906-ին քանի մը հոգի կը հեռանան և կը հրատարակեն հատուկ Հայտարարություն մը այդ մասին»[18]։

Ինչպես տեսնում ենք, հնչակյանները չեն ժխտում այն հանգամանքը, որ իրենց շարքերում տեղի է ունեցել քայքայում, որի հետևանքով Կովկասի շատ քաղաքներում շատերը հեռացել են այդ կուսակցությունից։

Հնչակյան կուսակցության Երևանի կազմակերպության անդամների մի խումբ, որոշելով դուրս գալ այդ կուսակցության շարքերից, ժողով է հրավիրում, ընդունում մի որոշում, որի մեջ հիմնավորվում են հեռացման պատճառները։ Այդ որոշման մեջ նշվում էր. «Գ) Նկատելով որ այն օրից, երբ Հնչակյան կուսակցությունը Ռուսաստանում հայտարարելով սոցիալ-դեմոկրատական գործունեություն, նկատվեց երկդիմի քաղաքականության մեջ, մեկ կողմից լինելով սոցիալ-դեմոկրատ, մյուս կողմից ազգայնական։

դ) Նկատելով որ Հնչակյան կուսակցության ունեցած առանձին կազմակերպությունը Ռուսաստանում սահման է

18 «Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության», Ա. հատոր, Պեյրութ, 1962, էջ 436։

ստեղծում զանազան ազգությունների պրոլետարիատի մեջ և թուլացնում է նրա դասակարգային ինքնաճանաչությունը,

Ժողովը որոշեց միանալ Ռուս. սոց. դեմ. բանվորական կուսակցության հետ և կոչվել Ռուս. սոց. դեմ. բանվորական կուսակցության Երևանի կազմակերպություն»[19]։

Հնչակը աստիճանաբար կորցնում էր իր վաղեմի դիրքը։ Սոցիալիստական գաղափարների տարածման և աշխատավորության ինքնագիտակցության բարձրացման հետ միասին այդ կուսակցությունից հեռանում էին բոլոր նրանք, ովքեր նրա հետ կապվել էին որպես սոցիալիստական կուսակցության։ Ինչ վերաբերում է հնչակի շարքերում գտնվող ազգայնական տարրերին, ապա նրանք ավելի վաղուց էին սկսել հեռանալ։

Դեռևս 1896 թ. հնչակից անջատվեց ազգայնականների մի մեծ խումբ, որը սկզբից կոչվեց «Վերակազմյալ հնչակյաններ», իսկ ավելի ուշ միացավ արմենականներին, սկիզբ դնելով սահմանադրական ռամկավարական կուսակցությանը։ Այդ պրոցեսը հետագայում ևս շարունակվում էր։

Հայ իրականության մեջ դեմ դիմաց մնում էին երկու կուսակցություններ՝ ՌՍԴԲԿ-ը և դաշնակցությունը։ Ահա սրանք էին այն երկու քաղաքական խոշորագույն կուսակցությունները, որոնք խորը արմատներ էին ձգել հայ իրականության մեջ և բոլոր ջանքերը գործ էին դնում հայ ժողովրդին իրենց դրոշի տակ հավաքելու համար։ Աշխատավորների ազատագրության համար մղված ծանր ու դժվարին պայքարում հաղթող հանդիսացավ կոմունիստական կուսակցությունը, որի ղեկավարությամբ Հայաստանում 1920 թ. նոյեմբերի 29-ին հաղթանակեց սովետական իշխանությունը։

Արևմտյան Հայաստանը ամայացնելուց, իսկ Արևելյան Հայաստանում սովետական իշխանության հաստատվելուց հետո հայ քաղաքական կուսակցություններն իրենց ամբողջ գործունեությունը շարունակեցին արտասահմանյան երկրներում։

19 «Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության», Ա. Հատոր, Բեյրութ, 1962, էջ 436։

*Հայ մարքսիստների ավագ սերունդը ահա այս փաստերն է նկատի ունեցել, երբ ստեղծագործորեն վերլուծելով Հնչակյան կուսակցության դասակարգային էությունը, եկել է այն եզրակացության, որ այն մանրբուրժուական սոցիալիզմի գաղափարներով շղարշված ազգայնական կուսակցություն է։*

*Հնչակյան կուսակցության ընկալվածությունը համաձայն չլինելով վերոհիշյալ տեսակետի հետ, համառորեն պահանջում է վերանայել այն. վիրավորում և պիտակավորում է բոլոր նրանց, ովքեր պաշտպանում են Հնչակի մասին կոմունիստական կուսակցության տված գնահատականը։ Վերանայման անհրաժեշտության մասին ժամանակին «Սրբագրեցեք հանուն արդարության» խորագրով ընդարձակ հոդվածաշարքով «Արարատ» թերթում հանդես է եկել Ա. Կիտուրը*[20]*։ Նա գրում էր. «Ակադեմիայի գիտական ընկերաբանական անդամները վերաքննության պետք է ենթարկեն մեր մոտիկ անցյալի, մեր հայ հեղափոխական, Սոցիալիստական Մարքսիստական գործն ու խոսքը, մանավանդ հոկտեմբերյան հեղափոխութենեն առաջ, պետք է վերաքննության ենթարկեն Հնչակյան կուսակցության մասին կլիշե եղած քանի մը շաբլոն նախադասությունները, որպեսզի ծիծաղելի չի դառնան գիտական և ընկերաբան շրջանակներուն առջև»*[21]*։*

*Այն բոլոր գիտական աշխատողները, որոնք իրենց աշխատություններում այս կամ այն չափով քննադատել են Հնչակյան կուսակցությանը, որակվում են որպես «բերիական պատմաբաններ»։ Իսկ քանի որ մեզ մոտ, հատկապես Հնչակի դասակարգային էության գնահատության հարցի շուրջը տիրապետում է միասնական կարծիք, ուրեմն բոլորն էլ համարվում են «բերիական պատմաբաններ»։ «Հայաստանի Պերիական պատմագիրները քառորդ դարե ի վեր թութակի պես կը հանկերգեն.— Հնչակյան կուսակցություն, պուրժուա-նացիո-*

---

20 Արսեն Կիտուր, *Սրբագրեցեք հանուն արդարության*, «Արարատ», Հոկտեմբեր-նոյեմբեր, 1956։

21 Նույն տեղում։

նոլիտական պարտիա...»,— ասվում է «Արարատ»-ի խմբագրականում[22]:

Հնչակյան գործիչները վերջին տարիներս բազմաթիվ անգամ գրել են Հնչակյան կուսակցությանը կոմունիստական կուսակցության կողմից տրված գնահատականի վերանայման հարցը: Հնչակյան մամուլը հրատարակել է մի շարք խմբագրականներ և հոդվածներ, որոնցում պարզորոշորեն ասում է, թե իբր «Հայաստանի վարիչները վերաքննության ենթարկել սկսած են իրենց սխալ դատումները Հնչակյանության մասին»[23]:

Հնչակյան մտավորականները փորձում են անջրպետել հայ մարքսիստների հին և նոր սերունդները, նրանց հակադրել իրար, այն միտքը անցկացնելով, թե իբր «Հայաստանի համայնավար կուսակցությունը, մանավանդ անոր նախկին ղեկավարները չէ, որ պիտի գրի անհերին հայ Ազատագրության և ընկերային հեղափոխության պատմությունը: Անոնք այդ գործին ոչ ձեռնհասություն ունեին և ոչ ալ անաչառ մոտեցման հնարավորություն»[24]:

Հարց է առաջանում, իսկ ո՞վ պետք է վերանայի պատմությունը: Պարզվում է, որ վերանայումը կատարում է «Հայաստանի նորահաս մտավորականությունը, ավելի լրջամիտ և խոհական քան իր նախորդները»[25]:

Հնչակի կողմից ձեռնարկվող փորձերը՝ հայ մարքսիստների հին ու նոր սերունդների միջև սեպ խրելու ուղղությամբ չեն կարող հաջողությամբ պսակվել: Հայ մարքսիստների ավագ սերունդը կոփված էր դասակարգային պայքարի բովում և խմորված նրա փորձով: Երիտասարդ սերունդը իր կրթությունը ստացել է մարքսիզմի կլասիկների և հայ լենին-

---

22 «Հայաստանի պատմաբանները Հնչակյան աշխատավորական շարժման մասին» (խմբագրական), «Արարատ», 22 սեպտեմբերի, 1960:

23 «Արժան և իրավ» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 19 փետրվարի, 1957:

24 Նույն տեղում:

25 Նույն տեղում:

*յանների աշխատություններով։ Նոր սերունդը իրեն համարում է լենինյան գվարդիայի արժանավոր ժառանգը և գործադրում է բոլոր ջանքերը իր նախորդների պատգամները կենսագործելու համար։*

*Այնպես որ, հակասություններ հայ մարքսիստների ավագ և «նորահաս մտավորականության» միջև չեն եղել, չկան և չեն կարող լինել։*

*Ինչ վերաբերում է հայ մարքսիստների ժամանակակից սերնդի՝ հնչակյան կուսակցության դասակարգային էության մասին ունեցած կարծիքին, ապա պետք է ասել, որ այդ հարցի կապակցությամբ հայ մարքսիստների շարքերում երբեք վեճեր կամ տարակարծություններ չեն եղել։ Հնչակը մշտապես գնահատվել է մանրբուրժուական, ազգայնական կուսակցություն։*

*Այս հարցի կապակցությամբ գոյություն ունեցող միակ թերությունը, հավանական է, այն է, որ մինչև այժմ հրապարակի վրա այդ պարզ ճշմարտությունը հարուստ փաստական նյութերով և խոր ընդհանրացումներով հաստատող լայնածավալ մենագրություն դեռևս չկա։*

*Ընթերցողի մոտ ակամա հարց է առաջանում՝ իսկ ինչպիսի՞ քաղաքականություն է վարում Հնչակը Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո։ Գո՞ւցե նա արմատական փոփոխությունների է ենթարկել իր գաղափարախոսության և քաղաքականության հիմնական սկզբունքները։*

*Փորձենք լուսաբանել այդ հարցը։ Հնչակյան մամուլը գրում է. «Հայաստանի խորհրդայնացումը՝ Երիտասարդ Հայաստանի (խոսքը ԱՄՆ-ում լույս տեսնող թերթի մասին է— Լ. Խ.) քարոզածը հետապնդած քաղաքական և տնտեսական սկզբունքներուն իրականացումն է։ Հնչակյանության հաղթանակն է»[26]։ Առաջին հայացքից թվում է, թե այս տողերը թյուրիմացաբար են տեղ գտել հնչակյան մամուլում։ Սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ մի թյուրիմացու-*

26 *«Քառասնամեակ (1903—1943) Երիտասարդ Հայաստանի», 1944, Նյու-Յորք, էջ 10։*

թյուն չկա։ Հնչակյան կուսակցությունը մշտապես պրոպագանդում է այն միտքը, որ Սովետական Հայաստանը իր քաղաքական գաղափարների իրականացումն է։ «Մարքսիստ Ս. Դ. Հնչակյան կուսակցությունը,— գրում է «Արարատը»,— Խորհրդային Հայաստանի վարչակարգը կը նկատե իր կուսակցության հետապնդած վարչակարգը, սկսյալ այն պատմական օրեն, երբ Հայաստանի մեջ հաստատվեցավ Խորհրդային դրությունը»[27]։

Այս տեսակետը տեղ է գտել նաև հնչակյան կուսակցության 1924 թ. Աթենքում գումարված VIII համագումարի որոշման մեջ։ Այնտեղ ասված է. «Նկատելով, որ Խ. Հայաստանը մեր կուսակցության հետապնդած նպատակի իրագործումն է... Ս. Դ. Հնչակյան կուսակցությունը անվերապահորեն կը կանգնի Խորհրդային Հայաստանի կողքին, կը ջանա ամեն միջոցով սատարել անոր բարգավաճումին ու վերաշինության և կապել գաղութահայ աշխատավորությունը քաղաքական, գաղափարական և տնտեսական կապերով Մայր Հայրենիքին»[28]։

Միաժամանակ համագումարը հայտարարեց, որ հնչակյան կուսակցությունը հրաժարվում է ընդհանուր կամ մասնակի որևէ գործակցություն ունենալու բոլոր այն կուսակցությունների հետ, որոնք քաղաքական վերաբերմունք ունեն և պայքար են մղում Սովետական Հայաստանի դեմ[29]։

Այնուհետև հնչակյանները գրում են. «Այժմ, որոշ խառնաշփոթություն կը տիրե ազգային բնագավառներեն ներս հասարակական դիրքավորումի տեսակետով, Հայրենիքի նկատմամբ։ «Հայրենասեր», «Հայաստանյան ճակատի կողմնակից» ասույթներ, լոզունգներ սովորական դարձած են։ Մի անգամ ընդմիշտ պետք է իմանալ, հստակորեն ըմբռնել թե Հնչակյան կուսակցության հայրենասիրությունը գաղափարա-

---

27 «Հայաստանը և հնչակյան կուսակցությունը» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 2 նոյեմբերի, 1945։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում։

*կան է, հետևաբար անշեղ, աննահանջ ու անփոփոխ Հայաստանի ներկա իրավակարգի հանդեպ, մինչ ուրիշներունը օրինակ ռամկավարությանը զգացական է, որ կրնա բարեշրջումներու, փոփոխություններու կամ* Էլաստիքական *մեկնություններու ենթարկվիլ»*[30]։

*Իսկ ի՞նչպիսի վերաբերմունք գոյություն ունի գաղափարական հարցերի նկատմամբ։*

*Հնչակյան կուսակցությունը գտնում է, որ «Համայնավարությունը և Հնչակյանությունը գաղափարական և սկզբունքային նույն խորքն ու նույն կառույցն ունին։ Տասնիններորդ դարու առաջին հիսնյակի վերջավորության, մարդկային հասարակության զարգացման պատմությունը գիտականորեն կերպարանավորող և ընկերային ֆորմացիաներու հասարակ հայտարարին տակ սահմանավորող գիտական սոցիալիզմի վարդապետության վրա խարսխված կուսակցություններ են երկուքն ալ»*[31]։

*Որքեմն Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո, սփյուռքում գործելու տարիներին էլ, Հնչակը իրեն համարել է և այժմ էլ համարում է մարքսիստական, պրոլետարական կուսակցություն։*

*Որպես ապացույց այն բանի, որ իբր Հնչակը մարքսիստական կուսակցություն է, կոմունիստական գաղափարախոսությամբ, այդ կուսակցության ղեկավարները շատ հաճախ օգտագործում են այն փաստը, որ III ինտերնացիոնալի հիմնադրումից հետո «... իր ութերորդ Համագումարով, Հնչակյան կուսակցությունը կը խզե իր կապը երկրորդ Միջազգայնականին հետ և կը մնա համակիր Երրորդին»*[32]։ *Ցավալի է, գրում են հնչակյանները, որ ուղղակի մասնակցության բանակցությունները արդյունավետ չեղան և Հնչակյան կուսակցությունը մշտապես մնում է համակիրողի դերում, իր ձևա-*

30 *«Համայնավարությունը և մենք» (խմբագրական), «Արարատ», 14 սեպտեմբերի, 1952։*

31 *Նույն տեղում։*

32 *Նույն տեղում։*

*քում ունենալով III Ինտերնացիոնալի հետևյալ հաստատագիրը. «Հայկական սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը կը մնա Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատիայի հնագույն հեղափոխական գունդերէն մէկը»[33]։*

*Սակայն հարց է առաջանում, եթե իրոք հնչակը մարքսիստական, պրոլետարական կուսակցություն է, ապա ինչու՞ նա չընդունվեց III Ինտերնացիոնալի մեջ։*

*III Ինտերնացիոնալի գործադիր Կոմիտեի նախագահությունը 1923 թ. փետրվարի 5-ին, քննելով հնչակյան կուսակցության դիմումը իրեն III Ինտերնացիոնալի մեջ ընդունելու մասին, ընդունել է հետևյալ որոշումը.*

*«Հայկական ս. դ. հնչակյան կուսակցությունը լինելով Ռուսաստանի սոց. դեմոկրատիայի հնագույն հեղափոխական գնդերից մեկը, իր գոյության ամբողջ ընթացքում՝ գործել է Ռուսաստանի ս. դ. բանվորական կուսակցությունից առանձնացած, ժամանակին իր շարքերում ընդունած լինելով ազգամիջյան տարրեր Ռուսաստանում և ի մասնավորի Հայաստանում:*

*«Նույն առանձնացումը պահպանել է նաև Ռուսաստանի Կոմկուսի նկատմամբ։ Անփոփոխ կերպով ընդգծելով իր իրավունքը հայկական պրոլետարիատի բացառիկ ներկայության Ռուսաստանի սահմաններում և արտասահմանում, Հնչակյան կուսակցությունը տերիտորիալ (տեղական) Ս. Դեմոկրատների միանալու սկզբունքին, որոնք իրենց մեջ էին առնում բոլոր ազգությունների պրոլետարիատի միջազգային միացման սկզբունքը և այդ ուղղությամբ ամբողջովին անց էր կացնում միևնույն սկզբունքը, ինչ որ բունդը (հրեա ս. դ. կուսակցությունը). նույնիսկ իր մուտքը Կոմինտերնի մեջ Հնչակյան կուսակցությունը իր հայտարարության մեջ պայմանավորում է նրանց միջազգային միացման ամբողջականությամբ և ինքնավար դրության ճանաչմամբ։*

*Այդ սկզբունքը Կոմինտերնի համար իհարկե բոլորովին*

---

33 *«Համայնավարությունը և մենք» (խմբագրական), «Արարատ», 14 սեպտեմբերի, 1952։*

անընդունելի է։ Այդ պատճառով Կոմինտերնի նախագահությունը հնարավոր է համարում Հնչակյան կազմակերպությունների մուտքը հետևյալ պայմաններով.—

ա.— Հնչակյան կուսակցության Ռուսաստանի կազմակերպությունը և նրա Կենտրոնական վարչությունը Թիֆլիսում պետք է հրաժարվեն իրենց ազգամիջյան միությունից:

բ.— Դիմել Հնչակյան բոլոր կազմակերպություններին, առաջարկել ձուլվել տեղական (տերիտորիալ) Կոմկուսի մեջ:

գ.— Դիմել ռուս. Կոմկուսի կենտ. վարչության՝ Ռուսաստանի անդամների ընդունելությունը՝ ռուս. Կոմկուսի մեջ:

դ.— Ռուսաստանի Հնչ. կազմակերպությունը չի կարող ընդունվել ռուս. Կոմկուսի մեջ հավաքաբար։ Բացառությունը՝ կարող է արվել ընդունելության պայմանների մասին՝ համաձայնություն կայացնելուց հետո միայն, պրոլետարական տարրերի համար. ոչ-պրոլետար տարրերի ընդունումը միայն անհատաբար»։

Այս պայմանները պարտադիր էին աշխարհի բոլոր երկրներում գործող Հնչակի մասնաճյուղերի համար, բացառությամբ Թուրքիայի։ Սույն փաստաթուղթը ստորագրված է Կուուսինենի կողմից[34]։

Հնչակյան կուսակցությունը մերժեց Կոմինտերնի առաջարկը տեղական կոմունիստական կազմակերպությունների մեջ ձուլվելու մասին։ Հնչակյան կուսակցության վերջերս լույս տեսած պատմության մեջ Ինտերնացիոնալի առաջարկին տրված մերժումը պատճառաբանվում է հետևյալ կերպ. «Կոմինտերնը կառաջարկեր որ Սոց. դեմ. Հնչակյան կուսակցությունը կազմալուծվի և մտնի իր շրջանի մեջ գտնվող Կոմունիստական կուսակցության մեջ:

Իսկ Հնչակյան կուսակցությունը կառաջարկեր՝ «Իր մուտքը կը պայմանավորէ Հնչակյան կուսակցության ազգամիջյան միացման ամբողջականությամբ և ինքնավար դրության ճանաչմամբ»:

[34] ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 495, оп. 2, ед. хр. 17.
«Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության», Բ. հատոր, էջ 498—499։

Կոմունիստները նկատի պիտի ունենան որ Հնչակյան կուսակցությունը 11 տարի իրենցմե առաջ կազմակերպված մարքսիստ կուսակցություն է՝ արմատացած և տարածված հայ զանգվածի մեջ ամենուրեք, հետևապես «լուծվելու» առաջարկը չէր կրնար և չի կրնար ընդունել:

Կոմունիստները նկատի պիտի ունենան, որ Հնչակյան կուսակցությունը 38 տարվան մեջ գրաված է որոշ դիրք, ձեռք բերած է միջազգային անուն, հաղթահարած է բազմաթիվ արգելքներու և ամեն ատեն կը քարոզէ «Պրոլետարներ բոլոր երկիրներու, միացեք»: Ան բոլոր երկիրներու դեմոկրատական, սոցիալիստական և կոմունիստական ույժերուն հետ՝ համագործակցաբար կողք-կողքի պայքար մղած է սուլթանիզմի, ցարիզմի և իմպերիալիզմի դեմ, հանուն աշխատավոր դասակարգի, հանուն ազգային և կրոնական ազատության:

Ինչո՞ւ և ի՞նչպես պիտի կրնար լուծվիլ և ձուլվիլ անհատաբար—անդամաբար—ուրիշ կազմակերպության մեջ:

Գործակցի՞լ, հասկանալի է, միևնույն սկզբունքով, միևնույն գործելակերպով, դաշնային ընդունելի են»[35]:

Հնչակյան մտավորականները լավ են հասկանում, որ մի ազգ երկու մարքսիստական, պրոլետարական կուսակցություն չի կարող ունենալ: Այդ պատճառով էլ նրանք փնտրում են միության խարիսխներ, նորանոր պատճառաբանություններ, որպեսզի հիմնավորեն իրենց գոյությունը:

Եվ իրոք, եթե կոմունիստական և հնչակյան կուսակցությունների գաղափարախոսությունը նույնն է, եթե նրանց գործունեության մեջ տարբերություն չկա, ապա այդ դեպքում ի՞նչու է հնչակը պահպանում իր անկախ գոյությունը:

Մեզ ասում են, գրում են հնչակյանները, թե երբ Հայաստանում սոցիալիստական հասարակարգն է իշխում «...Հնչակյան կուսակցությունը ի՞նչու չի լիկվիդացվում, ի՞նչու կպահե իր գոյությունը, քանի որ իրեն համար քաղաքական գործունեության հող չկա. չէ՞ որ որպես մարքսիստ, սոցիալիստ կու-

35 «Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության», Ա. հատոր, էջ 502—503:

սակցության՝ այլև քաղաքական որևէ ուղեգծի չի կրնար հետևիլ, ու եթե հետևի՝ այդ ուղեգծով հակադիր ճակատի վրա կանգնի։ Հանդեպ Հայաստանի խորհրդային իշխանության։ Քանի տեսակ մարքսիզմ կա և հնչակյան կուսակցությունը ո՞ր տեսակի մարքսիզմի անունով կուզե խոսիլ ու գործել և ի՞նչու»[36]։

Այս արտահայտական հարցին հնչակի կողմից տրվում է չափազանց տարօրինակ և չպատճառաբանված պատասխան։ Արտասահմանում մեկ և կես միլիոն հայ կա, ասում են հընչակյանները, որոնց այնտեղ էլ գոյություն ունի դասակարգակշական գործ ու պայքարի ճակատ։ Այն ժամանակ, երբ սուր պայքար է մղվում առաջադիմական և հետադիմական ուժերի միջև, մենք չենք կարող լքել պայքարի ճակատը. «Ահա թե ինչու նա (հնչակը— Լ. Խ.) կպահե և պիտի պահե իր գոյությունը, պաշտպանելու հայ ժողովրդական զանգվածներու տնտեսությունը պայծառացնելու և առաջադիմական տարրերու հետ մեր հայրենիքի թշնամիներուն դավաճանական տարրերուն ու շահատակությանց դեմ պայքար տալու համար»,— գրում են հնչակյանները[37]։

1924 թ. հնչակյան կուսակցության VIII համագումարում ընդունված որոշման մեջ այդ կուսակցության անկախ գոյության իրավունքը պատճառաբանվում է հետևյալ կերպ. «...նկատի ունենալով հայ ժողովրդի ավելի մեկ զանգվածի եղերական ու հուսահատական վիճակը, իր ապրած օտար երկիրներու մեջ նույնիսկ քաղաքացիական տարրական իրավունքներեն զրկված ըլլալու հանգամանքը, այդ երկիրներեն արտաքսվելու սպառնալիքն ու վտանգը և ապաստարան մը չգտնելու պարագան, և նկատի ունենալով գաղութներու հայ աշխատավորությունը որպես ամբողջություն, անղեկավար չձգելու և անոնց մեջ՝ ազգայնական կուսակցություններու կողմե, Խ. Հայաստանի դեմ ըլլալիք ձեռնարկներու խմբավոր-

36 «Ս. Դ. Հնչակյան կուսակցության 70-ամյակին առթիվ» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 17 դեկտեմբերի, 1957։

37 Նույն տեղում։

*ներուն դեմ արգելք հանդիսանալու անհրաժեշտությունը, Ս. Դ. Հնչակյան կուսակցությունը կը պահե իր հավաքական կազմն ու գոյությունը և ազգամիջյան կազմակերպչական դրությունը...»[38]:*

*Բայց չէ՞ որ այդ նույն խնդիրների իրականացման համար պայքարում են նաև կոմունիստները: Ձուլվել կոմունիստական կուսակցության շարքերում, չի նշանակում լքել պայքարի ճակատը:*

*Սակայն Հնչակը լինելով մանրբուրժուական կուսակցություն և, հետևաբար, հանդիսանալով որոշակի հասարակական խավերի իղձերի արտահայտիչը, ոչ մի նպատակ չունի ձուլվելու կոմունիստական կուսակցության շարքերում: Ընդհակառակը, նա ցանկանում է պահպանել իր գոյությունը և անցողական դեր ունենալ հայ ժողովրդի պատմության մեջ: Այդ տեսակետից էլ պատահական չէ, երբ հնչակյան գործիչները գրում են, թե իբր կոմունիստների ճնշման տակ էր, որ 1924 թ. Կովկասում գտնվող հնչակյան կուսակցության կենտրոնական վարչությունը լուծվեց ու հարեց կոմունիստներին[39]:*

*Հնչակյան կուսակցության գործիչներից Վ. Ուլնեցին Հնչակի փաստորեն կենտրոնական օրգանը հանդիսացող «Արարատ» թերթում հրապարակած «Համայնավարություն, հընչակյանություն և լենինականություն (երկու հակառակ քաղաքականություն)» խորագրով իր հոդվածաշարքում, անկեղծորեն գրում է, որ այն հասկացությունները, ըստ որոնց «Տարբերություն չկա համայնավարներուն և հնչակյաններուն միջև» և «խորհրդային Հայաստանը մեր իդեալներուն իրականացումն է» ի նման բացատրությունները՝ սխալ է»[40]:*

*Այս արտահայտությունները, ասում է նա, հակահնչակյան*

---

38 *Ծրագիր հնչակյան կուսակցության (չորրորդ հրատարակություն). Փարիզ, 1931, էջ 63:*

39 *«Արարատ», 1 հոկտեմբերի, 1953:*

40 Վ. Ուլնեցի, *Համայնավարություն, հնչակյանություն և լենինականություն (երկու հակառակ քաղաքականություն), «Արարատ», 27 սեպտեմբեր—6 հոկտեմբեր, 1953:*

*են և տրամագծորեն հակառակ հնչակյան կուսակցության համագումարների ընդունած որոշումներին. եթե ասում ենք, թե երկու կուսակցությունները նույն իդեալներն ունեն, «ուրեմն նույն կուսակցությունն ենք: Սակայն կը նշանակե տապանաքար մը ընել Հնչակյան կուսակցության վրա»,— եզրակացնում է Վ. Ոսկեցին:*

*Հոդվածագիրը ճիշտ է նկատել, որ կոմունիստական և հնչակյան կուսակցությունները չեն կարող նույն իդեալները և գաղափարախոսությունն ունենալ: Եթե իրոք, վերոհիշյալ հարցերում նույնություն գոյություն ունի, ապա հնչակը պետք է դադարեցնի իր գոյությունը:*

*Ոսկեցին խուսափում է հնչակին և կոմունիստներին նույնանման կուսակցություն համարելուց ոչ միայն նրա համար, որ դա տրամաբանորեն կհանգեցներ հնչակի վրա տապանաքար դնելուն, այլև նրա համար, որ դա կնշանակեր իրենց վրա առնել «պատասխանատվությունը այն բոլոր շեղումներուն, որոնք անխուսափելիորեն առաջ կուգան փորձարկության մը շրջանին»*[41]*:*

*Սովետական Միության ժողովուրդները առաջինը ոտք դնելով նոր հասարակարգի կառուցման ուղին, բնականաբար, գնում են դեպի կոմունիզմի երջանիկ թագավորությունը ոչ բանուկ կածաններով: Այնպիսի մի մեծ գործում, ինչպիսին սոցիալիզմի կառուցումն է, չէին կարող չլինել և իրոք եղան սխալներ ու վրիպումներ, իսկ անհատի պաշտամունքի հետևանքով կատարվեցին կուսակցության լենինյան նորմերի և սոցիալիստական օրինականության լուրջ խախտումներ:*

*Հարցը, իհարկե, «փորձությունների շրջանում» առաջացած «շեղումների» համար հնչակի կրելիք պատասխանատվության մեջ չէ, այլ նրանում, որ հնչակյան կուսակցությունը ցանկանում է պահպանել իր գոյությունը:*

Ինչպես իր գոյության առաջին շրջանում, այնպես էլ ժամանակակից էտապում, հնչակը վարում է էկլեկտիկ քաղաքա-

---

41 *Նույն տեղում:*

կանություն. որոշ երկրներում տեղի առաջադիմական ուժերի հետ մասնակցում է ազգային ազատագրական պայքարին, մյուս վայրերում, ընդհակառակը, զբաղվում է միայն ազգային գործերով լիովին շրջանցելով և ոչ մի կապ չպահպանելով տեղի հեղափոխական շարժումների հետ:

Փոխանակ իր բոլոր ջանքերը ի սպաս դնելու ազգային-ազատագրական և սոցիալիստական պայքարի միացմանը, դրանք մի հունով տանելուն, առաջինով երկրորդի հզորացմանը, Հնչակը, ընդհակառակը, մշտապես անջրպետում էր դրանք, առաջին պլանում դնում ազատագրական պայքարը, սոցիալիզմը թողնելով հետին պլանում, որպես հեռավոր նպատակ:

Հնչակը, ինչպես նշեցինք վերը, տիպիկ մանրբուրժուական, սոցիալիստական ֆրազեոլոգիայով շպարված կուսակցություն է: Սակայն այդ կուսակցությունը չի կարելի լիովին նմանեցնել Սոցիալիստական Ինտերնացիոնալի մեջ մտնող մանրբուրժուական, ռեֆորմիստական կուսակցություններին: Հնչակը ունեցել է իր զարգացման ուրույն ուղին, խնդիրները և զարգացման յուրահատուկ պայմանները: Այդ կուսակցության ծագման, գործունեության և հետագա զարգացման պայմանները այնքան ինքնատիպ են, որ դրանք երբեք չի կարելի համեմատել որևէ այլ կուսակցության զարգացման պայմանների հետ: Ի դեպ, Հնչակի որոշ յուրահատկություն ունեցող գործունեությունը ապացուցում է Լենինի այն հայտնի թեզը, որ մանր գյուղացիական զանգվածը հանդիսանում է մանրբուրժուական դեմոկրատիայի մեջ «քաղաքական հոսանքների բազմազանության հիմքը»[42]:

Հնչակի զարգացման յուրահատուկ պայմաններով էլ թելադրվում է այդ կուսակցության ժամանակակից քաղաքականությունը:

Կյանքի կտրված լինելով արևմտահայ ազատագրական պայքարի կողմից, Հնչակը, բնականաբար, մինչև այժմ էլ

42 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 250:

կտրված մայր երկրից՝ օտար հեռաստաններում իր գործունեության հիմնական նպատակը համարում է Արևմտյան Հայաստանի ազատագրումը։ Ահա այն հիմնական հարցը, որը արմատական տարբերություն է մտցնում Հնչակի և մյուս սոցիալ-դեմոկրատական ռեֆորմիստական կուսակցությունների գաղափարախոսության և քաղաքականության միջև։

Բացի այդ հիմնական նպատակից, Հնչակը ունի նաև մեկ ուրիշը՝ սոցիալիզմը։ Հնչակի սոցիալիզմը ազգային սոցիալիզմի տարատեսակն է։

Ի վերջո, Հնչակը չի կարող ժխտել տարբեր պատճառաբանություններով հիմնավորվող այն տարրական ճշմարտությունը, որ Հնչակյան կուսակցությունը, իրեն համարելով մարքսիստական, սոցիալիստական կուսակցություն, պրակտիկ մասնակցություն չի ունենում միջազգային կոմունիստական շարժմանը։ Արդի միջազգային զարգացման հրատապ պրոբլեմները՝ պատերազմի, խաղաղ գոյակցության և ազգային-ազատագրական պայքարի խնդիրները, որոնց լուծմանը այս կամ այն չափով մասնակցում է Հնչակը, չպետք է շփոթել կոմունիստական կուսակցությունների սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարի հետ։ Գաղտնիք չէ, որ ամեն մի կոմունիստական կուսակցության խնդիրը՝ մոտիկ թե հեռավոր ապագայում, սոցիալիստական կարգերի հաղթանակն է։ Մասնակցում է, արդյո՞ք Հնչակը կոմունիստական կուսակցությունների՝ այդ ուղղությամբ կատարվող աշխատանքներին։ Ո՛չ, չի մասնակցում։

Սակայն գոյություն ունի մի այլ գործոն, որը Հնչակյան կուսակցության գործունեության մեջ գլխավոր տեղ է գրավում։ Այդ գործոնը Սովետական Հայաստանն է, որի գոյությունը ամբողջ հայ ժողովրդի հարատևման և զարգացման միակ երաշխիքն է։ Եվ ահա, նորից նույն պատմական ուրույն զարգացման հանգամանքների շնորհիվ, Հնչակը ավելի ձախ է, քան ժամանակակից սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները։ Ավելի ճիշտ, եթե ընդհանուր գծերով խոսենք Հնչակի և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների քաղաքա-

կանության մասին, շրջանցելով առանձնահատուկն ու մասնա-կին, ապա կարելի կլինի ասել, որ Հնչակի և ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայի ձախ թևի քաղաքական գծի միջև շատ ընդհանուր բաներ կան։

Թերևս դրանով է բացատրվում այն, որ Վ. Ուլնեցին իր վերոհիշյալ հոդվածաշարքում Նեննիականությունը համարում է «իր ճշմարիտ ուղի»[43]։ Պետք է հաշվի առնել, որ սա գրվել է 1953 թվականին։

Հունգարական դեպքերի կապակցությամբ, իտալական սոցիալիստական կուսակցության ձախ թևը, ինչպես հատուկ է մանրբուրժուական տարրերին, տատանվեց և հակակոմու-նիզմի պրոպագանդայի ազդեցության տակ, որի վրա քիչ չազ-դեց անհատի պաշտամունքի քողազերծումը Սովետական Միությունում, հրաժարվեց Իտալական կոմունիստական կու-սակցության հետ ունեցած դաշինքից։ Բայց Հնչակյան կու-սակցությունը չողջունեց իտալական սոցիալիստների այդ քայլը և խստորեն քննադատեց այն։

Բերելով Գի Մոլեի խոսքերը այն մասին, որ «Մեզի հետե-վող և համայնավարներուն հետևող աշխատավորներուն միջև լուռ համակրության զգացում մը կտիրե, որ ոչ անտեսել կըր-նանք, ոչ ալ թերագնահատել», Հնչակյան կուսակցությունը հաստատ հույս է հայտնում, որ բանվոր դասակարգը միշտ չէ, որ հնազանդորեն կդնա այդ դավաճանների հետևից և թույլ կտա որոշել իր բախտը առանց հաշվի նստելու մասսաների կարծիքի հետ։ «Գի Մոլլե, Նեննի, Սարագատ և մյուսներ գի-տեն անշուշտ թե այսօրվա «լուռ համակրությունը» վաղը կըր-նա փոխվել և դառնալ «խոսուն». այն ատեն պիտի անդրա-դառնան թե նման հարցերը համաժողովները չեն որ կլուծեն, այլ՝ բանվորական զանգվածները»[44]։

Հնչակյան կուսակցությունը մշտապես պրոպագանդում է այն միտքը, որ հանուն աշխատավորների շահերի պաշտ-

---

43 «Արարատ», 6 հոկտեմբերի, 1953։

44 Մ. Աւեեյրցի, Իտալական սոցիալիստ կուսակցությանց միացումը, «Երիտասարդ Հայաստան», 26 փետրվարի, 1957։

*պանության պետք է համախմբվեն բոլոր առաջադիմական ուժերը:*

*Պաշտպանելով միասնական ճակատի գաղափարը, Հնչակյան կուսակցությունը մեծ հույսեր չի կապում սոցիալիստական կուսակցությունների լիդերների քաղաքականության հետ: «Սակայն,— գրում են Հնչակյան գործիչները,— եթե նկատի առնենք այն տխուր իրողությունը, որ այսօր Ֆրանսիայի մեջ իշխանության գլուխ գտնվողը սոցիալիստական կուսակցությունն է, որ ամենեն առաջ և ամենեն ավելի փութկոտությամբ իր ռազմանավերը ղրկեց Սուեզ ճամբեն, շատ մեծ վստահություն չի կրնար այլևս ունենալ բանվոր դասակարգը այս կուսակցության խոսքին ու մանավանդ գործին»*[45]*:*

*Հնչակյան կուսակցությունը մշտապես քննադատել է աջ սոցիալիստների դավաճանական քաղաքականությունը: Վերջերս, գրում էր 1951 թ. հնչակյան «Արարատը» «Դավաճանների միջազգայնականը» խորագրով հոդվածում, Արևմտյան Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում տեղի ունեցավ աջ սոցիալիստների խորհրդակցությունը, որը ազդարարեց «Սոցիալիստական միջազգայնականի վերածնունդը»*[46]*: Դավաճանների և պատերազմի հրձիգների մեջ տեղ են բռնում՝ Մորգան Ֆիլիպսը, Ժյուլ Մոկը՝ Ֆրանսիայի ամերիկյան ստրկանը, Շումախերը՝ Արևմտյան Գերմանիայի ամերիկյան գործակալը, Սարագատը՝ Իտալիայի աշխատավորության ղասամած դավաճանը»*[47]*: Ահա թե ինչպիսի գնահատականներ է տալիս աջ սոցիալիստների ղեկավարներին հնչակյան մամուլը:*

*Հնչակյան գործիչները, լավ ծանոթ լինելով II Ինտերնացիոնալի գործունեությանը, հնարավոր բոլոր միջոցներով քողազերծում են նրա դավաճանական քաղաքականությունը, դեմ*

45 Մ. Առնելցի, *Եվրոպայի սոցիալիստական շարժումը, «Արարատ», 15 նոյեմբերի, 1956:*

46 *«Դավաճաններու «միջազգայնականը» (խմբագրական), «Արարատ», 15 օգոստոսի, 1951։*

47 *Նույն տեղում։*

դուրս գալով քայքայված և պատմության արխիվը նետված այդ կազմակերպության վերականգնմանը: «Շատերուն համար գաղտնիք չէ այլևս,— ասվում է «Արարատի» խմբագրականում,— որ Երկրորդ Միջազգայինի շուրջը բոլորվող տարրերը բավական երկար տարիներու իրենց ապիկար գործունեության ընթացքին, արհամարհեցին բանվորության շահերու և իրավունքներու պաշտպանության համար պայքարելու մտահոգությունը, անտեսեցին դրամատիրական կարգերու դեմ ուժեղ շարժումներ կազմակերպելու, և հետևաբար՝ աշխատավորական զանգվածը իր «տնտեսական, հոգեկան, և քաղաքական» ստրկութենեն ազատելու անհրաժեշտությունը, փոխարեն դավաճանեցին այն գեղեցիկ սկզբունքներուն, որոնց հաղթանակին համար կերպարանավորված, գոյության կոչված էր Երրորդ Միջազգայինը»[48]:

II ինտերնացիոնալի պարագլուխները սոցիալիստական պիտակի տակ ստանձնեցին սոցիալիզմի քաղաքական, տնտեսական աշխարհայացքը և թիկունքից դաշունահարեցին բանվոր դասակարգին: Արդյունքը եղավ այն, որ Երկրորդ ինտերնացիոնալը կորցրեց իր սկզբնական շրջանի հմայքը և ի վերջո քայքայվեց[49]: «Քայքայված այդ կազմակերպությունն է ահա,— կարդում ենք «Արարատի» էջերում,— որ վերջերս վերակազմելու, կրկին լույս աշխարհ բերելու անզոր աշխատանքին են լծված այս ու այն երկիրներու հետադիմականները, պահպանողականները և դրամատիրական կարգ ու սարքին ջերմ կողմնակից խառնիճաղանճ տարրերը»[50]:

Հնչակյան գործիչների ուշադրությունից չի վրիպել նաև այն հանգամանքը, որ սփյուռքահայ կուսակցություններից Սոցիալիստական ինտերնացիոնալի նիստերին, թեև առանց

48 «Ընկերվարական» միջազգայինը» (խմբագրական), «Արարատ», 26 փետրվարի, 1953:
49 Նույն տեղում:
50 Նույն տեղում:

վճռական կամ նույնիսկ խորհրդակցական ձայնի մասնակցել է նաև դաշնակցության ներկայացուցիչը[51]։

Ինչպես հայտնի է, միջազգային սոցիալ-դեմոկրատիան օրավուր ավելի ու ավելի աջ է գլորվում։ Այդ պրոցեսը իր արտահայտությունն է գտել Եվրոպայի խոշորագույն սոցիալիստական կուսակցությունների նոր ընդունած ծրագրերում։ Քննադատելով գերմանական սոցիալիստական կուսակցության նոր ընդունած ծրագիրը և այն համեմատելով հնի հետ, հնչակը գտնում էր, որ դժվարությամբ կարելի է հավատալ, թե այդ ծրագրերը նույն կուսակցությանն են պատկանում։ «... Գերման սոցիալ-դեմոկրատ կուսակցությունը դադրած է բանվորական կուսակցություն ըլլալէ, սպառած է իր ներուժը, և դարձած է պահպանողական-քրիստոնեական կազմակերպություն մը, իր շատ սահմանափակ ընելիքներով։

Հայտնի կըլլա նույնպես, որ Բ. Միջազգայնականը արդեն սնանկացած մարմին մըն է, որ որևէ առնչություն չունի բանվոր դասակարգի և անոր դատին հետ»[52]։

Տարօրինակ է, որ հնչակը խստորեն քննադատելով աջ սոցիալիստներին, իրեն համարելով մարքսիստական, պրոլետարական կուսակցություն, այնուամենայնիվ, գործնականում ոչ մի առնչություն չունի սոցիալիզմի համար մղվող պայքարի հետ և չի մասնակցում միջազգային կոմունիստական շարժմանը։

Եթե որպես առաջադիմական կուսակցություն հնչակը մասնակցում է առաջադիմական ուժերի պայքարին՝ արդի էպոխայի հրատապ, կենսական հարցերի լուծման համար, այնուամենայնիվ, որպես դասակարգի կուսակցություն նրա քաղաքականությունը մնում է անհետևողական և երերուն։ Մի երևույթ, որը հատուկ է մանրբուրժուազիային։

Վերը մենք անդրադարձանք հնչակի այն տեսակետին, որի համաձայն Սովետական Հայաստանի նկատմամբ ունե-

51 Նույն տեղում։

52 Մ. Առնելցի, Գերմանական սոցիալ դեմոկրատ կուսակցության նոր ծրագիրը, «Երիտասարդ Հայաստան», 2 հոկտեմբերի, 1959։

ցած իր վերաբերմունքը ունի գաղափարական հիմք, մինչդեռ ռամկավարներինը՝ զգացական է։ Չնայած այդ տեսակետի պրոպագանդմանը, հնչակյան կուսակցության ընդհանուր քարտուղար Հարություն Ճերեճյանը «Լա ռևյու դը Լիբան» թերթի թղթակցին տված հարցազրույցի մեջ ասել է. «Մենք կը պայքարինք մեր համայնքին միասնության համար։ Մեր կապերը Սովետական Հայաստանի հետ՝ պարզապես զգացական (!!!) են։ Մենք կը սիրենք մեր մայր Հայրենիքը, ինչպես որ իր հայրենիքեն հեռացած լիբանանցին կը սիրե իր նախնիքներուն հայրենիքը։ Արդեն մեր այս կապվածությունը սխալ բացատրելով է, որ ոմանք մեզ «կոմունիստ» կամբաստանեն»[53]։

Դեռ ավելին. պարզվում է, որ հնչակի ղեկավարությունը առանձին դեպքերում, առանձին երկրներում՝ պայմանավորված պատմական պայմաններով, հնարավոր է գտնում մերձեցումը դաշնակցության հետ։ Հ. Ճերեճյանը նույն հարցազրույցի մեջ այդ մասին ասում է. «Հնչակների և դաշնակների միջև «մերձեցում մը՝ կարելի է, և նույնիսկ մաղթելի, բայց մեկ պայմանով։— Որ՝ մեզ բաժնող վեճերը հանգցվին և լուծվին լիբանանյան շրջանակի մեջ»[54]։

Զարմանալի է և տարօրինակ։ Հնչակյան կուսակցությունը, որը տարիներ շարունակ պնդում էր, թե ինքը մարքսիստական է, պրոլետարական, որ Սովետական Հայաստանն իր իդեալների իրականացումն է, որ հնչակի և կոմունիստների միջև գաղափարական տարաձայնություններ չկան, հանկարծ հետ է կանգնում իր հայացքներից, հայտարարելով, թե իր կապը Հայրենիքի հետ զգացական է։

Քաղաքական կուսակցությունը կարող է փոխել պայքարի իր տակտիկան, բայց ոչ աշխարհայացքը։ Գաղափարախոսությունը կուսակցության դեմքն է, էությունը և ամենաթանկագինը, որով հպարտանում են նրա անդամները։ Հալածանքները, բանտն ու աքսորը, նույնիսկ գնդակահարության վտան-

53 «Արարատ», 20 հուլիսի, 1969։
54 Նույն տեղում։

ղը երբեք արդարացում չեն կուսակցականի համար՝ իր դավանանքից կամ դավանանքի կարևոր մասից հրաժարվելու համար։ Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս Հար. Ճերեճյանի ինտերվյուն, Հնչակյան կուսակցությունը, ինչպես և պետք է սպասել, ենթակա է մշտական տատանումների։

Հետաքրքիրն այն է, որ երբ Լիբանանի հայ կոմունիստները սուր քննադատության ենթարկեցին Հնչակի ղեկավարության վարքագիծը, այն որակելով՝ «դավաճանական», Հնչակները փոխանակ ընդունելու իրենց սխալը, ընդհակառակը, սուր հարձակումներ գործեցին նրանց վրա, գրելով, թե իբր նման վարքագիծը հատուկ է նաև կոմունիստներին, սակայն նրանք այն կոչում են «դիվանագիտություն», իսկ երբ խոսքը վերաբերում է Հնչակին, այն դառնում է «դավաճանություն»[55]։

Տակտիկական հարցերում կարելի է համագործակցել այլ կուսակցությունների հետ և, նույնիսկ, շատ դեպքերում դիմել զիջումների, սակայն գաղափարախոսության հարցերում խաղաղ գոյակցություն և թեկուզ ամենաչնչին զիջում անթույլատրելի է։

Անդրադառնանք մի կարևոր հարցի ևս։ Մարքսիստական կուսակցությունը, որտեղ էլ այն գտնվի, մինչև վերջ նվիրված բանվոր դասակարգի ազատագրության մեծ գործին և հավատով լցված մարքսիզմի ուսմունքի նկատմամբ՝ անպայման պետք է իր բոլոր ուժերը ի սպաս դնի սոցիալիստական հասարակարգի հաղթանակի գործին։

Ժամանակակից էտապում, պատմության ընթացքը Հնչակի համար ստեղծել է այնպիսի պայմաններ, երբ նրա մասնաճյուղերը հայ ժողովրդի հետ միասին ցրված են աշխարհի ամենահեռավոր մասերում։ Հնչակյան կուսակցության տարբեր մասնաճյուղերի գործունեության պայմանները չափազանց տարբեր են։ Հնչակի մասնաճյուղերի մի մասը ապրում և գործում է այնպիսի զարգացած կապիտալիստական երկր-

[55] «Արարատ», 13 սեպտեմբերի, 1960։

*ներում, ինչպիսին է ԱՄՆ-ը։ Բայց, միաժամանակ, Հնչակը գործում է նաև մի շարք այնպիսի հետամնաց երկրներում, որ ծավալվում է ազգային-ազատագրական պայքարը։ Բնականաբար, այնտեղ պայքարի պայմանները անհամեմատելի չափազանց բարդ են։*

*Սակայն, անկախ այդ բոլորից, Հնչակը, եթե իրոք մարքսիստական, պրոլետարական կուսակցություն է, պետք է ընթանա առաջադիմական ուժերի հետ և իր բոլոր ուժերը ի սպաս դնի սոցիալիզմի հաղթանակի իրագործմանը։ Իսկ ի՞նչ քաղաքականություն է վարում Հնչակը։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մամուլում դեպքից-դեպք Հնչակը, այնուամենայնիվ, չի մոռանում հիշեցնել, թե ինքը պայքարում է սոցիալիզմի համար, սակայն այդ խոսքերը մնում են թղթի վրա, չիրագործվելով կյանքում։*

*Դեռևս 1923 թ., Կոմունիստական Ինտերնացիոնալի Նախագահության հանձնաժողովը քննելով Հնչակին III Ինտերնացիոնալի մեջ ընդունելու հարցը, իր ընդունած բանաձևի աշխատանքային օրինակում, վերլուծելով այդ կուսակցության հետհոկտեմբերյան շրջանի քաղաքականությունը, գրում էր. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո «... մշտապես դուրս մնալով ռևոլյուցիոն շարժումներից, Հնչակյան կուսակցությունն իր գործունեությունը սահմանափակում էր Կոմունիստական Ինտերնացիոնալի կողմից ղեկավարվող սոցիալիստական ռևոլյուցիայի մասին պլատոնական բանաձևերով և համակրանքով»[56]։*

*Առաջավոր կապիտալիստական երկրներում Հնչակը մամուլում, եթե այն ունի, թեև աղոտ հիշատակություններ է անում սոցիալիզմի մասին, սակայն պրակտիկ կյանքում այդ ուղղությամբ ոչինչ չի անում։ Շատ բնորոշ է Հնչակի ԱՄՆ-ի մասնաճյուղի և այդ երկրի կոմունիստական կուսակցության հարաբերությունների հարցը։ Թվում է, թե այդպիսի հարաբերություններ անպայման պետք է գոյություն ունենային, սա-*

---

56 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 495, оп. 2, ед. хр. 17.

*կայն, դժբախտաբար, դրանք գոյություն չունեն։ Ավելին, ԱՄՆ-ի Հնչակյան կուսակցության մասնաճյուղը հանդես է գալիս այդ երկրի կոմունիստական կուսակցության քննադատի դերում՝ վերջինիս թուլության պատճառները կապելով միայն անհատի պաշտամունքի հետ*[57]*։*

*Նույն վիճակն է տիրում նաև մյուս կապիտալիստական երկրներում, ուր գործում են Հնչակի մասնաճյուղերը։*

*Մերձավոր արևելքի երկրներում Հնչակը մասնակցում է ազգային-ազատագրական պայքարին։ Բայց այս հարցում ևս գոյություն ունի որոշ յուրահատկություն։ Լիբանանը այն երկիրն է, ուր Հնչակը ամենից ակտիվ գործունեություն է ծավալել, սակայն վերը շարադրվածից հետո զարմանալի չի թվում այն, որ այդ կուսակցությունը ավելի սերտ կապերի մեջ է գտնվում սոցիալիստների, քան թե այդ երկրի կոմունիստական կուսակցության հետ։ Լիբանանի Հնչակյան մամուլը մշտապես գովաբանում է սոցիալիստներին, ջանալով ոչինչ չասել կոմունիստների մասին։*

*Հակակոմունիստական ուժերը և, հատկապես, դաշնակցությունը շատ հաճախ մեղադրում են Հնչակին, նրան անվանելով կոմունիստական կուսակցության բաղկացուցիչ մասը, որը սփյուռքում պայքարում է սոցիալիզմի համար։ Եթե իրոք Հնչակը լիներ մարքսիստական կուսակցություն, ապա նա ոչ մի ուշադրություն չէր դարձնի նմանօրինակ հարձակումներին. չէ՞ որ այդ կուսակցության ղեկավարների հայտարարությունների համաձայն, իրենց և կոմունիստական կուսակցությունների միջև սկզբունքային տարբերություն չկա և Հնչակը պայքարում է սոցիալիզմի համար*[58]*։ Սակայն Հնչակյան կուսակցությունը իր հակառակորդների նման մեղադրանքներին այնքան մեծ նշանակություն է տալիս, որ մամուլում բազմիցս անդրադառնում է այդ հարցին։ Ս. Կիտուրը գրում է. «Հնչակյան կուսակցությունը Արտասահմանի մեջ ոչ թե «Սոցիալիզմ*

57 Ս. Սիմոնյան, *Ուշացած բայց տեղին խոսքեր*, «Արարատ», 13 հոկտեմբերի, 1956։

58 «Արարատ», 14 սեպտեմբերի, 1952։

*կը կերտեն», այլ զորավիգ կը դառնա իմպերիալիստական ճնշումներուն դեմ պայքարող դրացիներուն, կը նշանակե վարել դեմոկրատական շարժում, բարելավելու իր ազգի և դրացի ազգի կենցաղն ու հայրենիքը»*[59]:

*Ինչպես տեսնում ենք, Հնչակը սոցիալիզմի համար մղվող պայքարին չի մասնակցում:*

*Ճանաչել Սովետական Հայաստանը—այդ չի նշանակում բոլշևիկ դառնալ,—գրում է Ա. Կիտուրը*[60]*: Այն բանից հետո, երբ Հնչակի հակառակորդները սկսեցին մեջ բերել այդ կուսակցության մամուլում բազմիցս կրկնվող այն միտքը, թե հնչակները և ռամկավարները 40 տարվա ընթացքում պաշտպանել են Սովետական կառավարությանը, Ա. Կիտուրը ուրիշ ավելի հարմար պատճառաբանություն չի գտնում, քան թե պատասխանել. «Ինչ ընեինք ապա պաշտոնակից՝ պաշտպանեցինք դաշնակ Հայաստանը, իսկ կործանե՞նք բոլշևիկ Հայաստանը»*[61]:

*Նախ, Ա. Կիտուրը ընդունում է, որ իրենք պաշտպանել են «դաշնակ Հայաստանը», և ապա, հավասարության նշան է դնում դաշնակցական և բոլշևիկյան Հայաստանների միջև: Սա մի՞թե լիովին չի հերքում Հնչակի այն ամենօրյա արծարծվող միտքը, թե Սովետական Հայաստանը իրենց իդեալն է: Հնչակի վերաբերմունքը Սովետական Հայաստանի նկատմամբ* զգացական *է, և ոչ թե* գաղափարական:

*Հնչակյանները ավելի են առաջ գնում, հայտարարելով, որ «բոլշևիկը ունի իր հզոր ուժերը, ինչպես նաև Արևմտյան կապիտալիզմը: Մենք գնդասեղի գլխու չափ չենք կրնար սատարել մեկին և մյուսին: Ինչ ույժ որ ունինք ի սպաս դնենք մեր կշիռքին մեջ»*[62]:

---

59 Ա. Կիտուր, *Կոմունիստ կուսակցության մաս չենք կազմեր, «Արարատ», 29 հունվարի, 1959:*

60 Ա. Կիտուր, *Երկյուղով մոտենանք անցյալին երբ մարդիկ կործանեն. «Արարատ», 18 մարտի, 1960:*

61 *Նույն տեղում:*

62 *Նույն տեղում:*

*Ինչպես տեսնում ենք, Հնչակը իր հիմնական խնդիրը համարում է գործունեությունը գաղութահայ շրջաններում, ազգապահպանման գործը։ Այսպիսի հարցադրման դեպքում Հնչակի մարքսիզմից և սոցիալիզմից այլևս ոչինչ չի մնում։ Այս փաստը ավելորդ անգամ գալիս է ապացուցելու այն, որ Հնչակը, ոչ պրոլետարական, ազգայնական կուսակցություն է։ «Հնչակյան կուսակցությունը որքան որ յուրացուցած է սոցիալիստական վարդապետությունը, այնուամենայնիվ իր ազգային դիմագիծը չէ եղծանած, մնացած է իր խորքին մեջ ազգային։ Ասոր փաստը այն է, որ անոր գործունեության դաշտը եղած է և կը մնա հայ իրականությունը»,— գրում է «Երիտասարդ Հայաստանը»[63]։*

*Այո՛, Հնչակը միշտ էլ եղել է ազգայնական կուսակցություն, գործել է ազգային շրջանակներում, մինչդեռ հայտնի է, որ ճշմարիտ մարքսիստական կուսակցության գործունեության առաջին և բնորոշ հատկանիշը նրա կառուցվածքի տերիտորիալ, ինտերնացիոնալ բնույթն է։ Ահա թե ինչու մարքսիզմի ուսմունքի ճակատը զարդարում է՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» նշանաբանը։ Հնչակը, լինելով ազգայնական կուսակցություն, սոցիալիզմի ուսմունքը կտրում է իր դասակարգից՝ պրոլետարիատից, և իր ձևքը վերցնում ազգային կոմունիզմի դաղափարախոսության դրոշը։ Այդ պատճառով էլ զարմանք չի հարուցում Հնչակյան մամուլում բազմիցս հանդիպող այն միտքը, թե «ճշմարիտ սոցիալիզմը կառուցել ազգային դետնի վրա»[64]։*

*Դրանով է նաև բացատրվում այն հանգամանքը, որ Հնչակը չի մասնակցում միջազգային կոմունիստական շարժմանը, սոցիալիզմի համար մղվող պայքարին։ Քանի որ սոցիալիզմը «ազգային գետնի» վրա պետք է կառուցված լինի, էլ ինչ անհրաժեշտություն կա, որ Հնչակը մասնակցի արտասահման-*

63 *«Հնչակյան մատյան» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 4 մայիսի, 1954։*

64 Մ. Արևելցի. *Արևելյան Եվրոպայի տագնապը, «Երիտասարդ Հայաստան», 9 նոյեմբերի, 1956։*

*յան երկրներում ծավալվող՝ սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարին: Հնչակը այն կարծիքին է, որ ինքը միայն հայ ժողովրդի համար պետք է սոցիալիզմ ստեղծի, իսկ ուրիշ ազգերի հետ գործ չունի: Ամեն մի ազգ ինքը պետք է անօրինի իր գործերը: Բայց չէ՞ որ հայ ժողովրդի մի զգալի մասը ապրում է սփյուռքում և որպես ազգային փոքրամասնություն՝ մասնակցում օտար երկրների քաղաքական և տնտեսական կյանքին: Ինչպե՞ս կարող է ազգային փոքրամասնությունը հեռու կանգնել երկրում ծավալվող դասակարգային մարտերից: Սփյուռքահայ աշխատավորությունը մի՞թե պետք է պառակտի բանվորական շարժումը և մեկուսանա: Ըստ Հնչակի այդպես էլ պետք է լինի, սակայն բարեբախտաբար հայ աշխատավորությունը, կոմունիստների ղեկավարությամբ, անմասնակից չի մնում կապիտալի երկրներում մղվող դասակարգային մարտերին:*

*ՍՄԿԿ XX համագումարը, ինչպես հայտնի է, համարձակորեն մերկացրեց անհատի պաշտամունքը, դեն նետեց այն ամենը, ինչ արգելակում էր մեր երկրի ազատ զարգացումը: Միաժամանակ համագումարը ցույց տվեց, որ բանվոր դասակարգը երբեք չի սքողել իր թերությունները ու սխալները, այլ միշտ հանդես է եկել դրանց անխնա քննադատությամբ:*

*Սոցիալիզմի թշնամիները անհատի պաշտամունքի քողազերծման երևույթի մեջ կանխագուշակում էին Սովետական Միության քայքայումը և տապալումը, իսկ բարեկամները՝ ընդհակառակը, տեսնում էին մեր երկրի ապագա մեծագույն նվաճումների հաստատուն երաշխիքը: Գաղտնիք չէ, որ այդ կապակցությամբ միջազգային կոմունիստական շարժումն ապրեց տենդային, լարված օրեր, եղան այնպիսիները, որոնք հուսալքված հեռացան կոմունիստական շարժումից, սակայն փաստը մնաց փաստ, որ այդ մեծ փորձությունից համաշխարհային կոմունիստական շարժումը դուրս եկավ ավելի կոփված և համախմբված:*

*Այժմ տեսնենք, թե անհատի պաշտամունքի քողազերծմանը ի՞նչպիսի վերաբերմունք ցույց տվեց Հնչակյան կուսակ-*

ցությունը։ Հնարավոր չէ, իհարկե, այդ կապակցությամբ անդրադառնալ հնչակյան մամուլում քննարկված բոլոր հարցերին, բայց աշխատենք վերլուծել գոնե հիմնականները։

Հնչակյան գրականությունը ուսումնասիրելիս անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել երկու հիմնական հարցերի վրա, որոնք և բնորոշում են այդ կուսակցության քաղաքականությունը ՍՄԿԿ XX համագումարի նկատմամբ։

Առաջին. հնչակյան կուսակցությունը միջազգային իմպերիալիզմի նման ցնծություն չապրեց, XX համագումարի կողմից անհատի պաշտամունքի մերկացման մեջ տեսնելով միջազգային կոմունիստական շարժման և, առաջին հերթին, Սովետական Միության քայքայման երաշխիքը։ Ընդհակառակը, հնչակյան գործիչները, կոմունիստական շարժման համար ստեղծված դժվարին օրերին, քննադատում էին միջազգային իմպերիալիզմի խանդավառությունը, գրելով. կապիտալիստական աշխարհը ցնծության մատնվեց, «... այն համոզումը ունենալով, որ անոր պիտի հետևի համայնավարության պառակտումը, քայքայումը և կազմալուծումը։ Պոզնանի դեպքերն ալ ավելի բորբոքեցին երևակայությունները և քիչ մնաց որ լեհ գաղթական «կառավարությունը» սահմանագլուխ փութար՝ հաղթականորեն Վարշավա մտնելու համար։ Սակայն ամեն հաշիվ և ծրագիր անկատար մնաց»[65]։

Հնչակյան մամուլը ոչ միայն խստորեն քննադատում էր միջազգային իմպերիալիզմի սին հույսերը, այլև համոզվածորեն պրոպագանդում, որ անհատի պաշտամունքի քողազերծման բարիքները կգերազանցեն բոլոր սպասելիքները։ «Եթե նկատի առնենք այն իրողությունը,— գրում էին հնչակները,— որ տագնապը այլևս լուծված է, կրնանք սպասել, որ անոր բարիքներ հետզհետե զգալի պիտի ըլլան»[66]։

Հնչակյան կուսակցությունը հաստատապես համոզված էր,

65 Մ. Արևելցի, *Հակաստալինյան պայքարի անդրադարձը, «Երիտասարդ Հայաստան», 17 հուլիսի, 1956։*

66 *Նույն տեղում։*

*որ Սովետական Միությունը և ընդհանրապես ամբողջ սոցիալիստական լագերը գնալով ավելի ու ավելի հզորանում են, և ՍՄԿԿ XX համագումարը իր համարձակ որոշումներով ավելի բարենպաստ պայմաններ է ստեղծում առաջադիմական ուժերի հաղթանակի համար։ Հավատը սոցիալիստական լագերի ապագայի նկատմամբ, ահա թե որն էր Հնչակյան կուսակցության պրոպագանդայի բնորոշ հատկանիշը։ Թե՛ հունգարական և թե՛ լեհական դեպքերի ժամանակ Հնչակը մշտապես պաշտպանում էր այն կարծիքը, որ հակահեղափոխության ուժերը անպայման կջախջախվեն։*

*Երկրորդ. ընդունելով Սովետական Միության հզորությունը, նրա զարգացման լայն հեռանկարները, ՍՄԿԿ XX համագումարի դրական նշանակությունը, Հնչակյան կուսակցությունը միաժամանակ անհատի պաշտամունքի ժամանակաշրջանին տալիս է այնպիսի գնահատականներ, որոնց հետ չի կարելի համաձայնվել։ Այս կապակցությամբ կա մի հիմնական հարց, որի շուրջը Հնչակը արտահայտում է կոմունիստական կուսակցությանը հակառակ կարծիք։*

*Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը, հաղթահարելով բոլոր դժվարությունները ու արգելքները, մերկացրեց անհատի պաշտամունքը,* որը չփոխելով Սովետական Միության զարգացման ընթացքը և դասակարգային էությունը, դանդաղեցնում էր մեր ժողովրդի ճաղբարշավը: *Մեծ են, շատ մեծ անհատի պաշտամունքի բացասական հետևանքները։ Սակայն չնայած այդ բոլորին, այնուամենայնիվ, կար, գոյություն ուներ սովետական իշխանությունը, պրոլետարիատի դիկտատուրան, որի շնորհիվ մեր երկիրը ձեռք էր բերել համաշխարհային-պատմական նվաճումներ։*

*Չնայած Հնչակյան կուսակցությանը ծանոթ էին անհատի պաշտամունքի քողազերծման կապակցությամբ Սովետական Միության կոմունիստական կուսակցության հրատարակած փաստաթղթերը, որոնցում անգերազանցելիորեն վերլուծված է այդ բարդ երևույթի էությունը, այնուամենայնիվ, իր մամուլի էջերում Հնչակը անց է կացնում այն միտքը, թե Ի. Ստալի-*

նի ղեկավարության ժամանակաշրջանը «ոչ մի կերպով չի կարելի պրոլետարական դիկտատուրա համարել»[67]: Այդ նույն հարցի մասին մի այլ կապակցությամբ ասվում է. «Անուրանալի է, որ Ստալինի անձնավորությունը, անոր զորավոր անհատականությունը խորապես փոխած էր հեղափոխության ընթացքը և անոր բնույթը»[68]:

Եթե Սովետական երկրում պրոլետարիատի դիկտատուրա չկար, եթե հեղափոխությունը փոխել էր իր բնույթն ու ընթացքը, ապա հնչակյան կուսակցությունը պետք է պատասխանի, թե ի՞նչ կարգեր գոյություն ունեին Սովետական Միությունում: Այդ ինչպե՞ս փոխվեց պրոլետարիատի դիկտատուրան, եթե, ինչպես հնչակյան մամուլն է գրում, ՍՍՌՄ-ում անհատի պաշտամունքի տարիներին «որևէ բեկում չի առաջացած, հակահեղափոխական շարժում տեղի չէ ունեցած, չկա նույնիսկ գաղափարի տարակարծություն...»[69]: Գուցե վերացվե՞լ է արտադրության հանրային սեփականությունը, գուցե լիկվիդացվե՞լ է սովետական սիստեմը: Ո՛չ, այդ էլ չի կատարվել, գրում են հնչակյան գործիչները:

Հնչակյանները մեջտեղ են հանում կուսակցության կողմից վաղուց քննադատված և պատմության աղբարկղը նետված մեր թշնամիների այն հերյուրանքը, թե իբր Սովետական Միությունում, Լենինի մահից անմիջապես հետո, առաջացել է կուսակցության դիկտատուրա: Այնուհետև, հնչակյան մամուլում այն միտքն է զարգացվում, թե իբր կուսակցության դիկտատուրային հետևել է Ի. Ստալինի դիկտատուրան[70]:

Անհատի պաշտամունքի դեմ մղվող պայքարի կապակցությամբ հնչակյան գործիչները գրում են, թե Սովետական Միությունը և Ամերիկան ոչ մի հարցում այնպիսի համերաշ-

---

67 Նույն տեղում:

68 Մ. Արեւելցի, Հոկտեմբերյան հեղափոխության քառասնամյակը, «Երիտասարդ Հայաստան», 3 դեկտեմբերի, 1957:

69 «Երիտասարդ Հայաստան», 17 հուլիսի, 1956:

70 Նույն տեղում:

խություն չեն ցուցաբերել, ինչպես «հակաստալինյան այս պայքարի մեջ»[71]։

Տասնամյակների պատմություն ունեցող Հնչակը կարծես չի ուզում հասկանալ, որ անհատի պաշտամունքի քողազերծման գործում ոչ մի համեմատություն չի կարելի անել Սովետական Միության և Ամերիկայի միջև։ ՍՄԿԿ-ն ցանկանում էր վերացնել երկրի առաջընթացը արգելակող այդ հրեշավոր ուժը, իսկ ԱՄՆ-ը, ընդհակառակը, դրա մեջ տեսնում էր մեր երկրի քայքայման սկիզբը և ջանք էր թափում ինչքան հնարավոր է խորացնել այդ կապակցությամբ միջազգային կոմունիստական շարժման շարքերում սկսված որոշ խմորումները։ Ինչպես տեսնում ենք, ԱՄՆ-ը և ՍՍՌՄ-ը այդ հարցում ոչ թե համերաշխ, այլ իրարամերժ դիրքեր էին գրավել։

Սակայն խոսելով Հնչակյան կուսակցության սխալ տեսակետների մասին, մենք անհրաժեշտ ենք համարում նշել նաև այն հանգամանքը, որ այդ կուսակցությունը ընդունում և պրոպագանդում է այն մեծամեծ նվաճումները, որոնք ձեռք են բերվել մեր երկրում սովետական իշխանության տարիներին։ Անհատի պաշտամունքի պատճառած չարիքներին զուգընթաց, գրում են հնչակները, Սովետական երկիրը զարգացավ, հաջողություններ ձեռք բերեց և իր հզորությամբ դարձավ աշխարհի երկրորդ պետությունը. «Ի տես այդ հիացումին սովետական ժողովուրդները կմոռանան իրենց զոհողությունները և բոլոր դառնությունները, որ ունեցան 40 տարիներու ընթացքին»[72]։

Տեղին է կանգ առնել հնչակյան մամուլօրգանների հոդվածներում և գրքերում շատ հաճախ հանդիպող մի շատ բնորոշ երևույթի վրա ևս։ Բնական է, երբ ամեն մի կուսակցություն մշակում է իր պատմությունը և մանրակրկիտ ուսումնասիրում այն, նա աշխատում է բացահայտել անցած ուղու դրական և բացասական կողմերը, դրանով իսկ ճանա-

71 Նույն տեղում։

72 «Երիտասարդ Հայաստան», 3 դեկտեմբերի, 1957։

պարհ հարթել ապագա, ավելի անարգել զարգացման համար։ Մինչդեռ հնչակյան կուսակցությունը իր անցած գործունեության մեջ քննադատելի ոչինչ չի տեսնում, ոչ մի ինքնաքննադատական խոսք չի ասում, ընդհակառակը, ի մեծի մասին տասնապատիկ գերագնահատում է իր կատարած աշխատանքը։

Անհատի պաշտամունքի քողազերծումից հետո Սովետական Միությունում ըստ պատշաճի գնահատվեցին բազմաթիվ հեղափոխական գործիչներ, որոնք նախկինում մոռացության էին տրվել։ Այս առթիվ հնչակյանները այնպիսի պահանջ են ներկայացնում, որի մեջ բացահայտ կերպով երևում են նրանց սնապարծությունն ու սեփական ուժերի գերագնահատումը։ Ահա թե ինչ է գրում հնչակյան գործիչ Սիրվարդը. «Հնչակյան կուսակցության բոլոր գործիչները, օրինակ՝ Ժիրայր, Մուրատ, Փարամազ և այլն, ոչ միայն վար չեն մնար, այլև գերազանց են բոլորեն, դժվար թե անոնց հավասարը գտնելի պոլշևիկ կուսակցության մեջ»[73]։

Մնում է զարմանալ, որ այս սնապարծ տողերը պատկանում են հնչակյան խոհուն մտավորական Սիրվարդի գրչին։ Եթե Սիրվարդը լավ ծանոթ լիներ ՍՄԿԿ պատմությանը, այդ կուսակցության ականավոր հայ գործիչներ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Բ. Կնունյանցի, Ա. Մյասնիկյանի և այլոց գործունեությանը, ապա հավանական է նա այդպիսի բաներ չգրեր։

Հնչակի դերի գերագնահատման գործում այդ կուսակցության մտավորականները այնքան են առաջ գնում, որ երբեմն կամա թե ակամա ընկնում են տհաճ դրության մեջ։ Օրինակ, հասարակական կյանքում, քաղաքական հարցերում քիչ թե շատ կողմնորոշվող մարդկանց համար այլուրեն է հանդիպանում այն տարրական ճշմարտությունը, որ ամեն մի կուսակցություն կյանքի է կոչվում իր դասակարգի և ժողովրդի

---

73 Սիրվարդ, Արդար անկեղծություն, «Երիտասարդ Հայաստան», 25 փետրվարի, 1955։

առջև դրված հիմնական սոցիալական խնդիրների լուծման համար։

Սփյուռքում գտնվող մոտ մեկ և կես միլիոն հայությունը, ինչպես և պետք էր սպասել, կյանքի է կոչել նաև հայ կոմունիստներին, որոնք ամբողջ երկրի կոմունիստների հետ միասին պայքարում են բոլոր ազգերի աշխատավորների ազատագրության համար։

Պարզվում է, որ Հնչակը, այդ տարրական ճշմարտության մասին, որի շուրջը երկու կարծիք չի կարող լինել, ունի այլ տեսակետ։ Ելնելով սեփական դերի գերագնահատումից, այդ կուսակցության մտավորականները գրում են. «Սփյուռքի մեջ հայ համայնավարները գոյության կոչվեցան (!!!) հնչակյան կուսակցությունը քանդելու համար»[74]։

Չափազանց տարօրինակ վարքագիծ։ Սփյուռքահայ կոմունիստները, բնականաբար, պայքարել են Հնչակի դեմ, սակայն ինչպես միշտ նրանց հիմնական թշնամին եղել են իմպերիալիզմն ու դաշնակցությունը։ Հնչակյան գործիչները հաշվի չնստելով պատմական փաստերի հետ, անց են կացնում այն միտքը, թե իբր Հնչակի դեմ մղվող պայքարի հաջողությունից է կախված հայ կոմունիստների հարատևման հնարավորությունը։ «Հայ համայնավարներու աչքին,— գրում են նրանք,— հնչակյանությունը մեծագույն փուշն էր։ Պետք էր քանդել հարվածել զայն ինքզինքնին ապրեցնելու և իրենց գոյությունը հարատևելու համար»[75]։

Հնչակյան մտավորականները «մոռանում» են մի «մանրուք», այն՝ որ 1943 թ. հետո հայ կոմունիստները և հնչակները համախմբված են Հայաստանյան ճակատում, որի հիմնական նպատակներից մեկը՝ պայքարն է դաշնակցության դեմ։ Պատմության գնահատման հարցերում պետք է բարեխիղճ լինել։

Ճիշտ է, եղել են դեպքեր, երբ անհատի պաշտամունքի

74 Ս. Սիմոնյան, *Ուշացած բայց անգին խոսքեր*, «Արարատ», 14 հոկտեմբերի, 1956։

75 Նույն տեղում։

ազդեցության տակ, հնչակին, ռամկավարներին և դաշնակցության նույնանման պիտակավորում էր սրվում: Բայց անգամ անհատի պաշտամունքի տարիներին չի եղել դեպք, որ հայ կոմունիստներն իրենց թշնամին համարեին հնչակին և ոչ թե դաշնակցությանը:

Պարզվում է նաև, որ դաշնակցության դեմ պայքարող միակ ուժը եղել է հնչակը: Կոմունիստների կողմից հնչակների դեմ մղվող պայքարը, գրում են հնչակները, յուղ քսեց դաշնակցության հացին, որի դեմ «կանգնող և պայքարող միակ փաստական ուժը կհանդիսանար հնչակյան կուսակցությունը՝ գրեթե ամեն տեղ»[76]: Ինչպես տեսնում ենք, հավակնությունները չափազանց մեծ են:

Հնչակյան կուսակցությունը շատ հաճախ մոռացության է տալիս սեփական իրականությունը, հայ գաղթօջախներում գործող բոլոր ուժերին և իրեն համարում սփյուռքահայության ղեկավար ուժ:

Որպեսզի ընթերցողի համար ավելի պարզ լինի, թե հընչակյան գործիչները ինչպես են գերագնահատում ժամանակակից սփյուռքում իրենց ունեցած դերը, բերենք նաև նրանց հետևյալ խոսքերը.

«Այնքան ատեն որ կա հնչակյան կուսակցությունը. թշնամի բազուկ մը չի կրնար բարձրանալ մեր ժողովրդին վրա»[77]:

Ազգապահպանման համար պայքարում են հայկական բոլոր առաջադիմական ուժերը: Հնչակյան կուսակցությունը իր ազգօգուտ և առաջադիմական գործունեությամբ, չի կարելի առանձնացնել մյուս ուժերից և գերագնահատել: Ազգապահպանման նպատակով կատարված աշխատանքները միայն միջոց են սփյուռքահայության կյանքը երկարացնելու համար: Փրկությունը ներգաղթի մեջ է: Իսկ չէ՞ որ ներգաղթը բընկած է Սովետական Միության, Մայր Հայաստանի և կոմու-

76 Նույն տեղում:

77 «Սուտի և զրպարտության արշավը կը հանգի հասարակ մտանցության» (խմբագրական), «Արարատ», 2 հոկտեմբերի, 1960:

նիստական կուսակցության ուսերին։ Անհրաժեշտ է, որպեսզի այս կարևոր հանգամանքը ըստ արժանվույն գնահատվի և և հասկացվի սփյուռքահայ բոլոր ուժերի կողմից։

Հնչակյան կուսակցության քաղաքականության մի քանի կարևոր հարցերը վերլուծելիս անհրաժեշտ է անուշադիր չթողնել այն փաստը, որ այդ կուսակցության մասնաճյուղերը սփյուռքահայերի հետ միասին ցրված են ամբողջ աշխարհում, վաղուց է ընդհանուր համագումար չեն ունեցել, ոչ միշտ են միասնական գիծ վարում, արդիականության հրատապ հարցերի նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքը ոչ միշտ է համընկնում կամ, ավելի ճիշտ, լիովին համընկնում։

Բերենք մեկ օրինակ։ Բուենոս-Այրեսում լույս է տեսնում Հնչակյան «Շարժում» թերթը, որը նույնպես կանգնած է Հայաստանի պաշտպանության դիրքերում, գովասում է սովետական իշխանության տարիներին հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումները։

Սակայն դրա հետ մեկտեղ, հատկապես Ստալինի պաշտամունքի հետևանքների դեմ մղվող պայքարի տարիներին, ինչպես երևում է, այդ պայքարի դրոշի տակ «Շարժումի» խմբագրությունը փորձում է վերանայել մի շարք հարցեր։ Դրա համար, նախ, Հնչակյան կուսակցության Արգենտինայի մասնաճյուղը ՌԿ(բ)Կ X համագումարում ընդունված կուսակցության միասնականության մասին որոշումը վերագրում է Ի. Ստալինին և ապա պայքար սկսում նրա դեմ[78]։

Խեղաթյուրելով բոլոր փաստերը, «Շարժումի» խմբագրությունը հայտարարում է. «Որպեսզի Հնչակյան կուսակցությունը առաջադիմական ըլլա պետք է լուծե իր կուսակցությունը։ Այս է որ կը պահանջեն համայնավարները։ Նույն նպատակին կը ձգտին բոլոր անոնք, որ «հայաստանասեր» անունի տակ կը գործեն»[79]։

Վերոհիշյալ խմբագրականում փաստորեն կոչ է արվում

78 Չեյրունցյան Վ., Հնչակյան կուսակցությունը և համայնավարությունը, «Շարժում», 31 հոկտեմբերի, 1959։

79 Նույն տեղում։

բոլոր հնչակյաններին՝ չգործակցել կոմունիստների հետ, որովհետև եթե վերջիններս «կը մտնեն հնչակյան կուսակցության իբր բարեկամ, անոնց նպատակն է քայքայել հնչակյան կուսակցությունը: Երբ անոնք առաջարկեցին Ամերիկայի հնչակյաններուն և համայնավարներուն մերձեցումը, կանխորոշված նպատակ ունեին կուսակցությունը քայքայելու և այսպես իրենց նպատակին հասան:

Նույն երևույթը Ֆրանսիայի և Լիբանանի մեջ, ուր կարգ մը հնչակյաններ ամեն գնով իրենց անհատական շահը ապահովելու համար կը մտնեն համայնավարներուն, իբր թե հակադաշնակցական պայքար մղելու համար»[80]: Թերթը «մոռանում է», որ Լիբանանի «կարգ մը հնչակյանները» պատահական մարդիկ չեն, այլ հնչակի ճանաչված ղեկավարները: Գրելու տոնը և հարցադրումը ցույց է տալիս, որ «Շարժումի» շուրջը համախմբված հնչակյանները համաձայն չեն կուսակցության ընդհանուր քաղաքականության հետ և դեմ են կոմունիստների հետ գործակցելուն:

«Շարժում» թերթի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՌԿ(բ)Կ X համագումարում կուսակցության միասնության մասին ընդունված որոշումը դիտավորյալ է վերագրվում Ի. Ստալինին, որպեսզի հնարավոր լինի այն վերանայել: Այդ արվում է մի նպատակով, որպեսզի ցույց տրվի, որ Սովետական Միությունում երկու կուսակցությունների զուգահեռ գոյությունը անկարելի չէ և «օր մը հնչակյանությունը կրնա արտոնվիլ, իբր ընկերվարական կուսակցություն, մուտ գտնել Հայաստան և կատարել իր ընդդիմադրի օգտակար դերը: Այդ օրվան պետք է պատրաստվին մեր ընկերները արտասահմանի մեջ»[81]:

Վիճակը բարդ է: Հնչակի շարքերում անկասկած գոյություն ունեն իրարամերժ կարծիքներով ղեկավարվող խմբավորումներ: Եթե հնչակյան կուսակցության ղեկավարությունը

80 Նույն տեղում:

81 «Կյանք և խորհուրդ, բարեշրջություն և հեղափոխություն» (խմբագրական), «Շարժում», 14 մարտի, 1959:

անողոքաբար քննադատում է աջ սոցիալիստական կուսակցություններին, ապա այդ կուսակցության Արգենտինայի մասնաճյուղը ցանկություն է հայտնում, որպես սոցիալիստական կուսակցության, իր գոյությունը պահպանել Սովետական Հայաստանում*։

Վեր հանելով Հնչակի դասակարգային էության հարցը և նրա գործունեության բացասական, մեզ համար անընդունելի կողմերը, անհրաժեշտ ենք համարում մոռացության չտալ այդ կուսակցության գործունեության դրական կողմերը։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անհատի պաշտամունքի ժամանակաշրջանում իրոք սովետահայ պատմագրությունը ունեցել է զգալի թերություններ։ Այդ թերությունները արտահայտվում էին նաև նրանում, որ սովետահայ պատմաբանները մեծ մասամբ շրջանցում էին XIX դարի վերջին քառորդում Արևմտյան Հայաստանում ծավալված ազգային-ազատագրական պայքարը, այն խորապես չէին ուսումնասիրում։ Իսկ նրանք, ովքեր այս կամ այն առիթով անդրադառնում էին այդ բարդ և չափազանց կարևոր պրոբլեմին, չէին խորանում նրա մեջ, իրարից ոչնչով չտարբերվող շաբլոն, արդեն դոգմայի վերածված տեսակետ-սահմաններով սահում էին նրա վրայով, դատապարտելով բոլոր այն կուսակցություններին, որոնք մասնակցել են հայ ժողովրդի արևմտյան հատվածի կյանքի ու մահվան համար մղված մեծ գոտեմարտին։ Հարցը տվյալ դեպքում այն չէ, թե Հնչակը այդ շարժման մեջ ճիշտ տակտիկա էր վարում, թե սխալ, այլ այն, որ ըստ արժանվույն լուսաբանվի արևմտահայության հերոսական,

*«Շարժում» թերթի 1959 թ. հոկտեմբերի 17-ի համարում հայտնված է. 1954 թ. Զեյթունցյանը (կեղծանունը՝ Ուլնեցի, Արգենտինայի Հնչակյան մասնաճյուղի ղեկավարներից) «Արարատ»-ում տպել է «Հնչակյանություն, համայնավարություն և նեննիականություն» խորագրով հոդվածը, որի համար արժանացել է դիտողության ընկ. Վարիչի կողմից։

Խնդրո առարկա հոդվածը ծրագրային բնույթ ունի և ցույց է տալիս, որ իրոք Հնչակյան կուսակցության ղեկավարության և նրա Արգենտինայի մասնաճյուղի միջև գոյություն ունեն գաղափարական լուրջ տարաձայնություններ։

օրհասական ազատագրական պայքարը, որի առյուծային խրագործությունների մասնակիցն էր նաև Հնչակյան կուսակցությունը։ Այդ կուսակցության բազմաթիվ անդամներ զենքը ձեռքին զոհ գնացին թուրքական բարբարոսության դեմ մղվող պայքարում։

Ազգային-ազատագրական պայքարի պատմությունը ուսումնասիրող պատմաբանը, նկարագրելով այդ առյուծային դյուցազնամարտի դրվագները, ինչո՞ւ չպետք է դրվատի (անկախ այդ կուսակցության տակտիկայի ճշտությունից և գաղափարային էությունից) Հնչակյան այն գործիչներին, որոնք հերոսաբար զոհվեցին թուրքական բռնակալության դեմ մղված պայքարում։ Մի՞թե գաղտնիք է, որ Արևմտյան Հայաստանում ծավալված ազատագրական պայքարի տարիներին Հնչակյան որոշ գործիչներ իրենց հերոսագործություններով իրավունք են նվաճել հայ ժողովրդի պատմության մեջ իրենց տեղը ունենալու։

Ազգային-ազատագրական պայքարը եղել է համաժողովրդական, նրանում մասնակցել է ամբողջ ժողովուրդը։

Անհրաժեշտ է ուսումնասիրել Հնչակյան կուսակցության գործունեության մեկ այլ կողմը ևս։ Հնչակյանները շատ դեպքերում՝ դաշնակցած բոլշևիկների հետ, մասնակցել են Ռուսաստանում ծավալված հեղափոխական շարժումներին։ Այդ իմաստով Հնչակը որոշ ծառայություններ ունի մատուցած հեղափոխական շարժմանը։

Ինչպես հայտնի է, բոլշևիկյան կուսակցությունը մինչև իշխանության գլուխ գալը, հեղափոխական շարժումների տարիներին, այլ կուսակցությունների հետ երբեմն կոմպրոմիսի մեջ է մտել, դաշինք կնքել և ցարիզմի դեմ մղվող պայքարում միասին հանդես եկել։ Այդ բխել է մարքսիզմ-լենինիզմի ոգուց և հանդիսացել է բոլշևիկյան կուսակցության հաջողության գրավականներից մեկը։ Իսկ ի՞նչու ենք մենք լռության մատնում Կովկասի բոլշևիկյան և Հնչակյան կազմակերպությունների համատեղ գործունեության փաստը, որի մի դրվագի մասին բոլշևիկյան կուսակցության III համագումարին

զեկույցից Պ. Ջափարիձեն: Պետք է բարեխղճությամբ ուսումնասիրել հեղափոխական շարժումներին Հնչակի մասնակցության հարցը, միաժամանակ չմոռանալով այն ճշմարտությունը, որ այդ կուսակցությունը, ընդհանուր առմամբ, թուլացնում էր հեղափոխական շարժման ուժը և պառակտում նրա շարքերը իր ազգայնական քաղաքականությամբ:

Սակայն սույն աշխատությունում մենք նպատակ չունենք մանրամասն լուսաբանելու Հնչակի պատմությունը: Մեզ հետաքրքրում է միայն այն, թե Հնչակը հետպատերազմյան շրջանում, համաշխարհային քաղաքական ուժերի տեղաբաշխման ժամանակակից էտապում, երկու լագերների գոյության պայմաններում, ինչպիսի՞ քաղաքականություն է վարում, ո՞ր ուժերի հետ է դաշնակցել՝ առաջադիմությա՞ն, թե՞ իմպերիալիզմի և, վերջապես, մարդկության զարգացման արդի փուլի հրատապ հարցերի նկատմամբ ի՞նչպիսի վերաբերմունք ունի:

## 2. ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Հնչակյան կուսակցությունը, սփյուռքահայ առաջադիմական ուժերի հետ միասին, իր ուժերը ի սպաս է դրել խաղաղության և առաջադիմության համար մղվող պայքարին, լավ հասկանալով, որ ժամանակակից էտապում մարդկային հասարակության առջև կանգնած հիմնական հարցը, հարցերի հարցը, հանդիսանում է նոր, երրորդ համաշխարհային պատերազմի վտանգի լիկվիդացումը:

Հնչակի գործունեության մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, իրոք, այդ կուսակցությունը հետպատերազմյան շրջանում հանդես է գալիս խաղաղության համար մղվող պայքարում, անողոքաբար քննադատելով միջազգային իմպերիալիզմի ռազմամոլ քաղաքականությունը: Դաշնակցած առաջադիմական մյուս ուժերի հետ՝ Հնչակը աշխարհի բոլոր հայկական գաղթավայրերում քրտնաջան աշխա-

տանք է տանում սփյուռքահայությանը լիովին համախմբելու խաղաղության համար մղվող պայքարի մարտիկների բանակում:

Չի կարելի ասել, թե այդ կուսակցության ղեկավարները վարդագույն ակնոցներով են նայում կյանքին և թերագնահատում դժվարությունները: Ընդհակառակը, նրանք լիովին պատկերացնելով ստեղծված դրության բարդությունը, գրում են. «Պատերազմի սևաթույր ամպեր կերևնան հորիզոնին վրա: Բովանդակ մարդկությունը իր դարավոր կյանքի և գոյության և պատմության օրերուն, չէր տեսած, չէր ունեցած այսպիսի ծանր և հուզումնալից շրջան մը:

Սակայն հակառակ այս ամենուն, վստահ ըլլալու ենք և պահելու ենք մեր անխախտ հավատքը մարդկային բարոյական բարձր ու ազնիվ ըմբռնողության տեր, այն ամեն ազգի ամեն գույնի ու տեսակի պետական, հասարակական և կրոնական ղեկավարներու վրա, որոնցմե միլիոնավորներ կան կանգնած խաղաղության ըմբիշին անկյունը և հոգևին և սրտագին կաշխատին կասեցնել մեր օրերու պատերազմի այս ահարկու փոթորիկը...»[1]:

Պատերազմը անհրաժեշտ է բուրժուազիային, որովհետև այն համապատասխանում է վերջինիս դասակարգային շահերին և հարստացնում նրան: «Պատերազմը հզորներու կողմե ակարներու ճիտին դրած լուծ մըն է,— գրում են հնչակյան գործիչները,— իսկ մեր օրերու քաղաքակիրթ կոչված պետություններու ահեղ պատերազմները դրամատիրական մրցակցություն մըն է: Հրեշային առևտուր մը, ուր երկու կողմի միլիոնավոր խեղճեր կզոհվին, որպեսզի մեկ կողմի մի քանի հարյուր միլիոնատերեր դառնան միլիարդատերեր»[2]:

Բարեբախտություն է, որ խաղաղությունը շատ ավելի

---

1 «Քաղաքական աշխարհին» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 28 սեպտեմբերի, 1954:

2 «Խաղաղության դրոշին տակ» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 24 դեկտեմբերի, 1957:

բարեկամներ ունի, քան թե պատերազմը: Հետևաբար, խաղաղությունն անպայման կհաղթանակի, գրում են Հնչակները[3]: Սակայն Հնչակը գիտակցում է, որ խաղաղության համար պետք է պայքարել, որ միայն բարի ցանկությամբ խաղաղություն չի կարելի պահպանել: Ելնելով դրանից, «Երիտասարդ Հայաստանը» գրում է. «Եվ սակայն խաղաղության հաղթանակը ապահովելու համար պետք է ճգնիլ և պայքարիլ: Ամեն պատեհ առիթով խաղաղության պաշտպան կենալու է: Դատապարտելով պատերազմի հրձիգները հոգ չէ անոնք ինչ ազգի պատկանին և ինչ դիմակի տակ ներկայանան»[4]:

Ինչպես տեսնում ենք, այս հարցում ինքնախաբեության ոչ մի հետք չկա Հնչակի գործունեության մեջ: Ոչ թե ժամանակավոր գործոններն են որոշում Հնչակի նմանօրինակ քաղաքականությունը պատերազմի նկատմամբ, այլ այն ճիշտ դիրքորոշումը, որ ունի այդ կուսակցությունը երկու լագերի տրոհված ժամանակակից աշխարհում:

Դեռևս նոր էին լռել Երկրորդ համաշխարհային պատերազմի հրանոթների համազարկերը, երբ միջազգային իմպերիալիզմը, ԱՄՆ-ի գլխավորությամբ, ձեռնամուխ եղավ Արևմտյան բլոկի ստեղծմանը: Այն ժամանակ, երբ շատ ու շատ քաղաքական ու հասարակական ուժեր դեռևս չէին կողմնորոշվել հետպատերազմյան նոր իրադրության մեջ, չէին տեսնում այն ուժերը, որոնք Երրորդ համաշխարհային պատերազմի զենքերն էին կռում, Հնչակը հանդես եկավ «Հինի և նորի կռիվը» հոդվածով, որի մեջ պարզորոշորեն առաջ քաշեց ՍՍՌՄ-ի դեմ մարմին ու ձև առնող բլոկի հարցը, այն գնահատելով որպես «Աթոմ-պոմպի պլան»[5]:

Միանգամայն ճիշտ գնահատելով հետպատերազմյան իրադրությունը՝ կազմված ատոմային ռումբի հայտնագործման

---

3 Հ. Գույումճյան, Համակեցության թշնամիները, տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 8 հոկտեմբերի, 1954:

4 Նույն տեղում:

5 «Հինի և նորի կռիվը» (խմբագրական), «Արարատ», 19—25 նոյեմբերի, 1945:

*հետ, հնչակյանները գրում էին. «Հյուլեական դարաշրջանի սեմին, այլևս չի կարելի կիրարկել նախապատերազմյան քաղաքականություն, միջազգային հակադիր խմբավորումներ, պլոքներ և զինակցություններ, որոնք մեկին կամ մյուսին դեմ ուղղված ըլլան՝ նախ «տնտեսական» անմեղ գործակցության, ապա կամաց-կամաց «դաշնակցային իրերօգնության» և վերջիվերջո «զինակցության» անուններով: Հին ձևի իրերամարտության դիվանագիտությունը սնանկացած է, գործակցության և իրավախոհության շրջանը սկսած է»[6]:*

*Սակայն, անկախ հնչակի բարի ցանկությունից, իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականության հետևանքով միջազգային իրադրությունը գնալով ավելի ու ավելի բարդացավ և աշխարհը պառակտվեց բլոկների ու զինակցությունների մի ամբողջ ցանցով: Ժամանակ առ ժամանակ երկրագնդի տարբեր վայրերում սկսեցին որոտալ ջերմամիջուկային զենքերը, կարծես թե զգուշացնելով համայն մարդկությանը այն վտանգի մասին, որը սպառնում է ժամանակակից քաղաքակրթությանը:*

*Հնչակյան կուսակցությունը վճռականորեն հանդես եկավ պատերազմի հրձիգների դեմ, սուր ու անողոք քննադատության ենթարկելով իմպերիալիզմի էությունը և քաղաքականությունը, ցույց տալով, որ մարդկության ցավերի ու հոգսերի, Երրորդ համաշխարհային պատերազմի վտանգի պատճառը թաքնված է իմպերիալիզմի էության մեջ: Միջազգային իմպերիալիզմը իր նենգ ու քայքայվող հասարակարգը փրկելու համար աշխարհը պառակտել է երկու մասի, այն ցանցապատել է բլոկներով ու զինակցություններով և համառորեն պատրաստվում է նոր համաշխարհային պատերազմի:*

*Կանգնելով խաղաղության և առաջադիմության մարտիկների շարքերում, պաշտպանելով այն կարծիքը, որ վերջիններիս քաղաքականությունը բխում է համայն մարդկության սրտի խորքերից, հնչակը գրում է. «Իմպերիալիստ ճակատին*

6 «Արարատ», 20 նոյեմբերի, 1945:

հիմնական նպատակն է՝ ամրացնել քայքայվող կապիտալիստական կարգը, պայքարել դեմոկրատիայի և սոցիալիզմի դեմ և համաշխարհային նոր պատերազմ մը նախապատրաստել»[7]:

Աշխարհի ժողովուրդները դեմ են պատերազմին, չկա ժողովուրդ, որ պատերազմ ցանկանա, միայն կան պատերազմից օգտվող դասակարգի ռազմատենչ ղեկավարներ, որոնք լարում են դրությունը, նորանոր շահույթներ ստանալու նպատակով: Սովետական Միությունը,— գրում են հնչակյանները, ամեն ինչ անում է սառը պատերազմին վերջ տալու, զինաթափության պրոբլեմը լուծելու համար, սակայն «Խորհրդային Միության կողմէ խաղաղությունը ամրապնդելու, աթոմական զենքերու գործածությունը արգելելու, նորմալ հարաբերությունները վերահաստատելու բոլոր փորձերը մինչև հիմա ի դերև ելան»[8]:

Հնչակը այդ բանը բացատրում է Ամերիկայի Միացյալ նահանգներում ռազմական արդյունաբերությունը կանգուն պահելու, անգործությունը և տնտեսական ճգնաժամերը կանխելու հավերանությամբ: Հնչակը գտնում է, որ «Եթե Արևմուտքը ընդառաջ գնար Սովետական Միությանը և համաձայներ նրա առաջարկներին, հավանական է, ո՛չ Կորեական պատերազմը տեղի կունենար և ո՛չ էլ Ֆորմոզայի շուրջը և չինական ջրերի մեջ ստեղծված ներկա պայթուցիկ կացությունը»[9]:

Հնչակյան կուսակցությունը իր մամուլի էջերում հետևողականորեն պրոպագանդում է այն միտքը, որ գոյություն ունեցող մեծաթիվ ռազմական բլոկները կյանքի են կոչվել միջազգային իմպերիալիզմի կողմից և ուղղված են սոցիալիզմի լագերի ու ազգային-ազատագրական պայքարի դեմ:

---

7 Սանջյան Գ., Աշխարհի պատասխանը, «Արարատ», 22 փետրվարի, 1953:

8 Հ. Գույումճյան, Աշխարհի ժողովուրդները դեմ են պատերազմին, «Երիտասարդ Հայաստան», 15 մարտի, 1953:

9 Նույն տեղում:

Իմպերիալիստական պետությունների ղեկավարները, չնայած խաղաղության մասին բարբաջանքներին, խաղաղություն չեն ուզում, չպետք է հավատալ տարբեր ժամանակներում, Ժնևում և այլ վայրերում կայացած խորհրդակցություններում նրանց արած «խաղաղասիրական» հայտարարություններին, իրավացիորեն եզրակացնում են հնչակյանները։ Հետպատերազմյան տարիներին խաղաղության համար մղվող պայքարի պատմության դասերը ցույց են տալիս, որ իմպերիալիստական երկրների ղեկավար շրջանները, որպես օրենք, տապալում են խաղաղության հասնելու փորձերը և սրում սառը պատերազմը, որի գլխավոր հենարանը Հյուսիս-Ատլանտյան բլոկն է։ «Հյուսիս-Ատլանտյան պլոքը,— գրում են հնչակյանները,— հիմնված է 1949-ին, նախաձեռնությամբ Միացյալ Նահանգներու։ Եվ որպես ուժի քաղաքականության գլխավոր գործիք, ան ուղղված է կարգ մը խաղաղասեր պետությանց դեմ ու կը համապատասխանե արևմտյան պետությանց և առաջին հերթին Միացյալ Նահանգներու ծավալապաշտական ձգտումներուն։ Վերոհիշյալ պլոքի սանձումեն ետք կազմվեցան նաև զինվորական ուրիշ համախմբումներ՝ ՍԵԱԹՕ և Պաղդատի դինակցություն, որոնք կապանքն են բազմաթիվ պետությանց ազգային գերիշխանության ու ապահովության»[10]։

Հնչակը գտնում է, որ զինաթափության պրոբլեմի լուծումը հանդիսանում է հետպատերազմյան միջազգային խնդիրների կարգավորման բանալին։ Դեռևս 1957 թվականին, հնչակյան մամուլը ի մի բերելով պատերազմից հետո զինաթափության պրոբլեմի լուծման ուղղությամբ կատարված աշխատանքները, այն միտքն էր հայտնում, որ 12 տարիների ընթացքում միջազգային ոչ մի խնդիր այնքան երկար, բայց միանգամայն ապարդյուն բանակցությունների և վիճաբանությունների նյութ չի եղել, որքան զինաթափության խնդիրը։ «Սոցիալիստական երկրները կենսապես շահագրգռված մի-

10 «Ցուրտ պատերազմի գլխավոր հենարանը Հյուսիս-Ատլանտյան Պլոքը՝ ՆԱՏՕ» (խմբագրական), «Արարատ», 7 հունիսի, 1956։

ջազգային լարվածության թուլացումով և խաղաղության պահպանումով ու ամրապնդումով, ոչ մեկ ճիգ չխնայեցին վերջին 12 տարիների ընթացքին իրապես և որքան կարելի է լայն սահմաններու մեջ գրական լուծում մը գտնելու զինաթափության խնդրին, իրավամբ համարելով այդ խնդրին բարեհաջող լուծումը միջազգային խնդիրների լուծման բանալին»,— գրում է «Արարատը»,— գալով այն եզրակացության, որ Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների՝ զինաթափության պրոբլեմի լուծման ընթացքում թափած ջանքերը ի դերև ելան միջազգային իմպերիալիզմի թշնամական դիրքի պատճառով, որը սաբոտաժի ենթարկելով սոցիալիստական երկրների բոլոր ձեռնարկումները, միաժամանակ սիստեմատիկաբար աշխարհի այս ու այն մասում պատերազմի օջախներ էր ստեղծում[11]։

ԱՄՆ-ի «խաղաղության ծրագիրը», որը Արևմտյան աշխարհի կողմից հավանություն ստանալուց հետո ներկայացվեց Ժնևի խորհրդակցությանը, խստորեն քննադատվեց հնչակյան մամուլում։ Հավանություն տալով ՍՍՌՄ ծրագրին, Հնչակը գրում էր. «Բայց իսկապես ափսոս է հաստատել, թե «Խաղաղության Արևմտյան ծրագիր» ուռուցիկ անվան տակ ներկայացված ծրագիրը բնավ չի ծառայեր այդ նպատակներուն»[12]։

Լուրջ հակասություններով լի ժամանակակից աշխարհում մարդկության հետագա անվտանգ զարգացման միակ գրավականը Հնչակը համարում է խաղաղ գոյակցությունը։ Հնչակյան կուսակցության գործիչները իրենց ամենօրյա տեսական ու պրակտիկ գործունեության մեջ կրքոտ կերպով պաշտպանում են Սովետական Միության լենինյան արտաքին քաղաքականության անկյունաքարը հանդիսացող խաղաղ գոյակցության տեսությունը։

Հնչակյան մամուլը բազմիցս անդրադարձել է խաղաղ գո-

11 Օ. Վարդանյան, *Խաղաղությունն կը ճառեն, բայց՝ պատերազմ կը պատրաստեն*, «Արարատ», 8 մարտի, 1957։

12 «Խաղաղության ձայնը չի ասիկա», «Արարատ», 30 մայիսի, 1959։

*յակցության հարցերին, խստորեն ընդդատելով միջազգային իմպերիալիզմի քաղաքականությունը, ցույց տալով, որ տոդ։ բանակցությունը ջերմամիջուկային պատերազմից խուսափելու միակ միջոցը տեսնում է խաղաղ գոյակցության մեջ։ Ամբողջ աշխարհի առաջադիմական ուժերի հետ միասին պաշտպանելով Սովետական Միության 1959 թ. առաջարկած զինաթափության նոր ծրագիրը, Հնչակյան կուսակցությունը գրում էր, որ այն երաշխավորում է բոլոր երկրների անվտանգությունը, պայմաններ ստեղծում խաղաղ գոյակցության համար[13]։*

*«Համակեցությունը փոխադարձ հանդուրժողության բակըղըրանքներով, տարբեր իրավակարգերով օժտված պետությանց միասնաբար ապրելու և նորմալ մշակութային և առևտրական հարաբերություններ մշակելու գրությունն է։*

*Ապրելու և ուրիշներուն ապրելու իրավունքը հարգելով միայն կարելի է ապահովել աշխարհի խաղաղությունը»,— ելնելով ստեղծված դրությունից, միանգամայն ճիշտ եզրակացության է գալիս Հնչակը[14]։*

*Լավ հասկանալով, թե ինչ նոր արյունոտ ոճիրների մեջ կարող է ընկնել մարդկությունը գերմանական իմպերիալիզմի ռևանշիստական գործունեության հետևանքով, Հնչակյան կուսակցությունը խորապես հուզված էր նաև Փարիզի համաձայնագրի վավերացման օրերին։ Գերմանիային վերազինման իրավունքներ տալու հարցում մենք, գրում էին Հնչակյան թերթերը, ուրախանալու և խանդավառվելու առիթ չենք տեսնում։ Իր ազգային վերադանցության բաղձանքներով տարված, աշխարհը արյան մեջ թաթախող Գերմանիան կարող է պատճառ դառնալ երրորդ համաշխարհային պատերազմի սկսման, քանի որ Արևմտյան Գերմանիայի ղեկավար շրջանները համալրված են նախկին ֆաշիստական զինվորականներով և հիտ-*

---

13 *«Նոր քայլ մը զինաթափության խնդրի կարգադրության ուղին վրա» (խմբագրական), «Արարատ», 29 սեպտեմբերի, 1959։*

14 *«Երիտասարդ Հայաստան», 8 հոկտեմբերի, 1954։*

լերյան տեսակետներին դեռ հավատարիմ պետական անձնավորություններով[15]։ «Մենք պիտի ուրախանայինք,— գրում է «Երիտասարդ Հայաստանը»,— եթե այս վերազինումին փոխարեն առաջ գար Արևելք-Արևմուտք համաձայնության որոշ խնդիր մը, որ իրական երաշխավորումը պիտի ըլլա խաղաղության հաստատման, որուն կսպասե ամբողջ աշխարհը»[16]։

Քննադատելով Արևմտյան աշխարհի՝ Գերմանիայի վերազինման դիրքորոշումը, միաժամանակ հնչակը համաձայնություն է տալիս Գերմանիայի և Բեռլինի հարցերի կապակցությամբ Սովետական Միության քաղաքականությանը, այն համարելով այդ բարդ պրոբլեմի լուծման միակ բանալին[17]։

Միջազգային իմպերիալիզմը հնարավոր բոլոր միջոցներով արգելակում է Գերմանիայի հարցում Սովետական Միության քաղաքականության իրականացմանը և սնում ու կյանք է տալիս միլիտարիզմին ու ռևանշիզմին։ «Դժբախտաբար՝ այդ է որ կընեն, Միացյալ Նահանգներ, Բրիտանիա, և Ֆրանսիա,— գրում են հնչակները,— երբ՝ բանտերեն ազատ արձակելով Հիտլերի նախկին գործակիցները, ամեն իրավունք կուտան, որ անոնք կազմակերպվին, համադրեն իրենց ուժերը, վերակենդանացնելու շարժում մը որ խորտակվեցավ անփառունակ անհետացումով»[18]։

Ֆաշիզմը վերակենդանանում է ոչ միայն Գերմանիայում, այլև Իտալիայում։ Թվում է, թե արևմտյան դիվանագիտությունը ոչինչ չի սովորել մոտիկ անցյալի պատմությունից։ Արևմուտքի նմանօրինակ քաղաքականությունը անխուսափե-

15 «Պիտի ըլլա խաղաղություն» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 7 հունվարի, 1955։

16 Նույն տեղում։

17 «Ժնևի խորհրդաժողովին առթիվ ինչո՞ւ պահմտուք կը խաղան» (խմբագրական), «Արարատ», 25 հունիսի, 1959։

18 «Նացիզմը վերակենդանացնելու փորձեր», «Արարատ», 10 հուլիսի, 1952։

*լիորեն կհանգեցնի ախուր անցյալի կրկնությանը՝ նոր աշխարհավեր պատերազմի*[19]:

*Միանգամայն ճիշտ են հնչակյան թերթերում արծարծվող այն մտքերը, թե միջազգային իմպերիալիզմը արհեստականորեն սրում է սառը պատերազմը, ստեղծում բազմաթիվ ռազմական բլոկներ, վերակենդանացնում ֆաշիզմը, արգելակում ազգային-ազատագրական պայքարը և իր պաշտպանության տակ առնում աշխարհի բոլոր հետադիմական ուժերին:*

*Հատկապես սուր քննադատության է ենթարկվում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը: Արդարացման համար ոչ մի տեղ չթողնելով, հնչակը հետպատերազմյան շրջանի բոլոր չլուծված պրոբլեմները կապում է ԱՄՆ-ի քաղաքականության հետ: Նա գրում է. «Աշխարհ իր այսօրվա վիճակին հասավ վերջին երկու տարիների ընթացքին, երբ Միացյալ Նահանգները հակառակ Բոցդամի և Յալթայի որոշումներուն, երեկի թշնամիներու ձեռք երկարելով, զանոնք զինելու ձեռնարկեցին, Արևմտյան ճակատ մը կազմելու ընդդեմ Արևելյան պետություններուն»*[20]:

*Աշխարհի բոլոր մասերում ԱՄՆ-ը իր պաշտպանության տակ է առել հետադիմական, հակաժողովրդական կառավարությունները և հանդես է գալիս առաջադիմության ու դեմոկրատիայի դեմ պայքարող ուժերի ղեկավարի դերում*[21]:

*Ինչ վերաբերում է ԱՄՆ-ի ղեկավարների խաղաղասիրական դեմագոգիային, որ արվում է համաշխարհային կարծիքը թյուրիմացության մեջ գցելու համար, հնչակը, դեռևս Տրումենի ղեկավարության տարիներին, մերկացնելով ամերիկյան իմպերիալիզմի կեղծ խաղաղասիրությունը, գրում էր, թե նախագահից սկսած մինչև դահլիճի անդամները, ծերակուտականներն ու կոնգրեսմենները իրենց հրապարակային ելույթներում շատ հաճախ են խոսում խաղաղության մասին, սա-*

---

19 «Ֆաշիզմի վերակենդանացումը», «Արարատ», 22 հուլիսի, 1952:

20 «Ամերիկյան քաղաքական արդի ուղղությունը» (խմբագրական), «Արարատ», 14 հոկտեմբերի, 1950:

21 Նույն տեղում:

կայն ցավը նրանումն է, որ «խաղաղության մասին կը խոսին, սակայն պատերազմի կը պատրաստվին»: Տրումենը ևս իր ճառերում խաղաղության մասին է խոսում, բայց նույն ոգով էլ «անիկա կրակ կը փչե» Սովետական Միության դեմ[22]:

Այսքանից հետո կարելի՞ է արդյոք հավատալ ԱՄՆ-ի պետական գործիչների՝ խաղաղության անհրաժեշտության մասին արած հայտարարություններին: Ո՛չ, եզրակացնում է Հնչակը, որովհետև ԱՄՆ-ի հետպատերազմյան քաղաքականության վերլուծությունը բերում է միանգամայն այլ մտահանգման: «Խաղաղությունը ի՞նչ գործ ունի,— գրում են հնչակյանները,— երբ Ատլանտյան Ուխտով Ամերիկան զինակցության կը մտնե Եվրոպայի հետ և միջոցներ ձեռք կառնե զայն մինչև ակռաները զինելու: Ոչ ոքի համար գաղտնիք է, որ Ատլանտյան Ուխտը հարձակողական նպատակներ կը հետապնդե: Այդ իրողությունը քողարկելու դիվանագիտական լրջությունն անգամ չունին Վաշինգթոնի պետական մարդիկը»[23]:

Հնչակը քննադատում է ոչ միայն ԱՄՆ-ի, այլև, ընդհանրապես, կապիտալիստական բոլոր երկրների պետական գործիչներին, որոնք «խաղաղության մասին կը ճառեն, սակայն դեպի պատերազմ կընթանան: Գոյություն ունեցող պատերազմի ազդակները վերացնելու փոխարեն նորանոր ազդակներ կստեղծեն»[24]: Հնչակյան մամուլը խստորեն քննադատում է նաև Չերչիլի 1954 թ. նոյեմբերի 23-ին, իր ընտրողների առջև արտասանած հայտնի ճառը, որի «պատճառած հուզումը արդար էր և Չերչիլի դեմ շղթայազերծված պայքարը՝ արժան և իրավ»[25]:

Հնչակյան մամուլը ջերմորեն արձագանքեց ջերմամիջու-

22 Հ. Դույումճյան, Պատերազմական մթնոլորտ կստեղծեն, «Արարատ», 7 հոկտեմբերի, 1949:

23 Նույն տեղում:

24 Նուրհան. Խաղաղության մասին կը խոսին, պատերազմի կը պատրաստվին, «Արարատ», 24 փետրվարի, 1953:

25 «Չերչիլի ելույթը». «Երիտասարդ Հայաստան», 10 դեկտեմբերի, 1954:

*կային զենքի փորձարկումներն արգելելու մասին Մոսկվայի 1963 թ. պայմանագրի կնքմանը։*

*Հետպատերազմյան տարիներին Հնչակը, որպես իր քաղաքականության հիմնական ուղեգծերից մեկը, մերկացրել է միջազգային իմպերիալիզմի ավանտյուրիստական, աշխարհը նոր պատերազմի մեջ քաշելու փորձերը։ Ուշագրավ է այն, որ Հնչակը այդ բնագավառում գործել է ոչ միայնակ, այլ դաշնակցած մյուս առաջադիմական, դեմոկրատական ուժերի հետ։*

*Դրանից, իհարկե, այն եզրակացությունը չպետք է հանել, թե իբր Հնչակի և խաղաղության կամ ազգային-ազատագրական պայքարի հաղթանակի համար պայքարող մյուս կուսակցությունների ու հասարակական-քաղաքական կազմակերպությունների միջև հակասություններ չկան։ Հնչակի և մյուս կուսակցությունների ու կազմակերպությունների միջև եղել են ու կան գաղափարական և պրակտիկ բնույթի լուրջ տարաձայնություններ, որոնք և մշտապես իրենց արտահայտությունն են գտնում մամուլի էջերում։*

*Սակայն Հնչակի և մյուս առաջադիմական կուսակցությունների ու կազմակերպությունների գաղափարական կամ գործնական հարցերի շուրջը մղվող պայքարը, բարեբախտաբար, առաջին պլանի վրա չի քաշվում և պատճառ չի դառնում Հնչակի հեռացմանը ազգային ճակատից և, ընդհանրապես, առաջադիմական ուժերից։*

*Միջազգային զարգացման ժամանակակից փուլը ունի իր կենսական հարցերը, որոնց լուծումը մարդկության ամենաառաջավոր ուժերի փափագն է։*

*Հնչակյան կուսակցությունը իր փոքրաթիվ ուժերն ի սպաս է դրել մարդկության առաջ կանգնած կնճռոտ խնդիրների լուծմանը։ Վերջապես հարցն այն չէ, թե ով որքան ուժ է տրամադրում մարդկության առաջընթացի համար մղվող պայքարին, այլ այն, թե ով իր հնարավորությունների ո՛ր մասն է տրամադրում։ Ահա այս տեսակետից էլ միանգամայն ողջունելի պետք է համարել Հնչակի բռնած, շատ դեպ-*

քերում բազմաթիվ դժվարությունների հետ կապված գործունեությունը՝ խաղաղության համար մղվող պայքարում։

Գաղտնիք չէ, որ դաշնակցությունը բազմիցս փորձել է ԱՄՆ-ում և կապիտալիստական մյուս երկրներում մտնել հնչակյան գործիչներին՝ որպես Սովետական Միության հինգերորդ զորասյունի և նույնիսկ ծպտյալ կոմունիստների։

Ցավոք սրտի պիտի նշել, որ հնչակի առանձին ղեկավարներ երբեմն, հուրախություն խաղաղության և դեմոկրատիայի թշնամիների, մտնում են ոչ սկզբունքային, սուբյեկտիվ պայքարի ճանապարհ՝ իրենց կրքի ամբողջ զորությամբ հարձակումներ գործելով առաջադիմական ճակատին պատկանող այս կամ այն կուսակցության և կազմակերպության վրա։ Լինում են նաև դեպքեր, երբ այդ անսկզբունքային պայքարի առիթը տալիս են առաջադիմական մյուս կազմակերպությունները։ Բայց դա հարցի էությունը չի փոխում։ Ինչպես հնչակի, այնպես էլ հասարակական-քաղաքական մյուս կազմակերպությունների ղեկավարները, որոնք մտնում են ազգային ճակատի մեջ, բնականաբար, պիտի հանդես բերեն քաղաքական գործիչին հատուկ հավասարակշռվածություն, զսպվածություն և հասարակական երևույթների մեջ գլխավորը ոչ գլխավորից, սկզբունքայինը՝ մանր, խծբծությունից տարբերելու հմտություն։ Չի կարելի պառակտել խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարի ուժերը, մոռանալ, որ մարդկության առջև կանգնած են ավելի կարևոր պրոբլեմներ, որոնց մեծության և հրատապության հետ համեմատելիս սփյուռքահայ առաջադիմական ուժերի կողմից երբեմն կյանքի կոչվող խծբծանքները միայն ծիծաղ կարող են առաջացնել։

Այդ, իհարկե, չի նշանակում, թե սփյուռքահայ առաջադիմական ուժերի միջև մղվող գաղափարական պայքարը պետք է դադարեցնել։ Բոլորովին էլ ոչ։ Խաղաղության և առաջադիմության համար մղվող պայքարին մասնակցող կուսակցություններին պարտադրել, որ նրանք դադարեցնեն գաղափարական պայքարը՝ կլինի ոչ ճիշտ և հակառակ հասարակության զարգացման նորմալ ընթացքին։ Սակայն նկատի առնե-

լով միջազգային զարգացման ժամանակակից էտապի կընճռոտ, համամարդկային շահերը շոշափող, հրատապ, չլուծված պրոբլեմների գոյությունը, քաղաքական կուսակցությունների ղեկավարները, ելնելով պատմական մոմենտի լրջությունից, պետք է, չդադարեցնելով գաղափարական պայքարը, իրենց ուժերը նվիրեն խաղաղության և առաջադիմության համար մղվող պայքարին։

Սակայն գաղափարական պայքարը երբեք չպետք է հասցնի առաջադիմական, դեմոկրատական ուժերի պառակտմանը. այս է համամարդկային շահերի հրամայական պահանջը, որին և հետևում է հնչակյան կուսակցությունը։

* * *

Հնչակի հետպատերազմյան շրջանի գործունեությունը կենտրոնանում է ոչ միայն իմպերիալիզմի ռազմամոլական քաղաքականության, այլև ընդհանրապես նրա՝ որպես նեխվող համակարգի, հակահեղափոխական էության քննադատության շուրջը։ Հնչակյան կուսակցությունը քննադատում է իմպերիալիզմը, ելնելով մանրբուրժուական սոցիալիզմի դիրքերից։

Իմպերիալիզմը ապրում է իր մայրամուտը, աշխարհում ոչ մի ուժ ի վիճակի չէ նրան փրկելու կործանումից։ Կար ժամանակ, երբ բուրժուազիան առաջադիմական դեր էր կատարում, հասարակության հետագա զարգացումը նրան դարձրեց հակահեղափոխական և հետադիմական։

Մարդկային հասարակությունը արագորեն զարգանում է, ընթանալով դեպի կոմունիզմ և միակ ուժը, որը ճիգեր է գործադրում կանխելու այդ անհաղթահարելի շարժումը, դա իմպերիալիզմն է։

Իմպերիալիզմի լագերի կողմից ամբողջ աշխարհը ռազմական բլոկների ցանցով պատելը, սառը պատերազմի քաղաքականության իրականացումը, գրում են հնչակյան գործիչները, միայն մեկ նպատակ է հետապնդում՝ հետաձգել իմպերիալիզմի մոտալուտ վախճանը, կանխել նրա կործանումը։

*Իսկ մի՞թե դա հնարավոր է։ Ո՛չ, պատասխանում է հնչակյան կուսակցության լիդերներից Արսեն Կիտուրը. «Պատմական անխուսափելի օրենքներու համաձայն (մեր կարծիքով) քափիթալիզմի օրերը համրված են և ան դատապարտված է անհետանալու մարդկության պատմության ասպարեզեն»[26]։ Հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքները տանում են դեպի սոցիալիզմի հաղթանակը։*

*Մի շարք երկրներում կան պայմաններ իշխանությունը խաղաղ գրավելու համար, սակայն, զգուշացնում է Ա. Կիտուրը, աշխատավոր դասակարգը պետք է մշտապես ուժեղ և զգոն լինի պետք եղած դեպքում իմպերիալիզմին անհրաժեշտ դիմադրություն ցույց տալու և ոչնչացնելու համար։ Իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում բոլոր ազատասեր և խաղաղասեր ուժերի հույսերը կապված են Սովետական Միության հետ. «օրհնյալ ըլլա այդ ուժը և կարուկ ըլլա անոր սուրը»[27],— գրում է Ա. Կիտուրը։*

*Հնչակյան մամուլը իր էջերում հաճախակի տեղ է տալիս իմպերիալիստական երկրների ներքին դրության հարցերին, ցույց տալով թե դեպի ուր է գլորվում միջազգային իմպերիալիզմը։ Կապիտալիստական տնտեսությունը պլանային չէ, որի հետևանքով Անգլիայում, ԱՄՆ-ում, Արևմտյան Գերմանիայում և բազմաթիվ այլ երկրներում արագորեն աճում է գործազրկությունը, գրում է Ա. Կիտուրը «Արևմուտքին տագնապը» խորագրով հոդվածում[28]։ Հոդվածագրի բերած թվերը բացահայտում են այն ներքին անբուժելի ախտը, որով տառապում է բուրժուական հասարակարգը։*

*Արդյունաբերական զարգացած իմպերիալիստական պետությունների ժամանակակից ղեկավարները շատ անգամ են հանդես եկել համաշխարհային հասարակության առջև, հայտարարելով, թե իբր կապիտալիզմը փոխել է իր բնույթը,*

---

26 Ա. Կիտուր, *Ուժը որու կողմն է, «Արարատ», 31 օգոստոսի, 1957։*

27 *Նույն տեղում։*

28 Ա. Կիտուր, *Արևմուտքին տագնապը, «Արարատ», 30 հունվարի, 1958։*

դարձնել ժողովրդական, որ, հետևաբար. գործազրկությունը ևս ապրում է իր վերջին օրերը։ Այո՛, իմպերիալիստական պետությունների ղեկավարները քիչ ջանք չեն թափել, քիչ խոստումներ չեն տվել, որ գործազրկությանը վերջ կտրվի։ Սակայն, գրում է հնչակյան գործիչ, ամերիկահայ Լ. Մարտիրոսյանը, չնայած ԱՄՆ-ում տրված նմանօրինակ բազմաթիվ խոստումներին, գործազրկությունը ոչ միայն չի նվազում, այլ ընդհակառակը, անընդհատ աճում է. «Գործազրկությունը արդեն հասել է 6 միլիոնի։ Եթե բանակն էլ զորացրվի, ապա գործազուրկների թիվը կհասնի 15 միլիոն հոգու»»[29]։

Նկարագրելով ԱՄՆ-ում տիրող վիճակը, Լ. Մարտիրոսյանը հեգնում է «ժողովրդական կապիտալիզմի» տեսությունը և հարց տալիս. «172 միլիոն բնակչության երկրի մը մեջ 19 միլիոն ընտանիքներ բարեկեցիկ են եղեր, օթևներ և պալատանման շենքեր ունին եղեր, հապա մնացյալնե՞րը...»[30]։

ԱՄՆ-ում տեղի է ունենում բարոյականության հրեշավոր անկում։ Գողությունը, կեղծարարությունը և կաշառակերությունը ավելի մասսայական բնույթ են ընդունել։ Ռասսայական խտրականությունը գնալով սաստկանում է։ Երիտասարդությունը կորցրել է իր երբեմնի բարոյական չափանիշը[31]։ Ռոկեն ռոլը և ամերիկյան կինոնկարները բարոյալքում են երիտասարդությանը։ Զգուշացեք «սեքսային» ռումբից, այն ատոմային ռումբից քիչ վտանգավոր չէ, գրում է Կիտուրը[32]։

Հնչակյան մամուլը շատ անգամ է նշել, որ ԱՄՆ-ում «քաղաքականությունը և ոճիրը ձեռք ձեռքի տված կգործեն», որ նման անմխիթար դրություն եղել է միայն Հռոմեական կայսրության մեջ՝ նրա անկումից առաջ[33]։

---

29 Լ. Մարտիրոսյան, *Տոլարի կայսրության հարկերեն ընթացիկ նոթեր (պատմության համար), «Արարատ», 6 հունիսի, 1958։*

30 *Նույն տեղում։*

31 *«Բարոյականության անկումը Ամերիկայի մեջ», «Արարատ», 15 հունվարի, 1952։*

32 Ա. Կիտուր, *Զգուշացեք «սեքսային» ռումբի, «Արարատ», 28 նոյեմբերի, 1956։*

33 *«Արարատ», 20 օգոստոսի, 1953։*

ԱՄՆ-ում աստիճանաբար լիկվիդացվում են բուրժուադեմոկրատական ազատությունները, գլուխ են բարձրացնում ֆաշիստական տարրերը: Երկիրը գնում է դեպի ֆաշիզմ: Հատկապես Մակարթիի եռուն գործունեության շրջանում Հնչակյան կուսակցությունը և, մասնավորապես, նրա ամերիկահայ մասնաճյուղը, խիստ մտահոգված էր ԱՄՆ-ի ներքաղաքական դրության և զարգացման հեռանկարների հարցով: Հնչակյան թերթերը մեծ թվով հոդվածներ զետեղեցին իրենց էջերում՝ նվիրված մակարթիզմի վերլուծությանը:

Միանգամայն ճիշտ գնահատելով Մակարթիի նպատակները, «Արարատը» գրում էր. «Այս օրերուն, քիչ չի խոսվիր ծերակուտական Մակարթիի կամ Մակարթիական հետադիմական շարժման մասին: Ազատական և հառաջադիմական տարրերու հանդեպ հալածանքը սաստկացնելու և Ամերիկայի մեկ ծայրեն մյուսը հետադիմական խմբումներ կերպարանավորելու շարժում մըն է ան, որ իր գործունեությունը կը շարունակե ծերակույտի քննիչ ենթահանձնախումբի անունին տակ»[34]: Եթե, շարունակում է թերթը, Ամերիկայի ժողովուրդը, Մակարթիի բռնության տակ, աստիճանաբար կորցնի ազատ մտածելու, ազատ գործելու և անկաշկանդ արտահայտվելու իր անքննարկելի իրավունքները, «այն ատեն դժվար չէ ենթադրել, որ ֆաշիստական միահեծանությունը ի վերջո պիտի դառնա տիրապետող ուժ...»[35]:

Այդ բոլորը կոպիտ ձևով ոտնահարում են դեմոկրատական այն սկզբունքները, որոնց հաղթանակի համար ամերիկյան ժողովուրդը բազմաթիվ զոհեր է տվել: Մակարթիզմը ուրացումն է բուրժուական դեմոկրատիայի սկզբունքների և ազգային տրադիցիաների ու սովորույթների, ահա թե ինչու, եզրակացնում է «Արարատը», պետք է ասել, որ ԱՄՆ-ի կարգերին «սպառնացող վտանգն ակներև է»[36]:

34 «Մակարթիական շարժումը» (խմբագրական), «Արարատ», 20 օգոստոսի, 1953:

35 Նույն տեղում:

36 Նույն տեղում:

Շատերին թվում էր, թե մակարթիզմը կապված չէ ժամանակակից ԱՄՆ-ի սոցիալական պայմանների հետ, չի հանդիսանում նրա զարգացման օրինաչափ ծնունդը, որ բավական է հեռացնել Մակարթիին հասարակական ասպարեզից և մակարթիզմը կդադարի գոյություն ունենալուց: Սակայն լավատեսները չարաչար սխալվում էին: Մակարթիզմը ԱՄՆ-ի հետպատերազմյան կյանքի համար պատահականություն չէր, այլ հանդիսանում էր նրա ծնունդը և անխուսափելի ուղեկիցը: Մակարթիզմը այնքան ժամանակ կշարունակի զարգանալ ու խոր արմատներ ձգել ԱՄՆ-ում, քանի պետության ղեկավարները շարունակեն հետպատերազմյան շրջանի իրենց հակաժողովրդական արտաքին և ներքին քաղաքականությունը: Այս հանգամանքը նկատի ունենալով, «Երիտասարդ Հայաստանը» իր խմբագրականում, արդեն Մակարթիի մեռնելուց հետո, գրում էր. «Մակարթին մեռավ, սակայն տակավին կապրի իր հիմնած սուտի ու կեղծիքի, զրպարտության ու սարսափի, հերյուրանքի ու զրախոսության «վարդապետությունը»— մակարթիզմը: Իր կարճատև տիրապետությունը դժբախտաբար շատ խոր և շատ հեռու արմատներ նետեց Ամերիկյան հասարակության մեջ»[37]:

Միջազգային իմպերիալիզմի միջնաբերդ ԱՄՆ-ում գոյություն ունեցող վտանգավոր կացությունը մանրամասն վերլուծելով, հնչակյան մամուլը հստակորեն ցույց է տալիս, թե ուր է գնում կապիտալիստական հասարակարգը: Իմպերիալիստական պետությունները հեղինակազրկվել են, ժողովուրդները երես են թեքել նրանցից: Թույլ զարգացած պետությունների ժողովուրդներն անգամ, որոնք իբր թե ԱՄՆ-ից տնտեսական «օգնություն» են ստանում, նույնպես երես են թեքել իմպերիալիզմից: Հնչակյան մամուլը մեծ թվով հոդվածներ տպագրեց Նիքսոնի Հարավային Ամերիկայի երկրներ կատարած շրջագայության կապակցությամբ, շրջագայություն, որը

---

37 «Ծերակուտական Մակարթի և մակարթիզմ» (խմբագրական). «Երիտասարդ Հայաստան», 21 մայիսի, 1957:

մեծ խայտառակություն էր ԱՄՆ-ի հեղինակության համար[38]։

Իմպերիալիզմը, իհարկե, անմեղ գառան նման չի գնում դեպի սպանդանոց. նա ջանքեր է թափում փոխել պատմության երկաթե օրենքները։ Բուրժուազիան իր ձեռքի տակ եղած բոլոր միջոցներն ի սպաս է դրել առաջադիմական ուժերի դեմ մղվող պայքարին՝ ի փրկություն կապիտալիստական աշխարհի։ Իմպերիալիստական պետությունների ղեկավարները բազմաթիվ անգամ փորձեցին մասնակի միջոցառումներով փրկել իրենց հասարակարգը, խոստացան բարձրացնել ժողովրդի նյութական բարեկեցությունը, սակայն, ինչպես գրում է Հնչակյան մամուլը, այդ բոլոր խոստումները բխում են ոչ թե իրականությունից, այլ երևակայությունից, որովհետև աշխատավոր մասսաների դրությունը գնալով ավելի ու ավելի է վատանում[39]։

Ներքին քաղաքականության մեջ ոչ մի հաջողության չհասնելով, իմպերիալիզմը փորձում է այդ ձախողվածությունները լուծել արտաքին քաղաքականության միջոցով։ Արևմտյան լագերի ստեղծումը՝ բազմաթիվ բլոկներով և դաշնակցություններով, սառը պատերազմի հիստերիան, այս ու այն կողմ բռնկվող լոկալ պատերազմները, իրոք որոշ չափով թեթևացրին իմպերիալիզմի դրությունը, ժամանակավորապես փրկելով նրան կործանարար ճգնաժամից։

Սակայն մինչև ե՞րբ... Չէ՞ որ իմպերիալիզմի հակասությունները չեն լուծվել, ընդհակառակը, գնալով ավելի են սրվում։ Օրավուր խորանում են իմպերիալիստական պետությունների միջև գոյություն ունեցող հակասությունները։ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Արևմտյան Գերմանիայի, Ճապոնիայի և մյուս պետությունների միջև գոյություն ունեն անհաղթահարելի, չափազանց խոր հակասություններ։ Հետ-

---

38 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 16 մայիսի, 1958։

39 «Իրականություն թե երևակայություն» (խմբագրական), տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 5 հոկտեմբերի, 1956։

պատերազմյան շրջանի պատմության դասերը ակնառու կերպով այդ են վկայում[40]:

Վերլուծելով իմպերիալիզմի կողմից ստեղծված բլոկների և զինակցությունների միջև գոյություն ունեցող լուրջ հակասությունների հարցը, Հնչակը, Ֆրանսիայի կողմից եվրոպական բանակի ծրագիրը առաջին անգամ մերժելու առթիվ գրում էր. «Ահա այսպես կոկարանա արևմտյան ճակատը: Դրամատիրության և գաղթապետությունների դաշինքները չեն կրնար տևական ըլլալ...»[41]: Հետագայում, ԱՄՆ-ի ճնշման տակ, Ֆրանսիան հարկադրված եղավ ընդունել Եվրոպական բանակի ծրագիրը, բայց դա չփոխեց դրությունը. չէ՞ որ հակասությունները կան և գնալով ավելի են սրվում:

Ընկած խորը, անլուծելի հակասությունների մեջ, ԱՄՆ-ը՝ միջազգային իմպերիալիզմի միջնաբերդը, միակ ելքը տեսնում է ջերմամիջուկային, հրթիռային և ժամանակակից այլ զենքերով զինվելու մրցավազքի, աշխարհը բլոկներով ու զինակցություններով ցանցապատելու մեջ:

Ահա թե ինչպես է գնահատում ԱՄՆ-ի գործունեությունը Հնչակյան կուսակցությունը. «Բոլոր ձեռնարկները, որ Արևմըտյան բլոկը կհղանար և կիրագործեր, փաստապես Ամերիկայի քաղաքական և տնտեսական ազդեցությունը զորացնելու կձգտեին:

Այդ նպատակով ստեղծվեց Ատլանտյան ուխտը և անոր հոգեզավակը՝ Փարիզյան համաձայնությունները. միևնույն նպատակով էր, որ ծնունդ առվեցավ Հարավ-Ասիական դաշինքին, որուն հաջորդեց նաև Անկարա-Բաղդադ նոր համաձայնությունը:

Եթե մտովին երևակայենք աշխարհագրական քարտեզ մը, պիտի տեսնենք, որ Եվրոպայի ատլանտյան ափերեն

40 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 21 հունվարի, 1958, նույնը՝ 2, 6 նոյեմբերի, 1956: «Արարատ», 2 նոյեմբերի, 1956, նույնը՝ 12, 14 ապրիլի, 1953, նույնը՝ 13 օգոստոսի, 1958:

41 Մ. Արևելցի, Դաշնակիցներու միջև, «Երիտասարդ Հայաստան», 1 հոկտեմբերի, 1954:

սկսելով, Ամերիկա ցանուցան դաշինքներով, համաձայնություններով և պայմանագրություններով օղակած է ամբողջ Սովետական Միությունը և իր դաշնակից երկիրները։ Այդ դաշինքներուն հիմքը կկազմե, ամենեն ավելի և ամենեն առաջ, իր շղթային օղակները կազմող բոլոր երկրները զինել և ցանոնք վերածել զինվորական մարտկոցներու, հոն հաստատելով զինվորական օդակայաններ, նավահանգիստներ, ռազմանյութի պահեստարաններ և այլն»[42]։

Արևմտյան բլոկը գործում է «խաղաղ» միջոցներով, բայց այնտեղ, որտեղ «խաղաղ» միջոցները չեն օգնում, նա անմիջապես դիմում է պատերազմի, ինչպես կատարվեց Կորեայում և Վիետնամում[43]։

Երկրի արտաքին քաղաքականությունը սերտորեն կապված է ներքինի հետ։ Պետության գլուխ կանգնած են խոշոր բուրժուաները կամ էլ նրանց շահերի պաշտպանները։ Հնչակյան թերթերը, օրինակ, անդրադառնում են Ալեն Դալեսի և Նելսոն Ռոկֆելլերի կապերին և հավանություն տալիս տարածված այն կարծիքին, որ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունից նավթի հոտ է փչում[44]։

Ամերիկյան իմպերիալիզմը կարծում է, գրում է հնչակը, թե զինվելու քաղաքականությամբ հնարավոր կդառնա.

1. «Ընդլայնել և ապահովել իր ֆինանսական կայսրության շահագործման շուկաները։

2. Իր գլխին հեռացնել տնտեսական ճգնաժամը՝ նվազագույն չափի վրա պահելով անգործներու պահեստի բանակը»։

3. ՍՍՌՄ-ին ևս հարկադրել զինվել, որպեսզի նրա տնտեսական առաջշարժումը դանդաղի[45]։

---

42 Մ. Արևելցի, *Ազդեցության պայքարը*, «Երիտասարդ Հայաստան», 15 նոյեմբերի, 1955։

43 «Արևմտյան պլոքը ինչու կփորձի զինել ուժի քաղաքականության», տե՛ս «Արարատ», 6 սեպտեմբերի, 1956։

44 «Ռոկֆելլերի և Դալլեսի զույգերը», «Արարատ», 12 հունվարի, 1960։

45 «Արարատ», 14 օգոստոսի, 1958։

*Քաղաքականությամբ չկուրացած ամեն մի քաղաքացի, առանց դժվարության, կարող է նկատել, որ ԱՄՆ-ի նմանօրինակ քաղաքականությունը լիովին ձախողվել է:*

*Մտորելով մարդկության զարգացման ժամանակակից էտապի հեռանկարների շուրջը, հնչակը գրում է. «Աշխարհը հիվանդ է ու կատաղի, ռամկավարական կարգադրությունները՝ թմրադեղեր և ասպիրինի դեղահատներ են՝ որոնք առժամյա մեղմացում մը կբերեն, բայց բուն հիվանդությունը չեն բուժեր:*

*Մարքսիզմը արմատական և վերջնական բուժումն է այդ ընկերային քաղցկեղին, որ կիրարկվեցավ առաջին անգամ Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխությունով, աշխարհի մեկ վեցերորդին վրա, որուն շրջագծին մեջ ինկավ բարեբախտաբար մեր փոքրիկ Հայաստանն ալ»[46]:*

Ելնելով միջազգային զարգացման արդի փուլի հրատապ, կենսական հարցերի լուծման անհրաժեշտության տեսանկյունից, մենք, լավ հասկանալով հնչակյան մանրբուրժուական սոցիալիզմի էությունը, պետք է ողջունենք այդ կուսակցության պայքարի խիստ ընդգծված հակաիմպերիալիստական բնույթը, որը լիովին համապատասխանում է մարդկության առաջադիմության շահերին:

*Սփյուռքահայ գաղութներում ծավալված քաղաքական պայքարում հետադիմական ուժերի դրոշակակիրը հանդիսանում է դաշնակցություն կուսակցությունը, որը ջանքեր է թափում պառակտելու հայկական դեմոկրատական ճակատը, առաջադիմական կազմակերպությունները, նրանց համախմբել իր շուրջը՝ սոցիալիզմի լագերի դեմ պայքարելու համար:*

*Սփյուռքահայ քաղաքական կյանքում չկա հետադիմական մի շարժում, դավադրական, ազգադավ մի գործ, որը կապված չլինի դաշնակցության գործունեության հետ:*

*Այն ժամանակ, երբ հայ սփյուռքը ապրում է իր կյանքի ամենակրիտիկական շրջաններից մեկը, երբ զրկված է նրա լի-*

46 «Արարատ», 25 նոյեմբերի, 1945:

*նելու և չլինելու հարցը, երբ ավելի ու ավելի անհրաժեշտ է դառնել բոլոր ուժերը համախմբելը և դրանք գաղութների գոյատևման խնդրին ի սպաս դնելը՝ մինչև ներդաղթի պրոբլեմի վերջնական լուծումը, դաշնակցությունը, ինչպես ասել ենք, պառակտում է հայ գաղութը, եկեղեցին, բարեգործական, մարզական և կրթական միությունները, և դրանով իսկ ավելի ու ավելի թուլացնում սփյուռքահայ գաղութները, կրճատում նրանց գոյատևման հնարավորությունները:*

*Ինչպես վերը նշեցինք, սփյուռքի հայկական առաջադիմական ուժերը, բացի հայության հարատևման համար թափած ջանքերից. մեծ պայքար են մղում խաղաղության, դեմոկրատիայի և առաջադիմության համար, իսկ դաշնակցությունն, ընդհակառակը, հանդես է գալիս վերահիշյալ կենսական խնդիրների լուծման դեմ: Սփյուռքահայ մյուս առաջադիմական կազմակերպությունների նման հնչակը ևս իր գործունեության ընթացքում հետևողական պայքար է ծավալել դաշնակցության դեմ, ցույց տալով այդ կուսակցության սնանկությունը՝ թե՛ տեսական և թե՛ գործնական բնագավառներում: Հնչակյան մամուլում լույս են տեսնում բազմաթիվ հոդվածներ, որոնցում հիմնովին մերկացվում է դաշնակցության անցյալ և ժամանակակից քաղաքականությունը:*

*Դաշնակցությունն ընթանում է սխալ ուղիով, նա կտրել է կապերը հայ ժողովրդի հետ և վերածվել իմպերիալիզմի վարձկանների, ու արդիականության բոլոր հրատապ հարցերի լուծման դեմ պայքարում է դաշնակցած հետադիմական ուժերի հետ: Սփյուռքահայ իրականության մեջ այդ կուսակցությունը միակ ուժն է, որը, կորցրած իր բարոյական նորմաները, հանդես է գալիս խաղաղության դեմ, խաղաղության թշնամիների կողքին:*

*Հնչակյան մամուլը հետպատերազմյան ժամանակաշրջանում բազմիցս հանդես է եկել փաստալից հոդվածներով, որոնցում, առանց կասկածի տեղ թողնելու, ցույց է տրված, որ ժամանակակից դաշնակցությունը անխզելիորեն կապված է միջազգային իմպերիալիզմի հետ, վերածվել է վերջինիս հին-*

*դերորդ զորայան և չնայած որպես քաղաքական կուսակցություն իրենից ոչինչ չի ներկայացնում, բայց, այնուամենայնիվ, իր ուժի ներածին չափ աշխատում է խափանել խաղաղության մեծ գործի համար մղվող պայքարը։ «Խաղաղության թշնամիների կողքին,— գրում են հնչակյանները,— դաշնակցությունն էլ՝ գրաված ունի իր աչքառու տեղը, միշտ հուսալով, որ միջազգային դեպքերը մեկ օրեն մյուսը կպահավիժեն և իր առջև լայն հնարավորություններ կբացվեն կատարելու համար իր հակամարդկային և հակահայկական աշխատանքները»[47]։*

*Դաշնակցությունը դեմ լինելով խաղաղությանը, աջակցելով պատերազմի հրձիգներին և ձայնակցելով իմպերիալիզմի պրոպագանդիստական մեքենային, միաժամանակ մեղադրում է Սովետական Միությանը, թե իբր նա դեմ է խաղաղությանը։ Հնչակը քողազերծելով դաշնակցության խարեությունները, ցույց է տալիս, որ ժամանակակից աշխարհում միայն Սովետական Միությունն է, որ անցած սոցիալիստական լագերի գլուխը՝ անկեղծորեն պայքարում է խաղաղության համար։ Սովետական Միությունը խաղաղության համար մղվող պայքարի դրոշակակիրն է։ Դաշնակցության գործունեությունը չի կարող թյուրիմացության մեջ գցել սփյուռքահայությանը, որովհետև վերջինիս համար, իր դառն պատմության շնորհիվ «...խաղաղությունը դարձավ որպես հազվագյուտ գանձ, տեսակ մը կապույտ թռչուն»[48]։*

*Եթե խորը տարաձայնություններով լի ժամանակակից աշխարհի հակասությունները չլինեին, դաշնակցությունը վաղուց լուծարքի ենթարկված կլիներ։ Խաղաղ գոյակցության պայմաններում դաշնակցությունն անելիք չունի։ Միջազգային դրության լարվածությունն ու երկնակամարում պատերազմի մահաբեր ամպերի առկայությունն են, որ սնունդ են*

47 Ս. Սիմոնյան, *Խաղաղության կողմնակիցները և թշնամիները. «Երիտասարդ Հայաստան», 9 սեպտեմբերի, 1955։*

48 *«Խաղաղության դրոշին տակ», «Երիտասարդ Հայաստան», 24 դեկտեմբերի, 1957։*

տալիս դաշնակցությանը և երկարացնում նրա կյանքը։ Եթե աշխարհում խաղաղությունը հաղթանակի, ապա ի՞նչ պետք է անի դաշնակցությունը, ի՞նչով պետք է զբաղվի, հեգնանքով հարց է տալիս «Արարատը»[49]։

Հնչակի և դաշնակցության գործունեությունը արդի պայմաններում ընթանում է հակադիր ուղղություններով։ Առաջինը գտնվում է առաջադիմության լագերում, երկրորդը՝ ռեակցիայի։ Այդ երկու կուսակցությունների միջև հակասությունները չափազանց խորն են, իսկ համագործակցությունը՝ անհնարին։

Անդրադառնալով դաշնակցության հետ համագործակցության անհնարինության հարցին, Հնչակը գրում է. «Մենք ըսեր ենք և պետք է կրկնենք, որ հայ ժողովուրդը գտած է իր շահերուն, իր աշխարհագրական դիրքին և քաղաքական պայմաններուն համապատասխան ճամբան։ Ան կեցած է և կենալու է ռուս մեծ ժողովուրդին հետ։

Հայաստանի մեջ ապրող ժողովուրդը ինքն է, որ տեսած, համոզված և զգած է այդ քաղաքականությունը, ահավոր տառապանքներու և կործանման վտանգներու միջեն անցնելով, ստացած դառն փորձություններուն միջոցով։

Ահա, իրարմե բևեռ-բևեռ հեռու եղող տեսակետներու այս տարբերություններով դաշնակցությունը ինչպես կակըն-կալե իրեն հետ համագործակցություն, միասնականություն, երբ ինքը կաղոթե և կբաղձա միջազգային նոր պատերազմի սկսման, իսկ մենք՝ խաղաղության, ազգերի համագործակցության։

Ի՞նչպես սա կակնկալե միասնականություն, երբ ինքն իսկ պառակտած է գաղութահայությունը, ստեղծելով առանձին եկեղեցի, առանձին գոյավիճակ։

Ի՞նչպես կակնկալե միասնականություն, երբ կուրախանա Թուրքիո, Պաքիստանի, Իրաքի և Իրանի սպառազինումներովը, իսկ մենք՝ այդ կը նկատենք շատ վտանգավոր երե-

[49] «Դաշնակցությունն անելիք ունի՞ երբ խաղաղությունը հաղթանակած է», «Արարատ», 3 օգոստոսի, 1955։

վույթ, Պան-Իսլամիզմի, Պան-Թուրանիզմի կայսրության հին ծրագրիներու իրականացման նախաքայլ»[50]։

Ահա թե ինչպիսի անհատակ անդունդ է ընկած դաշնակցության և հնչակի միջև։

Հնչակյան կուսակցությունը հայ առաջադիմական ուժերի հետ միասին ջանքեր է թափում միասնական ճակատը ամրապնդելու, հայերի գոյատևումը ապահովելու, խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարը ծավալելու ուղղությամբ։

Ի դեպ, անհրաժեշտ է աչքաթող չանել նաև այն, որ Հընչակի նշանաբանն է «Միշտ խորհրդային Հայաստանի հետ, միշտ Էջմիածնի հետ»։ Ով դեմ է Սովետական Հայաստանին, դեմ է Էջմիածնին, նա դեմ է հնչակին, միշտ շեշտում են այդ կուսակցության թերթերը։

Պայքարը հնչակի և դաշնակցության միջև գնալով ավելի ու ավելի ծավալվում է։ Դաշնակցությունը գործ է դնում բոլոր հնարավոր միջոցները՝ քայքայելու սփյուռքահայ առաջադիմական ուժերի ազգային ճակատը։ Սակայն այդ հարցում նա ոչ մի հաջողության չի կարողացել հասնել։ Այդ ճակատը գնալով ավելի ու ավելի ամրապնդվում է։

Հնչակյան կուսակցությունը սփյուռքահայ գաղութների ամենակատաղի թշնամին համարում է դաշնակցությանը, որը իր կուսակցական շահերից ելնելով, ընդունակ է հրի ու սրի մատնելու Հայաստանը։ Հնչակը տարիներ ի վեր համառ ու հետևողական պայքար է մղում դաշնակցության դեմ, որպես խաղաղության և դեմոկրատիայի կատաղի թշնամու։

Դաշնակցության նպատակն է, ինչ գնով էլ լինի, իմպերիալիզմի աջակցությամբ, գրավել Սովետական Հայաստանը և վերահաստատել իր տիրապետությունը։ Հնչակը խստորեն քննադատում է դաշնակցության քաղաքականությունը, ցույց տալիս, որ այն կործանարար է հայ ժողովրդի համար. նա

50 «Տխուր հակասություններ» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 19 մարտի, 1954։

հատկապես հենվում է իմպերիալիզմի հետ կապված այդ կուսակցության հույսերը:

Կար ժամանակ, երբ հայ ժողովուրդը իր ազգային ազատության հույսը այս կամ այն չափով կապում էր իմպերիալիստական պետությունների հետ: Դրանք ծանր և արյունալի տարիներ էին: Սակայն նման հույսերը հօդս ցնդեցին, և մնաց դաժան իրականությունը... մասնատված, բզկտված և արյունլվա Հայաստանը: Իսկ իմպերիալիստական պետությունների ղեկավար գործիչների հայասիրական ճառերը այժմ էլ մնում են որպես բնորոշիչ փաստաթղթեր բուրժուական փարիսեցիության:

«Եվրոպական իմպերիալիստ պետություններեն ո՞ր մեկը կհամարձակվի,— գրում է Ա. Կիտուրը,— Պիղատոսի պես գոնե ձեռքերը լվանալ և ասել՝ «մասնակից չեմ հայկական կոտորածներուն»[51]: Հրապարակված են բազմաթիվ փաստաթղթեր, որոնք անհերքելիորեն վկայում են միջազգային իմպերիալիզմի մասնակցությունը հայկական կոտորածներին՝ XX դարի ամենաահավոր ոճրագործություններից մեկին: Որոշ իմպերիալիստական պետությունների ղեկավարներ կարող են ասել, որ իրենք չեն մասնակցել ջարդերին, բայց մի՞թե թողտվության քաղաքականությունը համազոր չէ ոճրագործության:

Դեռ ավելին. ժամանակակից քաղաքակրթության նորմաները մի՞թե ամենափոքր իսկ արդարացում կարող են գտնել այն կապիտալիստական պետությունների համար, որոնք ոսկե լեռներ խոստանալով, վճռական պահին հայ ժողովրդին թողեցին բախտի քմահաճույքին: Պատմությունը այդպիսիների համար արդարացում չունի: Չէ՞ որ ոչ միայն գազանային սպանդի ենթարկված մոտ երկու միլիոն հայերի, այլև Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված ավելի քան 30 միլիոն քաղաքացիների արյան պատասխանատվու-

[51] Ա. Կիտուր, Գերմանիան Թուրքին չափ մեղսակից է մեր դժբախտության, «Երիտասարդ Հայաստան», 21 հունիսի, 1955:

թյունը ընկնում է նույն իմպերիալիստական պետությունների քաղաքականության վրա։

Իմպերիալիստական պետությունների ղեկավարների կեղծիքով լի հայտարարությունները այսօր արդեն ի վիճակի չեն խաբելու և թյուրիմացության մեջ գցելու ժողովուրդներին և նրանց հասարակական, քաղաքական, առաջադիմական կազմակերպություններին, որոնք պատմական դառն փորձով հասել են իմպերիալիզմի դիշատիչ քաղաքականության ճիշտ ըմբռնմանը։

«Ինչ որ այսօր Արևմտյան կամ եվրոպական դիվանագիտությունը կպաշտպանե,—ասվում է Հնչակյան թերթի խմբագրականում,— կամ կջատագովե ազատություն խղճի, մտքի, մարդկային էության, ժողովուրդների — ջատագոված է, պաշտպանված է, աղերսած է, դարեր շարունակ, հայ ժողովուրդը, նույն դիվանագիտության մեծագույն զոհը։

Նոր սերունդ մի մոռանար այս դառն իրողությունը»[52]։

Հնչակյան գործիչները, համապատասխան դասեր քաղելով պատմության դառն փորձից, զգուշացնում են նոր սերունդին, որպեսզի վերջինս զգոն լինի և զոհ չդնա իմպերիալիզմի դիվանագիտական խաղերին։

Մի՞թե դաշնակցականները չգիտեն այդ բոլորի մասին։ Գիտեն, շատ լավ գիտեն, բայց հարցը նրանումն է, որ այդ կուսակցության գործիչները իրենց անձնական շահերը վեր են դասում ժողովրդի շահերից։ Քաղաքականապես և բարոյապես սնանկացած միայն ամենահակաժողովրդական կուսակցությունն է ի վիճակի այդպիսի ազգադավ գործունեության։

Հնչակյան կուսակցությունը գտնում է, որ դաշնակցությունն իր ուժերը լիովին նվիրաբերել է իմպերիալիզմի շահերին, մոռացել ազգային շահերը և կուսակցական մոլուցքով կուրացած՝ պատրաստ է թուրքական իմպերիալիստների հետ միասին հրի ու սրի մատնել մայր Հայաստանը, միայն թե ոչնչացվեն բոլշևիկները։ Հնչակը, ելնելով դաշնակցության

52 «Մեծագույն զոհը արևմտյան դիվանագիտության» (խմբագրական «Մասիսի»), «Երիտասարդ Հայաստան», 22 ապրիլի, 1955։

*ժամանակակից քաղաքականության բազմակողմանի, մանրակրկիտ վերլուծությունից, գալիս է այն ճիշտ հետևության, թե «այսօրվան բյուրոյական դաշնակ ղեկավարությունը դարձած է օտար դրամատիրության լրտեսական գրասենյակի հնանյալ ծառայող մը»*[53]*:*

*«Արարատի» միտքը ավելի կոնկրետացնում է «Երիտասարդ Հայաստանը»: «Հայ հեղափոխական դաշնակցությունը, օտարի ծառայությունը դարձնելե ետք իր գոյության հիմնական իրավունքը, հաճախ տեր ու դավանանք է փոխած, միջազգային շուկաներու վրա ինքզինք հանելով աճրդի՝ ապասարկած է առավելագույն վճարողին: Ծառայած է Թուրքին, ապա նացի Գերմանիային, ավելի ետք՝ անգլիական «Ինթելիճընսին» և վերստին Թուրքին: Եվ վերջապես հայրենադավ «տասնապետ» Դրոյի և տխրահռչակ «Պարոն հանգուցյալ»-ի կյանքի վերջին տարիներուն՝ ամերիկյան «Ինթելիճընսին»*[54]*:*

*Միանգամայն իրավացի է Հնչակը, որ 1920 թ. հետո դաշնակցության պատմությունը տարբեր իմպերիալիստական պետությունների հետախուզական գործակալություններին ծառայելու պատմություն է: Դաշնակցություն կուսակցության ապագա բարեխիղճ պատմաբանը նրա 1920 թ. հետո ընկնող շրջանի պատմությունը իրավամբ կբաժանի տարբեր երկրների հետախուզություններին ծառայելու ժամանակաշրջանների:*

*Դաշնակցության ֆինանսական միջոցների հայթայթման հիմնական աղբյուրը մնում է միջազգային իմպերիալիզմը, որը վճարում է միայն հակադեմոկրատական և հակակոմունիստական գործունեության համար: Եվ դաշնակցությունը լիովին պաշտպանում է իմպերիալիզմի քաղաքականությունը:*

*Այդ նկատի ունի Հնչակյան մամուլը, երբ գրում է, որ իրենց ազգային գաղափարի ջատագով համարող դաշնակցա-*

---

53 *«Հայ կուսակցական կյանքի մասին» (խմբագրական), «Արարատ», 17 ապրիլի, 1955:*

54 Ն. Նաճարյան, *Դաշնակցությունը կը վաճառե Մերձավոր Արևելքի հայությունը, «Երիտասարդ Հայաստան», 6 դեկտեմբերի, 1957:*

կաններն այժմ հանդես են գալիս Տրումենի դոկտրինայի և իմպերիալիզմի պաշտպանների դերում[55]։ Հնչակը մերկացնում է դաշնակցական «Ասպարեզ» թերթում հրապարակված «Տրումենի վարդապետությունը» խորագրով հոդվածաշարքը, որտեղ խեղաթյուրվում է Սովետական Միության քաղաքականությունը և հայտարարվում, թե «ամերիկյան իմպերիալիզմի գործողությունները մենք արդարացնում ենք»[56]։ Հնչակյաններին քննադատությունից չի վրիպում նաև այն փաստը, որ ծառայելով իմպերիալիզմին՝ դաշնակցությունն աղմուկով ողջունեց Հյուսիս-Ատլանտյան պակտը[57]։

Հնչակյան գործիչները բացահայտում են ոչ միայն դաշնակցության ժամանակակից քաղաքականությունը, այլև նրա անցած ամբողջ պատմական ուղին։ Լավ ծանոթ լինելով հայ ժողովրդի XIX դարի և նրան հաջորդած ժամանակաշրջանի պատմությանը, հնչակը մինչև վերջ մերկացնում է այդ շրջանի պրոբլեմների՝ դաշնակցության կողմից կատարվող կեղծարարության փորձերը։ Եթե մինչև 1920 թվականին ընկնող ժամանակաշրջանի վերլուծության հարցերում մենք ունենք լուրջ տարակարծություններ հնչակների հետ, ապա այդ նույնը չի կարելի ասել Հայաստանում սոցիալիստական շինարարության պատմության դաշնակցական կեղծարարությունների հնչակյան մերկացումների մասին։

Խորանալով դաշնակցության գաղափարախոսության և պրակտիկ գործունեության ուսումնասիրության հարցերում, հնչակյան գործիչները գալիս են այն եզրակացությանը, որ այդ կուսակցությունը կտրված լինելով մայր ժողովրդից, հրաժարված ազգային խնդիրներից, ապրում է իր հոգեվարքի վերջին շրջանը։ Ավելի ճիշտ, այն խումբը, որը իրեն անվանում է «դաշնակցություն», դադարել է հայկական կուսակցու-

55 Մ. Սիմոնյան, Թուրք հետադիմականների հետ նույն ճակատի վրա, «Արարատ», 15 հունիսի, 1950։

56 «Ասպարեզ», 11 ապրիլի, 1947։

57 Տե՛ս «Հայրենիք», 15 հուլիսի, 1949։ «Արարատ», 15 հունիսի, 1950։

թյուն լինելուց և վերածվել է իմպերիալիզմի լրտեսական ցանցի։ «Պյուրոյական վերջին դավը (խոսքը Սիրիայում հայտնաբերված լրտեսական ցանցի մասին է—Լ. Խ.) եկավ միանգամայն հաստատելու, որ այս կազմակերպությունը դադրած է հայ ժողովրդին հիմնական շահերին թելադրված քաղաքականություն մը վարելու։ Հայրենասիրություն և ազգասիրություն քողեր են պարզապես, որոնք կը ծառայեն վարագուրելու Պյուրոյին ենթակայությունը օտար (ԱՄՆ) գաղտնի սպասարկությանց»[58],— գրում է «Արարատը», միաժամանակ ընդգծելով, որ բյուրոյականների կապը օտար պետությունների սպասարկությունների հետ այսօրվա պատմություն չէ և իր ակունքները առնում է այն շրջանից, երբ դաշնակցությունն իր ճակատագիրը կապեց Արևմուտքի ճակատագրին, ֆինանսավորվելով նրա կողմից, գործելով նրա հրահանգներով և մասը կազմելով նրա խափանարարական, լրտեսական ու ահաբեկչական կազմակերպությունների։

Մակարտիի և մակարտիզմի մասին, ինչպես վերը նշեցինք, հնչակյան կուսակցությունը միանական կարծիք ունի, այսինքն այն, որ դա ԱՄՆ-ի ֆաշիզացման ուղին է։ Հայտնի է, որ Մակարտին իր բոլոր հակառակորդներին մեղադրում էր բոլշևիզմի մեջ։

Սփյուռքահայ գաղութներում նույն դերը կատարում է դաշնակցությունը, որը ավելի վատթար միջոցներ է գործադրում Հայաստանի բարեկամներին և հայ կուսակցություններին՝ հայերին հյուրընկալող երկրների կառավարությունների աչքում կասկածի տակ առնելու համար։ Դաշնակցությունն ամենուրեք տարածում է այն կեղծիքը, թե սփյուռքահայ առաջադիմական ուժերը կոմունիստների գործակալներն են, Սովետական Միության «հինգերորդ զորասյունը»։

Դաշնակցականները շատ հաճախ հայ առաջադիմական ուժերին վախեցնելու համար գրում են, որ Հայաստանը սիրելը լավ է, բայց վտանգավոր, որովհետև աչնանեղ սովետական

58 «Երիտասարդ Հայաստան», 8 հունիսի, 1954. 10 սեպտեմբերի, 1954։

կարգեր կան, որին հակառակ է ԱՄՆ-ը: Նրանք խորհուրդ են տալիս՝ չտոնել Նոյեմբերի 29-ը, չգովաբանել Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումները՝ կասկածելիների շարքը չդասվելու համար: Հնչակյան կուսակցությունը մշտապես հակահարված է տալիս դաշնակցության սպառնալիքներին և «բարեկամական» խորհուրդներին, հերքելով նրանց կեղծիքները և պատասխանելով, որ «մենք ձեր խրատին պետք չունենք»[59]:

Դաշնակցությանը թվում է, որ եթե պրովոկացիայի և մատնության միջոցով հայ հասարակական-քաղաքական ուժերը պառակտվեն, թուլացվեն, ապա սփյուռքահայ մասսաները կգնան իր հետևից: Ինչպիսի՜ ինքնախաբեություն: Դաշնակցության ժամանակակից ղեկավարները չեն ուզում հասկանալ այն տարրական ճշմարտությունը, որ սփյուռքահայ լայն զանգվածները երբեք չեն հետևի իրենց ազգավնաս քաղաքականությանը: Վերոհիշյալը կարող է կատարվել միայն այն դեպքում, եթե դաշնակցությունը հրաժարվի իր այժմյան քաղաքականությունից և հարի առաջադիմական լագերին: Բայց չէ՞ որ հրաժարվել այդ քաղաքականությունից՝ նշանակում է հրաժարվել հակասովետական գործունեությունից: Իսկ դաշնակցության ղեկավարները, իհարկե, ոչ մի գնով չեն ցանկանում հրաժարվել դրանից: Բայց, եթե ղեկավարները չեն ցանկանում հրաժարվել իրենց ազգավնաս, հետադիմական գործունեությունից, ապա դաշնակցության շարքային շատ անդամներ դուրս են գալիս կուսակցության ղեկավարության արդի քաղաքականության դեմ: Կուսակցության մեջ տեղի են ունենում լուրջ խմորումներ:

Դաշնակցության շարքային անդամների մի մասը համոզվելով ղեկավարների ոչ ճիշտ քաղաքականության մեջ, հեռանում է կուսակցությունից, իսկ մյուս մասը դեռևս հավատալով դաշնակցության հին սերնդի երեմնի քարոզած իդեալներին, դուրս է գալիս բյուրոյականների դեմ, կոչ անե-

59 «Դաշնակ պյուրոյի քաղաքականության սնանկության վերահաստատումը» (խմբագրական), «Արարատ», 5—9 օգոստոսի, 1961:

*լով հրաժարվել ներկա կործանարար քաղաքականությունից և անցնել կուսակցության հիմնադիրների քարոզած վարդապետության դիրքերի պաշտպանությանը։*

*Հնչակյան կուսակցությունը մեծ ուշադրություն է դարձնում դաշնակցության շարքերում տեղի ունեցող խմորումներին, որոնք այդ կուսակցության օրգանիզմում գոյություն ունեցող անբուժելի ախտի բնորոշ նշաններն են։ Հնչակյան մամուլը զգալի աշխատանք է տանում խորացնելու դաշնակցության շարքերում տեղի ունեցող խմորումները, ավելի շուտ հասնելու այդ կուսակցության լիկվիդացմանը։*

*Այդ նպատակով հնչակյան գործիչները մամուլի միջոցով փորձ են անում դաշնակցության շարքերը մտած, մոլորության մեջ գտնվող աշխատավորների աչքերը բանալ, նրանց բացատրել ժամանակակից կյանքում տեղի ունեցող հասարակական բարդ երևույթները, բացահայտել և հասկացնել բյուրոյականների կործանարար քաղաքականության էությունը։*

*«Մտերիմ զրույց դաշնակ աշխատավոր շարքայիններու հետ» խորագրով հոդվածում «Արարատը» գրում է. «Դաշնակ աշխատավոր շարքայինները, անոնք որոնք օրն ի բուն կաշխատին օրապահիկ մը շահելու համար, անոնք որոնք հազիվ չոր հացի մը, սենյակի մը վարձքը վաստակելու կարելիությունը ունին, այդ դաշնակ շարքայինները միանգամ ընդմիշտ լավ պետք է գիտնան, թե իրենց շահերն ու ձգտումները բոլորովին տարբեր են՝ իրենց շեֆերուն շահերեն»[60]։ Դաշնակցության շարքերում ընդգրկված աշխատավորները շահերի ոչ մի ընդհանրություն չունեն բյուրոյականների հետ, այդ պատճառով էլ նրանք պետք է թոթափեն «ավազակներու այդ լուծը» և միանան իրենց շահերը պաշտպանող կազմակերպություններին և կուսակցություններին»[61]։*

*Նկատի ունենալով այն, որ դաշնակցության բազմաթիվ*

60 *«Մտերիմ զրույց դաշնակ աշխատավոր շարքայիններու հետ», «Արարատ», 11 մայիսի, 1956։*

61 *Նույն տեղում։*

շարքային անդամներ այդ կուսակցության մեջ են մտել խաբըվելով բյուրոյականների՝ հայկական դատի օգտին գործած բարբաջուն ֆրազաբանությունից, հնչակյան գործիչները դիմում են դաշնակցական շարքայիններին, համառոտ համոզմունք հայտնելով, որ նրանք պահված են «մութի մեջ» և «մոլորված», քանի որ ճիշտ պատկերացում չունեն բյուրոյականների իսկական քաղաքականության մասին։ «Շարքայիններ,— գրում է հնչակը,— տեղին չէ ձեզի սա հարցը տալ թե՞ ինչո՞ւ համար միացաք դաշնակցության։ Այն սրբազան նպատակը, որուն համար դուք ուխտեցիք մինչև անգամ զոհել ձեր թանկագին կյանքը, բյուրոն զայն վաղուց թաղեր է և անոնց հետ նաև ձեր երազած Թուրքահայաստանի դատը»[62]։

Սփյուռքահայը պետք է կապված լինի մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ, ընդունի այն և իր բախտը կապի միայն և միայն նրա հետ։ Առանց մայր երկրի փաստորեն չկա գաղութահայություն, քանի որ վերջինիս գոյատևումը պայմանավորված է Սովետական Հայաստանով։

Ցույց տալով, թե որն է սփյուռքահայության փրկության ճշմարիտ ուղին, հնչակը դիմելով դաշնակ շարքայիններին, գրում է. «Ե՞րբ ձեր աչքերը պիտի դարձնեք դեպի Արարատ։ Ե՞րբ պիտի հպարտանաք ձեր հայությամբ։ Ե՞րբ ձեր հոգիները հրճվիլ պիտի սորվին Հայաստանյան երգերով, Հայաստանյան շարժանկարներով, Հայաստանյան պարերով, հայ ժողովրդի սքանչելի վերելքով և անոր արևաշող գալիքով»[63]։

Հնչակյանները իրենց գործունեության ընթացքում մշտապես զբաղվում են բյուրոյականների ազգավնաս գործարքների մերկացմամբ։ Այդ տալիս է իր դրական արդյունքը։ Դաշնակցության շարքային անդամները, կարդալով առաջադիմական մամուլում բյուրոյականների գործունեությունը մերկացնող փաստաթղթեր և հոդվածներ, կամ հեռանում են այդ

62 «Դաշնակցական շարքայիններուն», «Երիտասարդ Հայաստան», 24 փետրվարի, 1956։

63 Հ. Գույումճյան, Մտերիմ խոսակցություն դաշնակ շարքայինների հետ, «Երիտասարդ Հայաստան», 3 մայիսի, 1957։

*կուսակցությունից, կամ էլ դուրս գալիս նրա ղեկավարության կործանարար քաղաքականության դեմ։ Երկու դեպքում էլ շահում են առաջադիմական ուժերը, խաղաղության և դեմոկրատիայի համար պայքարող մարտիկները։*

*Դեռևս 1954 թ. անդրադառնալով դաշնակցության շարքերում ծավալված հակաբյուրոյական շարժումներին, «Արարատը» «Ջատ զատ, բայց միասին» խորագրով խմբագրականում գրում էր. «Դաշնակցական երիտասարդության մեջ առողջարար խմորում մը առաջ եկած է։ Կը մաղթենք որ ան հանգի հստակ բյուրեղացումի մը»[64]։ Թերթը նկատի ուներ «Ազդարարի» 1954 թ. հուլիսի 15-ի համարում հրատարակված մի խումբ դաշնակցականների բողոքը Նավասարդյանի «կլիկի» դեմ։ Ելնելով բյուրոյականների ազգադավ գործունեության փաստերի վերլուծությունից, վերոհիշյալ խումբը զայրանում է, որ Հայաստանը առ ու ծախի առարկա է դարձել բյուրոյականների և միջազգային իմպերիալիզմի միջև։*

*Բյուրոյականներից դժգոհները, որոնք դեռևս շարունակում են կանգնած մնալ դաշնակցության հիմնադիրների տեսակետների պաշտպանության դիրքերում, ավելի լրջորեն են նայում կյանքի երևույթներին, չնայած հարցի լուծման բնագավառում մինչև վերջ չեն գնում։ Նրանք չեն քննադատում Սովետական Հայաստանը, խանդավառվում են մեր հանրապետության ձեռք բերած հաջողություններով և արկածախնդրություն ու հիմարություն են անվանում Հայաստանի դեմ գործելը, հայտնելով այն միտքը, որ Հայաստանը պետք է լինի Ռուսաստանի հետ, ինչ ռեժիմ էլ տիրապետի այնտեղ։*

*Բնական է, որ դաշնակցության շարքերում տիրող քաոսը և խմորումները այդ կուսակցության ներքին, անբուժելի ախտի բնորոշ նշաններն են։ Ինչ վերաբերում է դժգոհներին, ապա նրանք վաղ թե ուշ կհասկանան, որ իրենք գտնվում են դեպի ճշմարտությունը տանող կես ճանապարհին։*

*Դաշնակցությունից հեռացած շարքայինները հանդես են*

---

*64 «Ջատ զատ, բայց միասին» (խմբագրական), «Արարատ», 18 հուլիսի, 1954։*

գալիս առաջադիմական մամուլում և դիմակազերծ անելով այդ կուսակցության անսկզբունք, հակաժողովրդական քաղաքականությունը, մինչև վերջ մերկացնում բյուրոյականների ռեակցիոն գործունեությունը:

Շնորհիվ, ինչպես բոլոր առաջադիմական ուժերի, այնպես էլ Հնչակյան կուսակցության գործունեության, դաշնակցության քայքայումը գնալով ուժեղանում է:

Սակայն այդ չի նշանակում, թե դաշնակցությունը պետք է հաշվից դուրս համարել և նրա դեմ մղվող պայքարը դադարեցնել: Ընդհակառակը, այդ կուսակցության դեմ մղվող պայքարը պետք է ավելի ուժեղացնել, որովհետև սփյուռքահայ գաղթօջախներին նրա տված վնասները շատ մեծ են: Հարցն այն է, որ օգտվելով հետպատերազմյան շրջանի հակասություններով լի իրականությունից, ինչպես նշվում է Հնչակյան կուսակցության Ամերիկայի շրջանի 73-րդ գերագույն համագումարի պաշտոնական հայտարարությունում, «Դաշնակցությունը՝ թեև ճղճիմ փոքրամասնություն, կցանկա իր կամքն ու քմահաճույքը պարտադրել գաղութահայ մեծամասնության վրա»[65]:

Գաղտնիք չէ, որ դաշնակցությունն իր գոյությունը պահպանում է շնորհիվ իմպերիալիզմի վարձկանի այն դերի, որ նա ստանձնել է արտասահմանյան երկրներում: Միջազգային կոմունիստական և բանվորական շարժման ուժեղացմանը զուգընթաց, միջազգային իմպերիալիզմը նոր խոշոր գումարներ է տրամադրում հետադիմական ուժերին, այդ թվում նաև դաշնակցությանը՝ հեղափոխական շարժման դեմ պայքարելու համար:

Հնչակյան կուսակցությունը ամենօրյա քրտնաջան աշխատանքով իր լուման է մտցնում ինչպես իմպերիալիզմի, այնպես էլ նրա վարձկանը հանդիսացող դաշնակցության դեմ մղվող պայքարում: Սփյուռքահայ առաջադիմական ուժերի

65 «Պաշտոնական հայտարարություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության Ամերիկայի շրջանի 73-րդ գերագույն համագումարի», «Երիտասարդ Հայաստան», 29 մայիսի, 1956:

*շարքերում գտնվող հնչակյան կուսակցության գործունեությունը արժանանում է ինչպես ամբողջ աշխարհի դեմոկրատական ուժերի, այնպես էլ Սովետական Միության ժողովուրդների ջերմ հավանությանն ու համակրանքին։*

## 3. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

*Հնչակյան կուսակցությունը, գործելով սփյուռքի դժվարին պայմաններում, մշտապես հանդես է գալիս Սովետական Միության և Հայաստանի ջերմ պաշտպանների դիրքերում։ Նա հիանում է մեր երկրում ձեռք բերված մեծամեծ հաջողություններով և լայնորեն պրոպագանդում արդյունաբերության, գյուղատնտեսության ու մտավոր կյանքի բնագավառների նվաճումները։ Հնչակը նույնպես այն կարծիքին է, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը փրկեց հայ ժողովրդին անխուսափելի կործանումից և լայն հնարավորություններ ստեղծեց նրա ազատ զարգացման համար։ Գաղութահայության բախտը հնչակյան գործիչները անքակտելիորեն կապում են Սովետական Հայաստանի հետ, միայն դրա մեջ տեսնելով հայ գաղութների փրկության հույսը։*

*Թե որքան է հնչակը համակրում Սովետական Միությանը, երևում է նաև այն դիրքից, որ բռնել էր այդ կուսակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին։ Այն ժամանակ, երբ ֆաշիստական զորքերը, ծնկի բերած ամբողջ Եվրոպան, ծեծում էին Մոսկվայի դռները, հնչակյան մամուլը ներքին խոր համոզվածությամբ գրում էր. «Եթե նացիները Մոսկվան գրավեն իսկ, Խորհրդային Միության Կարմիր Բանակին վիճակված է վերջնական հաղթանակ»[1]։ Այս խոսքերը գրվել են Սովետական Միության համար այն ծանր օրերին, երբ արտասահմանյան շատ ու շատ գործիչներ մեր երկրի երգը երգված էին համարում։*

*Պատերազմի տարիներին հնչակյան կուսակցությունը իր*

---

1 *«Քառասնամեակ (1903—1943) Երիտասարդ Հայաստանի», էջ 53։*

դիրքորոշումը դաշնակիցների և Սովետական Միության նկատմամբ չփոխեց, ու ամենուրեք պրոպագանդում էր նրանց հաջողությունները։ Հնչակի անդամները և համակրողները, որ երկրում էլ լինեին, հանդես էին գալիս դաշնակիցների աջակցությամբ և շատ դեպքերում զենքը ձեռներին մարտնչում ֆաշիստական ուժերի դեմ։

Ծանոթությունը հնչակյան մամուլի և գրականության հետ ցույց է տալիս, որ Սովետական Միությունում ձեռք բերած ոչ մի նվաճում չի վրիպել նրանց ուշադրությունից։ Խոշորագույն կառույցները, գործարաններն ու ֆաբրիկաները, էլեկտրակայաններն ու ջրանցքները, գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերված հաջողությունները, կուլտուրական շինարարությունը, դրանք բոլորն էլ իրենց արժանի լուսաբանումն են գտել հնչակյան թերթերի էջերում։ Հատկապես մեծ ուշադրություն է նվիրվում Սովետական Հայաստանում սոցիալիստական շինարարության և մշակույթի զարգացման հարցերի լուսաբանմանը։

Հնչակյան մամուլը խորը վշտով է գրում գաղութահայ մտավորականության չարքաշ դրության մասին, մտավորականություն, որը զրկված է աշխատելու և ստեղծագործելու տարրական պայմաններից։

Նկարագրելով գիտության, գրականության և արվեստի աննախընթաց առաջընթացը, որ տեղի է ունենում Սովետական Հայաստանում, այն անվանելով «նորակերտ ոսկեդար», «Երիտասարդ Հայաստանը» գրում է. «Եվ երբ զուգահեռ մը կանցնենք Հայաստանի և գաղութահայ գրողի ու արվեստագետի ճակատագրի միջև, ամենեն տխուր և անմխիթար կացություն մը առջև կգտնենք ինքզինքնիս»[2]։ Եվ ոչ միայն գաղութահայ շրջաններում. առհասարակ կապիտալիստական բոլոր երկրներում, այդ թվում և ԱՄՆ-ում, կրթական գործը վատ է դրված, դպրոցներում և բարձրագույն ուսումնական հիմնարկներում տիրող վիճակը արգելակում է գիտության և

2 «Մեր նորակերտ ոսկեդարը» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 1 փետրվարի, 1957։

տեխնիկայի զարգացմանը, որի պատճառով ԱՄՆ-ը սկսում է հետ մնալ ՍՍՌՄ-ից:

Այդ կապակցությամբ էլ պատահական չպետք է համարել այն, որ սովետական առաջին արբանյակների մասին գրած խմբագրականը «Երիտասարդ Հայաստանը» վերնագրեց «Ցնցում», որովհետև այն իրոք ցնցեց ամբողջ աշխարհը, մեկ հարվածով հօդս ցնդեցրեց բուրժուական պրոպագանդայի տարիներով քարոզած հերյուրանքները, թե իբր սովետական տեխնիկան գտնվում է ողբերգական վիճակում, որ, ընդհանրապես, տեխնիկա գոյություն չունի, այլ ամեն ինչ կատարվում է ձեռքի աշխատանքով: Ցույց տալով, թե ինչպիսի բարձր մակարդակի է հասել կոմունիզմի միջնաբերդի գիտությունն ու տեխնիկան, թերթը գրում էր. «Անօրինական էր այն ցնցումը, զոր կրեց Միացյալ Նահանգների հանրային կարծիքը Սովետական սպուտնիկներուն արձակման հետևանքով»[3]:

Այո՛, ցնցվեցին, բայց ոչ ժողովուրդները, ոչ առաջավոր մարդկությունը, որովհետև նրանք միշտ էլ համոզված էին, որ Սովետական Միությունը իր վերընթաց շարժման պրոցեսում անպայման պետք է անցնի ԱՄՆ-ից: Ժողովուրդները միայն ուրախացան, իսկ իրոք ցնցվեցին իմպերիալիստները, որոնք հղփացած ժամանակավոր հաջողություններով և հանգստացած իրենց իսկ պրոպագանդայի ստեղծած՝ Սովետական Միության անկանելի հետամնացության մասին կեղծիքով՝ չէին սպասում այդպիսի խիզախության, որը լիովին մերկացրեց իմպերիալիզմի սնանկությունը և վեր հանեց սոցիալիզմի զարգացման անսպառ հնարավորությունները:

Հնչակյան կուսակցությունը այն կարծիքին է, որ Սովետական Միությունում ձեռք բերված բոլոր նվաճումները արդյունք են սոցիալիստական սիստեմի կողմից գիտության և տեխնիկայի զարգացման համար ստեղծված լավագույն պայմանների:

Արևմուտքը քայքայվում է, իսկ Արևելքը անընդհատ բար-

3 «Ցնցում» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 3 դեկտեմբերի, 1957:

դավաճում— այս է Հնչակի տեսակետը երկու լագերների զար-
գացման տենդենցի մասին։ Նկատի ունենալով երկու սիստեմ-
ների ներքին կյանքում տիրող վիճակը, Հնչակյան մամուլը
գրում է. «Հոն (ՍՍՌՄ-ում— Լ. Խ.) աշխատող ձեռքերու պա-
կաս, արտադրության կլանում, հոս գործազրկություն, տնտե-
սական տագնապ, գերարտադրություն և քաղաքական անո-
րոշ ու երերուն վիճակ»[4]։ Սոցիալիզմի լագերի հաջողություն-
ները ժամանակավոր երևույթ չեն. Հնչակյանները համոզված
են, որ դրանք բխում են նոր հասարակարգի բնույթից։ «Արև-
վելք նոր հաղթական դաշնակից մը գտած է իրեն՝ տնտեսա-
կան բարգավաճ և հառաջադեմ կացությունը։ Դաշնակից մը,
որ երբեք չի կրնար դավաճանել իրեն»[5]։

Հնչակյան կուսակցությունը մեծ ոգևորությամբ է ընդու-
նում Սովետական Միությունում ձեռք բերվող յուրաքանչյուր
նվաճման մասին ստացված լուրը։ Սովետական երկրի զար-
գացման հնգամյա պլանները Հնչակյան կուսակցությունը պրո-
պագանդում էր ամենամեծ ջանասիրությամբ, մանրամասնո-
րեն և հմտությամբ, ցույց տալով, թե յուրաքանչյուր հնգամյա
պլան ի՛նչ բարիքներ է տալու սովետական ժողովրդին և ի՛նչ
առաջընթաց է ապրելու սովետական երկիրը։ 1956 թ., երբ իմ-
պերիալիզմի գրչակները և նրանց հետ միասին դաշնակները
ջանք չէին խնայում գրպարտելու Սովետական Միության ժո-
ղովրդական տնտեսության զարգացման նոր հնգամյա պլանը,
Հնչակը, ընդհակառակը, շարադրելով այդ պլանով նախա-
տեսված միջոցառումները, ամենայն համոզվածությամբ
գրում էր. «Հնգամյա այս նոր պլանը ոչ մեկ տարակույս, որ
պիտի իրագործվի և նույնիսկ գերազանցվի, շատ մը մարզե-
րուն մեջ, նախատեսվածեն»[6]։

Հնչակյան մամուլը բազմաթիվ հոդվածներ տպագրեց

---

4 Մ. Արևելցի, Սովետական Միության անդավաճան դաշնակիցը..., «Երիտասարդ Հայաստան», 20 մայիսի, 1958։

5 Նույն տեղում։

6 Մ. Արևելցի, Սովետական Միության նոր հնգամյա պլանը, «Երիտասարդ Հայաստան», № 74, փետրվար, 1956։

*ՍՍՌՄ զարգացման յոթնամյա պլանի մասին, որոնցում ցույց էր տրվում, թե մեր երկիրը ինչպիսի հաջողությունների պետք է հասնի 1965 թվականին։ Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում Հայաստանի զարգացման հեռանկարներին։ Լուսաբանվում են մեր հանրապետության արդյունաբերության, գյուղատնտեսության և մտավոր կյանքում տեղի ունենալիք փոփոխությունները յոթնամյակի տարիներին։*

*Հնչակյան կուսակցությունը մշտապես քողազերծում է դաշնակցության փորձերը՝ խեղաթյուրելու Սովետական Միության ներքին դրությունը, այն ծուռ հայելու մեջ ցույց տալու, որպեսզի սփյուռքահայությունը հիասթափվի նրանից։ Մերկացվում է նաև ինչպես իմպերիալիզմի գրչակների, այնպես էլ դաշնակ լրագրողների տարածած կեղծիքը «երկաթե վարագույրի» մասին։ Այդ մերկացումը մանավանդ խստորեն են կատարում նրանք, ովքեր եղել են Սովետական Միությունում և համոզվել, որ այդ առասպելը ռեակցիայի կողմից մեջտեղ է հանվել բանվոր դասակարգի՝ պատմության մեջ առաջին պետությունը վարկաբեկելու համար։ Հնչակյանները իրենց մամուլի օրգաններում լայն տեղ են տալիս ՍՍՌՄ և մասնավորապես Հայաստանի կուսակցական, պետական և սովետական գործիչների, գիտնականների հոդվածներին։ Սփյուռքի մյուս առաջադիմական կազմակերպությունների հետ միասին Հնչակը ևս սրտառուչ դիմավորում է արտասահման ժամանած սովետահայ գործիչներին ու տուրիստներին։*

*Տուրիստական ուղեգրերով Հայաստան այցելած հնչակյան կուսակցության անդամները, վերադառնալուց հետո, մամուլի էջերում գրվատում են հայ ժողովրդի նվաճումները, սրտի ամբողջ հուզմունքով պատմում գեղատեսիլ Երևանի և, ընդհանրապես, մեր հանրապետության տեսարժան վայրերի և արդյունաբերության, գյուղատնտեսության, մշակույթի ու մտավոր կյանքի բնագավառներում ձեռք բերված մեծամեծ հաջողությունների մասին։*

*Հնչակը հիացած է այդ հաջողություններով. «Հայ ժողովրդի պատմության ոսկեդար», «Ապշեցուցիչ հաջողություն-*

ներ», «20-րդ դարի քաղաքական հրաշք»— ահա այսպիսի արտահայտություններով են հնչակյանները բնորոշում Սովետական Հայաստանի նվաճումները։

Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման տեմպը համարվում է հրաշքային։ «Մեր երկիրը,— գրում է հնչակյան կուսակցությունը, նկատի ունենալով Սովետական Հայաստանը,— 34 տարվա մեջ այնքան առաջադիմած է, որքան ուրիշ երկիրներ դարերու ընթացքում միայն հաջողած են։ Երբ ուրիշ երկրներ քալեր են, Սովետական Հայաստանը վազեր է արագությամբ... Երջանիկ է հայ ժողովուրդը իր մայր հողին վրա իր աչքերը սևեռած լուսապայծառ ապագային զոր այսօր իր ձեռքերովն իսկ կկերտե»[7]։

Հնչակյան գործիչները խոսելով Հայաստանում ձեռք բերված «պարզապես անհավատալի» նվաճումների մասին, մշտապես նշում են, որ դրանք առանց սովետական իշխանության, առանց ռուս ժողովրդի օգնության անհնարին կլինեին։ «Տարիներ որոնք դարերու նշանակություն ունին» վերնագրով հոդվածում այդ մասին ասվում է. «Այն նվաճումները, որ հայ ստեղծագործ ժողովուրդը կատարած է, Սովետական Միության և ռուս մեծասիրտ ժողովրդի եղբայրական օժանդակությամբ, հրաշքի համազոր է։ Երեսուն և հինգ տարիներու ընթացքին հետամնաց, երկրագործական, քարքարոտ Հայաստանը փոխակերպված է արդիական և արդյունաբերական երկրի մը, որ կարող է մրցել առաջնակարգ որևէ երկրի մը հետ»[8]։

1954 թ. նոյեմբերի 7-ի տոնի կապակցությամբ հնչակյան մամուլը գրում էր. «Ցնծա խորհրդային Հայաստան, ցնծա վեհ ու պանծալի տարեկիցիդ առթիվ, քանի որ 34 տարիներե ասդին, մեն մի քայլափոխիդ, հաղթանակե հաղթանակ սուրացիր, հույսով, ինքնավստահությամբ և ոսկեզօծ ապագայի

---

7 Հ. Գույումճյան, Սովետական Հայաստանը նվաճումներու ճամբուն վրայ, «Երիտասարդ Հայաստան», 7 հունվարի, 1955։

8 Հ. Գույումճյան, Տարիներ որոնք դարերու նշանակություն ունին, «Երիտասարդ Հայաստան», 2 դեկտեմբերի, 1955։

*հեռապատկերով բռնկեցնելով համայն հայրենասեր հայ հոգիները։*

*Ցնծա քո վերածնության, վերելքիդ և պողպատյա հաստատուն կեցվածքիդ առթիվ, որոնց մեջ ամեն մեկը, բարիքի ու օրհնության բյուրեղյա ակի, աղբյուրի նման տարածվեցավ ամեն դի, ամեն ուղղությամբ և ողողեց կյանքով ու կենսունակությամբ մեր երբեմնի արյունոտ ու մեռելաշունչ բնաշխարհը։*

*Ցնծա և քալե շիտակ, անշեղ կերպով այն ճանապարհին, որուն մեջ նետվեցար առաջին օրեն, առաջին վայրկյանեն իսկ, որ կտանի դեպի ճշմարիտ հայրենաշինություն, տիպար աշխարհաշինություն, դառնալով ազատության և խաղաղության անպարտելի, անխորտակելի ամրոցներեն մին»*[9]։

*Ինչպիսի՜ ջերմ, ինչպիսի՜ հիանալի խոսքեր։ Եվ այսպիսի հոդվածները եզակի չեն, դրանք ընթերցողը կարող է գտնել հնչակյան յուրաքանչյուր թերթում, որովհետև այդ է նրանց քաղաքականության հիմնական ուղեգիծը։*

*Հայաստանին նվիրված հոդվածներում կարմիր թելի նման անց է կացվում այն ճշմարիտ միտքը, որ սովետական իշխանությունը ֆիզիկական բնաջնջման վտանգից հայ ժողովրդին փրկեց և լայն հնարավորություններ ստեղծեց նրա հետագա, անարգել զարգացման համար։*

*Հնչակի՝ սոցիալիզմի լագերի և Սովետական Միության նկատմամբ ունեցած վերաբերմունքը պայմանավորված է հետևյալ երկու հիմնական գործոններով.*

*1. Կյանքի կոչված լինելով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի կողմից, Հնչակը մինչև այժմ էլ իր հիմնական խնդիրը համարում է հայկական հարցի լուծումը։ Արդի պայմաններում, ելնելով պատմության դառն փորձից, Հնչակը հանգել է այն եզրակացության, որ հայկական հարցը կարող է լուծվել միայն Սովետական Միության և սոցիալիզմի լագերի օգնությամբ։*

9 Վահան Զուգասզյան. *Ցնծա, ապրի խորհրդային Հայաստան (նոյեմբերի 29-ի առթիվ), «Երիտասարդ Հայաստան», 23 նոյեմբերի, 1951։*

*2. Հանդիսանալով մարքսիստական սոցիալիստական կուսակցություն, իր քաղաքականությամբ ավելի մոտենալով ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայի ձախ թևին, հնչակը, անկախ անխուսափելի տատանումներից, արմատապես պետք է կանգներ և իրոք կանգնել է դարի առաջավոր հասարակական-քաղաքական ուժերի պաշտպանության դիրքերում՝ հանդես գալով Սովետական Միության և սոցիալիզմի լագերի քաղաքականությանը**:*

*Սակայն միջազգային բուրժուազիան թափում է բոլոր ջանքերը սոցիալիզմի լագերի հաղթարշավը կանգնեցնելու համար: Պրոլետարական առաջին պետության ստեղծումից մինչև սոցիալիզմի համաշխարհային սիստեմի կազմվելը, այսինքն՝ մինչև մեր օրերը ընկնող պատմությունը նոր հասարակարգի բարգավաճման և նրա դեմ ուղղված չդադարող սառը և տաք պատերազմի պատմություն է:*

*Նոր հասարակարգը՝ սոցիալիզմը, փաստ է, որին ձգտում են աշխարհի բոլոր ժողովուրդները, իմպերիալիզմը ջանում է կործանել այն, կարծելով, թե դրանով կդադարի սոցիալիզմի համար մղվող պայքարը: «Քսաներորդ դարու երկրորդ հիսնամյակը նոր խաչակրության մը դարը կը կերտե: Հակասովետ խաչակրություն մը կը քարոզվի ամեն տեղ:*

*...Քաղաքական ու տնտեսական այս փլուզումի (խոսքը գաղութային սիստեմի քայքայման մասին է—Լ. Խ.) անխուսափելի հետանկարին սարսափած միջազգային դրամատիրությունն ու կայսերապաշտությունը կը ջանան ճմլեցնել ժողովուրդներուն ազգային ու քաղաքական* զարթոնքը *մեր օրերու հակասովետ խաչակրության մարմինով, անոնց առջև ցցելով* երևակայածին Սովետական թշնամին: *Եթե սրբենք արտաքին այս շպարը, արդեն իսկ իր մերկ իրողության մեջ երևան կելլե իսկական թշնամին, համաշխարհային խաղաղու-*

---

** Հնչակյան կուսակցության մարքսիստական սոցիալիզմի քննադատությունը տրված է աշխատության այն գլխի առաջին ենթագլխում, որը վերնագրված է. «Հնչակյան կուսակցության գաղափարախոսության և քաղաքականության մի քանի հարցերի շուրջը»:*

թյունը վրդովող պատերազմի հարազատ հրձիգը»,— գրում են հնչակյանները, գալով այն եզրակացության, որ քաղաքական և ընկերային կուրության շրջանը պատկանում է անցյալին[10]։

Այժմ, առանց բացառության, բոլոր ժողովուրդներն էլ հասկանում են, թե ո՞վքեր են միջամուխ լինում իրենց ներքին գործերին և ո՞վքեր են պատրաստում երրորդ համաշխարհային պատերազմը։ Ինչ վերաբերում է սոցիալիզմի լագերին, ապա նա խաղաղության, դեմոկրատիայի և ազգային-ազատագրական պայքարի հաղթանակի համար մղվող շարժման դրոշակակիրն է։

Ահա այդ պատճառով էլ իմպերիալիզմը գնալով ավելի ու ավելի է ուժեղացնում սոցիալիզմի դեմ մղվող պայքարը։ Դրա արտահայտություններից մեկը 1956 թվականին Հունգարիայում արտաքին ուժերի կողմից կազմակերպված հակահեղափոխական խռովությունն էր։ Այն ժամանակ, երբ միջազգային իմպերիալիզմի շրջանները և, ընդհանրապես, աշխարհի բոլոր հետադիմական ուժերն աղմկում էին «հունգար ժողովրդի հերոսական ապստամբության և սովետական զորքերի ինտերվենցիայի մասին», հնչակյան գործիչները, չափազանց օբյեկտիվորեն և հանգամանորեն վերլուծելով այդ դեպքերը, գրում էին, որ դրանք, իրոք, կազմակերպվել են միջազգային իմպերիալիզմի կողմից։

Նկատի ունենալով հունգարական դեպքերը, Ա. Կիտուրը գրել է. «Սոցիալիստական նոր իրավակարգերը շրջապատված էին զորեղ թշնամիներով— կապիտալիստական պետություններով, որոնք ուժ կտային սոցիալիստական երկրներու դժգոհ տարրերին»[11]։ Խոսելով հունգարական դեպքերի ընթացքում Սովետական բանակի ունեցած դերի մասին, Կիտուրը արդարացնում է նրա գործունեությունը, հայտնելով այն միտքը, թե

10 Արմեն Ղարիպ, *Հակասովետ խաչակրությունը*, «Արարատ», 25 նոյեմբերի, 1951։

11 Ա. Կիտուր, *Արևելյան Եվրոպայի խռովությունները*, «Արարատ», 1 նոյեմբերի, 1956։

այդ այն ուժն է, որը կոչված է պաշտպանելու սոցիալիզմի նաբակառույց շենքը:

Հունգարական դեպքերի ամենածանր օրերին, Հնչակյան գործիչները խորապես համոզված էին, որ սոցիալիստական համակարգի կողմնակիցներն անպայման կհաղթանակեն: Վերլուծելով Հունգարիայի ներքին քաղաքականության բնագավառում թույլ տված սխալները, որոնք և օգտագործեց ներքին ու արտաքին թշնամին, Հնչակյան մամուլը գրում էր, որ «Հունգարիան է և կը մնա սոցիալիստական պետութիւն մը»[12]: Դեռ ավելին. պատմական համեմատություն անելով, Ս. Սիտուրը գալիս էր այն եզրակացությանը, որ հունգարական դեպքերը շատ նման են 1921 թ. Հայաստանում ծագած փետրվարյան ավանտյուրային[13]:

Ինչպես 1921 թ. հայ աշխատավորները Հայաստանում, այնպես էլ 1956 թ. Հունգարիայում «հակահեղափոխության դեմ կատաղի կռիվներ մղելով, հունգար աշխատավորները պահպանեցին իրենց սոցիալիստական նվաճումները»[14], դժգոհ տարրերը վտարվեցին և ժողովրդական կառավարությունը դարձավ կացության տերը[15]:

Սովետական Միությունը, գրում են Հնչակյան գործիչները, իր անկեղծ, եղբայրական, մարդասիրական օգնությունն է ցույց տալիս ոչ միայն սոցիալիստական, այլև ազգային-ազատագրական պայքար ապրող ժողովուրդներին[16]: Անդրադառնալով ԱՄՆ-ի կողմից մյուս երկրներին ցույց տրվող «օգնությանը», Հնչակյան գործիչները ամենայն ճշտությամբ բացահայտում են դրա էությունը, գրելով. «... Ամերիկյան

12 Գեորգ Տարոնցի, *Հունգարիան է և կը մնայ սոցիալիստական պետութիւն մը*, «Արարատ», 20 դեկտեմբերի, 1956:

13 Ս. Սիտուր, *Հունգար ապստամբներուն ճակատագիրը*, «Արարատ», 13 նոյեմբերի, 1956:

14 «Հետադիմութիւնը ինչ տեսակ ազատութիւն կը վերապահէ Հունգարիոյ», «Արարատ», 24 նոյեմբերի, 1956:

15 Ս. Սիտուր, *Օրվան հրատապ հարցերը*, «Արարատ», 2 նոյեմբերի, 1956:

16 «Եղբայրական օգնութիւն», «Արարատ», 23 մարտի, 1958:

«օգնությունը» ոչինչ բան չէ, եթե ոչ խայծ մը այն կառավարություններուն, որոնք պատրաստ են իրենց զինվորները և հողամասերը ամերիկացի ռազմամոլներուն տրամադրելու:
Ամերիկյան «փոխադարձ ապահովության պայմանները» ոչինչ բան չեն, եթե ոչ ճարպիկորեն պատրաստված մեթոդներ՝ դոլար ստացող երկրներու զինյալ ուժերը ամեն գնով ամերիկյան բանակին կապելու համար»[17]:

Սովետական Միությունը և սոցիալիզմի ճամբարը այն ուժն են, որ խափանում են իմպերիալիզմի բոլոր հակահեղափոխական ձեռնարկումները: Միջազգային իմպերիալիզմը բազմաթիվ զինակցությունների միջոցով ցանկանում է պահպանել իր տիրապետությունը և կանխել ազգային-ազատագրական շարժման հաջող ավարտը: Բայց զարգացած երկրները մեծ մասամբ նորից մնում են իմպերիալիզմի ճիրաններում:

Սոցիալիզմի ճամբարը, Սովետական Միության ղեկավարությամբ, անխոնջ պայքար է մղում իմպերիալիզմի և գաղութակալության դեմ: Հնչակյան գործիչները մամուլի էջերում բազմիցս հանդես են գալիս հետաքրքիր հոդվածներով՝ խաղաղության և ազգային-ազատագրական պայքարի հաղթանակի գործում Սովետական Միության անգնահատելի դերի մասին: Այն մեծագույն հեղաշրջումները, որոնք կատարվում են ժամանակակից աշխարհում, տեղի չէին ունենա այդպիսի արագությամբ, եթե չլիներ սոցիալիզմի ճամբարը, եզրակացնում են հնչակյանները:

Հնչակյան կուսակցությունը միշտ էլ ջերմ վերաբերմունք է ցույց տվել ՍՍՌՄ-ի՝ խաղաղության համար մղվող սկզբունքային պայքարին: Դեռևս 1954 թ. հնչակյան մամուլը գրում էր. «Արևմտյան պլոքը, իր պատրաստականության գիտակից, ամեն դուռ բախեց, ամեն միջոց ձեռք առավ, որպեսզի առաջն առնի ռազմաբույր և արյունահոտ ձեռնարկներուն: Խաղը Արևմտյան պլոքին կպատկանի հիմա: Իսկ խաղաղա-

[17] «Օգնության և փոխադարձ հասկացողության քողին տակ», «Արարատ», 7 մայիսի, 1958:

ներ ժողովուրդները կապանն անոր, որպեսզի վերջն ալ իրենք ըսեն իրենց խոսքը՝ խաղաղության համար»[18]։

Հնչակի գործունեության մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ կուսակցությունը հետպատերազմյան շրջանում միշտ էլ ակտիվորեն պաշտպանել է Սովետական Միության բոլոր ձեռնարկումները՝ ուղղված միջազգային իմպերիալիզմի ռազմամոլ քաղաքականության դեմ, հանուն խաղաղության, դեմոկրատիայի և ազգային-ազատագրական պայքարի հաղթանակի։

«Հետպատերազմյան շրջանի ամբողջ ընթացքին Խորհըրդային Միության արտաքին քաղաքականությունը իրեն ուղեցույց ունեցած է խաղաղության ապահովությունը և ժողովուրդներու համերաշխ գործակցությունը՝ համակեցության սկզբունքին համաձայն։ Այդ ուղղությամբ անոր թափած ջանքերը հրապարակի վրա են, և ամեն օր նոր դեպք մը կուգա հաստատելու այդ քաղաքականությունը»,— գրում է «Արարատը»[19],

Ժամանակները այնպիսին են, որ իմպերիալիստական պետությունները արդեն չեն համարձակվում բացարձակորեն հանդես գալ խաղաղության դեմ և հաճախ հագնում են խաղաղության պաշտպանի դիմակ։ Բայց Հնչակին չի մոլորեցնում այդ դիմակը։ Նա գտնում է, որ պետությունների քաղաքականության մասին պետք է դատել ոչ թե նրանց առարկայազուրկ հայտարարությունների հիման վրա, այլ միայն և միայն ելնելով նրանց գործնական քաղաքականությունից։

Հետպատերազմյան շրջանում, արձագանքելով Սովետական կառավարության կատարած առաջին զորացրումին, Հընչակյան մամուլը գրում էր. «Այսօր ամբողջ աշխարհի առջև Սովետական Միությունը կրնա ճակատաբաց կեցած կենալ և

18 Մ. Արևելցի, *Խաղաղության համար*, «Երիտասարդ Հայաստան», 7 դեկտեմբերի, 1954։

19 Մ. Արևելցի, *Սովետական նոր քաղաքականությունը*, «Երիտասարդ Հայաստան», 27 մայիսի, 1955։ «Խաղաղության պահակը» (խմբագրական), «Արարատ», 28 հուլիսի, 1964։

հայտարարել իր խաղաղասիրական նպատակները ոչ թե թղթի վրա՝ ծրագրերով, այլ՝ գործնապես, փաստերով և տվյալներով, թվերով և իրողություններով։ Եվ ինչու զարմանալ, որ խաղաղասեր մարդկությունը օրե օր ալ ավելի իր հույսերը կը կապե Սովետական Միության»[20]։

Հնչակը այն կարծիքին է, որ սփյուռքահայության ապագան անխզելիորեն կապված է Սովետական Հայաստանի հետ։ Հնչակը «... միշտ քարոզած, պաշտպանած և պանծացուցած է խորհրդային Հայաստանի ներկա իրականությունը, իբր միակ հույսն ու ապավենը հայ ժողովրդի ապագա զարգացման և հառաջադիմության»[21]։ Այս տեսակետից էլ պատահական չէ, որ հնչակյան կուսակցությունը ակտիվորեն պաշտպանում է և աջակցում Սովետական կառավարության նախաձեռնությամբ սկսված սփյուռքահայության ներգաղթի կենսագործմանը։ Այդ ուղղությամբ հնչակը զգալի կազմակերպչական աշխատանք է տանում հայ գաղութներում, մերկացնելով դաշնակների հերյուրանքները Սովետական Միության մասին։ Հնչակյան կուսակցությունը ամեն ջանք գործ է դնում, որպեսզի սփյուռքահայությունը կենտրոնանա Սովետական Հայաստանում, քանի որ արտասահմանում նրան սպառնում է ֆիզիկական ձուլման վտանգը։

Սովետական Հայաստանի ճանաչումն ու ընդունումը այն հարցերի հարցն է, որը նախապայման է հանդիսանում սփյուռքահայ առաջադիմական միասնական ճակատի մեջ ընդգրկվելու համար։ Ով դեմ է Սովետական Հայաստանին, նա չի կարող տեղ գտնել այդ ճակատում— սա է սփյուռքահայ առաջադիմական ուժերի նշանաբանը։

Խոսելով այն մասին, թե ո՞րն է սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնականության հիմքը և ի՞նչն է իրեն անջատում դաշնակցությունից, Հնչակը գրում է. «Հայտնի է, որ «միասնականություն» այս ներկա կոչը հրապարակ հանված

20 Մ. Առնելցի. *Սովետական զորարձակը, «Երիտասարդ Հայաստան», 29 մայիսի, 1956։*

21 *«Երիտասարդ Հայաստան», 5 նոյեմբերի, 1954։*

է դաշնակցութեան կողմէ, քանի որ մնացեալ երեք կուսակցութիւնները — Ռամկավար Ազատական, Ամերիկահայ Առաջադիմական Միութիւն և Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւն— ունին որոշ տեսակէտներու նոյնութիւն, հետևաբար նաև որոշ համերաշխութիւն։ Ասոնց երեքն ալ կհավատան խորհրդային Հայաստանի իրականութեան, կընդունին և առանց այլևայլի՝ Էջմիածնա հեղինակութիւնը և կօժանդակեն արդեն իրենց կարելիութեան սահմաններուն մէջ, հայ լեզուի, հայ մշակոյթի ծանօթացման և հայ գաղափար ավանդութիւններու պահպանման գործերուն և պարտավորութիւններուն»[22]։

Առաջադիմական ուժերի միասնական ճակատից դուրս է մնացել միայն դաշնակցությունը, որովհետև նա դեմ է սփյուռքահայ մյուս ուժերին միացնող երկու հիմնական պայմաններին՝ միշտ Սովետական Հայաստանի հետ, միշտ Էջմիածնի հետ։

Հնչակյան կուսակցությունը պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ դաշնակցությունը չի կարող առաջադիմական ուժերի հետ լինել, ի՞նչ անհատակ անդունդ է ընկած նրանց և իրենց միջև,— գրում է. «Մենք կհավատանք խորհրդային Հայաստանի ներկայիս իրականությանը իբրև հայ ժողովրդի քաղաքական ապահովության, բարօրության և հառաջադիմության միակ միջոցը։

Դաշնակցությունը չի հավատար 34 տարիներե ի վեր կատարված այդ պայծառ իրականությանը, բայց կհամարե «վայաստան», ստրկություն, գերություն եւլն...

Մենք կընդունինք Էջմիածնի հեղինակությունը իբրև հայ ժողովրդի հազարամյա եկեղեցական և կրոնական ըմբռնումների, ավանդություններու և հավատամքներու պահպանող ու ղեկավար վերին մարմինը...

Այժմ 34 տարիներե ի վեր դաշնակցությունը նույն քաղաքականությունը կհետևի, անվանելով հայ ժողովրդի կրո-

22 «Միշտ Էջմիածնի և միշտ Խորհրդային Հայաստանի հետ» (միասնականություն), «Երիտասարդ Հայաստան», 1 փետրվարի, 1955։

նական հավատամքներու զարավոր կեդրոն էջմիածինը իբրև խորհրդային պրոպագանդի գործակալություն, Ամենայն Հայոց Հայրապետին ալ Չեկայի գործիք»[23]։

Սակայն, ինչպես նշում են հնչակյան գործիչները, դաշնակցությունը Հայաստանի նկատմամբ ատելություն սերմանելու և անվստահություն առաջացնելու ուղղությամբ ոչ մի հաջողության չի հասնում։ Սփյուռքահայությունն իր ամբողջ էությամբ կապված է Սովետական Հայաստանի հետ։ Ամեն տարի, նոյեմբերի 29-ին, սփյուռքահայությունը, բացառությամբ դաշնակցության, հանդիսավոր պայմաններում տոնում է հայ ժողովրդի ազատագրման տոնը։

Հատկապես մեծ շուքով նշանավորվեց Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի քառասնամյակը և մեր հանրապետության Լենինի շքանշանով պարգևատրելը։ Հայ ժողովրդի տոնական օրերին «Արարատը» ջերմությամբ ու բերկրությամբ ողջունելով «քառասնամյա հայրենիքին», գրում էր. «Քառասուն տարիներ առաջ, նոյեմբերյան արշալույսով մը, իր սեփական Հայրենիքը ունենալու բախտին արժանացած հայությունը, այսօր, քառասուն տարիներ ետք, արդար հպարտությամբ կը նշէ ազատագրված իր Հայրենիքին՝ Սովետական Հայաստանի Քառասնամյա Հոբելյանը։

Այսօր, հայ ժողովրդի վեց դարերու ստրկության, հալածանքի, ճերմակ ու կարմիր ջարդերու վերջակետը դնող և հայ մնացորդի հարության արշալույսը ավետող նոյեմբեր 29-ով սեփականության տիրացած մեր սիրելի Հայրենիքին Քառասնամյա հաղթական տարեդարձը ողջունելու մեծագույն բախտը կունենանք»[24]։

1920 թ. նոյեմբերի 29-ին հայ ժողովուրդը ձեռք բերեց իր անկախությունը։ Գաղութահայության ճնշող մեծամասնությունը մեծ խանդավառությամբ է նշում Հայաստանի սովետականացման տարեդարձը։ Հայաստանում սովետական

---

23 Նույն տեղում։

24 «Ողջույն քառասնամյա հայրենիքին» (խմբագրական), «Արարատ», 30 նոյեմբերի, 1960։

իշխանության հաղթանակի 39-րդ տարեդարձին նվիրված խմբագրականում, «Սովետական Հայաստանը» նկատի ունենալով մեր հանրապետությունում աշխատավորության խոշոր նվաճումները, գրում էր. «Այդ տարիները կը կազմեն ոսկեղէն շղթա մը, որուն ամեն մեկ օղակը նախորդէն ավելի տոկուն, ավելի փայլուն ու կենսատրինդ կը ներկայանա»[25]։

Սփյուռքահայ աշխատավորությունն ըմբռնել է, որ «Խորհրդային Հայաստանի Հանրապետությունը իր դարավոր երազների և ձգտումների իրականացումն է. կըմբռնե, որ ան կապիտալիստական ու բռնապետական բոլոր կարգերեն ազատագրված հայ ժողովրդի միակ իրական և իրավական պետությունն է»[26]։

Միջազգային զարգացման արդի փուլում, երբ աշխարհը բաժանված է երկու ճամբարների, հատկապես կապիտալիստական երկրներում գործող սփյուռքահայ առաջադիմական ուժերի գործունեության պայմանները բավականին դժվարանում են, որովհետև նրանց մատնում են, լրտեսում և հալածում։ Այդ գործում, ինչպես արդեն նշել ենք, հատուկ աշխուժություն է հանդես բերում դաշնակցությունը[27]։

Հնչակի հայրենասիրությունը և հատկապես հայաստանասիրությունը թշնամիների կողմից միտումնավոր կերպով օգտագործվում է այդ կուսակցությանը սովետական պետության «հինգերորդ զորասյուն» անվանելու համար։ Թերևս այդ է պատճառը, որ հնչակյան մամուլը շատ հաճախ հարկադրված է լինում հանդես գալու առաջին հայացքից տարօրինակ բովանդակությամբ հոդվածներով այն մասին, որ հայրենասիրությունը հանցանք և դավաճանություն չէ։ Հնչակը դեմ է պատերազմին և սիրում ու ընդունում է Սովետական

---

25 «Նոյեմբերի 29» (խմբագրական), «Սովետական Հայաստան», 1 դեկտեմբերի, 1959։

26 Մ. Անմահունի, Ցրանցանակիր Հայաստանն ու պանծալի քառասնամյան, «Արարատ», 30 նոյեմբերի, 1960։

27 «Զրպարտության և մատնության նոր արշավը» (խմբագրական), «Սովետական Հայաստան», 10 սեպտեմբերի, 1954։

Հայաստանը: Մի՞թե վախի կամ սպառնալիքի ազդեցության տակ նա պետք է հրաժարվի իր քաղաքականության հիմնական ուղեգծերից: Ո՛չ, զայրույթով գրում են հնչակյան մտավորականները, մենք վախի և հարկադրանքի ազդեցության տակ չպետք է հրաժարվենք մեր հայրենասիրական զգացմունքներից, մեր պաշտելի հայրենիքից, ուր ապրում են մեր հարազատ, ճնշումից ու շահագործումից ազատագրված, երջանիկ եղբայրները:

«Սովետական Հայաստանը մեր փրկության լաստն է: Մեր ապագայի և մեր երազներուն շքեղ ու ամրակուռ խարիսխն է այն: Մենք իրավունք ունենք, և ոչ ոք մեզ կրնա դատապարտել թե՝ մենք կսիրենք մեր բնակած երկիրները, բայց կսիրենք նաև մեր մայր երկիրը...», — գրում է հնչակյան մամուլը[28]:

Հնչակյան կուսակցությունը հիմնականում ակտիվությամբ տարավ մատնությունների ու զրպարտությունների ամբողջ հեղեղը և մշտապես կանգնած մնաց խաղաղության, առաջադիմության համար մղվող պայքարի մարտիկների դիրքերում: «Միշտ խորհրդային Հայաստանի հետ, միշտ Էջմիածնի հետ», — հնչակյան կուսակցության նշանաբանը երբեք չփոխեց իր բովանդակությունը: «Այստեղ հպարտությամբ կարձանագրենք, որ մեր գաղութի առաջավոր մտավորականությունը եւ երբեք չտարվեցավ հայկական Սրբ Քարթիականության մատնություններին ու սպառնալիքներին այն համառ հավատքով՝ թե ներկա Սովետական Հայաստանին մեջ է խարսխված մեր ժողովուրդին ապագան», — իրավացի հպարտությամբ գրում են հնչակյան մտավորականները[29]:

Այո՛, չնայած բոլոր հալածանքներին և զրպարտություններին, Հնչակը մնաց իր բարձրության վրա՝ մինչև վերջ հավատարիմ խաղաղության, դեմոկրատիայի և ազգային-ազա-

28 Հ. Գույումճյան, Հայրենասիրությունը հանցանք չէ, «Արարատ», 13 նոյեմբերի, 1951:

29 Հ. Գույումճյան, Սովետական Հայաստանը և սփյուռքի հայությունը, «Արարատ», 6 փետրվարի, 1955:

տագրական շարժման հաղթանակի համար մղվող պայքարին, կանգուն սոցիալիզմի լագերի և Սովետական Միության քաղաքականության պաշտպանության դիրքերում:

## 4. ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

*Հետպատերազմյան շրջանում ծավալված ազգային-ազատագրական պայքարը գտնում է Հնչակյան կուսակցության աջակցությունն ու համակրանքը: Իմպերիալիզմի գաղութային սիստեմի գոյությունը սև բիծ է մարդկային հասարակության պատմության վրա. այն ապրում է իր վերջին օրերը և անխուսափելիորեն կնետվի պատմության արխիվը՝ մեծ գաղթանք ապրող գաղութային ժողովուրդների հարվածների տակ, գրում են Հնչակյան գործիչները: «Արևմտյան գաղութատիրությունը,— նշում է Հնչակյան մամուլը,— իր վերջին օրերը կապրի: Ան դատապարտվեցավ Հոկտեմբերյան հեղափոխության հաշակած սկզբունքներու հետևանքով: Անոգուտ կամ ազատագրված ժողովուրդները գիտեն այս իրողությունը և մինչև երախտագետ զգացումով պիտի նայեն պատմական այս անհերքելի ճշմարտությանը»[1]:*

*Ազգային-ազատագրական պայքարի հրդեհը բռնկվել է ամբողջ աշխարհի գաղութային երկրներում: Տանջված ու շահագործված ժողովուրդները մեկը մյուսի հետևից դեն են նետում իմպերիալիզմի շղթաները: «Փոքր ու մանավանդ գաղթատիրական շղթաներու ներքև ապրող ժողովուրդները,— գրում է «Արարատը»,— վերջին հինգ տարիներու ընթացքին շղթայազերծեցին ու իրենց ծոցեն ծնունդ տվին ազատագրական պայքարի ամենախիտ զորավոր շարժում մը, որ հետադիմական ու կայսերապաշտական շրջանակներու կողմե իսկ ճանաչվեցավ որպես մեր ժամանակներու մեծագույն իրադար-*

1 Մ. Արևելցի. *Գաղութատիրության մայրամուտ. «Արարատ», 5 մարտի, 1960:*

*ձությունը, ռասայական և քաղաքական ցույց գետիններու վրա հավասարապես: Մանավանդ համաշխարհային երկրորդ պատերազմեն անմիջապես ետք, աշխարհի ամենեն անշուք ու խուլ անկյուններուն մեջ սպրդող ազգաբնակչությունները, ի մի հավաքելով իրենց բոլոր ճիգերը, աշխատեցան բնական հարստությանց վրայեն հեռացնել գիշատիչ ագռավները: Օտարներու ներկայությունը իրենց մեջ անբաղձալի էր բացահայտորեն: Յուրաքանչյուր ազգություն կամ երկիր ծրագրած էր նվաճել իր լիակատար անկախությունը ու կերտել նոր կյանք ու նոր ապագա, քաներորդ դարու այս երկրորդ հիսնամյակին»[2]:*

*Ազգային-ազատագրական շարժումը ծավալվել է ամբողջ աշխարհում: Հերոսական շարժման փոթորկալից ալիքները ծփում են աշխարհի բոլոր այն խուլ անկյուններում, ուր դեռևս պահպանվում են գաղութակալության մնացորդները: Ազատություն են ստացել Չինաստանը, Հնդկաստանը, Վիետնամը, Հյուսիսային Կորեան և այլ բազմաթիվ երկրներ. ոտքի են կանգնել սև Աֆրիկան, Մերձավոր և Միջին արևելքը ու բոլոր նրանք, ովքեր մինչև այժմ ստրկացել են իմպերիալիզմի լծի տակ, դեռևս 1955 թ. գրում էր «Արարատը»[3]: Հնչակի կողմից ջերմորեն պաշտպանվում են նաև Կուբայի և Կոնգոյի ժողովուրդների շահերը[4]:*

*Միջազգային իմպերիալիզմը չի հաշտվում ստեղծված դրության հետ, նա գործադրում է բոլոր ջանքերը՝ արգելակելու գաղութային սիստեմի քայքայումը: Կարո՞ղ է արդյոք իմպերիալիզմը կանգնեցնել ազգային-ազատագրական շարժումների հաղթարշավը: Ո՛չ, պատասխանում են հնչակյան-*

---

*2 «Մահացանք գաղթատիրության Ալճերիո պայքարի պատնեշին վրայ», «Արարատ», 30 հոկտեմբերի, 1956:*

*3 «Ազգային ազատագրական պայքարը անհաղթելի է», «Արարատ», 15 հունիսի, 1955:*

*4 «Քուպա կը պայքարի, Քուպա պիտի հաղթե», «Արարատ», 8 հուլիսի. 1960: «Քոնկո իր փոխանցման շրջանին մեջ», նույն տեղում՝ 19 հուլիսի, 1960:*

ները, գաղութատիրության մահազանգը հնչած է վաղուց: Պատմության անիվը անշեղորեն ընթանում է դեպի ժողովուրդների ազատագրական պատմական շարժման հաղթանակը[5]:

Միջազգային իմպերիալիզմը, ԱՄՆ-ի ղեկավարությամբ, ստեղծել է բլոկների և զինակցությունների մի ամբողջ սիստեմ գաղութային երկրներում իր տիրապետության պահպանման համար: Ջանք են անում բոլոր հնարավոր միջոցները գաղութներից ստացվող գերշահույթներից չզրկվելու համար:

Հնչակը մշտապես քողազերծել է ազգային-ազատագրական պայքարը ճնշելու ուղղությամբ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և կապիտալիստական մյուս պետությունների կատարած փորձերը: Հետպատերազմյան շրջանում չի եղել աշխարհի մի փորձ կամ պատերազմ, որին Հնչակը հակահարված չտար: Պատերազմը Հնդկաչինում, Կորեայում, Ալժիրում, Եգիպտոսում և այլուր միշտ էլ արժանացել է հնչակյանների սուր քննադատությանը:

Այն ժամանակ, երբ Իսրայելը հարձակվեց Եգիպտոսի վրա, հնչակյան կուսակցությունը լավ հասկանալով, թե որտեղ են թաքնված այդ ագրեսիայի արմատները, կոչ էր անում. «դադրեցուցեք կրակը հրեաներ և արաբներ, և քով քովի գալով, հաշտվեցեք, ճակատ կազմեցեք միասնաբար, ուրիշ կորսնցնելիք ոչինչ ունիք և շահելիք շատ բան. ձեր կազմելիք ճակատը, կրնա շահամոլ Անգլիան դուրս նետել Արևելքեն, և ձեզ ձեր իրավունքներուն իսկական տերը դարձնել»[6]:

Հնչակյան մամուլը, վերլուծելով իսրայելա-եգիպտական լարված հարաբերությունները, հայտնում է այն կարծիքը, որ այդ արդյունք է իմպերիալիզմի գաղութային քաղաքականության: Պառակտել, մասնատել ազատագրական շարժման ուժերը և ապա առանձին-առանձին պարտության մատնել նր-

5 «Արարատ», 30 հոկտեմբերի, 1956:

6 «Արաբական աշխարհն ու Իսրայելը», «Երիտասարդ Հայաստան», 3 հոկտեմբերի, 1948:

րանց, ահա սա է գաղութարարների գործունեության փորձված մեթոդը։ Իսրայելա-եգիպտական պատերազմը, ինչպես նշում են հնչակյանները, ավելորդ անգամ ապացուցեց, որ Անգլիան մինչև այժմ էլ չի հրաժարվել «ուրիշի ձեռքերով կրակից շագանակ հանելու» ավանդական քաղաքականությունից։

Ավելի անհաշտ քննադատության են ենթարկվում կորեական պատերազմի հրահրողները։ Այն ժամանակ, երբ հարձակում սկսելով Հյուսիսային Կորեայի դեմ, իմպերիալիստական պետությունների պրոպագանդան միաժամանակ լայն կամպանիա էր տանում այն մասին, թե իբր նախահարձակը կոմունիստներն են եղել, հնչակը, ընդհակառակը, ամենայն օբյեկտիվությամբ և ցասումով քննադատում էր միջազգային իմպերիալիզմին, որը աշխարհը նոր կրակի մեջ գցեց՝ երրորդ համաշխարհային պատերազմի վտանգը դարձնելով ռեալ։

Հնչակյանները բազմիցս անդրադառնում էին նաև Ալժիրում մղվող պատերազմին՝ դատապարտելով ֆրանսիական իմպերիալիստներին։ Ֆրանսիական գաղթիչների գաղութային տարրերի դեմ զայրույթի ահեղ ալիք է բարձրանում Արևելքի բոլոր երկրներում։ Սիրիայի, Լիբանանի, Հորդանանի, Աֆղանստանի, ինչպես նաև Ասիայի այլ երկրների կառավարությունները դատապարտում են ֆրանսիական կառավարության ալժիրյան քաղաքականությունը,— նշում է հնչակյան մամուլը[7]։

Հնչակի գործունեության մեջ չափազանց դրական է այն, որ այդ կուսակցությունը խորապես համոզված է առաջադիմական ուժերի հաղթանակի գործում։ Հնչակյան գործիչները միջազգային դրության ամենալարված և ծանր պայմաններում, առանց տրտնջալու, պայքարում են իրենց նպատակների իրագործման համար։ «Համաշխարհային խաղաղասերներու ճիգերն ի դերև չելան։ Հնդկաչինի մեջ ութ տարիե ի վեր

7 «Դադրեցուցեք աղտոտ պատերազմը Ալճերիոյ մեջ», «Արարատ», 16 փետրվարի, 1957։

գործադրելով արյունահեղությունը մինչ դատավ»[8],— գրում է Հնչակը, անկեղծորեն ուրախանալով խաղաղության ու առաջադիմության ուժերի ձեռք բերած հաղթանակներով և տխրելով անհաջողություններով:

Հայտնի է, թե Իրանում Մոսադիկի ղեկավարության տարիներին իմպերիալիստական պետությունները ինչպիսի ներքին դավադրություններ էին կազմակերպում՝ նրան տապալելու և իրենց շահույթները ապահովելու համար: Հնչակյանները ակտիվորեն պաշտպանում էին Մոսադիկի քաղաքականությունը[9] և քննադատում իմպերիալիստական պետությունների՝ Իրանի նկատմամբ ունեցած դիրքորոշումը: «Իրանը,— գրում է «Արարատը»,— միշտ խաղալիք դարձած է Արևմտյան գաղթապետներուն ձեռքը՝ չէ կրցած գտնել իրական ճամբան հառաջադիմության, արգելքներ հարուցած է երկրի լավագույն ուժերուն դեմ և մնացած է ցարդ հետամնաց վիճակի մը մեջ՝ ենթակա իրեն տերերը սահեցնողներու կամքին»[10]:

Եվ իրոք, չի կարելի չհամաձայնել Հնչակի հետ այն հարցում, որ Իրանի այժմյան կառավարող շրջանները վարում են հակաժողովրդական քաղաքականություն, քաղաքականություն, որը երկիրը թողել է աղքատության ու խավարի մեջ և փակել պարսիկ տաղանդավոր ժողովրդի զարգացման բոլոր ուղիները: Թեև դեռևս պայմանագիր չի կնքվել, գրում էին հնչակյանները, բայց փաստերը ցույց են տալիս, որ Իրանը վերածվում է Մերձավոր ու Միջին արևելքում ամերիկյան բազայի[11]:

Նույնիսկ Սովետական Միության հետ, որը իր գոյության

8 «Պատերազմի առյուծը խոնարհեցավ խաղաղության աղավնիին առջև» (խմբագրական), «Արարատ», 27 հուլիսի, 1954:

9 «Պարսկական հրաբուխը» (խմբագրական), «Արարատ», 26 օգոստոսի, 1953: «Երիտասարդ Հայաստան», 11 դեկտեմբերի, 1953:

10 «Իրանը պետք չէ մոռնայ իր դաշնագրերը», «Արարատ», 19 օգոստոսի, 1954:

11 «Իրանը ամերիկյան զորանոցի մը կը վերածվի», տե՛ս «Արարատ», 30 դեկտեմբերի, 1958:

տարիներին միշտ էլ Իրանի նկատմամբ բարի-դրացիական հարաբերություններ է պահպանել, այդ երկրի ղեկավարները, Արևմուտքի ազդեցության տակ, վատացնում են հարաբերությունները։

Իմպերիալիզմը աշխարհը պատել է բլոկների և զինակցությունների մի ամբողջ ցանցով, բայց անկասկած է, որ այդպիսի խղճուկ միջոցներով հնարավոր չէ կանխել ոչ խաղաղության և ոչ էլ ազատագրական շարժումների հաղթանակը։

Գաղութային երկրների ժողովուրդները պատմության դառն փորձով արդեն հասկացել են այն ճշմարտությունը, որ իրենց թշվառությունների հիմնական պատճառը իմպերիալիզմն է։ Ահա թե ինչու հակակոմունիզմի աղմկոտ պրոպագանդայի պայմաններում «պաշտպանության» անվան տակ ստեղծվող մեծաքանակ բլոկները, որոնց իսկական նպատակը հետամնաց երկրներին կախյալ դրության մեջ պահելն է, գտնում են գաղութային և հետամնաց երկրների ժողովուրդների թշնամական վերաբերմունքը[12]։

Հնչակյան կուսակցությունը սիստեմատիկաբար քննադատում է իմպերիալիստական բոլոր բլոկները, ցույց տալով, որ նրանք հետապնդում են միայն մեկ նպատակ՝ գաղութային և թույլ զարգացած երկրների ժողովուրդներին պահել իմպերիալիզմի ճիրաններում։

Թուրք-պակիստանյան դաշնագիրը հնչակյան մամուլը գնահատեց, որպես ԱՄՆ-ի ռազմական ծրագրի բաղկացուցիչ մասը, Հյուսիս-ատլանտյան պակտի օղակներից մեկը[13]։

Բանդունգի որոշումները հնչակյանները ընդունեցին ջերմորեն։ Ահա թե ողջույնի ինչպիսի խոսքեր էր հղում Բանդունգի կոնֆերանսի օրերին Հնչակյան կուսակցությունը. «Հին և իմաստուն Արևելքը նորեն շառագունել է և երկունքի մեջ է։ Խաղաղության նվիրական երկունքն է այն։ Եվ խաղա-

12 Տե՛ս «Արարատ», 15 հունիսի, 1955։

13 «Միջին Արևելքը իբրև նոր Քորեա» (խմբագրական), «Արարատ», 11 օգոստոսի, 1954։

ղության ծառայի մարդկությունը կխոնարհվի այդ օրհնաբեր երկունքի առջև»[14]։

Որպես ազատության երաշխիք՝ պետք է ղեկավարվել Բանդունգի որոշումների ոգով, դաշնակցել առաջադիմության ուժերի հետ և ոչ թե իմպերիալիզմի, որը ձգտում է ոտնակոխ անել ազատությունն ու անկախությունը։ «Միացյալ Նահանգներու կողմե ստեղծված ՕԹԱՋԻ զինվորական պլոքը,— գրում է «Արարատը»,— միշտ ալ սպառնալիք մը կը ներկայացնե Հարավ-արևելյան Ասիո խաղաղության դեմ»[15]։

Հնչակի կողմից քննադատվում է իմպերիալիզմի բլոկների ամբողջ սիստեմը, բացահայտվում նրա կազմակերպիչների իսկական նպատակները։ Հատկապես անողոք քննադատության են ենթարկվում իմպերիալիզմի կողմից Արևելքում ստեղծված բլոկները և զինակցությունները, որոնք ռազմական նպատակներ են հետապնդում և խաղաղության հետ ոչ մի կապ չունեն[16]։

Սակայն, բլոկների քաղաքականությունը ձախողվում է, որովհետև «իմպերիալիստներուն Մերձավոր ու Միջին արևելքի մեջ անոնց ծառաներուն ծրագիրները ավազի վրա հիմնըված են։

Կարելի չէ ստիպել արաբները, որ հրաժարեն իրենց ազգային անկախության և ազատության պայքարեն, քանի որ այդ պայքարը կը համապատասխանե իրենց կենսական շահերուն ու ՄԱԿ-ի սկզբունքներուն և նեցուկ կը գտնե մյուս խաղաղասեր պետություններուն ու ժողովուրդներուն մոտ։

ՍԵՆԹՕ-ի և ՕԹԱՆ-ի իշխանավորներուն գրգռիչ քաղաքականությունը վճռաբար դատապարտելով, բովանդակ աշխարհի խաղաղասեր ուժերը կը պահանջեն լուծել նախահարձակ պլոկները, որոնք սպառնալիք մը կը կազմեն խաղաղու-

14 Մ. Արևելցի, *Շառադունող Արևելքը*, «Երիտասարդ Հայաստան», 10 մայիսի, 1955։

15 «Պանտունկի ոգին պաշտպանելու և զորացնելու համար», «Արարատ», 7 մայիսի, 1959։

16 «Ի վնաս խաղաղության դատին», «Արարատ», 16 մարտի, 1960։

*թյան համար, ժողովուրդներու ազատության և անկախության համար»[17]:*

*Նույն նպատակն է հետապնդում նաև Դալես-Էյզենհաուերյան վարդապետությունը, որի խնդիրն էր ճզմել Մերձավոր ու Միջին արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը և ամերիկյան մոնոպոլիստների տիրապետությունը հաստատել Մերձավոր արևելքի վրա[18]:*

*1954 թ. Հարավ-արևելյան Ասիայի դաշինքի ստորագրման կապակցությամբ Հնչակյան կուսակցությունը քողազերծում էր նրա կազմակերպիչների իսկական նպատակները, գրելով. «Հարավ-արևելյան Ասիոյ հարձակողական այս դաշինքին նպատակն է խեղդել Հարավ-արևելյան Ասիո երկիրներու ազգային-ազատագրական շարժումը, ականահարել ու արգելել Ասիո ժողովուրդներու խաղաղ գոյակցությունը և այսպիսով հարվածել Ժնևի խորհրդաժողովին մեջ իրագործված համաձայնությունները: Հարավ-արևելյան Ասիո երկիրներու սույն կազմակերպությունը իր էությամբ գաղութարար պետություններու պլոք մըն է, որուն մեջ տիրական դեր կատարողը Ամերիկայի Միացյալ Նահանգներն են»[19]:*

*Սակայն, ասվում է նույն հոդվածում, Ասիայի ժողովուրդները մերժում են Ամերիկայի հարձակողական քաղաքականությունը և պայքարում իրենց բարեկամական կապերը սոցիալիստական լագերի երկրների հետ ավելի ամրապնդելու համար: Ինչպես Հարավ-արևելյան Ասիայի հարձակողական դաշինքը, այնպես էլ ԱՄՆ-ի նախաձեռնությամբ կազմակերպված մյուս բլոկները ի վիճակի չեն կանխելու այդ երկրների ազգային-ազատագրական պայքարի հաղթանակը:*

---

17 *«Ավազի վրա հիմնված ծրագիրներ», «Արարատ», 14 հունվարի, 1960:*

18 *«Սովետ Միությունը զորավիգ կը կանգնի արաբական արևելքի ժողովուրդներու արդար դատին», «Արարատ», 25 օգոստոսի, 1958:*

19 *«Հարավ-Արևելյան Ասիոյ հարձակողական դաշինքը», «Արարատ», 22 հոկտեմբերի, 1954:*

Այդ բոլոր դաշնակցությունները, անկախ իրենց բազմազան պիտակներից, ուղղված են գաղութային երկրների ժողովուրդների և Սովետական Միության դեմ։ Արսեն Կիտուրը, բացահայտելով Բաղդադի ուխտի նպատակները, այդ կապակցությամբ գրում է, որ այն ուղղված է Սովետական Միության և արաբական երկրների դեմ[20]։

Հնչակյանները քննադատում են ոչ միայն բլոկների ու զինակցությունների, այլև թույլ զարգացած երկրներին այսպես կոչված «օգնություն» ցույց տալու քաղաքականությունը։

Ազգային անկախություն ձեռք բերած ժողովուրդները, բնականաբար, մեծ ջանքեր են թափում վերջ դնելու այն դարավոր հետամնացությանը, որը ժառանգություն է մնացել գաղութակալությունից։ Անհրաժեշտ է, որպեսզի թույլ զարգացած երկրները ձերբազատվեն օտար մոնոպոլիաների տիրակալությունից, սեփական արդյունաբերություն ստեղծեն, բարձրացնեն աշխատավոր ժողովրդի կենսամակարդակը, որը գաղութարարների տիրապետության հետևանքով թշվառության և իրավազրկության է մատնված[21]։

«Կայսերապաշտ պետությունները,— գրում են Հնչակյանները,—«օգնություն» կընծայեն նվազ զարգացած երկիրներուն, որպեսզի զանոնք ստրկացնեն քաղաքական ու տնտեսական գետնի վրա, որպեսզի իրենց մոնոփոլներուն դիրքերը զորացնեն և այդ երկիրները զինվորական ուխտերու մեջ քաշեն (ՍԵՆԹՕ և ՕԹԱՋ)։ Նվազ զարգացած երկիրներու գլխավոր արդյունաբերության ճյուղերուն բնավ չեն օգներ անոնք կամ կը սահմանափակեն այդ օգնությունը, որպեսզի իրենց պատրաստի ապրանքները սպառին այնտեղ և ժամանակին նախանձելի աղբյուր մը ունենան»[22]։ Իմպերիալիզմը հիմ-

20 Ա. Կիտուր, *Լիբանանի հայ կուսակցությունները արաբ խմբագրի մը կողմե դիտված*, «Արարատ», 20 հուլիսի, 1956։

21 «Այսպես կոչված բարեկամական օգնությունը», «Արարատ», 1 հուլիսի, 1960։

22 Նույն տեղում։

նըված է խոշոր դրամատիրության վրա, իսկ այս վերջիններիս գործունեության հիմնական ուղեգծերից մեկը եղել է տկար ազգերին քամելը, Ասիան ստրկացնելը, արաբական ժողովուրդների զարթոնքի կանխելը[23]:

Քննադատելով իմպերիալիստական պետությունների կողմից թույլ զարգացած երկրներին ցույց տրվող «օգնությունը», միաժամանակ, հնչակյան մամուլը վերլուծում ու պրոպագանդում է այդ երկրների նկատմամբ սոցիալիզմի լագերի վարած անկեղծ, եղբայրական քաղաքականությունը: Սոցիալիզմի երկրները ոչ մի շահադիտական նպատակ չեն հետապնդում, օգնություն ցույց տալով թույլ ու հետամնաց երկրների ժողովուրդներին. նրանք ելնում են մարդկային հասարակության զարգացման շահերից, առաջադիմության ու հումանիզմի շահերից: Հնչակյանները, լավ գիտակցելով այդ տարբերությունը, գրում են. «Այս պայմաններու մեջ, բոլորովին մասնավոր կարևորություն մը կը ստանա այն օգնությունը զոր Սովետ Միությունը և մյուս սոցիալիստական երկըրները կընծայեն օտարին լուծը թոթափած երկիրներուն, որպեսզի անոնք ազգային արդյունաբերություն ստեղծեն և իրենց բնակչության կենսամակարդակը բարձրացնեն»[24]:

Սովետական Միությունը և մյուս սոցիալիստական երկըրները, բացի նյութական օգնությունից, միշտ էլ վճռականորեն հանդես են գալիս թույլ զարգացած երկրները նվաճելու նպատակով՝ իմպերիալիստական պետությունների կողմից կազմակերպված դավադրությունների ու ինտերվենցիայի դեմ[25]: Եվ միայն սոցիալիզմի լագերի հաստատակամ պայքարն է, որը շատ դեպքերում իմպերիալիզմին հարկադրում է դիմել զիջումների: Այդ է պատճառը, որ թույլ զարգացած երկրների մեծամասնությունը խուսափում է Արևմտյան աշխարհի բլոկների ու զինակցությունների մեջ մտնելուց: Սոցիալիզմի լագերը ոչ միայն թշնամություն չի ցուցաբերում

23 «Արարատ», 9 մարտի, 1956:
24 «Արարատ», 1 հուլիսի, 1960:
25 «Արարատ», 25 օգոստոսի, 1958:

գաղութային և կախյալ երկրների նկատմամբ, այլև ընդհակառակը, պաշտպանում է նրանց[26]։

Հնչակի գործունեությունը չի սահմանափակվում ազգային-ազատագրական պայքարի գաղափարների պրոպագանդայով։ Հնչակը զգալի մասնակցություն է ցույց տվել արաբական արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարին։ Հնչակյան կուսակցությունը արաբական երկրներում ծավալել էր եռանդուն գործունեություն, իր բոլոր ուժերը ներդնելով արաբական ժողովուրդների ազատագրության գործին։ Արաբական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի լարված տարիներին հնչակյան մամուլը անդրադարձել է արաբական զարթոնքի բոլոր հարցերին, այն դիտելով որպես մարդկային հասարակության զարգացման օրենքներով կյանքի կոչված մի երևույթ, որն արգելակել անհնարին է։

«Համաշխարհային երկրորդ պատերազմը,— գրում է «Արարատը» իր խմբագրականում,— խթանեց ազգային զարթոնքի տարածումը արաբական աշխարհին ներս։ Հաջորդաբար, արաբական պետությունները զանազան պայմաններու և տվյալներու տակ, պոռթկումներ հառաջացրին, անկախության և ազգային գերիշխանության ձգտումով։ Սուրիա, Եգիպտոս, Լիբանան, անցուցին նախնական տագնապի առաջին տագնապները։ Այսօր Իրաքն է որ կը խլրտի։ Վաղը Անդրհորդանանին է հերթը։ Եվ այսպես շարունակաբար, ազգային զարթոնքի այս շարժումը պիտի ծավալի մինչև իսկ ամենեն հետամնաց անկյունը»[27]։

Արաբական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը գնալով հզորանում էր։ Մեկը մյուսի հետևից նախկին գաղութային կամ կիսագաղութային երկրները, համառ պայքարում ձեռք էին բերում իրենց անկախությունը։ Կասկած չկար, որ մոտ ապագայում իմպերիալիզմի վերջին պին-

26 Նույն տեղում։

27 «Արաբական ազգային զարթոնքը» (Իրաքի վերջին դեպքերուն առթիվ), խմբագրական, «Արարատ», 3 դեկտեմբերի, 1952։

զորքը կհեռանա արաբական երկրներից: Հնչակյան կուսակցությունը տարված մեր էպոխայի առանցքը կազմող հարցերից մեկի՝ ազգային-ազատագրական պայքարի կանխման անհնարինության մտորումներով, զայրանում էր, որ արաբական աշխարհի մեծագույն պետություններից մեկը՝ Եգիպտոսը, դեռ տառապում է անգլիական իմպերիալիզմի ճիրաններում[28]:

Եգիպտոսում ծավալված ազգային-ազատագրական պայքարը լայնորեն լուսաբանվում էր հնչակյան մամուլում: Հնչակյան կուսակցության անդամները աջակցում էին այդ շարժմանը, սպասելով այն երջանիկ օրվան, երբ Եգիպտոսը ևս կանցնի ազատ պետությունների շարքը: Եվ պատահական չէ, որ անգլիական վերջին զինվորի մեկնումը Եգիպտոսից անսահման ուրախություն պատճառեց ինչպես բոլոր առաջադիմական ուժերին, այնպես էլ հնչակյան կուսակցությանը. «... Հունիսի 13-ը կմնա իր (Եգիպտոսի— Լ. Խ.) պատմության ամենեն նշանակալից օրերեն մին,— գրում էր Հնչակը,— այդ օր վերջացավ Անգլիո տիրապետությունը Եգիպտոսի վրա, որ 75 տարիներե ի վեր կտևեր», և անգլիական վերջին զինվորը թողեց Եգիպտոսի սահմանները[29]:

Հնչակյան կուսակցությունը խորապես համոզված էր, որ արաբական երկրներում գաղութատիրության օրերը հաշված են: «Արաբական աշխարհի զարթոնքի հզոր շարժումին դիմաց,— գրում էր Ժիրայր Նայիրին,— կը ճարճատի իմպերիալիզմի շենքը Միջնավոր արևելքի մեջ և անոր սյուները՝ մեկը մյուսի ետևեն, կը տապալին մեծ շառաչով:

Ողջույն ժողովուրդներու երջանիկ ապագային համար մարտնչող անվեհեր հայրենասերներուն:

Դարեր շարունակ ստրկացված, հալածված ժողովուրդ-

---

28 «Խռովահույզ Միջնավոր Արևելքը» (խմբագրական), «Արարատ», 29 մարտի, 1953:

29 «Անգլիացի վերջին զինվորի մեկնումը», «Երիտասարդ Հայաստան», 29 հունիսի, 1956:

ների վրեժի կանչն է, որ այսօր կը հնչէ արևելքի չորս ծագերեն»[30]։

Աշխարհի վրա չկա ոչ մի ուժ, որ կարողանա ընկճել ժողովուրդների կամքը։ Ժողովուրդների կամքը մի ապառաժ է, որին ընդահարվելով՝ փշրվում են իմպերիալիզմի բոլոր հարվածները։ Եվ ժողովուրդների կամքի մարմնացումն է եգիպտական դրոշը, որը ծածանվում է Սուեզի ջրանցքի վրա։ Ողջույն այդ դրոշին, գրում է Ժիրայր Նայիրին նույն հոդվածում։

Հնչակյանները գտնում են, որ հայ ժողովուրդը պետք է հանդես գա արաբ հայրենասերների կողքին, որովհետև նա ևս պատմականորեն հանդիսացել է իմպերիալիզմի խարդախությունների զոհը։ Սուեզի դեպքերի ժամանակ Հնչակը հայտարարում էր, որ նորից միասին հակահարված կտանք իմպերիալիզմին[31]։ 1956 թ. օգոստոսի 15-ին, ժամը 7—30-ին, Բեյրութի Սահակյան մարզադաշտում տեղի ունեցավ արաբ և հայ աշխատավորների միացյալ միտինգը ի պաշտպանություն Եգիպտոսի հերոսական պայքարի և Սուեզի ազգայնացման։ Միտինգին մասնակցում էր 10 հազար մարդ։ Ելույթ ունեցողների թվումն էր և Հնչակի Ա. Կիտուրը։

Հնչակյան գործիչները գրում էին, որ անգլո-ֆրանսիացիները դժգոհ են եգիպտացիներից, որոնք գրավել են Սուեզը. «Անոնք ուժ տվին Իսրայելի բանակին հարձակիլ Եգիպտոսի վրա և սպառնալ Սուեզի ջրանցքին»[32]։

Սակայն իմպերիալիզմի դեմ մղվող զանգվածներում եգիպտական ժողովուրդը մենակ չէր։ Նրան պաշտպանում

---

30 Ժ. Նայիրի, *Հայ հայրենասեր ժողովուրդը արաբ ժողովուրդի վստահելի զինակիցն է ազատության և գերիշխանության համար մղվող սրբազան պայքարին մեջ, «Արարատ», 7 օգոստոսի, 1956։*

31 *«Տասը հազարի հանող արաբ-հայ հասարակությունը իր պաշտպանությունը հայտնեց Եգիպտոսի հակաիմպերիալիստական պայքարին», «Արարատ», 19 օգոստոսի, 1956։*

32 Ա. Կիտուր, *Օրվան հրատապ հարցերը, «Արարատ», 2 նոյեմբերի, 1956։*

էին Սովետական Միությունը, նոր դեմոկրատիայի երկրները, Հնդկաստանը, Հնդկաչինը, բազմաթիվ ուրիշ երկրներ և ամբողջ աշխարհի առաջադիմական ուժերը։

Եթե Արևմտյան բլոկը զինում է Իսրայելին ընդդեմ արաբական պետությունների, ապա Սովետական Միությունն էլ թիկունք է կանգնում Արաբական աշխարհի գերագույն շահերին[33]։ Վերջին հանգամանքը նկատի ունենալով, Արսեն Կիտուրը գրում էր. «Մենք խորապես համոզված ենք, որ վերջնական հաղթանակը կը պատկանի ազատատենչ ժողովուրդին»[34]։

Իսրայելի հարձակումը Եգիպտոսի վրա բողոքի վիթխարի փոթորիկ բարձրացրեց. աշխարհի ժողովուրդները դատապարտեցին այդ ոճիրը։ Սփյուռքահայ առաջադիմական մյուս թերթերի հետ միասին հնչակյան մամուլը ևս բարձրացրեց իր բողոքի ձայնը «Արաբական արևելքը վերստին իրենց գաղութարարական լուծին ենթարկելու ձգտող արևմտյան իմպերիալիստներու սարքած դավերուն դեմ»[35]։

«Արարատ» թերթը, եգիպտական դեպքերի կապակցությամբ մեջբերումներ կատարելով սփյուռքահայ առաջադիմական մամուլից, ցույց է տալիս, որ հայ սփյուռքում այդ օրերին միայն դաշնակներն էին բռնել հակաեգիպտական դիրք և պաշտպանում իմպերիալիստներին. «... որքան զզվելի կը հնչեն պարկեշտ հայ մարդու ականջին, դաշնակ հայրենադավ շեֆերու «անգլիացիք մեր կողմն են» շնական հայտարարությունը»[36]։

Հակաարաբական նման դիրքորոշում ունեին դաշնակները նաև Ալժիրի ժողովրդի ազատագրական պայքարի հանդեպ։ Հնչակյանները այդ առթիվ հատուկ ուշադրություն են դարձ-

---

33 «Մերձավոր Արևելքի գոյավիճակը», «Արարատ», 29 հունիսի, 1956։

34 Ա. Կիտուր, Եգիպտոսի դիմադրությունը, «Արարատ», 7 նոյեմբերի, 1956։

35 Օ. Վարդանյան, Հայ ժողովուրդը և արաբներու անկախության պայքարը իմպերիալիզմի դեմ, «Արարատ», 12 հունվարի, 1957։

36 Նույն տեղում։

նում «Լրաբերի» մի հոդվածին, որն այն միտքն էր արծարծում, թե այլևս կասկած չկա, որ Եգիպտոսից, Սիրիայից և Լիբանանից հետո դաշնակցությունը այժմ էլ Ալժիրում է սկսել գործել արաբների դեմ, լրտեսներ հայթայթելով գաղութի ոստիկանության համար։

Լիբանանում հանրապետական Եգիպտոսի դեսպան Աբդուլ Համիդ Ղալեպին Շամունի կողմից, որպես անցանկալի անձնավորություն, ետ ուղարկվեց։ Բայց երբ Շամունը տապալվեց և Ղալեպին նորից Լիբանանում դեսպան նշանակվեց, հնչակյան և ռամկավար կուսակցությունները, որպես համակրության նշան 1958 թ. նոյեմբերի 14-ին նրան բարեկամական այցի գնացին[37]։ Լիբանանի հայ ազգային ճակատի պատվիրակությունը 1959 թ. մարտի 13-ին, ի նշան անկեղծ և հարգալից վերաբերմունքի, ժամանեց Եգիպտոս և ընդունվեց Նասերի կողմից[38]։

Հնչակյանները քննադատում են նաև այն երկրների ղեկավարներին, որոնք կապված միջազգային իմպերիալիզմի հետ, արգելակում են ազգային-ազատագրական շարժման ընթացքը։

Կուբայի հերոսական ժողովրդի անձնազոհ պայքարը Բատիստայի տիրապետության տապալման համար գտնվում էր ամբողջ աշխարհի առաջադիմական ուժերի ուշադրության կենտրոնում, արժանանալով նրանց ջերմ համակրությանը։ Հնչակյան մամուլը անընդմեջ քննադատում էր Բատիստային, վերջինիս հակահեղափոխական, սրոիմպերիալիստական քաղաքականության համար։ Կուբայի ազատագրական շարժման հաղթանակի օրերին հնչակյան կուսակցությունը հրճվանքով ու հուզմունքով լի գրում էր. «Երկու տարի տևող համառ մարտնչումներե հետո հունվարի առաջին օրերուն, վերջա-

37 «Հնչակյան և ռամկավար պատվիրակության այցելությունը Ա. Մ. Հանրապետության դեսպան զոր. Աբդուլ Համիտ Ղալեպին», տե՛ս «Արարատ», 18 նոյեմբերի, 1958։

38 «Նախագահ Նասեր ընդունեց Լիբանանի ազգային ճակատի պատվիրակությունը», «Արարատ», 15 մարտի, 1959։

պես Կուբայի հեղափոխականները հաջողեցան տապալել զորավար Պաթիսթայի բռնապետական դիկտատորությունը, որ քանհինգ տարիներ երկիրը պահեց ահի ու սարսափի մեջ, հալածելով բոլոր հառաջադիմական տարրերը»։ Կուբայի պատմության մեջ սկսվում է նոր էջ[39]։

Իրաքի վարչապետ Նուրի Սաիդը հնչակյանների կողմից գնահատվում է որպես իմպերիալիզմի սպասարկու, արաբական ժողովրդի թշնամի։ Ահա Նուրի Սաիդի հակահեղափոխական գործունեության իսկական գնահատականը՝ տրված հնչակյանների կողմից. «Իրաքի ներկա վարչապետը՝ Նուրի Սաիդ, բացահայտ հավատարմություն մը ցույց տված է Արևմուտքի իր տերերուն հանդեպ։ Ան էր որ առաջին անգամ անդամակցեցավ Պաղտատի ուխտին։ Հակառակ արաբ զանգվածներու մեծ ընդդիմության։ Ան էր որ բանակցությունները վարեց Հորդանանի հետ այս երկիրը նույն ուխտին անդամակցիլ տալու նպատակով։ Ան էր, որ Սուրիո դեմ մեծ դավադրություն մը սարքողներուն կողքին կանգնելով նյութական ամեն ճիգ ու միջոցներ չխնայեց, որպեսզի այս երկիրն ալ իմպերիալիզմի ճանկերուն հանձնվի։ Ան էր որ փորձեց Եգիպտոսի կորովի նախագահը մահափորձի ենթարկել տալ»[40]։

Նուրի Սաիդի և, ընդհանրապես, հետադիմական կարգերի նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքը առավել ցայտուն արտահայտվեց մանավանդ այն ժամանակ, երբ Իրաքում կործանվեց Ֆեյսալի միապետական իրավակարգը և ստեղծվեց հանրապետություն։ Հնչակյան կուսակցությունը Իրաքի հեղափոխությունը համարելով «պատմական նշանակություն ներկայացնող դեպք մը», գտնում էր, որ դրանով քանդվում էր իմպերիալիզմի գլխավոր հենարանը Միջին արևելքում, իսկ Բաղդադի ուխտը մնալով առանց Բաղդադի,

39 «Տիքթաթոր մը ևս կը պակսի» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 13 հունվարի, 1959։

40 «Նուրի Սաիտ փաստեց թե ինքը մեծ կեղծավոր մըն է և թշնամին արաբական երկրներուն», «Արարատ», 27 հունվարի, 1957։

մահացու հարված է ստանում։ Արևմտյան պետությունները թվում է անտարբեր չպիտի մնան, սակայն ի՞նչ կարող են անել. «Ժողովուրդ մը, իր երկրի սահմաններուն մեջ, դժգոհ տիրող վարչակարգեն, վերջ տված է անոր և նոր վարչակարգ հաստատած։ Ներքին հարց մը, որ Իրաքի ժողովուրդին կը վերաբերի»[41]։ Ոչ մի պետություն իրավունք չունի խառնվելու Իրաքի ներքին գործերին, իսկ եթե անգամ փորձեն միևնույն է, հաջողության հասնել չեն կարող։

Իրաքի հեղափոխությունը հնչակի կողմից դիտվում է որպես «մեկ օղակը վերազարթնող Արաբ Ազգայնականության հաղթանակներու շղթային, որ քանի մը տարիներե ի վեր սրկված է Մերձավոր ու Միջին արևելքի այն երկիրներուն մեջ, որոնք կկրեին նախ օսմանյան և ապա արևմտյան գաղութարարներու կեղեքիչ լուծը»[42]։

Ասիայի և Աֆրիկայի երկրների ազգային-ազատագրական անզուսպ շարժման լուրջ հարվածների տակ իմպերիալիստական պետությունները հարկադրված են իրենց դիրքերը զիջել։ Իրաքի հեղափոխությունը շանթահարիչ հարված էր Մերձավոր ու Միջին արևելքում՝ գաղութարարության միջնաբերդին։ Բաղդադի ուխտը մնաց առանց Բաղդադի[43]։ Սակայն ԱՄՆ-ը ձեռնամուխ եղավ այդ բլոկի փրկման գործին։ Կենտրոնը փոխադրվեց Կարաչի, իսկ անունը դարձավ ՍԵՆՏՕ։ Հնչակյանները հեղնում են ԱՄՆ-ի իմպերիալիստների քաղաքականությունը, որը պաշտոնապես միշտ հանդես է գալիս ազատագրական շարժումների «պաշտպանության» դրոշի տակ, իսկ գործնականում իրագործում գաղութարարական հին մեթոդները, միայն թե նոր դիմակի տակ[44]։ ԱՄՆ-ի գա-

41 «Արարատ», 16 հուլիսի, 1958։

42 «Իրաքի հեղափոխությունը», «Երիտասարդ Հայաստան», 25 հուլիսի, 1958։

43 «Նոր դավադրություն մը կը պատրաստվի», տե՛ս «Արարատ», 14 փետրվարի, 1959։

44 «Գաղութարարները նոր ռազմավարության կդիմեն իրենց կորսնցուցած դիրքերը վերագրավելու համար» (խմբագրական), «Արարատ», 20 փետրվարի, 1959։

ղութարարական քաղաքականությունը ամենուրեք ձախողվում է:

Հարցն այն է, որ ամերիկյան իմպերիալիզմը չի կարողանում համակերպվել այն մտքի հետ, թե Արաբական արևելքի ժողովուրդները՝ զրկված գաղութային վարչակարգից, վճռել են ամրապնդել իրենց ազգային անկախությունը[45]:

Միայն Սովետական Միությունը և սոցիալիզմի մյուս երկրներն են անկեղծորեն պաշտպանում արաբական ժողովուրդների շահերը, և վերջիններիս չի կարող մոլորեցնել իմպերիալիստական պրոպագանդայի այն միտումը, որի նպատակն է սոցիալիզմի լագերի այդ անշահախնդիր օգնությունը ներկայացնել իբրև շահադիտական նպատակների հետապնդում:

Իրաքի ժողովրդի հաղթանակը հնչակյան գործիչների կողմից արդարացիորեն դիտվում է նաև որպես իրաքահայության հաղթանակ: Իրաքի հեղափոխության հաղթանակի կապակցությամբ հնչակյան կուսակցությունը, նշելով այն բոլոր պատմական նվաճումները, որ ձեռք է բերում արաբ աշխատավորությունը, միաժամանակ ողջունում է նաև իրաքահայությանը, որի «ճակատագիրը կը կապվեր իր պատկանած երկրի ժողովրդի ճակատագրին: Ահա թե ինչու հուլիսի 14-ի ազատության այգաբացը իր կենսատու շողերով ջերմացուց նաև իրաքահայության կծկված հոգին և անկե պոռթկացուց հոն կուտակված տարիներու կարոտը՝ Հայրենիքին, ազատության և կենսաբուխ ժպիտին»[46]:

Իրաքահայությունը ետ ստացավ իր հափշտակված իրավունքները, իր երկրորդ Հայրենիքը: Ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Իրաքում հայությունը ակտիվորեն մասնակցեց երկրի ազատագրական շարժումներին: Այդ պայքարում, օրինակ, իրաքահայ գործիչ Քամել Գազանճյանը թողեց ան-

45 «Ամերիկյան քարոզչության գրգռիչ ստերը», տե՛ս «Արարատ», 4 մարտի, 1959:

46 «Ողջույն Իրաքահայության» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 13 մարտի, 1959:

մռայլ հիշատակ։ Նա 1947 թ., որպես ճանաչված փաստաբան, հանձն է առնում Իրաքի կոմունիստական կուսակցության 19 ղեկավարների դատի պաշտպանությունը։ Իրաքի կոմունիստական կուսակցության ղեկավարների պաշտպանությունը Գաղանճյանը այնքան լավ է վարում, որ հակահեղափոխական իշխանությունը նրան էլ է ձերբակալում, որպես «անբարեհույս և անբաղձալի քաղաքացու»։

1948 թ. Իրաքի կառավարությունը պատրաստվում էր դաշնագիր կնքել ԱՄՆ-ի հետ, որը հայտնի էր «Պորտսմուտի դաշնագիր» անունով։ Բանտից նոր դուրս եկած Գաղանճյանը ակտիվ մասնակցություն է ցույց տալիս դիմադիր շարժմանը և Բաղդադում ժողովրդական բողոքների կազմակերպմանը, որոնց հետևանքով դաշինքի կնքումը ձախողվեց։

Հակահեղափոխական ուժերի կողմից երկրում «կարգը» վերականգնելուց հետո, Գաղանճյանը հարկադրված էր թողնել երկրի սահմանները։ Իրաքի հեղափոխությունից հետո նա վերադարձավ և զոհվեց Մոսուլի դեպքերի ժամանակ։ Գաղանճյանը 1945 թ. հարում էր Քամալ Չաթըրճիի ազգային-դեմոկրատական կուսակցությանը՝ հանդիսանալով նրա առաջադիմական թևի ղեկավարը։ Նա արաբերենի է թարգմանել Կարլ Մարքսի և Ռուսոյի մի շարք աշխատություններ[47]։

Արաբական երկրներում քաղաքական մթնոլորտը շիկացավ հատկապես այն բանից հետո, երբ հրապարակ եկավ էյզենհաուերի նոր ծրագիրը, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ այդ երկրները ամերիկյան իմպերիալիզմի կցորդը դարձնելու մի քողարկված պլան։

Ամբողջ աշխարհի առաջադեմ ուժերը հուզված էին։ Արաբական երկրների առաջադիմական ուժերը ոտքի կանգնեցին ժողովրդի պայքարը ամերիկյան իմպերիալիզմի դեմ կազմակերպելու համար։ Գաղութացման վտանգը սև ամպի նման նորից կախվեց արաբական ժողովուրդների գլխին։

---

47 Մ. Առնելցի, *Իրաքի հեղափոխության հայազգի հերոսը, «Երիտասարդ Հայաստան», 27 մարտի, 1959։*

*Մերձավոր ու Միջին արևելքի ժողովուրդների համար այդ ծանր պահին իմպերիալիզմի գաղութային քաղաքականության դեմ մղվող պայքարում առաջադիմական ուժերի շարքում հանդես եկավ նաև Հնչակյան կուսակցությունը, որը էյզենհաուերի վարդապետության հրապարակ գալու հենց առաջին իսկ օրից հրապարակայնորեն բացահայտում էր նրա իմպերիալիստական, գաղութարարական բնույթը։ «Էյզենհաուերի ծրագրին գլխավոր նպատակն է Մ. Նահանգներու քաղաքական, տնտեսական ու զինվորական հակակշռին տակ առնել Մերձավոր ու Միջին արևելքի երկիրները»[48],—ահա այն գնահատականը, որ տալիս են հնչակները էյզենհաուերի ծրագրին։*

*Հնչակյան կուսակցության լիդերներից Ժ. Նայիրին, վերլուծելով ԱՄՆ-ի կողմից Մերձավոր ու Միջին արևելքի երկրների գաղութացման փորձի պատճառները և այդ կապակցությամբ իմպերիալիստական պետությունների միջև գոյացած հակասությունները, գրում էր. «Մ. Նահանգներու մշտական ու գլխավոր ձգտումը եղած է՝ տեր դառնալ Մերձավոր արևելքի հում նյութի հարուստ աղբյուրներուն և ռազմագիտական դիրքերուն, որոնք կը շահագործվեին իր «դաշնակիցները» նկատված մրցակիցներուն կողմե։ Այդ նպատակին համար ան վճռական ու անգութ պայքար մղած է անոնց դեմ, տեղական ազատատենչ ժողովուրդներու և ֆրանսիական ու անգլիական գաղութատիրության միջև սկսած պայքարը ավելի սրելով առանց հաշվելու, որ օր մը ինքզինքը նույն այդ ազատատենչ ալիքներու առջև պիտի գտնե»[49]։*

*Ի դեպ, չափազանց ուշագրավ է, որ Հնչակյան կուսակցությունը տեսնում ու բացահայտում է նաև այն, որ իմպերիալիստական պետությունների միջև, չնայած նրանց նույն լագերում գտնվելուն, գոյություն ունեն խոր հակասություն-*

---

48 Ժիրայր Նայիրի, *Արաբ երկիրները իրենց անկախության և խաղաղ բարգավաճման սպառնացող նոր ծրագրի մը առջև, «Արարատ», 24 մարտի, 1957։*

49 *Նույն տեղում։*

ներ և մեծ մրցակցություն՝ գաղութային երկրներին տիրանալու գործում։

Այն ժամանակ, երբ գաղութային ժողովուրդների ճնշման տակ Անգլիան, Ֆրանսիան և մյուս պետությունները ստիպված են աստիճանաբար զիջել իրենց դիրքերը, ԱՄՆ-ի իմպերիալիստները փութկոտությամբ ջանք են գործադրում ամենատարբեր ձևերով իրենց ձեռքը գցելու նոր ազատագրված գաղութները։

Հնչակյան կուսակցությունը քննադատում է ամերիկյան իմպերիալիզմին հատկապես Աֆրիկայի նկատմամբ կիրառվող քաղաքականության բնագավառում և պահանջում վտարել այդ երկրամասից բոլոր գաղութարարներին[50]։

ԱՄՆ-ի իմպերիալիստների գաղութային, նվաճողական քաղաքականությունը ավելի որոշակիորեն դրսևորվեց Իրաքի հեղափոխությունից հետո՝ Լիբանանյան դեպքերի կապակցությամբ Մերձավոր ու Միջին արևելքում ստեղծված բարդ իրադրության ժամանակ։ Այդ օրերին Հնչակյան կուսակցությունը ազդարարեց. «Այսպիսով, ռամկավարական-ազատական Ամերիկան, որ Արևմտյան գաղութարարությունը դատապարտողի համբավը կվայելեր ցարդ, հանդես կուգար, Արևելքի աչքին, որպես նոր գաղութարար երկիր մը, որ կուզեր մյուսներու հետ,— կամ անոնց փոխարեն տեղավորվել Արևելքի մեջ»[51]։

Որպեսզի կարողանան իրագործել իրենց զավթողական պլանները, Արևմուտքի դիվանագետները ջանում են պառակտել արաբական ազատագրական շարժումը, լավ հասկանալով, որ միասնական արաբական շարժումը անհաղթելի է։ Սակայն միջազգային իմպերիալիզմի ջանքերը «... ի դերև պիտի ելլեն՝ շնորհիվ արաբ ժողովրդական հաստատուն կեց-

---

50 Տե՛ս «Արարատ», 6 և 9 դեկտեմբերի, 1958։

51 «Միջին Արևելքի չեզոքացումը», «Երիտասարդ Հայաստան», 22 օգոստոսի, 1958։

*վածքին՝ Հանդես բազմիցս փորձված դաշնակցականներուն»[52]: Նշելով այդ, Հնչակը գտնում է, որ Արաբական աշխարհը՝ կշտացած իմպերիալիզմի լծի դառն պտուղներից, համատարածորեն հակահարված է տալիս Արևմուտքի՝ կոմունիզմի դեմ պայքարի պատրվակի տակ գաղութատիրական սխեմը վերստեղծելու փորձերին[53]: «Մերձավոր Արևելքը հղկած ու շտկած է իր ուղին: Այսօր ամբողջ արաբական երկրները, արաբ ժողովուրդը միացած ասիական բազմամիլիոն ազգերուն, կեցած է* Արևելյան Խաղաղականության ճամբուն վրա:

*Ինչ է անոր կարիքը.— դուրս վտարել իրենց ժողովրդին մարմնին կպած տզրուկները՝ դաշնակցությունները»,— վերլուծելով Մերձավոր արևելքի ժողովուրդների քաղաքականությունը, գրում են հնչակյանները[54]:*

*Արաբական շարժման միասնականությունը ուրախացնում է Հնչակյան կուսակցությունը, երբ իր մշտական փափագն է համարում՝ տեսնել արաբներին կողք-կողքի, սիրտ-սրտի և հեռու պատերազմասեր հրձիգների դավադրություններից[55]:*

*Սակայն, ինչպես բոլոր առաջադիմական, դեմոկրատական ուժերը, այնպես էլ Հնչակյան կուսակցությունը, պայքարում է ոչ միայն նրա համար, որ ազատագրական պայքարում արաբները միասնականորեն հանդես գան, այլև նրա համար, որ դրան մասնակից լինեն նաև այդ երկրների ազգային փոքրամասնությունները: Հայ աշխատավորությունը, որ երկրում էլ գտնվելիս լինի, դաշնակցում է տեղի դեմոկրատական ուժերի հետ և պայքարում խաղաղության ու ազատության համար: Չէ՞ որ Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը իր սուր ծայրով ուղղված է իմպե-*

52 *«Արաբական քաղաքականությունը անսասան է» (խմբագրական), «Արարատ», 2 սեպտեմբերի, 1954:*

53 *Նույն տեղում:*

54 *«Արևելքին հետ թե արևմուտքին», «Արարատ», 27 օգոստոսի, 1956:*

55 *«Ներգաղթն է միայն փրկության ճամբան», «Արարատ», 3 ապրիլի, 1955:*

րիալիզմի ու հետադիմական ուժերի դեմ և ջերմ համակրանք ու լայն աջակցություն է գտնում աշխարհի խաղաղասեր ժողովուրդների մոտ։ Ապրելով ու գործելով արաբական երկրներում, սփյուռքահայ աշխատավորը օրինաչափորեն մասնակցում է իրեն հյուրընկալած տվյալ ժողովրդի ազատագրական պայքարին։

Սփյուռքում գտնվող հայությունը կարող է ունենալ միայն մեկ քաղաքական գիծ՝ դաշնակցել հակաիմպերիալիստական ուժերի հետ և ջանք չխնայել խաղաղության, դեմոկրատիայի և ազգային-ազատագրական պայքարի հաղթանակի համար։

Հիրավի, սփյուռքահայ աշխատավորությունը սերտորեն համագործակցելով բոլոր առաջադիմական ուժերի հետ, պայքարում է իմպերիալիզմի դեմ՝ հանուն առաջադիմության և գաղութային երկրների ազատագրության։ Անկախ նրանից, թե որտեղ է բնակվում հայ աշխատավորը՝ եվրոպական երկրներում, Ամերիկայում, Ասիայում, թե Աֆրիկայում, նա ամենուրեք արժանանում է տեղական ժողովուրդների ջերմ համակրությանը և իր ընդունակություններն ու տաղանդը ի սպաս դնում տվյալ երկրի բարգավաճմանը։ Բոլոր հայաբնակ երկրներում հայ և տեղական ժողովուրդների միջև գոյություն ունեն ամենաբարեկամական և ջերմ հարաբերություններ։

Միանգամայն տրամաբանական է և ողջունելի այն, որ ազգային-ազատագրական զարթոնքի շրջան ապրող երկրներում գտնվող հայկական ազգային փոքրամասնությունները ևս մասնակցում են այդ շարժումներին։ Արևմտյան Հայաստանում բարբարոսական սպանդից ազատված հայ աշխատավորը, թափառականի ցուպը ձեռքին, դեգերելով սփյուռքում, շատ լավ գիտե, թե ժողովրդի կյանքում ինչպիսի անգնահատելի նշանակություն ունի ազգային-ազատագրական պայքարը։ Եվ արյան ու արցունքի ծովեր անցած, հրաշքով կենդանի մնացած հայ աշխատավորը այսօր մասնակցում է ուրիշ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին։

*Հայերի համար այդ հյուրընկալող երկրները դարձել են երկրորդ հայրենիք, իսկ տեղի աշխատավորները՝ եղբայրներ։ Մի՞թե կարելի է չմասնակցել այդ պայքարին, այն համարելով իրենց չվերաբերող հարց։ «Սփյուռքահայությունը,— գրում է Ա. Կիտուրը,— իբր պատմական անցյալի ուխտ, ի բնե կողմնակից է խաղաղության և հետևաբար, նույնիսկ իմպերիալիստական երկրներու մեջ կը կանգնի խաղաղասեր ուժերու կողքին, այլ տեսանկյունեն՝ արաբ ժողովուրդներու կողքին, ընդդեմ բոլոր կայսերապաշտներուն»[56]։*

*Դաշնակցությունը, որը, ինչպես ցույց տվեցինք վերը, իրականում պաշտպանում է գաղութատիրական պետությունների և հետադիմական կառավարությունների, պաշտոնապես առաջ է քաշում այն լոզունգը, որ սփյուռքահայությունը չպետք է մասնակցի այլ ժողովուրդների ներքին գործերին, ազգային-ազատագրական պայքարին և պետք է վարի չեզոք քաղաքականություն։ Սակայն, ինչպես առիթ ենք ունեցել նշելու, դաշնակցությունը իրականում նույնիսկ չեզոք էլ չէ, նա ակտիվորեն պաշտպանում է իմպերիալիզմի գաղութային քաղաքականությունը։ Դաշնակցության հիմնական նպատակներից մեկը Սովետական Միության ազդեցությունը Մերձավոր և Միջին արևելքում նսեմացնելն է։ Այդ քաղաքականությամբ նա վնասում է ոչ միայն հայ, այլև արաբ ժողովուրդների շահերին։ Հակառակ դրան, փաստարկում են հնչակյանները, հայ և արաբ ժողովուրդները մշտապես հանդես են գալիս միասին[57]։*

*Սփյուռքահայ առաջադիմական ուժերը լիովին հավանություն են տալիս ազգային-ազատագրական պայքարին և մասնակցում են նրան։ Հնչակյան կուսակցությունը այդ բնագավառում ծավալել է զգալի գործունեություն։*

---

56 Ա. Կիտուր, *Դիմակազերծեցեք պատերազմի հրձիգները*, «Արարատ», 10 մարտի, 1960։

57 «Դաշնակները իբր միջազգային տիպեր», «Արարատ», 3 հունիսի, 1956։

*Հնչակյանները, մյուս առաջադիմական ուժերի հետ միասին, ամրապնդում են հայ-արաբ ժողովուրդների միասնությունը։ Այդ միասնությունը քայքայելու նպատակով դաշնակցության կողմից բազմիցս կատարված փորձերը մշտապես հանդիպում են հայ առաջադիմական ուժերի համառ դիմադրությանը։ Լիբանանի դեպքերի լարված օրերին «Արարատը» մերկացնելով դաշնակցության՝ հայ-արաբ ժողովուրդների բարեկամության դեմ ուղղված դավադրությունները, գրում էր. «Ավելի քան երբեք անհրաժեշտ է հայ-արաբ ժողովուրդներու եղբայրական միասնությունը. իզուր կփորձեք կասկածանքի ենթարկել այն... Հայ-արաբ ժողովուրդները այսօր կանգնած են իրենց միասնական շահերու պաշտպանության գործին, թույլ չտալով, որ Լիբանան իյնա ռազմամոլ հրձիգներու թակարդին մեջ»[58]։*

*Արաբական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին հայերի մասնակցության մասին գրում ու խոսում են ոչ միայն հայ, այլև արաբական գործիչները։*

*1946 թվականին, Սիրիայի գաղութային լծից ազատվելու կապակցությամբ, այդ երկրի ընդդիմադիր կուսակցության լիդերներից Ռյուշտի պեյ Քեհյան ասաց. «Այս երկիրներու մեջ հայ տարրը եղած է մեր ամենասիրելի փոքրամասնությունը, որը իր ազատամտությամբ, աշխատասիրությամբ և ուշիմությամբ՝ մեծ ծառայություններ մատուցած է այս երկրին։ Մենք մեծապես կը գնահատենք Հնչակյան կուսակցության գործունեությունը»[59]։*

*Սիրիայի ազատագրման մեջ հայերի ունեցած դերի մասին այդ երկրի՝ ԱՄՆ-ում նախկին դեսպան Նազեմ պեյ Քուտսին ասել է. «Մեր հայ եղբայրներուն հետ գործակցաբար կարողացանք վերագտնել մեր անկախությունը։ Այսօր պար-*

---

58 Ժիրայր Նայիրի, *Կեցցե հայ-արաբ եղբայրական ժողովուրդներու պայքարը խաղաղության, ազգային գերիշխանության և հացի համար, «Արարատ», 19 հունիսի, 1955։*

59 *«Արարատ», 6 նոյեմբերի, 1946։*

*տականություն կլինա ամեն մեկ առաջադիմական սուրիացիի վրա մաքրելու երկիրը հետադիմական տարրերից և ավելի ամուր դարձնելու համար այդ ձեռք ձգված անկախությունը։ Այս նոր հաղթանակը լավագույն գրավականն է մեր հառաջիկայի ծրագրերներու իրականացման»*[60]։

*Սփյուռքահայությունը՝ սերտորեն կապված գաղութային լծից ազատագրված ժողովուրդների հետ, ուրախանում է նրանց հաջողություններով և տխրում՝ անհաջողություններով։ Արաբական ժողովրդի շահերը սփյուռքահայությունը չի ջոկում սեփական շահերից։*

*Սիրիան ամեն տարի դեկտեմբերի 3-ին նշում է իր մեծ տոնը՝ իմպերիալիզմի լծից ազատվելու օրը։ Այդ տոնին, երկրի բոլոր առաջադիմական ուժերի հետ միասին մասնակցում է և Հնչակյան կուսակցությունը, և ամբողջ սփյուռքահայ աշխատավորությունը՝ մաղթելով, որ Սիրիան «կարողանա խորացնել հեղաշրջման կենսանորոգ ծրագիրը, դարերե ի վեր տառապած ու արյունաքամ դարձած ժողովրդի գերագույն շահերու պաշտպանության ի խնդիր»*[61]։

*Հնչակյան մամուլը, սակայն, չի մոռանում նաև հարցի մյուս կողմը։ Այն բազմիցս ընդգծել է, որ չնայած երկիրը ազատագրվել է գաղութային լծից, սակայն ներքին կյանքում արմատական փոփոխություններ դեռևս չեն կատարվել, ժողովրդական մասսաների դրությունը մնացել է անփոփոխ։*

*Արաբների ազգային-ազատագրական շարժումը համարելով առաջադիմական, որը տվյալ ազգի ըմբոստացումն է օտար շահագործողների դեմ, և վերլուծելով այդ երկրներում անկախության նվաճումից հետո տեղի ունեցող փոփոխությունները, Հնչակը միաժամանակ քննադատում է տեղական շահագործողներին և հետադիմական ուժերին*[62]։

---

60 *Նույն տեղում։*

61 *«Դեկտեմբերյան տարեդարձը» (խմբագրական), «Արարատ», 4 դեկտեմբերի, 1952։*

62 *«Արաբական ազգային շարժումը և աշխատավորությունը», տե՛ս «Արարատ», 21 օգոստոսի, 1958։*

Հնչակյան կուսակցությունը, սփյուռքահայ մյուս առաջադիմական կազմակերպությունների հետ միասին ակտիվ մասնակցություն ցույց տվեց 1958 թ. լիբանանյան դեպքերին։ Էյզենհաուերի դոկտրինան Լիբանանի կառավարության կողմից ընդունելուց հետո, երկրում բարձրացավ բողոքի հզոր ալիք։ Պրեզիդենտ Շամունի հակաժողովրդական քաղաքականության դեմ դուրս եկավ ամբողջ ժողովուրդը։ Միտինգները, ցույցերը և գործադուլները հաջորդում էին մեկը մյուսին։

Շամունի կողմնակիցները կեղծ լուրեր տարածեցին, թե երբ Լիբանանում սկսված շարժումը Նասերի խռովարարներն են կազմակերպել՝ երկիրը իրար խառնելու և այն Եգիպտոսի գաղութը դարձնելու համար։ Դաշնակցությունը պաշտպանում էր այդ տեսակետը։

Ամերիկացիները փորձեցին խառնվել Լիբանանի ներքին գործերին։ Հնչակը «բողոքագիր մը հղեց ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարության՝ շեշտելով, թե Լիբանանի հեղափոխությունը ներքին հեղափոխություն մըն էր, և ուղղված, Շամուն, Սոլհ, Մալիքյան կործանարար վարչակարգին դեմ»[63]։

Ամերիկացիների Լիբանան ներխուժումից առաջ երկրի ազգային ուժերը հանրապետության նախագահության համար առաջ քաշեցին զինված ուժերի հրամանատար՝ Ֆուադ Շեհաբի թեկնածությունը։ Հայկական ազգային ճակատը ևս պաշտպանում էր այդ թեկնածությունը։ Դաշնակցությունը շարունակում էր պաշտպանել Շամունին՝ կարծելով, թե արտաքին ուժերի օգնությամբ նա կմնա իշխանության գլուխ։ Ապստամբության օրերին հայկական ազգային ճակատը դեմոկրատական ուժերի հետ էր, իսկ դաշնակցությունը՝ Շամունի։ Նա կամավորներ տրամադրեց վերջինիս։

1958 թ. մայիսի 7-ին Բեյրութում սպանվեց «Տելեգրաֆ» թերթի գլխավոր խմբագիր Նասիբ Մետնին։ Այդ կապակցու-

63 «Հնչակյան կուսակցությունը Լիբանանի ազգային հեղափոխության օրերուն» (խմբագրական), «Արարատ», 19 մարտի, 1959։

թյամբ գործադուլներն ու ցույցերն ավելի սուր և մասսայական բնույթ ընդունեցին: Մայիսի 13-ին և 14-ին զինված ընդհարումներ սկսվեցին Բեյրութում, իսկ 19-ին օպոզիցիայի կոչով երկրում տեղի ունեցավ համընդհանուր գործադուլ: Մայիսի 24-ին Սամի Սոլհի կառավարությունը որոշում ընդունեց զինված ուժերով ճնշել ապստամբությունը: Սակայն ապստամբությունը ճնշել չհաջողվեց: Հունիսի վերջերին ապստամբների ձեռքում էր գտնվում երկրի տերիտորիայի երկու երրորդը:

ԱՄՆ-ի ղեկավար շրջանները, տեսնելով, որ իրենց դրածոյի օրերը հաշված են, անմիջապես զորք ուղարկեցին Լիբանան, իբր թե «պաշտպանելու քրիստոնյաներին»: Այնինչ՝ անկախ կրոնական տարբերություններից, բոլոր ազգերի աշխատավորներն էլ, կողք-կողքի, եղբոր նման, պայքարում էին Շամունի պրոիմպերիալիստական քաղաքականության դեմ: Հնչակը, որպես քրիստոնյա ազգի քաղաքական կուսակցություն, այդ օրերին խստորեն ծաղրում էր ԱՄՆ-ի քաղաքականությունը և բացահայտում նրա իսկական նպատակները. «օգնության այդ հույսով ալ մենք այրեցանք, այո, որովհետև գաղութարարները մեզմե քրիստոնեություն չէին ուզեր: Այլ նավթ, հում նյութ, ռազմական խարիսխ, վաճառքի շուկա»[64]:

Հնչակյան կուսակցությունը քննադատում էր իմպերիալիստական պետությունների կողմից փոքր ժողովուրդների անկախության ու ազգային ինքնորոշման իրավունքները անտեսելու փորձերը: Հատկապես կրակի տակ էր առնվում ամերիկյան և անգլիական իմպերիալիստների քաղաքականությունը, որը ոչ մի սրբություն չունենալով, ոտնահարում էր բոլոր միջազգային օրենքները: «Անգլո-ամերիկացիները,— գրում են հնչակյանները,— չեն հարգեր ՄԱԿ-ի ուխտը: Ավելի ճիշտը, անոնք կը հարգեն զայն այնքան, որքան այդ ուխտին տրամադրությունները կը ծառայեն իրենց նվաճողական

64 «Բարեկամությունը խաղաղ գոյակցության երաշխիքն է» (խմբագրական), «Արարատ», 7 օգոստոսի, 1958:

*նպատակներում, կը վարագուրեն իրենց ավազակային նախահարձակումները»*[65]*:*

*Լիբանանի հայ աշխատավորությունը, արաբների հետ ձեռք-ձեռքի, այդ օրերին մասնակցեց երկրի հակաժողովրդական կառավարության դեմ մղվող պայքարին։ Կազմվել էր Լիբանանի ազգային ընդդիմադրության ճակատ, որին մասնակցում էին նաև լիբանանահայ կազմակերպությունների ներկայացուցիչները։ Ինչպես նշվեց, միայն դաշնակցությունը չմասնակցեց ընդդիմադրության ճակատին և ակտիվորեն պաշտպանեց Շամունի կառավարությանը։*

*Դաշնակցության համակրանքը դեպի Շամունի պրոիմպերիալիստական կառավարությունը պատահականության կամ թյուրիմացության արդյունք չէր և բխում էր այդ կուսակցության տրադիցիոն քաղաքականությունից և էությունից։ Ավելի քան 30 տարի դաշնակցությունը ծառայել է իմպերիալիզմին՝ ի վնաս արաբ ժողովուրդների ազգային շահերի։ Ավելի քան 30 տարի դաշնակցությունը՝ կապված միջազգային իմպերիալիզմի հետ, պայքարում է արաբական երկրներում իմպերիալիզմի տիրապետության ուժեղացման և գոյատևման համար՝ ի վնաս այդ երկրների անկախության և ինքնիշխանության։ Հնչակը ճիշտ է նկատում դաշնակների նման քաղաքականության պատճառը։ Եվ այսօր, գրում է հնչակյան մամուլը, երբ ծածանվում է արաբների ազատագրության դրոշը, պայքար է մղվում նահանջող իմպերիալիզմի դեմ, դաշնակցությունը պաշտպանում է իմպերիալիզմին, լավ հասկանալով, որ վերջինիս կործանմամբ՝ կործանվում է նաև ինքը*[66]*։ Դաշնակցության հիմնական նպատակը իր իշխանության վերահաստատումն է Հայաստանում, իհարկե, միջազգային իմպերիալիզմի օգնությամբ։ Այդ պատճառով էլ*

---

65 *«Ռանձնության փոքր ժողովուրդները անկախության ու ազգային ինքնորոշման իրավունքին դեմ» (խմբագրական), «Արարատ», 9 օգոստոսի, 1958։*

66 *«Դաշնակցության ճգնաժամը» (խմբագրական), տե՛ս «Արարատ», 6 մարտի, 1958։*

դաշնակցությունը իր բոլոր միջոցներով պաշտպանում է իմպերիալիզմը և ցանկանում, որպեսզի ամերիկյան ռազմախարիսխներ հաստատվեն հատկապես Մերձավոր արևելքի բոլոր երկրների մեջ՝ Սովետական Միության դեմ[67]։

Իմպերիալիզմի և արաբական ազգային-ազատագրական շարժման շահերի միջև ընկած է անհատակ անդունդ։ Եվ դաշնակցությունը օգտագործում է այդ հակասությունները, պայքարում ազատագրական շարժումների դեմ, հասկանալով, որ այդ ժողովուրդների կողմից անկախություն նվաճելու դեպքում ինքը կզրկվի իմպերիալիստական պետությունների ֆինանսավորումից։

Հնչակյանները ճիշտ են նկատել, որ չնայած «Այսօր իմպերիալիզմը հոգեվարքի մեջ է Մերձավոր արևելքի մեջ։ Բայց դաշնակները կը շարունակեն պաշտպանել անոր շահերը և կը պայքարին արաբական ազգայնականության հզոր ու հաղթական շարժումին դեմ»[68]։

Հնչակը ճիշտ է շեշտում, որ դաշնակցությունն իր պրոիմպերիալիստական քաղաքականությամբ թունավորում է հայ-արաբական անկեղծ բարեկամությունը և սերմանում ատելություն արաբների մեջ՝ հանդեպ հայը[69]։ Բյուրոյականների դավադրական քաղաքականությունը արաբական արևելքի երկրներում վնասում է ազգային-ազատագրական պայքարին, ինչպես և հայ-արաբական բարեկամությանը։ Հնչակյան կուսակցությունը հենց այդ խնդրի վրա է ուշադրություն դարձնում, մերկացնելով դաշնակցության ժողովրդակործան քաղաքականությունը[70]։

Սփյուռքահայությունը, սակայն, չի գնում դաշնակցության հետևից և իր ամբողջ ուժերը ի սպաս է դրել ազգային-ազատագրական պայքարի հաղթանակի գործին։

---

67 Նույն տեղում։

68 «Դաշնակցությունը կը վտանգե հայ ժողովրդին գոյությունը» (խմբագրական), «Արարատ», 9 մարտի, 1958։

69 Նույն տեղում։

70 Տե՛ս «Արարատ», 12 մարտի, 1958։

Իրենք՝ արաբներն էլ հիանալի գիտեն այն անհատակ անդունդի մասին, որը սփյուռքահայությանը բաժանում է դաշնակցությունից։ Ահա թե ինչ են գրում Դամասկոսի և Հալեպի «էլ-Սարխա» և «էլ-Թերպիե» թերթերը դաշնակցության մասին. «... Անկասկած չէր արժեր այս կուսակցությամբ զբաղվել, եթե երբեք անոր ոճրային արարքները չըլլային, որոնք կվտանգեին Միջին և Մերձավոր արևելքի ժողովուրդների խաղաղությունը և ապահովությունը»[71]։ Դաշնակցությունը, շարունակում են արաբական թերթերը, վերածվել է ոճրագործների մի խմբակի, որը ամենուրեք դավադրություններ և ոճիրներ է կազմակերպում հօգուտ իմպերիալիզմի։ Այսպես անդրադառնալով այն անդունդին, որը սփյուռքի հայությանը բաժանում է դաշնակցությունից, արաբական թերթերը շեշտում են այն հանգամանքը, որ թեև դաշնակ շեֆերը իրենց տերերի մոտ խոսում են հայ ժողովրդի անունից, սակայն վերջինս ոչ մի կապ չունի այդ կուսակցության և նրա կատարած դավերի հետ։ Ավելի քան 30 տարի այս ոճրագործ խմբակը դավում է արաբ ժողովրդի դեմ, որը գրկաբաց ընդունել է հայ գաղթական ժողովրդին՝ տուն ու տեղ տալով նրան։ Դաշնակ շեֆերը իրենց գոյությունը պահելու համար ամեն տեսակի շանտաժի ու ահաբեկչության դիմեցին և իրենց ընդդիմադիր հազարավոր հայեր սպանության, խոշտանգումի և հալածանքների ենթարկեցին։ Այլևս եկել է ժամանակը, գրում են արաբական թերթերը, որ անկեղծ ու հայրենասեր հայերն ու արաբները ասեն իրենց խոսքը և դեմ կենան դաշնակցության ահաբեկչության, իրենց շարքերը մաքրեն ոճրագործների այս խմբակից ու նրանց հետևորդներից, իմպերիալիզմի հինգերորդ զորասյունից[72]։

Այսպես ուրեմն, «դաշնակցությունը նոր չէր, որ ընտրություն պիտի կատարեր արաբական ազգայնականության ու իմպերիալիզմի միջև։ Նա կատարած էր այդ ընտրությունը

71 Հոդվածները արտատպված են «Երիտասարդ Հայաստանի» 1957 թ. օգոստոսի 6-ի համարում, որը և օգտագործում ենք։

72 Նույն տեղում։

դեռևս քանի մը տասնյակ տարիներ առաջ՝ ի նպաստ իմպերիալիզմի»[73]։ Եվ պատահական չէ, որ լիբանանյան դեպքերի ժամանակ դաշնակցությունը երկընտրանքի մեջ չմնաց։ Նա միացավ իմպերիալիզմի ուժերին՝ զենք բռնելով Շամունի և դոլմիների կողքին։ Դաշնակցությունը զենք բարձրացրեց Ռաշիդ Քարամեի հեղափոխական կառավարության դեմ, որպեսզի իմպերիալիզմը գոյատևի Լիբանանի մեջ և շարունակի սնունդ հայթայթել իր տեղական մակաբույծներին,— գրում են հնչակյանները[74]։

Չնայած Շամունը իր տիրապետության ժամանակ ջանք չէր խնայում դաշնակցությանը ներկայացնելու իբրև հայ ժողովրդի շահերի արտահայտիչ, այնուամենայնիվ, արաբները լավ գիտեին այն անհատակ վիհի մասին, որը հայ ժողովրդին բաժանում է դաշնակցությունից։ Բեյրութի արաբական «Ալ-Ախպար» օրաթերթը, անդրադառնալով այդ հարցին, նշում էր. «Արդարև, շատ խոր տարակարծություն և հակամարտություն մը կա մեկ կողմե դաշնակ ավազակախումբին և մյուս կողմե տարբեր հոսանքներու պատկանող հայ զանգվածներուն միջև։ Այդ տարակարծությունը մասնակի և պարզ տարակարծություն մը չէ... այլ անխիա ազգային քաղաքական տարակարծություն մըն է, որ երկար ժամանակե ի վեր կը դառնա հետևյալ հարցումին շուրջը. ո՞րու կողքին պետք է կանգնին հայերը։ Արաբական Արևելքի երկիրներու, ուր իրենք կ'ընակին—ազգային անկախության շարժումի՞ կողքին, թե այդ երկիրների ներս գտնվող իմպերիալիզմի գործակալներու կողքին»[75]։

Եվ այսպես, ամենուրեք, բոլոր հարցերի լուծման ժամանակ, հայ գաղութը բաժանվում է երկու ճակատի։ 1960 թվականին Լիբանանի խորհրդարանի ընտրությունների ժամա-

---

73 Նույն տեղում։

74 «Հնչակյան կուսակցությունը Լիբանանի ազգային հեղափոխության օրերուն» (խմբագրական), «Արարատ», 25 մարտի, 1959։

75 Մեջբերումը կատարված է «Սովետական Հայաստանի» 1958 թ. դեկտեմբերի 16-ի համարից։

նակ, Ա. Կիտուրը բացատրելով երկու ճակատների գոյության պատճառները, գրում էր. «Ինչո՞ւ երկու ճակատ ունենք: Շատ պարզ է: Մեկը՝ դաշնակը, որ միշտ կանգնած է կապիտալիզմի կողքին, շահագործող դասի շահերուն պաշտպան, ձեռք ձգելով «ընտրական մեքենայի» ղեկավարությունը, քարոզած է՝ «նպատակը կարդարացնե միջոցը» ճիզվիթական սկզբունքը, դիմած է անմարդկային միջոցներու (կեղծիք, բռնություն, ոճիր), գրավելու համար խորհրդարանական աթոռները»: Մյուսը սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնական ճակատն է, որը մշտապես հանդես է գալիս խաղաղության, ժողովրդավարության և ազատության համար մղվող պայքարի մարտիկների շարքերում[76]:

Հայ աշխատավորության պայքարը բարձր է գնահատվում արաբական երկրների առաջադիմական գործիչների կողմից: Լիբանանում, Շամունի իշխանությունը տապալելուց հետո, հնչակյան կուսակցությունը բարեկամական այց կազմակերպեց սոցիալիստական կուսակցության ղեկավար, ազատագրական պայքարի մասնակից Քամալ Ջամբլաթին: Այցը, որին մասնակցում էին մոտ 200 հոգի, տեղի ունեցավ 1958 թ. նոյեմբերի 9-ին, Բեյրութից 70 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Մուխթարա գյուղում:

Քամալ Ջամբլաթը հայ-արաբական համատեղ միտինգում, գնահատելով հայ աշխատավորության դերը արաբական ազատագրական պայքարում, ասաց. «Այսօր, մենք ուրախություն ունենք մեր մեջ ընդունելու մեր այն հայ եղբայրները՝ որոնք լիբանանյան հեղափոխության ընթացքին մասնակցեցան մեր պայքարին:

Մենք նոր չէ, որ պիտի ծանոթանանք ազատության համար մարտնչող հայերուն: Անոնք ծանոթ են անցյալին Կիլիկիո մեջ և հետո Թուրք սուլթանության դեմ իրենց կատարած հերոսական մարտնչումներովը:

Իսկ հոս՝ անոնք դարձած են ախպար քաղաքացիները մեր

---

76 Ա. Կիտուր, Երկու ճակատ թե մեկ, «Արարատ», 23 մարտի, 1960:

երկրին, լիբանանյան ընտանիքի որպես հավատավոր անդամները: Անոնք իրենց ճիգերը չխնայեցին զարկ տալու համար մեր հայրենիքի տնտեսական ու մշակութային մարզերու վերելքին...

Լիբանանյան հայրենիքի ծաղկման ու բարգավաճման ճամբուն մեջ անհրաժեշտ է համագործակցությունը երկրի բոլոր ազատասեր հոսանքներուն: Մեր առջև տակավին ունինք աշխատանքի ու նվիրումի լայն ճանապարհ մը, որուն մեջ պետք է իրագործվին տակավին անկախ մնացած շատ մը հարցեր:

Ահա թե ինչու այս պատմական Մուխթարա գյուղին Հնչակյան կուսակցության այցելությունը մեր կողմե կը նկատվի հայ և արաբ հառաջադիմական հոսանքներու համագործակցության նոր երաշխիք մը, կրկին բարի գալուստ կը մաղթենք իրենց»[77]:

Լիբանանի բազմաթիվ հայտնի քաղաքական այլ գործիչներ ևս հայ աշխատավորության և հայկական առաջադիմական ուժերի դերի մասին արտահայտել են համանման կարծիքներ:

Լիբանանի նախկին վարչապետ Սաեբ Սլամը, օրինակ, հայերի մասին նույնպես բարձր կարծիք է հայտնել. «Մենք,— ասել է նա,— պիտի չմոռանանք մեր հայ եղբայրները, և մանավանդ հնչակյանները, որոնք անվերապահորեն իբր հայրենասեր լիբանանցիներ դիմադրեցին մեր երկրի անկախության թշնամիներին»[78]:

Հայ ժողովրդի սփյուռքահայ հատվածը իր առաջադիմական կազմակերպություններով, մշտապես եղել է ու կլինի խաղաղության, դեմոկրատիայի և ազգային-ազատագրական պայքարի հաղթանակի համար մարտնչողների շարքերում: Ահա այդ ի նկատի ունի Լիբանանի վարչապետ Ռաշիդ Քարամեն, դիմելով հայ ժողովրդին հետևյալ խոսքերով. «Մենք և

77 «Հնչակյան կուսակցության բարեկամական այցելությունը Քամալ Ճամբլաթին», «Արարատ», 18 նոյեմբերի, 1958:

78 «Արարատ», 29 մարտի, 1959:

դուք եղբայրներ ենք, կռվեցանք պատնեշներու ետին, միասնաբար արյուն թափեցինք մեր Հայրենիքին անկախության համար։ Պիտի շարունակենք մնալ եղբայրներ ու պայքարել Լիբանանի անկախության զորացումին ու վերելքին համար»[79]։

Բերված փաստերը մեզ իրավունք են տալիս գալու այն եզրակացության, որ ինչպես հայկական մյուս առաջադիմական կազմակերպությունները, այնպես էլ Հնչակյան կուսակցությունը պայքարում է գաղութային սիստեմի լիկվիդացման և ազգային-ազատագրական պայքարի հաղթանակի համար։

---

79 Նույն տեղում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՅԱՆՔՈՒՄ

## 1. ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՈՒ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԻՍՏԵՄՆԵՐԸ

*Հայ իրականությունից ծնունդ առած մյուս կուսակցությունը, որի ժամանակակից սփյուռքում ծավալված գործունեությունը արժանի է լուրջ ուշադրության, ռամկավար ազատական կուսակցությունն է։*

*1885 թ. Ֆրանսիայի Մարսել քաղաքում հայ վտարանդիներից մեկը՝ Մկրտիչ Փորթուգալյանը սկսեց հրատարակել «Արմենիա» հայերեն թերթը, որը նպատակ ուներ Եվրոպայում ստեղծած հասարակական կարծիքի միջոցով միջազգային դիվանագիտությանը ստիպել սանձահարելու Աբդուլ-Համիդին։ Թերթի շուրջը համախմբված մտավորականները իրենց անվանում էին արմենականներ։*

*Փորթուգալյանը, ինչպես նշում է Լեոն, իր ղեկավար դերում ոչ մի նոր բան ասել չկարողացավ, բացի Բուլղարիայի օրինակը ցույց տալուց, որը վաղուց արել էին Գ. Արծրունին, Րաֆֆին և ուրիշները[1]։ Սույն տեսակետից, բնականաբար, բխում էր այն հետևությունը, որ հայերը ևս բուլղարացիների նման պետք է հայդուկային շարժում կազմակերպեն և ապստամբության դուրս գան։ Փորթուգալյանի վարած քաղաքականությունը չէր բավարարում նրա շուրջը համախմբված բոլոր մտավորականներին։ Այդ պատճառով էլ նրա գործա-*

[1] Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Ա, էջ, 141։*

կիցների մի մասը բաժանվելով, Լոնդոնում հիմնում են «Անգլո-Հայկական կոմիտեն», որը 1888 թ. սկսում է հրատարակել հայերեն և ֆրանսերեն լեզուներով՝ «Հայաստան» խորագրով թերթը։

Այս խմբակը, որ թերթի անունով կոչվում էր «Հայաստան», գտնում էր, որ հայոց հարցը կարող է լուծվել միմիայն եվրոպայի ջանքերով, դիվանագիտական ճանապարհով։ Դրանով էլ բացատրվում է այն, որ «Հայաստանը» մի կողմից՝ լայն կերպով եվրոպական հասարակայնության էր ներկայացնում արևմտահայերի կոտորածները և թշվառ վիճակը, մյուս կողմից՝ աշխատանք էր տանում մեծ պետությունների ղեկավարների մոտ հայոց հարցի նկատմամբ չեզոք, համակրական վերաբերմունք ստեղծելու ուղղությամբ։

Փորթուգալյանը տեսնելով, որ «Հայաստանի» ծավալած գործունեությունը կարող է հարցականի տակ դնել «Արմենիայի» գոյությունը, դիմում է պրակտիկ քայլերի և ստեղծում մի կազմակերպություն, որը կոչվեց «Հայոց հայրենասիրական միություն»։

Արմենական կուսակցության նպատակն էր «Հեղափոխությամբ Թուրքիայի հայ ժողովրդյան համար իրավունք ձեռք բերել, ինքզինք ազատորեն կառավարելու, որով միայն կարող կլինի, իբրև մարդ ապրելու միջոցներ գտնել և զանոնք գործադրել ժամանակի պահանջմանց համեմատ»[2]։

Կուսակցությունը իր նպատակին հասնելու համար խնդիր էր դնում՝ ժողովուրդը արթնացնել, կազմակերպությունների մեջ համախմբել, հեղափոխական պրակտիկություն տարածել, զինակրթության և կարգապահության վարժեցնել, զենք և դրամ հայթայթել, զինվորական շարժուն խմբեր կազմակերպել։ Կազմակերպությունը գտնում էր, որ ինքը իր գործունեությունը պետք է ծավալի առանց դավանանքի խտրության հայ ժողովրդի բոլոր շերտերում, չգործելով, սակայն հարևան ազգերի մեջ, նկատի ունենալով, որ հայ ազգի և

2 «Ծրագիր արմենական կազմակերպության», «Զարթոնք», 25, 27 դեկտեմբերի, 1960։

հարևան ցեղերի ու ժողովուրդների զարգացման մեջ մեծ տարբերություն կա, որի պատճառով հայ ազգի հեղափոխական շարժումը կարող է դանդաղել և կնճռոտել[3]:

Արմենական կուսակցությունը, որը իր սկիզբը փաստորեն առնում է 1885 թվականից, հետագայում միանալով տարբեր քաղաքական խմբերի հետ, փոխելով իր անունը, 1907 թ. կոչվեց «Գաղափարական միություն», 1908 թ.՝ «Սահմանադրական ռամկավարներ», իսկ 1921 թ.՝ ռամկավար ազատականներ:

Այս տարիներին փոխվել է կուսակցության անունը, բայց ոչ դասակարգային էությունը: Ռամկավարը, ինչպես գրում է Ա. Մյասնիկյանը, «գաղութահայ բուրժուազիայի, ասել է թե տաճկահայ, ավելի ճիշտ՝ արևմտաբնակ հայ մեծատնի ներկայացուցիչն է»[4]:

Ռամկավար ազատական կուսակցությունը Արևմտյան Հայաստանում չնայած երբեք չկարողացավ գրավել այնպիսի դիրքեր, որպիսին ձեռք էին բերել դաշնակցությունն ու հնչակը, այնուամենայնիվ, ազատագրական շարժման մեջ որոշակի դեր խաղաց, որպես արևմտահայ ազգային բուրժուազիայի կուսակցություն: Ինչ վերաբերում է Արևելյան Հայաստանին, ապա ռամկավարը այնտեղ երբեք ի վիճակի չեղավ լուրջ դիրքեր գրավելու:

Արևմտյան Հայաստանում ազատագրական պայքարի բարբարոսական ճնշումից և Արևելյան Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո ռամկավար ազատական կուսակցությունը իր գործունեությունը կենտրոնացրեց սփյուռքահայ գաղթօջախներում:

Ի՞նչպիսի քաղաքականություն է վարում ռամկավար ազատական կուսակցությունը ժամանակակից էտապում:

Ռամկավարները կտրված մայր երկրից՝ սփյուռքում գտնվում են զարգացման չափազանց անբարենպաստ պայ-

3 Նույն տեղում:

4 Ալ. Մարտունի, *Կուսակցությունները գաղութահայության մեջ*, Թիֆլիս, 1924, էջ 14—15:

մաններում։ Ա. Մյասնիկյանը ժամանակին այդ մասին գրել է. «Արևմտահայ դրամատերը փորձված է. նա շատ բան է տեսել, շատ երկրներ է ման եկել և այսպես թե այնպես դիզել է իր հարյուր հազարները և միլիոնները։ Նա օտար է այն երկրների համար, որտեղ հարստանում և ապրում է. նա չի կապված նրանց հետ օրգանապես։ Եվ այդ տեսակետից գաղութահայ մեծատունը տեղական քաղաքացի, հասարակական տիպ ու քաղաքական մեծություն չի ներկայացնում։ Այնտեղ նա քաղաքականությամբ բառի բուն իմաստով չի պարապում»[5]։

Ռամկավարները հարցին մոտենում են հետևյալ կերպ. Հայ ժողովրդի արևելահայ հատվածը, փրկված սպանդից, ստեղծել է գոյատևման փայլուն հնարավորություններ։ Հայ տաղանդը Սովետական Հայաստանում բազմակողմանի զարգացում է ապրում։ Այդ փոքր ժողովրդի մշակույթը նորից գրավում է համաշխարհային հասարակայնության ուշադրությունը։ Եզրակացությունը պարզ է. ժողովուրդը փրկվել է, ժողովուրդը ստեղծագործում է։

Հայ ժողովրդի մյուս հատվածը ցրված է սփյուռքի մեծաքանակ գաղութներում և աստիճանաբար ձուլվում է շրջապատող ազգերի մեջ, չկարողանալով պահպանել իր գոյությունը։ Ոչ ոքի մոտ կասկած չի առաջացնում այն միտքը, որ սփյուռքահայությունը դատապարտված է ձուլման, և ոչ մի ուժ նրան ի վիճակի չէ փրկելու դրանից։ Սփյուռքահայ բոլոր հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների ջանքերը միայն կարող են երկարացնել գաղութահայության կյանքը, բայց ոչ՝ փրկել ձուլումից։ Այսպիսի պայմաններում ռամկավարները գտնում են, որ սփյուռքահայության հարցը կարող է լուծվել երկու ձևով, առաջին. Արևմտյան Հայաստանի ազատագրությամբ, երկրորդ՝ սփյուռքահայերի ներգաղթով Սովետական Հայաստան։

Ռամկավար ազատական կուսակցությունը, ստեղծված

5 Նույն տեղում։

*պայմաններում, սփյուռքահայության փրկության միակ ուղին միջոցը համարում է՝ ներգաղթը Սովետական Հայաստան։ Ռամկավար ազատական կուսակցությունը, որը իր դասակարգային էությամբ բուրժուական կուսակցություն է, հայ ժողովրդի ժամանակակից կյանքի թելադրանքով, դառնում է «խորհրդայնասեր», սփյուռքահայության ապագան կապելով Սովետական Հայաստանի հետ։ Արևմուտքը բազմիցս խաբել է հայերին, ռամկավարները նրան այլևս չեն հավատում և արևմտահայ հարցի լուծումը կապում են սոցիալիզմի հզոր լագերի հետ։ Այս քաղաքականության էությունը պետք է ճիշտ հասկանալ. ռամկավարները չեն փոխում իրենց գաղափարախոսությունը, և, անշուշտ, Սովետական Հայաստանի փոխարեն մեծ ուրախությամբ կցանկանային տեսնել ռամկավարական Հայաստան։ «Ռամկավարները,— գրում է Ա. Մյասնիկյանը,— գաղութահայ և տաճկահայ բուրժուազիայի կուսակցությունն են կազմում։ Արտասահմանում հայկական կապիտալը և խոշոր ու միջին առևտուրը կուտակվել է ռամկավարների կուսակցության մեջ։ Այդ կապիտալը մեր վերաբերմամբ օրյենտիվորեն խաղաղ է, նրա կուսակցությունն էլ «խաղաղասիրական» է[6]»։*

*Ռամկավարների քաղաքական գործունեության մշակման վրա չափազանց մեծ ազդեցություն է ունեցել այն հանգամանքը, որ այդ կուսակցությունը կյանքի կոչված լինելով արևմտահայ իրականության կողմից ազատագրական շարժման հարցերի լուծման համար՝ չկարողացավ այն հաղթանակով պսակել։*

*Ազգային-ազատագրական պայքարի փորձը ցույց է տալիս, որ մինչև անկախության ձեռքբերումը, ազգի բոլոր առաջադիմական ուժերը միասնական ճակատով հանդես են գալիս իմպերիալիզմի և նրա գրածոների դեմ։ Հաղթանակի հասնելուց հետո միասնական ճակատի ուժերը պառակտվում են, բուրժուազիան իր քաղաքական կուսակցություններով ըն-*

---

6 Նույն տեղում, էջ 93։

*թանում է մի ուղղությամբ, աշխատավորական խավերը՝ այլ ուղղությամբ։*

*Սակայն հայ ժողովրդի կյանքի ընթացքը այլ հունով գնաց։ Մեր ժողովրդի արևելահայ հատվածը, ընկնելով ռուսական հեղափոխության հորձանուտի մեջ, ընթացավ սոցիալական պայքարի ուղիով, զուգահեռաբար իրականացնելով նաև ազգային-ազատագրական պայքարի խնդիրները։ Արևելահայության հարցը 1920 թ. նոյեմբերին վերջնականապես լուծվեց։ Ժողովուրդը փրկվեց և ձեռնամուխ եղավ սոցիալիստական հասարակարգի կառուցմանը։*

*Իսկ արևմտահայությո՞ւնը։ Արևմտահայության հարցը չլուծվեց։ Ավելի ճիշտ, թուրքական բարբարոսները այդ հարցը «լուծեցին» յուրովի՝ ոչնչացնելով բնակչությանը։ Արևմտյան Հայաստանը մնաց առանց հայերի, տեղական բնակչության մեծ մասը ոչնչացավ, իսկ ավելի փոքր մասը, սպանդից ազատվելով, դիմեց օտարություն, աշխարհի բազմաթիվ երկրներում հիմնադրելով նոր գաղթօջախներ, կամ էլ հները դարձնելով ավելի բազմամարդ։*

*Այսպիսով, Արևմտյան Հայաստանը և սփյուռքահայությունը՝ իր քաղաքական կուսակցություններով, մնացին որպես սիմվոլ պատմական մեծ անարդարության, սարսափելի բարբարոսության, հայության մեծ ողբերգության։*

*Ի՞նչ պետք է անեին այն կուսակցությունները, որոնք ի սկզբանե կյանքի էին կոչվել ազգային-ազատագրական պայքարի կողմից։ Հայկական վերջին ջարդերից հետո անցել է մոտ կես դար։ Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական պայքարը պարտվել է։*

*Կարևոր է նաև այն, որ հայկական կուսակցությունների ժամանակակից գործունեությունը ընթանում է տնտեսական ու քաղաքական զարգացման տարբեր մակարդակի վրա գտնվող երկրներում։ Նրանք գործում են և՛ իմպերիալիզմի առաջավոր երկրներում, և՛ հետամնաց երկրներում, ուր ալեկոծվում է ազգային-ազատագրական պայքարը։ Ռամկավար*

ազատական կուսակցությունը երկու դեպքումն էլ պետք է իր վերաբերմունքն ունենա։

Ելնելով իրենց դասակարգային էությունից և գաղափարախոսությունից, ռամկավարները պետք է պաշտպանեին իմպերիալիստական պետություններին և դուրս գային ազգային-ազատագրական պայքարի դեմ։ Բայց չէ՞ որ պաշտպանելով իմպերիալիզմը և դուրս գալով ազատագրական շարժումների դեմ, ռամկավարները դրանով իսկ հանդես կգային իրենք իրենց դեմ, այսինքն ազգային այն խնդրի լուծման դեմ, որի համար կյանքի էր կոչված ռամկավար ազատական կուսակցությունը։

Պատմական փոխված պայմաններում, ռամկավարները հարկադրված են իրենց ծրագրում մտցնել մի շարք խնդիրներ, որոնց մի մասը ժառանգություն են ստացել հայ ազատագրական պայքարից, իսկ մյուս մասը՝ մարդկության զարգացման արդի էտապի հրատապ հարցերի հետ առնչվող՝ հայ ժողովրդի ժամանակակից կյանքի խնդիրներից։ Եվ հայկական հարցի լուծման երաշխիքը նրանք տեսնում են սոցիալիզմի ու դեմոկրատիայի լագերի հաղթանակի մեջ: Դա օբյեկտիվորեն պետք է տաներ, և իրոք տարավ ռամկավար ազատական կուսակցությանը դեպի սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնական ճակատը:

* * *

Վերը շարադրվածը ցույց է տալիս, թե ինչու ռամկավար ազատականները համագործակցում են ոչ թե իմպերիալիզմի, այլ առաջադիմական ուժերի հետ։ Ասացինք, որ ռամկավարները ծնունդն են ազգային-ազատագրական պայքարի, և ամենից առաջ նրանք նպատակ ունեն լուծել հենց այն խնդիրները, որոնց համար իրենք կյանքի են կոչվել։ Սակայն դրա հետ միասին, իհարկե, ռամկավարները ունեն նաև իրենց ընկերային, տնտեսական և քաղաքական հայացքները, որոնք և այս կամ այն չափով պրոպագանդվում են այդ կուսակցության կողմից։

Ռամկավարների իդեալը բուրժուական դեմոկրատական պետությունն է։ Այդ իդեալը գոյություն է ունեցել և կուսակցության հիմնադրման ժամանակ և որոշ փոփոխություններով՝ այժմ։ Կուսակցության դասակարգային էության մեջ փոփոխություն տեղի չի ունեցել։ Ռամկավար ազատականների հիմնական սկզբունքն է. «ժողովրդային կամքի գերիշխանությունը և ռամկավար ազատական (լիբերալ դեմոկրատիայի—Լ. Խ.) սկզբունքներու կիրարկումը հայ պետական ու հանրային կյանքին մեջ»[7]։ Ռամկավարներն իրենց դրոշի վրա գրի են առել այն բոլոր սկզբունքները, որոնք իր գոյության արշալույսին առաջ էր քաշել բուրժուազիան։ Նրանք իրենց ծրագրում գրանցել են ընտրությունների ազատություն՝ ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ընտրությամբ, խոսքի, մամուլի, ժողովների, խղճի և կրոնի ազատություն, բոլոր քաղաքացիների հավասարությունը օրենքի առջև, անձի ազատություն և անձեռնմխելիություն, քաղաքացիական իրավունքների հավասարություն՝ դասակարգային արտոնության ժխտումով[8]։

Սակայն սրանք լոկ քաղաքական լոզունգներ են, որոնք բուրժուազիան առաջ է քաշել ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարում՝ մասսաներին իր հետևից տանելու և հաղթանակի հասնելու համար։ Այդ սկզբունքները ընդմիշտ մնացին թղթի վրա, բախտ չունենալով կյանքում կենսագործվելու։

Հասարակական կյանքը միայն քաղաքական լոզունգներով չի սահմանափակվում, այն ունի նաև իր արտադրական հարաբերությունները։ Ռամկավարների գաղափարախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք կանգնած են բուրժուական հարաբերությունների պաշտպանության դիրքերում։ Ռամկավար ազատական կուսակցության ծրա-

7 «Ռամկավար Ազատական կուսակցությունը» (տեսաբանությամբ), «Զարթոնք», 21 հուլիսի, 1955։

8 Նույն տեղում։

*գրած պետության հիմքը մնում է մասնավոր սեփականությունը և անհատական ձեռներեցությունը*[9]։

*Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Մի՞թե ռամկավարները կարող են հրաժարվել իրենց հարստություններից։ Իհարկե՝ ոչ։ Բուրժուազիայի համար մասնավոր սեփականությունը անձեռնմխելի սրբություն է, այդ պատճառով էլ բնական է թվում, երբ ռամկավար մամուլում կարդում ենք. «Սեփականության իրավունքը կը նկատվի արդար վայելումը աշխատանքի խնայողության արդյունքին»*[10]։

*XX դարում դժվար թե գտնվեն մարդիկ, որոնք հավատան դեռևս XIX դարում տարածված այն առասպելին, թե իբր մասնավոր սեփականությունը խնայողության արդյունք է։ Հազիվ թե որևէ մեկը հավատա, որ Մորգանի և Ռոկֆելլերի միլիարդները խնայողության արդյունք են։ Այդ պատճառով էլ անհրաժեշտ չենք համարում անդրադառնալ մասնավոր սեփականության առաջացման և հավելյալ արժեքի տեսության հարցերին։ Մի բան, որ գիտական բարեխղճությամբ լուսաբանվել է մարքսիզմի հիմնադիրների կողմից։*

*Դեռևս XIX դարի կեսերին, Մարքսը և Էնգելսը պատասխանելով բուրժուազիային, գրում էին. «Դուք սարսափում եք նրանից, որ մենք ուզում ենք մասնավոր սեփականությունը ոչնչացնել։ Բայց այժմյան ձեր հասարակության մեջ մասնավոր սեփականությունը ոչնչացված է նրա անդամների ինը տասներորդի համար. այդ սեփականությունը գոյություն ունի շնորհիվ հենց այն բանի, որ նա ինը տասներորդի համար գոյություն չունի։ Հետևաբար, դուք մեզ կշտամբում եք նրա համար, որ մենք ուզում ենք ոչնչացնել այն սեփականությունը, որ իբրև անհրաժեշտ պայման ենթադրում է սեփականության բացակայությունը հասարակության մեծամասնության մոտ»*[11]։

---

9 *Նույն տեղում, 22 հուլիսի, 1955։*

10 *Նույն տեղում։*

11 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, *Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Երևան, 1960, էջ 54։*

Միայն այս հարցում չէ, որ ռամկավարները կրկնում են բուրժուական գաղափարախոսության առանձին դրույթները։ Հայտնի է, որ մասնավոր սեփականության համայնացման պահանջի դեմ բուրժուազիան առաջ էր քաշում այն առարկությունը, թե իբր դրանով կդադարի ամեն գործունեություն և աշխարհում կթագավորի ընդհանուր ծուլությունը։ Ինչպես երևում է, ռամկավարները նկատի ունեն բուրժուական գաղափարախոսության վերոհիշյալ դրույթը, երբ գրում են. «Անհատական ձեռներեցությունը կը քաջալերվի իբր խթան հառաջդիմության և անհատի ու համայնքի վիճակի բարելավման»[12]։

Մարքսը և Էնգելսը վաղուց հերքել են այդ առարկությունը. «Այդ դեպքում,—գրել են նրանք,—բուրժուական հասարակությունը վաղուց պետք է ծուլությունից կործանված լիներ, որովհետև նա, ով այդ հասարակության մեջ աշխատում է, ոչինչ ձեռք չի բերում, իսկ նա, ով ձեռք է բերում, չի աշխատում»[13]։

Զգալով, որ հակամարտությունը կապիտալի և աշխատանքի միջև գնալով խորանում է և ձգտելով այն չքել, ռամկավարները գրում են. «Արդար և համերաշխ գործակցություն և շահակցություն դրամագլուխի և աշխատության միջև, հաշտարար ատյաններու միջոցով»[14]։ XX դարում այս դրույթի վրա պնդելը առնվազն անհեթեթություն կլիներ։

Սակայն ռամկավարները դրա վրա կանգ չեն առնում, նրանք ավելի հեռուն են գնում, գրելով թե. «Մենք կհավատանք տարբեր դասակարգերու ներդաշնակ գոյակցության ու գործակցության»[15]։

---

12 «Ռամկավար Ազատական կուսակցությունը» (տեսաբանությամբ), «Զարթոնք», 22 հուլիսի, 1955։

13 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս. Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, էջ 55։

14 «Զարթոնք», 22 հուլիսի, 1955։

15 «Ռամկավար Ազատական կուսակցության դավանանքը» (խմբագրական), «Զարթոնք», 25 օգոստոսի, 1955։

Այն հանգամանքը, որ ռամկավար ազատականների մոտ հանդիպում են դեռևս XIX դարում բուրժուազիայի կողմից մարքսիստների դեմ առաջ քաշվող պատճառաբանություններ, պատահական երևույթ չէ։ Բանն այն է, որ այդ կուսակցությունը իր գաղափարական զարգացմամբ, փաստորեն մնացել է XIX դարի մակարդակի վրա։ Ռամկավարները մշտապես զբաղված են եղել արևմտահայության ազատագրության հարցով, որը եղել է նրանց հիմնական խնդիրը։ Տեսական հարցերը այդ կուսակցության ծրագրում շարադրված են ընդհանուր գծերով, չկոնկրետացված։ Հետագա դեպքերը ռամկավար ազատականներին զրկեցին Արևմտահայաստանում գործելու հնարավորությունից և նետեցին սփյուռք, ուր նրա ծրագրի տեսական մասի կոնկրետացման և մշակման անհրաժեշտությունը չի զգացվում։

Բնականաբար, սփյուռքում գործելու տարիներին, ռամկավար ազատական կուսակցության համար կարևորագույն պրակտիկ քաղաքական հարցերի համեմատությամբ, գաղափարախոսության, տեսության բնույթի հարցերը անցնում են հետին պլանի վրա։ Այսպիսի պայմաններում, երբ այդ կուսակցության մտավորականները քիչ են զբաղվում կամ համարյա չեն զբաղվում իրենց գաղափարախոսության կոնկրետացման, մշակման հարցերով, տրամաբանական է, որ ռամկավարների մոտ մենք շատ հաճախ ենք հանդիպում այնպիսի տեսակետների, հարցադրումների և արտահայտությունների, որոնք տարածված էին անցյալ դարի վերջերին։

Ժամանակակից էտապում ևս քարոզելով ռամկավարություն, մասնավոր սեփականության իրավունքի անձեռնմխելիություն, ռամկավար ազատականները բուրժուական գաղափարախոսներին բնորոշ տենդենցով չեն ուզում տեսնել ազգի ներսում ընդդիմադիր դասակարգերի գոյությունը և այդ դասակարգերի ու դրանց կուսակցությունների զարգացման տենդենցները։ Նրանք դեռևս շարունակում են խոսել ամբողջ ազգի անունից, նկատի չառնելով, որ հայ ժողովրդի

զարգացման ընթացքը չի կարելի դիտել առանց խիստ ընդգծված դասակարգային հակամարտության։ «Ռամկավար Ազատականին համար,— գրում են այդ կուսակցության մտավորականները,— ազգը անդասակարգ, անբաժանելի, ստեղծարար ամբողջություն է,—ուրեմն մայրը բոլոր արժեքներուն ու նվաճումներուն, աղբյուրը բոլոր իրագործումներուն, հավաքական հանճարին ու հաղթանակի փառքին և ուրեմն գերագույն նպատակը բոլոր իդեալների, պայքարներուն և զոհաբերությանց»[16]։

Ազգային-ազատագրական պայքարի ժամանակաշրջանում բուրժուազիան մշտապես հանդես է գալիս նման տեսակետներով, ձգտելով իր ձեռքում պահել այդ շարժման դրոշը։ Բայց չէ՞ որ Արևմտահայաստանում ծավալված ազատագրական շարժումը տխուր վախճան է ունեցել, իսկ Արևելահայաստանում հայ ժողովրդի բախտը լուծվել է վերջնականապես։

Իրենք՝ ռամկավարները, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից, Հայաստանում սովետական իշխանության հաստատվելուց հետո այդ բանը իսկույն զգացին։ Այդ կուսակցության մտավորականները գրում են, որ Հայաստանի ազատագրվելուց հետո, նոյեմբերի 29-ից հետո, արևմտահայ «հեղափոխական կուսակցությունները իրենց հին ծրագրերով կը դառնային ավելորդ, աննպատակ ու ժամանակավրեպ»[17]։ Նոր պատմական պայմաններում էր, որ ռամկավարները ու մի շարք այլ կազմակերպություններ միաձուլվեցին և 1921 թ. կազմեցին ռամկավար ազատական կուսակցությունը, որի հիմնական խնդիրն էր համարվում.

1. Սովետական Հայաստանի զարգացմանը, բարգավաճմանը և առաջադիմությանը աջակցելը։

2. Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկա-

---

16 Ա. Անդրիասյան, *Մեր ազգասիրությունը*, «Զարթոնք», 24 դեկտեմբերի, 1958։

17 «Քաղաքական ուղեգծի բյուրեղացում» (խմբագրական), «Նոր օր», 28 փետրվարի, 1947։

*կան հողերի ազատագրումը և կցումը Սովետական Հայաստանին։*

*3. Պայքարը գաղութահայության ձուլումից ու ոչնչացումից փրկելու և այն ավելի հզորացնելու համար*[18]։

*Իսկ դավանանքի՞ հարցը։ Պարզվում է, որ այն գոյություն ունի, սակայն, քանի որ նրա կենսագործման համար պայմաններ չկան, ռամկավարները գերադասում են գաղափարախոսության մասին քիչ խոսել, կամ բոլորովին չխոսել. այն փոխադրել երկրորդ պլան և մշտապես գրել, որ «Ռամկավար Ազատական կուսակցությունը, դավանելով հանդերձ ընկերային, տնտեսական և քաղաքական որոշ հայեցակետներ, առավելապես ազգային կազմակերպություն մըն է՝ նվիրված հայ ժողովրդի գերագույն շահերի պաշտպանության և հետապնդումին, անշահախնդրորեն և առանց սակարկության»*[19]։

*Ազգային-ազատագրական պայքարում, անկախության և ազատության համար մղվող պայքարում, ազգի քաղաքական կուսակցությունները համագործակցելով՝ իրենց բոլոր ուժերը լարում են ի խնդիր հիմնական հարցի լուծման։ Սակայն ազատագրական պայքարի հորձանուտ ալիքներում ընթացող կուսակցությունները, եթե շատ անգամ համագործակցում են ի խնդիր հիմնական նպատակի, այսինքն՝ անկախության ձեռքբերման, ապա այդ չի նշանակում, թե նրանք դառնում են ամբողջ ազգի շահերի ներկայացուցիչ։ Առանց դասակարգի չկա կուսակցություն, և ամեն մի կուսակցություն կյանքի է կոչվում որևէ դասակարգի կողմից՝ իր դասակարգային շահերի պաշտպանության համար։*

*Ռամկավար ազատականներն իրենց կյանքի կոչող դասակարգի հարազատ ներկայացուցիչները և շահերի արտահայտիչներն են եղել մշտապես։ Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ ռամկավար բուրժուազիան՝ գործելով սփյուռքի չափազանց բարդ պայմաններում, ոչ միշտ է իր*

---

18 Նույն տեղում։

19 «Ռամկավար Ազատական կուսակցությունը» (խմբագրական), «Նոր օր», 6 մայիսի, 1958։

*հարստությունները դիզում ի հաշիվ հայ աշխատավորների շահագործման։ Նման պայմաններում բնական պետք է համարել այն երևույթը, որ ռամկավար ազատականների դասակարգային էությունը միշտ չէ, որ ակնհայտորեն է դրսևորվում հայ աշխատավորի համար։*

*Ահա թե ինչու, սփյուռքահայությունը կարող է ոչ միշտ ըմբռնել այդ կուսակցության դասակարգային էությունը և երբեմն տարվել նրա «հայաստանասիրական» պրոպագանդայով։ Թերևս այդ է պատճառը, որ հետպատերազմյան շրջանում նկատվում է ռամկավար ազատականների որոշ աշխուժացում և ուժեղացում։*

*Սփյուռքի առաջադիմական քաղաքական-հասարակական ուժերը լավ են հասկացել այն տարրական ճշմարտությունը, որ Սովետական Հայաստանի դեմ գնացող ոչ մի կազմակերպություն չի կարող վայելել սփյուռքահայության սերն ու համակրանքը։ «Թվաբանական պարզ հաշիվ մը բավական է ցույց տալու,— գրում են ռամկավարները,— որ հայաստանասեր և անոր համար տևապես «հալածանքի» ենթակա այլ կազմակերպությունները՝ տարվե տարի ընդարձակեցին իրենց ազդեցության գոտին և արժանացան լայն համակրանքի, առանց կասկածի ենթարկելու իրենց քաղաքացիական պարկեշտությունը»[20]։*

*Սակայն անհրաժեշտ է ռամկավար ազատականների ժամանակակից քաղաքականությունը վերլուծելիս աչքաթող չանել այդ կուսակցության դասակարգային էության, նրա ծագման ու զարգացման հարցերը, որոնք միմյանցից անջատել չի կարելի։*

*Աշխարհը բաժանված է երկու լագերի։ Ռամկավարները տեսնում և հասկանում են այն ամբողջ տարբերությունը, որ գոյություն ունի երկու իրարամերժ աշխարհների քաղաքականության միջև։*

---

20 Ռ. Նայիրյան, *Դաշնակ ներկա ղեկավարներու գիտակից սխալը» (Ինչո՞ւ Հայաստանի դեմ կը գործեն), «Զարթոնք», 18 մարտի, 1960։*

*Ռամկավար ազատականները հուսախաբված Արևմտյան պետություններից և տեսնելով Սովետական Հայաստանի աննախընթաց վերելքը, պնդում են, որ հայ ժողովրդի ապագան կապված է Ռուսաստանի հետ, ինչ «դույն ու երանգ էլ ունենա այն»։ Ուրեմն, ըստ նրանց, եթե կա Արևմտահայաստանի ազատագրման երաշխիք, այն անպայման կապված է Սովետական Միության հետ։ Միակ ուժը, որ պայմաններ է ստեղծել արևելահայության ազատ զարգացման համար և ի վիճակի է ազատագրելու Արևմտյան Հայաստանը՝ Սովետական Միությունն է,— գրում են ռամկավար մտավորականները։*

*Եվ քանի որ ռամկավար ազատականների համար տվյալ պայմաններում առաջին պլանի վրա է դրված այն խնդիրը, որը իր լուծումը չգտավ, նրանք վերադառնում են դաշնակցել այն ուժերի հետ, որոնց հետ, ըստ նրանց, կապված է այդ հարցի բարեհաջող ելքը։*

*1947 թ., ինը տարվա ընդմիջումից հետո, տեղի ունեցավ ռամկավար ազատական կուսակցության VIII ընդհանուր համագումարը, որին մասնակցում էին այդ կուսակցության Ամերիկայի, Արևմտյան Եվրոպայի, Եգիպտոսի, Պաղեստինի, Լիբանանի, Սիրիայի և Պարսկաստանի մասնաճյուղերի պատգամավորներն ու ներկայացուցիչները։*

*Համագումարի կողմից ընդունված «Հայտարարության» «Մեր ընկերային դավանանքը» բաժնում ասվում է. «Երբ կը հակի Ազգին ցավերուն ու պահանջներուն վրա, երբ կողջունե Ազգին նոր Արշալույսները ու ըստ այնմ, գերիվեր ամեն նկատումե, ինքզինք կը դնե ազգին ծառայության մեջ ՌԱԿ-ը չի մոռնար որ քաղաքական, մշակութային և իր այլ նպատակներուն առընթեր, կա ու կմնա նաև իր ընկերային դավանանքը, և, առ այդ, իր առաքելությունը Ազգին մեջ։ Հավատարիմ իր քաղաքական ուղեգծին, ՌԱԿ-ը հավատարիմ ալ կմնա սակայն իր ազատական տեսաբանության և իդեալներուն»*[21]։

---

21 *«Հայտարարություն Ռամկավար Ազատական կուսակցության Ը ընդհանուր պատգամավորական ժողովի», «Նոր օր», 14 փետրվարի, 1947։*

Ամեն մի կուսակցություն իրավունք ունի ազատորեն պրոպագանդելու իր գաղափարախոսությունը, սակայն, ասվում է նույն «Հայտարարության» մեջ, «Պահը չէ ամեն պարագայի տակ, ընկերա-տնտեսական դավանանքներու տարբերությանց»[22]:

Ռամկավարները, ելնելով ժամանակակից իրադրության երևույթների ճիշտ ըմբռնումից, երկու լագերների գոյության պայմաններում ելքը տեսնում են խաղաղ գոյակցության մեջ: Ռամկավար ազատականների մամուլը լայնորեն պրոպագանդում է խաղաղ գոյակցության գաղափարը: Եվ քանի որ այդ գաղափարը առաջին անգամ Սովետական Միությունն է առաջ քաշել, հետևաբար, նա ամենից ավելի է շահագրգռված այդ խնդրի իրականացման գործում և ոչ, ընդհակառակը, ինչպես փորձում են համոզել ամերիկյան ժողովրդին «կարգ մը տաք գլուխ, ջղայնոտ և անպատասխանատու հրապարակագիրներ, պետական ու զինվորական պաշտոնյաներ, անհաշտ ու անողոքելի հակասովետ թշնամիներ»:

Այս կապակցությամբ էլ ռամկավար ազատականները առաջ են քաշում կոմունիստական և բուրժուական հասարակարգերի խաղաղ գոյակցության հարցը: Կարո՞ղ են արդյոք գոյակցել այդ իրարամերժ հասարակարգերը: Ռամկավարները գրում են. «Հոս կծագի հրատապ հարց մը: Մի՞թե կոմունիզմի և ռամկավարության նման իրարամերժ և իրերամարտ երկու դրություններ կրնա՞ն քով քովի ապրել: Ուրիշ խոսքով՝ արդյո՞ք համակեցությունը հնարավոր կամ գործնական քաղաքականություն մըն է: Պատասխանն է հարկավ: Բայց նախ պետք է ճշգրիտ ըմբռնողություն, գաղափար ունենալ համակեցության բնույթի ու նպատակի շուրջը: Համակեցություն ըսելով՝ պետք չէ հասկանանք թե երկու կողմերը պիտի հրաժարին իրենց ընկերային, տնտեսական կամ քաղաքական համոզումներեն, սկզբունքներեն և դրություններեն: Այլ թե՝ յուրաքանչյուր կողմը իր դրության հանգեստ հավա-

22 Նույն տեղում:

տարիմ և հաստատուն դիրքը պահելով հանդերձ՝ մյուսին գոյատևումը և կամ գոյության իրավունքը սխալ ճանչնալ, փոխանակ զանիկա ջախջախելու և նպատակը հետապնդելու։ Պետք եղածը ոչ թե համակերպություն կամ համակրություն ստեղծել է՝ այլ հանդուրժողության, թուլամտության փոխադարձ ոգի, հասկացողություն և այդ կերպով՝ զարգացնել ընդհարումները, բախումները, կռիվները և հավանական պատերազմները ու արյունահեղությունները»[23]։

Ինչ վերաբերվում է գաղափարախոսությանը, ապա բոլոր կուսակցություններին և հասարակական կազմակերպություններին պետք է իրավունք տրվի պրոպագանդելու իրենց տեսակետները և իդեալները։

Ռամկավար ազատականները պաշտպանում են տարբեր ընկերային գաղափարների գոյատևման իրավունքը և քննադատում բոլոր նրանց, ովքեր ցանկանում են «Պատերազմի աղբյուր նկատել և դարձնել ընկերա-տնտեսական դավանանքների տարբերությունը...»[24]։

Ինչպես ամեն մի կուսակցություն, այնպես էլ ռամկավար ազատականները գտնում են, որ իրենց ուսմունքը՝ ռամկավարությունը, աշխարհում գոյություն ունեցող բոլոր ուսմունքներից լավն է. «Սակայն ասկայն (գրում են նրանք, ելնելով միջազգային իրադրության զարգացման ներկա պայմաններից), պատճառ մը չէ, որ Ռամկավար Ազատականը կորսնցնէ իր իրատեսությունը և պայքարի ելլէ բոլոր անոնց դեմ, որոնք կը դավանին ընկերային, տնտեսական և քաղաքական տարբեր վարդապետություններ»[25]։ Ռամկավարները հաշվի են նստում իրենց հակառակորդների տեսակետների ու գաղափարների հետ, որովհետև «գաղափարները ազատ ու ան-

23 «Համակեցությա՞ն թե ոչ կործանում» (խմբագրական), «Նոր օր», 21 հունվարի, 1955։

24 «Հայտարարություն Ռամկավար Ազատական կուսակցության Ը ընդհանուր պատգամավորական ժողովի», «Նոր օր», 14 փետրվարի, 1947։

25 «Ռամկավար Ազատականը» (խմբագրական), «Նոր օր», 13 մայիսի, 1958։

կաշկանդ ընդհարումն է, որ կրոնքի ճշմարտության կայծը կլուսավորե թանձրացող խավարը»[26]:

Արյուն արցունք տեսած, կյանքի դաժան ու բարդ ճաշակած ռամկավար ազատական կուսակցությունը խորապես ըմբռնել է, որ մարդկության հետագա զարգացման միակ ճշմարիտ ուղին խաղաղ գոյակցությունն է:

Պատերազմի անխուսափելիության պրոպագանդային ռամկավարները պատասխանում են. «Պատմությունը ուժգնորեն կը հերքե նման քրեական մահավճիռ մը մարդկության դեմ»[27]:

Նրանք խստորեն քննադատում են բոլոր նրանց, ովքեր չմտածելով հետևանքների մասին, պատերազմի փողն են փչում: «Տակավին այսօր,— գրում են ռամկավարները,— բազմաթիվ են անոնք,— մտքի սահմանափակ հորիզոններու գերիները կամ ատելության կիրքեն ցնորած՝ կործանումի ու մահվան վայեր գուշերը, որոնք կը հանկերգեն, թե պատերազմը անխուսափելի է, և ավելին՝ ցանկալի է Ամերիկայի և Ս. Միության միջև, որովհետև երկու հակամարտ գաղափարներով կառավարվող այդ հսկա երկիրները չեն կրնար խաղաղ գոյակցությամբ ապրիլ նույն երկրագունդին վրա»[28]:

Խաղաղ գոյակցության անհրաժեշտությունը թելադրվում է կյանքի զարգացման երկաթյա օրենքներով. մարդկության դարավոր տառապանքների, խաղաղության տենչանքների դասն է, որ հիմա՝ «ռամկավարությունն ու համայնավարությունը գոյակցին, խաղաղ գոյակցության մեջ»[29]:

«Ժողովուրդներու կենակցության հարցը,— գրում են ռամկավարները,— այսօր միջազգային կացության գերագույն խնդիր դարձած է: Շատ են անոնք, որ լավ չեն հասկնար թե ինչ իմաստ ունի «գոյակցություն», «համակեցություն»

26 Նույն տեղում:

27 «Հակամարտ գաղափարները կրնան խաղաղ գոյակցիլ». «Զարթոնք», 8 մարտի, 1953:

28 Նույն տեղում:

29 Նույն տեղում:

*բավածքը։ Անիկա դրացիին հետ հաշտ ապրելու խնդիր չէ, ինչպես ոմանք կը պատկերացնեն։ Ի վերջո կարելի է դրացիին հետ ապրելէ հրաժարիլ կամ զայն ստիպել որ հեռանա և կամ՝ տեղափոխվելով։ Խնդիրը մեր* Մոլորակին *վրա առանց զիրար բնաջնջելու (ինչ որ բնության մեջ անկարելի է և հետևաբար իզուր) միասին ապրելն է մարդկային ազգին պատկանող բոլոր ժողովուրդներուն համար։ Որովհետև միասին ապրելու հարկը* անխուսափելի *է մոլորակին վրա։ Անխուսափելիին դեմ նիզակ ճոճել քաղաքականություն չէ, այլ՝ տխմարություն»*[30]։

*Խաղաղությունը մարդկությանն անհրաժեշտ է, ինչպես օդն ու ջուրը։ Առանց խաղաղության չկա առաջադիմություն, չկա ուրախ ու բարեկեցիկ կյանք։ Մարդկային հանճարի հարատևող ստեղծագործությունները միշտ էլ կյանքի են կոչվել խաղաղ պայմաններում։ Խաղաղությունը, գրում են ռամկավարները, այն կենսական վիճակն ու բարեբար մթնոլորտն է, որի ժամանակ մարդիկ կարողանում են ապրել բնականոն կենցաղով, վաղվա ապահովության հրճվանքով ու իրենց տաղանդի ուժով հոյակապ քաղաքակրթություն են ստեղծում*[31]։

*Ռամկավարները քննադատում են սառը պատերազմի քաղաքականությունը։ Նրանք ժամանակին հանդես էին գալիս Դալեսի դեմ՝ «Աշխարհը պատերազմի ծայրին պահելու քաղաքականության համար», գրելով, որ Եվրոպայի հասարակական կարծիքը դեմ է այդ քաղաքականությանը*[32]։

*Պետք է վերջ դնել սառը պատերազմին և արագորեն զինաթափվել։ Աշխարհի բոլոր ժողովուրդներն ու պետությունները միայն կարող են շահ ունենալ սառը պատերազմի լուծարքից, որովհետև բոլոր երկրներն էլ այս կամ այն չափով*

---

30 Լ. Թուրունճյան, *Հակապատերազմական հոսանքը, «Նոր օր», 24 օգոստոսի, 1954։*

31 Ա. Անդրիասյան, *Խաղաղության բարիքը, «Զարթոնք», 23 հոկտեմբերի, 1958։*

32 *«Քաղաքական շաբաթը», «Զարթոնք», 22 հունվարի, 1956։*

*տուժում են նրա բազմապիսի արտահայտություններից և վտանգներից*[33]*։ Ընդ որում, առաջին հերթին պետք է դադարեցնել ատոմային և ջերմամիջուկային զենքերի արտադրությունը և փորձարկումները։ «Քանի չկա ինքնապաշտպանության միջոց,— գրում են ռամկավարները,— ուրեմն պետք է դիմել զինաթափության, ատոմական կամ ջերմամիջուկային զենքերու փճացման և ապօրինի հռչակման։ Ապահովության և խաղաղության միակ ճամբան այս է։ Ուրիշ ելք չկա։ Եվ այս իսկ պատճառով, մարդկության առջև դրված մեծագույն հարցը զինընկեցության խնդիրն է հիմա, մյուս բոլոր հարցերը երկրորդական են»*[34]*։*

*Ռամկավար ազատականները անվերապահորեն քննադատում են այն պետություններին, որոնք ատոմային և ջերմամիջուկային ռումբերի փորձարկումներ են կատարում՝ թունավորելով մարդկանց կյանքը։*

*Սովետական Միությունը, ինչպես Գերագույն սովետի նիստերից մեկում հայտարարեց ՍՍՌՄ արտաքին գործերի մինիստր Ա. Գրոմիկոն, որոշեց դադարեցնել ատոմական և ջրածնային ռումբերի փորձարկումները և Արևմուտքին կոչ արեց հետևելու իրեն։ Ռամկավարական թերթերը հրճվանքով նշում են այդ փաստը, այն գնահատելով որպես Արևմուտքի դեմ տարված խոշոր քարոզչական հաղթանակ*[35]*։*

*ԱՄՆ-ը այդ կապակցությամբ հայտարարեց, որ պետք է շարունակի աշխատանքները «մաքուր» ջերմամիջուկային ռումբի հայտնագործման ուղղությամբ։ Կարծեք թե, գրում են ռամկավարները, ապագայում այդ նոր ռումբերից սպանվող միլիոնավոր մարդկանց համար մխիթարություն պետք է լինի այն գիտակցությունը, որ նրանք զոհ են դառնում «մաքուր» ռումբերին։*

---

33 Պ. Դեղակ, *Սովետ և ամերիկյան բանակցությունները և մյուս պետությանց շահերը, «Զարթոնք», 17 սեպտեմբերի, 1959։*

34 Պ. Դեղակ, *«Բացարձակ զենքը» և ապահովության հարցը, «Զարթոնք», 17 ապրիլի, 1957։*

35 *«Ատոմական ռումբերու փորձերը», «Նոր օր», 15 ապրիլի, 1958։*

Ռամկավարները ջերմորեն ողջունեցին երեք միջավայրում ջերմամիջուկային զենքերի փորձարկումը արգելելու մասին Մոսկվայի 1963 թ. պայմանագիրը։

Սուր կերպով քննադատվում է նաև բլոկների ստեղծման քաղաքականությունը։ Արևմուտքը սոցիալիզմի լագերի պետությունները շրջափակել է ռազմական բազաներով ու բլոկներով։ «Արևմուտքը,— գրում են ռամկավարները,— Մ. Նահանգներու գլխավորությամբ, տարիներե ի վեր կը ջանա «առողջապահական գոտի» մը քաշել Սովետական Միության շուրջը»[36]։ Այդ գոտու հարավային օղակը պակասում էր, Բաղդադի պակտը ստեղծվեց այդ բացը լրացնելու համար։

Իմպերիալիստական պետությունների ստեղծած բլոկները ամուր չեն, քանի որ նրանց մեջ գոյություն ունեն խորը, անլուծելի հակասություններ։ Ռամկավարները գրում են. «Գաղտնիք մը չէ, որ Ատլանտյան Ուխտը ճգնաժամային պահեր կապրի այսօր, անդամ պետություններու քաղաքական և տնտեսական շահերու բախումին պատճառով»[37]։ Ռամկավարների ուշադրությունից չի վրիպում նաև այն հանգամանքը, որ Եվրոպայի պետական շրջանակները դժգոհ են ԱՄՆ-ի վարած քաղաքականությունից։

Ելնելով Արևմտյան աշխարհի բլոկների քաղաքականության նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքից, ռամկավար ազատականները համակրություն են ցուցաբերում Վարշավայի պակտի կնքմանը, դրանում տեսնելով Արևմուտքի և Արևելքի միջև ուժերի հավասարակշռության ստեղծում, որը երաշխիք է երկու աշխարհների բանակցությունների հաջող ավարտի[38]։

Ֆաշիզմը բարբարոսական դավադրություն է մարդկության դեմ, քաղաքակրթության կործանում։ Միլիոնների կյանքի գնով պատմության ասպարեզից դեն նետված ֆաշիզ-

36 Պ. Դեղակ, Հարավային օղակը, «Զարթոնք», 21 հունվարի, 1954։

37 «Ատլանտյան ուխտի ճգնաժամը», «Նոր օր», 22 նոյեմբերի, 1957։

38 «Արևմուտքի և Արևելքի միջև ուժերու հավասարակշռությունը գոյացած է», «Զարթոնք», 8 հունիսի, 1955։

*մը նորից ջանքեր է թափում իր նախկին դիրքերը վերականգնելու համար։ ԱՄՆ-ի քաղաքականությունը սնունդ է տալիս ֆաշիզմին, պայմաններ ստեղծելով նրա վերակենդանացման և իշխանության գլուխ գալու համար։ «Գաղանիք չէ ոչ ոքի համար,— գրում են ռամկավարները՝ քննադատելով ԱՄՆ-ը,— որ Ամերիկա ստանձնելով Անգլիո նախկին դերը՝ կը հետապնդէ խոր. Միության շուրջը պատվար հակախորհրդային պետություններ հաստատելու և զորացնելու ծրագիրը։ Եվ միայն ֆաշիստները կրնան համարվիլ այդպիսի նպատակի մը ծառայելու։ Այս վիճակին է, որ կը սնի ֆաշիզմը և վերականգնումի հզոր ճիգեր կը թափե ամեն տեղ»[39]։ ԱՄՆ-ի քաղաքականության շնորհիվ ֆաշիզմը դիրքեր է գրավել Իսպանիայում, Հունաստանում և Արգենտինայում։ Այն ծավալվում է նաև Գերմանիայում, Իտալիայում և Ճապոնիայում՝ քաջալերվելով ամերիկյան քաղաքականության կողմից։ Ֆաշիզմը այնքան ուժեր է հավաքել, որ դաշնակիցների հարաբերությունները թշնամացնող վեճեր կարող է հարուցել։ Եթե այդ երկրներում ֆաշիզմը ամրապնդվի, ապա այն կդառնա վայրագ ու կործանարար։ Եվ նորից պետք է միանան ազատատենչ ժողովուրդները, նոր զոհեր տան, նորից արյուն թափեն ԱՄՆ-ի կողմից սնած այդ հրեշը ոչնչացնելու համար[40]։*

Ռամկավարները, պետք է թյուրիմացության մեջ չընկնել, անողոքորեն քննադատում են ոչ թե իմպերիալիզմի էությունը, այլ նրա քաղաքականության մասնավոր կողմերը: *Այդ կուսակցության մամուլում բազմիցս քննադատվել են ԱՄՆ-ի արտաքին և ներքին քաղաքականության առանձին հարցերը, ցույց տրվել թե իմպերիալիզմի միջնաբերդում ինչպիսի հրեշավոր չափերի են հասել սպանությունները, կաշառակերությունը, ավազակությունը, ընտանիքի քայքայումը, ռասայական խտրականությունը և այլն[41]։*

39 *«Ֆաշիզմը կը փորձե վերականգնվիլ», «Նոր օր», 9 սեպտեմբերի, 1947։*

40 *«Ֆաշիզմը ավերիչ հրդեհ է», «Նոր օր», 12 սեպտեմբերի, 1947։*

41 *«Նոր օր», 18 հուլիսի և 10 հոկտեմբերի, 1958։*

Մակարթիզմը, որը ԱՄՆ-ի զարգացման արդյունքն է, ռամկավարների կողմից նույնպես անողոք քննադատության է ենթարկվում՝ այն արմատախիլ անելու պահանջով։ «Մակարթիականության սև չարիքն է, որ պետք է արմատախիլ չորցնել,— որևէ ասպարեզի վրա մրցակից մը կամ հակառակորդ մը անվանարկել վերագրումներով, առանց փաստի սուտ զրպարտություններով և նախապաշարումի քենով հալածելու, հարվածելու և զգետնել փորձելու այդ անարգ գործելակերպը»[12]։

Այն երևույթները, որոնք հասարակական զարգացման արդյունք են, կարելի է լիկվիդացնել՝ լիկվիդացնելով նրանց ծնող պայմանները։ Ռամկավարները, քննադատելով մակարթիզմը, սակայն ոչ մի խոսք չեն ասում այն պատմական պայմանների մասին, որոնք կյանքի են կոչել այն։ Ռամկավար ազատական կուսակցությունը, իր դասակարգային էությամբ լինելով բուրժուական, գտնում է, որ իմպերիալիստական պետությունների քաղաքական ու տնտեսական կյանքում նկատվող խոցերը արդյունք են ոչ թե իմպերիալիզմի բնույթից բխող անլուծելի հակասությունների, այլ աշխատանքի վատ կազմակերպման կամ պետական գործիչների անշնորհք գործունեության։

Ռամկավար ազատականները դժգոհ են նաև ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունից։ Նրանք գտնում են, որ «երբեմնի խոհական, ձեռներեց, կորովի և հեռատես արտաքին քաղաքականությունը տեղի տված է երկերեսանի, երկչոտ, հանկարծական գունափոխումի, մերթ սպառնական, մերթ փաղաքշական, անորոշ, խառնաշփոթ, անկայուն, անհեռատես և ձախող քաղաքականության»[13]։

Հայտնի է, որ ժամանակին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը ղեկավարում էր Ջոն Ֆոստեր Դալեսը։ Ռամկա-

12 «Մակարթի և մակարթիականություն», «Նոր օր», 14 մայիսի, 1957։

13 «Ամերիկա որպես առաջնորդության երկիր» (հուլիսի 4-ի անկախության օրվա առթիվ), «Նոր օր», 18 հուլիսի, 1958։

վարները փոխանակ քննադատելու ԱՄՆ-ում տիրապետող բուրժուական հասարակարգը, որից և բխում է կառավարության արտաքին քաղաքականությունը, բոլոր չարիքների աղբյուրը համարում էին Դալեսին։

ԱՄՆ-ի ժողովուրդը ատում է պատերազմը և պատրաստ է, բոլոր տեսակի զոհողությունների՝ ի խնդիր համաշխարհային խաղաղության։ «Ժողովրդային այս տիեզերական բաղձանքը,— գրում են ռամկավարները,— սակայն, չի խոսիր Տըլեսի ոչ մտքին և ոչ ալ սրտին։ Ան կը շարունակե իր արկածախնդրական քաղաքականությունը, պատերազմի սպառնալիքը միշտ կախված պահելով ժողովրդի գլխին վերև՝ նման դամոկլյան սուրի մը»[44]։ Բերենք մեկ այլ փաստ ևս։

1958 թ. ԱՄՆ-ի փոխպրեզիդենտ Նիքսոնը այցելեց Հարավային Ամերիկայի երկրները։ Այդ երկրների ժողովուրդները քարերով դիմավորեցին Նիքսոնին՝ պահանջելով հետ գնալ։ Գաղտնիք չէ, որ Հարավային Ամերիկայի ժողովուրդների ցասումը ուղղված էր ԱՄՆ-ի գիշատիչ քաղաքականության դեմ և ոչ Նիքսոնի անձի։ Սակայն ռամկավարները գտնում են, որ ԱՄՆ-ի «Պետական պաշտոնատունը մեծագույն սխալը գործեց, երբ Նիքսոնը ղրկեց Հարավային Ամերիկա իբրև Ամերիկայի բարեկամեցողության ներկայացուցիչը». եթե «ազատական դեմք մը ղրկվեր հոն, ապահովաբար պիտի չպատահեին այդ ողբալի դեպքերը»[45]։

Ոչ, կպատահեին։ Մոռացե՞լ են արդյոք ռամկավարները, թե ինչով վերջացավ Էյզենհաուերի այցը Ճապոնիա։ Չէ՞ որ Էյզենհաուերը միշտ էլ հորջորջվել է դեմոկրատիայի, ազատության և համակեցության կողմնակից, ապա ինչո՞ւ պատահեց, որ նա նույնպես արժանացավ նույնանման ընդունելության։ Բացատրությունը պարզ է, որովհետև այդ երկրների ժողովուրդները իրենց վերաբերմունքն էին ցույց տալիս ոչ

44 «Դալլես և հանրային կարծիքը», «Նոր օր», 7 հոկտեմբերի, 1959։

45 «Նիքսոնի այցը Հարավային Ամերիկա», «Նոր օր», 20 մայիսի, 1958։

թե առանձին գործիչների, այլ ԱՄՆ-ի քաղաքականության նկատմամբ։

ԱՄՆ-ը օրըստօրե կորցնում է այլ երկրների իր նկատմամբ ունեցած նախկին վստահությունն ու հարգանքը։ Հետաքրքիրն այն է, որ գաղութատիրության նոր ձևերից մեկը հանդիսացող այլ երկրներին ցույց տրվող ամերիկյան «օգնությունը» ռամկավարները գնահատում են որպես «50—60 տարվա օտար ազգերու, մեծ ու պզտիկ ժողովուրդներու խնամատարության ծանր բեռ»[46]։ Այնուհետև ռամկավար ազատականները փորձում են բացատրել, թե ինչո՞ւ է ընկնում ԱՄՆ-ի հեղինակությունը։ «Որովհետև,— գրում են նրանք,— անոր հետապնդած քաղաքականությունը ավելի շահախնդրական է, անձնասիրական է, քան այլասիրական և մարդասիրական նույնիսկ իր հսկա նպաստաբաշխման մեջ»[47]։ Ինչպես տեսնում ենք, իրենք՝ ռամկավարները ԱՄՆ-ի կողմից ուրիշ երկրներին ցույց տրվող «օգնության» մեջ տեսնում են շահախնդրություն և անձնասիրություն։ Ռամկավարները դրա համար էլ դժգոհում են, որ ԱՄՆ-ը, չնայած մի կողմից իրեն ներկայացնում է ռամկավարության և ազատության ջերմ պաշտպան, սակայն, մյուս կողմից՝ պաշտպանում է ազատության և ռամկավարության երդվյալ թշնամիներին։

Ռամկավար ազատական կուսակցությունը պաշտպանում ու պրոպագանդում է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ծավալված ազգային-ազատագրական պայքարը։ Այդ կապակցությամբ ռամկավարները շատ հաճախ քննադատում են իմպերիալիստական պետություններին և գովատում Սովետական Միությանը։

Մեր ժամանակներում, այսինքն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ով հանդես է գալիս ազգային-ազատագրական շարժման պաշտպանությամբ, արժանանում է այդ կուսակցության համակրանքին։ Ռամկավարները չեն

46 «Նոր օր», 18 հուլիսի, 1958։

47 Նույն տեղում։

*կարող գնալ այն ուժերի հետ, որոնք արգելակում են ազգային-ազատագրական շարժումները։ Դեմ լինել ազատագրական պայքարին, նշանակում է դեմ լինել արևմտահայ հարցի լուծմանը։ Կյանքը ռամկավարներին հարկադրում է միանալ այն ուժերին, որոնք աջակցում են ազատագրական պայքարի ծավալմանը և հանդես գալիս գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների շահերի պաշտպանությամբ։*

*Տեսնելով, որ ժամանակակից աշխարհում ազգային-ազատագրական պայքարի դեմ հանդես է գալիս Արևմուտքը, իսկ պաշտպանությամբ՝ Արևելքը, ռամկավարները, բնականաբար, անցնում են առաջադիմական ուժերի կողմը, Արևելքի կողմը։*

*Ազգային-ազատագրական շարժումը ռամկավարների կողմից գնահատվում է որպես գաղութային և կախյալ երկրների ժողովուրդների զարգացման բնական արդյունք։ Աշխարհի բոլոր ժողովուրդները պետք է ձեռք բերեն ազգային անկախություն։*

*«Բ. աշխարհամարտեն հետո,— գրում են ռամկավարները,— դահավէժ ընթացք ստացավ մանավանդ հետամնաց ժողովուրդների, և հատկապես արաբական երկրների ազգային զարթոնքը։ Ժողովուրդներ, որոնք կը ցանկան դուրս գալ խնամակալության վիճակեն, անձամբ շահարկել իրենց երկրների սեփական հարստությունները և անձամբ տնօրինել իրենց ճակատագիրը։*

*Արևմտյան բլոկը պարզ է թե հաշտ աչքով պիտի չդիտեր կատարված շարժումը և բոլոր հնարավոր միջոցներով պիտի ջանար արգելակել զայն։ Ընդհակառակը, արևելյան բլոկը ամեն ձևով կը ջանա զորավիգ կանգնիլ ազգայնական շարժումին և ամեն ձևով քաջալերել զայն»[48]։*

*Ռամկավար ազատականները ուշադրությամբ հետևում են մեր մոլորակի բոլոր, անգամ ամենախուլ մասերում ծավալվող շարժումներին, պրոպագանդում դրանք՝ հաջողու-*

---

48 «Դահավէժ ընթացքը», «Զարթոնք», 19 հուլիսի, 1958։

թյուն մաղթելով գաղութային երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին։

Մարդկության զարգացման օրենքների դեմ չի կարելի գնալ, դարի սրա հիմնական պահանջն է՝ հպատակ ժողովուրդների ազատության իրավունքը, որը պետք է գոհացվի։ «Այո, ժամանակը անողոք դատավոր է,— գրում են ռամկավարները,— ով որ իրեն դեմ գործե, անպատճառ կպատժվի վաղ թե ուշ։ Մեծերը լավ ըմբռնելու են այս անողոք դատավորին ոգին և ըստ այնմ շարժվելու են։ Վերջապես ըմբռնելու և ընդունելու են, թե կարելի չէ այլևս լուծի տակ պահել հպատակ երկիրներ ու ժողովուրդներ, որոնք արթնացած են ժամանակին ոգիին բերմամբ և վճռած տեր կանգնիլ իրենց ազգային ու մարդկային իրավունքներուն»[49]։

Ռամկավար մամուլը ջերմ սիրով լի բազմաթիվ հոդվածներ է նվիրում ազատագրական պայքարի ելած բոլոր ժողովուրդներին։ Ռամկավարները համոզված են, որ պատմության կանչով ոտքի ելած բոլոր ժողովուրդները, ինչպիսի դիմադրության էլ հանդիպեն, միևնույն է անպայման պետք է հաղթանակեն։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ նոր ուժով բռնկվեց ազգային-ազատագրական պայքարը, ռամկավարները անողոք քննադատում էին իմպերիալիստական պետություններին, որոնք արգելակում էին այդ շարժումը։ Դեռևս 1947 թ. ռամկավար մամուլը մեղադրում էր ԱՄՆ-ին, Անգլիային և Հոլանդիային, որոնք ազատություն չէին տալիս Հնդկաստանի, Ֆիլիպինների և Ինդոնեզիայի գաղութացված ժողովուրդներին։ Ռամկավարները համոզված էին, որ այդ երկրների ժողովուրդները անպայման անկախության կհասնեն[50]։ Հնդկաստանում «անկախության ցավագին երկունքը դեռ կշարունակվի», իսկ Ինդոնեզիայում «թնդանոթները դարձյալ կորոտան և գնդացիրները կշաչեն և արյու-

49 «Ժամանակի ոգին՝ անողոք դատավորը» (Ալժիրի հարցի մասին). «Նոր օր», 29 մարտի, 1957։

50 Տե՛ս «Նոր օր», 14 և 17 հունվարի, 1947։

նը վերստին կսկսի ողողել Ինդոնեզիայի հողը, հասնելով իր ազատատենչ զավակներու երակներին»։ Հոլանդական զորամասերը, որոնք մարզվել էին ամերիկյան սպաների կողմից ճապոնացիների դեմ կռվելու համար, այժմ իրենց հմտությունը օգտագործում են ոչ թե ֆաշիզմի, այլ «անկախ ու խաղաղ կյանքի ձգտող տառապած ժողովրդի մը դեմ»,— գրում էին ռամկավար մտավորականները[51]։

Գաղութային և կախյալ երկրների ժողովուրդների ձեռք բերած հաջողությունները անսահման ուրախություն էին պատճառում ռամկավար գործիչներին։ Հատկապես մեծ նշանակություն տվեց Բանդունգի ժողովին, որի մասին գրվեց. «Մարդկային առաջադիմության քառուղու ճամբուն վրա լուսավոր հանգրվան մը և նշանակալից անկյունադարձ մը հանդիսացավ Պանտունկի խորհրդաժողովը...»[52]։

Ռամկավարներին ուրախացնում էր նաև այն հանգամանքը, որ այդ ժողովին մասնակցող գրեթե բոլոր պետությունները էլ նախկին գաղութներ էին։ Հերքվեց իմպերիալիզմի գաղափարախոսների տարածած այն կեղծ տեսությունը, թե այդ երկրների ժողովուրդները ստորադաս են, անզոր իրենք իրենց ղեկավարելու։ Ռամկավարները քննադատում էին Արևմուտքի՝ Արևելքի նկատմամբ ունեցած քաղաքականությունը, միաժամանակ ընդգծված կերպով ցույց տալիս, որ իրենց համակրությունը Արևելքի կողմն է։

Ի՞նչ պետք է անել, որպեսզի վերջ տրվի Արևմուտքի և Արևելքի պառակտմանը։ Ռամկավարները այդ հարցին պատասխանում են.

1. Արևմուտքը պետք է դադարի Արևելքին ստորադաս համարելուց, գույնի, ցեղի և կրոնի խտրություններ դնելուց։

2. «Արևմուտքը պետք է ջնջե, վերջացնե իր գաղթատիրությունը Արևելքի մեջ ու վերադարձնե բնիկ ժողովուրդներուն իրենց սեփական երկիրները, հողերը»։

---

[51] «Ազատության կռիվը Ինդոնեզիայի մեջ», «Նոր օր», 29 հուլիսի, 1947։

[52] «Պանտունկի ժողովեն հետո», «Նոր օր», 13 մայիսի, 1955։

*3. «Արևմուտք, մանավանդ Ամերիկա, պետք չէ անհարկի տագնապալից կացություն ստեղծե, Արևելյան ժողովուրդներու դեմ պաշտպանելով Արևմտյան երկրներու գաղթատիրական և կայսերապաշտական դրությունը»։ Ֆրանսիայի տիրապետությունը Հնդկաչինում վաղուց լիկվիդացված կլիներ, եթե ԱՄՆ-ի օգնությունը չլիներ։*

*4. «Ամերիկա որոշած է ամեն գնով և ամեն տեղ պայքարիլ կոմունիզմի դեմ, զայն նկատելով իբր բացարձակ և մեծագույն չարիք մը»։ «Ամեն երկիր պետք է ազատ ըլլա որոշելու իր նախասիրած կառավարական դրությունը»։ «Ամերիկա մեծապես կը սխալի, երբ իր դրությունը կփորձե պարտադրել ուրիշ ժողովուրդներու վրա...»։*

*5. Այս բոլորից հետո հարց է առաջանում, թե ի՞նչ պետք է անի ռամկավար Արևմուտքը, պե՞տք է նա արդյոք դադարեցնի պայքարը կոմունիզմի դեմ՝ թույլ տալով, որ այն ծավալվի։ Ոչ, պատասխանում են ռամկավարները։ Բայց բացասական պատասխանը չի նշանակում, թե Արևմուտքի և Արևելքի վեճերի հարցերը պետք է լուծվեն զենքով, պատերազմով։ Վեճերի հարցերը պետք է լուծվեն բանակցությունների միջոցով, խոհականությամբ[53]։*

*Ռամկավար ազատական կուսակցությունը խստորեն քննադատում է իմպերիալիզմի գաղութային քաղաքականությունը։ Թե՛ Կոնգոյի ու Կուբայի, թե՛ Եգիպտոսի և Ալժիրի, թե՛ Լիբանանի ու բազմաթիվ այլ ժողովուրդների ազատագրական շարժումների առնչությամբ, ռամկավարները միշտ էլ քննադատել են ԱՄՆ-ին, Անգլիային, Ֆրանսիային, Բելգիային և բոլոր այն իմպերիալիստական պետություններին, որոնք դեռևս չեն հրաժարվել գաղութատիրական քաղաքականությունից։ Միջազգային իմպերիալիզմի գործիքը դարձած Միավորված ազգերի կազմակերպությունը ևս մշտապես գտնվում է ռամկավարների կրակի տակ։ Ռամկավարները, իհարկե, աչքաթող չեն անում այն փաստը, որ այդ կազ-*

53 «Նոր օր», 8, 12 ապրիլի, 1955։

մակերպությունում Սովետական Միությունը ակտիվորեն պաշտպանում է գաղութային ժողովուրդների իրավունքները[54]։

Բաղդադի պակտի կնքման կապակցությամբ ռամկավարները այն կարծիքն էին արտահայտում, որ Անգլիան վճռական մի ատակ է սկսում Մերձավոր արևելքում, որի նպատակն է մնալ Սուեզի ջրանցքի մոտերքում, ընդարձակել տալ Իսրայելը մինչև Սուեզի ջրանցքը և Աքաբայի ծովածոցը, փշրել Սաուդյան Արաբիայի ուժը, ընդարձակել Իրաքի և Հորդանանի սահմանները և ստեղծել արաբական թերակղզում ուժերի հավասարակշռություն[55]։

Անգլիայի, Ֆրանսիայի և Իսրայելի հարձակումը Եգիպտոսի վրա եկավ ապացուցելու ռամկավարների կարծիքի ճշմարտությունը։ Ռամկավար մամուլը նշավակեց Անգլիայի, Ֆրանսիայի և Իսրայելի ագրեսիվ քաղաքականությունը[56]։

Եգիպտական միջադեպի առնչությամբ Մերձավոր արևելքի երկրներում ևս ստեղծվեց տագնապալից դրություն։ Ռամկավարները լիովին պաշտպանում էին Սովետական Միության դիրքավորումը Մերձավոր արևելքի երկրներում նորմալ իրադրություն ստեղծելու ուղղությամբ[57]։

Էյզենհաուերի դոկտրինայի ընդունման կապակցությամբ Լիբանանում ծագած հակաիմպերիալիստական, հակաշամունյան պայքարին դեմոկրատական, առաջադիմական ուժերի հետ միասին մասնակցեց նաև ռամկավար ազատական կուսակցությունը[58]։

Իմպերիալիզմն ի վիճակի չէ արգելակելու ազգային-ազատագրական հզոր շարժումը։ Ներկա դարի սկզբներին, ծնում են ռամկավարները, ազգային զարթոնք սկսվեց

54 «Ազատություն, խոսք և արյուն», «Նոր օր», 10 հունվարի, 1947։
55 «Բաղդադի պակտը», «Զարթոնք», 21 փետրվարի, 1956։
56 «Արշավանքին հետևանքները», «Նոր օր», 7 դեկտեմբերի, 1956։
57 «Խաղաղ լուծումը կարելի է» (խմբագրական), «Նոր օր», 26 մարտի, 1957։
58 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 16 դեկտեմբերի, 1958։

*ասիական երկրներում, որոնց մեծ մասը ծանր ու տանջալից պայքարում թոթափեց օտարի լուծը և ձեռք բերեց անկախություն։ Նախապես գաղութներ լինելով, այժմ ազատագրված են Հնդկաստանը, Պակիստանը, Ինդոնեզիան, Չինաստանը, Բիրման, Ֆիլիպինները, Կորեան, Արաբական արևելքի երկրները և այլն։*

*«Ասիայեն ետք Աֆրիկե։ Այժմ ազատագրության կարգը Աֆրիկեին է»[59],—գրում էին ռամկավարները 1953 թվականին։*

*Եվ իրոք, ազատագրական պայքարի ալիքը ընդգրկեց նաև Աֆրիկայի ժողովուրդներին։ Համառ պայքարում նրանք ևս մեկը մյուսի հետևից թոթափում են իմպերիալիզմի շղթաները։ «Ազատության ճամբան դժնդակ եղավ, և է, աֆրիկյան ժողովուրդների համար։ Բայց աֆրիկյան ստրկացյալ ժողովուրդների մեկ մասը արդեն իսկ հաջողած է ազատագրվել և տեր դառնալ իր սեփական ճակատագրին. իսկ մնացյալ մասը պիտի շարունակե ազատագրության պայքարը... «Սև ցամաքամասը» ազատագրության ճամբան մտած է. ի վերջո անկախ պիտի դառնան և Ալճերիան և Պելճիքական Քոնկոն և Փորթուկալյան Անկոլան։ Մարդկության շահերը կը պահանջեն, որ այս փոփոխությունները կատարվեն առանց արյունահեղության»[60]։*

*Իմպերիալիզմի գաղութային սիստեմն ապրում է իր վերջին օրերը։ Հեռու չէ այն երջանիկ ժամը, երբ վերջին գաղութը անկախության դրոշ կբարձրացնի։ Ռամկավար ազատականները, ինչպես տեսնում ենք, ողջունում են ազգային-ազատագրական շարժումները, դրանք դիտելով որպես մարդկության զարգացման օրինաչափ ընթացք։*

*Սակայն ուսումնասիրվող հարցի մասին լրիվ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է կանգ առնել նաև այն հանգամանքի վրա, որ ռամկավար ազատականները լիովին*

---

59 Յ. Սարգիսյան, *Ասիայեն ետք Աֆրիկե, «Նոր օր», 17 նոյեմբերի, 1953։*

60 *«Մութ ցամաքամասը» ազատագրության ճամբուն մեջ», «Զարթոնք», 19 սեպտեմբերի, 1958։*

*համակրելով ազգային-ազատագրական շարժումները, ընդհանուր առմամբ, գործնականորեն մնում են պասիվ դիրքերում: Արձագանքելով և մեծ սիրով գովասանելով աշխարհի բոլոր վայրերում ծավալված ազգային-ազատագրական շարժումները, խստորեն քննադատելով իմպերիալիզմի գաղութային սիստեմը, հաստատ համոզմունք հայտնելով, որ այն ապրում է իր վերջին օրերը, ռամկավարները միաժամանակ այդ շարժումների նկատմամբ վարում են չեզոք քաղաքականություն, բացառությամբ, իհարկե, Լիբանանի, որտեղ ծավալված հակաիմպերիալիստական պայքարի սուր դրվագներին այդ կուսակցության տեղական մասնաճյուղը ցուցաբերեց իր մասնակցությունը: Բայց տվյալ դեպքում խոսքը ոչ թե բացառությունների, այլ կուսակցության քաղաքական գծի մասին է: «Մեր կարծիքով,— գրում են ռամկավարները,— այս բացառիկ պարագային մեջ գտնվող քաղաքական մարմինները կրնան ունենալ իրենց միջազգային թե ազգային քաղաքականությունները, պայմանով որ միջազգային քաղաքականությունը* նույնանա *երկրին արտաքին քաղաքականության հետ, իսկ ազգային քաղաքականությունը դառնա անոնց* գլխավոր *և* էական *գործունեության դաշտը»*[61]:

*Սփյուռքահայը պետք է հասկանա, պնդում են ռամկավար ազատականները, որ «իրմե պահանջվածը իր բնական երկրին օրինապահ ու կարգապահ քաղաքացիներ ըլլալն է և ազգային քաղաքականության հետապնդումով գոհանալն է միայն: Մենք պետք չունինք մեծ պետությանց վճռելուն մասնակից ըլլալու: Անոնք արդեն այդպիսի մասնակցություն մը չեն պահանջեր մեզմե, եթե մենք մեր կեցությունը լավագույնս բացատրենք անոնց և մեր անկախությունը կառչենք մաքուր և ազնիվ մարդու մեր հոգիով»*[62]:

*Ռամկավարները գտնում են, որ սփյուռքահայությունը չպիտի խառնվի իր բնակված երկրի արտաքին կամ ներքին քաղաքականությանը, մասնակցի տվյալ երկրի ներքին շար-*

---

61 *«Ազգային քաղաքականություն», «Զարթոնք», 11 հուլիսի, 1957:*
62 *«Զարթոնք», 14 հուլիսի, 1957:*

ժումներին, ինչ բնույթ էլ ուզում է դրանք ունենան, և դրանով իսկ չխախտի հայ գաղութների անդորրը։ Հայ ժողովուրդը շատ է արյուն թափել, շատ է զոհեր տվել, նա այժմ պետք է խուսափի մասնակցելու այնպիսի շարժումների, որոնք կարող են հասցնել նոր արյունահեղությունների։ Նամանավանդ, ավելացնում են ռամկավարները, երբ չնչին ու փոքրաքանակ հայ գաղթօջախների բնակչությունը որևէ էական օգուտ չի կարողանա տալ այն շարժումներին, որոնց ամբողջ սրտով համակրում է։ «Հետևաբար,— գրում են ռամկավարները,— գիտակից է թե մեր փոքր ուժերին կարելի չէ բաժին հանել միջազգային հարցերու լուծման համար, որ մենք որևէ չափով օգտակար չենք կրնար ըլլալ, սակայն մեր ուժերը բաժնելով կը վնասենք մենք մեզի»[63]։

Միջազգային քաղաքականությունը խառնվելը, ըստ ռամկավարների, կարող է ազգային որևէ հատվածի առավելություններ տալ, նյութական և այլ շահեր ապահովել, բայց հայ ժողովրդի համար այն կունենա աղետալի հետևանքներ։ Հայ ժողովրդի համար, գրում են ռամկավար գործիչները, կան այնպիսի սրբություններ, ինչպես Հայրենիքի իրականությունը, Հայաստանի եկեղեցու միասնականությունը. դրանք պետք է վեր մնան պայքարներից և հատվածական շահերից[64]։

Այս քաղաքական գիծը բնականաբար հանգում է նրան, որ ռամկավար ազատականները, տեսականորեն պաշտպանելով և գովաբանելով ազգային-ազատագրական շարժումները, գործնականում դրանց չեն մասնակցում։

Սփյուռքահայ գաղութների՝ տվյալ երկրում վարվելիք քաղաքականության մասին ռամկավարների VIII համագումարը արձանագրել է. «Գաղութահայությունը պարտի շարունակել մնալ իր պարտականության գիտակցության վրա հանդեպ զինք հյուրընկալող ասպնջական երկրներուն՝ անոնց բնիկ ժողովրդին, կառավարության և օրենքներուն, բարձր

63 «Զարթոնք», 3 հոկտեմբերի, 1956։

64 «Համերաշխության մասին» (խմբագրական), «Զարթոնք», 18 մարտի, 1955։

պահելով միշտ հայ անունը և ցույց տալով, որ իր սրտի պարտքը հանդեպ Մայր Հայրենիքին արգելք մը չէ, ամեն մարզի մեջ, իր քաղաքացիական օրինապահ կեցվածքին հանդեպ երկրորդ Հայրենիքին»[65]։

Ռամկավար ազատականների քաղաքականությունը իրականում նպաստում է հայ գաղութի ուժերի մեկուսացմանը, կտրում նրանց իրենց բնակված երկրների առաջադիմական շարժումներից, մասնավորապես հեղափոխության մարտիկների ուժերը, արգելակում հայ աշխատավորության մասնակցությունը ժամանակի մեծագույն խնդիրների համար մղվող պրակտիկ պայքարին։

Սակայն ռամկավար ազատականների ժամանակակից պայմաններում կենսագործվող քաղաքականության ամբողջական ուսումնասիրությունը մեզ բերում է այն հաստատ համոզմանը, որ այդ կուսակցությունը ընդհանուր առմամբ, այսօր վարում է առաջադիմական քաղաքականություն։

Ի վերջո, չպետք է մոռանալ, որ սոցիալիզմի և իմպերիալիզմի ճամբարներից դուրս գոյություն ունի այսօր չեզոք երկրների մի մեծաքանակ խումբ, որի քաղաքականությունը արդի պայմանների լույսի տակ միանգամայն ճշտորեն գնահատվում է առաջադիմական։ Մինչդեռ այդ երկրներից շատերը իրենց մոտ ամենաառաջավոր կուսակցության՝ կոմունիստների նկատմամբ, վարում են բարբարոսական քաղաքականություն՝ օրենքից դուրս հայտարարելով, ձերբակալելով և գնդակահարելով նրանց։

Միջազգային զարգացման հրատապ խնդիրների տեսանկյունից մոտենալով ռամկավարների ժամանակակից քաղաքականությանը, այն այլ կերպ չի կարելի գնահատել, քան առաջադիմական։

* * *

Ուսումնասիրելով սոցիալիզմի լագերի նկատմամբ ռամկավար ազատականների ունեցած վերաբերմունքի հարցը,

65 «Նոր օր», 14 փետրվարի, 1947։

անհրաժեշտ է աչքաթող չանել նաև այն հանգամանքը, որ չնայած խաղաղության և առաջադիմության ուժերին հարելուն, այդ կուսակցությունը երբեմն աղճատված կամ խեղաթյուրված է ներկայացնում մեր երկրի ներքին ու արտաքին քաղաքականությունը։

Ռամկավարների քննադատությունը ոչ միշտ է հետևողական ու ինքնուրույն, և շատ հաճախ կրում է իմպերիալիզմի ղլինանոցի ազդեցությունը։ Այդ մասին են խոսում ստորև բերվող փաստերը։ Դեռևս 1955 թ. ռամկավարները գրում էին, որ ԱՄՆ-ը Մարշալի պլանով սկսել է թույլ և պատերազմից տուժած երկրների տնտեսական օգնության գործը, իսկ ՍՍՌՄ-ը, ընդհակառակը, հանել է պատերազմի ժամանակ փակված համայնավարությունը և ուղարկել համաշխարհային հեղափոխության հետևից[66]։ Երկու կասկած լինել չի կարող, որ միջազգային իմպերիալիզմի պրոպագանդիստական ղլինանոցից այս «գնայուն ապրանքը» ռամկավար ազատական կուսակցությունը թխել է, ելնելով իր դասակարգային էությունից։ Տեղին է ռամկավար ազատականներին հիշեցնել, որ միջազգային կոմունիստական շարժումը ծավալվում է ոչ թե արհեստականորեն՝ Սովետական Միության հրահանգներով և ֆինանսական միջոցներով, այլ, ընդհակառակը, որպես արդյունք մարդկության զարգացման օբյեկտիվ օրենքների։

Հայտնի է, որ Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը առաջինը համարձակորեն քողազերծեց անհատի պաշտամունքը, որը դանդաղեցնում էր մեր երկրի առաջընթացը։ Անհատի պաշտամունքի քողազերծումը լայն արձագանք գտավ ամբողջ աշխարհում։ Բարեկամները ուրախացան՝ այդ բարդ պրոցեսի մեջ տեսնելով մեր հետագա ավելի մեծ հաջողությունների երաշխիքը, իսկ թշնամիները, ընդհակառակը, չարախնդացին այդ փաստը գնահատելով որպես սոցիալիստական հասարակարգի քայքայման նշան։

---

66 «Ռամկավար Ազատական կուսակցությունը» (տեսարանությամբ), «Զարթոնք», 22 հուլիսի, 1955։

Ռամկավար ղեկավարները անհատի պաշտամունքի քողազերծման կապակցությամբ իսկույն հանդես եկան հոդվածներով՝ նույնացնելով ֆաշիզմը և կոմունիզմը[67]։ Ռամկավարները քննադատում էին Սովետական Միության քաղաքականությունը նաև կորեական պատերազմի և հունգարական դեպքերի կապակցությամբ՝ ջանասիրությամբ կրկնելով միջազգային իմպերիալիզմի հորինած հերյուրանքները։

Ռամկավարական մամուլը գրում էր. «Քննադատեր, դատապարտեր ենք համայնավար վարչակարգի աշխարհակալական տենչերը—երկրին հետ ու ամենեն շեշտված կերպով, երբ սանձեցին քորեական պատերազմը ու անխուսափելի ըրին սպառազինման ահարկու արշավը»[68]։

Նույն աշխատության մեջ հարկ չկա անդրադառնալու կորեական պատերազմի և հունգարական դեպքերին, որոնք կյանքի կոչվեցին միջազգային իմպերիալիզմի կողմից։ Իր ժամանակին թե՛ կորեական պատերազմը և թե՛ հունգարական դեպքերը մանրամասն լուսաբանվել են։ Այժմ շատ քիչ մարդ կգտնվի, որը հավատա, թե ՍՍՌՄ-ը աշխարհակալական տենչեր ունի։ Տարրական ճշմարտություն է և այն, որ որևէ երկրի կոմունիստական կուսակցության իշխանության գլուխ գալը բացատրվում է տվյալ երկրի ներքին զարգացմամբ և ոչ մի առնչություն չունի Սովետական Միության «աշխարհակալական տենչերի» հետ։

Բայց, միաժամանակ, անհրաժեշտ է լավ հասկանալ, որ սոցիալիզմի լագերը չի կարող բախտի քմահաճույքին թողնել որևէ սոցիալիստական երկրի, որին սպառնում է իմպերիալիզմի զինված կամ այլ տեսակի ինտերվենցիան։

Ռամկավար մամուլը միակողմանի գնահատական է տալիս հայ ժողովրդի անցյալի պատմությանը և այդ արժեքավորումը կատարելիս փաստորեն անտեսում նրա ներկան։ «Ժո-

---

67 Հրաչ Երվանդ, Կը բավի խաղալ հայ արյունի հետ՞ «Զարթոնք», 10 օգոստոսի, 1957։

68 Նույն տեղում։

*ղովուրդներ կան,— կարդում ենք ռամկավար մամուլում,— որոնք իրենց ազգային եսն ու ցեղային հպարտության միակ էական կռվանը կը գտնեն իրենց անցյալ փառավոր օրերուն մեջ։ Հայ ժողովուրդը անտարակույս մին է անոնցմե, որուն համար իր պատմությունը կը նշանակե* միակ աղբյուրն ու կռվանը սեփական գոյության իրավունքին արդարացնող»[69]։

*Մի՞թե որևէ մեկը, որը քիչ թե շատ ծանոթ է հայ ժողովրդի ժամանակակից կյանքին, կարող է համաձայնել նման տեսակետի հետ։ Հայ ժողովուրդը, ինչպես անցյալում, այնպես էլ արդի էպոխայում, կանգնած առաջավոր ազգերի մակարդակին՝ մասնակցում է համամարդկային մշակույթի արագ զարգացմանը։ Հայ աշխատավորի աշխատասիրությունը, տաղանդն ու հանճարն են «միակ աղբյուրն ու կռվանը սեփական գոյության իրավունքին արդարացնող» և ոչ թե միայն անցյալ պատմությունը, որը ինքը արդյունք է հենց նույն՝ մեր կողմից արդեն նշված գործոնների։*

*Միջազգային զարգացման արդի պայմաններում առաջադիմության և խաղաղության համար պայքարողների մեծ բանակում համախմբվել են բազմաթիվ քաղաքական կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ, որոնք շատ հաճախ ունեն իրարամերժ գաղափարախոսություններ։ Գաղափարական վիճումներ չանելով, այդ մեծ բանակի զինվորները պայքարում են մարդկության առջև կանգնած հրատապ խնդիրները լուծելու և աշխարհը ավերածություններից փրկելու համար։ Ռամկավար ազատականները ևս ընթանում են այդ մեծ պայքարի մարտիկների հետ։ Էպոխան ուրեմն, պահանջում է մեծախոհ լինել և դեպքերին նայել ամբողջ առաջավոր մարդկության շահերի տեսանկյունից։*

*Ռամկավար ազատականների քաղաքականությունը վերլուծելիս պետք է ամենայն ուշադրությամբ հետևել նաև այդ կուսակցության ներքին խմորումներին։ Այդ բուրժուական կուսակցությունը կտրվելով «սեփական» շուկայից, սփյուռ-*

---

69 *«Երազներն ու իրականությունը», «Զարթոնք», 10 սեպտեմբերի, 1960 (ընդգծումը մերն է— Լ. Խ.)։*

քում ընկել է չափազանց անբարենպաստ պայմանների մեջ։ Այլևս չկան առաջվա հարստացման աղբյուրները։ Այլազգի բուրժուազիայի հետ մղվող մրցակցության մեջ ռամկավարները մեծ մասամբ հաջողություն չեն ունենում։ Ռամկավար ազատականների շարքերում տեղի է ունենում շերտավորում, որը իր արտահայտությունն է գտնում նաև այդ կուսակցության քաղաքականության մեջ։ Եթե իրենց դիրքերն ու հարստությունը պահպանած ռամկավարները դեռևս, հավատարիմ կուսակցության ծրագրին, շարունակում են իրենց տրադիցիոն քաղաքականությունը, ապա ունեզրկվողները ընդհակառակը, կազմում են այդ կուսակցության ձախ թևը, փաստորեն աստիճանաբար հրաժարվելով ռամկավարների գաղափարախոսությունից։

Այն ժամանակ, երբ ռամկավար ազատականների կուսակցությունը իր հիմնական ծրագրային դրույթների պրոպագանդման հետ երբեմն արծարծում է Սովետական Միության արտաքին և ներքին քաղաքականությունը խեղաթյուրող տեսակետներ, նրա ձախ թևը, ընդհակառակը, գրում է. «Ներկա արևաշող Սովետական Հայաստանով արդեն իրագործված է Ազատական կուսակցության իդեալը»[70]։

Եթե մի թերթում ռամկավար ազատական կուսակցությունը նույնացնում է կոմունիզմը և ֆաշիզմը, ապա մյուսում այդ կուսակցության ձախ թևը գրում է. «Հայ պատմությունը ուշադիր վերծանողները կընդունին, թե Հայաստան, իբր պետություն, դարերու ընթացքին այնքան ազատ չէ, որքան է ներկայիս»[71]։ Այդ հագնամանքը նկատի ուներ առաջադիմական «Լրաբեր» թերթը, երբ 1945 թ. գրում էր. «Ռամկավար Ազատականներու մասին չէ կարելի որպես ամբողջության խոսիլ։ Անոնց մեջ թեև մեծ թվով կան ազատականներ Ռուզվելթյան ծրագիրները պաշտպանող և խորհրդային Հայաստանի բարեկամ, նույնիսկ մաս մալ իրական յառաջադիմական մարդիկ, բայց կան նաև կարգ մը Հովը-Տուխա-

---

70 «Սփյուռք», 11 հուլիսի, 1946։

71 «Պայքար», 21 փետրվարի, 1948։

*կաններ և բուռն հակառակորդներ։ Ընդհանուր առմամբ, սակայն, պատկերը շատ ավելի յուսադրիչ է քան ինչ որ էր յոթ տարի առաջ»*[72]։

*Միջազգային զարգացման ժամանակակից պայմաններում, ռամկավար ազատականների քաղաքականությունը գնահատելիս մենք ելել ենք ամբողջ կուսակցության, և ոչ թե նրա առանձին թևերի, գործունեության վերլուծությունից։*

## 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

*Համաշխարհային մասշտաբով երկու լագերների միջև մղվող պայքարը ծավալվում է նաև սփյուռքահայ գաղթօջախներում։ Գաղտնիք չէ այլևս, որ սփյուռքահայությունը ևս բաժանված է երկու ճակատի։ «Անհերքելի ճշմարտություն կը մնա,— գրում են ռամկավարները,— որ բովանդակ գաղութահայությունը բաժնված է երկու հակադիր ճակատների»*[1]։

*Մի ճակատում համախմբված են կոմունիստները, ռամկավարները, հնչակյանները, բարեգործականը, իրենց ճնշող մեծամասնությամբ եկեղեցիները, հայրենակցական ու մշակութային միությունները։ «Մյուս կողմը կը կազմե դաշնակցությունը իր արբանյակ մարմիններով, կրթնած օտար պետության նյութական ու ոստիկանական նպաստին»*[2]։

*Սփյուռքահայության երկու ճակատի բաժանման հիմնական պատճառներից մեկը արդի համաշխարհային իրադրության կենսական հարցերի նկատմամբ ունեցած տարբեր մոտեցումն է։ Սակայն բոլոր հարցերից առանձնանում է մեկը՝ վերաբերմունքը «Սովետական Հայաստանի և ս. Էջմիածնի» նկատմամբ։ «Բացարձակ, անժխտելի ճշմարտություն կը մնա, որ Հայաստանի հանդեպ հակոտնյա այս դիրքավորումն*

---

72 Արշավիր Քաղցրունի. *Հիմնական վերլուծում, «Լրաբեր», 25 օգոստոսի, 1945։*

1 *«Պայքարին բուն պատճառը», «Նոր օր», 9 օգոստոսի, 1955։*

2 *Նույն տեղում։*

է միակ ու ողբերգական պատճառը սփյուռքը խռովող բոլոր վեճերուն ու պայքարներուն, զայն փոթորկող բոլոր պառակտումներուն ու ոճիրներուն»[3], գրում է ռամկավար հայտնի գործիչ Ա. Անդրիասյանը:

Ռամկավար ազատականները պաշտպանում են այն տեսակետը, որ գաղութահայությունը երբեք չպետք է պայքարի ընդդեմ Հայաստանի պետության, փույթ չէ, թե ինչ նկարագիր կունենա նրա քաղաքական կարգը[4]:

Քանի որ դաշնակցությունը հանդես է գալիս իմպերիալիզմի լագերում ընդդեմ Սովետական Հայաստանի և պառակտում է հայ եկեղեցին, դրանով իսկ նա իրեն դուրս է դնում սփյուռքահայ միասնական ճակատից: Սփյուռքի հայ առաջադիմական ուժերի և դաշնակցության միջև, քանի վերջինս վարում է պրոիմպերիալիստական, հակահայաստանյան քաղաքականություն, բացառված են համագործակցության բոլոր հնարավորությունները, որովհետև, ինչպես գրում են ռամկավարները, «անկարելի է հաշտություն և համագործակցություն հառաջացնել Սովետ. Հայաստանը և ս. Էջմիածինը սիրողներուն ու պաշտպանողներուն և անոնց դեմ դավ անողներուն դեմ»[5]:

Ռամկավար ազատականները պատմական դառն փորձով համոզվել են, որ միջազգային իմպերիալիզմը, բացի դատարկ խոստումներից, հայ ժողովրդին ոչինչ չի տա: Ռուս ժողովրդի օգնությամբ ազատագրված արևելահայությունը աննախընթաց վերելք է ապրում, իսկ արևմտահայությունը՝ ցրված սփյուռքի գաղթօջախներում, գտնվում է ձուլման պրոցեսի մեջ: Պետք է փրկել գաղութահայությանը: Տվյալ պայմաններում, բնականաբար, ռամկավարներն իրենց հայացքը ուղղում են դեպի Սովետական Միությունը և Սովետական Հայաստանը՝ հայ ժողովրդի երջանիկ ապագայի բոլոր հույսերը կապելով նրանց հետ:

---

3 Անդրանիկ Անդրիասյան, *Սփյուռքը և Հայրենիքը*, էջ 83:

4 *«Նոր օր», 9 օգոստոսի, 1955:*

5 *«Չեզոքը», «Նոր օր», 16 մայիսի, 1958:*

Բայց չէ՞ որ ռամկավարը բուրժուական կուսակցություն է, իսկ Հայաստանը՝ սոցիալիստական երկիր։ Ռամկավարները ելնելով հայ ժողովրդի պատմության ուրույն վիճակից, արևմտահայության ծանր դրությունից, ինչպես ասել ենք, որոշել են գաղափարախոսության հարցերը առայժմ դնել երկրորդ պլանի վրա։ Դա բնական ու հասկանալի երևույթ է։ Եթե ազգի գլխին կախված է ոչնչացման վտանգը, պետք է նրա առաջն առնել։ Իսկ միակ ուժը, որը կարող է օգնել և օգնում է այդ հարցի լուծմանը, դա Սովետական Միությունն է։ Այստեղից էլ բխում է ռամկավարների գործելակերպը՝ եկեք առայժմ լուծենք պատմության կողմից մեզ ժառանգված պրոբլեմները, որից հետո միայն խոսենք գաղափարախոսության հարցերի մասին։

Գաղութակալության դեմ մղվող ազգային-ազատագրական պայքարում մասնակցում են մեծ թվով իրարամերժ գաղափարներով կուսակցություններ և կազմակերպություններ։ Այդ պայքարի ընթացքում, բնականաբար, ազատագրական ուժերի տարբեր թևերի միջև գաղափարական պայքար մղվում է, բայց այն երբեք չի հասցվում մինչև այն աստիճանի, որպեսզի խանգարի հիմնական խնդրին։

Զարմանալի ոչինչ չկա, որ սփյուռքահայ իրականության մեջ ռամկավար ազատականները, ելնելով արևմտահայության համար պատմականորեն ստեղծված ծանր վիճակից, վարում են առաջադիմական քաղաքականություն՝ առաջին պլանի վրա չքաշելով գաղափարական տարաձայնությունները, պայքարում են ազգային ցավերը դարմանելու համար։

Այս նկատառումից էլ ելնելով, ռամկավար ազատականները ամենայն համոզվածությամբ գրում են. «Արտասահմանի հայոց ազգային, քաղաքական և ընկերային գործունեությունը պետք է դառնա մեկ հիմնական առանցքի շուրջը, պետք է կանգնի միակ գաղափարական խարիսխի մը վրա, զոր հայթայթեր է Ռամկավար Ազատական կուսակցության 8-րդ համագումարը իր համապարփակ և պերճիմաստ կարգախոսով, «Հայրենիքին հետ և հայրենիքին համար»: Ընդ-

հանուր և առաձգական նշանակությամբ չէ գործածված հայրենիք բառը։ Այն խորհրդային Հայաստանն է, իր ժողովրդով և պետականությամբ, իր կառավարությամբ և վերածաղկող մշակույթով, իր ճարտարվեստով և վերակառուցումներով և իր անքակտելի անդամակցությամբ խորհրդային Հանրապետությանց մեծ ընտանիքին»[6]։

Հետպատերազմյան շրջանում ռամկավար ազատական կուսակցության քաղաքականությունը լավ հասկանալու համար անհրաժեշտ է անդրադառնալ այդ կուսակցության VIII համագումարի որոշումներին։

Ռամկավար ազատական կուսակցությունը համագումարի կողմից ընդունված «Հայտարարության» մեջ[7] ցույց տվեց իր վերաբերմունքը ստեղծված երկու լագերների նկատմամբ՝ պարզորոշորեն շարադրելով իր ազգային և քաղաքական նպատակները։

Ռամկավարների VIII համագումարի ընդունած որոշման առաջին բաժնում, որը վերնագրված է «Ա. Մեր քաղաքական ուղեգիծը Սովիեթ Հայաստանի հանդեպ», ասվում է. «Մեր օրերու ազգային գոյավիճակին առանցքը Սովիեթ Հայաստանն է, որ է հետևաբար առաջին կետ նպատակը մեր մտասևեռումներուն»:

Ելակետ ունենալով հենց այս սկզբունքը, ռամկավարները Սովետական Հայաստանի մեջ տեսնում էին սփյուռքահայության փրկության երաշխիքը։ Ահա թե ինչու նույնիսկ անհատի պաշտամունքի տարիներին, երբ համարյա թե կտրվել էին կապերը սփյուռքահայության և Սովետական Հայաստանի միջև, ռամկավար ազատական կուսակցությունը «համբերությամբ հավատարիմ մնաց իր քաղաքական անտեղիտալի կեցվածքին մեջ հանդեպ այդ հայ պետական վերածնունդին»:

6 «Հայրենիքին հետ և Հայրենիքին համար» (ՌԱԿ-ի 8-րդ համագումարի առթիվ), «Նոր օր», 25 փետրվարի, 1947։

7 Տե՛ս «Հայտարարություն Ռամկավար Ազատական կուսակցության Ը ընդհանուր պատգամավորական ժողովի», «Նոր օր», 14 փետրվարի, 1947։

Ռամկավարները հիմնովին մերժում են դաշնակցության և միջազգային իմպերիալիզմի տարածած հերյուրանքը, թե իբր Սովետական իշխանությունը դրսից է փաթաթված հայ ժողովրդի վզին և երկրում ոչ մի տնտեսական ու քաղաքական հիմք չունի։

Համաշխարհային երկրորդ պատերազմը լիովին հերքեց միջազգային իմպերիալիզմի և դաշնակցության կողմից մշտապես տարածվող այդ վերսիան։ «Համաշխարհային Երկրորդ պատերազմի ընթացքին հայ Սովիեթ Հանրապետությունը,— ասվում է «Հայտարարության» մեջ,— մղած եղավ իր գոյության վճռական պայքարը։ Հերոսական իր մարտնչումը ի հայտ բերավ վարչաձևին ուժը, հայ հողին վրա ապրող և աճող հայության ֆիզիկական, բարոյական, տնտեսական և մշակութային բարգավաճումը...»։

Ռամկավար ազատականները շահագրգռված են Սովետական Հայաստանի հզորացմամբ, որովհետև, ինչպես իրենք են գրում, «Իր սահմաններին ներս ապրող հայության թվով ու որակով ուժեղացումն ու վերելքը՝ անհրաժեշտ պայմաններն են հայուն քաղաքական աճումին և հիմնական ազդակները հայկական դատին բարվոք լուծման, հարց մը, որ հայ ներկա իրականության երկրորդ մտասևեռումն է»։

Ռամկավար ազատական կուսակցությունն իր երկու մտասևեռումների լուծման ուղիներն էլ կապում է Սովետական Միության և Հայաստանի հետ։ Ահա սրա մեջ է ռամկավարների առաջադիմական և Սովետական Հայաստանի պաշտպան դառնալու հիմնական գաղտնիքը։

Սփյուռքահայ և միջազգային կյանքի բոլոր այն երևույթները, որոնք նպաստում են Սովետական Միությանը և Հայաստանին, աջակցություն են գտնում ռամկավարների կողմից։ Հատկապես մեծ սիրով ընդունվեց Սովետական կառավարության կողմից կազմակերպված հայերի ներգաղթը, որը լիովին համընկնում էր ռամկավար ազատականների քաղաքական ուղեգծին։ «Ազգին ներկա կացության վերահիշյալ զույգ հարցերուն՝ Հայ Սովիեթ Հանրապետության քաղաքա-

կան գոյության և ապահովության ու Հայկական հարցին համար համազգային աշխատանքի անհրաժեշտության լույսին տակ, իր բովանդակ նշանակությունը կը ստանա նորգաղթը կամ ավելի սրտի մոտիկ բառով, Հայրենադարձը, որուն խանդավառության և դրական իրականացումին մեջ կը գտնվին Սովիեթ Հայաստան և գաղութահայությունը»,— ասվում է «Հայտարարության» մեջ։

Ռամկավար ազատական կուսակցությունը ամենուրեք գովաբանում և պրոպագանդում է Սովետական իշխանության տարիներին հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումները։ Թերթելով ռամկավարական մամուլը, ընթերցողը այնտեղ գտնում է Սովետական Հայաստանի աշխատավորության կյանքի ու պայքարի բազմակողմանի լուսաբանումը։ Թե արդյունաբերության, թե՛ գյուղատնտեսության, և թե՛ մշակույթի ու գիտության հարցերը ամենայն մանրամասնությամբ լուսաբանվում են ռամկավար մամուլում, ուր շատ հաճախ զետեղվում են նաև մեր հանրապետության պետական և կուսակցական գործիչների հոդվածները։

Ռամկավարների «Զարթոնք» թերթը 1958 թվականին նոյեմբերի 29-ի տոնի կապակցությամբ գրում էր. «Երեսունհինգ տարիներ առաջ, որբերի ու թշվառության երկիր էր Հայաստանը։ Հիմա հզոր ճարտարարվեստի, համատարած գրագիտության, զգլխիչ շինարարության և արվեստների աննախընթաց ծաղկումի երկիր է. ապահովության և առաջադիմության երկիր է։ Անտարակույս, մեր նոր գուսանները ու երաժիշտները իրավունք ունեն իրենց երգերի մեջ Հայաստանը գովերգելու խինդով ու լավատեսությամբ, խանդավառությամբ և նորանոր նվաճումների ակնկալությամբ։

Եվ մենք սփյուռքի հայերս, այսօր հպարտությամբ ու երախտագիտական զգացումներով կը դիմավորենք Հայրենաբնակ մեր եղբայրներուն ու քույրերուն հաղթանակները և իրենց կը մաղթենք ավելի երջանիկ ու բարգավաճ կյանք»[8]։

8 «Հայաստանը երգերի մեջ» (խմբագրական), «Զարթոնք», 29 նոյեմբերի, 1958։

*Առանց Սովետական Հայաստանի չկա սփյուռքահայություն։ Սփյուռքահայերի ազգապահպանման «ամենեն հզոր ազդակը, որ այսօր ունինք մեր մայր հայրենիքն է» — գրում են ռամկավարները[9]։*

*Հայ ժողովուրդը ձեռք է բերել հզոր պետականություն, ապրում է ազատ ու երջանիկ, ծաղկեցնում է իր հայրենի գյուղերն ու քաղաքները, կառուցում է հզոր արդյունաբերություն և ստեղծում իր հանճարին վայել գիտություն, «նոր ոսկեդար մը»[10]։ «Այս հրաշալի իրականությունը,— ընդգծում են ռամկավարները,— կդիտենք անհուն հրճվանքով ու խանդավառությամբ։ Հայաստանին հաղորդված հառաջդիմության ու վերելքի ամենափոքր լուրն անգամ հուզումով կալեկոծե մեր հայրենակարոտ սրտերը»[11]։*

*Նոյեմբերի 29-ը, գրում են ռամկավարները, պատմական այն անկյունադարձային թվականն է, որ կոտորածների, սովի ու համաճարակի նախճիրներից մեռնող ու թաղվող հայ ազգի գերեզմանի վրայից մեկ կողմ նետեց մահվան տապանաքարը և վերածնված կյանքի դարպասը բացեց նրա առաջ[12]։*

*Միջազգային լարվածության արդի պայմաններում ո՞ւմ պետք է հարի սփյուռքահայը, ո՞ւմ հետ պետք է նա կապի իր բախտը։ Ռամկավար ազատականները այդ հարցին պատասխանում են. «Միջազգային ներկա հակամարտությանց ու մոլեգին խաչակրությանց մեջեն ճշմարիտ հայը կտեսնե էական, անժխտելի, փրկարար իրողությունը,— Հայաստանի վերականգնված պետությունը, որ մեր ազատագրված Հայրենիքին խաղաղ վերակառուցումն ու հսկայաքայլ հառաջդիմությունը կերաշխավորե և հայ ժողովրդին ֆիզիկական աճումը, ազգային զորացումը ու մշակութային զարգացումը հնարավոր*

---

9 «Ազգապահպանման ազդակները», «Զարթոնք», 27 դեկտեմբերի, 1958։

10 «Հրեաները և Պաղեստինը», «Նոր օր», 21 հունվարի, 1947։

11 «Զարթոնք», 27 դեկտեմբերի, 1958։

12 Տե՛ս «Նոր օր», 23 նոյեմբերի, 1954։ «Զարթոնք», 19 մարտի, 1957։

*կդարձնե, Խորհրդային Միության և ռուս ազնիվ ժողովրդին ընծայած նյութական անհաղին օժանդակության ու պաշտպանության շնորհիվ»*[13]։

*Նոյեմբերի 29-ը հայ ժողովրդի ցնծատոնն է, արեւածագը, կյանքի արշալույսը։ «Եվ եթե չենք կրնար բերել մեր գործուն մասնակցությունը հայրենի ժողովրդին ստեղծագործ աշխատանքին, կրնանք սակայն հայտնել մեր խորունկ երախտագիտությունը մեր Հայրենիքի փառապանծ վերելքը և պայծառագեղ ապագան կերտողներուն, անոնց հետ, այս օտարության ափերուն վրա, խանդավառությամբ ու խնդությամբ ողջունելով Սովետական Հայաստանի ցնծատոնը,— նոյեմբերի 29-ի պատմական թվականը...»*[14]։

*Սակայն, չկարողանալով մասնակցել հայրենաշեն աշխատանքներին, ռամկավար ազատական կուսակցությունը «... իր տրամադրության ներքև գտնվող բոլոր միջոցներով կը ձգտի վտարանդի հայ ժողովուրդը սերտիվ կապված պահել Հայաստանի հետ, ներշնչել ու խանդավառել զայն անոր վերելքով ու հառաջադիմությամբ և վառ պահել հայրենասիրության հուրը օտարության մեջ ամեն օր ձուլումի վտանգը դիմագրավող հայորդուն սրտի մեջ»*[15]։

*Ռամկավար ազատականների՝ Սովետական Հայաստանի նկատմամբ ունեցած քաղաքականությունը ուսումնասիրելիս պետք է անուշադիր չթողնել այն կարևոր հանգամանքը, որ այդ կուսակցությունը, գործելով կապիտալի երկրներում, շատ հաճախ հնարավորություն չի ունենում արտահայտելու իր զգացմունքները և կարծիքները։ Հայ մակարտիները՝ դաշնակցականները, հայ առաջադիմական կուսակցությունների և կազմակերպությունների մոտ նկատվող հայրենասիրությունը օգտագործում են՝ իմպերիալիստների առջև նրանց*

---

13 *«Հայաստանի 34 տարիները», «Նոր օր», 23 նոյեմբերի, 1954։*

14 *«Հայ ժողովուրդին ցնծատոնը», «Նոր օր», 26 նոյեմբերի, 1957։*

15 *«Ռամկավար Ազատական կուսակցությունը», «Նոր օր», 6 մայիսի, 1957։*

*Սովետական Միության «հինգերորդ զորասյուն» ներկայացնելու համար*[16]*։*

*Ռամկավար ազատականները անողոքաբար քննադատում էին բոլոր նրանց, ովքեր փորձում էին Սովետական Հայաստանի նկատմամբ ունեցած զգացմունքները պայմանավորել «... հոն տիրող վարչակարգով, վարդապետական նկատումներով, իշխանության գլուխը գտնվող մարդերով...»։ Այդպիսիները անտարբերականացնում են մեր ազգային նկարագիրը, այն վերածում սակարկելի, կաշառելի, հեղհեղուկ և անհաստատուն վիճակի, գրում էին ռամկավարները*[17]*։ «Ռամկավար Ազատականը սակայն, ամեն նկատումե առաջ և վեր իրավ հայրենասեր է և կսիրե իր հայրենիքը՝ Սովետ Հայաստանը, ջերմորեն կգնահատե ներկա հայ կառավարության ժողովրդանվեր գործը, որուն շնորհիվ այսօր հայը կապրի ազատ ու երջանիկ իր հայրենի հողին վրա և իր բարձր մշակույթով կնպաստե մարդկային քաղաքակրթության վերելքին։ Ռամկավար Ազատականը հետաքրքրողը հայ ժողովրդին գոյատևումը և մայր հայրենիքին պաշտպանությունն է և ոչ թե հոն տիրող վարչաձևը...»*[18]*։*

*Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի քառասնամյակի կապակցությամբ, ռամկավարները վերլուծելով այդ տարիներին մեր ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական մեծագույն վերափոխությունները, գրում էին. «Կրնանք համաձայն ըլլալ կամ ոչ Սովետական Հայաստանի վարչաձևին, բայց չենք կրնար ուրանալ Մայր Հայրենիքի մեծ իրագործումները և հոն արձանագրված հառաջադիմությունները»։ Հայրենիքի վերելքը, շարունակում են նրանք, հպարտությամբ է լցնում բոլորի սրտերը և հանդիսանում է,*

16 Հ. Գույումճյան, *Չորս մեծերու ժողովին հետոյ*, «Նոր օր», 5 օգոստոսի, 1955։

17 «Դոյության պայքարը որ հայությանն է», «Զարթոնք», 18 մայիսի, 1958։

18 «Ռամկավար Ազատականը» (խմբագրական), «Նոր օր», 13 մայիսի, 1958։

սփյուռքահայության գոյատևման մեծագույն ազդակներից մեկը[19]։

Ռամկավարները մշտապես պաշտպանել են այն տեսակետը, որ սփյուռքահայության բարոյական, հոգեկան կյանքի ու ապրումների ներշնչարանն ու սնուցիչ ուժը Սովետական Հայաստանն ու հայ եկեղեցին են[20]։ «Այսօր,— գրում է «Զարթոնքը»,— սփյուռքի հայը զորավոր է, ավելի հայ է հայաստանցիներուն շնորհիվ»[21]։

Ահա այդ պատճառով էլ ռամկավար ազատականները պրոպագանդում են. Սովետական Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է, բոլոր հայերի պարտականությունն է անհուն սիրով սիրել նրան, ուրախանալ նրա հաջողություններով և տխրել անհաջողություններով։

Ամեն մի հայի սուրբ պարտականությունն է «օգնել հայրենիքին ու էջմիածնին և իր միջոցներու ներած չափով նպաստել անոնց զարգացման, հառաջադիմության և վերելքին։ Այս դիրքավորումը համապատասխան է մեր ազգային շահերուն, և բոլորովին անկախ է ներկայիս Հայաստանի մեջ տիրող վարչաձևեն»[22]։

Սովետական Հայաստանի նկատմամբ կիրառվող քաղաքականությունը,— գրում են ռամկավարները,— կապված է «հայ ժողովրդի կյանքին ու պատմության հետ և **երբեք համայնավարության կամ համայնավարական սկզբունքներու ու կերպերու վրա հիմնված վարչակարգի հետ**»[23]։

---

19 Հ. Սեդրակյան, *Քառասնամյակի խոհեր*, «Զարթոնք», 29 նոյեմբերի, 1960։

20 «Գոյության պայքարը որ հայությանն է», «Զարթոնք», 18 մայիսի, 1958։

21 «Հայկական հանրապետության երեսունինը տարին» (խմբագրական), «Զարթոնք», 29 նոյեմբերի, 1959։

22 «Դրամատերը և համայնավար վարչակարգը», «Զարթոնք», 18 օգոստոսի, 1957։

23 «Ռամկավար Ազատական կուսակցությունը» (խմբագրական), «Պայքար», տարեգիրք, 1959, էջ 6։

## 3. ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

*Ռամկավար ազատականները զգալի աշխատանք են կատարում սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնական ճակատի ամրապնդման և լիակատար հաղթանակի համար։ Արվում է հնարավոր ամեն բան ամբողջ սփյուռքահայությանը Սովետական Հայաստանի շուրջը համախմբելու համար։*

*Սփյուռքահայության ուժը, գոյատևման հնարավորությունը նրա միասնականության և ամրության մեջ է։ Պառակտված հայ գաղութը ի վիճակի չէ օտար պայմաններում երկար ժամանակ պահպանելու իր գոյությունը։ Ելակետ ընդունելով այս ճշմարտությունը, ռամկավարներն աշխատում են համախմբել բոլոր ազգային ուժերը և ուժեղացնել այն բոլոր ազդակները, որոնք պայմաններ են ստեղծում հայկական գաղթօջախների հարատևման համար։ «Գաղութներու ազգապահպանումը,— գրում են նրանք,— Խորհրդային Հայաստանի հաստատութենենեն հետ՝ ամենեն էական, ամենեն փրկարար գործն է հայ ժողովրդի ապագա զորացման տեսակետեն»*[1]*։*

*Ռամկավարները գտնում են, որ ելնելով ստեղծված պայմաններից, կարող են և պետք է դաշնակցեն հայ կոմունիստների և հնչակյանների հետ։ Հայ կոմունիստների նկատմամբ ունեցած վերաբերմունքը թելադրվում է վերը մեր կողմից շարադրված այդ կուսակցության Սովետական Միության նկատմամբ կենսագործվող քաղաքականությունից։*

*Եթե հայ ժողովրդի պատմության կնճռոտ հարցերի լուծումը ռամկավարները կապում են Սովետական Հայաստանի հետ, գրելով, որ «Հայրենիքն է միակ իրավասուն. և ան է միայն որ կրնա ստանձնել, թե անցյալին և թե ապագայի մեր բոլոր դատերուն հետապնդման միակ իրական և գործնական*

*1 «Գաղութներու հայոց ազգապահպանումը», «Նոր օր», 4 մարտի, 1947։*

պարտականությունը՝ աջակից և լծակից ունենալով իրեն դաշնակցող բնական ուժերը», ապա, բնականաբար, նրանց պետք է դաշնակցեն և, իրոք, դաշնակցում են հայ կոմունիստների հետ[2]:

Այս դաշինքը արդյունք է արևմտահայության յուրահատուկ զարգացման և նրա առաջ կանգնած խնդիրների:

Եթե դաշնակցությունը լծվել է միջազգային իմպերիալիզմի և առաջին հերթին ԱՄՆ-ի կառքասայլին, ապա սոցիալիզմի հետ երբեք ոչ մի առնչություն չունեցած «ոչ-ընկերվարական և զուտ ազգային քաղաքական կազմակերպությունը»՝ ռամկավար ազատական կուսակցությունը, սփյուռքահայության բոլոր հարցերի լուծումը կապում է ոչ թե «հնօրեայ ցնորամիտ խաբկանքներու»՝ իմպերիալիզմի, այլ «միմիայն գործնական տվյալներու»՝ սոցիալիզմի հետ[3]:

Ինչ վերաբերում է հնչակին, ապա ռամկավարները այդ մասին գրում են. «Անոնց և մեր միջև համեցող սկզբունքային երկրորդական տարբերություններեն վեր՝ կը տիրապետե նույնությունը հիմնական նպատակներու,— զորացումն ու զարգացումը մեր վերածնած Հայաստանին ու հայրենի պետության և ազատագրումը հայոց պատմական հողերուն և ազգային ինքնապահպանումը գաղութներու մեջ»[4]: Այդ չի նշանակում, իհարկե, թե գաղափարական պայքարը նրանց միջև դադարեցվում է: Ռամկավարների և հնչակյանների միջև պայքարը շարունակվում է, սակայն չնայած դրան, նրանք գտնում են, որ կան ազգային խնդիրներ, որոնց նկատմամբ մյուս բոլոր հարցերը մղվում են հետին պլան:

Համախմբվելով ազգային ճակատում, ռամկավար ազատականները, մյուս կուսակցությունների հետ համատեղ, անողոք պայքար են մղում դաշնակցության դեմ հայ գաղութի պառակտումը կանխելու համար:

---

2 «Երկիր», 14 հուլիսի, 1962:

3 Նույն տեղում:

4 «Երիտասարդ Հայաստանի հիմնամյակը», «Նոր օր», 26 փետրվարի, 1954:

*Սուր պայքար է ծավալվել եկեղեցու շուրջը։ Պետականությունից զրկված սփյուռքահայության կյանքում եկեղեցին զգալի դեր է կատարում, իր շուրջը համախմբելով կենտրոնախույս ուժերին։ Եկեղեցին այն ազդակներից մեկն է, որն ապահովում է հայության հարատևումը սփյուռքում։ Ռամկավար ազատականներն իրենց գործունեության մեջ մեծ ուշադրություն են դարձնում եկեղեցուն՝ ամեն կերպ նպաստելով նրա միասնությանը և հզորացմանը։*

*Սակայն, չնայած առաջադիմական ուժերի ջանքերին, դաշնակցությանը հաջողվեց պառակտել հայ եկեղեցին։ Դեռ մինչև եկեղեցու պառակտումը, ռամկավարները գիտեին, որ դաշնակցությունը մտադիր է քանդել եկեղեցու միասնականությունը, Կիլիկիայի Աթոռի վրա իր կամակատարին նստեցնել, հայ եկեղեցին վերածել քաղաքական կամազուրկ գործիքի, «սփյուռքի մեջ հաստատել դաշնակ մենատիրությունը, և արտասահմանի հայությունը հակադրել Հայաստանի հայությանը»[5]։ Ռամկավարները խիստ մտահոգված են ստեղծված դրությամբ։ Նրանք մերկացնում են դաշնակցության քաղաքականությունը, ցույց տալով, որ թեմական ընտրությունները անց են կացվում ապօրինի, և դրանցում խառն է օտարների մատը[6]։*

*Արևմուտքի և Արևելքի միջև մղվող պայքարում չպետք է թույլ տալ, որ հայ եկեղեցին դառնա քաղաքական զենք, մինչդեռ դաշնակցությունը ձգտում է այդ բանին. «Դաշնակ ղեկավարությունը կը ջանա քանդել ու քայքայել էջմիածնական կենտրոնները, ազգային-եկեղեցական այն հաստատությունները, որոնք կը մերժեն ենթարկվիլ դաշնակ մենատիրության և գործիք դառնալ դաշնակ քաղաքական արկածախնդրության ի խնդիր»[7]։*

---

5 *«Ազգային իշխանությունը լիբանանահայ ժողովուրդին դեմ» (խմբագրական), «Զարթոնք», 17 հունվարի, 1954։*

6 *«Զարթոնք», 21 փետրվարի, 1956։*

7 *«Անզգամության սահմռկեցուցիչ նոր արարք մը» (խմբագրական), «Զարթոնք», 26 մայիսի, 1957։*

Դաշնակցությունը եկեղեցին օգտագործում է ոչ միայն քաղաքական պայքարում իր պառակտողական միտումների իրականացման, այլև շահույթներ ստանալու նպատակով։ Այս վերջին հանգամանքը նկատի առնելով, ռամկավարները, վերլուծելով բյուրոյականների՝ եկեղեցու պառակտման քաղաքականությունը և խստորեն դատապարտելով այն, նշում են. «Հետևաբար դարձյալ օգտվելու, դրամ գրպանելու հաշիվն է, որ դաշնակցական վարիչները կը մղեն հայ եկեղեցին սփյուռքի մեջ խրելու քաղաքականության անելանելի ճահիճին մեջ, փույթ չէ թե այդ եկեղեցին ինչի վերածվի իր հոգևոր դերեն իյնալով քաղաքական գործիքի մը պաշտոնին, բավ է որ դաշնակ վարիչները աշխարհի խառնակ վիճակին օգտվին, թող եկեղեցին քանդվի։ Այս է առաջնորդող սկզբունքը և ոգին»[8]։

Եկեղեցին պետք է միասնական լինի։ Ռամկավար ազատականները ջանք չեն խնայում ի խնդիր հայ գաղութների հարատևման ամրապնդել և միասնական դարձնել հայ եկեղեցին։

Ստեղծված դրությունը ռամկավարների համար ընդունելի չէ։ Ահա այդ է պատճառը, որ ռամկավարների ղեկավարությունը պաշտոնապես հայտարարում է.

«1) Անթիլիաս և իր ճգնավորը կը մնան «թերի և անընդունելի»։ Ուրիշ խոսքով՝ հերձված։ Դատապարտելի աղանդ մը՝ իր իսկ կամքով բաժնված ազգին և եկեղեցուն միասնութենեն։ Ու պայքարը անոնց դեմ՝ որպես ճիտի պարտք։

2) Էջմիածնական թեմերու զավթումները կան ու կը մնան, և այդ նախահարձակումին դեմ պայքարը ազգային պարտականություն մըն է։

3) Ս. Էջմիածնի դեմ դիմացի կողմը իր ամբարիշտ արշավեն չէ հրաժարած։ Ուրեմն էջմիածնական ուժերը պարտին արթուն կենալ և հսկել ու մանավանդ սաղմին մեջ խեղդել հակաաթոռ ստեղծելու պիղծ ու պառակտիչ միտքն ու Անթի-

8 «Գոյության պայքարը որ հայության է», «Զարթոնք», 19, 20 մայիսի, 1958։

լիտոսի «Անընդունելիին» «Կաթողիկոս ընդհանուր հայոց» տիտղոսը փակցնելու ծրագիրը»[9]:

Սփյուռքահայ կյանքում մյուս ազդեցիկ կազմակերպությունը, որը մշտապես գրավում է հայ կուսակցությունների ուշադրությունը, դա Հայոց բարեգործական ընդհանուր միությունն է։

Հայոց բարեգործական ընդհանուր միությունն ունի իր կրթական, մարզական և մշակութային հաստատությունները, որոնք սփյուռքի պայմաններում փրկության լաստեր են հայրենազուրկ հայերի համար:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, հայերի սպանդից հետո, բազմահազար հայությունը բռնեց պանդխտության ճամփան։ Ահա այդ ժամանակաշրջանում որբանոցներ, գաղթակայաններ և դարմանատներ ստեղծվեցին բարեգործականի գործունեության շնորհիվ։ Հրեշավոր տարիների, ծանր ապրումների պատմության գիրկն անցնելուց հետո ՀԲԸ միության հիմնական խնդիրները դարձան ազգապահպանումն ու դպրոցաշինությունը։

Այսպիսով, եթե սկզբնական շրջանում Բարեգործականը որբախնամ կազմակերպություն էր, այնուհետև գաղթահայության կյանքի պայմանների փոփոխմանը զուգընթաց դարձավ առավելապես կրթական կազմակերպություն հայ մշակույթի պահպանման ու տարածման ձգտող նպատակներով։

Ռամկավար ազատականները գովաբանում են Բարեգործականի գործունեությունը, նրա ներկա նախագահին, որը, ինչպես գրում են նրանք, ազգային կյանքի հետ շփման մեջ մնալ բացարձակ անկախության ոգով և ուզից բոլորի նկատմամբ նույն բարյացակամությունը ցույց տալ խտրականություն չդնելով կազմակերպությունների և մարդկանց միջև[10]։

Ճշմարտությունն այն է, որ ՀԲԸ միությունն իր հիմնադրումից ևեթ մշտապես գործել է գլխավորապես որպես ռամ-

9 Դավիթ, Հաստատումներ..., «Զարթոնք», 19 դեկտեմբերի, 1958։
10 «Զարթոնք», 1 փետրվարի, 1955:

կավարների արյունակից կազմակերպությունը։ Բնորոշ է նաև այն, որ Բարեգործականի ղեկավարներից մի քանիսը եղել են ռամկավարների կուսակցության անդամ, իսկ մնացածները՝ համակրողներ։

Այն ժամանակ, երբ Բարեգործականը երկար տարիներից հետո հանդես եկավ դաշնակցության դեմ՝ ցույց տալով, որ նա և Անթիլիասը՝ իր ենթականերով, հանդիսանում են հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները, ռամկավարները իսկույն հավանություն տվեցին Բարեգործականի այդ քայլին, բազմաթիվ հոդվածներում դրվատելով այն[11]։

Ռամկավարները բազմիցս մերկացրել են դաշնակցության՝ Բարեգործականը իր շահերի համար օգտագործելու, իր գործիքը դարձնելու փորձերը։ Անհաջողության հանդիպելով Բարեգործականը իր ազդեցությանը ենթարկելու գործում, դաշնակցությունն, ինչպես և եկեղեցու հարցում, անցավ պառակտողական քաղաքականության։

Դաշնակցությունը ձգտում է պառակտել ոչ միայն եկեղեցին, Բարեգործականը, այլև սփյուռքում գործող կրթական, մշակութային, մարզական և այլ բնույթի բոլոր միություններն ու կազմակերպությունները՝ ջանալով դրանք ի սպաս դնել իր քաղաքական գործունեությանը։

Սփյուռքահայության հասարակական-քաղաքական կյանքը ուսումնասիրելիս հարկ չկա առանձին-առանձին անդրադառնալու բոլոր կրթական, մշակութային և այլ տիպի կազմակերպությունների քաղաքականությանը, քանի որ դրանք ինքնուրույն չեն և հիմնականում գտնվում են հայկական այս կամ այն կուսակցության ազդեցության տակ։

Ռամկավար ազատական կուսակցության VIII համագումարի որոշումների մեջ գաղութահայ կազմակերպությունների նկատմամբ կենսագործվելիք քաղաքականության մասին ասված է. «Պետք է շարունակենք, հետևաբար, կողքին գտնվել գաղութահայ բարեսիրական, մշակութային և այլ ազգօգուտ

---

11 «ՀԲԸՄ-ը ճշտեց իր դիրքը Անթիլիասի հանդեպ», «Զարթոնք», 7 օգոստոսի, 1958։

*մարմիններու, չթողնելու որ անոնք, ցորքան կպահեն իրենց գոյության արդարացումը, նշանակետ դառնան այլ նպատակներու», այսինքն օգտագործվեն դաշնակցության կողմից հակահայաստանյան, հակաառաջադիմական պայքարում*[12]:

*Ռամկավար ազատականները դաշնակցության պառակտողական քաղաքականությունը գնահատում են որպես խոշորագույն ոճրագործություն հայ ժողովրդի շահերի դեմ: Այդ պատճառով էլ նրանք դաշնակցությանը համարում են իրենց ամենավտանգավոր հակառակորդը: Դաշնակցությունը այն ուժն է, որը սփյուռքահայությանը տանում է դեպի անխուսափելի կործանում, պառակտելով և արկածախնդրությունների բնագավառ ներգրավելով նրանց:*

*Ռամկավար ազատականները ուշադիր հետևում են դաշնակցության քաղաքականությանը, վերլուծում այն և անողոք քննադատության ենթարկում նրա ազգավնաս գործունեության բոլոր կողմերը: Ամենից առաջ ուշադրության է առնըվում այն, որ դաշնակցությունը, դավաճանելով հայ ժողովրդի շահերին, դարձել է միջազգային իմպերիալիզմի գործակալ՝ վարելով հետադիմական, կայսերապաշտական քաղաքականություն, ամենուրեք պաշտպանելով միջազգային իմպերիալիզմի շահերը, հետադիմական շարժումները:*

*Ուսումնասիրելով սփյուռքահայ ժամանակակից կյանքի պայմանները և դաշնակցության ղեկավարության հետապնդած քաղաքականությունը, ռամկավարները գալիս են այն եզրակացությանը, որ* «դաշնակցութիւնը դադրած է զուտ ազգային կազմակերպութիւն մը ըլլալէ և դարձած է միջազգային դաւադրական ցանցի մը մէկ մասնիկը: *Դաշնակցությունը կորսնցուցած է իր գործելու ազատությունը, հանձնըված է օտար դավադրական կեդրոնի մը, իր հրահանգները կառնե այդ կեդրոնեն: Անիկա ստանձնած է միջազգային դավադրական պաշտոնական հանձնառություններ, և տակավին*

12 *Տե՛ս «Հայտարարություն Ռամկավար Ազատական կուսակցության Ը ընդհանուր պատգամավորական ժողովի», «Նոր օր», 14 փետրվարի, 1947:*

ստիպված է հնազանդվել օտար գաղափարներու կեդրոնին։ Դաշնակցությունը հանձն առած է սփյուռքի հայությունը լծել այդ օտար գաղափարական կեդրոնի կառքին, և իր կարելին ըրալ ընե որ այդ կեդրոնը առավելագույն չափով կարենա շահագործել մեր գաղութները՝ իր գաղափարական ծրագիրները հաջողցնելու համար։ Ակնարկված միջազգային կեդրոնը Փարիզյան ոլորն է...»[13]։

Ճիշտ է, գրում էին ամերիկահայերը 1956 թվին, դաշնակցության ղեկավար պաշտոններում մենք տեսնում ենք Վ. Նավասարդյանին, Ս. Վրացյանին, Ռ. Դարբինյանին, Դրո Կանայանին և ուրիշների, որոնց ազգանունները վերջանում են «յան» մասնիկով, սակայն, անժխտելի փաստերը հաստատում են, որ նրանք պարզապես «հարցե մարդիկ են, ձևի համար արված անուններ, ու անոնց ետև կմնան քանի վարիչները, որոնք երկու հարյուր առ հարյուր և բացարձակապես օտարներ են...»[14]։ Դաշնակցությունը ոչ միայն ծառայում է օտարներին, այլև ուղղակի ղեկավարվում է նրանց կողմից։

Սփյուռքի ողջամիտ և հայրենասեր հայերը գերադասում են ապրել իրենց համեստ միջոցներով, միշտ վառվել հայրենիքի սիրով, տենչալով այն բախտավոր օրվան, երբ հայրենիք կգան և հայրենի կտուրի տակ երազած կյանքը կվայելեն։ Մինչդեռ դաշնակները, որոնք հայրենիքից վտարված են որպես խռովարարներ, իսկ հայ սփյուռքի կողմից գնահատված են իբրև պառակտիչ, մատնիչ ու գրպարտիչ և որպես այդպիսին ոչ արժանի հայ անվանը, միշտ էլ համագործակցել են հետադիմական, հակահեղափոխական ուժերի հետ։ Ռամկավարները դաշնակցության տերերից հիշեցնում են՝ Ֆարուքին, Շամունին, Մուսոլինիին, Հիտլերին, Նուրի Սաիդին և շատ ուրիշների[15]։

---

13 «Ընկ. Փանջունի Գահիրեի մեջ» (դաշնակցական գաղանի փաստաթղթին լույսին տակ), խմբագրական, «Զարթոնք», 25 հոկտեմբերի, 1955։

14 «Հ. Հ. Դաշնակցությունը միջազգային կազմակերպություն մըն է այլևս...», «Զարթոնք», 25 հունվարի, 1956։

15 Տե՛ս «Զարթոնք», 30 դեկտեմբերի, 1958, 16 ապրիլի, 1954։

Փարիզյան բլոկի ստեղծումը դաշնակցությանը, այլազգի ռեակցիոն կազմակերպությունների հետ միասին, ավելի սերտորեն կապեց միջազգային իմպերիալիզմի հետ։ Ռամկավարները դաշնակցության Փարիզյան բլոկի մեջ մտնելը գնահատեցին, որպես այդ կուսակցության կյանքում մի նոր էտապ, երբ այն դադարում է անկախ ազգային կուսակցություն լինելուց և վերածվում միջազգային արկածախնդրությունների և դավադրությունների ցանցի մի օղակի[16]։ «Այս աշխատանքին համար,— գրում են ռամկավարները,— դաշնակ ղեկավարությունը կը վճարվի օտարներեն, ռեապես պյուճե կը ստանա օտար լրտեսական պաշտոնատուներե և կազմակերպություններե, անընդհատ դրամ կստանա՝ պահելու ու մարզելու համար ահաբեկիչներու խմբակներ»[17]։

Ռամկավար ազատականները սփյուռքահայությանը կոչ են անում հեռու կանգնել միջազգային արկածախնդրություններից և դաշնակցությունից, որը գաղթահայությանը տանում է դեպի կործանում։

Իր բախտը կապելով իմպերիալիզմի բախտի հետ, դաշնակցությունը, ինչպես տեսանք, դեմ է դուրս գալիս ազատագրական շարժումներին։ Ռամկավարները այդ հարցում ևս քննադատում են դաշնակցությանը։

Լիբանանյան դեպքերի կապակցությամբ հայտնի է, որ դաշնակցությունը հանդես եկավ Շամունի պաշտպանների շարքերում։ Դաշնակցականները առանց վարանելու կրակ էին բացում ոչ միայն երկրի անկախության համար պայքարող արաբների, այլև առաջադիմական ուժերի շարքերում գտնվող հայերի վրա։ Դաշնակցությունը, ինչպես գրում են ռամկավարները, սփյուռքում միշտ ծառայել է կայսերապաշտներին, բռնակալության և անիշխանության, այն կատարելապես մեկուսացած է հայ ժողովրդից։ «Անհավատալի կթվա անոնց կեցվածքը, որովհետև անոնք են կայսերապաշտության գործակալներն ու Շամունի բարեկամները, որոնք

16 Տե՛ս «Զարթոնք», 11 նոյեմբերի, 1955։

17 Նույն տեղում։

անմեղ արյուն թափելով իրենց նպատակը բերին թե Շամունին և թե կայսերապաշտության և ընդդիմության ազգային հեղափոխության»[18]:

Դաշնակները պառակտում էին սերմանում հայ ու արաբ քաղաքացիների մեջ, դավեր էին սարքում ՍԱՌ-ի դեմ, կազմակերպում տեռոր ու սպանություններ, որպեսզի այս ձևով կարողանան «վիժեցնել հեղափոխությունը ու առաջն առնել նոր հաղթանակներուն»[19]: Դաշնակցությունն ամենուրեք դեմ է դուրս գալիս ազգային-ազատագրական շարժումներին: Դա ոչ թե պատահականության, այլ այդ կուսակցության ղեկավարության քաղաքականության իրականացման արդյունքն է: Ի վերջո, անկասկած է, որ լինելով իմպերիալիզմի լագերում, դաշնակցությունը պետք է պաշտպանի և իրոք պաշտպանում է իմպերիալիզմի քաղաքականությունը:

Դաշնակցականները «իրենց դեմ կնկատեն բոլոր անոնց, որոնք իրենց հետ չեն»[20]: Այդ կուսակցության ղեկավարությունը, չնայելով խաղաղ գոյակցության սկզբունքները, վայրենի ու բարբարոսական պայքար է ծավալել բոլոր այն ուժերի դեմ, որոնք իր հետ չեն: Ռամկավարները հիմնականում մերժում են դաշնակցության նման վարքագիծը և դատապարտում այն: Նրանք գրում են. «Գահիրեի մեջ էր, որ քանի մը տարի առաջ դաշնակ բյուրոն արձակեց» կամ մեզի հետ, կամ մեզի դեմ «կիսավայրենի և մոնկոլատիպ լոզունգը, որ պիտի հանդիսանար գաղութներու նոր պառակտումի և փաթարկումի սկիզբը»[21]:

Հենված օտար ուժերի վրա, ֆինանսավորված օտար աղբյուրներից, բյուրոյականները շղթայազերծեցին ահաբեկչության և բիրտ ուժերի կիրառման քաղաքականություն, որով պառակտում են հայ գաղութները, վտանգում հայ համայնք-

18 «Դաշնակներու մեղանը», «Զարթոնք», 22 հոկտեմբերի, 1958:
19 Նույն տեղում:
20 «Մեր պայքարը», «Զարթոնք», 8 ապրիլի, 1954:
21 «Գահիրեի դասերը» (խմբագրական), «Զարթոնք», 2 մարտի, 1955:

ները, այլասերում բարքերը, ի խնդիր օտար դրամի և հատվածական շահերի, ի խնդիր մենատիրության[22]:

Այս խրատությունը պարզ է բոլոր կուսակցություններին, համերաշխական ու ազգասեր բոլոր տարրերին, որոնք կողմնակից են սերտ համագործակցության և ամենուրեք հանդես են գալիս դաշնակ մենատիրական խմբակի դավադիր ծրագրերի դեմ[23]:

Ռամկավարները գտնում են, որ կան հարցեր, ինչպես, օրինակ, հայրենի իրականությունը, Հայաստանյայց եկեղեցու միասնությունը, որոնք պետք է վեր մնան պայքարից և հատվածական շահերից: Ահա նման հարցերի շուրջը պետք է համախմբվել և համագործակցել[24]:

Սակայն համախմբվելու և համագործակցելու պայմանների հարցում ռամկավարները և դաշնակցականները ունեն միանգամայն իրարամերժ կարծիքներ: Ռամկավարները մշտապես հանդես են գալիս դաշնակների դեմ ցույց տալով, որ այդ կուսակցության կողմից իր հիմնական նպատակը՝ Հայաստանում Սովետական իշխանության տապալումը համարելը, անհամատեղելի է հայ ժողովրդի շահերի հետ: Դաշնակցությունը Սովետական Հայաստանում ոչ մի լավ բան, ոչ մի նվաճում չէր տեսնում: Ռամկավարները գրում էին. «Գոյություն ունեցող Հայաստանի մը դեմ շղթայազերծված պայքարը նենգամտությամբ շաղախված հաշիվ մըն է այլևս, երբ պայքարը կը զլանա բարոյական նվազագույն իր պարտականությունը և, ներկա Հայաստանի պարագային՝ կույր կը ձևանա անոր աներևակայելի վերելքին առջև»[25]:

Գաղափարական հիմքից զուրկ հակահայաստանյան այս կեցվածքը, «կոմունիստական վտանգի» դեմ մշտապես գոր-

---

22 Նույն տեղում:

23 Նույն տեղում:

24 «Համերաշխության մասին» (խմբագրական), «Զարթոնք», 18 մարտի, 1955:

25 Ռ. Նադիրյան, Դաշնակ ներկա ղեկավարները գլխովին սխալ, (Ինչու Հայաստանի դեմ կը գործեն), «Զարթոնք», 20 մարտի, 1958:

ծեր ունի միայն մեկ նպատակ՝ շահել օտարի վստահությունը[26]։

Ռամկավարները չեն կարողանում հաշտվել դաշնակցության հետ, որը, նպատակի վերածելով հակահամայնավարությունը, իմպերիալիզմի այդ մտահոգությամբ շղթայազերծված տաք կամ սառը պայքարը ավելի չափազանց եղանակով մտցրեց սփյուռքահայ ներքին կյանքի մեջ[27]։ Սփյուռքի վերջին տասը տարիների պատմության մեջ, գրում են ռամկավարները, մութ գույներով պիտի արձանագրվի գրպարտչական այն աշխատանքը, որ դաշնակցության մամուլը տարավ իր գաղափարական հակառակորդներին ընկճելու համար[28]։

Սփյուռքահայ բոլոր գաղութներում գնում է ուժեղ պայքար՝ ազգային իշխանությունները ձեռք ձգելու համար։ Դաշնակցությունը ամեն հնարավոր բան անում է ապահովելու համար իր հատվածական այլամերժ և ճղճիմ շահերը։

Դաշնակցության դեմ մղվող պայքարում սփյուռքահայ կուսակցությունները համերաշխորեն շարունակում են իրենց ազգաշեն գործը ի խնդիր Սովետական Հայաստանի զարգացման ու բարգավաճման, ի խնդիր հայոց պատմության կնճռոտ հարցերի լուծման։ Դաշնակները, գրում են ռամկավարները, «ամեն վատոգի միջոցներով փորձեցին իրենց կուսակցության բացարձակ տիրապետությունը հաստատել գաղութահայ պանդվլածներուն ու մարմիններուն վրա, տարագիր արևմտահայությունը իբրև թշնամի զորաշարժի հանելու համար Հայաստանի և հոն զարգացող նոր ժողովրդին դեմ»[29]։ Շնորհիվ հայ առաջադիմական ուժերի ակտիվ գործունեության դաշնակցության ազգակործան քաղաքականությունը ձախողվեց։

---

26 Նույն տեղում, 21 մարտի, 1958։

27 Նույն տեղում, 22 մարտի, 1958։

28 «Այո, զգաստացեք», «Զարթոնք», 28 հուլիսի, 1956։

29 «Հարձակումը կը շարունակեն», «Զարթոնք», 10 փետրվարի, 1959։

*Սփյուռքում գործելու պայմանները չափազանց բարդ են ու դժվարին։ Սակայն հայ առաջադիմական կուսակցություններն ու կազմակերպությունները, որոնց թվում և ռամկավար ազատականները, հաղթահարելով բոլոր դժվարությունները, ընդհանուր առմամբ, վարում են ճիշտ քաղաքականություն՝ իրենց բախտը կապելով խաղաղության և առաջադիմության ուժերի հետ։*

# ՎԵՐՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի գաղթահայ հատվածի ժամանակակից պատմության ծանոթությունը ցույց է տալիս, որ սփյուռքահայությունը գտնվում է ձուլման շրջանում։

Փրկվելով հրեշավոր, անօրինակ սպանդից, մեր ժողովրդի՝ աշխարհի բազմաթիվ երկրներում սփռված արևմտահայ հատվածը այժմ գերմարդկային ճիգեր է թափում իր գոյատևումը ապահովելու համար։ Սփյուռքահայությունը կուլ է գնում իրեն շրջապատող ժողովուրդներին։ Ոչ մի ուժ այնտեղ ի վիճակի չէ կանխելու այդ պրոցեսը։ Բայց, եթե հնարավոր չէ կանխել այդ ազգակործան վտանգը, ապա կարելի է այն դանդաղեցնել։ Սփյուռքահայ բոլոր քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպություններն ու միությունները իրենց ուժերը ի սպաս են դրել այդ մեծ խնդրի կենսագործմանը՝ գաղթահայության հարատևմանը։ Միայն դաշնակցությունն է, որ իր պառակտողական քաղաքականությամբ օբյեկտիվորեն նպաստում է գաղթահայության ձուլման ուժեղացմանը։

Այն, որ սփյուռքահայ գաղութները դատապարտված են անխուսափելի կործանման և տարագիր հայությունը արագորեն ձուլվում է, չի վիճարկվում գաղթահայ ոչ մի կուսակցության կամ ազգային ու քաղաքական այլ կազմակերպության կողմից։ «Սփյուռքը,— գրում են ռամկավարները,— ըստ ինքյան դժբախտություն մըն է, և մենք պետք է մեր ուժերը պրկենք այդ դժբախտության մեջ մեր գոյատևումը փրկելու մաքառումին համար։ Որովհետև մենք կը նմանինք ծովը

ընկած մարդուն, որ վայրկյան մը իսկ պետք չէ դադրի լողալե, եթե անդունդը սուզվիլ չուզեր»[1]:

Բայց ծովը ընկած մարդը անվերջ չի կարող լողալ. եթե ի վերջո փրկություն չհասնի՝ նա կխեղդվի: Սփյուռքահայությունը կարող է, իհարկե, որոշ ժամանակ գոյատևել, բայց դա ծովում լողացող մարդու գոյատևում է. նրան անհրաժեշտ է օգնություն:

Սփյուռքի հայ առաջադիմական ուժերը ջանք չեն խնայում ուժեղացնելու այն ազդակները, գործոնները, որոնք հնարավորություն են տալիս երկարաձգելու հայության գոյատևումը:

Հայ առաջադիմական ուժերը սփյուռքում ազգապահպանման հիմնական ազդակներն են համարում՝ Սովետական Հայաստանի հզորացումը և սփյուռքի գաղթօջախների սերտ մշակութային կապը նրա հետ, լեզուն և կրոնը: Ահա սրանք են, ըստ սփյուռքահայ առաջադիմական ուժերի, ազգապահպանման երեք հիմնական ազդակները:

Սփյուռքահայ ուժերը հատուկ ուշադրություն են դարձնում հայ գաղթօջախների և Սովետական Հայաստանի ունեցած կապերի ամրապնդմանը, դրա մեջ տեսնելով գաղթահայության գոյատևման կարևորագույն ազդակը: «Ամենեն հզոր ազդակը, որ այսօր ունինք, մեր մայր Հայրենիքն է»,— գրում են ռամկավարները[2]:

Նույն տեսակետն են պաշտպանում նաև հնչակյանները, «Սփյուռքի հայությունը,— գրում են նրանք,— պիտի մշակութային կապերով կապված լինի մեր ազատ Հայրենիքի, Սովետական Հայաստանի հետ, պիտի հաղենա երկրում տեղի ունեցող վերելքով, առաջադիմությամբ, մշակույթով, որոնք պետք են իրեն ազգապահպանման և ազգային ինքնուրույն

1 Լ. Թուրունյան, Մենք մեր մեջ մեր ցավերով, «Նոր օր», 8 մարտի, 1955:

2 «Ազգապահպանման ազդակները», «Զարթոնք», 27 դեկտեմբերի, 1958:

դիմագիծը կայուն ու անխախտ պահելու համար»[3]։ Միայն այդ դեպքում հնարավոր կլինի ապահովել սփյուռքի հայության մշակութային զարգացումը և առաջն առնել ազգային ձուլման, որին ենթակա է հայրենիքից դուրս գտնվող ամեն մի ազգային փոքրամասնություն[4]։

Հաճախ սփյուռքի առաջադիմական ուժերը վիճում են, թե ո՞րն է ազգապահպանման արտահայտման ազդակներից կարևորը՝ դպրո՞ցը, թե՞ եկեղեցին։ Սակայն գլխավորը այդ չէ, այլ այն, որ վիճելով ազգապահպանման այս կամ այն ազդակի կարևորության շուրջը, նրանք բոլորն էլ ընդունում են այն պարզ ճշմարտությունը, որ սփյուռքահայության ապագան Սովետական Հայաստանն է, նրա փրկությունը ներգաղթն է։

«Երկար ժամանակ է, որ հայրենասեր առաջնորդներ ու գրողներ կը մատնանշեն թե սփյուռքի հայությունը փրկելու միջոցն ու ազգապահպանման միակ ու գլխավոր գործը ներգաղթն է։ Հրատապ է ներգաղթի հարցը»,—գրում են հնչակյանները, «ներգաղթն է միայն փրկության ճամբան» վերնագրով հոդվածում[5]։

Սփյուռքահայությունը ջերմ սիրով կապված է Սովետական Հայաստանի հետ։ Օտար հեռաստաններում տանջվող հայ ժողովրդի տարաբախտ զավակները միշտ էլ իրենց փըրկության հույսը կապել են Սովետական Հայաստանի հետ, երազելով այն երջանիկ օրվան, երբ հնարավորություն կտանան վերադառնալու Հայրենիք։ Սփյուռքահայերից ստացված հազարավոր հայրենակարոտ և շատ հաճախ արցունքով ողողված նամակները՝ հայրենիք վերադառնալու թույլտվության ստանալու խնդրանքով, վկայում են այն մեծ սիրո մա-

3 Ս. Քալանդարյան, *Ազգապահպանման խնդիրների շուրջը, «Արարատ», 24 հունվարի, 1952։*

4 *Նույն տեղում։*

5 *«Ներգաղթն է միայն փրկության ճամբան», «Արարատ», 3 ապրիլի, 1955։*

սին, որ կապում է մեր դժբախտ արյունակից եղբայրներին Սովետական Հայաստանի հետ։

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը, ելնելով ժողովուրդների բարեկամության լենինյան քաղաքականությունից, օգնության ձեռք մեկնեցին հայ ժողովրդի սփյուռքահայ հատվածին, կազմակերպելով ներգաղթ՝ դեռևս Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի առաջին տարիներին, երբ այդ մեծ գործի համար երիտասարդ սովետական երկիրը տնտեսական շատ քիչ հնարավորություններ ուներ։ Սփյուռքահայության բախտը միշտ էլ մտահոգել է Սովետական Հայաստանի կոմունիստական կուսակցությանը և կառավարությանը։ Սակայն մոտ մեկ և կես միլիոն հայերի ներգաղթը կապված էր խոշոր դժվարությունների հետ, որոնք առժամանակ հետաձգեցին այդ կարևոր գործի կենսագործումը։

Երկրորդ համաշխարհային պատերազմի հաղթական ավարտից հետո Սովետական Միությունը նորից ձեռնամուխ եղավ ներգաղթի իրականացման գործին։ Անհրաժեշտ էր շուտափույթ միջոցներ ձեռք առնել գաղութահայության փրկության ուղղությամբ։

Ընդառաջ գնալով արտասահմանում բնակվող հայության բուռն ձգտումներին, Սովետական կառավարությունը ՀՍՍՀ կառավարության միջնորդությամբ, 1945 թ. նոյեմբերի 21-ին որոշում կայացրեց՝ թույլատրել սփյուռքահայությանը վերադառնալու Հայաստան։

ՍՍՌՄ կառավարությունը որոշեց թույլ տալ բնակարանային անհատական շինարարություն, հատկացնելով այդ նպատակի համար պետական վարկ՝ կառուցվող բնակելի տների արժեքի 50 տոկոսի չափով։ Հայաստան վերադարձող հայերը ազատվում էին մաքսից։

ՀՍՍՀ կառավարությունը ներգաղթի իրականացման համար ստեղծեց «Մինիստրների Սովետին կից արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե» և «Վերաբնակեցման վարչություն»։ Առաջինի ֆունկցիաների

*մեջ մտնում էին ափյուռքահայության ներգաղթի կազմակերպման և կենսագործման հետ կապված միջոցառումները արտասահմանում և նրանց ընդունելության կազմակերպումը ՍՍՌՄ-ի տերիտորիայում։ Երկրորդի պարտականությունների մեջ էր մտնում ներգաղթողների ընդունելության կազմակերպումը Հայկական ՍՍՀ-ի տերիտորիայում, նրանց բնակարանային ու աշխատանքային հարցերի լուծումը և դրա հետ կապված շինարարական աշխատանքների ղեկավարումը։*

*Սովետական կառավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում ներգաղթի իրականացման գործին։ ՍՍՌՄ ժողովրդական կոմիսարների սովետը, 1946 թ. փետրվարի 22-ին քննելով ափյուռքահայության ներգաղթի հարցը, որոշում ընդունեց արտասահմանի հայության ներգաղթի կապակցությամբ ձեռք առնվող պրակտիկ միջոցառումների մասին։*

*ՍՍՌՄ ժողկոմսովետը Բուլղարիայից, Հունաստանից, Իրանից, Լիբանանից, Ռումինիայից և Սիրիայից 1946 թ. նախատեսնվող ներգաղթի հաջող անցկացման պատասխանատվությունը դրեց վերոհիշյալ երկրներում սովետական ներկայացուցչությունների և Հայկական ՍՍՀ ժողկոմսովետի վրա։ Որոշման մեջ սովետական ներկայացուցչություններից պահանջվում էր՝ հիշատակված երկրների արտաքին գործերի մինիստրությունների առջև հարց հարուցել հայերի ներգաղթին աջակցելու մասին, ափյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների հետ միասին կազմել ներգաղթելու ցանկություն հայտնած հայերի ցուցակը, օգնություն ցույց տալ օտար երկրների քաղաքացիությունից դուրս գալու և սովետական քաղաքացիություն ընդունելու, իրենց շարժական գույքի հայրենիք փոխադրման գործում։ Հայերի ներգաղթի հետ կապված ամբողջ պրակտիկ աշխատանքը դրվեց ափյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների բազայի վրա կազմակերպված աջակից խմբերի վրա։*

*Հայաստանի ժողկոմսովետին թույլ տրվեց երկուական ներկայացուցիչ գործուղել հիշյալ երկրները ներգաղթի աջակցման համար։*

*Սովետական դեսպանատների և Հայկական ՍՍՀ Ժողկոմսովետի ներկայացուցիչների՝ հայերի ներգաղթի առնչությամբ իրականացվող պրակտիկ աշխատանքը ղեկավարելու համար ՍՍՌՄ արտաքին գործերի կոմիսարիատին կից ստեղծվեց հատուկ Հանձնաժողով[6]:*

*Ներգաղթը դարձավ Հայաստանի կուսակցական, սովետական, արհմիութենական և ընդհանրապես բոլոր կազմակերպությունների առջև կանգնած հիմնական խնդիրներից մեկը: Բոլոր կազմակերպությունների ուժերը մոբիլիզացվեցին այդ պատմական խնդիրը հաջող իրագործելու համար: Ներգաղթի հարցը քննարկվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի բյուրոյում, պլենումում, քաղաքային և շրջանային կոմիտեներում, Ժողովրդական կոմիսարների սովետում, Գերագույն սովետում և պետական ու հասարակական այլ կազմակերպություններում: Մշակվեցին բազմաթիվ միջոցառումներ հայրենադարձներին պատշաճ ձևով ընդունելու համար:*

*Հայաստանի կոմունիստական կուսակցության 24-րդ պլենումը 1946 թ. փետրվարին քննարկեց հայրենադարձներին ընդունելու և տեղավորելու նախապատրաստական աշխատանքների հետ կապված միջոցառումների հարցը և ընդունեց որոշում, ուր մանրամասնորեն նշվում էին այն կարևորագույն միջոցառումները, որոնք պետք է կենսագործվեին հայերի ներգաղթը հաջող իրականացնելու համար:*

*Պլենումում մատնանշվեց այն հանգամանքը, որ միայն հայրենական պատերազմում ձեռք բերված հաղթանակը և հայ ժողովրդի 25 տարվա խոշորագույն նվաճումները հնարավոր դարձրին Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի և Ժողկոմսովետի կողմից ներգաղթի հարցի բարձրացումը Միութենական կառավարության առջև:*

*6 ՄԼԻ հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 1, ցուց. 35, գ. 24, թ. 175—177:*

Կուսակցությունը գտնում էր, որ ՍՍՌՄ ժողկոմսովետի պատմական որոշման իրագործումը՝ հայերի ներգաղթի թույլտվության մասին, հանդիսանում է հանրապետության կուսակցական և սովետական կազմակերպությունների առջև կանգնած հիմնական խնդիրներից մեկը։ Հայրենադարձների ընդունման և աշխատանքի տեղավորման գործում պետք է անմիջական և ամենաակտիվ մասնակցություն ցույց տային բոլոր կուսակցական, սովետական, հասարակական կազմակերպությունները, ձեռնարկությունները, կոլեկտիվ տնտեսությունները և ընդհանրապես Սովետական Հայաստանի ամբողջ ժողովուրդը։ Պլենումը հաստատ հավատ էր հայտնում, որ «պարտիական, սովետական, տնտեսական կազմակերպությունները և կոլեկտիվ տնտեսությունները բոլոր ջանքերը կլարեն ՍՍՌՄ ժողկոմսովետի պատմական որոշումը բարձր քաղաքական և կազմակերպչական մակարդակով կենսագործելու համար»[7]։

Արդեն 1946 թ. փետրվարին հայրենիք գալու թույլտվություն էին խնդրել 130.000 մարդ, սակայն նկատի առնելով հանրապետության հնարավորությունները, որոշվեց 1946 թ. ընդունել 28.800 մարդ։

Նախապես վերլուծվեց ներգաղթելու ցանկություն հայտնածների կազմը և որոշվեց, թե որտեղ և ժողովրդական տնտեսության ինչպիսի ճյուղերում նրանք պետք է աշխատեն։ Միջոցներ առանձնացվեցին այդ նպատակով բնակելի տներ կառուցելու համար։ Բայց քանի որ կարճ ժամկետում հնարավոր չէր անհրաժեշտ քանակով բնակելի տներ կառուցել, մեծ աշխատանք էր տարվում բնակարանային արդեն պատրաստի ֆոնդից ներգաղթների համար տներ առանձնացնելու ուղղությամբ։ Նկատի առնելով ներգաղթողների կազմը, որոնց մեծ մասը արհեստավորներ էին, հանրապետության մի շարք շրջաններում նրանց աշխատանքի տեղավորելու նպատակով բացվեցին կենցաղային արհեստանոցներ։ Ներ-

7 Նույն տեղում, ֆ. 1, ցուց. 35, գ. 3, թ. 26—32։

գաղթողների երեխաներին դպրոցներում ընդգրկելու համար կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի հանձնարարությամբ ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ լուսավորության մինիստրի ղեկավարությամբ[8]: Ներգաղթողների բնակարանային շինարարության համար կառավարությունը բաց թողեց մեծ քանակությամբ շինանյութ և ֆինանսական միջոցներ: Խոսելով կառավարության կողմից ներդրվող միջոցների մասին, պետք է չմոռանալ, որ այդ բոլորը կատարվում էր երկրորդ համաշխարհային պատերազմի ամբողջ ծանրությունը իր ուսերի վրա վերցրած երկրում:

Ընդունման կետեր ստեղծվեցին Բաթումիում, Լենինականում և Կիրովականում:

Հայաստանում կատարվող նախապատրաստական աշխատանքների հետ միասին այդ ուղղությամբ զգալի գործ էր կատարվում նաև սփյուռքահայ գաղթօջախներում. «Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեն» ամբողջ աշխարհի հայկական առաջադիմական կազմակերպություններին դիմեց մի նամակով՝ հայտնելով ՍՍՌՄ ժողկոմսովետի՝ հայերի հայրենադարձության մասին ընդունած որոշման լուրը, նա բոլոր առաջադիմական և բարեգործական կազմակերպություններին կոչ էր անում համախմբել ուժերը ներգաղթի կազմակերպման համար: Սփյուռքում գործող բոլոր հասարակական, բարեգործական կազմակերպությունները, ասվում է նամակում, որոնց գործունեությունը մինչև այժմ ընթացել է Սովետական Հայաստանի հետ մշակութային կապերի հաստատման և ամրապնդման ուղղությամբ, ներկայումս իրենց ամբողջ գործունեությունը պետք է ենթարկեն մեկ նպատակի՝ ներգաղթի կազմակերպմանը: Ելնելով դրանից, ներգաղթի կոմիտեն նպատակահարմար էր գտնում.

1. Բոլոր հայկական գաղթօջախներում ստեղծել ներգաղթի կազմակերպման կոմիտեներ, որոնք իրենց վրա պետք է

8 Նույն տեղում, ֆ. 1, ցուց. 35, գ. 34, թ. 239—240:

*վերցնեն հայրենադարձության նախապատրաստման և կազմակերպման հետ կապված բոլոր հարցերի լուծումը, նրանց նյութական ապահովությունը։ Նպատակահարմար էր համարվում, որպեսզի այդ նորաստեղծ կոմիտեները ղեկավարվեն ամբողջ գաղութի առաջադիմական կազմակերպությունների ղեկավարների կողմից, որոնք ֆաշիզմի դեմ մղվող մարտերում ցույց էին տվել իրենց նվիրվածությունը Սովետական Հայրենիքին։*

*2. Ամբողջ սփյուռքահայությանը տեղյակ պահել ՍՍՌՄ Ժողկոմսովետի 1945 թ. նոյեմբերի 21-ի որոշմանը։*

*3. Անմիջապես սկսել հայրենիք վերադառնալու ցանկություն հայտնողների ցուցակների կազմումը։*

*4. Բարեգործական և այլ կազմակերպությունների կողմից հավաքված միջոցներով կարիքավոր ընտանիքներին ապահովել հագուստով, ճանապարհածախսով, սննդով։*

*Կոմիտեն հույս էր հայտնում, որ սփյուռքահայ բոլոր կազմակերպությունները պարզ գիտակցելով հայ ազգության միավորման համար իրագործվող միջոցառումների բացառիկ նշանակությունը, իրենց ուժերը չեն խնայի արտասահմանի հայերի՝ իրենց Հայրենիքը վերադառնալու գործին անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու համար[9]։*

*Արտասահմանի բոլոր այն երկրներում, ուր գոյություն ունեին հայկական գաղթօջախներ, ստեղծվեցին ներգաղթի կոմիտեներ, իսկ առանձին քաղաքներում ու շրջաններում՝ տեղական կոմիտեներ։ Ներգաղթի կոմիտեներն անմիջապես ձեռնամուխ եղան ցուցակների կազմմանը։ Բեյրութից՝ Սիրիայի և Լիբանանի ներգաղթի կոմիտեի նախագահը 1946 թ. փետրվարին գրում էր. «Ներգաղթողների ցուցակագրումը Լիբանանում արագ տեմպերով շարունակվում է։ Սիրիայում ցուցակագրումը կսկսվի մի քանի օր հետո։ Հայության բոլոր խավերը մեծ հետաքրքրություն են ցույց տալիս ներգաղթի*

---

*9 Հայկական ՍՍՀ ՀՈՍՃ ՊԿԱ, ֆ. 362, ցուց. 2, գ. 6, թ. 4։ Նույն տեղում, ֆ. 313, ցուց. 2, գ. 13, թ. 7—10։*

*նկատմամբ և պատրաստակամություն են հայտնում ժամ առաջ մայր Հայրենիք վերադառնալու»[10]: Սիրիայի և Լիբանանի ներգաղթի կոմիտեն խնդրում էր 1946 թ. ներգաղթողների թիվը հասցնել 50 հազարի՝ նախատեսնված 25—30 հազարի փոխարեն[11]:*

*Արտասահմանում ստեղծված ներգաղթի կոմիտեները, ազգային խորհուրդները, բարեգործական և այլ քաղաքական-հասարակական կազմակերպությունները լարեցին իրենց բոլոր ուժերը մասսայական հայրենադարձությունը հաջողությամբ իրագործելու համար:*

*Ֆրանսահայ ազգային ընդհանուր միությունը, դիմելով գաղութի հայությանը և հայտնելով ներգաղթի կոմիտեի ստեղծման մասին, գրում էր, որ հայ ժողովրդի պատմության մեջ ներգաղթը եզակի երևույթ է, որովհետև նա իր ամբողջ դարավոր պատմության ընթացքում մշտապես արտագաղթել է: «Այսօր, սակայն,— ասված է հայտարարության մեջ,— շնորհիվ եղբայրական Սովետական Մեծ Միության աջակցության, փառավոր էջ մը կը բացվի մեր ժողովրդի պատմության մեջ: Ի սփյուռս աշխարհի ցրված հայերը այսօր կը պատրաստվին Հայրենիք վերադառնալ»[12]:*

*Նման հայտարարություններով հանդես եկան սփյուռքի բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպությունները: Ամերիկահայ ազգային խորհրդին կից ստեղծված հայերի ներգաղթի օգնության հանձնախումբը ներգաղթի կապակցությամբ հրատարակած իր կոչում գրում էր. «Դարերով սպասեցինք, դարերով երազեցինք և դարերով երգեցինք այս* նվիրական օրը: *Մեր հայրերը անցյալին մեջ, մեր քույրերը ու եղբայրները դեռ երեկ այս երանավետ օրվան համար ողջակիզվեցան և զոհաբերվեցան հավատքի կայծը իրենց հոգիին խորը և հույսի ժպիտը իրենց շուրթներուն վրա»[13]:*

---

10 *Նույն տեղում, ֆ. 362, ցուց. 2, գ. 4, թ. 26:*

11 *Նույն տեղում, թ. 67:*

12 *Նույն տեղում, ֆ. 362, ցուց. 2, գ. 6, թ. 37:*

13 *Նույն տեղում, գ. 10, թ. 105—106:*

Ներգաղթի կազմակերպությամբ լայն գործունեություն ծավալեց նաև Հայոց բարեգործական ընդհանուր միությունը, որը միայն 1946 թ. այդ նպատակով հանգանակեց մեկ միլիոն դոլար։ «Ներգաղթը, արտագաղթին և բռնագաղթին տեղ։ Հայրենադարձը կմնա օրվան կարգախոսը»[14],—ահա այս նշանաբանով էր գործում բարեգործականը, որը պարտավորվում էր՝ հոգալ ներգաղթողների ճանապարհածախսի և Հայրենիք վերադառնալու սկզբնական շրջանի պետքերը, հատկապես օգնել ներգաղթող կարիքավոր ընտանիքներին, արամադրել արդյունաբերական, հիվանդանոցային և մանկական հիմնարկների կահավորանք, ինչպես նաև հագուստ, կոշիկ և այլ նյութեր[15]։

Փարիզի բարեգործականը ևս իր հերթին հավաստիացնում էր, որ կլարվեն բոլոր ջանքերը ներգաղթող հայրենակիցների բազմաթիվ կարիքները բավարարելու համար[16]։

Ներգաղթի առնչությամբ լայն գործունեություն ծավալեցին նաև սփյուռքահայ կուսակցությունները։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև սփյուռքահայությունը, անկախ իր դասակարգային կամ կուսակցական պատկանելիությունից, ցանկանում էր վերադառնալ հայրենիք՝ Սովետական Հայաստան։ Ներգաղթի օրերին մեծ թվով հնչակյաններ, ռամկավարներ և դաշնակցականներ դիմումներ ավելցին՝ կուսակցությունից դուրս գալու և Հայրենիք մեկնելու մասին[17]։ Ներգաղթը լուրջ քննություն էր այդ կուսակցությունների համար։ Հայրենադարձության լիակատար կենսագործումը պետք է ի վերջո բերեր այդ կուսակցությունների լիկվիդացմանը, իհարկե, հօգուտ հայ ժողովրդի վերամիավորման և հզորացման։ Հնչակ և ռամկավար կուսակցությունները այդ հարցում ճիշտ քաղաքականություն վարեցին՝ իրենց անդամներին թույլ տալով դուրս գալ կուսակցության շարքերից և մեկնել Հայաստան։

14 Նույն տեղում, գ. 29, թ. 33։

15 Նույն տեղում, գ. 36, թ. 16։

16 Նույն տեղում, գ. 30, թ. 19։

17 «Ժողովրդի ձայն», 14 հուլիսի, 1946։

Ներգաղթի կազմակերպման օրերին ռամկավար ազատական կուսակցության Հալեպի կոմիտեն հանդես եկավ մի հայտարարությամբ, որի մեջ ասվում էր. «Ռամկավար ազատական կուսակցության տեղական կոմիտեն, այսու կը հայտարարե, թե՝ իրենց դիմումներուն ընթացք տալով և համաձայն կուսակցությանս որոշման գերծ կը կացուցանե իրենց կուսակցական երդումեն և պարտավորություններեն և այն բոլոր ներգաղթող ընկերները՝ որոնք Սովետական Հայաստան մեկնեցին կամ կը մեկնին Հալեպեն...»[18]: Նման որոշումներ ունեին ռամկավար ազատական և հնչակյան կուսակցությունների բոլոր տեղական կոմիտեները:

Սփյուռքի բոլոր կուսակցություններն ու կազմակերպությունները, ելնելով ժողովրդի վերամիավորման ու հզորացման շահերից, իրենց ուժերը ի սպաս էին դրել ներգաղթի լիակատար կենսագործմանը, լավ հասկանալով, որ այդ պրոցեսի ավարտը տրամաբանորեն պետք է հանգեցներ իրենց ինքնալիկվիդացմանը և գործունեության դադարեցմանը:

Այդպես են մտածում և այդպես գործում սփյուռքահայ բոլոր կազմակերպությունները, բացի դաշնակցությունից:

Դաշնակցությունը դեմ էր ներգաղթին. նա զգուշանում էր բացահայտ կերպով դիմադրել այդ ազգօգուտ գործին, որը գտնում էր սփյուռքահայության բոլոր խավերի պաշտպանությունը: Այնուամենայնիվ 1946 թ. վերջերից նա սկսեց բացեիբաց զրպարտել և կեղծել սովետական կառավարության մարդասիրական քաղաքականությունը: Այդ կապակցությամբ դաշնակցության մամուլում սկիզբ էր առել սուտ ու կեղծիքի մի ամբողջ հեղեղ, որի նպատակն էր հիասթափեցնել սփյուռքահայությանը սովետական իրականությունից և դրանով իսկ խափանել ներգաղթը:

Վերլուծելով դաշնակցության հայրենադավ քաղաքականությունը, ռամկավարները գրում էին, որ բյուրոյականները, վախենալով իրենց հեղինակությունը լիովին կորցնելուց,

18 «Պաշտոնական հայտարարություն Ռամկավար կուսակցության», «Ժողովուրդի ձայն», 14 հուլիսի, 1946:

*գործում են քողարկված ձևով. «Մենք հակառակ չենք ներգաղթին», կը պոռան անոնք՝ միամիտ հետևորդները օրօրելու համար, մյուս կողմեն սակայն գործնականապես կը քաջալերեն հականերգաղթը, Հայաստանեն հեռու անելեր ցրվելու քայքայիչ քաղաքականությունը»*[19]։

*Դաշնակցության պրոպագանդայից հետևում է, որ ներգաղթը կազմակերպվում է պատերազմից ավերված երկիրը վերականգնելու համար*[20]*։ Մինչդեռ գաղտնիք չէ, որ Հայաստանի տերիտորիայում պատերազմ չէր եղել, մեր հանրապետությունը չէր ավերվել։ Այդ ի՞նչ ավերակներ էր, որ պետք է վերականգնեին հայրենադարձները։ Դաշնակցականները ներգաղթի դեմ մղվող պայքարում նույնիսկ հիշեցին «ատոմական ռումբի սպառնալիքը կախված Հայաստանի վրա... «զգուշացնելով» ներգաղթել մտադրվածները»*[21]։

*Ռ. Դարբինյանը ջանք չէր խնայում ապացուցելու, թե Սովետական կառավարությունը, եթե իրոք ցանկանում է հայերին հավաքել Հայաստանում, ապա նա առաջին հերթին այնտեղ պետք է տանի «Սովետական զանազան հանրապետություններում ցրված բազմահազար հայեր»։ Կարդում ենք այս տողերը և մտածում, մի՞թե կիրքը կարող է այդ աստիճան կուրացնել մարդու ոչ միայն աչքերը, այլև բանականությունը։*

*Հայտնի է, որ Սովետական Միությունում հանրապետությունների միջև քաղաքական սահմաններ գոյություն չունեն։ Սովետական քաղաքացին, անկախ ազգային պատկանելությունից, կարող է բնակվել այնտեղ, ուր ցանկանում է. ոչ ոք չի կարող բռնանալ նրա կամքի վրա։*

*Այլ է արևմտահայերի հարցը։ Նրանք ցրված են աշխար-*

---

19 *«Հայրենադարձությունը կը շարունակեն շատ թափանցիկ քողի տակ», «Նոր օր», 7 հոկտեմբերի, 1947։*

20 Ս. Սահակյան, *Ներգաղթը իր ձևով ու խոսքով ինչ նպատակներ կը ձգտեր, «Հայրենիք», 20 դեկտեմբերի, 1949։*

21 *«Դաշնակցության պայքարը հայրենադարձին դեմ», «Նոր օր», 24 հունվարի, 1947։*

հի համարյա թե բոլոր երկրներում և ցանկանում են անպայման վերադառնալ Հայաստան: Բայց մի՞թե պարզ չէ, որ մեծ տարբերություն կա պետությունից պետություն փոխադրվելու և նույն երկրի սահմաններում բնակավայրը փոխելու մեջ: Ռ. Դարբինյանը չհասկանալով այս տարրական ճշմարտությունը կամ ավելի շուտ «չհասկացողի» դերը ընդունելով, պահանջում է բռնանալ Սովետական Միության տարբեր վայրերում բնակվող բազմահազար հայերի կամքի վրա և տեղափոխել Հայաստան:

Սակայն դաշնակցության այս «պատճառաբանությունները» զուտ տակտիկական են և չեն բացահայտում այդ կուսակցության իսկական նպատակները:

Սովետական կառավարության հոգատար քաղաքականության շնորհիվ տարաբախտ սփյուռքահայությունը ամբողջովին կվերադառնա Հայաստան և կլծվի ստեղծագործ աշխատանքի: Հենց այստեղ էլ թաքնված է դաշնակցության դժգոհության պատճառը: Հայրենադարձության լիակատար կենսագործումը միաժամանակ դաշնակցության ոչնչացումն է: Սա է պատճառը, որ հայ ազգի շահերի մասին բարբաջող դաշնակցությունը համաձայնում է սփյուռքահայության ձուլմանը, բայց ոչ Հայաստան գալուն:

Ոմանց գուցե թվա, թե դաշնակցությունը երևի համոզված է, որ սփյուռքում հայ գաղթօջախները ի վիճակի են պահպանելու իրենց գոյությունը, նրանց չի սպառնում ձուլման վտանգը: Սակայն այդպես չէ. դաշնակցությունը ևս զբաղվում է հայ գաղթօջախների պահպանման հարցերով, շատ հաճախ դրանք վերածելով սխոլաստիկ վեճերի: Որպեսզի պարզ լինի, թե այդ վեճերն ինչ ուղղությամբ են ընթանում և որքան կարող են օգտակար լինել հայապահպանմանը, բավարարվենք միայն դաշնակցության ղեկավարներից մեկի՝ Ս. Վրացյանի հետևյալ խոսքերով. «Եթե կուզեք, Ամերիկայում ամենից զորավոր ազդակը հայապահպանության՝ հայկական քուֆթան է, հայկական փլավն է, հայկական դոլման է և հայ-

կական պարերն են»[22]։ Փոխանակ գործնական հարցեր լուծելու, ահա այսպիսի «միամիտ» մտքերով են հեղեղում մամուլը դաշնակցականները՝ ոչ մի օգուտ չտալով սփյուռքահայության բախտի լուծման գործին։

Այնուամենայնիվ, չնայած անօգուտ, գործավնաս խոսակցություններին, դաշնակցության լիդերները համոզված են, որ «գաղութներում պահպանումը միջոց է և ոչ թե նպատակ։ Որևէ ազգի վերջնական հանգրվանը, խարիսխը, ամրոցը, իր մայր հողն է, իր հայրենիքը։ Գաղութները պետք է պահպանվեն, որչափ այդ հնարավոր է։ Վերջնական նպատակն է վերադարձը և ազգային բեկորներուն ամբողջական ներհամփոփումը մայր երկրին մեջ։ Միայն այս պայմանով մեր գաղութներուն հայապահպանումը կրնա իմաստ ունենալ։ Երբ գաղութի մը վերադարձը դեպի մայր երկիր արտակարգարեն կուշանա, գաղութը կփչանա։ Այս է պատմության վճիռը»[23]։

Հիմնականը այստեղ այն է, որ դաշնակցությունը լիովին համոզված լինելով հայ գաղթօջախների կործանման անխուսափելիության մեջ և նրանց փրկությունը կապելով մայր երկիր վերադառնալու հետ, սակայն ելնելով իր նեղ կուսակցական շահերից և հակասովետական դիրքորոշումից, դեմ է դուրս գալիս ներգաղթին։

Բացի վերոհիշյալից, դաշնակցությանն հետաքրքրում է նաև մի այլ կարևոր հարց, որի մասին նա բացարձակորեն չի կարողանում խոսել։ Այդ կուսակցությունը իմպերիալիստական պետություններից իր հակասովետական գործունեության համար մեծ գումարներ է ստանում, սակայն այդ գումարների հետ միասին դաշնակցությունը նյութական շահույթներ է ստանում նաև սփյուռքահայ գաղթօջախներից, որոնց նա պառակտել է երկու մասի, տրոհելով իր սեփական «շուկան»։ Հայրենադարձությունը քայքայում է դաշնակցության

22 Ս. Վրացյան, *Հայաստան և Սփյուռք*, «Հուսաբեր», 27 հունիսի, 1956։

23 Ջեյմս Մանդալյան, *Ամերիկահայ գաղութը և հայերի դատափարակության հարցը*, «Հայրենիք», № 4, 1954, էջ 25։

հասույթի աղբյուրները: Դրանով է բացատրվում բյուրոյականների վայնասունը այն մասին, թե ներգաղթը տնտեսապես կքայքայի գաղութները և գնացողների նյութական հարստությունը կլցնի Ռուսաստան[24]:

Մինչև այժմ հայրենադարձները հիմնականում հանդիսացել են սփյուռքահայ աշխատավորները, որոնք արտասահմանում եղել են կարիքի և զրկանքի մեջ: Սփյուռքահայ հարուստների զգալի մասը, չնայած խոսում է հօգուտ ներգաղթի, սակայն այդ ուղղությամբ դեռևս լուրջ քայլեր չի արել:

Դաշնակցությունը դեմ է դուրս գալիս ներգաղթին և ամեն ջանք թափում է հայերին ոչ թե Սովետական Հայաստան, այլ Կանադա, Հարավային Ամերիկա կամ Ավստրալիա ուղարկելու համար:

Աշխարհի բոլոր հայերը պետք է վերադառնան Հայրենիք, քանի որ դա է միակ փրկությունը, այդ պատճառով էլ ներգաղթի հարցի շուրջը ավելորդ է պայքար ծավալել,— գրում են հնչակյանները, ավելացնելով, որ դաշնակցությունը չնայած այդ բոլորին, «... ամենազզվելի և ամենաստորին միջոցներով պայքար կը մղե ներգաղթի շարժման դեմ և ամեն անգամ, որ ներգաղթը վերսկսելու լուրեր տարածվին, իրար կանցնի և գայլերու ոհմակին հատուկ ոռնոցներ կարձակե»[25]:

Այո՛, ամեն անգամ, երբ Սովետական կառավարությունը ձեռնարկում է ներգաղթի կազմակերպմանը, դաշնակցությունը անհապաղ աշխատանք է սկսում այն խափանելու նպատակով:

Դաշնակցությունը ձգտում է այն տպավորությունն ստեղծել, թե իբր սփյուռքահայ աշխատավորությունը գնում է իր հետևից, փորձեր է արվում ցույց տալու նաև, թե սփյուռքահայությունը ունի արևմտյան օրիենտացիա: Այդ կեղծիքի շարժառիթներից մեկն էլ այն է, որ դաշնակցությունը լավ գի-

24 Տե՛ս «Հայրենիք», 20 դեկտեմբերի, 1949:

25 «Ներգաղթի հարցը» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 31 օգոստոսի, 1954:

ան, որ ներկայանալով սփյուռքահայության ղեկավարի դերում ինքը իմպերիալիզմի կողմից շատ ավելի լավ կվարձատրվի:

Սակայն սփյուռքահայ լայն զանգվածները չեն գնում դաշնակցության հետևից, և ոչ միայն չեն գնում, այլև ակտիվորեն հանդես են գալիս նրա ազգադավ քաղաքականության դեմ:

Մանավանդ դաշնակցության հետպատերազմյան շրջանում վարած քաղաքականությունը լիովին բացեց սփյուռքահայության աչքերը: Պայքարը, իհարկե, չի դադարել: Դաշնակցությունը չի կորցրել իր հույսերը: Բյուրոյականների կողմից արվում է ամեն ինչ արտասահմանի հայությունը իրենց ազդեցության տակ պահելու համար:

Դաշնակցությունը ոչ միայն պրոպագանդում է, այլև սպառնում, նույնիսկ դիմում է սպանությունների: Դաշնակ մաուզերիստների կողմից սպանվել և վիրավորվել են մեծ թվով առաջադիմական ուժերին պատկանող գործիչներ: Քիչ աշխատանք չի տարել դաշնակցությունը ցույց տալու համար, թե իբր հայ առաջադիմական ուժերը ՍՍՌՄ՝ հինգերորդ զորասյունն են: Դաշնակ պրչակների կողմից գրպարտվել են ոչ միայն քաղաքական կուսակցությունները, տարբեր հասարակական կամ մշակութային միությունները, այլև անգամ եկեղեցին ու հոգևորականները:

Սփյուռքի հայ առաջադիմական ուժերը անողոք պայքար են մղում դաշնակցության ազգադավ գործունեության դեմ՝ հերքելով նրա հերյուրանքները և ապացուցելով, որ ներգաղթը սփյուռքահայության միակ փրկությունն է:

Ռամկավար ազատականները գրում էին. «Ծրագիրը՝ որ կը հետապնդեին դաշնակցական պետերը՝ որքան շպարված՝ նույնքան թափանցիկ էր ու բացահայտ: Անոնց նպատակն էր շփոթություն ու սարսափ սփռել հայ հասարակության մեջ Հայաստանի իշխանության հանդեպ, հանկերգելով անտեղի թշվառության, անհատական հալածանքներու, ներքին խառնակությանց և Խորհրդային Միության վրա Անկլո-Ամերիկ-

յան հարձակումի մը գարշելի մը տականքները, որպեսզի արտասահմանի հայերը չներգաղթեն իրենց դարավոր ու ազատագրված հայրենիքը, որ ամենեն ապահով վայրն էր վերջին համաշխարհային պատերազմին մեջ: Ներգաղթի դեմ պայքարը ազգադավ ձեռնարկ մըն էր և բնականաբար հայրենասեր հայեր իրենց ձայները պիտի բարձրացնեին, ճշմարտությունը պարզելով և սուտերը քողազերծելով»[26]:

Ներգաղթի իրականացման ժամանակ դաշնակցության դեմ մղվող պայքարում առաջադիմական ուժերը մեծ դեր կատարեցին: Հատկապես դրական գործ կատարեց սփյուռքահայ առաջադիմական մամուլը, որը փաստերից և համոզիչ հոդվածներով հերքեց դաշնակցության հակասովետական հերյուրանքները: «Հայրենասեր մամուլը,— շարունակում են ռամկավարները,— հավատարիմ իր կոչումին խիզախ և անխոնջ նվիրումով, հարատևորեն պայթեցուց դաշնակցական թերթերու բոլոր հերյուրանքները, զրպարտությունները և թույնի բուրակները, լուսավորելով գաղութահայ զանգվածները և դեպի ներգաղթի դրանենյակները ուղղելով անոնց քայլերը. դաշնակցությունը, բնականաբար, պիտի պարտվեր գաղափարական այս բախումին մեջ: Եվ ան դիմեց վատերու անարգ զենքին, դաշույնին և խարդավանքին: Ան չէր կրնար լռեցնել ճշմարտության ձայնը, ուրեմն կը փորձեր կարել զայն աղաղակող կերպով»[27]:

Դաշնակցականները չբավարարվելով և դասեր չառնելով հայ ժողովրդի դառն պատմության տարեգրությունից, նորից արյուն են թափում: Սփյուռքի հայ առաջադիմական մամուլը բազմիցս փաստեր է հրատարակել դաշնակցության դավադրական գործունեության մասին: Առաջադիմական ուժերին պատկանող մեծ թվով մարտիկներ զոհ են գնացել դաշնակցության ազգադավ գնդակին:

Հետպատերազմյան առաջին ներգաղթի օրերին դաշ-

26 «Դաշնակցության պայքարը հայրենադարձին դեմ», «Նոր օր», 21 հունվարի, 1947։

27 Նույն տեղում։

*նակցության չարագործությունների կապակցությամբ դրությունը այնքան սրվեց, որ կոմունիստական, ռամկավար-ազատական, հնչակյան կուսակցությունների և Վերածնունդ միության ղեկավար մարմինները հարկադրված եղան հանդես գալ մի հայտարարությամբ, որում անողոքաբար մերկացնում էին այդ կուսակցության զինված արկածախնդրությունները[28]:*

*Չնայած դաշնակցության դիմադրությանը, ներգաղթը սկսվեց 1946 թ. հունիսին և մեծ հաջողությամբ շարունակվեց հետագա տարիներին:*

*1946 թ. հունիսից հոկտեմբեր ամիսները Սովետական Հայաստանը Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից, Բուլղարիայից և Ռումինիայից ընդունեց 10.801 ընտանիք, կամ՝ 50945 մարդ:*

*Բոլոր աշխատունակ հայրենադարձները, որոնք բաղկացած էին գյուղացիներից, բանվորներից, արհեստավորներից և մտավորականներից, բավարարվեցին համապատասխան աշխատանքով՝ 3897 մարդ արդյունաբերական ձեռնարկություններում, 9405 մարդ՝ գյուղատնտեսության մեջ, 1133 մարդ՝ շինարարությունում, 3448 մարդ՝ արհեստագործական կոոպերացիայի սիստեմում, 234 մարդ՝ առևտրի բնագավառում և այլն: Հայրենադարձների երեխաները լիովին ընդգրկվեցին դպրոցներում: 1947 թ. փետրվարի 1-ի տվյալներով միջնակարգ դպրոցներում սովորում էին 7454 հայրենադարձ երեխաներ, իսկ այլ տիպի դպրոցներում՝ 1270 երեխա:*

*Մեծ աշխատանքներ կազմակերպվեցին նաև հայրենադարձների շրջանում անգրագիտության վերացման համար: 4673 անգրագետներից, 1947 թ. ապրիլի 1-ի տվյալներով, անգրագիտության վերացման խմբերում ընդգրկված էին 3833 մարդ: 2874 կիսագրագետներից համապատասխան խմբակներում ընդգրկված էին 2719 հոգի:*

*Ներգաղթած երիտասարդներից 203 հոգի ընդունվեցին*

28 Տե՛ս «Արարատ», 9 օգոստոսի, 1946:

բարձրագույն ուսումնական հաստատություններ, 94 հոգի՝ տեխնիկումներ[29]։

Հայրենադարձներին աշխատանքով բավարարելու պրոցեսում ծագեցին զգալի դժվարություններ՝ կապված այն հանգամանքի հետ, որ նրանց մի մասը, լինելով արհեստավոր և քաղաքի բնակիչ, բնակարանային սուր պայմանների պատճառով բնակեցվեց գյուղական շրջաններում։

Ներգաղթած 10,801 ընտանիքներից նոր բնակարաններ ստացան 936-ը, մնացածները տեղավորվեցին հին բնակարանային ֆոնդից առանձնացված բնակարաններում։ 1600 ընտանիքներ ստացան հողամասեր և վարկ՝ անհատական բնակարանային շինարարության համար։ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը 1946 թ. նոյեմբերի 25-ի որոշումով կրճատեց այլ կազմակերպություններին հատկացված միջոցներից 500.000 ռուբլի և ներդրեց սփյուռքահայերի համար բնակելի տների կառուցման ֆոնդի մեջ[30]։

1946 թ. ներգաղթը ավարտելուց հետո անցկացվեց հայրենադարձների վիճակի ուսումնասիրություն։ Կուսակցությունը և կառավարությունը անհրաժեշտ գտան 1946 թ. զգալի միջոցներ բաց թողնել ներգաղթողների դրությունը բարելավելու համար։ Այդ նպատակով հայրենադարձներին բաց թողնվեց՝ 29600 մետր բամբակե գործվածք, 10300 մետր բրդյա գործվածք, տղամարդկանց, կանանց և երեխաների հագուստ՝ 16800 կտոր, կոշիկ՝ 8350 զույգ, օճառ՝ 18000 կտոր, նավթ՝ 58 տոննա, վառարաններ՝ 2600 հատ և միանվագ օգնություն՝ 1 մլն. 50000 ռուբլի գումարով[31]։ Բաց թողնվեց նաև ցորեն, ալյուր, ձավար և շաքար[32]։

Հայրենադարձների համար որոշակի օգնություն էր ու-

29 Հայկական ՍՍՀ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ցուց, 2, գ. 25, թ. 1—3։

30 Նույն տեղում, ցուց. 1, գ. 12, թ. 74։

31 ՄԼԻ Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 1, ցուց. 36, գ. 24, թ. 53—61։

32 Հայկական ՍՍՀ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ցուց. 1, գ. 15; թ. 11, 32, 35։

վարկվում նաև սփյուռքի առաջադիմական կազմակերպությունների կողմից։

Ներգաղթի առաջին տարվա հանրագումարները ցույց տվին երկու հանգամանք. առաջին, որ ամբողջ սփյուռքահայությունը ցանկանում է կենտրոնանալ մայր Հայրենիքում՝ Սովետական Հայաստանում, և երկրորդ՝ պարզ դարձավ, որ սփյուռքահայության բազմահազար մասսաների հայրենիք ներգաղթելու իղձերը Սովետական Հայաստանը դեռևս հնարավորություններ չուներ լիակատար իրականացնելու համար։ Չափազանց ծանր էին պատերազմի հասցրած վնասներն ու վերքերը։

Հետպատերազմյան առաջին մասսայական հայրենադարձության տարիներին սփյուռքի բազմաթիվ հասարակական կազմակերպություններից և հարյուրավոր ու հազարավոր մասնավոր անձերից նամակներ էին ուղարկվում՝ ներգաղթը ավելի մասսայական դարձնելու խնդրանքով։ Նամակներն ավելի շատացան 1947—1948 թթ.։ Այդ տարիներին ստացված նամակներում հատկապես խոսվում է այն երկրներից ներգաղթը արագացնելու մասին, որտեղ հայերի դրությունը առավել աննպաստ էր[33]։

Սակայն, եթե սփյուռքահայերի մի մասի համար հայրենադարձությունը թելադրվում էր միմիայն հայրենասիրական զգացմունքներով, ապա շատերի մոտ այն ուներ նաև քաղաքական և տնտեսական նշանակություն։

Դա ամենից ավելի վերաբերում էր Հունաստանի հայությանը, որը, ինչպես նշեցինք վերը, գտնվում էր քաղաքական վատթարագույն դրության մեջ։ Այդ պատճառով էլ սփյուռքահայ բոլոր կազմակերպությունները դիմում էին սովետական կառավարությանը՝ խնդրելով արագացնել հունահայերի ներգաղթը։ Նյու-Յորքից հեռագրում էին, խնդրելով արագացնել «Հունաստանի վեց հազար դժբախտներու» անմիջական ներգաղթը[34]։

33 Նույն տեղում, ֆ. 362, ցուց. 2, գ. 15, թ. 59։

34 Նույն տեղում, գ. 30, թ. 85։

Սիրիայից և Լիբանանից ներգաղթողների մեծ մասն այնքան աղքատ էր, որ ի վիճակի չէր ճանապարհածախսը վճարելու[35]։ Սիրիայի և Լիբանանի ներգաղթի կենտրոնական կոմիտեն ՀՍՍՀ Մինիստրների սովետին կից Հայրենադարձ հայերի ընդունման և տեղավորման կոմիտեին գրած իր նամակում խնդրում էր 1948 թ. Սիրիայից, Լիբանանից, Պաղեստինից և Կիպրոսից ընդունել 40 հազար հոգուց ոչ պակաս հայրենադարձներ։ Այդ հանգամանքը բացատրվում էր վերջին տարիներին նշված երկրներում առաջացած և տակավին զարգացող մի շարք փոփոխություններով, որոնք հետզհետե ծանրացող լուրջ կացություն էին ստեղծել այդ երկրներում ապրող հայության համար։ Նամակում ասվում էր. «Զգալի չափերով վատթարացած է և կշարունակի ավելի վատթարանալ՝ աշխատավոր մասսաների ապրուստի պայմանները, կաճեն անորոշությունն ու թշվառությունը իրենց բոլոր հետևանքներով»[36]։

Վերոհիշյալ նամակում նշվում էր, որ իրենք Պաղեստինի ներգաղթի կոմիտեից ստացել են մի հատուկ նամակ, որում, տվյալ շրջանում ստեղծված լուրջ կացության հետևանքով, խնդրվում է մինչև մայիս ամիսը լուծել պաղեստինահայերի ներգաղթի հարցը[37]։

Դրությունը վատ էր նաև այլ երկրներում։ Իրաքահայ ներգաղթի կոմիտեն գրում էր. «Ուսումնասիրելով դիմողներուն նյութական վիճակը, կոմիտես տեսնե առնվազն չորս հազար հոգի այս տարի մեկնելու խիստ անհրաժեշտություն կը զգան»[38]։ Նման վիճակում էր գտնվում նաև եգիպտահայությունը, որի ներգաղթի կոմիտեն խնդրում էր 1947 թ. նախատեսված 3000 հոգին հասցնել առնվազն 5000-ի[39]։

Ներգաղթելու ցանկություն հայտնածների թիվը շատ հաճախ

35 Նույն տեղում։
36 Նույն տեղում, գ. 41, թ. 37—39։
37 Նույն տեղում։
38 Նույն տեղում, թ. 28։
39 Նույն տեղում, գ. 11, թ. 16։

ենթարկվում էին իմպերիալիստական պետությունների կամ դաշնակների հալածանքներին։

1948 թ. փետրվարին Հաբանահայությունը իրաքահայ ներգաղթի կենտրոնական հանձնախմբի միջոցով սովետական դեսպանին գրում էր, որ դրամատիրական կարգերի պաշտպանները ամենուրեք թշնամական զգացմունքներով են տոգորված Սովետական Միության բարեկամների և քաղաքացիների նկատմամբ։ «Հաբանահայության ներգաղթին արձանագրվողները,— ասված է նամակում,— տեղական անգլիական զինվորական իշխանության կողմից կենթարկվեն անողոքելի հալածանքի, ամենաաննշան պատրվակներով հետևանքով՝ արձանագրվողները անխնա կենթարկվեն գործազրկման»[40]։

Նույնը կատարվում էր նաև մյուս երկրներում։

Իրաքից գրում էին, որ դաշնակները և այլ թշնամական տարրերը հակասովետական պրոպագանդա են մղում, ջանալով ցույց տալ, որ Սովետական կառավարությունը Իրաքից այլևս ոչ մի հայ չի ընդունելու։ Նույն նամակում խնդրվում էր ՀՍՍՀ կառավարությունից, հաշվի առնելով ներգաղթի հետ կապված բոլոր դժվարությունները, այնուամենայնիվ, գոնե 1000 հոգի հայրենադարձ ընդունել Իրաքից, որը շատ «կօգնի մեր բարեկամներին դաշնակների դեմ մղվող պայքարում»[41]։

Սովետական Հայաստանի կառավարությունը ելնելով սփյուռքահայության վիճակից, նրանց դարավոր իղձերը կատարելու բուռն ցանկությունից, 1947 և 1948 թվականներին ևս շարունակեց հայրենադարձությունը։

Ներգաղթի հարցը ինչպես 1947 և 1948 թթ., այնպես էլ նախորդ տարում մանրամասն մշակվեց և քննարկվեց Միութենական և ՀՍՍՀ Մինիստրների սովետներում։ Ընդունվեցին համապատասխան որոշումներ։ Ներգաղթի հարցը այդ տարիներին մանրամասն քննարկվում և մշակվում էր նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական

40 Նույն տեղում, գ. 41, թ. 21։

41 Նույն տեղում, թ. 27։

կոմիտեի բյուրոյում և կուսակցական այլ կազմակերպություններում: Ինչպես 1946 թ., այնպես և հետագա տարիներին ներգաղթը հանդիսանում էր Հայաստանի կուսակցական և պետական շրջանների ուշադրության շրջանակներում գտնվող հիմնական խնդիրներից մեկը:

1947 թ. ներգաղթեցին՝ Սիրիայից, Լիբանանից, Պաղեստինից, Իրաքից, Եգիպտոսից, Հունաստանից, Ֆրանսիայից և ԱՄՆ-ից: Մի փոքր խումբ վերադարձավ նաև Չինաստանից: Ընդհանուր առմամբ 1947 թ. ներգաղթեց 8521 ընտանիք, որը բաղկացած էր 35401 մարդուց[42]: Ներգաղթողների քանակը անհամեմատ մեծ կլիներ, եթե Իրանի կառավարությունը չարգելեր ներգաղթը:

Կուսակցությունը և կառավարությունը լարեցին իրենց բոլոր ուժերը հայրենադարձների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով: Մեծ աշխատանք կատարվեց բնակարանային հարցի լուծման ուղղությամբ: Բոլոր աշխատունակ հայրենադարձները ստացան համապատասխան աշխատանք: Երեխաները ընդգրկվեցին դպրոցներում, իսկ երիտասարդները՝ տեխնիկումներում և բուհերում: Երկու տարում, 1946—1947 թթ. հայրենադարձներին բաց թողնվեց ալյուր՝ 600 տոննա, ձավար՝ 80 տոննա, միս, ձուկ՝ 15 տոննա, կենդանական յուղ՝ 1,1 տ., բուսական յուղ՝ 1,9 տ., շաքար 42, 5 տ., օճառ՝ 106,8 տ., բամբակե գործվածք՝ 26178 մետր, բրդյա կտորներ՝ 8450 մետր, պատրաստի հագուստ՝ 5255 կտոր, կոշիկ՝ 5684 զույգ, նավթ՝ 63,6 տոննա: Այդ նույն ժամանակաշրջանում սփյուռքից ուղարկվել է հայրենադարձների համար մեծ քանակությամբ հագուստեղեն, կոշիկեղեն, տարբեր տեսակի կտորեղեն և օճառ: Բացի դրանից, Սովետական կառավարությունը ցույց տվեց նաև դրամական օգնություն 2.268.137 ռուբլի գումարով[43]:

Քննելով հայրենադարձներին ցույց տրված օգնության

42 Նույն տեղում, գ. 25, թ. 7—8:

43 Նույն տեղում, թ. 34—35:

*հարցը ոչ մի դեպքում չպետք է աչքաթող անել այն կարևոր հանգամանքը, որ Սովետական Միությունը պատերազմից նոր էր դուրս եկել և մեծ հնարավորություններ չուներ հայրենադարձների բոլոր պահանջները բավարարելու համար։ Այդ է պատճառը, որ ՀՍՍՀ կառավարությունը 1948 թ. Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Ֆրանսիայից, Ռումինիայից, Բուլղարիայից և ԱՄՆ-ից ընդունելով ևս մոտ 10 հազար հոգի, դրանով իսկ ժամանակավորապես դադարեցրեց մասսայական հայրենադարձությունը։*

*Այսպիսով, 1946—1948 թթ. ընթացքում մոտ 100.000 հայրենակարոտ հայեր վերադարձան հայրենիք՝ Սովետական Հայաստան և լծվեցին հայրենաշեն, ստեղծագործ աշխատանքի։*

*1948 թ. վերջի տվյալների համաձայն, 37 հազար աշխատունակ հայրենադարձներից արդյունաբերական ձեռնարկություններում աշխատում էին մոտ 9000 մարդ, արհեստագործական կոոպերացիայի սիստեմում՝ 5700 մարդ, սովխոզներում՝ 2500 մարդ, կոլտնտեսություններում՝ 11 հազար մարդ և զանազան հասարակական կազմակերպություններում ու այլ հիմնարկներում՝ 4700 մարդ։*

*Կառավարությունը ներգաղթողներին տրամադրել էր երկարատև վարկ և շինանյութեր՝ անհատական տներ կառուցելու համար։ Այդ կապակցությամբ արդեն ծախսվել էր 271 մլն. ռուբլի։ Ներգաղթածները, ձեռնարկություններն ու կոլտնտեսություններն արդեն կառուցել էին 4650 տուն։ Մինիստրություններն ու ձեռնարկությունները կառուցել էին 3700 սենյակ։ Շինարարության պրոցեսում էին գտնվում մոտավորապես 6500 տուն և 2500 սենյակ։ Հայրենադարձների համար կառուցված էր 8 նոր ավան։*

*Ներգաղթը իրականացրեց հայրենադարձ երիտասարդության խնդիրը։ Բարձրագույն ուսումնական հաստատություններում 1947—1948 ուսումնական տարում սովորում էին 377 հոգի։ Միջնակարգ և հատուկ դպրոցներում, արհեստագործական ուսումնարաններում և ֆաբզավուչի դպրոցներում սովո-*

րում էին ներգաղթածների 16.500 երեխա։ Վերացված էր 5900 մարդու անգրագիտությունը և կիսագրագիտությունը[44]։

Հայրենադարձ, աշխատավորները, որոնք իրենց ամբողջ կյանքում ծառայել էին շահագործողներին, վերջնականապես հնարավորություն ստացան իրենց ամբողջ էներգիան, ընդունակությունները ներդնելու մայր հայրենիքի բարգավաճման գործին։ Սովետական իշխանությունը լայն հնարավորություններ ստեղծեց օտարության մեջ ստացված սփյուռքահայերի բոլոր ընդունակությունների բացահայտման և զարգացման համար։

Հայրենադարձներն իրենց լավագույն աշխատանքով մեծագույն հաջողությունների հասան արդյունաբերության, գյուղատնտեսության և մտավոր կյանքի բնագավառում։ Սփյուռքահայ առաջավոր բանվորների, գյուղացիների, արվեստի ու գիտության գործիչների անունները վաղուց դուրս են եկել մեր հանրապետության սահմաններից։

1946—1948 թթ. ներգաղթի կազմակերպման գործում գոյություն ունեին որոշ թերություններ, որոնց զգալի մասն անխուսափելի էին, որովհետև Սովետական Հայաստանի կառավարությունը, ելնելով ազգահավաքի հարցը շուտափույթ լուծելու բարի ցանկությունից, ավելի շատ ներգաղթողներ ընդունեց, քան թե կարող էր։ Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ներգաղթը կազմակերպվում էր երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո։

Սակայն այլ դեպքում բնական էր նաև Սովետական Հայաստանի կառավարության քաղաքականությունը, որը բխում էր առաջին հերթին միայն և միայն սփյուռքում թշվառության մեջ գտնվող հայ բնակչությանը փրկելու և հայությունը իր Հայրենիքում կենտրոնացնելու ցանկությունից։ Ազգահավաքման ջերմ զգացմունքներով համակված Սովետական Հայաստանի կառավարության քաղաքականությունը

44 Հաշվետու զեկույց Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին, Հայպետհրատ, 1949, էջ 107—108։

*դաշնակցության կողմից լիովին խեղաթյուրվում էր, մեր երկրում գոյություն ունեցող առանձին թերությունները մինչև երկինք էին բարձրացվում:*

*Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը 1946—1948 թթ. ընդունելով մոտ 100.000 հայրենադարձներ, դրանով իսկ կատարեցին իրենց առջև դրված կարևորագույն խնդիրը. սփյուռքահայության այն խավերը, որոնք գտնվում էին քաղաքական և տնտեսական չափազանց անբարենպաստ պայմաններում հնարավորություն ստացան վերադառնալու հայրենիք:*

*Կատարելով իր խնդիրը, ՀՍՍՀ կառավարությունը հետագա աշխատանք ծավալեց 1946—1948 թթ. ընդունած հայրենադարձների դրությունը ավելի բարեկեցիկ դարձնելու և ապագայում ներգաղթի հարցը վերջնականապես լուծելու ուղղությամբ:*

*Հետպատերազմյան շրջանի երկրորդ խոշոր ներգաղթը, որը սկսվեց կենտրոնացվել 1962 թ., զերծ է նախկին ներգաղթի կազմակերպման ընթացքում տեղ գտած թերություններից: Բայց, ինչպես առաջին ներգաղթի ժամանակ, այնպես էլ այժմ դաշնակցության պրոպագանդան շարունակում է, նույն երգը երգել՝ զրպարտել Սովետական Հայաստանը, նրա ներքին կյանքը, մոլորեցնել հասարակական կարծիքը և գաղութահայությանը մայր հայրենիքի փոխարեն կենտրոնացնել այլ երկրներում՝ Կանադայում, ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում և Հարավային Ամերիկայի մի շարք այլ շրջաններում:*

*Սփյուռքի հայկական առաջադիմական ուժերը շարունակում են խստորեն քննադատել դաշնակցության՝ ներգաղթի դեմ ուղղված քաղաքականությունը, ցույց տալով, որ սփյուռքահայության միակ փրկությունը Սովետական Հայաստանն է: «Պիտի ղըչան հեռավոր գաղթավայրեր մեկնող հայերը,— ասվում է «Ջահակիր» թերթում,— պիտի կորսվին և կորսայան պիտի մոռնան իրենց ակունքները: Բայց պիտի երջանկանան, պիտի շահին, իրենց և իրենց զավակներուն հաշվույն*

*փարքի պիտի արժանանան Հայաստան մեկնողները, որով-հետև անոնք հայրենիքին ու ազգը վերաշինողներ, հավերժաց-նողներ պիտի կոչվին»*[45]:

*Համոզվելով, որ սփյուռքահայությունը երես դարձնելով դաշնակցությունից, իր բախտը կապել է առաջադիմական ուժերի հետ, բուրժուականները աններելի պրոպագանդիստա-կան արշավ են սկսել՝ հայ ժողովրդին համարելով հիվանդ և այլասերված: «Տրմարած է հայությունը: Կորսնցուցած է իր հավասարակշռությունը, մթագնած է իր տեսողությունը, խա-թարված է իր հոգին: Բեկում մը հառաջ եկած է իր նկարա-գրին մեջ, հոգեբանական, իմացական և հոգեկան»,— ասվում է դաշնակցության պաշտոնական հանդես «Հայրենիք»-ում: Հոդվածի հեղինակը, ոմն Ճեյմս Մանդալյան՝ վերը բերված թունալից գնահատականները քիչ համարելով, շարունակում է. «Ինկած է հայ ժողովուրդը բարոյապես և հոգեպես: Եվ ինչպիսի անկում, ինչ խորունկ և տարատարածային թավալգլո-րում: Մեկնած են մեր երբեմնի անաղարտ և անբասիր բարի բարքերը, ու անոնց հաջորդած են հոռի բարքերը: Բարե-կրթությունը, քաղաքավարությունը, փափկանկատությունը, հակառակորդին հանդեպ հարգանքը, արդարամտությունը, անկեղծությունը, պարկեշտությունը փոխարինված են բրտու-թյամբ, մոլեգնությամբ, թույնով, զրպարտությամբ, սու-տով, մրոտությամբ և անվանարկությամբ»*[46]:

*Հիրավի, միայն մարդկային կերպարանքը լիովին կորց-րած մարդիկ կարող են սեփական ժողովրդին նման այլան-դակ զրպարտություններ վերագրել:*

*Մենք չէինք ցանկանա նման՝ նորմալ մարդկանց բարքերի հետ անհամատեղելի, արտահայտությունները մեջբերել, բայց հարկադրված կատարեցինք այդ՝ ցույց տալու համար,*

---

45 *«Ազգահավաք (գաղութահայության վիճակը և ներգաղթ)» «Լրա-բեր», 6 հոկտեմբերի, 1962:*

46 *Ջեյմս Մանդալյան, Ինչ է հայ ժողովրդին հիվանդությունը, «Հայրենիք», № 4, 1952, էջ 38:*

*թե դաշնակցությունը այլասերման ինչպիսի մակարդակի է հասել:*

*Հարցի էությունը չփոխվեց նաև այն բանից, երբ «Հայրենիք» հանդեսի 1952 թ. վերջին համարում հայերի հիվանդության մասին հոդվածով հանդես եկավ ոչ անհայտ Հ. Քյուրայանը՝ ցանկանալով մեղմել նախորդ հոդվածի ստեղծած տպավորությունը: Մանդալյանի հոդվածը համարվեց «շահեկան», նրա բոլոր հիմնական մեղադրանքները վերագրվեցին Սովետական Միությունում բնակվող հայերին: Սփյուռքի հայությանը տված գնահատականների մի մասը մեղմացվեց, իսկ մյուս մասը՝ չընդունվեց:*

*Հիվանդ է ոչ թե հայ ժողովուրդը, այլ դաշնակցությունը: Սովետական Միության սահմաններում բնակվող հայությունն այսօր ապրում է իր նոր վերածնունդը, նա փաստորեն հարություն առնելով 1920 թ., այսինքն՝ փրկվելով վերջնական կործանումից, սովետական իշխանության տարիներին իր ազգային կյանքի բոլոր բնագավառներում ձեռք է բերել այնպիսի հաջողություններ, որոնց կապիտալիստական շատ ու շատ նույնիսկ առաջավոր երկրներ կարող են նախանձել:*

*Սփյուռքի պայմաններում անտանելի դժվարություններ կան հայ տաղանդի զարգացման համար: Սփյուռքահայ մշակույթի գործիչների լավագույն աշխատությունները ֆինանսական և այլ դժվարությունների պատճառով հնարավոր չի լինում հրատարակել: 500 տպաքանակով լույս տեսած գիրքը չի հաջողվում սպառել[47]: «Եվ երբ զուգահեռ մը կանցնենք Հայաստանի և գաղութահայ գրողի ու արվեստագետի ճակատագրի միջև, ամենեն տխուր և անմխիթար կացության մը առջև կգտնենք ինքզինքնիս: Նյութական դժվարությունները, օրվան ապրուստի հոգսը, կապարի պես կճնշեն գաղութահայ գրողի զգայուն հոգին: Եվ եթե ծանրաբեռնված է ան ընտանիքով, այլևս շուտով կլքե իր բուն կոչումը և կվազե իր և իր*

---

*47 «Մեր նորակերտ ակեղարը» (խմբագրական), «Երիտասարդ Հայաստան», 1 փետրվարի, 1957:*

ընտանիքին ապրուստի եռեռն»[48],— գրում է «Երիտասարդ Հայաստանը»:

Սակայն, չնայած նման անօրինակ դժվարություններին, հայ մշակույթը սփյուռքում ևս զգալի հաջողությունների է հասել: Հայ ժողովրդի սփյուռքահայ հատվածը աչքի լույսի պես պահպանում է իր ազգային մշակույթի լավագույն ավանդույթները:

Այնպես որ, պետք է խոսել ոչ թե հայ ժողովրդի, այլ դաշնակցության հիվանդության մասին: Պատմության փորձով մեկընդմիշտ ապացուցված է, որ իր դարն ապրած, նեխված ու քայքայված կուսակցությունը կամ դասակարգը այլևս ընդունակ չի տալու առաջնորդներ, կամ ավելի մեղմ ասած, գոնե խոշոր գործիչներ: Դաշնակցության պատմությունը մեկ անգամ ևս ապացուցում է այդ տարրական ճշմարտությունը: Այն կուսակցությունը, որը մի ժամանակ իր շարքերում էր համախմբել հայ մտավորականության զգալի մասը և ղեկավարների պակասություն չէր զգում, այժմ մամուլի էջերում գրում է, որ սփյուռքը մեծություններ չի տալիս: Տակավին նշենք, որ խոսքը վերաբերում է ոչ թե սփյուռքին, այլ դաշնակցությանը, որը, այդ տեսակետից իրոք, ապրում է ճգնաժամ:

Դաշնակցությունն ահով ու սարսափով նկատում է, որ ղեկավար հին գործիչները մեռնում են, մինչդեռ նորերը չկան. նա ողբ ու լաց է բարձրացրել, թե կուսակցությունը այլևս մեծություններ չի տալիս[49]:

Իսկ դա մի՞թե պատահականություն է: Բոլորովին էլ ոչ: Սփյուռքահայությունը՝ զզված դաշնակցության հակաազգային քաղաքականությունից, չի մոտենում այդ կուսակցությանը: Հայ գաղութների ընդունակ և առաջավոր մարդիկ ոչ միայն չեն մտնում այդ կուսակցության շարքերը, այլև,

---

48 Նույն տեղում:

49 «Սփյուռքը պիտի կրնա՞յ մեծություններ տալ», «Հուսաբեր», 30 օգոստոսի, 1956:

ընդհատակը, առաջադիմական ուժերի շարքերում պայքա-
րում են նրա դեմ:

Եթե ընդհանուր գծերով տանք դաշնակցության քայքա-
ման տենդենցը, ապա այն կարտահայտվի հետևյալում.

1. Ինչպես վերը նշեցինք, կուսակցության «առաջնորդնե-
րը», ծերերը մեռնում են, իսկ նոր ուժեր երևան չեն գալիս:

2. Բյուրոյականները բաժանված են խմբերի, որոնց մեջ
պայքարը կուսակցության ղեկավարության համար թելա-
դրվում է ոչ թե գաղափարական, այլ անձնական նկատառում-
ներով:

3. Բյուրոյականները կուսակցությունը վերածեցին մի-
ջազգային իմպերիալիզմի գործակալի, խաղաղության և ազ-
գային-ազատագրական պայքարի թշնամու:

4. «Ծերերի» այդ ազգադավ քաղաքականությունն առա-
ջացրեց կուսակցության բազմաթիվ թե՛ ղեկավար և թե՛ շար-
քային անդամների զայրույթը, որոնք բաց կերպով դժգոհե-
ցին այդ անօրինակ ազգադավության դեմ: «Բյուրոն՝ անգլո-
ամերիկացիներու վարձկան գործակալն է»,— գրում է բյու-
րոյականների քաղաքականությունից դժգոհ Խ. Թութունջ-
յանը, հայտարարելով, որ Զավարյանի և Ռոստոմի կուսակ-
ցությունը այդ նպատակի համար չէր ստեղծվել:

Դաշնակցություն կուսակցության Իրանի մասնաճյուղի
անդամներից մեկը, խիստ կերպով բողոքելով բյուրոյական-
ների դավաճանական քաղաքականության դեմ, գրում էր.
«Երկար տարիների ընթացքում դաշնակցական լինելով, ես
ականատես եմ եղել ախրահուշակ «ղեկավարների» կողմից
հանուն գաղափարի կատարած ոճրագործությունների: Շատ
անգամ փորձել եմ արդարացնել նրանց, խեղդել իմ մեջ
խղճիս խայթը և առաջ եկած կասկածները: Սակայն, լռել՝
այլևս անթույլատրելի է: Անհրաժեշտ եմ համարում ձուլել իմ
ձայնը հայրենասերների ճիգերին, վճռական և թունավոր
վերքի վիրահատումը շտապեցնելու ու օտարազգի գործա-

կալների ու լրտեսների ոհմակի դիմակը օր առաջ պատռելու համար»[50]:

Նույն միտքն է արտահայտվում նաև 1959 թ. օգոստոսի 8-ի թվակիր նամակում, որը դաշնակցության մի անդամի կողմից Բեյրութ էր ուղարկվել Դետրոյթից: Այդ նամակում հեղինակը (նամակը ունի «Հրաչ» ստորագրությունը) իր դառնությունն է հայտնում ծերերի խմբակի դեմ «... որ աթոռի ու դոլարի սիրույն կը ծախեն ամեն ինչ, ազգ, հայրենիք, արժանապատվություն»: «Այլևս ոչ ոքի համար անծանոթ է,— շարունակում է նամակագիրը,— որ մեր գաղափարի հակառակորդներն անգամ գիտեն մեր ներքին պառակտումները և երևան հանած են մեր ղեկավարներուն սերտ կապը ամերիկյան գաղտնի սպասարկության պետերուն հետ: Հապա անգամ երդում-պատառ ըլլանք, կրնա՞նք ծածկել այն մերկ իրականությունները, որոնք «Արարատ»-ներու էջերուն լավեցան»[51]:

Բյուրոյի քաղաքականությունից դժգոհները Բեյրութում սկսեցին լույս ընծայել «Ազդարար» թերթը, որում ցույց էին տալիս, թե Դրո-Նավասարդյան խումբը ինչպիսի բռնապետական, կամայական պայմաններ է ստեղծել կուսակցության մեջ, ինչպես է ցրում տեղական բյուրոները, կուսակցությունից հեռացնում իրեն չսիրողներին և նույնիսկ հարձակումներ գործում և գազանային ծեծի ենթարկում նրանց[52]:

Դաշնակցության ղեկավարության քաղաքականությունից դժգոհները հույս ունեին վերականգնել այդ կուսակցության «փառավոր տրադիցիաները»: Զուր հույսեր:

5. Հետպատերազմյան տարիներին մասսայական դարձան

---

50 «Հայրենասեր դաշնակցական մը կմերկացնե բյուրոյական վարձկան գործակալներու կողմե գործված ոճիրներն ու դավադրությունները», «Սովետական Հայաստան», 24 օգոստոսի, 1956:

51 «Աջակողմյան մեծապարին հույզը», «Արարատ», 24 հոկտեմբերի, 1959:

52 Հայկ Մանկասարյան, Բողբոջ դաշնակցականները, «Սովետական Հայաստան», 17 հուլիսի, 1955:

դաշնակցությունից հեռանալու փաստերը։ Բազմաթիվ դաշնակներ համոզվելով այն բանում, որ դաշնակցությունը չարիք է հայ գաղթօջախների և, ընդհանրապես, հայ ժողովրդի համար, հեռանում են այդ կուսակցությունից։ Դաշնակցությունից հեռանալը մասսայական բնույթ ընդունեց հատկապես ներգաղթի կազմակերպման և իրականացման ժամանակաշրջանում։ Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Բացվում են դաշնակցության մոլորյալ անդամների աչքերը, նրանք սկսում են հասկանալ, թե ինչպիսի կործանարար ուղիով են ընթանում բյուրոյականները և ինչպիսի մեծամեծ վնասներ են հասցնում նրանք սփյուռքահայ գաղթօջախներին։

Այդ բանը հասկանում են դաշնակցության ոչ միայն շարքային անդամները, այլև երբեմն նույնիսկ նրա որոշ ղեկավարներ։

Սահակ Տեր-Թովմասյանը, որը որպես դաշնակցության ղեկավարներից մեկը, մասնակցում էր Փարիզյան բլոկի նիստերին, իր եղբորը գրած նամակում անկեղծորեն խոստովանում է. «Միայն ծերության օրերուն ես հասկցա, որ զուր կորսնցուցած եմ կյանքիս լավագույն տարիները։ Դեպքերուն ողջ ընթացքը կը հաստատե, որ մեր կուսակցությունը զատ չէ աջակցությունը հայերուն մեծ մասուն մոտ։ Ասոր առավել նաև շատերու մոտ ստեղծած է զայրույթ ու ատելություն մեր հանդեպ»[53]։

Հարց է առաջանում, եթե այդ բոլորը ճիշտ է, ապա ինչո՞ւ Ս. Տեր-Թովմասյանը չի հեռանում դաշնակցությունից։ Հարցին պատասխանում է ինքը՝ Ս. Տեր-Թովմասյանը, որը իր վերահիշյալ նամակում գրում է. «Պատկերացուր ինչ կըլլա ինծի հետ, եթե ես փոխեմ հայացքներս։ Ինծի կը նետեն որպես անպետք իր, վերջ կուտան ինծի օգնելուն և ապրուստի միջոցներ վճարելուն։ Ինծի նույնիսկ տեղ չեն տար ծերերուն տան մեջ»[54]։

---

53 «Սահակ Տեր-Թովմասյանի նամակը», «Լրաբեր», 13 սեպտեմբերի, 1958։

54 Նույն տեղում։

Ինչպես տեսնում ենք, անգամ կուսակցության որոշ լիդերներ սկսում են խոստովանել, որ դաշնակցության ուղին սխալ է եղել։ Նման դրությունը ապացույցն է այն բանի, որ դաշնակցությունը գտնվում է հոգեվարքի մեջ։

Ինչքան ուժեղանում է դաշնակցության քայքայման պրոցեսը, այնքան ավելի է այդ կուսակցության ղեկավարությունը խոսում համախմբվածության և միակամության մասին[55]։ Պատահական չէ այն, որ դաշնակցության վերջին՝ XVIII համագումարին նվիրված խմբագրականը «Հայրենիքը» վերնագրել է «Ամրապինդ, կուռ և միակամ»[56]. դաշնակցությունը ցանկությունը ընդունում է իրականության տեղ։

Ինչքան բարձրանում է սփյուռքահայության գիտակցականությունը, այնքան ավելի խղճուկ դրության մեջ է ընկնում դաշնակցությունը, որովհետև այլևս դժվար է դառնում խորամանկել և դիմակավորվել հայրենասիրական, ազգասիրական ֆրազներով։ Հայ ժողովուրդը երբեք չի ների դաշնակցությանը։ «Հեռու չէ նաև այն օրը,— գրում են ուսանողները,— երբ հայ ժողովուրդը դաշնակցության լիդերներին դատելու է մի նոր Նյուրնբերգում, ոչ միայն որպես հայրենիքի դավաճաններ, հայ ժողովրդի գերագույն շահերի դեմ դավող միջազգային լրտեսներ, այլ նաև որպես ամենահասարակ ու ամենաստոր տիպի, արհեստով մարդասպան ոճրագործներ, որոնց ձեռքը երբեք չի դողացել հայ ժողովրդի զավակների կյանքի թելը անողորմաբար կտրելու»[57]։

Սա է դաշնակցության զարգացման տրամաբանական վախճանը։

1918 թվականին, երբ դաշնակցականները փորձում էին Ստ. Շահումյանին հանձնել մոլորվող, մութ մասսաների ինք-

---

55 «Հայտարարություն հայ ժողովրդին և համայն աշխարհին», «Հայրենիք», 27 նոյեմբերի, 1963։

56 «Ամրապինդ, կուռ և միակամ» (խմբագրական), «Հայրենիք», 5 դեկտեմբերի, 1963։

57 «Դաշնակցության «մարտական» գործունեությունը Թեհրանում», «Զարթոնք», 22 հունիսի, 1956։

*նադատաստանին, նա մարգարեաբար գրում էր.* «Դա, թերևս, ձեզ հաջողվի, բայց, պարոններ, այդ ձեզ չի օգնի: Մեզ համար ավելի կարևոր է գիտակից բանվորների դատաստանը, պատմության դատաստանը, և նա ձեզ համար ավելի սոսկալի կլինի, քան ամբոխի ինքնադատաստանը, որին դուք դիմում եք»[58]:

*Դաշնակցության կուսակցության ներկա վիճակը փայլուն ապացույցն է այն բանի, որ, իրոք, պատմության դատաստանը անողոք է ու արդարացի:*

*Սփյուռքահայ կուսակցությունների հետպատերազմյան շրջանում վարած քաղաքականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք չփոխելով իրենց դասակարգային էությունը, պայմանավորված արդի էպոխայի կենսական խնդիրների համար մղվող պայքարի պայմաններով, համախմբվել են տարբեր ճակատներում և դաշնակցում են տարբեր, հակադիր ուժերի հետ: Հնչակյան ու ռամկավարը հանդես են գալիս խաղաղության ու առաջադիմության ուժերի հետ, իսկ դաշնակցությունը՝ ռեակցիայի:*

58 Ստ. Շահումյան, *Երկեր, հատ. երրորդ, էջ 410:*

# АРМЯНСКИЕ ЗАРУБЕЖНЫЕ ПАРТИИ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ


## Резюме

В силу различных неблагоприятных факторов в истории армянского народа за границей на современном этапе проживает около 1,5 миллиона армян, имеющих на чужбине свои политические партии, национальные и культурные организации.

В послевоенный период среди зарубежных армян особенно бурную деятельность развернули партии дашнакцутюн, гнчак и рамкавар-азатакан.

Подробное исследование идеологии и практической деятельности зарубежных армянских политических партий имеет не только научное, но и большое политическое значение в борьбе против буржуазной идеологии, для сплочения сил, борющихся за мир и демократию.

В. И. Ленин и старшее поколение армянских большевиков-ленинцев в свое время дали правильную оценку классовой сущности армянских политических партий. Однако, полностью принимая ленинскую оценку классовой сущности армянских партий, необходимо иметь в виду, что некоторые из них в современных условиях проводят такую политику, которая с точки зрения решения актуальных вопросов современности расценивается как

прогрессивная. Между тем в период культа личности Сталина это обстоятельство совершенно игнорировалось.

В оценке деятельности армянских зарубежных политических партий проявлялся догматизм. Только лишь после исторических решений XX съезда КПСС и Московских совещаний коммунистических и рабочих партий 1957 и 1960 годов были созданы широкие возможности для изучения этой важной и актуальной проблемы, которую впервые в 1924 году исследовал выдающийся деятель Коммунистической партии А. Ф. Мясникян.

Автор настоящей работы, анализируя политику армянских зарубежных политических партий в послевоенный период, показывает, что из действующих ныне за рубежом партий только дашнакцутюн находится в лагере империализма и выступает против мира, демократии, мирного сосуществования двух систем, национально-освободительного движения. Эта партия прилагает все усилия к тому, чтобы помешать репатриации армян в Советскую Армению. Дашнакцутюн входит в антисоветский парижский блок, организованный эмигрантами, и восхваляет все военные блоки, созданные империалистами.

Как показывает обширный материал, использованный автором, партия дашнакцутюн всегда была связана с империалистическими государствами и выступала против Советского Союза.

В годы второй мировой войны одна часть этой партии выступала в союзе с германским блоком, а другая— с союзниками. Такая политика проводилась руководством партии в надежде на то, что после войны (каков бы ни был ее исход) дашнакская партия получит свою долю от нового передела мира.

В послевоенный период партия дашнакцутюн связала свою судьбу и осуществление всех своих планов с

американским империализмом. «Теоретики» ее подпевают в своих многочисленных газетах и книгах теоретикам империализма, развернув широкую антисоветскую пропаганду в армянских зарубежных колониях.

В работе подробно анализированы собственные и взятые из арсенала международного империализма «теоретические положения» дашнаков и показана их антинаучность.

Особое внимание в работе уделяется вопросу об отношении дашнакцутюн к международному социалистическому движению. Автор убедительно доказывает, что партия дашнакцутюн ничего общего не имеет с учением социализма, даже в его реформистском понимании.

Характерно отношение партии дашнакцутюн к национально-освободительному движению в послевоенный период. В дашнакской печати часто встречаются абстрактные и декларативные статьи, одобряющие национально-освободительное движение. Однако подробное изучение деятельности этой партии полностью раскрывает реакционную сущность ее политики и в этом вопросе. Краеугольным камнем своей политики дашнакцутюн считает проповедь нейтралитета, невмешательства во внутренние дела приютившей ее страны и преданность законному правительству.

Начав свою деятельность в период господства колониальной системы, дашнакцутюн считала правительства колониальных, полуколониальных и слаборазвитых стран законными. Не случайно поэтому, что ныне, в эпоху широкого национально-освободительного движения народов колониальных и полуколониальных стран, дашнакцутюн, выступая против поступательного хода истории, защищает «законные правительства». Обвиняя армянских коммунистов, гнчакистов и рамкаваров в том, что они присоединились к «восставшим и выступившим с

оружием против законных правительств», сами члены партии дашнакцутюн и сочувствующие ей участвовали в боях против национально-освободительного движения.

В исследовании опровергается распространенное в годы культа личности Сталина мнение о партиях гнчак и рамкавар как об агентах империализма и доказывается, что эти партии, находясь в антиимпериалистическом лагере, выступают в рядах борцов за мир, демократию и прогресс, поддерживая национально-освободительное движение. В связи с тем, что основная часть названных партий действует в странах Ближнего Востока, автор подробно освещает роль и место этих партий в национально-освободительном движении этих стран. Приведенный в работе материал не оставляет сомнений в том, что партии гнчак и рамкавар участвовали в национально-освободительном движении, одновременно ведя непримиримую борьбу против партии дашнакцутюн.

Говоря о разбросанных по свету зарубежных армянских колониях, автор в то же время показывает тесную дружбу, связывающую зарубежных армян с народами приютивших их стран.

Армянские трудящиеся, испытавшие горечь исторических перипетий, не жалеют сил в совместной борьбе за прогресс тех стран, в которых они живут.

Как гнчакисты, так и рамкавары систематически и с большой любовью пропагандируют успехи, достигнутые Советским Союзом и в частности Арменией, в области промышленности, сельского хозяйства, науки, культуры и т. д., разоблачая измышления дашнаков по перечисленным вопросам. Эти партии проделывают также большую работу по организации репатриации армян в Советскую Армению.

Подобная политика двух этих партий явилась основой того, что в послевоенный период, исходя из непре-

ложных требований исторического развития, они вместе с армянскими коммунистами создали в зарубежных армянских колониях единый национальный фронт прогрессивных сил. Названный фронт выступает активным защитником насущных проблем современности, включая в рамки своей деятельности также и национальные вопросы, такие, как, например, вопрос предотвращения ассимиляции армян в трудных, оторванных от родины условиях.

В настоящей работе автор анализирует также идеологические и программные вопросы указанных партий, их классовую сущность и показывает, что шатание и непоследовательность, которую допускают эти партии в своей деятельности, обусловлены их классовой сущностью и характерны для мелкобуржуазных и буржуазных партий.

Однако, несмотря на буржуазную идеологию, непоследовательность, эти партии находятся в демократическом, антиимпериалистическом лагере.

В работе автор дает краткий очерк основных этапов возникновения и развития вышеназванных партий, анализирует особенности их современной политики.

В монографии особенно большое внимание уделяется вопросу выяснения причин, побуждающих эти партии выступать в защиту Советской Армении, и раскрываются исторические корни этого явления.

Борьба между зарубежными армянскими партиями определяется не только их отношением к Советской Армении. Чтобы объяснить мотивы борьбы между зарубежными армянскими политическими партиями, необходимо подробно исследовать их классовую сущность и программные документы. Большое значение имеет также изучение пройденного ими исторического пути, тенденций и особенностей развития.

Общеизвестно, что каждая партия, являясь детищем своего класса, в политической борьбе отстаивает сугубо классовые интересы, причем формы борьбы бывают различные—скрытые или открытые, что, в конечном счете, находится в зависимости от уровня общественного развития страны. Борьба происходит не только между партиями, представляющими различные классы, но и партиями, выражающими интересы разных слоев одного и того же класса. Известно также и то, что основной целью борьбы каждой партии является захват власти. Однако деятельность армянских зарубежных партий имеет свою специфику, заключающуюся в том, что они действуют за границей, где перед ними непосредственно не ставится вопрос захвата власти.

Исходя из этого, автор уделяет большое внимание раскрытию тех факторов, которые связывают гнчакистов и рамкаваров с Советской Арменией и с борьбой за осуществление насущных вопросов современности, показывает их место и роль в современных общественных отношениях в зарубежных армянских колониях.

Наряду с исследованием практической деятельности партии гнчак и рамкавар—азатакан, автор рассматривает также основные вопросы идеологии этих партий. Так, например, руководители партии гнчак на протяжении многих лет пропагандируют точку зрения, сводящуюся к тому, что их партия является пролетарской, марксистской. Автор, изучив богатый материал по этой проблеме, пришел к выводу, что партия гнчак является мелкобуржуазной, политика которой, имея свои особенности, в общем совпадает с политикой левого крыла современной социал-демократии.

После вышеизложенного возникает вопрос: можно ли игнорировать эти партии или же отождествлять их с дашнакцутюн. Подобное отношение не соответствует по-

литике Коммунистической партии Советского Союза и чуждо духу ленинизма.

Логика развития современных условий диктует установление связей с прогрессивными организациями зарубежных армян, сотрудничество с ними в совместной борьбе за мир, демократию и прогресс.

В монографии кратко говорится о зарубежных армянских благотворительных, культурных организациях, о церкви, земляческих союзах, оценивается их деятельность.

Силы, входящие в антиимпериалистический демократический лагерь, разнородны. В него входят как коммунисты, борющиеся за победу социализма и коммунизма, так и отстаивающие мир духовенство и буржуазные партии, руководящие национально-освободительным движением колониальных и полуколониальных стран. Силы, составляющие этот лагерь, имеют различную идеологию, и в этом смысле они являются классовыми врагами. Но их связало не тождество идеологии, а необходимость разрешения актуальных проблем, стоящих перед человечеством.

Еще в принятой в 1957 году декларации Московского совещания коммунистических и рабочих партий ясно говорится: «В настоящее время важнейшей задачей во всем мире является борьба в защиту мира». Участники совещания объявили, что они поддерживают усилия всех государств, партий, организаций, движений и отдельных лиц, выступающих за мир против войны, за мирное сосуществование, создание коллективной безопасности в Европе и Азии, сокращение вооружений, запрещение применения и испытания ядерного оружия.

В заявлении, принятом на совещании коммунистических и рабочих партий в Москве в 1960 году, говорится

о создании единого фронта борьбы против подготовки империалистами новой войны.

Исходя из решений XX съезда КПСС и Московских совещаний коммунистических и рабочих партий 1957 и 1960 годов, XXII съезд Коммунистической партии Армении уделил большое внимание вопросам связей с зарубежными прогрессивными организациями, репатриации, а также оценке деятельности армянских зарубежных политических партий на современном этапе. Съезд подчеркнул, что партия гичак проводит политику поддержки Советской Армении, пропагандирует успехи Советской Армении, борется против дашнаков и империализма, за мир. Как было отмечено на съезде, приблизительно на таких же позициях стоит партия рамкаваров.

Однако, несмотря на решение XXII съезда Компартии Армении, до сих пор еще не опубликована ни одна работа, в которой освещались бы вопросы идеологии и деятельности этих партий в послевоенный период.

Данная монография является первым исследованием, посвященным анализу идеологии и политики армянских зарубежных партий в послевоенный период, над которым автор начал работать с 1956 года.

## LES PARTIS POLITIQUES ARMENIENS DE LA DIASPORA DANS L'ÉTAPE PRÉSENTE


### Résumé

Par suite des circonstances historiques défavorables, un million et demi d'Arméniens vivent aujourd'hui à l'Etranger. Ces Arméniens ont leurs partis politiques, leurs organisations nationales et culturelles.

Après-guerre, les partis dachnaktsoutioun, hentchakiste et ramkavar-azatakan se distinguèrent particulièrement, déployant parmi les Arméniens de la diaspora une activité intense.

Une étude approfondie de l'idéologie et de l'activité des partis politiques arméniens de l'Etranger aurait en plus de son importance scientifique, une signification politique considérable dans la lutte contre l'idéologie bourgeoise et pour le renforcement du camp de la paix et de la démocratie.

V. I. Lénine ainsi que la première génération des bolchéviks-léninistes arméniens soulignèrent en son temps le caractère de classe des partis politiques arméniens. Sans déroger à cette thèse léninienne, il faut remarquer que certains partis arméniens mènent aujourd'hui une politique, qui vu l'urgence des problèmes de notre époque, est spécifiquement progressiste. Ce facteur semble avoir été entièrement ignoré du temps du culte de Staline.

L'activité de ces partis était considérée d'un point de vue dogmatique. Les décisions historiques prises au 20ème Congrès du P. C. U. S. et lors des Conférences de 1957 et 1960 des partis communistes et ouvriers permirent d'aborder un important et actuel problème auquel s'était déjà consacré en 1924 un dirigeant célèbre du parti communiste, A. F. Miasnikian.

L'auteur de l'article montre, tout en analysant la ligne de conduite d'après-guerre des partis arméniens de la diaspora, que seul le parti dachnaktsoutioun se place dans le camp de l'impérialisme et s'oppose à l'œuvre mondiale de paix et de démoctratie, à la coexistence pacifique des différents systèmes sociaux, au mouvement de libération nationale. Ce parti met aussi tout en œuvre pour freiner le rapatriement des Arméniens en Arménie Soviétique. Entrant dans le bloc antisoviétique des émigrés de Paris, il se fait l'apologiste de tous les blocs militaires des impérialistes.

L'article, qui utilise un matériel plus qu'abondant de faits et de données nous éclaire sur les liens impérialistes du parti dachnaktsoutioun et son immuable politique antisoviétique.

Lors de la deuxième guerre mondiale, ce parti se scinda en deux pour se mettre, d'un coté, au service de l'Allemagne et, de l'autre, rejoindre les Alliés. Un tel comportement ne pouvait que nourrir l'espoir de retirer sa part du jeu quelle que fût l'issue de la guerre.

La période d'après-guerre vit ce parti rattacher son destin et la réalisation de tous ses plans à la politique des impérialistes américains. C'est en chœur que ses „théoriciens" répètent dans toutes leurs publications le refrain des théoriciens de l'impérialisme, agitant, en l'occurence, l'épouvantail de l'antisoviétisme.

L'article offre une analyse minutieuse des "principes

théoriques“ des dachnaks, principes propres ou d'emprunt provenant de l'arsenal de l'impérialisme et dont le manque de fondement scientifique est évident.

Il est démontré d'une manière convaincante que ce parti ne saurait s'assimiler au mouvement socialiste international et ne saurait avoir de point commun avec l'idée du socialisme même dans sa conception réformiste.

La politique du parti dachnaktsoutioun à l'égard du mouvement de libération nationale d'après-guerre est caractéristique. Les organes de ce parti publient fréquemment des articles superficiels et déclamatoires en faveur du mouvement de libération nationale, cependant un examen approfondi de l'activité de ce parti nous révèle l'essence réactionnaire de sa politique. Le parti fait de la neutralité la pierre angulaire de cette politique: non-ingérence dans les affaires intérieures des pays d'adoption, fidélité au gouvernement légal.

Ayant pris naissance sous le règne du système colonial, le parti dachnaktsoutioun reconnut la légitimité des gouvernements des pays coloniaux, semi-coloniaux et sous-développés. On ne saurait attribuer au hasard le fait que ce parti, en un temps où le mouvement de libération des peuples colonisés et semi-colonisés gagne en ampleur, aille à l'encontre du courant de l'histoire et soutienne les gouvernements légaux en accusant les communistes arméniens, les hentchakistes et les ramkavars d'alliance avec „les insurgés et les groupes armés contre les gouvernements légaux“. Les membres du parti dachnaktsoutioun et leurs sympathisants se sont joints à la lutte contre le mouvement de libération nationale.

L'auteur réfute l'opinion répandue dans les années du culte de Staline selon laquelle les partis hentchakiste et ramkavar seraient des organisations à la solde de l'impérialisme, en nous les présentant au contraire comme

des ennemis de l'impérialisme et des défenseurs de la paix, de la démocratie et du progrès, du mouvement de libération nationale.

L'auteur s'arrête sur le rôle et la place de ces partis dans le mouvement de libération nationale des pays du Proche—Orient, pays où ils se trouvent majoritairement fixés. Leur participation à ce mouvement et la lutte intransigeante menée contre le parti dachnaktsoutioun, grâce aux faits rapportés, ne laissent aucun doute.

Les colonies arméniennes de l'Etranger ne doivent être étudiées qu'en fonction de leur étroite amitié avec les peuples de leur pays d'adoption. Les travailleurs arméniens ne ménagent en rien leurs efforts dans la lutte commune pour le progrès social de ces pays.

Les hentchakistes comme les ramkavars se font les ardents défenseurs de l'Union Soviétique et de l'Arménie, les propagateurs de leurs victoires économiques, scientifiques et culturelles, en même temps qu'ils dénoncent les calomnies lancées contre elles par les dachnaks. Ces partis aident grandement à l'organisation du rapatriement des Arméniens en Arménie Soviétique.

La ligne politique de ces partis permit, après-guerre, devant l'exigence immédiate du cours des évènements historiques, de créer dans les colonies arméniennes de l'Etranger un front national unique des forces progressistes. Ce front porte à son ordre du jour des problèmes importants, dont la question nationale et de prévention contre l'assimilation étrangère des Arméniens dans les difficiles conditions de la diaspora.

L'auteur se consacre également à une analyse des questions idéologiques et tactiques, du caractère de classe de ces partis et précise qu'il faut rechercher les causes de leur prise de position parfois hésitante ou inconséquente dans leurs racines bourgeoises ou petites-bourgeoises.

Néanmoins, l'idéologie bourgeoise ne leur est pas un obstacle les empêchant de rallier le camp démocratique et anti-impérialiste.

L'auteur nous donne un bref aperçu des différentes étapes de l'apparition et du développement de ces partis et met en relief les particularités de leur politique actuelle.

Il accorde une très grande attention anx raisons historiques de leur attitude amicale envers l'Arménie Soviétique.

La lutte réciproque des partis arméniens de l'Etranger ne s'explique pas uniquement par leur prise de position quant à l'Arménie Soviétique. Cette lutte a une base sociale de classe que reflète les programmes politiques, elle suit leur histoire à travers toutes leurs tendances et les particularités de leur développement.

Tout parti naît d'une classe dont il représente et défend les intérêts par la lutte politique qui, selon le niveau social des pays, est légale ou clandestine. Cette lutte partage non seulement les partis entre eux mais aussi différentes fractions dans les partis mêmes, qui expriment à leur tour les intérêts des couches déterminées d'une classe. On ne peut ignorer aussi que la conquête du pouvoir est la tâche fondamentale de tout parti. Cette dernière thèse, cependant, ne s'applique point aux partis arméniens de l'Etranger en raison même des conditions spécifique de leur état.

Ainsi, l'auteur nous découvre les facteurs qui rattachent les hentchakistes et les ramkavars à l'Arménie Soviétique, à la lutte progressiste. Il les situe quant à leur rôle et place dans la réalité sociale et dans la vie des colonies arméniennes.

L'auteur examine de même, parallèlement à l'activité pratique des partis hentchakiste et ramkavar, les questions idéologiques fondamentales de ces partis. Les dirigants

du parti hentchakiste soutiennent depuis de nombreuses années que leur parti est un parti prolétarien et marxiste. L'auteur montre, à l'appui des données étudiées, que ce parti est un parti petit-bourgeois dont la tendance politique correspond, malgré certains côtés spécifiques, à celle de l'aile gauche de la social-démocratie de nos jours.

Doit-on ignorer ces partis ou les assimiler au parti dachnaktsoutioun? Telle est la question qui se pose donc après tout ce qui précède. Cette prise de position ne saurait s'inspirer de la politique du parti communiste de l'Union Soviétique et de l'esprit du léninisme.

Les conditions présentes du cours du développement historique dictent un rapprochement avec les organisations progressistes arméniennes de l'Etranger, une coopération dans la lutte pour la paix, la démocratie et le progrès social.

Cette monographie concerne également les sociétés de bienfaisance arméniennes, les unions culturelles et patriotiques, l'église, autant d'organisations dont l'auteur situe l'activité.

Les forces composant le camp démocratique, antiimpérialiste sont de souches diverses: communistes œuvrant pour la victoire du socialisme et du communisme; et, préconisant la paix, le clergé et les partis bourgeois à la tête du mouvement de libération nationale dans les pays coloniaux et semi-coloniaux. Par leur idéologie, les forces de la démocratie sont des ennemies de classe que les grands problèmes de l'humanité ont rapprochées.

La Déclaration de la Conférence des partis communistes et ouvriers de Moscou de 1957 dit: „La lutte pour la défense de la paix est, présentement, la plus importante tâche du monde". Les membres de la Conférence se prononcèrent pour le soutien de tous les Etats, partis, organisations, mouvements et personnes combat-

tant pour la paix, contre la guerre et préconisant la coexistence pacifique, la création en Europe et en Asie d'un système de sécurité collective, la réduction des armements, l'interdiction des essais et de l'utilisation des armes nucléaires.

La Déclaration de 1960 de la Conférence des partis communistes et ouvriers de Moscou parle de la création d'un front unique de la lutte contre les préparatifs de guerre impérialistes.

S'appuyant sur les décisions du 20ème Congrès du P. C. U. S. et des Conférences des partis communistes et ouvriers de Moscou de 1957 et 1960, le 22ème Congrès du parti communiste d'Arménie fixa son attention sur la question des rapports avec les organisations progressistes arméniennes de l'Etranger, le rapatriement et l'activité des partis politiques arméniens. Le Congrès souligna le fait que le parti hentchakiste mène une politique de soutien de l'Arménie Soviétique, se réjouit de ses succès, lutte contre le parti des dachnaks et contre l'impérialisme, défend la paix. Telle est dans ses grandes lignes, comme l'indiqua le Congrès la position politique du parti ramkavar.

Toutefois, malgré la décision prise lors du 22ème Congrès du parti communiste d'Arménie, aucun ouvrage traitant des questions de l'idéologie et de l'activité de ces partis dans la période d'après-guerre, n'a été encore publié.

La présente monographie est la première investigation du genre sur laquelle l'auteur s'est penché dès 1955.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

### I. Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ա) Հայերեն լեզվով

Մարքս Կ. և Էնգելս Ֆ., *Կոմունիստական պարտիայի մանիֆեստը*, Երևան, 1960։

Լենին Վ. Ի., *Նարոդնիկությունից դեպի մարքսիզմը*, հատ. 8։

Լենին Վ. Ի., *Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905—1907 թվականների առաջին ռևոլյուցիայի մեջ*, հատ. 13։

Լենին Վ. Ի., *Մարքսիզմի երեք աղբյուրներն ու երեք բաղկացուցիչ մասերը*, հատ. 19։

Լենին Վ. Ի., *Ազգային ծրագրի պատմության շուրջը Ավստրիայում և Ռուսաստանում*, հատ. 20։

Լենին Վ. Ի., *Ճառ Համառուսաստանյան Կենտգործկոմի, Մոսկվայի Սովետի, Մոսկվայի ֆաբրիկա-գործարանային կոմիտեների և պրոֆեսիոնալ միությունների միացյալ նիստում 1918 թ. հուլիսի 29-ին*, հատ. 28։

Լենին Վ. Ի., *Պիտիրիմ Սորոկինի արժեքավոր խոստովանությունները*, հատ. 28։

Լենին Վ. Ի., *Մոսկվայի պարտիական աշխատողների ժողովը 1918 թ. նոյեմբերի 27-ին*, հատ. 28։

Լենին Վ. Ի., *«Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ*, հատ. 31։

Լենին Վ. Ի., *Ռադիոգիր Ս. Գ. Շահումյանին*, հատ. 35։

* * *

Ահարոնյան Ա., *Քրիստափոր Միքայելյան*, Բոստոն, 1917։

Ամուրյան Ա., *Հ. Յ. Դաշնակցությունը Պարսկաստանում, 1890—1918*, Թեհրան, 1950։

Ադամյան Հ., *Պատմություն Հնչակյան կուսակցության, Կ. Պոլիս, 1919։*

Անանուն Դ., *Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատ. 2 (1870—1900), Էջմիածին։*

Անանուն Դ., *Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատ. 3 (1900—1918), Վենետիկ։*

Անդրիասյան Ս., *Խոհեր, Պեյրութ, 1961։*

Անդրիասյան Ս., *Սփյուռքը և Հայրենիքը, Պեյրութ, 1962։*

Ասպարեզ, *Հիսնամյակ. 1908—1958, Ֆրեզնո, 1958։*

Բյուրատ Սմբատ, *Արյունի ճամբուն վրա, Կ. Պոլիս, 1911։*

Գալոյան Գ., *Անգլիայում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Երևան, 1961։*

Գասպարյան Ս., *Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962։*

Գարիբյան Հ., *Ժամանակակից սփյուռքահայ բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությունը, Երևան, 1960։*

Գաղութահայ *տարեգիրք։ Տարի Ա—Գ։ Պուքրեշ, 1941։*

Գյուզալյան Գ., *Հայ քաղաքական մտքի զարգացումը և Հ. Յ. Դաշնակցությունը, Փարիզ, 1927։*

Դալլաքյան Կ., *Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում, Երևան, 1961։*

Դարբինյան Արտակ, *Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947։*

Դարբինյան Ռ., *Բոլշևիզմը և Հայաստանը, Իզմիր, 1922։*

Դարբինյան Ռ., *Մեր պատասխանը Յ. Քաջազնունուն, Պոսթոն, 1923։*

*Դիմում ամբողջ աշխարհի ժողովուրդներին, Երևան, 1960։*

Երվանդ Հ., *Պարզ խոսքեր հայ ժողովրդին, Կահիրե, 1933։*

Երվանդ Հ., *Ռամկավար Ազատական կուսակցությունը, իր այսօրը և վաղը, Բոստոն, 1947։*

Զարթոնք, *Բացառիկ, Պեյրութ, 1962։*

Թյուրքյուննյան Լ., *Հ. Յ. դաշնակցությունը իբրև պետական գործոն։ Փաստեր և իրողություններ։ (1918—1920), Կ. Պոլիս, 1921։*

Թորունճյան Խ., *Բյուրոյական սնանկությունը և իրավ. դաշնակցության ուղին (Արաբական աշխարհի վերջին դեպքերի լույսին տակ), Պեյրութ, 1959։*

Իզմիրլյան Ս., *Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխության մասին, Պեյրութ, 1962։*

Լեո, *Թյուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Ա, Փարիզ, 1934։*

Լազյան Գ., *Հայաստանը և հայ դատը, Կահիրե, 1946։*

Լազյան Գ., *Հայաստանը և հայ դատը հայ և ռուս յարաբերություններու լույսին տակ, Կահիրե, 1957։*

Խատիսյան Ա., *Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930։*
*Ծրագիր ազգային ռամկավարական կուսակցության, Բոստոն, 1919։*
*Ծրագիր Հնչակյան կուսակցության, Փարիզ, 1931։*
*Ծրագիր Հնչակյան կուսակցության, Լոնդոն, 1897։*
*Ծրագիր վերակազմյալ Հնչակյան (ազգայնական-ազատական) կուսակցության, Բոստոն, 1919։*
*Ծրագիր սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության (Տաճկաստանի համար), Պոլիս, 1910։*
*Ծրագիր սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության, Թիֆլիս, 1917։*
*Ծրագիր Հնչակյան կուսակցության, Լոնդոն, 1937։*
*Ծրագիր Հ. Յ. Դաշնակցության, Թիֆլիս, 1917։*
*Ծրագրային հարցեր վերակազմյալ Հնչակյան կուսակցության, Թիֆլիս, 1917։*
*Կանոնագիր Հնչակյան Հեղափոխական կուսակցության Ամերիկայի նահանգային շրջանակին, Բոստոն, 1902։*
Կարինյան Ա., *Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, 1926։*
Կարինյան Ա., *Դաշնակցությունը և իր զինակիցները, Երևան, 1932։*
Կեննյան Ա., *Ազգային հարցը և Տաճկահայաստանը, Փարիզ, 1936։*
Կեննյան Ա., *Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը և Կիլիկյան ինքնավարության աքթը, Պեյրութ, 1958։*
Կիտուր Արսեն, *Ի՞նչ է սոցիալիզմը և կոմունիզմը, Հալեպ, 1939։*
Կիտուր Արսեն, *Հայ ազատագրության ճանապարհին, Պեյրութ, 1949։*
Կիտուր Արսեն, *Հուշեր և փուշեր, Բեյրութ, 1956։*
Կիրակոսյան Ջ., Հակոբյան Հ., *Դաշնակները իմպերիալիզմի գործակալներն են Մերձավոր Արևելքի երկրներում, Երևան, 1960։*
*Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության Հայտարարությունը, Երևան, 1960։*
*Հ. Յ. Դաշնակցությունը Եվրոպայի մեջ (60 ամյակի առթիվ), Փարիզ, 195[illegible]։*
*Հայ ազգային խորհուրդ Աղեքսանդրիո, Աղեքսանդրիա, 1946։*
*Հայ դատը, Հալեպ, 1947։*
*Հայ հեղափոխական դաշնակցությունը, գիծեր Հ. Յ. դաշնակցության կյանքեն, Պուքրեշ, 1930։*
Հայգավակ, *Հայրենադարձներու նոր աշխատանքը Հայաստանյաց Եկեղեցիին դեմ, Հալեպ, 1949։*
*Հայկական ՍՍՌ ատլաս, 1961։*
*Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի և ՀԿՊ Կենտկոմի հանդիսավոր նիստը (Սղագրական հաշվետվություն), Երևան, 1961։*
*Հայ հեղափոխական կուսակցությունները և օսմանյան կառավարությունը, 1916։*
*Հայ սահմանադիր ռամկավար կուսակցությունը, Թիֆլիս, 1912։*

Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցում Հայաստանի կոմպարտիայի XXII համագումարին, Երևան, 1961։
ՀԿՊ Կենտկոմի հաշվետվությունը Հայաստանի կոմունիստական պարտիայի XXIII համագումարին, Երևան, 1964։
Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին, Երևան, 1948։
Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը, Երևան, 1923։
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը, Գահիրե, 1932։
Համբարձումյան Վ., Գիտությունը Հայաստանում 40 տարում, Երևան, 1960։
Հանգույց, Ն., Մտածումներ Հ. Յ. դաշնակցության մասին, Փարիզ, 1930։
Հիսնամյակ 1887—1937 Ս. Դ. Հնչակյան կուսակցության, Փրովիտենս, 1938։
Հիսնամյակ 1903—1953 Երիտասարդ Հայաստանի, Պոսթըն, 1953։
Հնչակյան տարեգիրք, Ա տարի, Փրովիտենս (ԱՄՆ), 1931։
Հնչակյան տարեգիրք, Բ տարի, Նյու-Յորք, 1932։
Հովհաննիսյան Աշոտ, Գաղութահայ խնդիրներ, Երևան, 1925։
Հովհաննիսյան Աշոտ, Դաշնակցությունը և պատերազմը, Երևան, 1921։
Հովհաննիսյան Միքայել, Դաշնակցությունը և նրա հակառակորդները (ծրագիր և տակտիկա), Թիֆլիս, 1906։
Հուշարձան նվիրված սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության 40-ամյակին, Փարիզ, 1930։
Ղազարյան Ս., Հ. Յ. Դաշնակցության արդի քաղաքականությունը, Թեհրան, 1928։
Ղարաջյան Գ., Ռուբեն Խանազատի հեքիաթները (Ովքեր են Հնչակյանները և ինչ են ասում նրանք իրենց մասին), Թիֆլիս, 1928։
Ճիզմեճյան Գ., Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց, 1890—1925, Ֆրեզնո, 1930։
Մարտունի Ալ. (Մյասնիկյան Ա.), Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924։
Մարտիրոսյան Լ., Ախտավոր մտայնության դեմ (Հայ բանվորի համար), Չիկագո, 1920։
Մարտիրոսյան Լ., Կյանքի մը ալբոմը, Պեյրութ, 1959։
Մռավյան, Դաշնակցության կրիզիսը, Վիեննա, 1907։
Մեր գաղափարն ու գործը, Ռամկավար Ազատական կուսակցության միության 30-ամյակին առթիվ, Ֆրեզնո, 1952։
Միացյալ Հայաստան (դաշնակցությունը երեկ և այսօր), Հալեպ, 1945։
Միքայելյան Ք., Յեղափոխականի մտքերը, Ժընեվ, 1906։
Նաճարյան Ն., Դաշնակ ղեկավարությունը օտարի ծառայության մեջ, Հալեպ, 1958։

Նաճարյան Մ., *Հուշագիր 1918—1948։ Երեսնամյա ազգային իրագործությունները Սուրիոյ և Լիբանանի հայ կյանքին առնուած, Բեյրութ, 1949։*

Նավասարդյան Վ., *Ի՞նչ էր և ինչ պիտի լինի մեր ուղին, Գահիրե, 1923։*

Նավասարդյան Վ., *Խորհրդային քաղաքականությունը հայկական հարցում, Փարիզ, 1938։*

Նավասարդյան Վ., *Բոլշևիզմը և դաշնակցությունը, Գահիրե, 1949։*

Նավասարդյան Վ., *Գաղափարների ուղին, Գահիրե, 1951։*

Նավասարդյան Վ., *Նեղուցները, Գահիրե, 1947։*

Նավասարդյան Վ., *Հայաստանի անկախությունը, Ժնև, 1924։*

Նավասարդյան Վ., *Ընկերվարությունը և դեմոկրատիզմը, Գահիրե, 1924։*

Նավասարդյան Վ., *Դաշնակցության քաղաքական ուղին, Գահիրե, 1925։*

Նավասարդյան Վ., *Հ. Յ. Դաշնակցության անելիքը, Գահիրե, 1924։*

Նավասարդյան Վ., *Հ. Յ. Դաշնակցության «լիկվիդացիան», Գահիրե, 1924։*

Նայիրի Ժիրայր, *Հայրենի կարոտի տակ, Պեյրութ, 1962։*

Նորյան Ս., *Դրվագներ Հ. Յ. Դաշնակցության գործունեությունից, Բոստոն, 1917։*

Շահումյան Ս. Գ., *Դաշնակցությունը — պրոլետարիատի ղեկավար, Հատ. 1։*

Շահումյան Ս. Գ., *Դաշնակցական համագումարը էջմիածնում, Հատ. 1։*

Շահումյան Ս. Գ., *Երևանից (Հայ իրականությունից), Հատ. 1։*

Շահումյան Ս. Գ., *Առաջիկա ընտրությունները Թիֆլիսում և «դաշնակցության» պարտիան, Հատ. 1։*

Շահումյան Ս. Գ., *«Երիտասարդ դաշնակցականների» պրոկլամացիան. Հատ. 1։*

Շահումյան Ս. Գ. *Սեյմի քաղաքականության և Անդրկովկասի դրության մասին, Հատ. 3։*

Շահումյան Ս. Գ., *Կոչ Բաքվի բանվորներին, Հատ. 3։*

Շահումյան Ս. Գ., *Նոր իշխանության կերպարանքը, Հատ. 3։*

Շահումյան Ս. Գ., *Անազնիվ զրպարտիչներ, Հատ. 3։*

Շահումյան Ս. Գ., *Հնչակյանների նոր օրգանը, Հատ. 3։*

Շահումյան Ս. Գ., *Նամակ Վ. Ի. Լենինին (5. 5. 1905 թ.), Հատ. 3։*

Չալխուշյան Գ., *Ի՞նչ էր և ինչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923։*

Չորմիսյան Լ., *Գաղութներու ղեկավարության հարցը, Փարիզ, 1940։*

Չորմիսյան Լ., *Կուսակցությունները և հայրենիքը, Փարիզ, 1946։*

*Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, Ա հատոր, Պեյրութ, 1962։*

*Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, Բ հատոր, Պեյրութ, 1963։*

*Պատմություն Այնթապի Հ. Յ. Դաշնակցության. 1898—1922, Հալեպ, 1957։*

*Պաշտոնական կոչ հայտարարության Սփյուռքի հայության, Նյու-Յորք, 1943։*

Ռուբեն, *Հ. Յ. Դ. կազմակերպությունը, Աթենք, 1935։*

Սապահ-Գյուլյան Ս., *Սոցիալիզմ և հայրենիք, պրակ 1, Պարիզ, 1907։*

Սապահ-Գյուլյան Ս., *Սոցիալիզմ և հայրենիք, պրակ 2, Փրովիդենս, 1914։*

Սապահ-Գյուլյան Ս., *Ինքնավար Հայաստանը, Թիֆլիս, 1915։*

Սապահ-Գյուլյան Ս., *Պատասխանատուները, Փրովիդենս, 1916։*

Սապահ-Գյուլյան Ս., *Փոքր Հայքի հիշատակներ, մաս 1, Չիկագո, 1917։*

Սապահ-Գյուլյան Ս., *Բաների և եղերի բացատրությունները, Բոստոն, 1927։*

Սեֆերյան Մ., *Ինչու և ինչպես հիմնուեցավ Ս. Դ. Հնչակյան կուսակցությունը, Բեյրութ, 1952։*

Սերոբյան Մ., *Մեր պայքարը հայ ազատության ուղիով, Գահիրե, 1948։*

Սերոբյան Մ., *Հայաստանի անկախության առիթով, Գահիրե, 1950։*

*Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության մասնաճյուղերին, Ֆրեզնո, 1957։*

*Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցություն։ Լիբանանի շրջան։ Արտակարգ 5-րդ պատգամավորական ժողով, Բեյրութ, 1936։*

*Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցություն։ Լիբանանի շրջան։ 7-րդ պատգամավորական ժողով, Բեյրութ, 1938։*

Սվազլյան Գ., *Ներգաղթը, Ալեքսանդրիա, 1936։*

*Սովետ Հայաստանը իր կյանքի բոլոր մարզերում, Բեյրութ, 1944։*

*Սովետական Հայաստանը արտասահմանյան հայերի աչքերով, Երևան, 1960։*

*Սովետական Հայաստանը 40 տարում, վիճակագրական ժողովածու, Երևան, 1960։*

*ՍՄԿՊ Ծրագիր, Երևան, 1961։*

Վարանդյան Մ., *Հ. Յ. Դաշնակցության պատմություն, հատոր 1, Պարիզ, 1932։*

Վարանդյան Մ., *Հ. Յ. Դաշնակցության պատմություն, հատոր 2, Գահիրե, 1950։*

Վարանդյան Մ., *Կրոն և գիտություն, Կ. Պոլիս, 1912։*

Վարանդյան Մ., *Համաժողովրդական բանակ, Ժընև, 1909։*

Վարանդյան Մ., *Հայրենիքի գաղափարը, Ժընև, 1904։*

Վարանդյան Մ., *Համայնավարություն և համաշխարհային հեղափոխություն, Գահիրե, 1926։*

Վարանդյան Մ., *Սիմոն Զավարյան, 1927։*

Վարանդյան Մ., *Վերածնվող հայրենիքը և մեր դերը, Ժընև, 1919։*

Վրացյան Ս., *Հայաստանի հանրապետությունը, Փարիզ, 1928։*

Վրացյան Ս., *Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, Բեյրութ, 1953։*

Վրացյան Ս., *Վաթսունամյակ (1890—1950), Պոսթըն, 1950։*

Տատուրյան Շ., *Հայ ժողովրդի ներքին թշնամիներուն դեմ, Փարիզ, 1915։*

Տիգրանյան Ս., *Դաշնակցական պատգամավորները երկրորդ պետական դումայում, Թիֆլիս, 1907։*

Տիրան Վարդան, *Սոցիալիզմի պատմությունը, Նյու-Յորք, 1931։*
Փափազյան Վ., *Իմ հուշերը, հատոր 1, Գահիրե, 1957։*
Փափազյան Վ., *Իմ հուշերը, հատոր 2, Պեյրութ, 1952։*
*Քառասնամյակ (1903—1943) Երիտասարդ Հայաստանի, Նյու-Յորք, 1944։*
Ցրանցյան Ն., *Քրիստափոր Միքայելյան, Բաքու, 1917։*

### բ) Ռուսերեն լեզվով

**Ленин В. И.**, Совет РСДРП, том 8, пятое издание.
Ленинский сборник, том 15.
**Беккер Г. и Босков А.**, Современная социологическая теория, Москва, 1961.
Декларация Совещания представителей коммунистических и рабочих партий социалистических стран, состоявшегося в Москве 14—16 ноября 1957 года, Манифест мира, Москва, 1958.
**Джапаридзе П.**, Избранные статьи, речи, письма, Москва, 1958.
Документы Совещания представителей коммунистических и рабочих партий, Москва, 1960.
Итоги всесоюзной переписи населения 1959 года (Армянская ССР), Москва, 1963.
**Каринян А.**, Шаумян и националистические течения на Кавказе, Баку, 1928.
Культурное строительство Армянской ССР (Статистический сборник), Ереван, 1962.
**Модржинская Е.**, Идеология современного колониализма, Москва, 1961.
**Подъячих П.**, Население СССР, Москва, 1961.
Программные документы коммунистических и рабочих партий капиталистических стран Европы, Москва, 1960.
Программные документы борьбы за мир, демократию и социализм, Москва, 1961.
Программные документы коммунистических и рабочих партий стран Америки, Москва, 1962.
Третий съезд РСДРП (протоколы). Москва, 1959.

## 2. ՄԱՄՈՒԼ

*«Ազդակ», օրաթերթ, դաշնակցության կուսակցության օրգան, Բեյրութ, 1945—1962։*

«Արարատ», օրաթերթ, Հնչակյան կուսակցության օրգան, Բեյրութ, 1945—1963։

«Ալիք», թերթ, դաշնակցության կուսակցության օրգան, Թեհրան, 1945—1960։

«Ասպարեզ», եռօրյա թերթ, դաշնակցության կուսակցության օրգան, Ֆրեզնո (ԱՄՆ), 1945—1960։

«Արև», օրաթերթ, առաջադիմական, Կահիրե, 1945—1960։

«Արևելք», օրաթերթ, դաշնակցության կուսակցության օրգան, Հալեպ, 1945—1950։

«Արմենիա», օրաթերթ, դաշնակցության կուսակցության օրգան, Բուենոս-Այրես, 1948—1955։

«Աշխարհ», շաբաթաթերթ, առաջադիմական, Փարիզ, 1960—1962։

«Բանբեր Հայաստանի արխիվների», ամսագիր, № 2, 1963, Երևան։

«Երիտասարդ Հայաստան», եռօրյա թերթ, Հնչակյան կուսակցության օրգան, Նյու-Յորք, 1945—1963։

«Զարթոնք», օրաթերթ, ռամկավար ազատական կուսակցության օրգան, Բեյրութ, 1945—1963։

«Ժողովրդի ձայն», օրաթերթ, կոմունիստական, Բեյրութ, 1945—1947։

«Լույս Փարիզի», շաբաթաթերթ, առաջադիմական, Փարիզ, 1958։

«Լրաբեր», երկօրյա թերթ, Ամերիկահայ Առաջադիմական միության օրգան, Նյու-Յորք, 1945—1963։

«Հայրենիք», օրաթերթ, դաշնակցության կուսակցության օրգան, Բոստոն, 1945—1963։

«Հայրենիք», ամսագիր, դաշնակցության կուսակցության օրգան, Բոստոն, 1945—1963։

«Հառաջ», շաբաթաթերթ, դաշնակցության կուսակցության օրգան, Փարիզ, 1950—1963։

«Հուսաբեր», օրաթերթ, դաշնակցության կուսակցության օրգան, Կահիրե, 1945—1963։

«Հնչակ», Կենտրոնական օրգան Հնչակյան կուսակցության, 1900—1905։

«Մեր նշանաբանն է՝ Հառաջ», շաբաթաթերթ, առաջադիմական ուժերի օրգան, Բեյրութ, 1957—1963։

«Նաիրի», շաբաթաթերթ, ազգային-գրական, Բեյրութ, 1952—1963։

«Նոր կյանք», շաբաթաթերթ, առաջադիմական, Բուխարեստ, 1958—1963։

«Նոր օր», եռօրյա թերթ, ռամկավար ազատական կուսակցության օրգան, Ֆրեզնո (ԱՄՆ), 1945—1963։

«Շարժում», շաբաթաթերթ, Հնչակյան կուսակցության օրգան, Բուենոս-Այրես, 1951—1959։

«Պայքար», օրաթերթ, ռամկավար ազատական կուսակցության օրգան, Բոստոն, 1945—1963։
«Սովետական Հայաստան», օրաթերթ, ՀԿԿ Կենտկոմի, Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի և Մինիստրների սովետի օրգան, Երևան, 1945—1948, 1954, 1957։
«Վերածնություն», Հնչակյան կուսակցության օրգան, 1903։

### 3. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

*Հայկական ՍՍՌ ՀՈՍՇ պետական կենտրոնական արխիվ*

*Ֆոնդ 113, ցուց. 18, գործ 1001։*

*Ֆոնդ 362, ցուց. 1, գործ 4, 12, 14, 15, 18, ցուց. 2, գործ 2, 3, 4, 6, 9, 10, 11, 15, 16, 17, 18, 20, 25, 28, 29, 30, 32, 41, 44, 49։*

*ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական պարտիական արխիվ*

*Ֆոնդ 495, ցուց. 2, գործ 17։*

*Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտիական արխիվ*

*Ֆոնդ 1, ցուց. 35, գործ 1, 3, 34, ցուց. 36, գործ 24, 35, ցուց. 38, գործ 64։*

# ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ


Աբեղյան Ա.— 63
Աբդուլ Համիդ — 337
Աբդուլ Համիդ Ղալեպի — 314
Ադամյան Ս.— 77
Ադենաուեր — 103, 142
Ազատյան Հ.— 64
Ահարոնյան Վարդգես—86—90, 113
Անդրիասյան Անդրանիկ — 14, 348, 355, 376
Անմահունի Մ.— 298
Արշակունի Հ.— 127
Արծրունի Գ.— 337
Արմեն Ղարիպ — 291
Արևելքցի Մ.— 225, 228, 234, 236, 238, 266, 267, 286, 294, 295, 300, 306, 318

Բարյոֆ — 104
Բաղրատունի Ք.— 84
Բաղրամյան Ի. Խ.— 135
Բանշի — 85
Բատիստա — 314, 315
Բեկկեր Գ.— 99
Բլանկի — 104
Բոկաչիո — 87
Բոսկով Ա.— 99

Գաբրիելյան Հ.— 17
Գալանճյան Քամել — 317, 318
Գալոյան Գ.— 7
Գասպարյան Ս.— 6, 7, 8
Գասպարյան Գ. —130
Գեղակ Պ.— 356, 357
Գերցեն — 201
Գի Մոլե — 225
Գրոմիկո Ա.— 356
Գյուլխանդանյան Ա.— 63
Գույումճյան Հ.— 48, 249, 251, 257, 280, 288, 299, 383

Դալես Ջ.— 81, 307, 355, 359, 360
Դալես Ա.— 267
Դալլաքյան Կ.— 6
Դավիթ — 389
Դարբինյան Ռուբեն (Չիլինգարյան Արտաշես) — 7, 16, 33, 43, 65, 73, 80, 81, 86 — 90, 97 — 101, 103—105, 108, 111, 113, 145, 148, 151, 175, 178, 182, 185, 186, 392, 413, 414
Դոլուխանյան Ջ.— 130
Դոն-Քիշոտ — 107

Երևամյան Գ.— 110
Երվանդ Հրաչ — 372

Զավարյան — 431
Զայիմ — 157
Զարեհ — 193
Զարյան Կոստան — 126
Զեյթունցյան Վ. (Ոլնեցի Վ.)— 221, 222, 225, 243, 245

Էյզենհաուեր — 81, 155, 156, 158, 163, 166, 307, 318, 319, 326, 360, 366

Էնգելս Ֆ.— 104, 345, 346
Էստե Ռեյման — 43 — 45

Թանտրջյան Կարապետ — 87 — 89
Թեոլոլյան Մինաս — 175, 180
Թումաճյան Խոսրով — 14, 84, 152, 431
Թութունջյան Լ.— 355, 402

Ժիրայր — 240

Իզմիրլյան Ս.— 70, 135

Լազյան Գ.— 60, 83, 186, 187
Լաչինյան Ե.— 83
Լենին Վ. Ի.— 27, 202, 203, 223, 238, 297, 436, 444
Լեո — 337
Լիսիցյան Պ.— 130

Խալեդ Բաղդաշ — 32
Խաթանասյան Ե.— 129, 134, 174
Խաչատրյան Ա.— 130
Խորեն — 193
Խրլոպյան Գ.—8

Ծառուկյան Անդրանիկ — 126
Ծերենց — 192

Կանայան Դ. (Դրո) — 62, 63, 73, 78, 83, 85, 86, 89, 275, 392, 432
Կարապետյան — 84
Կերենսկի Ա.— 75
Կիտուր Արսեն — 163, 190, 201, 212, 261, 262, 273, 291, 292, 308, 312, 313, 323, 332, 333
Կիրակոսյան Ջ.— 6
Կնունյանց Բ.— 240
Կոմիտաս — 130
Կուտուֆինին — 218

Հակոբյան Հ.— 6
Համբարյան Մ.— 88
Համբարյան Վ.— 38
Համբարյան Հ.— 122
Հայ Ս.— 125
Հիտլեր — 255, 392
Հովակիմյան Ա.— 16
Հովհաննիսյան Աշոտ — 9, 10
Հովհաննիսյան Հ.— 87
Հունեյն — 156, 157, 171
Հրանտ Սամվել — 153
Հրաչ — 432

Ճերեճյան Հ.— 229, 230

Մաղլակելիձե Շ. — 84, 85
Մագդա — 86
Մաղեյան Հարություն — 170, 174
Մալիկ — 156, 326
Մակարտի — 86, 263, 264, 277, 359
Մարքս Կարլ — 93, 98, 102, 104, 318, 345, 346
Մարշալ — 80, 167, 371
Մարտիրոսյան Լ.— 262
Մանուկյան Ճ.— 192, 415, 428, 429
Մանկասարյան Հ.— 432
Միկոյան Ա.— 135
Միսաքյան Ժ.— 87
Մխիթարյան Գ.— 87 — 89
Մյասնիկյան Ա. (Մարտունի Ալ.) — 8, 9, 240, 339 — 341, 437, 445
Մոկ Ժյուլ — 226
Մոսադեղ — 169, 304
Մորգան — 345
Մորգան Ֆիլիպս — 226
Մուսոլինի — 392

Նազիմ պեյ Քուստաֆի — 324
Նաճարյան Ե.— 275
Նաճարյան Եղ.— 77
Նայիրի Ս.— 188
Նայիրյան Ռ.— 350, 395
Նայիրի Ժիրայր — 311, 312, 319, 324
Նասիր Սեանի — 326
Նասեր — 164, 314, 326
Նավասարդյան Վահան — 14, 37, 78, 83, 85, 89, 93, 381, 392, 432
Նավասարդյան Բեգլար — 78, 79, 81, 90, 113
Նեննի — 225
Նիքսոն — 264, 360
Նժդեհ Գ.— 63
Նորաշխարհյան Հ.— 122
Նուրի Սաիդ — 156, 157, 164, 171, 315, 392
Նուրհան — 257

Շահան Նաթալի — 126
Շահեն Ս.— 164
Շահումյան Ս. Գ.— 91, 92, 94, 95, 203, 240, 434, 435
Շամուն — 156, 157, 159, 163—166, 171, 314, 326 — 328, 331, 332, 392 — 394
Շումախեր — 226
Շ. Մ.— 87

Չերչիլ — 81, 257
Չերքեզյան Պ.— 84
Չիչերին — 157
Չթչյան Ս.— 129
Չուգասզյան Վ.— 289

Պադդալյան Մ.— 122
Պերպերյան Լ.— 84
Պիղատոս — 273
Պլեխանով — 201
Պոդյաչիխ Պ.— 128

Ջափարիձե Պ.— 247
Ջիլաս — 81

Ռաշիդ Քարամե — 157, 331, 333
Ռյուշդի պեյ Քեհյա — 324
Ռոկֆելեր — 267, 345
Ռոստոմ — 431
Ռուզվելտ Արչիբալդ — 83, 86
Ռուսո — 318

Սաեբ Սլամ — 333
Սահակյան Ս.— 87, 413
Սամի Սոլհ — 156, 326, 327
Սամվել — 193
Սարագատ — 225, 226
Սարգիսյան Յ.— 367
Սեդրակյան Հ.— 384
Սելյան Պ.— 72
Սիմոնյան Ս.— 232, 241, 270
Սիմոնյան Մ.— 276
Սիրվարդ — 240
Սպանդարյան Ս.— 240
Ստալին Ի.— 237, 238, 243, 244, 437, 439, 444
Ստեփան Գ.— 251

Վարանդյան Մ.— 92 — 96
Վարդանյան Օ.— 253, 313
Վրացյան Ս.— 43, 66, 67, 86, 88, 89, 103, 135, 165, 166, 392, 414

Տարոնի Գ.— 292
Տեր-Գալուստյան Մ.— 83, 84, 172, 174
Տեր-Թովմասյան Սահակ — 127, 433

Տեր-Մելքոնյան — 84
Տեր-Պալյան Հ.— 122
Տեր-Պապյան — 84
Տրումեն — 71, 72, 80, 256, 257, 276

Րաֆֆի — 337

Փաշայան Տ.— 87
Փարամազ — 240
Փորթուգալյան Մ.— 337, 338

Քաղցրունի Արշավիր — 375
Քալանդարյան Ա.— 403
Քալանթարյան Լ.— 89
Քամալ Ջաթրճի — 318
Քամալ Ճամպլաթ — 332
Քյուրոյան Հ.— 429

Օուեն — 104

Ֆարաջալլա Հելու — 30
Ֆարուք — 157, 392
Ֆարրխո — 85
Ֆուադ Շեհաբ — 157, 164, 326
Ֆեյսալ — 156, 157, 315

# ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ


*Աբիսինիա — 81*
*Ադրբեջան — 140*
*Աթենք — 215*
*Ալժիր — 168, 301 — 303, 313, 314, 363, 365*
*Ալավերդի — 114*
*Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ, Ամերիկա) — 21, 26, 28, 33, 36, 37, 46, 47, 71, 74, 75, — 78, 83 — 90, 99, 106, 109, 112 — 114, 117, 124, 128, 136, 145, 148, 150, 151, 155, 156, 161, 162, 165, 173, 177, 185, 189, 194, 214, 231, 232, 238, 239, 244, 249, 251 — 253, 255 — 257, 259, 261 — 268, 277, 278, 284, 285, 292, 302, 305 — 307, 316, 318 — 320, 322, 324, 327, 351, 354, 357 — 361, 363, 365, 371, 386, 414, 424, 425, 427*
*Անգլիա — 21, 37, 124, 128, 155, 156, 161, 162, 170, 177, 261, 265, 302, 303, 311, 320, 358, 363, 365, 366*
*Անդրկովկաս — 7, 85, 139*
*Անդրհորդանան — 310*
*Անթիլիաս — 44, 164, 388, 390*
*Անկարա — 266*
*Արաբական արևելք — 367*
*Արարատ — 280*
*Արգենտինա — 21, 243, 245, 358*
*Արևելյան Եվրոպա — 234*
*Արևելյան Հայաստան — 207, 211, 339, 348*
*Արևմտյան Գերմանիա — 226, 254, 261, 265*
*Արևմտյան Եվրոպա — 70, 351*
*Արևմտյան Հայաստան (Տաճկահայաստան) — 211, 224, 245, 246, 322, 339, 340, 342, 348, 351*
*Ասիա — 21, 51, 106, 303, 307, 308, 316, 322, 367, 442*
*Ավստրալիա — 21, 106, 120, 416, 427*
*Ավստրիա — 21*
*Աքաբա — 366*
*Աֆղանստան — 303*
*Աֆրիկա — 21, 120, 154, 301, 316, 320, 322, 367*

*Բաքու — 206, 207*
*Բադ-Գոդեսբերգ — 102*
*Բաղդադ — 161, 167, 252, 266, 308, 315, 316, 318, 357, 366*
*Բաթումի — 408*
*Բալկաններ — 37*
*Բանդունգ — 305, 306, 364*
*Բելգիական Կոնգո — 367*
*Բեյրութ — 41, 83, 86, 159, 163, 164, 172, 188, 312, 326, 327, 331, 332, 409, 432*
*Բեռլին — 60, 62 — 64, 71, 73, 255*
*Բիրմա — 367*
*Բուենոս-Այրես — 243*

Բուլղարիա — 21, 337, 405, 419, 425
Բրազիլիա — 21
Բրատսկ — 136
Բրիտանիա — 136

Գերմանիա — 21, 42, 60—62, 64, 66, 70—72, 254, 255, 275, 358, 445
ԳՖՌ (Գերմանական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկա) — 128
Գոթա — 102

Դամասկոս — 82, 159, 160, 170—172, 174, 330
Դետրոյտ — 432

Եգիպտոս — 21, 37, 83, 155, 156, 184, 302, 303, 310—315, 326, 351, 365, 366, 424, 425
Եթովպիա — 21
Եվրոպա — 21, 51, 106, 120, 168, 257, 266, 283, 337, 338, 355, 357, 442
Երևան — 17, 52, 122, 124, 125, 138, 139, 210, 211, 287

Էջմիածին — 41, 42, 194, 272, 296, 297, 299, 375, 376, 384, 388

Թբիլիսի — 84, 139, 218, 280
Թեհրան — 70,434
Թուրքեստան — 75
Թուրքիա — 21, 34, 64, 72, 85, 120, 124, 178 — 180, 182, 208, 218, 271, 338, 348

Ժնև — 204, 252, 253, 307

Ինդոնեզիա — 363, 364, 367
Իսլանդիա — 358
Իսրայել — 21, 155, 173, 302, 303, 312, 313, 366
Իտալիա — 21, 85, 120, 226, 255, 358
Իրաք — 21, 156, 157, 161, 162, 171, 271, 310, 315 — 318, 320, 366, 423, 424
Իրան — 21, 22, 37, 70, 85, 89, 120, 124, 157, 169, 271, 304, 305, 405, 419, 424, 431

Լեհաստան — 21, 170
Լենինական — 408
Լիբանան — 21, 22, 30, 34 — 37, 43, 86, 87, 156, 162, 164, 166, 170, 171, 173, 193, 230, 232, 244, 308, 310, 314, 324, 326 — 328, 331 — 334, 351, 365, 366, 368, 405, 409, 410, 419, 422, 424, 425
Լոնդոն — 338

Խալիլ Պեյե — 164, 165

Կամիշլի (Գամիշլի) — 64, 174, 177, 179, 392, 394
Կանադա — 21, 416, 427
Կարաչի — 316
Կիլիկիա — 41, 45, 192, 193,— 195, 332, 387
Կիպրոս — 21, 422
Կիրովական — 408
Կոնյա — 168, 301, 365
Կորեա — 80, 267, 302, 305, 367
Կովկաս — 94, 209, 210, 221, 246
Կուբա — 21, 168, 301, 314, 315, 365
Կույբիշև — 136, 139

Հալեպ — 62, 122, 159, 160, 170, 174, 330, 412
Հաճըն — 165
Հարավային Ամերիկա — 264, 360, 416, 427
Հարավ-Աֆրիկյան Միություն — 306, 307
Հարավսլավիա — 21
Հայաստան — 5, 32, 42, 52, 55, 56, 59, 61, 66, 73, 82, 83, 112, 114, 115, 119—121, 123—126, 128—132, 134, 135, 137—140, 179, 180, 183, 185, 192, 196, 211, 214, 216, 219, 220, 233, 243, 244, 268, 271, 273, 274, 276, 277, 281, 283, 287, 289, 292, 297, 328, 341, 348, 369, 413, 414, 417, 424, 428, 429
Հյուսիսային Կորեա — 301, 303
Հյուսիսային Կովկաս — 73
Հնդկաստան — 21, 301, 313, 363, 367
Հնդկաչին — 302, 313, 365
Հոլանդիա — 21, 363
Հորդանան — 21, 156, 157, 161, 162, 171, 303, 315, 366
Հունաստան — 21, 358, 405, 419, 421, 424
Հունգարիա — 170, 291, 292

Ղարաբաղ — 139
Ղափան — 114

Ճապոնիա — 120, 265, 358, 360

Մանիլա — 168
ՄԱՌ (Միացյալ Արաբական Ռեսպուբլիկա) — 394
Մալայա — 165
Մարսել — 337
Մերձավոր արևելք — 6, 32, 61, 83—85, 131, 134, 154, 155, 215, 232, 301, 304, 306, 307, 311, 313, 316, 319—321, 323, 329, 330, 366, 439, 447
Միջին արևելք — 83, 85, 155, 158, 301, 304, 307, 315, 316, 319, 320, 323, 330
Մեքսիկա — 21
Մյունխեն — 74, 78, 85
Մոսկվա — 12, 50—52, 64, 70, 101, 106, 107, 135, 167, 168, 188, 258, 283, 357, 442
Մոսուլ — 318
Մուխթարա — 332, 333

Յաֆֆա — 256

Նյու-Յորք — 112, 421
Նոր Զելանդիա — 427
Նյուրնբերգ — 434

Շվեյցարիա — 21
Շատտալարաբ — 76
Շուֆ — 165

Չարշարուր — 165
Չեխոսլովակիա — 21
Չինաստան — 301, 376, 421

Պաղեստին — 37, 351, 381, 422, 424
Պակիստան — 351
Պարսկաստան — 351
Պոզնան — 236
Պոտսդամ — 256
Պորտսմութ — 318
Պորտուգալական Անգոլա — 367

Ռումինիա — 21, 405, 419, 425

Ռուսաստան (Ռուսիա) — 68, 69, 75, 76, 117, 120, 133, 180, 202, 205 — 210, 217, 218, 246, 281, 351, 416

Սանահին — 135
Սաուդյան Արաբիա — 366
Սիբիր — 137
Սիրիա — 21, 31 — 37, 62, 84, 156, 157, 170, 171, 173, 193, 195, 277, 303, 310, 314, 315, 324, 325, 351, 405, 409, 410, 419, 422, 424, 425
Սկանդինավյան երկրներ — 21
Սովետական Հայաստան — 6, 8— 11, 13, 14, 17, 24, 26, 30, 32 — 35, 37 — 39, 41, 50, 54, 62, 67, 68, 72, 76, 113, 120, 122, 124 — 126, 130, 132, 163, 174, 177, 178, 181, 182, 186, 196, 197, 215, 221, 224, 228, 229, 233, 242, 245, 272, 278, 280, 281, 284, 288, 289, 295 — 299, 340, 341, 348 — 351, 374 — 376, 378 — 382, 384, 385, 395, 396, 402 — 408, 411, 412, 416, 419 — 423, 425 — 427, 431, 437, 439 — 441, 443, 445, 447, 448
Սովետական Միություն — 11, 32, 33, 46, 49, 53, 59, 62 — 69, 71 — 75, 77, 80, 84, 85, 108, 112, 113, 114, 116, 117, 119, 119, 123, 124, 128 — 134, 136, 138, 139, 141, 143, 144- 146. 150, 168, 180, 181, 184 — 187, 191, 222, 225, 235 — 240, 242, 244, 249, 251, 253 — 255, 257, 259, 261, 267, 270, 276, 277, 283 — 290, 292 — 295, 300, 304, 307 — 309, 313, 317, 323, 329, 351, 352, 354, 356— 358, 361, 366, 371, 372, 374, 376, 377, 379, 382, 383, 385, 401 — 410, 413, 414, 417, 423, 425, 429, 437, 439, 442, 447
Ստալինգրադ — 70
Ստավրոպոլ — 139
Սուդան — 21
Սուեզ — 170, 226, 312, 366

Վաշինգտոն — 102, 257
Վարշավա — 236, 357
Վիեննա — 93, 94
Վիետնամ — 80, 267, 301
Վոլգոգրադ — 136, 139
Վրաստան — 84, 140

Փարիզ — 77, 78, 196, 254, 411, 445

Ֆիլիպիններ — 363, 367
Ֆորմոզա — 251
Ֆրանկֆուրտ — 226
Ֆրանսիա — 21, 36, 37, 120, 128, 155, 168, 170, 177, 192, 226, 244, 255, 265, 266, 302, 320, 337, 365, 366, 424, 425

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

*Ներածություն* . . . . . . . . . . 5

*Գլուխ առաջին. Համաշխարհային երկու սիստեմները և սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնական ճակատը* 19

*Գլուխ երկրորդ. Դաշնակցությունն իմպերիալիզմի լծակառքում. ընդդեմ խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի*

1. Դաշնակցության կուսակցությունը միջազգային իմպերիալիզմի լծակառքում . . . . . . . . . 59
2. Սոցիալիզմի և Սովետական իշխանության կատաղի թշնամին . . . . . . . . . . 91
3. Ընդդեմ խաղաղության, դեմոկրատիայի և ազգային-ազատագրական պայքարի . . . . . . . . 110
4. Դաշնակցության պառակտողական քաղաքականությունը կործանարար է սփյուռքահայության համար . . . 184

*Գլուխ երրորդ. Հնչակյան կուսակցությունը միջազգային զարգացման արդի փուլում*

1. Հնչակյան կուսակցության գաղափարախոսությունը և քաղաքականությունը մի քանի հարցերի շուրջ . . . . 201
2. Հնչակյան կուսակցությունը խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում . . . . . . 217
3. Սովետական Միության և Հայաստանի պաշտպանության դիրքերում . . . . . . . . 283
4. Հնչակյան կուսակցությունը և ազգային-ազատագրական պայքարը . . . . . . . . . . 300

*Գլուխ չորրորդ. Ռամկավար ազատական կուսակցությունը և նրա դերը ժամանակակից սփյուռքահայ կյանքում*

1. Ռամկավար ազատական կուսակցությունը և սոցիալիզմի ու իմպերիալիզմի համաշխարհային սիստեմները . . 337

2. *Հայաստանի պաշտպանության գծերում* . . . . 375

3. *Ռամկավար ազատականների վերաբերմունքը սփյուռքահայ քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների նկատմամբ* . . . . . 385

*Վերջաբան* . . . . . . . . . 401

Резюме . . . . . . . . . 436

Résumé . . . . . . . . . . . . . 444

*Օգտագործված աղբյուրների ցանկ* . . . 451

*Անձնանունների ցանկ* . . . . . . . 461

*Տեղանունների ցանկ* . . . . . . . 465

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԵՆԴՐՈՒՇ ԱՐՇԱԿԻ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ЛЕНДРУШ АРШАКОВИЧ ХУРШУДЯН

# ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԷՏԱՊՈՒՄ

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի հանձնարարությամբ

Պատ. խմբագիր Վ. Ա. Միքայելյան
Հրատ. խմբագիր Ս. Ա. Գևորգյան
Տեխ. խմբագիր Մ. Ա. Կափլանյան
Կազմը Յու. Հ. Առաքելյանի
Սրբագրիչ Լ. Ս. Սարաֆյան

ՎՖ 06757, Հրատ. № 2439, ԽՀԽ № 923, պատվեր 279, տպաքանակ 2000

Հանձնված է արտադրության 18/VII 1964 թ., ստորագրված է տպագրության 13.XI 1964 թ., տպագրական 29,5 մամուլ, հրատարակչական 20.42 մամուլ, թուղթ 84×108 $^{1}/_{32}$։ Գինը կազմով 1 ռուբլի 40 կ.

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220036502

ЦЕНА
А II 36502